Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

3 2044 009 530 650

Digitized by Google

'0L 42357.40

Harvard College
Library

FROM THE BEQUEST OF

JOHN HARVEY TREAT

OF LAWRENCE, MASS.

CLASS OF 1862

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՆԱԽՆԵԱՑ

ԵՂԻՇԷ

Digitized by Google

Digitized by Google

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ

ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԸՍՏ ԸՆՏՐԵԼԱԳՈՑՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ ԳՐՉԱԳՐԱՑ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՑԱՄՍԻ 1859 ՌՄՅԸ

Digitized by Google

~~OL 42511.5~~
OL 42357.40
HARVARD COLLEGE
AUG 26 1920
LIBRARY
Treat fund

Elisaeus Warda fecit

Digitized by Google

ԵՊԻՇԷԻ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՎԱՍՆ

ՎԱՐԴԱՆԱՑ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԴԱՒԹԻ ԵՐԻՑՈՒ ՄԱՄԻԿՈՆԻ ՀԱՅՑԵԱԼ

Բանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ով քաջ Վասն Հայոց պատերազմին հրամայեցեր, յորում բազումք առաքինացան քան զսակաւս։ Ահա նշանագրեցի յայսմ եօթն յեղանակիս. առաջին զժամանակն, երկրորդ զիրացն պատահումն յիշխանէն արեւելից, երրորդ զմիաբանութիւն ուխտին եկեղեցւոյ, չորրորդ զերկպառակութիւն ունանց բաժանելոց 'ի նմին ուխտէ, հինգերորդ զյարձակումն արեւելեայց, վեցերորդ զընդդիմանալն Հայոց պատերազմաւ, եօթներորդ զերկարումն իրացն խռովութեան։

Այսմ յեօթն գլուխս կարգագրեալ և եղեալ ծայրալիր պարապմամբ զսկիզբն և զմիջոցն և զկատարածն. զի հանապազորդ ընթեռնուցուս, լսելով զառաքինեացն զքաջութիւն և զյետս կացելոցն զվատթարութիւն, ոչ յանձին կարօտութիւն երկրաւոր առատ գիտութեան լրման, այլ այցելութիւն երկնաւոր մտաբերութեանն՝ որ մատակարարէ յառաջգիտութեամբ զհատուցումն երկոցունց կողմանցն, որ երեւելեաւքն զաներեւոյթն գուշակէ։

Այլդու, ով մեծ 'ի գիտութեանն Աստուծոյ, առ ինչ արդեաւք հրամայեացես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն։ Որպէս երեւի ինձ և քեզ և այնոցիկ որ դեգե-

Digitized by Google

ըեցին յիմաստութիւն՝ երկնաւոր սիրոյ է նշանակս այս, և ոչ երկրաւոր փառասիրութեանն. որպէս և առացին ոմանք 'ի քաջ պատմագրացն. Օրդութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնող չարեաց։ Որպէս և մեր իսկ հայեցեալ 'ի սուրբ սէր քոյոյ հրամանիդ, ոչ ինչ դանդաղեալ վեհերեցաք հայեցեալ 'ի մեր տգիտութիւնս։ Դանդի բազում ինչ է սրբութիւն՝ սատար լինել անօսրութեան, որպէս աղօթք՝ գիտութեան, և սէր սուրբ՝ միաբան օգտից։

Օր և մեր ընդ հրամանին քում ընկալեալ, յօժարութեամբ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է մխիթարութիւն սիրելեաց և յոյս յուսացելոց, քաջալերութիւն քաջաց, կամակարութեամբ յարձակեալ 'ի վերայ մահուան, առաջի տեսանելով զզօրագլուխն յաղթութեան, որ ոչ ումեք ոտնհար լինի թշնամութեամբ, այլ անդ ուսուցանէ զիւր անպարտելի զօրութիւնն։ Դու ահա ո՞ոք կամեսցի՝ ընդունի իբրեւ զնահատակ առաքինի։ Դու քանզի բազմադիմի է նահատակութեանդ անուն, և նա բազմադիմի չնորհս բաշխեաց ամենեցուն. զոր և մեծ իսկ քան զամենայն՝ սէր սուրբ յաննենդ մնաց գիտեմք։

Այս պարզութիւն զվերնոցն բերէ զնմանութիւն. զոր և մեր 'ի քեզ տեսեալ, մոռացաք զմեր բնութիւնս։ Դու ահա վերաբերիմք ընդ քեզ ձախրելով, և իբրեւ բարձրաթռիչս եղեալ՝ զամենայն փնասակար մրրկածին օդովքս անցուցանիցեմք. և փոքր 'ի շատէ ծծելով յանապական վերին օդոյն՝ առնուցումք զգիտութիւն 'ի փրկութիւն անձանց և 'ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ։ Ուստի բազում սուրբ պաշտօնեայքն զուարթութեամբ կատարեսցեն զսպաս վիճակին իւրեանց 'ի փառս Հօրն բոլորեցուն. ուր ընդ նմին սուրբ Դրրորդութիւնն ցնծացեալ բերկրիցի յանտրտմական յիւրում էութեանն։

Արդ որովհետեւ ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ և ոչ յօժարիցեմք զթըշուառութիւն մերոյ ազգիս ողբալ։ Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիր ողբովք ձառագրեմք զբազում հարուածս, յորում պատահեցաք և մեք իսկ ականատեսք լինելով։

Digitized by Google

ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՆԱԿ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Քանզի 'ի բառնալ ազգին արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Պարսից պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինաւոր մոգաց. և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նովին օրինաւոր մտանէին, սկիզբն արարեալ յամացն Աշշակայ արքայի որդւոյն Ցիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Պտահրաշապհոյ։ Այս իբրեւ զնա ևս մերժեաց 'ի թագաւորութենէն, 'ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ 'ի ձեռն նախարարացն առաջնորդէր 'ի պատերազմի։ Այսոր որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երեւելի լինէր յաշխարհին Հայոց՝ 'ի սկզբան տերութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև յամն յերկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Պռամայ. զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց 'ի բաց, և ելից զնա իբրև զպատկան դարան դեղովք։ Այս սկսաւ եղջիւր ածել անօրէնութեամբ, և գոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկրի. և թշնամի և հակառակորդ երեւեցուցանէր իւր զհաւատացեալսն 'ի Քրիստոս, և նեղեալ տագնապէր անխաղաղասէր կենաց։

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՛ թափեցից զգաւնութիւն թիւնից, կամ ուր բացատրեցից զբազմութիւն նետից։ Այս առ յոյժ յիմարութեան իբրև զգազան մի կատաղի յարձակեցաւ 'ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ 'ի քաղաքն Արծ-

բին, և զբաղում գաւառս Հոռոմոց աւերեաց ասպատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի, և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի խաղաղասէր էր 'ի Քրիստոս, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմաւ. այլ այր մի Նշատոլ անուն, որ էր նորա սպարապետ արեւելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին 'ի քաղաքին կայսեր, կալաւ և ետ 'ի ձեռս նորա։ Եւ զամենայն զոր ինչ ասաց 'ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամայ նորա, և արգել զնա 'ի բազում բարկութենէն. և դարձաւ անդրէն յիւր քաղաքն Տիզբոն։

Եւ իբրև ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւնն նորա, սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, իբր զի 'ի հուր բորբոքեալ յաւելլով բազում նիւթս փայտից։ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ դրդուեցոյց զբազումն 'ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք սպառնալեօք, էր՝ զոր կապանօք և տանջանօք։ Եւ՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր. յափշտակութիւն առնէր ընչից և արարոց, և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Եւ իբրև ետես՝ եթէ վայրատեալ ցրուեցան 'ի բազում կողմանս, 'ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ձախակողմանն, որք կապեալ էին 'ի կապաշտութեանն անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրեւ զՀնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ 'ի կեանս իւրեանց իբրեւ 'ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք 'ի մարմնին իբրեւ զկենդանի 'ի գերեզմանի, յորս ամենեւին չծագէ նշոյլք սուրբ լուսոյն Քրիստոսի։ Եւ՝ այս և արքք օրհասականք ընդ վախճանել ինչոյն հզօրագոյնք կռուին. յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին 'ի նոցանէն։ Բ. Յսպիսի ինն եկեալ հասեալ է վախճան տերութեանն. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան. և իբրեւ ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կը-

ռուին։ Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին 'ի վերայ նոցա. Զ.յր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ. նման դմին և Ցէրն ինքնին ասէ. Զ.մենայն տուն և թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն։

Զ.ոդ զի կոծիս, զի մրցիս, զի այրիս, զի բորբոքիս, զի չշիջանիս. զի կոչես 'ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիան ձեր 'ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապա կանութիւն, և զապականելի մարմինդ դէշաքարշ արարեալ՝ իբրև զաղիր մեռելոտի 'ի բաց ընկեցեալ։ Զ.պաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ. տեսջիր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա։

Զ.սեն մոգքն. Զ.ոքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտեն նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ 'ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ազգինս, որ են 'ի տէրութեան քում։ Յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մոցէ ընդ օրինաց քումք։ Զ.ոդ զբանս զայսոսիկ վաղվաղակի կատարեա դու, արքայ. զոր գուսարեա և գունդ կազմեա, խաղա գնա դու յաշխարհն Վ.ուշանաց. և զամենայն ազգս ժողովեա և անցո ըստ պահ դուռն 'ի ներքս. և դու անդէն արա քեզ բնակութիւն։ Յորժամ արգելուս և փակես զամենեսեան 'ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց. և զպէս երեւիս մեզ 'ի դենիս մերում, տիրես դու և երկրին Վ.ուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ քոյ իշխանութիւնդ։ Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ 'ի միջոյ։

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին 'ի նմին բանի. հրովարտակս գրեր, պընդադեսպանս առաքէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ։ Զ.ս այս է պատճէն հրովարտակին։

Զ.ս ամենայն ազգս տէրութեան իմոյ՝ Զ.ոեաց և անարեաց, բազմասցի 'ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերուք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ։

Զ.ոանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք գնացաք

յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի՝ սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ 'ի ծառայութիւն. դուք զբարի զմտաւ ածէք, և անապատ լերուք յուրախութեան. բայց բան զայս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմք։ Եկեք 'ի մոի եղաք անվրէպ խորհրդովք խաղալ գնալ յաշխարհն ասրեւելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել 'ի մեզ զտէրութիւնն Պուշանաց. դուք իբրեւ ըղհրովարտակս զայս տեսանէք, անխափան վաղվաղակի այրեւձի գումարեցէք առաջի քան զիս, յանդիման լերուք ինձ Լպար աշխարհին։

Ըստ այսմ պատճենի հրովարտակ էհաս յաշխարհն Հայոց, 'ի Ալբաց և Լազուանից և 'ի Վրաց, 'ի Օրդէից և 'ի Կորդուաց, Լազնեաց և բազում այլ տեղեաց հեռաւորաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ։ Պունդ կազմէր 'ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ. ըստ նմին օրինակի 'ի Ալբաց և Լազուանից և յաշխարհէն Վրաց, և որ այլ ևս 'ի կողմանց կողմանց հարաւոյ, մերձ 'ի ստմանս տաճկաստանի և 'ի Հոռոմոց աշխարհն և 'ի Կորդուաց և 'ի Պոդացն և 'ի Օրդէիցն և Լազնարզիւն. որք էին ամենեքեան հաւատացեալք 'ի մի կաթողիկէ առաքելական եկեղեցի։

Եւ անմեղութեամբ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին, խաղացին գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լրջմտութեամբ և անտրտում խնդութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարեալք զսպաս զինուորութեան աներկբայ վաստակովք։ Դարձին եւս ընդ իւրեանս զաստուածային սուրբ կտակարանս բազում պաշտօնէիւք և բազմագոյն քահանայիւք։ Դայց հրաման տուեալ աշխարհի՝ ոչ իբրեւ յանկալութիւն կենաց, այլ իբրեւ 'ի վճարումն վախճանի. յանձն առնելով միմեանց զոգիս և զմարմինս։ Զի թէպէտ և խորհուրդ թագաւորին չէր յայտնեալ նոցա, սակայն կարծիք 'ի մոի էին ամենեցուն. մանաւանդ իբրեւ բեկեալ տեսին զզօրութիւնն Յունաց առաջի նորա, յոյժ հարեալ խոցեցան 'ի խորհուրդս իւրեանց։

Դայց քանզի պատուիրանապահք էին սուրբ կտակա-

Digitized by Google

բանայն Աստուծոյ, հանապազ յիշէին զպատուիրեալսն 'ի Պաւղոսէ, եթէ ծառայք հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնաւորաց, մի սուտակասպասք և առ աչս ակառելով, այլ որպէս մտաւք ծառայել իբրեւ Աստուծոյ, և մի իբրեւ մարդկան. քանզի 'ի Տեառնէ է հատուցումն վաստակաց ձերոց։ Այլ ամենայնիւ այսու բարեմտութեամբ յուղարկեալք յաշխարհէ և յանձն եղեալք սուրբ Հոգւոյն, յանդիման լինէին, փութով կատարեալ զհրամանն, և զամենայն արարեալ ըստ կամացն նորա։ Յոյժ ուրախ լինէր Թագաւորն, իբր այն եթէ կատարեցան կամք կարծեաց նորա. և ահա առնէր ընդ նոսա զայն ինչ, զոր պաշտօնեայքն ամբարշտութեան նորա խրատեցին։

Զոր իբրեւ ետես Թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդին բարբարոսաց, որք սրտի մտաւք եկեալ էին 'ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ եղև առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երեսս Թաքուցանէր զկամս մտաց իւրոց, և ակամայ առատապէս պարգեւէր զնոսա։ Կապաղաց գնաց միանգամայն 'ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Հուշանս անուանեն. և զերկեամ մի կռուեալ, ոչ ինչ կարաց ազդել նոցա։ Զպա արձակեաց զմարձիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլս 'ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց հովին պատրաստութեամբ։ Զյապէս ամ յամէ սովորութիւն կարգեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, սկսեալ 'ի չորրորդ ամէ տերութեանն իւրոյ մինչև յամն մեռասանեերորդ Թագաւորութեանն։

Այս իբրեւ ետես՝ եթէ հաստատուն կացին Հունք յուխտին իւրեանց՝ զոր եդին ընդ նմա, և դադարեցին Կապալընդուրք ելանել ընդ պահակն Հորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհ նորա, և 'ի նեղ ևս էարկ զԹագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զազգում դաւառս նորա, և յաջողեցաւ տերութիւն նորա, աւետաւորս առաքեաց ընդ ամենայն ատրուշանս աշխարհին իւրոյ. ցլուք սպիտակաք և գիսաւոր նոխազաք առատացոյց զզոհս կրակին, և խիտ առ խիտ Թանձրացոյց անդադար զպաշտօն պղծութեան իւրոյ. պսակաք և պատուովք մեծարեաց զբազում 'ի մոգաց և զբազմագոյնս 'ի մոգպետաց։ Զտ եւս հրաման յափշտա-

կել զքրիստոնէից զինչս և զստացուածս, որք էին 'ի մէջ պարսկաց աշխարհին։

Եւ այսպէս հպարտացաւ բարձրացաւ 'ի միտս իւր, 'ի վերս քան զմարդկային բնութիւնս ընդվզեալ ապարթանէր, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ոմն զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին. վասն այնորիկ կեղծաւորութեամբ թագուցանէր զինքն ըստ կարծեացն, և որպէս երևէր իմաստնոցն՝ յանմահից ինն կարգի դնէր զինքն։ Եւ յոյժ էր ցասուցեալ ընդ անունն Քրիստոսի, յորժամ լսէր՝ թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ։

Իբրև այսպէս օր ըստ օրէ 'ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն մանկագոյն 'ի նախարարացն Հայոց ընդդէմ բանս եդ և ասէ. Ո՞ւրքայ քաջ, դու ուստի գիտես այդպիսի բանս խօսել զՏեառնէ։ Եւ պատասխանի թագաւորն և ասէ. Ամ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեանն ձերոյ։ Եւ պատասխանի անդրէն պատանեակն և ասէ. Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ. այլ յառաջ ևս մատո զկարդացումն, և լսես անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումս, զվերացումն յերկինս, զնստելն ընդ աջմէ հօր, զխոստումն երկրորդ գալստեանն՝ զհրաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց, զհամառօտ հատուցմունսն արդար դատաստանին։ Իբրեւ լուաւ զայս թագաւորն, 'ի խոր խոցեալ՝ վերս 'ի վերոյ ծիծաղեցաւ, ասէ. Ո՞մնայն այդ խաբէութիւն է։ Եւ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր չարչարանքն նորա, հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա։

Եւ զայս լսելով թագաւորին՝ բորբոքեցաւ իբրեւ ըզհուր հնոցին 'ի Բաբիլոն, մինչեւ իւրքն իսկ անդէն դեռ ևս իբրեւ զքաղդէացին այրեցեալ լինէին։ Յայնժամ զբոլոր բարկութիւն սրտմտութեանն ելեղ յայրն երանելի, որում անուն էր Վարեգին։ Կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ 'ի չարչարանս, և հանեալ 'ի բաց զտերութիւնն 'ի նմանէ, ընկալաւ զվէճիռ մահու։

Digitized by Google

ԵՐԿՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ԻՐԱՑՆ ՊԱՏԱՀՈՒՄՆ ՅԻՇԻԱՆԷՆ ԱՐԵԻԵԼԻՑ

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոց. յամենայն հոգմոյ շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին 'ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստն յուղարկի 'ի մահուան իւրում։ Որպէս և ասաց ոմն 'ի հնումն. Մահ ոչ խնայեալ՝ մահ է, մահ խնայեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ, երկնչի 'ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի 'ի նմանէ։

Այս այս ամենայն չարիք մոռանէն 'ի միտս մարդոյ յանուանութենէ։ Որոյ զրկի 'ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկի 'ի կատարեալ կենաց. լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց։ Այթէ կարի ոք առաւելեալ ի՛ցէ աշխարհական մեծութեամբ՝ և մտօքն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումն. որպէս և տեսանեմք իսկ, ոչ միայն 'ի չափաւոր մարդիկ, այլ և որ մեծն է քան զամենայն։ Զաղաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ 'ի վիճակին իւրում վայելուչ դոլ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ուրչափ և աւելի առ հոգևորն։ Որոյ մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս։ Զաղաւոր ոչ զիւրն միայն տացէ պարտիս, այլ և որոց եղեւ պատճառք 'ի կորուստ։

Որայց մեք թէպէտ և չունիմք հրաման բամբասել զիշխանս, և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինին։ Այլ զանցս իրացն պատմեմ, որ

'ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ դանդաղիմ. ոչ բամբասասէր մոռք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով ոչ լռեցից. ոչ 'ի կարծ ընդոստուցեալ, և ոչ 'ի լուր զարթուցեալ. այլ ես ինքնին անձամբ անդէն 'ի տեղւոջն պատահեցի և տեսի, և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զՀողմ սաստիկ՝ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց։ Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, և ընդաձէր զամենայն մտաւութիւնն և զքաւդէութիւնն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ։ Արկանէր 'ի ներքս և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, և ասէր զայրացեալ մոռք. Հարցէք, քննեցէք, տեսէք. Թող որ լաւն է՝ ընտրեալ կալցուք։ Եւ փութայր որ ինչ 'ի մտին էր զի վաղվաղակի կատարեսցէ։

Իսկ 'ի կողմանց կողմանց քրիստոնեայքն որ 'ի զօրուն էին, իմացան զՀուրն՝ որ 'ի ծածուկն վառեալ բորբոքէր, և կամէր հրդեհել զլերինս և զդաշտս առ հասարակ։ Զեռան և նոքա անծախական հրովն, և սաստկապէս պատրաստեցան 'ի փորձութիւն գաղտնի մեքենայիցն։ Եկան այնուհետև բարձր բարբառով, սաղմոսիք և երգովք հոգևորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանէին, և աներկիւղ առանց զանգիտելոյ՝ ո՛ր և երթայր առ նոսա՝ ուսուցանէին կամակար։ Եւ Տէր յաջողէր նոցա նշանօք և արուեստիւք. քանզի բազում հիւանդք ընդունէին զբժշկութիւն 'ի հեթանոսական զօրուէն։

Իսկ անօրէն իշխանն իբրեւ գիտաց, եթէ յայտնեցաւ խորհրդոյն, և պատրաստեալ հուրն՝ մինչչեւ ուրուք 'ինա փչեալ, վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն. և անբժշկական վէրս յոգիս և 'ի մարմինսն տեսանէր։ Եր՝ երթ շանթեր գալարեր իբրեւ զօձ թիւնաւոր, մերթ պարզէր գոչէր իբրեւ զսուիւծ զայրացեալ. գելոյր, գլորէր, տապալէր երկգիմի մոռք, զխորհուրդս կամացն կամէր կատարել։ Զանգի ձեռն արկանել և ունել ոչ կարէր, վասն զի ոչ էին համագունդ 'ի միում վայրի առ նմա, սկսաւ այ-

նուհետեւ յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս 'ի պատուականաց և զտգէտս 'ի գիտնոց և զանարիս 'ի քաջ արանց. և զի մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր, և զամենայն զարժանաւորսն յետս տանէր. մինչեւ զՀայր և զորդի քակէր 'ի միմեանց։

Մէպէտ և ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտընչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյնս յաստուածպաշտութեանն. մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց, և անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն Լուսաւորչին և զմարգարէից։ Պատրէր զոմանս 'ի նոցանէ ոսկւով և արծաթով, և զբազումս այլով ևս առատ պարգևօք. իսկ զոմանս ագարակօք և մեծամեծ գեղօք, և զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք. և այլ եւս մնոտի յոյս ոգւոցն առաջի դնէր։ Լու այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ. Լթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք, և ըզձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուսջիք 'ի ճշմարտութիւն երեւելի մերոյ դիւցազնական օրինացս, 'ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաւասար խնդս սիրելի նախարարացս, առաւել եւս զանցուցից։ Լու այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա 'ի պատճառս սիրոյ. զի խորամանկութեամբ որսալ մարթասցէ ըստ առաջին խորհրդական խրատտուացն։ Լու զայս առնէր սկըսեալ 'ի չորրորդ ամէն մինչև 'ի մետասան ամն իւրոյ տերութեանն։

Լու իբրեւ ետես, եթէ ոչ ինչ յարգեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմքն յոլովագոյն գործէին, քանզի տեսանէր զքրիստոնէութիւն՝ որ օր քան զօր յորդորեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին ընդ որ ինքն անցանէր, սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոց հանել։ Յայտնեաց ակամայ ըզծածուկ խորհուրդսն, ետ հրամանն բարձր բարբառով և ասէ. Լամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ դադարեսցեն յիւրաքանչիւր մոլոր օրինացն, և միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով և աստուած անուանելով, և

սպաս ունելով կրակի. և 'ի վերայ այսր ամենայնի և զմոգութեան և օրէնս կատարելով, զի մի ինչ ամենևին պակաս առնիցեն։ Այս ասելով քարոզ կարդայր 'ի մեծի կարաւանին, և պատուէր սաստիւ 'ի վերայ դնէր ամենեցուն, և դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս. զդոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր։

Երդ 'ի սկզբան երկոտասան ամի թագաւորութեանն իւրոյ գունդ կազմէր անհամար բազմութեամբ, յարձակեալ հասանէր յերկիրն իտաղական։ Այս տեսեալ թագաւորին Բուշանաց, ոչ հանդուրժէր ելանել ընդառաջ նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ 'ի կողմանս ամուր անապատին, թագստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք։ Իսկ սա ասպատակ արձակէր գաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս, կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր հասուցանէր յերկիր իւրոյ տերութեանն։ Եւ անդ այնուհետեւ յընդունայն եղեալ 'ի նոյն խորհուրդս, հաստատէր 'ի կարծիս մոլորութեանն, ասելով ցպաշտօնեայս ամբարշտութեանն. Զ ինչ հատուսցուք մեք աստուածոյն փոխարէնս այս մեծի յաղթութեանս, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ։

Յայնմ ժամանակի առ հասարակ միաբան մոգք և քաւդեայք բարձին զձայնս իւրեանց և ասեն. Աստուածքն՝ որ ետուն քեզ զտերութիւնդ և զյաղթութիւն 'ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ են կարօտ խընդրել 'ի քէն յերեւելի պատուականացս, այլ զի բարձցես զամենայն ուսմունս մոլորութեան մարդկան, և 'ի մի դարձուսցես օրէնս զրադաշտական պատուիրանին։ Զայս Հոյ թուեցաւ բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, և մանաւանդ որ էին առաջակայք օրինացն։ Խորհուրդ 'ի մէջ առեալ, յաղթէր խրատն։ Ընդէն 'ի ներքոյ պահ դրանն արգելչաց զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զՎրացս և զՀոլանից, և զամենեցուն որ էին հաւատացեալ 'ի սուրբ աւետարանն Քրիստոսի։ Եւ հրաման սաստիւ 'ի վերայ դռնապանացն առնէին, թէ որ յարեւելս առ մեզ գայցէ՝ թողցեն, իսկ յարեւելից յարեւմուտս՝ անանց լիցի Ճանապարհ։

Եւ իբրեւ արգել և փակեաց զնոսա յամուր յանել

զառաջիկն, որ յիրաւի ասացի ամուր և անել, քանզի
չիք անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի շուրջա-
նակի թշնամիք են բնակեալ, յայնմ ժամանակի ձեռն
արկանէր 'ի նոցա, և մեծաւ չարչարանաք և պէսպէս
տանջանաք վատթարէր զբազումս 'ի նոցանէ, և ստիպէր
ուրանալ զՔրիստոն։ Ապա ստուած և խոստովանել զերևելի
տարերսա։ Իսկ զօրականքն առ հասարակ գեղեցիկ խոր-
հրդով, քաջապէս զօրութեամբ միաբան աղաղակէին
և ասէին. Կայ են մեզ երկինք և երկիր, ոչ երբեք
հեղգացեալ ենք յարքունի վաստակս, և ոչ խաւնեալ
վաստութիւն ընդ արութիւն քաջութեան. 'ի զուր ան-
ողորմ են հարուածքս 'ի վերայ մեր։ Եւ բազմանայր
գոչումն աղաղակի նոցա, մինչեւ ինքնին թագաւորն ա-
կանատես լինէր խրատն յանդիմանութեան, և անդէն
վաղվաղակի երդմամբ հաստատէր և ասէր. Ոչ թոզա-
ցուցից ձեզ, մինչեւ կատարեսջիք զամենայն կամս հրա-
մանաց իմոց։

Եւ ահա իշխանութիւն առեալ չարաչար սպասաւո-
րացն, զի զչորս զինուորսն 'ի բուն աւազացն մատուցին
'ի փորձութիւն տանջանացն։ Եւ զառաջեաւ դատեալ
բազում հարուածովք՝ նովին կապանաք անցուցին 'ի տե-
ղիս արգելանին։ Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժա-
մանակ մի թողութիւն արարեալ, և զամենայն վնա-
սուն պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առնէր
սատանայական խրատուն։

Եւ յետ երկոտասան աւուր հրամանն տայր ընթրիս
գործել առատութեամբ և աւելի քան զաւուրց սովո-
րութիւն, և կոչէր զբազումս 'ի զինուորական քրիստո-
նէիցն։ Եւ 'ի ժամ գահուն պատրաստութեան զիւ-
րաքանչիւր տեղիս ընորհէր նոցա զբազմականին։ Եւ սի-
րով խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում
կարգին. զի թերեւս հաւանեսցին ուտել զմիս զոհեալ,
զոր ոչ երբեք էր օրէն ուտել քրիստոնէից։ Իբրեւ ոչ
կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց.
այլ հրամայեաց՝ նոցա մատուցանել զսովորական կերա-
կուրն, այլ առեալ գինեաքն յաւելոյր 'ի տաճարին ըզ-
խրախութիւն։ Եւ անտի 'ի դուրս ելեալ 'ի սրահն ար-
քունի, արգելին զամենս 'ի նոցանէ ձեռս յետս կապե-
լով, և զմոնջանունսն կնքելով, և զգուշութեամբ պահե-

Digitized by Google

լով, էր որ զերկուս աւուրս և էր որ զերիս։ Եւ բազում այլ եւս յանարժան հարուածս չարչարէին. զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի հաստատեցաք արկանել։ Եւ զոմանս 'ի նոցանէ հեռացուցին, և քարշեցին յաշնուական պատուոյն անարգեալ։

Եւ գունդս գունդս դարձեալ գումարէին 'ի նոցանէ յերկիր հեռաւոր, յամուրս անապատին 'ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի. և բազմաց իսկ և իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցուն զկարգեալ թոշակսն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս՝ զդժնեայ վայրսն հրամայէին նոցա, և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին։ Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յուսոյն որ 'ի Քրիստոս, և որ առաջոյ պատրաստեալն կայ պատուիրանապահ համբերողացն։ Որչափ չարութիւն զանարգութիւն բազմացուցանէր, նոքա եւս քան զեւս զօրանային 'ի սէրն Քրիստոսի. մանաւանդ զի բազումք 'ի նոցանէ զգիրս սուրբս ուսեալք էին 'ի մանկութենէ, զանձինս մխիթարէին և զընկերսն քաջալերէին, և աշկարայ զպաշտօնն ունէին և բազմացուցանէին։ Վասն որոյ և բազումք 'ի հեթանոսաց՝ որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջալերէին զնոսա, և ասէին բանս մխիթարութեան, իբրեւ թէ լաւ իցէ մարդոյ մահու չափ ձգնել, քան յայդպիսի օրինաց ուրանալ։

Բայց սակայն թէպէտ և նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ զուարթութեամբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի ողորմ էր յօտարութեանն։ Անպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր 'ի չարաչուք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարաչար կայր 'ի ծառայութեան մարդախոշոշ բռնաւորին, որ և ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արիւնահեղութեամբ. և ամենեւին չկարծէր, թէ գուցէ այսր ամենայնի վրէժխնդիր՝ յերկինս։ Այս և ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. և որ մեծն քան զամենայն է ըստ մարմնաւոր կարգի, քանզի գոյին ոմանք 'ի նախարարացն Հայոց, որոց զեղբարս նորա մնուցեալ էր մայրենի կաթամբ իւրեանց, առաւել եւս քան զամենեսեան զնոսա դատէր։

Digitized by Google

Լու յայսր ամենայնի վերայ այլ եւս չարութիւն խոր-
համանկեաց։ Օ՛մ ոմն 'ի հաւատարիմ ծառայից իւ-
րոց 'ի գործ առաքեր յերկիրն Հայոց, որում անուն էր
Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի,
զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասեր
կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկ-
րին Հայոց 'ի թողութիւն հարկաց և 'ի թեթեւութիւն
ծանրութեան այրեւձիոյ։

Թէպէտ և 'ի վերին երեսս կեղծաւորէր, այլ 'ի ներ-
քոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին։ Դաջին, զաղա-
տութիւն եկեղեցւոյն արկանէր 'ի ծառայութիւն. երկ-
րորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին 'ի
վանորայս, ընդ նովին աշխարհագրաւ էարկ. երրորդ,
զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց. չորրորդ, բան-
սարկութեամբ զնախարարեանն էարկ ընդ միմեանս, և
յամենայն տան արար խռովութիւն։ Լու զայս ամենայն
առնէր, թերեւս զմիաբանութիւնն քակեսցէ, և զուխտն
եկեղեցւոյն ցրուեսցէ, և զմիայնակեացսն փախուսցէ,
և զշինականսն վատնեսցէ. և առ յոյժ աղքատութեանն՝
ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուց։ Լու եւս չարագոյն
հինգերորդն. քանզի որ հազարապետ աշխարհին էր՝
իբրեւ զհայր վերակացու համարեալ էր աշխարհակա-
նաց քրիստոնէից. գրգռեաց յարոյց զամբաստանութիւն
'ի վերայ նորա, և հանեալ զնա 'ի գործոյն՝ փոխանակ նո-
րա պարսիկ ած յաշխարհն, և միւս եւս մոգպետ դատա-
ւոր աշխարհին, զի զեկեղեցւոյն փառսն աղաւաղեսցեն։

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս դրժ-
նեայ էին, չեւ էր ուրուք ձեռնարկեալ յայտնի յեկե-
ղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէ-
պէտ և էր ծանրութիւն հարկացն։ Բանզի ուստի արդ-
ժանն էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առ-
նուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ
միայն շինաց, այլ և աւերակաց։ Լա բնաւ ոչ իսկ կա-
րէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից
և հասից և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ
ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հի-
նաբար յափշտակելով. մինչեւ ինքեանք իսկ մեծապէս
զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ,
զի՞նդ շէն կայցէ աշխարհն։

Յաւ իբրեւ տեսին, թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց։ Յաւ է պատճէն նամակին այս։

Մ՝ԻՀՐՆԵՐՊԵՀ վզրուկ հրամատար Նրան և տանեբան, Հայոց մեծաց ողջոյն շատ։

Ղուք գիտասջիք, ամենայն մարդ որ բնակեալ է 'ի ներքոյ Երկնի, և ոչ ունի զօրէնս դենիմազդէզն, նա խուլ է և կոյր, և դիւաց Հարամանոյ խաբեալ։ Մանզիմինչ չեւ էին երկինքն և երկիր, Օրուան մեծն աստուած յաշտ առնէր զՀազար ամ, և ասէր. Ներեւս լիցի իմ որդի մի Ամիզդ անուն, որ արասցէ զերկին և զերկիր։ Յաւ յղացաւ երկուս յորովայնի, մի վասն յաշտ առնելոյ, և զմիւսն եւս 'ի Թերեւսն ասելոյ։ Իբրեւ գիտաց, եթէ երկու են յորովայնիս, Որ վաղ եկեսցէ, ասէ, նմա տաց զԹագաւորութիւնս։ Իսկ որ էր 'ի Թերահաւատութենէն յղացեալ, պատառեաց զորովայնն և ել 'ի դուրս։ Ասէ ցնա Օրուանն. Ո՞վ ես դու։ Ասէ. Որդին քո Ամիզդ։ Ասէ ցնա Օրուանն. Իմ որդին լուսաւոր է և անուշահոտ, դու խաւարային ես և չարասէր։ Յաւ իբրեւ կարի դառնապէս ելաց, ետ ցնա զԹագաւորութիւնն զՀազար ամ։

Իբրեւ ծնաւ զմիւս եւս որդին, անուանեաց զնա Ամիզդ. Եհան զԹագաւորութիւնն յԱրհմնէ, և ետ ցԱմիզդն. և ասէ ցնա. Ցայժմ ես քեզ յաշտ արարի. արդ դու ինձ արա։ Յաւ Ամիզդ արար զերկին և զերկիր. իսկ Արհմն ընդդէմ չար գործեաց։ Յաւ այսպէս բարժանին արարածքս. հրեշտակք Ամզդի են, իսկ դեւքն Արհմնոյն. և ամենայն բարիք որ յերկնից և այսր լինին՝ Ամզդի են, և ամենայն վնասք որ անտի և այսր գործին՝ զայն Արհմն արար։ Այնպէս և յերկրիս որ ինչ բարի է՝ զայն Ամիզդն արար, և որ ոչն է բարի՝ զայն Արհմն արար. որպէս զմարդ Ամիզդ արար, և զախտս և զվիւանդութիւնս և զմահ Արհմն արար։ Յաւ ամենայն թշուառութիւնք և պատահարք որ լինին, և պատերազմունք դառնութեան՝ չարին մասին արարածք են։ Իսկ յաջողութիւնք և տէրութիւնք և փառք և պատիւք և առողջութիւնք մարմնոց, գեղեցկութիւնք դի-

մաց և Հարտարութիւնք բանից և երկայնակեցութիւնք ամանց, այդք 'ի բարւոյն առնուն զգոյացութիւն. և ամենայն որ ոչ այդպէս է, 'ի նա չարին արարած խառնեալ է։

Այլ ամենայն մարդիկ մոլորեալ են, որ ասեն եթէ զմահ Աստուած արար, և չար և բարի 'ի նմանէ լինի. մանաւանդ որպէս քրիստոնեայքդ ասեն, թէ Աստուած նախանձոտ է, վասն թզի միոյ ուտելոյ 'ի ծառոյն Աստուած զմահ արար, և զմարդն էարկ ընդ այնու պատուհասիւ։ Օ այդպիսի նախանձ և ոչ մարդ առ մարդ ունի, թող թէ Աստուած առ մարդիկ. զի որ զայս ասէ՝ նա խուլ է և կոյր և 'ի դիւաց Հարամնոյ խաբեալ։

Դարձեալ միւս եւս այլ մոլորութիւն ասեն. Աստուած, ասեն, որ զերկինս և զերկիր արար, եկն և 'ի կնոջէ ումեմնէ ծնաւ, որում անուն էր Մարիամ; և առն նորա Յովսէփ։ Այլ զհետ այսպիսի մարդոյ մոլորեալ են բազումք։ Այթէ աշխարհն Հռոմոց առ յոյժ յիմարութեամն տգիտաբար մոլորեալ են, և զրկեալ են 'ի կատարեալ դենէս մերմէ, յանձանց պարմայեն զգնասն իւրեանց. դուք եւս ընդէր զհետ նոցա մոլորութեանն ցնորիք։ Այլ զոր օրէնս տէրս ձեր ունի, զնոյն և դուք կալարուք. մանաւանդ զի և առաջի Աստուծոյ վասն ձեր համարս ունիմք տալ։

Մի հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նածրացիսդ անուանէք, քանզի յոյժ են խաբեբայք. զոր բանիւքն ուսուցանեն, գործովք ոչ կարեն յանձն առնուլ։ Մի՝ ուտել, ասեն, ոչ են մեղք, և ինքեանք ուտել ոչ կամին. կին առնել արժան է, բայց ինքեանք և հայել 'ի նա ոչ կամին. կարասի որ ժողովէ, ասեն, յոյժ մեղք են, բայց զաղքատութիւն առաւել քան զյոյժ գովեն. յարգեն զթշուառութիւն, և պարսաւեն զյաջողուածս. ծաղր առնեն զանուն բախտի, և զփառաւորաւն յոյժ այպանեն. սիրեն զանշքութիւն հանդերձից, և յարգեն զանարդս քան զպատուականս. գովեն զմահ, և պարսաւեն զկեանս. անարգեն զծնունդս մարդոյ, և գովեն զանորդութիւն։ Այլ եթէ լսէ ոք դոցա և 'ի կանայս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվաղակի հասանէ։

Այլ ես ոչ կամեցայ զամենայն ըստ մասանց ընդ զբրով արկանել առ ձեզ. զի բազում այն ինչ է, զոր խօսին

դոքա։ Որ չարագոյն եւս է քան զոր գրեցաքդ, զԱստուած 'ի խաչ ելեալ 'ի մարդկանէ քարոզեն, և զնոյն մեռեալ և թաղեալ, և ապա յարուցեալ և վերացեալ յերկինս։ Ոչ ահա ձեզէն իսկ արժան էր անդրէն դատաստան առնել վասն այդպիսի անարժան ուսմանց։ Դեռ որ չարք են, ոչ ըմբռնին և տանջին 'ի մարդկանէ, թող թէ Աստուած արարիչ ամենայն արարածոց. զոր ձեզ ամօթ է ասել, և մեզ կարի անհաւատալի բանք։

Այդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք 'ի դուռն եկայք, յանդիման լերուք մեծի հրապարակին։

ԱՆՈՒԱՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ, ՈՐՔ ՊԱՏԱՍԽԱՆԵՑԻՆ ՆԱՄԱԿԻՆ

Յովսէփ եպիսկոպոս Այրարատոյ, Սահակ եպիսկոպոս Տարօնոյ, Մելէտ եպիսկոպոս Մանազկերտոյ, Անձևիկ եպիսկոպոս Բագրեւանդայ, Սուրմակ եպիսկոպոս բզնունեաց, Տաճատ եպիսկոպոս Տայոց, Մաթիկ եպիսկոպոս Բասենոյ, Գրասու եպիսկոպոս Տարուբերանոյ, Անրեմիա եպիսկոպոս Մարդաստանի, Աւղաղ եպիսկոպոս Մարդաղեոյ, Ենանիա եպիսկոպոս Սիւնեաց, Մուշէ եպիսկոպոս արծրունեաց, Սահակ եպիսկոպոս ռըշտունեաց, Բասիլ եպիսկոպոս Մոկաց, Գոդ եպիսկոպոս Ամատունեաց, Անղիշայ եպիսկոպոս ամատունեաց, Անղբայր եպիսկոպոս անձեւացւոց, Անրեմիաս եպիսկոպոս ապահունեաց։

Այս ամենայն եպիսկոպոսք և բազում քորեպիսկոպոսք և պատուական երիցունք 'ի տեղեաց տեղեաց հանդերձ սուրբ ուխտիւ եկեղեցւոյ միաբանք և միահաւանք, միահամուռ ժողովեալք 'ի Թազաւորանիստ տեղին ՅԱրտաշատ, հաւանութեամբ մեծամեծ նախարարացն և ամենայն բազմութեամբ աշխարհին արարին նամակին պատասխանի։

Յովսէփ եպիսկոպոս հանդերձ ամենայն միաբանելովքս 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքունս՝ Միհրներսեհի մեծի հազարապետիդ Աբեաց և անարեաց՝ բազում

խաղաղասէր մնոք բազմասցի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ Ն.ըեաց։

Ի նախնեաց ունիմք սովորութիւն աստուածատուր պատուիրանաւ՝ աղօթս առնել 'ի վերայ կենաց թագաւորի, և անձանձրոյթ խնդրել Յ.ստուծոյ վասն երկայն ժամանակաց դորա, զի խաղաղութեամբ վարեսցէ զտիեզերական իշխանութիւնդ, զոր աւանդեալ է դմա Յ.ստուծոյ. զի 'ի դորա յերկար խաղաղութեանն և մեք առողջութեամբ և աստուածպաշտութեամբ կատարեսցուք զկեանս մեր։

Վասն նամակին, որ քո 'ի մեր աշխարհս տուեալ էր, յառաջ ժամանակաւ մի ոմն 'ի մոգպետաց, որ կատարելագոյն էր 'ի դենիդ ձերում, և դուք առաւել քան զբնութիւն մարդկան 'ի վեր համարէիք զնա, հաւատաց նա Յ.ստուած կենդանի յարարիչն երկնի և երկրի, և բան առ բան ելոյծ և խմացոյց ձեզ զօրէնս ձեր։ Ն.ա իբրեւ ոչ կարացին բանիւ զդէմ ունել նորա, քարկոծեալ մեռաւ Յ.Ռմզդէ արքայէ։ Ն.ա եթէ հաւատարիմ համարիցիս զմեր բանս լսել, 'ի բազում տեղիս այդրէն յաշխարհիդ ձերում գտանին գիրք նորա. ընթերցիր, և անտի տեղեկանաս։

Ն.յլ վասն օրինացս մերոց, ոչ ինչ անհրեւոյթ են, և ոչ յանկեան ուրեք աշխարհիս քարոզին. այլ համատարած ընդ ամենայն երկիր, ընդ ծով և ընդ ցամաք և ընդ կղզիս. ոչ միայն ընդ արեւմուտս, այլ և ընդ արեւելս, այլ և ընդ հիւսիս և ընդ հարաւ և 'ի միջոցս լի է հոծութեամբ։ Ոչ 'ի մարդ ապաստան, եթէ վերակացուաւ տարածեսցի ընդ աշխարհս, այլ ինքն յինքենէ ունի զհաստատութիւն։ Ոչ առ այլովք վատթարօքն վեհ է. բեւի, այլ 'ի վերուստ յերկնուստ ունի զանսուտ օրէնսդրութիւնն. ոչ միջնորդաւ, զի մի է Ն.ստուած, և չիք այլ ոք բայց 'ի նմանէ, ոչ երիցագոյն և ոչ կրտսերագոյն։ Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել Ն.ստուած, այլ ինքն ինքեամբ միտնջենաւոր. ոչ 'ի տեղւոջ ուրեք, այլ ինքն ինքեան տեղի. և ոչ 'ի ժամանակի իմիք, այլ ժամանակք 'ի նմանէ գոյացան. ոչ միայն քան զերկինս երիցագոյն, այլ և քան զկարծիս մտաց մարդկան և հրեշտակաց։ Ոչ ձեւանայ 'ի տեսիլ տարրեղէն, և ոչ անկանի ընդ տեսլեամբ ական. և ոչ միայն ձեռին չզննի, այլ և ոչ ընդ

միտս ուրուք հարկանի, ոչ միայն ընդ մարմնականացս, այլ և ոչ ընդ անմարմին հրեշտակացն. բայց եթէ ինքն կամի՝ իւրոց աթոռանուորացն մնաց իմանի, այլ ոչ աչաց տեսանի. և մնաց՝ ոչ երկրաւորացս, այլ որ ՅԱստուածն են հաւատացեալ Ճշմարտիւ։

Այս անուն է նորա արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան զերկին և զերկիր, որպէս ինքնագոյ՝ ինքնանուն է։ Ինքն անժամանակ է, իսկ արարածոցս յորժամ կամեցաւ սկիզբն արար լինելոյ, ոչ յընչէ, այլ յոչընչէ. զի ինչ՝ նա միայն է, և այլ ամենայն 'ի նմանէ ընչացաւ։ Ոչ եթէ իբրեւ յետոյ իմացաւ և արար, այլ մինչ չեւ արարեալ էր նորա՝ 'ի կանուխ գիտութեանն իւրում տեսանէր զարարածս. որպէս և այժմ մինչ չև է գործեալ մարդոյ բարի ինչ կամ չար, Յստուծոյ յայտնի են անգործք մարդոյն։ Այնպէս և յայնժամ, մինչ չեւ էր արարեալ, ոչ խառն 'ի խուռն ինչ Ճանաչէր զանեղեն, այլ կարգեալ և յարմարեալ կային առաջի նորա իւրաքանչիւր մասանցն տեսակքն. իսկ մարդկան և հրեշտակաց՝ և տեսակքն և որ 'ի տեսակին լինելոց էին։

Այս քանզի արարող զօրութիւն է, ոչ կարէր խափանել զնորա բարերարութիւնն մեր չարութիւնս. որպէս և եղեւ իսկ, և ունիմք դատաւոր զաջն արարչին։ Զեռք, որ զերկինս և զերկիր հաստատեցին, նոյնք և տախտակս քարեղէնս փորագրեցին և եռուն մեզ դպրութիւն՝ որ ունի զօրէնս խաղաղականս և փրկականս. զի գիտասցուք զմի Յստուած արարիչ երեւելեաց և անտեսանելեաց։ Ոչ այլ և այլ, իբրեւ թէ ոմն բարի և ոմն չար, այլ մի և նոյն և համակ բարի։

Այլ եթէ թուիցի քեզ չար ինչ գոլ յարարածս Յստուծոյ, ասա համարձակ, զի թերեւս ուսցիս զՃշմարիտն բարի։ Զդեւս չար ասացեր. գոն և դեւք բարի, զոր և դուք և մեք հրեշտակս անուանեմք. եթէ կամին՝ և դեւք բարի լինին, և եթէ կամին՝ և հրեշտակք չար լինին։ Այդ և 'ի մարդիկ երեւին, և առաւել 'ի միոյ հօր որդիս. է որ հնազանդ և հպատակ է հօրն, և է որ չարագոյն քան զսատանայ։ Այս և ինքն իսկ մարդն առանձինն յերկուս բաժանեալ տեսանի, երբեմն չար և երբեմն բարի. և որ բարին էր՝ նոյն և չարացաւ, դէպ եղեւ՝ զի դարձեալ անդրէն 'ի բարի շրջեցաւ, և բնութիւնն մի է։

Digitized by Google

Բայց այն որ ասեսն, եթէ վասն թզոյ միոյ մահ ա-
ռաջ Աստուած, վատթարագոյն է պատուաւ մի մագաղաթ
քան զթուզ. ապա եթէ քան թագաւորին նկարի՝ ինչպէս,
ո պատուաւէ զնա՝ մահու ընդունի զպատուհաս. իսկ արդ
չար արժանն է ասել թագաւորին. քանզի, ես ոչ ասեմ.
այլ խրատ՝ ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ։ Յայն-
ժամ էր Աստուած նախանձոտ, թէ չէր պատուիրեալ
չուտել՝ ի ծառոյ անտի. ապա եթէ յառաջագոյն ըզ-
գուշացաւ, զգուշ բնական սիրոյն իւրոյ յայտնեաց
նմա։ Իսկ արհամարհելով մարդն՝ ընկալաւ զպատիժս
մահուն։

Բայց այն զոր ասացեր, եթէ ՝ած՝ ի կնոջէ ծնաւ,
յայդմ՝ էր արժան քեզ խորշել և փախչել. զի ահա-
ւասիկ Աստուն և Արմիզդ՝ ի հօրէ ծնան և ոչ՝ ի մօրէ. ո-
րում եթէ քաջ միտ դնես, և ոչ դու յանձն առնուս։ Չա-
միւս եւս այլ ծաղրագոյն քան զայդ. Արեգն աստուած
՝ ի կնոջէ ծնաւ, եթէ ոք ընդ իւրում ծնողին անկցի։

Այլ սակաւիկ մի եթէ՝ ի բաց թողացուցանէիր զփը-
քու

տէրութեանդ, և ընկերաբար գայիր՝ ի պայքար,
գիտեմ՝ զի իբրեւ այլովգ ամենայնիւ յոյժ իմաստուն
ես, և վասն ծննդեան Տեառն մերոյ՝ ի սուրբ կուսէն՝
ոչ աւելաբանութիւն հասանելիր, այլ առաւել քան զա-
ղարչութիւնն յաչընչէ զաշխարհս՝ մեծագոյն զվերջին
փրկութիւնն իմանայիր, ազատութեան մարդոյն զյան-
ցաւորութիւնն դնելիր, և բարերարութեանն Աստու-
ծոյ՝ զազատութիւնն՝ ի ծառայութենէ։

Զանգի յոյժամ լսես եթէ յոչնչէ արար Աստուած զա-
մենայն աշխարհս, բանիւ ծնունդ իմանալիր զարարածս։
Իսկ քանզի Աստուած որ զայս մեծ մարմին առանց չար-
չարանաց ծնաւ, ապաքէն իբրեւ զհայր գութ ունի ընդ
սմա։ Օ՛ի որ ինքն անապական է, և զարարածս առանց
ապականութեան ծնաւ. իսկ սա կամքն գլորեալ ապա-
կանեցաւ, և անձամբ եւս ոչ կարէր կանգնել կալ՝ ի վե-
րայ ոտից։ Զ՝ ան զի էր՝ ի հողոյ, անձամբ անձին արա-
ռեալ՝ անդրէն՝ ի նոյն քնութիւն դարձաւ. իբրեւ ոչ եթէ
յօտար զօրութենէ չարի ինչ ընկալաւ ուրուք զպատիժս
պատուհասին, այլ՝ ի յիւրմէ հեղգութենէն չլսել բա-
րերար պատուիրանին, խրատեցաւ ծառայական մանն
մահուամբն, զոր կրեաց յանձն իւր։

Digitized by Google

Բ՝դ եթէ զմահ չար աստուածն արար, զինչ գոյացութիւն երեւի մահու 'ի միջի. և ոչ ինչ։ Բ՝այց զաւարի Բ՝ստուծոյ զարարածն խանգարեաց։ Յ՝եթէ այդ այդպէս է, նմա և բարի իսկ ասել ոչ մարթի, այլ կիսագործ ապականացու։ Յ՝ւ որոյ Բ՝ստուծոյ արարածքն ապականելիք են և եղծանելիք, նմա անեղծ Բ՝ստուած չմարթի ասել։ Ցիծն անդր թողէք զյիմարութեան զաւրբանջմունսդ։ Մ՝ի՞ոյ աշխարհի երկու դեհապետք ոչ լինին, և ոչ միոյ արարածոց երկու աստուածք։ Յ՝եթէ ժպրհեսցին և լինիցին երկու թագաւորք միոյ աշխարհի, աշխարհն եղծանի և թագաւորութիւնքն խանգարին։

Բ՝աշխարհս նիւթեղէն է, և նիւթքս որիշ որիշ են և ընդ միմեանց հակառակ. մի է արարիչ հակառակորդացս, որ ածէ զսոսա 'ի սիրելութիւն հաւանութեամբ. որպէս մանրեալ կակղէ զքերմութիւն հրոյն՝ օդոյս հաւանութեամբ, և զապառումն բրտութեան օդոյն՝ հրոյն եռանդմամբ, սոյնպէս և մանրամանղ փոշիացեալ հողս՝ ջրոյն խոնաւութեամբ զանգանի, իսկ զ'ի վայր ծորելի բնութիւն ջրոյն սալայատակ տրամացեալ հողոյն կափմամբ։

Օ՝ի եթէ միաբանէին տարերքս, գուցէ ոք 'ի կարՀամտաց և Բ՝ստուած անապական զսոսա կարծէր. և թողեալ զարարիչն՝ արարածոյս զերկրպագութիւն մատուցանէր. վասն այնորիկ որ արար զսա, զգուշացաւ յառաջագոյն. զի հայեցեալ մարդիկ 'ի յանդիմանութիւն ապականացու տարերացս, անապական միայն զկառավար սորա իմացին, զմի և ոչ զերկուս. զնոյն արարիչ չորեքկին նիւթոյս, յորմէ ամենայնքս ծնողագործին հրամանաւ արարողին իւրեանց։ Յ՝ւ շրջագայութեամբք չորեք յեղանակք կատարեալք՝ գործեն զտարեւոր սպասաւորութիւնն. և չորեքեան հային կամաց ակնարկելոյ աբարչին իւրեանց. և անզգայութեամբ ընթացեալ են 'ի գործ հարկաւորութեանն՝ չյաւիշտակելով զկարգ պատուոյն 'ի միմեանց։

Յ՝ւ ահա պարզաբար ասացեալ դիւրատար լուսաւորութիւն յականջս ամենեցուն։ Օ՝ի այն որ հուրն է, գոյացութեամբ և զօրութեամբ խառնեալ է յերիսն եւս մասունս. իբրեւ գտանի ջերմութիւնն յոլովագոյն 'ի քաջրինս և յերկաթս, և սակաւագոյն յօդ և 'ի ջուր, և

ինքն առանձին ուրեք ոչ երեւի։ Իսկ ջրոյն բնութիւն գոյ առանձինն, գոյ և 'ի խառնուածն երիցն եւս մասանցն. յոլովագոյն 'ի հողաբոյսս և սակաւագոյն յօդ և 'ի հուր։ Իսկ օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուրն, և 'ի ձեռն ջրոյն ընդ կերակուրս աճեցականս։

Այս այսպէս խառնեալ են տարերքս այս, և գոյացեալ իբրեւ զմի մարմին, և ոչ կորուսեալ զիւրաքանչիւր բնութիւնս, և ոչ երբէք զկայան առեալ հակառակութեամբ, հայելով 'ի մի իշխանն միխառնն, որ զխառնուածն յարմարեալ կազմէ առ 'ի բնակութիւն կենդանեաց ամենեցուն, և տեւողութիւն յարակայութեան բոլոր աշխարհիս։

Իսկ եթէ առ անբան աշխարհս այսպէս հոգ տանի Աստուած, ո՞րչափ եւս առաւել առ բանաւոր աշխարհս՝ մարդս։ Օ՞ր և ձեր ոմն քաջ յիմաստնոցն ասաց, եթէ Տիրն աստուած մայրածին է 'ի մարդկանէ, և թագաւոր աստուածազաւակ է, և համհարզ քաջ եօթնեբորդաց աստուածոց։ Այթէ հաւատալ արժան է առասպելաբանութեանդ, զոր դուք և գործովք իսկ կատարեալ ցուցանէք 'ի դէնիդ ձերում, մեք ոչ եւս առասպելացն հաւատամք. այլ աշակերտք եմք մեծին Նովսիսի մարգարէին, ընդ որում Աստուած խօսեցաւ 'ի մորենւոջն 'ի Սինէ, և դէմ յանդիման օրէնս գրեաց և ետ ցնա. և ծանոյց զնիւթեղէն աշխարհն իբրեւ զարարածս, և զիւր անանիւթ էութիւնն՝ արարիչ նիւթոցս յոչընչէ. և զերկիրս երկրաւորաբս և զերկինս երկնաւորաբ ծանոյց նմա, զի գործք ձեռաց նորա են։ Ինակիչք երկնի՝ հրեշտակք, և բնակիչք երկրի՝ մարդիկ. բանաւոր՝ մարդ և հրեշտակ միայն, և Աստուած 'ի վեր քան զերկինս և զերկիր։

Այս ամենայն արարածք անբանութեամբ կատարեն զհրամանս պատուիրանի նորա, ոչ երբէք անցանեն ըստ եղեալ սահմանն իւրեանց. բայց մարդ և հրեշտակ ազատ թողեալ 'ի կամս անձին իւրոյ, քանզի մնաւորք են, եթէ կայցեն 'ի հրամանի նորա՝ անմահք են և որդիք Աստուծոյ։ Օ՞բոլոր արարածս տուեալ է 'ի ծառայութիւն, զերկիրս մարդկան և զերկինս հրեշտակաց. ապա եթէ ստունգանիցեն և անցանիցեն ըստ հրամանաւ, զընդդէմն գործեսցեն Աստուծոյ, յիւրա-

քանչիւր պատուոյն զանարգանս ընկալցին. զի երեւեսցի տէրութիւնն անբամբաս, և յանցաւորքն ամենայնիւ յանցանացն։

Իսկ եթէ դու 'ի տգիտութեան վրիպեալ ես, ես որ հաստատունս գիտեմ՝ ոչ կարեմ գալ զկնի քո մոլորութեանդ։ Եթէ աշակերտիմ անուսումնութեանդ, երկոքինս յանգիւտ կորուստն մատնիմք, թերեւս ես չարագոյն քան զքեզ. քանզի վկայ ունիմ ինձ զինքնասաց ձայնն Աստուծոյ. Զառայ, ասէ, որ ոչ գիտէ զկամս տեառն իւրոյ, և արժանի գանի ինչ գործ գործել, ըմպել ըմպէ գան, այլ սակաւագոյն. իսկ որ տեղեկագոյն է կամաց Թագաւորին, և յանցանէ ինչ առաջի նորա, առանց բարեխօսի բազմապատիկ տանջի։

Երդ աղաչեմ զքեզ և զամենեսեան՝ որ ընդ քոյով իշխանութեամբ են, մի դու ընդ իս բազմապատիկ տանջիր, և ոչ ես ընդ քեզ սակաւագոյն. այլ ես և դու և ամենայն բազմութիւնդ հանդերձ արի Թագաւորաւդ այնպէս աշակերտեսցուք աստուածային գրոց, զի 'ի տանջանացն ապրեսցուք, և զդժոխս արհամարհեսցուք, և յանչէջ հրոյն զերծանիցիմք, և զաղքայութիւնն ժառանգիցեմք, և անցաւոր կենաց զանանց մեծութիւնն անվախճան ունիցիմք։ Բայց յորմէ դուդ զարհուրեալ ես՝ դիւրահաւան լեր, և վաղվաղակի աշակերտիս ճշմարտութեանն։

Զմն 'ի հրեշտակաց յանմահիցն գնդէն ստամբակեալ և 'ի բաց գնաց յերկնից. 'ի մեր աշխարհս եկեալ՝ պատիր քանիւք և սուտ խոստմամբ զանչինելի յոյսն առաջի դնէր, իբրեւ տղայ մանկան, անփորձ և անկիրթ նորաթեք մարդոյն, 'ի վեր հայեցուցանելով զմիտս նորա ուտելով 'ի պտղոյ ծառոյն, յոր հուպն չէրամայեաց երթալ, զի լիցի աստուած։ Իսկ նորա մառացեալ զպատուիրանն Աստուծոյ, խաբեցաւ զկնի մոլար խաբէութեանն. կորոյս զոր ունէր զփառս անմահութեանն, և չեհաս երազայոյս կարծեացն։ Զատն որոյ և մերժեալ 'ի կենաց տեղւոյն, ընկեցաւ յապականելի աշխարհս՝ յորում և դուքս էք բնակեալ այժմ, և ցնորեալ մոլորիք զկնի նորին խրատուի. ոչ եւս ուտելով 'ի պատուիրեալ ծառոյն, այլ զարարածս աստուած ասելով, և անխօս տարերցս երկիր պագանելով, և անո-

բովայն դիւաց կերակուր մատուցանելով, և յարարչէն բոլորեցունց 'ի բաց լինելով։

Ով յագի չար խրատտուն, այլ կամի՝ զի քան զինքն չարագոյնս արասցէ։ Բանզի դեւքն ոչ եթէ բռնաբար զոք վարեն 'ի կորուստ, այլ զմեղն քաղցրացուցանեն 'ի կամն մարդոյն, և ողջանոք ոսան զանուսմունս 'ի խաբէութիւն, որպէս բազում մարդիկ զընկերս իւրեանց 'ի գողութիւն և յաւազակութիւն. իբր ոչ եթէ բռնի ինչ վարելով, այլ պատիր խաբէութեամբ տան գործել բազում չարիս, զոմանս 'ի կախարդութիւն և զոմանս 'ի պոռնկութիւն և զոմանս յանթիւ 'ի բազում յայլ իրս աղտեղութեան։ Այս արդար դատաւորք վրէժ առնուն մահու չափ. իբր ոչ եթէ բարի աստուծոյ դատաւորք իցեն բարեգործ, և չարին՝ չարագործ. զի բազում անգամ է՝ զի 'ի բարի մարդկանէ չարք լինին, և յետոյ 'ի չարագունից անտի կատարելագոյն բարիք։

Այս դատաւորք ստոյգ, որք դատին զչարագործս, ոչ եթէ չարք անուանին և չարչարիչք, այլ յոյժ բարիք և բարեգործք. և ընութիւն մի է, և ոչ երկու. իսկ 'ի միոջէ անտի գործք երկուութեան երեւին. ոմանց սատակիչք, և ոմանց պարգեւատուք։ Այս եթէ առ մարդիկ այս պաշտի 'ի ձեռն թագաւորական վիճակին խրատուխնամ տանել իւրում իշխանութեանն, որչափ եւս առաւել Աստուծոյ բոլոր աշխարհս, որ ընդ ամենեցուն կեանս կամի, և ոչ ընդ մահ։ Իսկ ուր բազմացաւ յանցաւորութիւն, տանջեաց զամենեսեան մահուամբ. իսկ ուր եղեւ ունկնդրութիւն հնազանդութեան, ընդհանդեաց պարգեւս անմահութեան։

Այն է Աշխարհիս Աստուած՝ բոլորեցունց մեր արարիչ, զոր դու աներեսանակ արձակ բերանով՝ անահ աներկիւղ համարձակ հայհոյես. Թողեալ զՅիսուս Քրիստոս զփրկական անունն, Փանդուրակայ որդի անուանես, և մարդ մոլորեցուցիչ կարծես. և զերկնաւոր փրկութիւնն աղաւաղես և անարգես 'ի կորուստ անձին և բոլոր աշխարհիս։ Զոր տալոց և հատուցանելոց ես զանանցական վրէժ տանջանացն յանշէջ հուրն սպառնացեալ գեհենին, հանդերձ ամենայն գործակցաւք քոյովք, առաջնովք, միջնովք և վերջնովք։ Այլ մեք այսպէս գիտեմք զԱստուած, և 'ի սոյն հաւատամք յաներկբայս։

Digitized by Google

Այլ որ արար զաշխարհս, նոյն եկն և ծնաւ 'ի սուրբ կուսէն Աստուածածնայ, յառաջագոյն նկատելով մարգարէին, առանց իրիք պատճառանաց մարմնաւոր կարգի։ Որպէս յոչընչէ արար զայս մեծամարմին աշխարհս, ոչնպէս առանց իրիք մարմնական միջնորդի ամ զմարմին յանփորձ կուսէն ձշմարտիւ, և ոչ առաստուերագիր երեւմամբ։ Այլ Աստուած ձշմարտիւ, և եղեւ մարդ ձշմարտիւ. ոչ 'ի լինելն մարդ՝ կորոյս զաստուածութիւնն, և ոչ 'ի կալ մնալ Աստուած՝ աղաւաղեաց զմարդկութիւնն. այլ նոյն և մի։ Աստ քանզի ոչ կարէաք տեսանել զանտեսանելին և մերձենալ յանմերձենալին, եկն եմուտ ընդ մերով մարդկութեամբս, զի և մեք մտցուք ընդ նորա աստուածութեամբն։ Ոչ անարգանս ինչ համարեցաւ զգենուլ զիւր ստեղծուած մարմինս, այլ մեծարեաց իբրեւ աստուածաստեղծ զիւր գործ։ Ոչ առ սակաւ սակաւ շնորհեաց ինչ սմա զանմահութեան պատիւն, իբրեւ զանմարմին հրեշտակաց, այլ միանգամայն զբոլոր բնութիւնն մարմնով շնչով և հոգւով զգեցաւ, և միաբանեաց ընդ աստուածութեանն. միութիւն, և ոչ երկուութիւն. և այսուհետեւ մի գիտեմք զաստուածութիւնն, որ յառաջ էր քան զաշխարհս, նոյն և այսօր։

Աստ Յիսուս Քրիստոս՝ որ յիւր մարմինն փրկեաց զբոլոր աշխարհս, սա եկն կամաւ 'ի մահ. և որպէս ինքն աստուածութիւնն գիտէ, Թանձրացաւ յանարատ կուսէն, և ծնաւ և պատեցաւ 'ի խանձարուրս և եդաւ 'ի մուր, և շարժեաց ած զմոգսն յարեւելից յերկրպագութիւն. մնաւ իբրեւ զտղայ կաթամբ, աճեաց և մեծացաւ ամս երեսուն, մկրտեցաւ 'ի Յովհաննէ 'ի յամբոր-դոյն 'ի Յորդանան գետ։ Աստ նշանս մեծամեծս և արուեստս 'ի մէջ Հրէիցն, մատնեցաւ 'ի քահանայից, դատապարտեցաւ 'ի Պիղատոսէ պոնդացւոյ։ Խաչեցաւ, մեռաւ, Թաղեցաւ, յարեաւ յաւուր երրորդի, երեւեցաւ երկոտասան աշակերտացն և այլոց բազմաց աւելի քան զհինգ հարիւրոցն։ Այլ շրջելով ընդ նոսա զաւուրս քառասուն՝ վերացաւ յերկինս 'ի լեռնէն ձիթենեաց յանդիմանն իւրոց աշակերտացն, եկ և նստաւ 'ի հայրենի աթոռն։ Խոստացաւ երկրորդ անգամ գալ ահաւոր զօրութեամբ յարուցանել զմեռեալս, նորոգել զբո-

լոր աշխարհս, առնել դատաստան արդար 'ի մէջ արդարոց և մեղաւորաց, տալ պարգեւս արժանաւորաց, և հատուցանել պատիժս չարագործաց՝ որ այսմ ամենայնի բարերարութեանց ոչ հաւատան։

Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարուածք։ Ամենայն ինչք և ստացուածք մեր 'ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան, ըստ կամաց քոց արա զինչ և կամիս։ Եթէ սովին հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տեր փոխանակեմք ընդ քեզ, և ոչ յերկինս այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի, որ չիք այլ Աստուած բայց 'ի նմանէ։ Ապա եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք, զբոլոր մարմին տուեալ 'ի ձեռս քո՝ վաղվաղակի արա զինչ և կամիս։ Ի քէն տանջանք, և 'ի մէնջ յանձնառութիւնք. սուր քո, և պարանոցք մեր։ Զեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եդին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց։

Զի եթէ անմահք իսկ էաք, և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն Քրիստոսի, արժան էր. քանզի և նա անմահ էր, և այնչափ սիրեաց զմեզ, մինչեւ մահ 'ի յանձն էառ, զի և մեք նորա մահուամբն յաւիտենական մահուանէն ազատեսցուք։ Այլ եթէ նա յիւր յանմահութիւնն ոչ խնայեաց, մեք զի կամաք եղաք մահկանացուք, կամաք մեռցուք վասն սիրոյ նորա, զի կամաք յանձն առցէ զմեզ յիւր յանմահութիւնն. մեռցուք իբրեւ զմահկանացուս, զի ընկալցի զմեր մահն իբրեւ զանմահից։

Այլ դու յայսր ամենայնի այլ զմեզ մի հարցաներ. զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրիցիմք իբրեւ զտղայս. այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և 'ի բաց ելանել, ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս։

Ի սմին մեծի հաւանութեան ամենայն բազմութիւնն միաբանեաց 'ի մեծամեծաց մինչ ցփոքունս. անսուտ երդմամբ եդին վկայութիւն՝ կենաց և մահու 'ի նմին կալ հաստատուն։

Digitized by Google

Այս իբրեւ եհաս նաւանկն յաղքունիս, և ընթերցան 'ի մեծի խանասատանի յանդիման ամենայն բազմութեան կարաւանին, բազումք այնոքիկ էին՝ որ իբրեւ լսէին՝ զովէին զպատասխանիսն։ Ամենայն և երկրէին յահէ տէրութեանն, սակայն 'ի ծածուկ առ միմեանս զնոյն վկայութիւնս զովութեանց տային. առաւել քան ընդ Ճարտարապետութիւնն, ընդ համարձակութիւն աներկիւղութեանն զարմանային։ Այս բազումք ահաբեկեալք սկսան զրահել զնդապէս. և զնոյն շշնջիւն լսէին յամենայն շրթանց։

Իսկ չարասէր մոգպետն հանդերձ մեծ հազարապետաւն շնչեաց չարախօսութիւն, և բորբոքեաց զթագաւորն իբրեւ զհուր անշիջանելի։ Այս սկսաւ կրճտել զատամունսն իբրեւ զօրհասական վիրաւոր. և յայտ յանդիման ձայնարկեաց առ մեծ հրապարակին և ասէ. Զի տեմ ես զչարութիւն բազմութեան մարդկանս, որ թեբահաւատեն 'ի մերոց օրինացս, և զկնի կախարդութեան մոլորեալ են անդարձութեամբ։ Այս իմ եղեալ է 'ի մտի, թէ ոչ ումեք թողացուցից 'ի մեծամեծ հարուածոցն, մինչեւ ակամայ 'ի բաց կայցեն յայնպիսի վրիպական օրինաց. եթէ ոք կարի 'ի մերձաւորաց իցէ, զնոյն անցս և ընդ նոսա անցուցից։

Յայնժամ ծերն դառնացեալ բանս 'ի ներքս ընկէց, և ասէ ցթագաւորն. Զո՞ւ ինչ է քոյ այդ մեծ տրտմութիւնդ. զի եթէ կայսր չելանէ ըստ քո հրաման, և Հոնք կան քեզ 'ի ծառայութեան, ո՞ր մարդ է յերկրի՝ եթէ կարող է ընդդէմ դառնալ քում հրամանիդ։ Տիրաբար հրաման տուր 'ի ներքս, և ամենայն որ զինչ և ասես՝ վաղվաղակի կատարի։

Այս անդէն թագաւորն 'ի ներքս կոչեալ զդպրապետն, հրամայեր գրել հրովարտակ. և ոչ եւս ըստ սովորութեանն, այլ բանս զայրագինս իբր առ ատելիս և անպիտանս, չմիշելով ամենեւին զմեծամեծ վաստակս տիրասէր մարդկանն. այլ միայն կոչոյ հրաման տուեալ յաւկանէ յանուանէ զարս՝ զոր ինքն Ճանաչէր. որոց անուանքըն են այս. 'ի տոհմէն Իւնեաց Ասակ անուն, 'ի տոհմէն արծրունեաց Երշապուհ անուն, 'ի տոհմէն ռըշտունեաց Արտակ անուն, 'ի տոհմէն խորխոռունեաց Պատէշոյ անուն, 'ի տոհմէն մամիկոնեանից Վարդան ա-

նուն, 'ի տոհմէն Մոկաց Բրտակ անուն, 'ի տոհմէն ապահունեաց Մանէհ անուն, 'ի տոհմէն ամատունեաց Պահան անուն, 'ի տոհմէն վահեւունեաց Գիւտ անուն, 'ի տոհմէն անձեւացւոց Շմաւոն անուն։ Այս նախարարքս յակամէ յանուանէ կոչեցին 'ի դուռն արքունի. և կէսքն առ նմա իսկ էին 'ի կարաւանին, և այլքն 'ի կողմանց հիւսիսոյ 'ի Հայոց պահակին. Թոզեալ էր զոմանս 'ի նախարարացն անդէն յաշխարհին Հայոց։

Բրդ Թէպէտ և ոչ համագունդ 'ի միոջ վայրի զիպեցան ամենեքեան, սակայն յառաջագոյն գիտացեալ զիսորհուրդսն չարաբարոյ բռնաւորին, և զհեռաւորսն եւս իբրեւ զմերձաւորսն 'ի միոջ վայրի առ միմեանս համարէին։ Եւ 'ի ձեռն Յովսեփու եպիսկոպոսի նովին ուխտիւ հաստատեալ՝ խաղացին գնացին յիւրաքանչիւր տեղեաց 'ի դուռն արքունի։ Եւ յոյժ փութային վասն եղբարոյ և որդեաց և սիրելի դայեկամունդ բնակացն, որ չարաչար կային 'ի մեծի նեղութեանն։ Ամն որոյ և նոքա զանձինս 'ի մահ մատնեցին, ոչ ինչ զանգիտելով իբրեւ զանարի վաստասիրտս, այլ յոյժ քաջութեամբ այնդէին զանձինս, զի թերեւս կարասցեն փրկել զնոսա 'ի մեծամեծ հարուածոցն։

Եւ իբրեւ հասին 'ի դուռն արքունի, և 'ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին մեծի թագաւորին։ Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս իւրեանց 'ի մեծամեծ վիշտս տառապանաց, որ վասն անուանն Քրիստոսի ձգնեալք էին այնդապէս, ոչ ինչ տրտում և տրխուր զերեսս ցուցանէին հրապարակին։ Եւ որչափ նոքա զուարթագին երեւէին ամենեցուն, առաւել զարմանային չարասէրքն։

Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ 'ի Հայոց այրուձի 'ի դուռն երթայր 'ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք, այր ընդ յառաջ յղէր, և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին. և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր, և զհանդէս գնդին ինքնին տեսանէր։ Եւ յառաջ քան 'ի գործ պատերազմին հասանել, զգաչն իսկ առ նա՝ մեծ ընորհակալութիւն համարէր. և առաջի աթոռակցացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ ամենեցուն գովութիւն մա-

Digitized by Google

տուցանէր. և յիշէր զնախնեացն զվաստակս, և զառն առն քաջութիւն պատմէր նոցա։

Իսկ այն օր և ոչ մի ինչ յայսցանէ ամենեւին ինչ ոչ յիշեաց. այլ իբրեւ զչարադեւ մի՝ ոչ եւս դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնւոյ. որպէս և նմա նեալ իսկ էր ծովածուփ ալէկոծ խռովութեան. և ոչ դուզնաքեայ վեր 'ի վերոյ, այլ անդստին յանդնդոց բարձրանալ փրփրել կուտակել՝ վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով առ հասարակ դողացուցանէր զտիեզերական իշխանութիւնն, որպէս փլեալ տարածանիցի հանատարած ամենայն 'ի վերայ լերանց, խոտոց, ձորոց, ապականեալ միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելչութեան։

Ընդունչելով բարբառ արձակեալ և ասէ. Արդուեալ իցէ իմ յարեգակն 'ի մեծ աստուածն, որ Ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն. եթէ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երեւումն աքաղաղոյն, ընդ իս զիւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեալիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թոզացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանաց 'ի վերայ ածելով, մինչեւ ակամայ կատարեալիք զկամն հրամանաց իմոց։

Իսկ հաւատացեալքն հաստատեալք 'ի Քրիստոս, ոչ 'ի սառնամանեաց ձմերանւոյն հովանային, և ոչ 'ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն սարսէին, և ոչ 'ի սպառնալեաց տանջանացն զանգիտէին. այլ 'ի վեր հայեցեալք՝ զզօրութիւնն Քրիստոսի յօգնականութիւն եկեալ տեսանէին. և զուարթագին դիմաք և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին.

Խնդրեմք 'ի քէն, արքայ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուր զոր ասելոցս եմք։ Զանազի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Հ ապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի. և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց 'ի ժառանգութիւն սովին օրինօք, որով և մեք իսկ վարիմք այժմ, և հարքն մեր և հաւքն հարցն մերոց կացին նմա 'ի ծառայութեան վաստակս. և սիրով կատարէին զամենայն հրամանս բանի նորա, և բազում անգամ 'ի նմանէ մեծապարգեւք

լինէին։ Եւ յայնց ժամանակաց մինչեւ 'ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերեւս քեզ լաւագոյն քան զառաջնոցն։

Այս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոյն ըստ զինուորութեան կարգի։ Եկ զմոտից և զսակից, և որ այլ եւս էին հարկք աշխարհին, սաղմոսգոյն քան առ հարքն նորա երթայր յարքունիս, նա և 'ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ 'ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց 'ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եղիր. և մեք առ սէր քոյոյ տերութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ։ Եղիր վասն էր յուզեալ ի ցասումնս այս 'ի վերայ մեր. ասա դու մեզ զպատճառս ճշմարտոն. եթէ օրէնքն մեր պատճառք ի ցեղն անվատակ լինելոյ առաջի քոյ։

Եկ չարադեւն լի ամենայն նենգութեամբ՝ զերեսս 'ի մի կոյս դարձուցեալ, և ասէ. Նաս համարիմ ընդունել 'ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ, և անօգուտ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի տըգիտաբար մոլորեալ էք 'ի ճշմարիտ օրինացս մերոց, և զաստուածս անարգէք և զկրակ սպանանէք և զջուրս պղծէք, և զմեռեալս 'ի հող թաղելով զերկիր ապականէք, և քրտիկաբ չառնելով ոյժ տայք Հարամանոյ. և որ մեծ քան զամենայն, զի հանապազ 'ի կանայս ոչ մերձենայք. և մեծապէս լինի դիւաց խնդութիւն, չխրատելով ձեր և չպահելով զամենայն կարգս մոգայ։ Ցեանեմ զձեզ իբրեւ զխաշինս ցրուեալս և զվայրատեալս յանապատի. և յոյժ զեզջ է մտաց իմոց, թէ գուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր՝ 'ի մէնջ վրէժ առնուցուն։ Եւ դուք եթէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր և մեծարանօք անդրէն յուղարկիլ, զոր ասացի՝ վաղիւ վաղվաղակի կատարեցէք։

Յայնժամ Երամնելի նախարարքն առ հասարակ ըզձայնս իւրեանց բարձին և ասեն յանդիման ամենեցուն. Ո՞ի դու, արքայ, և մի՞ զայդ այլ առ մեզ ասեր. քանզի ոչ է եկեղեցի շինուած մարդոյ, և ոչ տուրք արեգական, որպէս դուք այլ ընդ այլոց կարծես՝ թէ աստուած իցէ. ոչ միայն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ։ Եւ եկեղեցիք ոչ են պարգեւք թագաւորաց, և ոչ արուեստ ճարտարութեանց, և ոչ գիւտք իմաստնոց, և

ոչ աւար քաջութեան զինուորաց, և ոչ պատիր խաբեբութիւնք դիւաց. նա և բնաւ իսկ ամենեւին զինչ և ասասցես յերկրաւորացն, կամ 'ի վերից կամ 'ի վատթարաց, բնաւ ուրեք եկեղեցի 'ի նոցանէ ոչ գտցի։ Այլ ընորհք են մեծին Աստուծոյ, ոչ միւմ ումեք 'ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր աղդաց, որք վիճակեալք են 'ի բնակութիւն 'ի ներքոյ արեգականս։ Իմունք նորա եղեալ են 'ի վերայ հաստատուն վիմի. ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք դրդուեցուցանել։ Այս զոր երկինք և երկիր ոչ դողացուցանէ, մի՞ որ 'ի մարդկանէ խրոխտացի յաղթել նմա։ Զպա՞ս, որով օրինակաւ զինչ կամիս առնել՝ կատարեա. պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց՝ զոր սպառնացար, ոչ միայն 'ի չարչարել, այլ և 'ի մեռանել։ Այս եթէ դարձեալ եւս զնոյն բանս հարցանես, 'ի միոջէ միոջէ լուիցես առասել քան զդոյն պատասխանի։

Յայնժամ դառնացեալ քան զլեղի թագաւորն, փոխուզանէր անդէն 'ի փորին զծով կամաւոր մաղձոյն իւրոյ. և ընդ քիթն և ընդ բերանն առ հասարակ գոլոշի ջերմախառն ելանէր, իբրեւ 'ի սատիկ հնոցէ ծուխ թանձրացեալ։ Այս առ չհանդարտել սրտին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւն մարմնոյն, և ծակոտէր զբազմամեթեր ամանն խորհրդոցն. ցրուէր և վատնէր զամենայն խորհուրդն նենգութեան։ Այս զոր ոչ երբեք կամէր իւրոց սիրելեացն յայտնել, ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ։

Այրեքկներ և չորեքկներ զանսուտ երդումն յարեգակն, և ասէր այսպէս. Ես կարէք աւերել զանխաբ ամուրս իմ. և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ 'ի գնդիս են՝ չարաչար կապանօք 'ի Պակաստան տամ անցուցանել ընդ անձնասարհ տեղիս, որ և բազումք 'ի ձէնջ 'ի խորշակէ յերթալն սատակիցին, և մնացեալքն անկցին 'ի բերդս ամուրս և 'ի բանդս անելս։ Այս 'ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք, և զկին և զորդիս 'ի Հոյժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս՝ և զոր անուանէքն վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք

ընդդէմ դարձեալ գոցի, կորան եղեալ գազանաց՝ անողորմ մեռանիցի։ Այլ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին։

Այլ վաղվաղակի հրամայէր զպատուական նախարարսն հանել մեծաւ անարգանաք յերեսաց իւրոց. և զգուշութեամբ հրաման տուեալ դահճապետին՝ առանց կապանաց յիւրաքանչիւր վանս պահել, և ինքն զառաջեալ անդրէն դառնայր անմիխիթար տրտմութեամբ զօթեւանս ագանէր։ Իսկ հաւատացեալքն Աշմարտութեամբ 'ի Քրիստոս՝ ոչ ինչ երկմտութեամբ թերահաւատէին յառաջին խրատուէն 'ի սուրբ վարդապետացն իւրեանց. այլ տակաւին խնդրէին հնարս իրացն, թէ որպէս զանձինս և զսիրելիս հանցեն 'ի մեծ նեղութենէն։ Այլ բազում անգամ ջանալով, և մեծամեծացն՝ որ օգնականք էին նոցա 'ի դրանն արքունի՝ խաստմունս մեծամեծս առաջի դնէին նոցա առ 'ի յոյս կարասւոյ, և ոչ սակաւ գանձս առ ժամայն ծախէին նոցա։

Այլ իբրեւ յամենայն կողմանց եկն փակեցաւ անել արգելան նոցա, յայնժամ զխորհուրդն Աբրահամն 'ի մէջ առեալ՝ աղաղակէին և ասէին 'ի սիրտս իւրեանց. Ամենեցուն մեր նուիրեալ և եղեալ զեղբարս և զորդիս և զամենայն սիրելիս ընդ կապանաք իբրեւ զԱհակ 'ի վերայ զուրգ սեղանոյն, ընկալ Տէր զկամաւոր պատարագս մեր, և մի՛ տար զեկեղեցի քո յայսքան կատականաց անօրէն իշխանիս այսորիկ։

Զի ոմն 'ի նեղբին խորհրդակցացն արքայի 'ի ծածուկ ունէր զանքակ սէրն 'ի Քրիստոս, քանզի մկրտեալ իսկ էր յաւազանն կենդանի. և մեծապէս հոգ առանէր հնարից կենաց վշտացելոցն։ Այլ իբրեւ ստուգեաց Աշդրտիւ, եթէ զոր բազում սպառնացաւ թագաւորն՝ զամենայն չարիսն կամի անցուցանել ընդ աշխարհն Հայոց, թէպէտ և ոչ ամենեցուն՝ այլ սակաւուց 'ի նոցանէ ուսոյց զիրատ հնարից. զի առ անգամ մի 'ի նեղութենէ անտի զանձինս ապրեցուսցեն։

Այլ մինչ դեռ գունդ կազմէին, որ զնոսա շկոթակ ապրասցեն յանդարձ օտարութիւն, որպէս զբազում նախարարսն 'ի Պրաց աշխարհէն արարին, 'ի նմին ժամանակի գուժկան հասանէր 'ի կողմանցն Ռուշանաց, եթէ գունդ հատաւ 'ի թշնամեացն, որ եկին աւերեցին

զգաւառս բազում արքունի։ Եւ այս լինէր մեծ օգնականութիւն նոցա յերկնից։ Եւ անօրէնն Ճեպեալ տագնապէր զայրուձին յառաջ արձակել, և ինքն փութով ատէպ զհետ երթայր. և 'ի խոր խոցեալ զխորհուրդն՝ ցրուէր զառաջին հաստատուն երդումն։

Իսկ երկիւղածացն Տեառն զայս տեսեալ, մեծաւ յուսով աղօթելով ասէին միաբան. Դու Տէր ամենայնի, որ գիտես զծածկեալս սրտից մարդկան, և յայտնի են առաջի քո ամենայն աներեւոյթք խորհրդոց, և ոչ ինչ ինդրեաս վկայութիւն յերեւելեաց, որպէս զի և զանգործս մեր տեսին աչք քո. ապդ առաջի քո հեղումք զինդրուածս մեր։ Ընկալ, Տէր, զծածկութիւն աղօթից մերոց, և կատարեա զմեզ 'ի հաճոյս պատուիրանաց քոց. զի ամաչեսցէ չարն, որ խրոխտացեալ մարտնչի ընդ մեզ իշխանութեամբ անօրինին։ Ճարժեաս, Տէր, զկամակոր խորհուրդսն նենգաւորին, և խափանեցո զկամս ամբարշտութեան նորա, և դարձո զմեզ խաղաղութեամբ խորհրդոցն անդրէն 'ի սուրբ եկեղեցին. զի մի յանկարծակի յափշտակեալ աւերեսցի չարաչար 'ի թշնամեաց։

Եւ անձամբք իւրեանց զայս ուխտ եղեալ անքակութեամբ ընդ Ստուծոյ, զի հաստատուն կայցեն ըստ առաջին խորհրդոցն, պատգամ 'ի ներքս յղէին զնոցն խրատուն իւրեանց, իբր թէ կատարեսցին կամք անօրէնութեան նորա։

Օգն իբրեւ լուաւ թագաւորն, յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զդիսն հասանել նմա յօգնականութիւն, շրջեալ և աւերեալ զհաստատուն խորհուրդս ծառայիցն Ստուծոյ, և ահա մնասուցանեն երկրպագութիւն արեգական, պատուեալ զնա զոհիւք և ամենայն օրինաւք մեգութեանն։ Եւ զայն ոչ կարաց իմանալ ցնորեալն, եթէ անստուեր լոյն արեգականն արդարութեան, սպառեր և մաշեր զքաւարարային խորհուրդս նորա, և եղծեալ ապականէին զամենայն խեղաթիւր կամս նորա։ Եւ կուրացեալ 'ի ճշմարիտ յայտնութենէն՝ ոչ ինչ իմացաւ զպատգամս խաբէութեանն, որով վրիպեացն։ Հեղոյր արկանէր առաջի նոցա զպարգեւս երկրաւորս, և վերստին ամենեցուն զպատիւս և զգահս նորոգէր, յառաջ մատուցանելով և երեւելի

առնելով ընդ ամենայն տիեզերական իշխանութիւնն։ Եւ անբաւ առատութեամբ ազարակս և աւանս միւմ միւմ նոցա յարքունուստ շնորհէր, սիրելիս և բարեկամս կարգեալս զնոսա. և առ հպարտս յանդգնութեան մնացեալս կամակորութեան՝ կարծէր եթէ փոխանակիցն ձշմարտութիւնն ընդ ստութեանն։

Եւ զայս ասարեալ, բազում այրուձի գումարէր ընդ նոսա, և 'ի մոգացն ոչ սակաւս, աւելի քան զեօթն հարիւր վարդապետս յղէր ընդ նոսա, և զմեծ ամն իշխան մոգպետ կացուցանէր 'ի վերայ նոցա։ Խոնարհէր և աղաչէր պատուիրելով, թէ մինչ ես 'ի պատերազմէս դարձեալ գայցեմ խաղաղութեամբ, ձեր ասարեալ և կատարեալ իցէք զամենայն ըստ կամաց իմոց։ Եւ այսպէս շքով և պատուով առաջնորդէր նոցա զերկարութիւն ճանապարհին անդրէն յերկիրն Հայոց։ Եւ ինքն աւետիս ինդալիս առաքէր յաստուշանա բազումս, գրեր և ցուցանէր մոգաց և մոգպետաց և ամենայն մեծամեծաց կողմանց կողմանց աշխարհաց, որպէս զիւր օգնականութեամբ զգործ քաջութեան իմոյ յաւարալ մատուցեալ։

Իսկ խոհերականքն այնուհետեւ յարուցեալ յիւրաքանչիւր խաւարային դարանաց՝ իղձք լինէին վաղվաղակի զհրամանն կատարել. ձայն արարեալ յաշխարհս հեռաւոր՝ միանգամայն խաղալ գնալ յերկիրն արեւմտից։ Եւ մինչ չեւ հասեալ էին յերկիրն Հայոց, փայտ ընկենուին և վիճակս արկանէին, թէ ո՞ր լեզու որմ դասու հասցէ յաշակերտութիւն։ Զի առ հասարակ հրամանն առեալ էր յարքունուստ, որպէս աշխարհին Հայոց՝ նոյնպէս և Պարսից և Ասորոց, Հոնաց և Կորդուաց և Ծոռեից և Գոռանի, և որ այլ եւս ուրեք ուրեք 'ի ծածուկ յիշխանութեանն Պարսից ունէին զբրիստոնէութիւն։ Եւ յանդգայ յարձակմամբ յաւարի առնուլ փութային զգանձս սուրբ եկեղեցեացն. և իբրեւ զգեաս այնուհետեւ միմեանց պատահէին։ Եւ լինէր գունդ զօրաց բազմաց, և չարաբերն սատանայ իբրեւ զօրավար 'ի մէջ նոցա երեւէր, և անդադար յորդորելով զամենեսեան ձեպեալ փութացուցանէր։ Կէտ եղեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ, տագնապէին և ստիպէին արքունի հրամանաւ։

Այ՝ ինչեւ 'ի նաւատարգէ նաւատարդ, ասէ, յամենայն տեղիս՝ ուր իցեն ընդ իշխանութեամբ Թագաւորին մեծի, բարձցին կարգ եկեղեցւոյ, փակեսցին և կնքեսցին դրունք սուրբ տաճարացն, գրով համարով առցին նաւիրեալ սպասքն յաղքունիս, լռեսցեն ձայնք սաղմոսացն և դադարեսցեն ընթերցուածք անսուտ մարգարէիցն։ Զահանայք մի՛ իշխեսցեն 'ի տունս իւրեանց ուսուցանել զժողովուրդս, և հաւատացեալքն 'ի Քրիստոս աղք և կանայք՝ որ քնակեալ են յիւրաքանչիւր մենանոցս, փոխեսցեն զհանդերձս իւրեանց ըստ աշխարհական կարգաց։

Զարձեալ և կանայք նախարարացն կալցին զուսումն վարդապետութեան մոգացն։ Աստերք և դստերք ազատաց և շինականաց կրթեսցին 'ի հրապարակս նոցուն մոգաց։ Կարձեսցին և արգելցին օրէնք սուրբ ամուսնութեան, զար ունէին 'ի նախնեաց ըստ կարգի քրիստոնէութեանն. այլ փոխանակ ընդ կնոջ միոյ՝ բազում կանայս արասցեն, զի աճեցեալ բազմասցին ազգդ Հայոց։ Դատերք հարանց լինիցին, և քորք՝ եղբարց. մաղք մի՛ ելցեն յորդւոց, այլ և թոռունք ելցեն յանկողինս հաւուց։

Պատրուճակք մի՛ մեռցին անյազ, եթէ յօդեաց իցէ և եթէ յայծեաց և եթէ յարջառոց և եթէ 'ի հաւուց և եթէ 'ի խոզաց։ Հայսք առանց փանդամի մի՛ զանգցին, ծիւղք և քակորք 'ի կրակ մի՛ եկեսցեն, ձեռք առանց գոմիզոյ մի՛ լուասցին. ընկերիք և աղուեսք և նապատակք մի՛ մեռցին։ Ոձք և մողէզք, գորտք և մրջմունք, և որ այլ եւս խառնափնդոր բազմաձիք են, մի՛ կայցեն. այլ վաղ թուով համարով 'ի մէջ քերցեն ըստ աղքունի չափոյն։ Եւ որ այլ եւս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ տարեւոր թուականին, և ըստ կապճաթիւ մինչաչափ կարգին։

Այս ամենայն որ ասացաք, առ ժամանակ մի մինչեւ 'ի գլուխ տարւոյ կատարեսցեն ամենեքեան. և զայն ամենայն առ յապա պատրաստեսցեն։

Իսկ զայս ամենայն հրաման պատուիրանաց առեալ մոգաց և մոգպետաց, զտիւ և զգիշեր փութային հասանել յաշխարհն Հայոց. և առ յոյժ խնդութեանն ոչ երբէք յագէին երկայնութեամբ ճանապարհին։

Digitized by Google

ԵՐՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՎԱՄՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Եպիսկոպոսն և ոչ խցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցք անցին անդէն 'ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն և ոչ լռել կամիմք ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասասցուք փոքր 'ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ, որք գառնապէս զմեզ ողբային. զի և դու իբրեւ լուիցես, ոչ սակաւ արտասուս հեղուցուս 'ի վերայ ազգին Թշուառութեան։

Օ՜ի ահա անդէն 'ի մեծ բանակին Պարսից՝ յազգաց ազգաց, որք են հաւատացեալ 'ի սուրբ աւետարանն Քրիստոսի, իբրեւ տեսին զչար յանձնառութիւնն Հայոց, յոյժ հարան 'ի միտս իւրեանց, և կործանեցան անկան 'ի վերայ դիմաց իւրեանց։ Խաղումք 'ի նոցանէ Թաղծեալք 'ի սուգ ծանրութեան, հարեալ յոգիս և գառնացեալ յարտասուս, եկին և յանդիմանեցին զնա խարարեանն, և յոյժ զարհուրեցին զուխտ քահանայութեանն։ Օ՜ զուէին զամենեսեան և ասէին։ Օ՜ի առնիցէք զսուրբ կտակարանդ, և կամ յո՞ տանիցէք զբաւական տերունեան սեղանոյն. մոռանայցէ՞ք արդեօք զՀոգեւոր օրհնութիւնդ, և կամ լռեա՞լ դադարիցէք 'ի մարգարէական ձայնիցդ։ Կափուցէք զաչս յընթերցուածոց, և խցէք զականջս 'ի լսելոյ. միթէ զմոռացդ անմոռացութիւն ո՞չ յիշիցէք. զինչ առնիցէք զպատուիրեալսն 'ի Տեառնէ. Որ ուրասցի զիս առաջի մարդկան, յուրասցի զիս առաջի հօր իմոյ, որ յերկինս է, և հրեշտակաց սրբոց։

Պարդապետք էիք առաքելական քարոզութեանցն, արդ աշակերտք լինիցիք մոլար խաբէութեանն։ Ուսուցիչք էիք ճշմարտութեանն, արդ ուսուցանէք զպատիր խաբէութիւն մոգայ։ Դարոզք էիք արարչական զօ-

րութեանցն, արդ զտարերս աստուածս խոստովանիք։ Յանդիմանիչք էիք սուտութեան, արդ և քան զսուտն ստաբանք լինիցիք։ Ի հուր և 'ի հոգի էիք մկրտեալք, արդ 'ի մոխիր և յաշիւն թաթաւիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբ էիք մնեալ, արդ 'ի ձենձեր զոհիոց և 'ի շարաւս աղտեղիս մրձոտիցիք։ Ցաշար էիք Հոգւոյն սրբոյ, արդ զոհարան դիւաց լինիցիք. քրիստոսազգեաց էիք 'ի մանկութենէ, արդ մերկացեալք 'ի փառացն գիւաբար արեգական կաքաւիցէք. ժառանգ էիք արքայութեանն, արդ անձամբ զանձինս արկէք 'ի ժառանգ գեհենին։ Ոչ էր սպառնացեալ հուրն անշէջ, ընդէր դուք ընդ նոսա այրեցեալ տուչորեցայք. նոցա պարարի որդն անմահ, իսկ արդ դուք պարարիցէք զմարմինս ձեր նմա 'ի կերակուր. իսաւարն արտաքին նոցա թանձրացեալ պահի, դուք լուսազգեաց ընդէր յուզարկեցայք ընդ նոսա 'ի նոյն խաւար։ Ոչ էր 'ի վաղընջուց հետե էին իսկ կուրացեալք, դուք զկնի կուրացն կուրացարուք. նոցա էր փորեալ զխորխորատն, դուք ընդէր լցէք յառաջագոյն։ Ոչ էր ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոցն նոցա, այն՝ որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի։ Թեթեւացեալք 'ի ծանր բեռանց՝ անձին անձամբ առեք զբեռն ծանրութեան. ազատեալք 'ի մանկութենէ՝ չարաչար մտէք յանազատելի ծառայութիւն։

Ոչ թէ գիտէիք և երեւէր ձեզ յայտնի, սուգ առին երկինք 'ի վերայ ձեր, և թաղծեցաւ երկիրս 'ի ներքոյ ոտից ձերոց։ Հրեշտակք 'ի վերուստ են ձեզ բարկացեալք, և 'ի յերկրէս մարտիրոսքն են ձեզ ցասուցեալք։ Ողորմիմ ողորմիմ սիրելեաց ձերոց, և բազում անգամ ողորմիմ անձանց ձերոց։ Օ՛ի թէ մարդոյ փրկեալ էր զձեզ 'ի ծառայութենէ, և դուք անձամբ զանձինս այլում 'ի ծառայութիւն արկանէիք, 'ի մեծ բարկութիւն բերդէիք զառաջին տէրն ձեր։ Իսկ արդ զինչ առնիցէք զաստուածասաստ հրամանն։ Ոչ եմ Աստուած, և չիք այլ ոք բայց յինէն, և ոչ զկնի իմ այլ ոք լիցի Աստուած. Աստուած նախանձոտ եմ ես, հատուցանեմ զմեղս հարց յորդիս, մինչեւ յեօթն դար։ Իսկ եթէ որդիքն արդարք վասն հարցն մեղաց ընդունին զսատակումն, յորժամ ինքեանք որդիքն իսկ մեղիցեն,

ոչ ահա միանգամայն զանձանց և զհարցն տայցեն 'ի միասին։

Զուք էիք մեր ամուր պարիսպ ապաստանի. յոր-ժամ ասոյ վասանգ հասանէր, առ ձեզ յանդորր եղա-նէաք. արդ մեծ ամուրդ այդ հիմն 'ի վեր տապալեցաւ։ Զուք էիք մեր պարծանս առ թշնամին ճշմարտու-թեան, արդ դուք էք մեր նախատինք առ նոյն թշնա-մին։ Յայժմ վասն ձերոյ ճշմարիտ հաւատոցն և 'ի մեզ փոքր 'ի շատէ խնայէին. և արդ 'ի պատճառս ձեր և զմեզ անողորմ դատին։ Եվ միայն զանձանց դատաս-տան տալոց էք առաջի ահեղ ատենին Աստուծոյ, այլ և բազմաց ամենեցուն՝ որ 'ի ձեր պատճառս և վնասա եւս չարչարեսցեն։

Զայս և առաւել քան զսոյն խօսեցան ընդ մեծա-մեծս աւագանւոյն, և յաւելին ցաւս 'ի վերայ ցաւոց։ Յայտնել և ցուցանել նոցա զխորհուրդն ոչ կամէին, լռել և չառնել պատասխանի անհնար էր. հեղձամղձուկ եղեալ մեծապէս յարտասուս հարկանէին։ Ընդ նոսին գառնացեալ լոգք և տեսագք յանմխիթար սուգ լինէին ամենեքեան։

Յայնմ ժամանակի քահանայքն՝ որ էին անդէն 'ի զօրուն, առ չժուժալ սրտիցն բարկութեան քակեալ որոշեցան 'ի նախարարացն և յամենայն բազմութենէն. և զմի ոմն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշ-խարհն Հայոց։ Զոյժ 'ի բերան առեալ և զձիս պա-տառեալ, հասեալ 'ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն։

Յայնմ ժամանակի սփոեցան եպիսկոպոսքն յիւրա-քանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս 'ի գեօղս և յագարակս և 'ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Զրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամ-ենեսեան զինուորս Քրիստոսի։

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. Զեռն եղբօր հարազատի 'ի մերձաւոր իւր լիցի՝ որ անց-եալ ի՞նչ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի

ինայեսցէ հայր յորդի, և մի ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Լին կուուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։ Որոնք աստուածային կացցեն Թագաւոր 'ի վերայ ամենայնի, և 'ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան։

Այս իբրեւ այս այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երեւեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան 'ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականանց։

Իսկ գունդն Հայոց ամենայն օգնականաբար հանդերձ և մոգացն բազմութեամբ յամենայնն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց, 'ի գիւղաքաղաք մի մեծ՝ որում անուն էր Ինգդ։ Անակեցան, բոլորեցան, զետեղեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն։

Այս եղեւ յետ աւուրց քսան և հնգից, մոգպետն ինքնին մոգաբն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն. զփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն։ Իսկ սուրբն Ղեւոնդ երէց միաբանութեամբ առաջին խորհրդակցաբն և բազում ուխտիւ 'ի տեղւոջ անդ պատրաստական դիպեցաւ, ոչ ետ թոյլ։ Եպիսկոպոսն և ոչ էր տեղեկագոյն մոգացն ամենեցուն նախարարացն, և ոչ զօրութեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց մնաց ամենայն եպիսկոպոսացն, և ոչ առ սակաւ մի համբեր անօրէն իշխանին թողացուցանել. այլ բազում ամբոխ աղաղակի զօրացն և մոգացն հասուցանէր։ Բանզի վերգս 'ի ձեռն առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտերունական կանոնն կատարէին, մինչեւ 'ի նոյն միաշաբաթին անդադար լինելով։

Այս յետ այս տագնապի խռովութեանն՝ յամենայն կողմանց յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց 'ի տեղին հասանէին։ Այս անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգերարտօսրն իբր յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց. այլքն բարձրաձիչ աղաղակաւ՝ իբր այն թէ զերկինս դողացուցա-

Digitized by Google

նէին. իսկ կէսքն խիզախելով և 'ի զէնս ընթանալով զմահ քան զկեանս ընտրէին։ Իսկ ոմանք 'ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն՝ զաւետարանն 'ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարդային. և այլք ըղձանային ըզպատառումն երկրին, զի անձանց լոյսի գերեզման։ Եւ այսպէս շտապ տագնապի 'ի վերայ մոգպետին հասուցանէին։ Բազում անգամ աղաչէր զօգնականսն իւր, զի 'ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել, և ազջանդամ անդէն յարքունիս հասուցանել։

Այլ վասն գործոյն յոր եկեալն էր՝ ստիպէր զնոսա և ասէր. Մոռ գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի 'ի բաց թողացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ ինքեանք աստուածքն եկեսցեն յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան 'ի Հայս առնուլ զհաստատութիւն, որպէս զփորձ առի միաբանութեան ուխտին եկեղեցւոյ։ Օ՛ի թէ էին զօրք աշխարհիս մոգք, ոչ ինչ խնայէին սոքա 'ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նա և ոչ յանձինս իւրեանց։ Արդք, որ ոչ 'ի կապանաց զանգիտեն, և ոչ 'ի տանջանաց երկնչին, և ոչ 'ի ստացուածոց պատկառին, և որ յետին չարն է քան զամենայն չարիս, մահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել։

Առեալ իսկ իմ էր 'ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ արքայից արքայի, իբրեւ սկսաւ ուսումնդ այդ աձել և բազմանալ և լնուլ զամենայն երկիրն Պարսից, և եւս անդր յարեւելս հասանել, իսկ որ վարդապետքն էին օրինացն մերոց՝ յորդորեցին զթագաւորն, զի մի՛ քնաւ ամենեւին բարձցին օրէնք մոգութեան յաշխարհէն, ետ հրաման սաստիկ, զի լռեալ դադարեսցէ քրիստոնէութիւնն։ Եւ որչափ նա կամեցաւ արգելուլ, եւս քան զեւս աձեցին և բազմացան, և հասին մինչեւ յաշխարհն Վրուշանաց, և անտի 'ի հարաւակողմն՝ մինչեւ 'ի հնդիկս տարածեցաւ։

Եւ այնպէս աներկիւղ և հանրածակք էին յաշխարհին Պարսից, մինչեւ յամենայն քաղաքս աշխարհին եկեղեցի չինեցին, որ զանցուցանէր պայծառութեամբ զթագաւորաբնակ արքունեօքն։ Շինէին և վկայարան

ինն անուանեալս, և զնոսն զարդ եկեղեցեաց զարդարելին, և յամենայն տեղիս՝ յապատս և յանապատս միայնանոցս շինելին։ Այլ իբրեւ ոչ ինչ երեւէր յայտնի օգնութիւն ուստեք, աձելով աձելին և բազմանալով բազմանալին, և մարմնաւոր մեծութեամբք մեծանալին։ Զ պատճառս հարստութեան մեք ինչ ոչ գիտեաք. բայց այսչափ ինչ ձշմարտիւ իմանայաք, զի տիեզերքս ամենայն զկնի ուսմանց նոցա գնային։

Զեպիսկոպէտ էարկ 'ի նոսա Թագաւորն զձեռն իւր խրստութեամբ, և զլաղումն կալաւ և չարչարեաց 'ի նոցանէ, և զեւս բաղումն մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նըւազեցուցանել 'ի բազմութենէն։ Դարձեալ Թիպէտ փակեաց և կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նոքա զամենայն տուն եկեղեցի աբարին. և յամենայն տեղւոջ զիւրեանց օրէնսն կատարէին։ Այլ զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհոգեղէնս հաշուէին։ Ուրք սպանողացն բեթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան. աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և աւարն օր քան զօր աձեցեալ բազմացաւ։ Արտմոեալ էր Թագաւորն, և յայժ դառնացեալ դահիձք բարկութեանն. իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զամենայն յաքրշտակութիւն ընչից իւրեանց։

Իբրեւ ետես Թագաւորն եթէ գոհ տուեալ դիմացին 'ի մահ իբրեւ խաչինք սուրբք յաղն երկնաւոր, արգել և կարձեաց 'ի նոցանէ զհարուածս տանջանացն. և հրամայն ետ մոգաց և մոգպետացն, զի մի ամենեւին ոք խուեսցէ զնոսա, այլ հաստատեալ կացցեն աներկիւղութեամբ յիւրաքանչիւր ուսմունս, մոգն և զանդիկն և Հրեայն և քրիստոնեայն, և որ այլ բազում՝ կեշտք են 'ի կողմանս կողմանս աշխարհին Պարսից։ Այլ ապա առ երկիրն զխաղաղութիւն հաստատութեամբ, և լըռեալ դադարեցին ամենայն խռովութիւնք յուզմանց։ Դանդի ընդ մերոյ աշխարհին շարժմանն՝ և արեւմուտք եւս մեծապէս շարժեցան, և ամենայն տաձկաստան ընդ նոսին խռովեցան։

Digitized by Google

Օ՛այն ահա 'ի լսելոյ գիտեմք. բայց այս որ ես ինձէն աչքք տեսի, թուի ինձ՝ թէ մեծագոյն եւս լինի քան զառաջինն։ Արդ դու որ մարգպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ հոգ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս, որպէս անհերկիւղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի։ Այլ թէ չէր մեր աճապարեալ և 'ի փախուստ դարձեալ, միում 'ի մէնջ ոչ տային ապրել։ Այլ եթէ անզէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս եւս ընդ ինքեանս միաբանեցուցանեն, ո՞ կարիցէ կալ առաջի դոցա յանդուգն յարձակմանդ։

Այս ահա անտեղեակ էի անքակ ուխտի եկեղեցւոյդ 'ի միմեանց. զի այլ է՝ զոր լսէ մարդ, և այլ է՝ զոր տեսանէ հաստատուն իւրովք աչքք։ Որ 'ի մանկութենէ յայդմ օրէնս մնալ էիր, և ձշմարտեալ գիտէիր զանդութիւնդ մարդկանդ, եթէ առանց բազում արիւն հեղլոյ դոքա մեզ ոչ տան ձեռն արկանել յեկեղեցիսդ, ընդէ՞ր ոչ զայդ ամենայն հաւաստեաւ յանդիման չասացեր ցթագաւորն։ Զանգի ամենայն նախարարացն աւագ դու էիր, և զբոլոր աշխարհս քեզ յանձն արարեալ էր մարգպանութեամբ. ընդէ՞ր ոչ մեծապէս հոգ տարար յանձն քո։ Օ՛ի յայլ ժամն իմաստուն էիր, և ես գիտէի. զայս՝ գործ իմաստութեան ոչ գործեցեր։ Այս թէ ոչ, յայտ է եթէ դու 'ի նոցա բանի ես, և քոյով խորհրդով անցուցին զայս անցս ընդ իս և ընդ զօրս։

Արդ եթէ այդ այդպէս է, և քեզ կամք չէ ունել զմոգութիւն, մի՛ ինչ պատկառեր դու երկիւղիս յարքայէ. ես գրեմ և ցուցանեմ 'ի դուռն մովպետան մովպետի և դերանդարձապետի և մեծ հազարապետին, զի ածցեն զարքայ 'ի հաւանութիւն, որպէս զի 'ի բաց թողացուսցէ ըստ առաջին հրամանին, և 'ի կամս մարդկան ապաստան արասցէն, զի առ սակաւ սակաւ ընդելացին ընդ օրէնս մոգութեանս. զի որք կալցին՝ սիրով երեւեսցին կատարեալ զհրամանս արքունի։ Զանգի մարդ է աշխարհս, զուցէ յորժամ վնաս ինչ առնիցեն, և ինքեանք ցրուեալ վատնեսցին յօտարութիւն. իսկ յորժամ աշխարհս թափուր լինիցի 'ի մարդկանէս, այնժամ և քեզ գլխովին մեծապէս վնաս հասանէ յարքունեանս։

Այս պատասխանի մարզպանն մոգպետին, և ասէ. Զ-մենայն բանք խրատուդ՝ զոր ասացեր, ճշմարիտ են. բայց զառաջինն զոր չիմացաք՝ տեսեր, և մեծապէս զըղ-ջացաք այժմ։ Այլ դու արդ զոր ասեմն արա, և բա-րիոք թուեսցի քեզ. սակաւիկ մի երկայնամիտ լեր և զխորհուրդս քո արգել 'ի բազմաց, բայց արանց՝ որոց ես ասեմ, նոցա յայտնեա. մինչեւ ես ինձ ոյժ ժողովե-ցից զօր 'ի Թիկունս ածելոյ, և զուխտ եկեղեցւոյդ Թե-րեւս կարացից երկիւղել։ Այլ եԹէ զայդ այդպէս ա-րարիցս, գիտեմ ապա Թէ և զհրամանն արքունի կարող եմ կատարել։

Այլ անդէն հրոս հանեալ 'ի Ալիւնեաց աշխարհէն, զիւր գունդն ստուարացոյց 'ի Թիկունս օգնականութեան մոգաց և մոգպետին։ Այլ ապա սկսաւ ասել. Զդէ դու անգամ մի հրովարտակ 'ի դուռն տուր վասն այրուձիոյն՝ որ յԱղուանսն է տասն հազար, զի 'ի ձմերոց 'ի Հայաս եկեսցեն. և յորժամ գնասա 'ի ձեռին ունիցիմք, չիք ոք որ եղծանել կարէ զհրամանն արքունի։

Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. Զ-այդ խորհուրդ դարձեալ իմոց քանիցս ընդդէմ է. քանզի մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհս, աշխարհս 'ի բաց քանզի, և մեք 'ի պատուհասէ չապրիմք. անձանց մնաս, և արքունի մեծապէս զեան։

Այլ ոչ ինչ կամեցաւ ամենեւին ունկն դնել նմա մարզ-պանն, զի սրտի մոգք կալեալ էր զպարսկական օրէնսն։ Ակսաւ այնուհետեւ պատրել զոմանս կարասւով և զո-մանս ողոքական բանիւք. զուամիկն ամենայն՝ ահեղ բա-նիւք սպառնացեալ սրտաթափ առնէր։ Հանապազորդ առատացոյց զռոճիկն տաճարին, և յերկարէր զնուագ-սըն ուրախութեան, մանչելով զերկայնութիւն գիշե-ղոյցն յերգս արբեցութեան և 'ի կաքաւս լկտութեան. քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսական. մեծապէս գոհութիւն մատուցանէր օրինաց թագաւորին։ Ներեալ էր և յարքունուստ բազ-մութիւն կարասւոց, և միւսմ միւսմ կաշառ գազտ խթէր 'ի պատճառս սարգեւի և պատուոյ. և բազում նեն-գութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր։

Իսկ զայս ամենայն իբրեւ տեսին սուրբ եպիսկոպո-

սունքն, եւս քաջ դրդեալ յորդորեցան 'ի նոյն միաբանութիւն. և հնարագէտ իմաստութեամբ ընդ երկուս բաժանեցին զբանակն։ Մանաւանդ իբրեւ հաստատեալ գիտացին 'ի միտս իւրեանց, եթէ անօրէն իշխանն Մինեւեայ զօրհասական վերան 'ի յոգիսն ընկալեալ էր, խորշեցան մերժեցան և 'ի բաց փախեան 'ի նմանէ։

Խորհուրդ արարեալ 'ի գիշերի միում ամենայն ուխտին բազմութեամբ, կոչեցին և զսպարապետն զօրաց 'ի խորհուրդն. հարցին և քննեցին և 'ի վերայ հասին մեծացն անշարժութեան, որոյ ոչ սակաւ մի թերացեալ էր 'ի սիրոյն Քրիստոսի։ Լաւ միաբան՝ աղօթս արարեալ 'ի վերայ նորա, վերստին ընկալան զնա յառաքինութիւն։ Լաւ նովաւ ոգեացեալ զբազումն 'ի նոյն միաբանութիւն, որք ոչ էին քակեալ յառաջին միաբանութենէն, եկին և ժողովեցան գունդ զօրաց բազմաց։ Լաւ եւս առաւել հեռագոյն զատան 'ի մոգացն և 'ի մոգպետէն և յանօրինէն Մասակայ։

Իսկ նա այնչափ յիմարեցոյց և ափշեցոյց զմիտս մոգպետին, մինչեւ չետ նմա իմանալ զելս իրացն։ Մկսաւ բաշխել մոգս 'ի տունս նախարարացն և մեծամեծ ռոճիկս կարգել, զոհել պատրուհակս, և բռնաբար կընքաւոր մարդկանն տալ ուտել միս յաղածոյ, և երկիր պագանել արեգական։ Իբրեւ սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան և եւս կանայք փշտիպանացն յաւուր կիրակէի անցուցանել զՔրիստոնս եկեղեցւոյն և պատառել զհանդերձս հաւատաւոր կանանցն։

Օ այս գուժկան աղմկի իբրեւ տեսին միաբան սուրբ եպիսկոպոսունքն, զաւետարանն 'ի ձեռն առեալ հասին և անկան առանց հարցանելոյ 'ի վանս սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց։ Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. Աղաչեմք զձեզ զամենեսեան սուրբ աւետարանաւս, եթէ ձերով խորհրդիւ գործէ զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք. ապա թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարն գործեն, այսօր խնդրեսցի վրէժդ այդ 'ի նոցանէ։

Իսկ որք էին 'ի ներքս 'ի վանս սպարապետին՝ յոտն կացին, միաբան համբարձին զձայնս իւրեանց առ Աս-

Digitized by Google

տուած և ասեն. Դու, Տէր, սրտագէտ ամենեցուն, ոչ ինչ պիտի քեզ վկայութիւն 'ի մարդկանէ. եթէ խոտորեալ իցեմք 'ի քէն սրտի մտաց, զայն դու ինքնին քաջ գիտես, այսօր իսկ դատես զմեզ ըստ մեղաց մերոց։ Այլ եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ աւետարանիս, դու, Տէր, լեր մեր օգնական այսօր, և տուր զթշնամին Աշմարտութեան 'ի ձեռս մեր, զի ապրասցուք ընդ նոսա ըստ կամաց մերոց։

Այս իբրեւ ասացին, ամենեքեան զգլուխս զգետնի հարկանէին. և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն։ Իսկ մի ոմն 'ի նախարարացն որ անդր դիպեցաւ, էր 'ի նոցա խորհրդի, և ոչ միաբանեաց ընդ նոսա 'ի մեծ վկայութիւնն. և անդէն առ ժամայն 'ի նոցունց 'ի տեղւոջն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ 'ի վերայ ամենեցունց։

Յայնժամ ամենեքեան 'ի նախանձ քարկութեան բրդեցան, մինչեւ ամենայն տեսողացն երիկամունքն դո՛ղ ելային, որք առ ոչինչ համարեցան զպարգեւս արքունի, և առ ոտն հարին զհրամանս ահագինս։ Ինքեանցն վաղվաղակի 'ի զէնս իւրեանց, վաւեցան կազմեցան ըզգիշերն ամենայն, և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ 'ի բանակն արկանէին։ Գունդն առաջին յարեւելից կուսէ, և գունդն երկրորդ յարեւմտից կողմանէ, և գունդն երրորդ 'ի հիւսիսոյ կողմանէ, շուրջանակի 'ի մէջ առեալ փակեցին զբազմութիւն բանակին. և զբազումս կոտորեցին, և զեւս բազմագոյնս կապեցին զերեւելի մարդիկ, և արկին 'ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ։ Այլ զառ և զապուռ զառաջ բանակին 'ի մի վայր ժողովեալ պահէին իբր հրամանաւ արքունի։

Իսկ զմարզպանն ձերբակալ արարեալ, և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին, զըղջանայր զառաջին քակումն 'ի նոցանէ։ Ինկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն, և աղաչէր խաղաղապատելով՝ զի մի մերժեալ ընկեսցի առ 'ի նոցանէ։ Արկնէր և երեքկնէր զանուտ երդումն առաջի բազմութեանն 'ի սուրբ աւետարանն, գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն. և աղաչէր՝ զի Յիսուսոյ յայտնեսցի վրէժխնդրութիւնն, և մի նոքա մարդ-

կաբար սատակեսցեն զնա։ Իսկ նոքա թէպէտ և հաստատեալ գիտէին զնենգաւոր կեղծաւորութիւնն նոցա, և թէ խաբեութեամբ դառնայ անդրէն 'ի հին մոլորութիւնն, ոչ ինչ փոյթ առնէին ձեռն արկանել 'ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ աւետարանին թողին 'ի դատապարտութիւն։

Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զսուրբ գանձս եկեղեցւոյն, ակամայ եդին զանձինս և զաւար իւրեանց առաջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն զօրացն. և եղծեալ ապականեցաւ հրաման թագաւորին։ Իսկ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. Պատրաստ եմք 'ի հալածել և 'ի մեռանել և յամենայն նեղութիւնս և 'ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զօրութեամբ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերատին ծնաք 'ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբ 'ի Քրիստոս Յիսուս. ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս։ Քանզի հայր մեր՝ զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր՝ զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի որ չար անջրպետ 'ի մէջ անկեալ՝ զմեզ քակեսցէ 'ի ամանէ։

Ոչ երեւէր այնուհետեւ առաւել տէր քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգերեալ։ և ոչ որ քան զոք նուաղեալ 'ի յարութենէ։ Մի՛ սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց 'ի Քրիստոս։ Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, և զմի ագան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի, և միով գօտեաւ ճշմարտութեան ամրեցին զմէջս արք և կանայք։

Ընկեցեալ կայր այնուհետեւ ոսկի, և ոչ որ առնոյր իւր առանձինն արծաթ. և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ պատուական հանդերձք առ 'ի զարդս մեծապանաց։ Այս՝ իւրաքանչիւր ստացուածք ոչ ինչ հաճարէին յաչս իւրեանց ստացողին. տեսանէին զանձինս իւրեանց իբրեւ զմեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին. և կեանք

իւրեանց 'ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց անշուշտ կեանք։

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. Վասնզի Թեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս եւեթ ժառանգեսցուք. զի կենդանի իցէ 'ի մեզ Քրիստոս, որում դիւրին է միւսանգամ նորոգել զմեզ 'ի հողոյ և զամենայն զյառաջագոյն զինջեցեալսն, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։

Այս և առաւել քան զսոյնս խօսելով, և մխիթարելով զանձինս և զմիմեանս, դարձեալ միւսանգամ զինուորքն պատրաստեցին զգէնս իւրեանց, և աղօթականքն անդադար լինէին յաղօթսն իւրեանց, և պահողքն ձգնէին 'ի պահս իւրեանց։ Զայնք պաշտօնէիցն 'ի տուէ և 'ի գիշերի անհատ էին 'ի սուրբ սաղմոսն. ընթերցուածք աստուածային կտակարանացն ու երբեք առնուին դադարումն յամենայն ժամ, սոյնպէս և մեկնիչքն 'ի միթարութիւն երկնաւոր վարդապետութեանն։

Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան 'ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին պարսիկքն 'ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զենակութիւնս նոցա։ Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԱռնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս, և զաւանս իւրեանց. զԱրկայնորդսն և զԱրհնին, և զաւանս իւրեանց. զԱարձրաբուղն, զՍորանիստն, զՕսխանիստն, զանկասկածելի Աղականն, և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զԱանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր. զՕռեալն և զՆապոյտն, զԱրոտն և զԱասակաշատն։

Զամենեսին զայս իրաքանչիւր գեղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք 'ի նմին ամի առեալ տապալեցին, և 'ի գերութիւն վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուածովք, հանդերձ պատուական զանձիւք և նոցին սպասուք։ Տապալէին քանդէին զշինուածս նոցա, և այրէին կիզուին զտունս պաշտօնարկի և պաշտամանն կրակի։ Արբէին զպղծութիւն կռապաշտութեանցն, և առնուին զկահ և զկազմածս ատրուշանայն, բերէին և դնէին 'ի սուրբ եկեղեցւոջն. և 'ի

Digitized by Google

ձեռն սուրբ քահանայիցն Նուիրէին 'ի սպաս տերունական սեղանոյն։ Եւ փոխանակ սնոտի պաշտամանցն՝ զոր տապալեցին յամենայն տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն Քրիստոսի կանգնէին. զամենասուրբ սեղանն ուղղէին, և զկենդանարար խորհուրդն կատարէին սրբութեամբ. պաշտօնեայս և քահանայս 'ի տեղւոջն կացուցանէին։ Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առ հասարակ։

Եւ մինչ դեռ յայսմ մեծի առաքինութեան կատարեալ գործէին զգործն հաստատկութեանն, երեւէր իմն 'ի վերայ ամենեցուն աստուածային շնորհք. քանզի առանց հրամանի 'ի զօրացն Հայոց, յարեւելից կողմանէ աշխարհին, յարձակեցան ոմանք Յունական աշխարհն, և 'ի տեղիս տեղիս բազում ՀԼնաս արարին՝ առնլով և աւերելով և քանդելով զբազում ատրուշանս։

Իսկ որ 'ի մեծ ամուրն անկանէին, խաչանշան արարեալ 'ի վերայ զօրուն յարձակէին. որ և երկաւ մեծամեծ բերդացն պարիսպքն առանց ուրուք մերձենալոյ անկեալ կործանեցան. մինչեւ ամենայն բնակչաց երկրին զահի հարեալ 'ի մեծ նշանէն, ինքեանք ինքեանց ձեռօք զկրակատունսն այրէին. ուրանալով զօրէնս մոգութեանն՝ խոստովանէին 'ի սուրբ աւետարանն։

Եւ այլ մեծամեծ աջողութիւնք կատարէին 'ի ձեռն զօրականին. քանզի ուր ոչ էր ակնկալութիւն, եթէ զանուն Աստուծոյ ոք յիշեսցէ, արհաւիրք մեծ անկանէին 'ի վերայ նոցա. և ամենայն մարդ պատմէր ընկերի իւրում տեսիլս նորս և զարմանալիս։ Նոյնպէս և աստեղք 'ի յերկինս երեւէին յոյժ լուսալիր պայծառացեալ, զոր ոչ ունէին յառաջին բնութեանն։ Եւ ամենայն տղայք աշխարհին իբրեւ զարս պատերազմողս խիզախէին։

Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տաղնապաւ փութացուցանէր զզօրսն ասելով. Գունդ Պարսից, որ էր 'ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. և բազում եւս և այլ այրուձի՝ որ 'ի դրանէ եկն։ Եւ թող զայս ամենայն, այլ երեք հարիւր մոգ վարդապետ ա-

Digitized by Google

ծեալ ընդ իւրեանս, պառակտեցին զաշխարհն, և զոմանս ոմանս յինքեանս արկին, և կամէին յեկեղեցին ձեռն արկանել. և հրամանաւ Թագաւորին ստիպէին զամենեսեան և ասէին. Եթէ կամք յանձն առնուք զօրէնսն, պարգեւս և պատիւս գտանէք 'ի նմանէ, և Թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ. ապա Թէ կամքդ չառնէք, հրաման ունիմք 'ի գեօղս և 'ի քաղաքս շինել ատրուշանս, և զվառամական կրակն 'ի ներքս դնել, և կացուցանել մոգս և մոգպետս օրէնադիր ամենայն աշխարհիդ։ Եւ եԹէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս ընդունի, և կին և որդիք այնպիսւոյն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս երԹիցեն։

Իսկ գունդն Հայոց իբրեւ լուաւ զայս գոյժ դառնուԹեան, ոչ ինչ Թուլացեալ լքան 'ի քաջուԹենէն. այլ դարձեալ համագունդ ժողով լինէր ամենայն աշխարհին վասն գուժաբեր հրեշտակացն, որ հասին առ նոսա։ Եւ միաբան քաջալերս տուեալ՝ արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի զնոսա պատիր խաբէուԹեամբ կալցեն, զի խափանեսցին 'ի չար կամացն, չձեռնարկել 'ի սուրբ ուխտ եկեղեցւոյն իւրեանց. և զօրուԹեամբն Աստուծոյ խորհուրդ 'ի մէջ առեալ՝ իրացն հնարիւք ելս խնդրէին։

Յայնմ ժամանակի զմի ոմն 'ի մեծ նախարարացն, 'ի տոհմէն գնունեաց Աստոմ, ձեպով առաքեցին յերկիրն արեւմտից ցուցանել զայս ամենայն խորհուրդ ըզչարիմաց Թագաւորին արեւելից. միանգամայն և պատմել զիւրեանց քաջուԹիւն արուԹեանցն, զոր գործովք կատարեցին՝ առ ոտն հարկանելով զհրամանն ահեղ, և մեծապէս ստատկումն 'ի վերայ մոգացն հաստատանել. խնդրել 'ի նմանէ օգնականուԹիւն ստատարուԹեան, և եԹէ նա կամեսցի՝ նմա իսկ մտանել 'ի ծառայուԹիւն։ Եւ այս է պատճէն հրովարտակին զոր գրեցին առ Թէոդոս կայսր.

Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցաւք իմովք և ամենայն զօրք Հայոց, Վասակ մարզպան և Ներշապուհ ռըմբոսեան հանդերձ՝ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարաւքս՝ առ մեծանունդ Թէոդոս կայսր, բազմացի ողջոյն մեր առ քեզ և ամենայն

Digitized by Google

զբրաց քոց, որ խաղաղասէր մարդասիրութեամբ ձերով տիրէք ծովու և ցամաքի, և չիք ոք յերկրաւորացս՝ որ ձերում անարգել տէրութեանդ ընդդէմ դառնայցէ։ Արդեսն մեք իսկ ունիմք զանսուտ յիշատակարանն զառաքինի նախնեացն ձերոց. ունելով զԱրովպէ՝ անցին և տիրեցին և ասիացւոց կողմանցն 'ի սահմանացն Արեւրաց մինչեւ 'ի կողմանս Պատերոնի, և ոչ ոք գտաւ ստամբակեալ և եկանել ըստ ձեռն նոցա։

Այլ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին։ Զայն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին՝ սէրն ձեր, որ 'ի տղայութեան փախուցեալ 'ի հայրապետն մարդասխոսեալ հօրեղբարցն իւրոյ՝ ապրեալ մնաւ յերկրիդ Յունաց, և 'ի ձէնջ թագաւորեալ տիրէր Հայրենի աշխարհիս, սոյնպէս և զՀաւատն որ 'ի Քրիստոս՝ ընկալեալ 'ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռոմայ, լուսաւորեաց զիսաւարարին կողմանս հիւսիսոյ. զոր և այժմ կամին 'ի մէնջ կորզել հանել խաւարասէր որդիքն արեւելից։

Այլ մեք 'ի ձեր քաջութիւն ապաւթեանդ խիզախեալ, էր ինչ՝ որ ընդդէմ դարձաք նոցա հրամանացն, և քաջում այն է՝ որ ապդ առաջի պատրաստեալ եմք։ Ընտրեցաք զմահ աստուածապաշտութեամբ քան զկենանս ուրացութեամբ. եթէ դուք եւս 'ի ձեռն առջինք զմեզ, ահա կրկին կենայ դիպեցաք և ոչ մի անգամ մահու։ Այլ եթէ սակաւիկ մի հեղգայք, գուցէ բաղում և այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա։

Այլ իբրեւ յանդիման եղեն մեծի թագաւորին, և ընթերցան զգիր պաղատանացն Հայոց աշխարհին և ըզյիշատակարանն նախնեացն, քաջում մատեանք 'ի մէջ եկեալ ընթերցան, որ զնոցն ուխտ հաստատութեան 'ի ներքս գտանէին։ Այլ մինչ դեռ երանելին Թէոդոս հարցանէր զամենայն սինկղիտոսն, և հնարս իրացն կամէր գտանել խաղաղութեամբ, և հոգ տանէր մեծաւ յոժարութեամբ, զի մի եկեղեցիքն արեւելից յափըշտակեսցին յանօրէն հեթանոսացն, 'ի նմին ժամանակի հայ անդէն վաղվաղակի հասանէր վախճան կատարածի կենաց նորա, և կարի չար խափան լինէր գործոյն օգնականութեան։

Digitized by Google

Յ՚ Թագաւորէ փոխանակ Նորա Պարկիանոս կայսր, և 'ի ձեռն վատթար արանց խրատտուացն իւրոց ծառայիցն, Պնատոլեայ՝ որ սպարապետն էր, և Յփլալիոս ասորի, երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և անաստուածք. 'ի նոցա բանս ելեալ Թագաւորն, ոչ կամէր անսալ միաբան ուխտին հաւատոց, որ ամենայն ուժովն իւրեանց ընդդէմ կացեալ էին չարութեանն հեթանոսաց։ Իսկ անարիս այս լաւ համարէր պահել զուխտն հեթանոսաց վասն մարմնական խաղաղութեան, քան պատերազմակից լինել ուխտին քրիստոնէութեան։ Պ՚ ասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ Թագաւորն Պարսից զնոյն Յփլալիոսն, և եմուտ ընդ նմա յուխտ հաստատութեան՝ ձեռնթափ լինել 'ի զօրացն Հայոց զօրու և զինու և ամենայն օգնականութեամբ։

Յ՚ իբրեւ այսպէս հաստատեցաւ, և հատաւ օգնականութիւն յուսոյ նոցա 'ի մարդկանէ, դարձեալ սուրբ եպիսկոպոսքն քաջալերել սկսան զանձինս և զօրսն Հայոց։ �պէտ և հայէին յիւրեանց սակաւութիւնն և յերկոցունց Թագաւորացն միաբանութիւն, ոչ ինչ վատասրտեալ դողային, այլ ըստ առաջին ուխտին խիզախէին և ասէին. Պատրաստ եմք 'ի սպանանել և 'ի մեռանել. դիւրին է Պ՚ստուծոյ սակաւուք ըզբազմաց գործ գործել, և անարգօք զմեծամեծ իրս կատարել։

Ություպէտ և ոչ ունէին Թագաւոր առաջնորդ, և ոչ յարտաքուստ օգնական զոք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետաց միութարութեամբ համադունդ ամենայն զօրաքնախարարացն յիւրաքանչիւր տանէ 'ի մի վայր գային հասանէին վաղվաղակի. բազում և այլ այրուձի, որ յարքունի տանէ անտի էր։ Յ՚ զամենայն զօրսն յերիս գունդս բաժանէին։ Զ՚ գունդն առաջին տային ցՅերշապուհ ուրմզոսեան, և գումարէին զնա պահապան աշխարհին, մերձ 'ի սահմանս Պ՚տրպատական աշխարհին։ Յ՚ զգունդն երկրորդ տային 'ի ձեռն Պ՚ արդանայ զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Պ՚ ռաց 'ի վերայ մարզպանին Ռ՚ որայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Պ՚ ղուանից։ Իսկ զգունդն երրորդ տային 'ի ձեռն Պ՚ ասակայ իշխանին Պիւնեաց, որ ոչ 'ի

Digitized by Google

բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ նեղքին խորհրդոցն իւրոց։

Ինորեաց և անդ ընդ իւր զօրոց գիտէր զթուլութիւն հաւատոց նոցա. զիշխանն բագրատունեաց զօրաք իւրովք, զիշխանն խորխոռունեաց զօրաք իւրովք, զիշխանն ապահունեաց զօրաք իւրովք, զիշխանն վահեւունեաց զօրաքն իւրովք, զիշխանն պալունեաց զօրաքն իւրովք, զիշխանն գաբեղենից զօրաք իւրովք, զիշխանն Արծայ զօրաքն իւրովք։ Յաւ զայլս բազում զօրս յարքունի տանէն էարկ յինքն, և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ։ Յաւ խորամանկ խաբէութեամբ դարանամուտ լինէր յամուրս իւրոց աշխարհին, 'ի պատճառս կեղծաւորութեան՝ եթէ ընդ ճապուկ անդր անցանէ 'ի վերայ գընդին Պարսից՝ հալածականս առնել յաշխարհէն Աղուանից։

Իսկ նա յամրածածուկ հաւալոցէն ճեպով դեսպանս արձակէր առ գունդն Պարսից. Զհա աւադիկ քակեցի զմիաբանութիւն ուխտիս Հայոց, և ընդ երիս կողմանս զգունդն քայքայեալ բաժանեցի։ Զգունդն առաջին հեռացուցի 'ի կողմանս Հերայ և Զարաւանդայ. և գունդս երկրորդ ընդ իմով ձեռամբ է, որոց ոչ ինչ տամ ինաս առնել զօրաց արքունի։ Յաւ զայլ ամենայն, որ այր կռուոյ յաշխարհի աստ գտանէր, ցանեցի ցրուեցի ընդ ամենայն միջոցս աշխարհիս։ Բայց զգունդն երրորդ ապարի ընդ Ալ արդանայ յԶլուանս՝ սակաւաձեռն և ոչ բազմութիւն։ Յաւ համարձակ ընդ առաջ նորա, և մի զանգիտեր ամենեւին տալ պատերազմ. գիտեմ՝ զի 'ի պարտութիւն մատնին առաջի քոյոյ մեծի զօրութեանդ։

Զայս գրեաց և եցոյց մարզպանին, որում անունն էր Ներուխտ։ Իսկ նա իբրեւ լուաւ զայս ամենայն ըզքաջալերս 'ի Ալ ասակայ, և ստուգեալ հաստատեաց 'ի միտս իւր, եթէ՝ սակաւաձեռն գնդաւ գայ սպարապետն Հայոց 'ի վերայ նորա, ոչ եկաց մնաց 'ի կողմանս Զորայ. այլ կուտեաց զամենայն բազմութիւն զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր ասնուն. և պատահէր նմա մերձ 'ի սահմանս Ալրաց հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորաց Աղուանից։ Անցանէր բաւանդակէր ամենայն զօրաք իւրովք. ուազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին 'ի

ներքս փակէր, զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ 'ի մարտ պատերազմի ընդդէմ գնդին Հայոց։

Իսկ քաջն Ալ արդան և ամենայն զօրքն, որ ընդ նմա էին, իբրեւ տեսին զբազմութիւն պատրաստութեան գնդին հեթանոսաց, Հայեցան և յիւրեանց սակաւութիւնն, թէպէտ և կարի յոյժ նուազուկք էին քան զնոսա, ոչ ինչ զանգիտեցին առ յոյժ բազմութենէն, այլ հասարակ միաբանեցին և համբարձին յերկինս ըզձեռս իւրեանց, աղաղակէին և ասէին. Դատեա, Տէր, զայնոսիկ՝ ոչք դատին զմեզ. մարտիր ընդ այնոսիկ, որ մարտնչին ընդ մեզ. զինու և ասպարաւ քով օգնեա մեզ։ Շ սրժեա և դողայր զգունդագունդ բազմութիւն անօրինացս. ցրուեա և վատնեա զչար միաբանութիւն թշնամեաց քոց առաջի քոյոյ փրկական մեծի նշանիս, և տուր 'ի ձեռն սակաւուցս զքաջութիւն յաղթութեան 'ի վերայ անհնարին բազմութեանս։ Ել 'ի պարծանս անուտի փառաւորութեան անօգուտ վաստակոց ինչ աղաչեմք՝ յաղագս հութիւն ընչասիրութեան զանցաւոր մեծութիւն կապտելոյ, այլ զի ծանիցեն և գիտասցեն ամենեքեան այնոքիկ՝ որ հնազանդին սուրբ աւետարանին քարոզութեան, եթէ դու ես Տէր կենաց և մահու, և 'ի ձեռս քո է յաղթութիւն և պարտութիւն։ Այս մեք պատրաստ եմք 'ի մեռանել վասն քո սիրոյդ. և եթէ սպանանել ետս հասանէ զնոսա, եղիցուք վրէժխնդիրք Աշմարտութեանն։

Այս ասելով՝ խումբ արարեալ յարձակէին, և զալ թեան բեկեալ՝ զձախոյ կողմանէն արկեալ, և սրոյ Ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին, և փախստական առնէին մինչեւ յամուր տեղիս մայրեացն առ խորագոյն դարիւքն Ալ ոմինաս գետոյ։ Ալուր ընդդէմ դարձեալ թագաւորազանց ոմանց բաղասական արքայի, ընկեցին զոմն 'ի ձիոյ 'ի նախարարաց Հայոց, 'ի գնդէն դիմանքսենից զԱ՝ուշ սպանին, և զԱ՝ազրիկ վիրաւորեցին։

Յայնմ տեղւոջ դէտ ակն 'ի վեր ամբառնայր Ա՝ՐՇաւիր արշարունի, գուէր առիւծաբար և յարձակէր վարազաբար, հարկանէր և սատակէր զԱ՝ուրին քաջ զեղբայր թագաւորին Ալ՝ինաց, և զբազում համհարզս նորին ընդ նմին սատակէր։ Այս այնպէս ամենեքեան առ հասարակ այր զախոյեան իւր յերկիր կործանէր։ Այս

Digitized by Google

առ յոյժ յանդուգն յարձակմանն՝ յոլովագոյն այն էր զոր գետամոյնս առնէին քան զանկեալսն արոյ 'ի ցանաքի։ Ի բազմութենէ դիականցն անկելոց՝ յստակ ջուրք գետոյն յարիւն դառնային, և ոչ գտանէր ոք ամենեւին 'ի նոցանէ ապրեալ և թաքուցեալ յանտառախիտ մայրիս դաշտացն։ Այլ մի ոմն 'ի զօրականէ թշնամեացն՝ զինու հանդերձ ելեալ 'ի նիւս երիվարին անցանէր ընդ մեծ գետն, մնջապուր պրծեալ 'ի պատերազմէն՝ գոյժ տանէր 'ի մնացեալ բուն բանակն, որք փախստական անկանէին 'ի մեծ շահաստանն։

Յայնմ ժամանակի զորքն Հայոց կատարելով զմեծ գործ պատերազմին, դիակապուտ դառնային, ժողովէին զաւարս բանակին, և կողոպտէին զանկեալ դիակունսն. և կուտէին բազում արծաթ և ոսկի, զգէնս և զզարդս զարի արանց և զքաջ երիվարաց։

Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ 'ի վերայ բերդիցն և քաղաքացն, զոր ունէին պարսիկքն յաշխարհին Աղուանից. հզօրապէս մարտնչելով և այրելով զամուրս արգելանաց նոցա, և զերան երան մնացեալն՝ զոր պատրաստական ածեալ աշխարհին զայթակղութիւն, ուր և գտանէին յամուրս ամուրս վայրացն, սրոյ Ճարակ տուեալ՝ դնէին զեշ թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Արբէին զտեղիսն յամենայն պղծագործ զոհիցն, և փրկեալ ազատէին զեկեղեցիսն յանհնարին նեղութենէն։

Այս բազումք 'ի նախարարացն Աղուանից և յամենայն շինականացն, որք վասն անուանն Աստուծոյ ցըրուեալ և վատնեալ էին յամուրս լերանց Կապկոհի, իբրեւ տեսին զաջողութիւն գործոյն՝ զոր կատարեր Աստուած 'ի ձեռն զնդիին Հայոց, գային ժողովէին և նոքա, և իսառնէին 'ի զօրս նոցա. և միաբանք և հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեան։ Իսաղային զնային այնուհետեւ 'ի վերայ պահակին Հոնաց, զոր ունէին բռնութեամբ պարսիկքն. առնուին քանդէին զպահակն, և կոտորէին զզօրսն՝ որ 'ի ներքս բնակեալ էին. և զդուռնն տային 'ի ձեռն Վահանայ, որ էր յազգէ թագաւորացն Աղուանից։ Այս յայսր ամենայն քաջութեան վերայ ոչ ոք անկեալ վիրաւորեցաւ ամենեւին 'ի նոցանէ, բայց 'ի միոյ երանելոյ որ կատարեցաւ նահատակութեամբ 'ի մեծ պատերազմին։

Digitized by Google

Այլ անդէն 'ի նմին տեղւոջ զայրն՝ որում զդուռնն յանձն արարին, զնոյն դեսպանս արձակեցին յաշխարհն Հոնաց, և 'ի բազում յայլ ազգս բարբարոսաց, որ համագործք էին Հոնաց աշխարհին, բանս դնել ընդ նոսա և ուխտ հաստատել՝ անքակութեամբ ունել զմիաբանութիւնն։ Իսկ նոքա իբրեւ զայն ամենայն լուան, փութապէս վաղվաղակի հասանէին 'ի տեղին, և ականատեսք լինէին գործոյն յաղթութեան։ Այլ ոչ ինչ յապաղեցին երդմամբ յուխտ մտանել ըստ կարգի իւրեանց օրինաց, յանձն առին և զերդումն քրիստոնէից, պահել ընդ նոսա հաստատութեամբ զմիաբանութիւն։

Իսկ իբրեւ զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն, և դեռ անդէն 'ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութեամբ, գուժկան հասանէր յաշխարհն Հայոց, զՀակատ հարեալ և զօձիս պատառեալ վասն ապստամբին Վասակայ. յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մինաւանդ զՄերոցս արքունի, որ կայեանք զօրացն էին, զԱռնին և զԶրամենս և զԱրսհանակերտն՝ զմեծ դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Ճշկան, զՓառախոտն, զՆրդեանն, զՀողկերտն աւան և զբերդն Լրմաւրի, զԿուաշն աւան, զԼրուձն, զԼշնակն և զամենայն ոստն Լրագածու, և զնահանգն Լրտաշատու և զԼրտաշատն ինքնին գլխովին, և զամենայն գեօղս և զաւանս՝ որ շուրջ զնովաւ էին, առեալ աւերեալ և հրձիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ։

Զեռն արկեալ և 'ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և զսուրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ. գերի վարեալ զընտանիս քահանայից, և զնոսին կապեալ և եղեալ 'ի բանդի. և ինքն սփռեալ տարածեալ ասպատակաւ աւերեր զերկիրն ամենայն։ Այլ գունդն՝ որ էր 'ի կողմանս Լտրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ 'ի միջոց աշխարհին։ Այլ զօրքն՝ որ անդ մնացեալ էին, խոյս տուեալ յանօրինէն մերժեցան յեզր աշխարհին, և դեռ պահէն ընդ ձեզ զուխտ միաբանութեան սիրոյն Քրիստոսի։ Բայց այն որ ընդ նմայն էին, են ոմանք՝ որ փախեան յիւրաքանչիւր տեղիս, և բազումք այն են՝ որ զհետ մոլորեցան նորա ամբարշտութեանն։

Digitized by Google

Ղու արարեալ 'ի տեղւոջէ անտի՝ դառնալ անդրէն յաշխարհն Հայոց մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ։ Եւ անտրտում ուրախութեամբ երգս 'ի բերան առեալ և ասէին ձայնիւ. Լոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ո եհար զազգս մեծամեծս և սպան զիշխանս հզօրս, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա։ Եւ զայս սաղմոս երգելով մինչեւ 'ի վախճան կատարեալ աղօթիւք փառաւորութիւն սուրբ Երրորդութեանն մատուցանէին։ Ընդ յանձանձէր ածէր զօրավարն զկայ և զմնաց զօրականին, առաջապահօք, վերջապահօք, կողմնապահօք ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ 'ի սահմանս հայրենի աշխարհին։

Ազգ եղեւ ուրացեալն Վասակայ և իշխանացն որ ընդ նմա էին՝ քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշխարհին Ղուանից, և միաբանութիւնն եւս Հոնաց։ Մինչ չեւ յանդիման եղեալ էին միմեանց, զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստական անկանէր յամուրս իւրոյ աշխարհին. և այնպէս տագնապաւ մերժեցաւ, զգերի և զաւարն զոր առեալ էր Ղ՝ յրաբրատ գաւառէ, ակամայ զիւրն եւս եթող և փախեաւ։

Եւ քանզի ժամանակ ձմերայնւոյ հասեալ էր, և ըզառձիկս՝ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր ըզմիով տեղեաւ համագունդ զզօրսն դարմանել. այլ սփռէր տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ 'ի հանգիստ ձմերոցին։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութեամբ առ ժամանակ գարնայնոյն։ Եւ զսակաւս 'ի գնդէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ, բռնանայր 'ի վերայ՝ ունելով զթագաւորանիստ տեղին։

Եւ գունդս գունդս արձակէր յաշխարհն Վիւնեաց, առնոյր և աւերէր զբազում գաւառս. և այնպէս 'ի նեղ արկանէր զնա և զամենայն զօրսն որ ընդ նմա էր, զի զեշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին։ Եւ բազում հարուածս հասուցանէին 'ի վերայ ուրացելոյն. մինչեւ ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին 'ի վերայ չարաչար վշտացելոյն, որ

Digitized by Google

բոկ և հետի վարէին զարս և զկանայս փափկասունս, և բազում տղայք գքարի հարեալ ընկեցան յանցս ձա-նապարհաց։

Իբրեւ այս ամենայն աջողութիւն լինէր երկիւղա-ծացն Աստուծոյ, ամենայն եպիսկոպոսունք և երիցունք պատուէր հրամանի տուեալ աշխարհին, զողջոյն ամիսն քաղոց պահօք և աղօթիւք առնել խնդրուածս առ Աս-տուած, և զտոն պատերազմացն յաղթութեան խառ-նել 'ի սուրբ տօն յայտնութեանն Քրիստոսի, զի ան-խափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուա-ծային անանց տօնին։ Եւ զսոյն զայս ամենայն այցելու-թիւնս Աստուծոյ, որ 'ի վերայ աշխարհին Հայոց մե-ծապէս երեւեցաւ, գրեցին սուրբ եպիսկոպոսունքն և ետուն տանել յաշխարհն Յունաց 'ի մեծ քաղաքն առ սուրբ ուխտ եկեղեցւոյն. զի և նոքա աղօթս առնելով խնդրեսցեն զԱստուծոյ, որպէս սկսաքս 'ի նմին և կա-տարեսցուք։

Եւ զոմն յառաջին կապելոցն պարսկաց լուծեալ և ածեալ զառաջեաւ նախարարացն, խօսէին ընդ նմա և ցուցանէին զամենայն ինչսն որ եղեւ, կամ աշխարհացն աւերեալն, կամ զօրացն արքունի հարկանելն, և կամ որ այլ իրք առաջոյ լինելոց էին։ Եւ իբրեւ զայս ամենայն բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր ամբաստանու-թիւն երկոցունց կողմանցն, զառաքինեացն և զչետս կացելոց, որպէս զուր և տարապարտուց նեղեաց զնոսա 'ի Հայրենի օրինացն յետս կալ. և զխաբէութիւն ա-պրատամբին Ավասակայ, որպէս Հայոց բանիւ խաբեաց զթագաւորն, յանձն առնուլ զմոգութիւն. իբրեւ չէր ուրուք ընդ նմա բանս եղեալ, նա յանձնէ սուտակաս-պաս լինէր։

Իբրեւ լիով զայս ամենայն իմացուցին, արձակեցին զնա հրեշտակութեամբ յաղերսաբանութեան 'ի հնարս հայթայթանաց, թերեւս կարասցեն զեղբարս իւրեանց 'ի նեղութենէն գողանալ։ Ապ առ նա՝ անօրէնն Ավա-սակայ գուժկանքն յառաջագոյն հասեալ էին, պատ-մել զաղէտս տարակուսանացն, զոր անցուցեալ էր ընդ զօրսն արքունի. և ամենայն ամբաստանութիւնն 'ի սուրբ ուխտ եկեղեցւոյն կրթեալ էր։ Զանազի այն իսկ կամք էին անօրինին, եթէ զմիաբանութիւն եպիսկոպոսացն

քակեցէ 'ի նախարարացն. և զայս ոչ էր տեղեկացեալ տակաւին, եթէ հոգի և մարմին բաժանիցին առ ժամանակ մի՝ գոյ տեսանել 'ի բնութեանս, այլ որ սիրոյն Աստուծոյ յուխտ մտեալ է՝ այսմ անհնար է լինել։

Արդ երթեալ այրն 'ի տեղի ձմերոցին, պատմեաց զայս ամենայն յականջս թագաւորին. շարժեալ զողացոյց, որ և յամենայն զօրութենէն պակասեալ գտաւ. մանաւանդ զի յարեւելից պատերազմէն կորակոր՝ և ոչ բարձրագլուխ էր դարձեալ։ Արբեւ ստուգեալ հաստատեաց 'ի վերջին հրեշտակէն որ եհաս առ նա, զամենայն վնասս զիւր գործոցն զխորհրդակցաքն արկանէր։ Այլ անդէն շինանէր 'ի բազմաբոյ բորբոքմանէն. քանզի խցաւ բերան չար խրատուացն, որ անդադար յորդորէին զնա 'ի գործ դառնութեան։ Ամենարհեցաւ 'ի բարձր հպարտութենէն, և զվայրենացեալ սիրտն դարձոյց 'ի մարդկային բնութիւն. հայեցաւ և ետես զինքն լի տկարութեամբ. գիտաց եթէ զամենայն զոր կամի առնել՝ ոչ կարէ կատարել։ Զան այնորիկ և դադարեաց յանդուգն յարձակմանէն, և լռեցոյց զմոլեգնոտաբար գոչումն։

Այլ որ մեծաձայն բարբառով որոտայր, և եւս ահագին հրամանաքն զհեռաւորս և զմերձաւորս դողացուցանէր, սկսաւ քաղցր և աղերս բանիւք խօսել ընդ ամենեսեան և ասել. Օ՜ինչ ինչ վնաս գործեալ է իմ, և կամ զո՞ր յանցս յանցուցեալ կամ առ ազգս կամ առ լեզուս կամ առ անձն իւրաքանչիւր։ Զի՞չ ահա բազում ուսմունք են յաշխարհիս Հրեից, և իւրաքանչիւր պաշտամունք յայտնի են. ո՞ երբեք նեղեաց զընդեաց դարձուցանել 'ի մի օրէնս մոգութեան. մանաւանդ վասն օրինաց քրիստոնէութեանն, որպէս հաստատուն և Աշմարիտ կացեալ են յիւրեանց դէնին, նոյնպէս և առ մեզ լաւագոյն քան զամենայն կեշտոն նոքա երեւեալ են։ Այլ բիծ իսկ ոչ կարէ ոք գտնել ընտրեալ օրինաց նոցա. այլ զոյգ և հաւասար համարիմ դէնիս մնզդեզանց, որպէս և յարգեալ իսկ էին նոքա առ նախնեաքն մերովք, զոր ես ինձէն իսկ յիշեմ առ հարքն իմով որ նստէր 'ի մեծ գահոյս յայսմ։

Յորժամ սկսաւ անդաձել և քննել զամենայն ուսմունս և հաստատութեամբ 'ի վերայ եհաս, առաւել

վեհ գտանէր զօրէնս քրիստոնէից քան զամենեցուն. վասն այսորիկ մեծարեալք և պատուեալք շրջէին 'ի դրան արքունի, և առատաձեռն պարգեւօք երանելիկք լինէին 'ի նմանէ, և համարձակութեամբ շրջէին ընդ ամենայն երկիր: Այս և որ զլխաւորքն էին քրիստոնէից, զոր և եպիսկոպոս անուանեն, ընծայից և պատարագաց արժանիս առնէր զնոսա, իբր հաւատարիմ ստիկանս: Յանձն առնէր նոցա զհեռաւոր մարզսն, և ոչ երբեք սխալ լինէր 'ի մեծամեծ իրացն արքունի:

Այլ դուք զմի զայն երբեք ոչ յիշեցէք, այլ հանապազօր ձանձրացուցէք զլսելիս իմ, խօսելով զնոցանէ զամենայն չարութիւն: Ցեսէք՝ զի ետուք գործել ինձ զոր ինչ ոչ կամէի, և եղեն միապաք մեծամեծք 'ի սահմանսն 'ի մէջ երկուց անհաշտ թշնամեաց: Այս մեք դեռ 'ի հեռաւոր Ճանապարհի, և ոչ մի ինչ գործ 'ի պատերազմիս 'ի գլուխ երթեալ, և դուք աստէն յիմումտանս յարուցէք 'ի վերայ պատերազմ, որոյ չարագոյն եւս լինելոց է կատարածն իւր քան զարտաքին թշնամեացն:

Օ այս ամենայն և առաւել քան զսոյն խօսէր ընդ ամենայն աւագանին, և զմեսաս յանցանացն արկանէր զմոգպետաւն և զմոգօքն: Այս ամենայն վզրուկքն և պատուական նախարարքն, որ նստէին յատենին և ունկնդնէին յեղյեղուկ լեզուի նորա, ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պչնուին, և զգլուխ 'ի վեր ոչ կարէին համբառնալ:

Բայց սակաւք 'ի նոցանէ զմիտս հաՃելով՝ ասէին զայս. Այո, արքայ քաջ, այդ այդպէս է որպէս ասացերդ, և արդ կարես զամենայն ուղղութեամբ նուաՃել. չիք ինչ այն, որ ըստ քո կամդ արտաքս կարէ ելանել. զի տուեալ է քեզ աստուածոյն, զի զամենայն զոր և կամիս, կարես առնել: Մի նեղեալ տագնապիր յանՃն քո և հարկաներ զմիտս մեր ամենեցուն. թերեւս և դիւր իցեն հնարք իրացն կատարածի: Այրկայնամիտ լեր և համբերութեամբ թողացո մարդկանդ անդրէն զքրիստոնէութիւն, և դոքօք զապստամբան ածցես 'ի հաւանութիւն:

ՃաՃոյ թուեցաւ բանքն առաջի թագաւորին. և անդէն վաղվաղակի կոչէր զառաջեաւ յամենայն ազգացն

պէս ունէին զքրիստոնէութիւնն, և 'ի զօրու նորա էին, և բռնաբար արգելեալ էր զնոսա, զի մի ոք իշխան լիցի յանգիման պաշտել զ՝աստուած. քանզի որ ընդդէմ կացին, չարչարեաց և արգել 'ի նոցանէ զյայտնի պաշտօնն, և ումանց ումանց ակամայ երկիր ետ պագանել արեգականն, և նստոյց 'ի սուգ տրտմութեան զամենայն զօրականսն։

Իսկ այն օր հրամայէր անդրէն համարձակութեամբ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոնէութեանն։ Իսկ ոք յանցաւորքն էին, ոչ կամէին վաղվաղակի առանց մեծի ապաշխարութեանն գալ և խառնել 'ի կարգ քրիստոնէութեան. հրամայէր թագաւորն՝ զի բռնի կալցին և տարցեն յեկեղեցին իւրեանց։ Այլ երիցանցն համարձակէր, որպէս զիարդ և գիտիցեն՝ ըստ կարգին իւրեանց արասցեն։ Այլ զհատեալ ռոճիկն կարգէր անդրէն իւրաքանչիւր, և զարգելեալ բազմականսն 'ի նոցանէ՝ 'ի տեղի հրամայէր մատուցանել, և հանապազորդ յարքունիս մնանել ոչ արգելլոր զնոսա. և զամենայն որ զիարդ և կարգեալ էին յառաջագոյն՝ անդրէն յօրինէր։ Խոնարհէր և խօսէր ընդ նոսա սիրով ըստ առաջին սովորութեանն։

Այլ իբրեւ զայս ամենայն արար և կարգեաց, յանդիման նոցա թողութեան հրովարտակս առաքէր ընդ ամենայն երկիր իշխանութեան տէրութեան իւրոյ վասն քրիստոնէից. Այթէ 'ի կապանս ոք կայցէ, արքունի հրամանաւ արձակեալ լիցի. և եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն։ Այնպէս և երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգեւականք և եթէ քսակագինք, և հանեալ ուրուք իցէ, հրամայեցաք զի դարձցին։ Այլ իբրեւ այսմ ամենայնի զնոսա տեղեակ առնէր, խնդրէր 'ի նոցանէ վկայութիւն հաւատարմութեան յերկիրն Հայոց, և երդմամբ յուխտ մնանէր սառաջի նոցա՝ հաստատութեամբ ամենայն մեծամեծաց իւրոց, եթէ ոչ ինչ յիշեցից ամենեւին զքէն վրիժուցն խնդրելոյ։ Որպէս ունէիք յառաջ ճշմարտութեամբ զօրէնս ձեր, այսուհետեւ առաւել կալարուք. այլ միայն 'ի ծառայութենէ մերմէ մի ելանէք։

Զայս ամենայն գրեր և ցուցանէր յերկրին Հայոց և 'ի քաղաքս յայլ աշխարհս, որ ունէին զօրէնս քրիս-

Digitized by Google

տունէութեանն. և ինքն գաղտ խորամանկեալ փութացեալ դեսպանս առաքէր առ Արկիանոս կայսր։ Եւ իբրեւ ստուգեալ ճշմարտեաց, եթէ Հռոմք 'ի բաց կացին ձեռնտու լինել քրիստոնէութեանն ոչ զօրու օգնականութեան և ոչ այլ իրաք, դարձեալ անդրէն 'ի նոյն յառաջին կարծիս մոլորութեանն շրջեցաւ։ Զի յաջողութեան իրացն 'ի ձեռն իւրոց պաշտօնէիցն հրամայէր. և այնպէս ածէր զմտաւ, եթէ ըստ առաջին կարծեացն կատարեսցեն զամենայն։

Իսկ Հայք թէպէտ և ընկալան զգիրն խաբեբայ ողոքանաց թագաւորին, որ 'ի վերոյ ունէր զաւետիս կենաց և 'ի ներքոյ զդառնութիւն մահու, զարմացեալ ընդ թերի խորհուրդն՝ ասէին ցմիմեանս. Դանի լիրբէ խորամանկ խաբէութիւն նորա, զի երկիցս և երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ, և ոչ ամաչէ։ Եւ տեղեակ եղեալ մերոյ ոնքակ միաբանութեանս, տակաւին լրբի և լկնի, զհետ մտեալ՝ կամի զմեզ լքուցանել։

Իսկ հաւատասյուքք անհաստատ հրամանի նորա. զոր բարեգործութիւն տեսաք առ ամենայն եկեղեցիս, որ են յաշխարհին Պարսից։ Զի որ ինքն իւր չար է, այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով։ Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս 'ի ստութենէ՝ ճշմարտութիւն, սոյնպէս և 'ի խռովասէր մտայ՝ ակնկալութիւն խաղաղութեան։

Այլ մեք ապրեալքս զօրութեամբն Աստուծոյ, և հաստատեալք հաւատովքն 'ի յոյսն Քրիստոսի, որ եկն և էառ 'ի սուրբ կուսէն զմարմին մերոյ բնութեանս, և միացեալ անբաժանելի աստուածութեամբն՝ ընկալաւ զչարչարանս մերոյ մեղաց 'ի յիւր մարմինն, և նովին խաչեցաւ և թաղեցաւ և յարուցեալ երեւեցաւ բազմաց, և վերացաւ յանդիման աշակերտացն առ Հայր իւր, և նստաւ ընդ աջմէ զօրութեանն, զնոյն հաւատամք Աստուած ճշմարիտ, և նմին ակն ունիմք, որ փառաւք հօր և զօրութեամբ գայ յարուցանել զամենայնենջեցեալս, և նորոգել զհնութիւն արարածոց, առնել համառօտս յաւիտենից 'ի մէջ արդարոց և մեղաւորաց։

Եւ պատրիմք իբրեւ զտղայս, և ոչ մոլորիմք իբրեւ զանտեղեակս, և ոչ խաբիմք իբրեւ զտգէտս. այլ պատ-

Digitized by Google

բաստ եմք ամենայն փորձութեանց։ Այլ աղաչեմք զԱՍ-տուած, և անդադար խնդրեմք 'ի բազում ողորմութենէ նորա, զի յորում սկսաք, 'ի նմին և կատարեսցուք քաջութեամբ, և ոչ վատութեամբ։ Զի արդ արեւելք և արեւմուտք գիտացին զձեր աստուածամարտ լինել։ և զմեզ 'ի զուր սպանանել 'ի վերայ ամենայն վատաւոցն մերոց։ Զկայեն մեզ երկինք երկնաւորք և երկիր երկրաւորք, եթէ չեմք ինչ մեղուցեալ 'ի միտս մեր անգամ. և 'ի վերայ պարգեւաց և բարիս առնելոյ մեզ՝ զձշմարիտ կեանս կամիք հանել 'ի մէջն, որում չիք հընար, և այլ մի լիցի։

Իսկ արդ հաւատասցուք անարժան բերանոյ նորա, որ ստիպէր չարաչար յուրացութիւն, և այսօր առանց մի ինչ բարիս գործելոյ լինիցի նա քարոզիչ աւետեաց։ Այլ որ հայհոյէրն զԲրիստոս, և ուրացուցանէր 'ի նըմանէ զհաւատացեալս, այսօր ակամայ խոստովանութեանն ոչ կարեմք վաղվաղակի յանձն առնուլ։ Այլ որ երդնոյրն 'ի մնոտի պաշտմունս իւրոյ մոլորութեանն, անցուցանել զամենայն չարչարանս ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ, արդ եկեալ գողանալով գոհութիւն մատուցանել. և այնու կամի զամենայն չարութիւն իւր 'ի մեզ հեղուլ։ Ոչ այդմ հաւատամք, և ոչ զսուտ հրամանդ յանձն առնումք։

Իսկ նա իբրեւ գիտաց, եթէ ոչ կարեմ քակել զհաստատութիւն միաբանելոցն, յայնժամ քակեաց յինքեանէ զձերն լի դառնութեամբ, յորում հանգուցեալ էր սատանայ զօրութեամբ իւրով, և բազում գործեալ էր նորա նախձիրս. որոյ կերակուր կամաց իւրոց էր 'ի մանկութենէ անարատ մարմին սրբոց, և ըմպելի անյագութեան նորին՝ արիւն անմեղայն։ Յաւելցեր եւս 'ի վերայ չարութեան նորա և զիւր մահաբեր հրամանն. գունդս գունդս յամենայն աշխարհացն գումարեր ընդ նմա, և բազում երամակս փղոց յղեր ընդ նմա։

Հասեալ մերձ 'ի սահմանս Հայոց, մտաներ 'ի քաղաքն Փայտակարան, և զզօրսն ամենայն սիրեր տարածաներ շուրջ զքաղաքաւն առ 'ի զգուշութիւն պատրաստութեան իւրոյ չարահնար խորհրդոցն։ Այլ յամուր որջն մտեալ հին վիշապն չարաթոյն, և բազում կեղծաւորութեամբ զինքն թաքուցանելով յաներկե-

զուԹիւն, հեռաւորացն ահագին ձայնիւ սաստէր, և 'ի մերձաւորսն իբրեւ զօձ սողալով փչէր։ Այս էր իշխան և հրամանատար ամենայն տէրութեանն Պարսից, որում անունն էր Այիրներսեհ. և չէր ոք ամենեւին, որ իշխէր ըստ ձեռն նորա ելանել։ Այլ ոչ միայն մեծամեծք և փոքունք, այլ և ինքն Թագաւորն հրամանի նորա անսայր. որոյ և ձախող իրացն իսկ բուռն հարեալ էր նորա։

Digitized by Google

ՉՈՐՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՎԱՄՆ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՍԻՒՆԵԱՑ ԵՒ ԱՆՕՐԷՆ ԸՆԿԵՐԱՑ ԻՒՐՈՑ

Մինչեւ ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտելի պատմել զհարուածս ազգիս մերոյ, որ յարտաքին թշնամեաց ՀՀմարտութեանն չարաչար յարեան 'ի վերայ մեր. որք սակաւագոյնք հարին զմեզ, և յոլովագոյնք հարեալ գտան 'ի մէջ. քանզի դեռ եւս միաբանք և հաւասարք էաք։ Զի՞ պէտ և ոմանք 'ի ծածուկ ունէին զերկմտութիւն նենգութեանն, սակայն յաչս արտաքնոյն ահաւոր երեւէր միաբանութիւնն. որպէս յերկուս և յերիս տեղիս ոչ կարացին կալ առաջի։

Զրդ յայսմ հետէ և անդր, ուր սպրդեալ անկանի երկպառակութիւն 'ի ներքս, ընդ քակել միաբանութեանն՝ և երկնաւոր առաքինութիւնն հեռանայ, և անձնընտիրք լինելով՝ յոյժ բազմանայ լալումն ողբոյս։ Զի՞ անպէ՞ հատեալ անկեալ անդամքն, որ յառաջագոյն սորուն սուրբ մարմնոյս էին, դառնայ մարդ յարտասուս առաջի մերձակայ դիականն։ Լայս առաւել ընդ դառնութեամբ 'ի վերայ այնորիկ՝, որ յոգի և մարմին առհասարակ դիականանայ։ Լայ եթէ 'ի վերայ միոյ անձին այսպէս, ո՞րչափ եւս առաւել 'ի վերայ ողջոյն ազգի միոջ։

Զայլ յայսմ տեղւոջ ոչ միայն 'ի վերայ միոյ ազգի է ողբումն մեր, այլ 'ի վերայ ազգաց և աշխարհաց. զոր և յառաջ մատուցեալ ասացիս ըստ կարգի, թէ պէտ և ոչ ինդութեան մտաք։ Զհա ակամայ Հառագրեմ զբազումն. ո՞րպէս կորեան ոմանք 'ի Հշմարիտ կենացն իւրեանց, և պատՀառք եղեն բազմաց կորստեանն, ոմանց՝ երեւելեացս միայն, և այլոց՝ երեւելեաց և անեղերեւութից։ Լայ այն՝ եւս չար է քան զամենայն. դուն՝ զոր բացին կորստեան՝, Զստուծոյ միայն կարո-

Digitized by Google

զութիւն է փակել զնա, այլ ըստ մարդկան սահման՝ ահա անցեալ է հնար։

Այս անօրէն Միհրներսեհ, քանզի յառաջագոյն ստուգեալ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի եւս յղէր և կոչէր զնա առ ինքն։ Որպէս նորա իսկ յառաջագոյն զատեալ և որոշեալ էր 'ի միաբանութենէն Հայոց, եկն և յանդիման եղեւ. և ստուգէր զիւր հաւատարմութիւնն և զՀայոց անիրաւ ապստամբութիւնն։ Յաւել և պատմեաց եւս առաւելաբանութեամբ զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընդանեբար ընդ միտ մտանել անօրինին։

Բայց նա թէպէտ և 'ի ներքոյ յոյժ դարուվէր զնա, այլ արտաքին գիմաք մեծարեաց զնա, և եդ առաջի նորա զմեծամեծ պարգեւս երկրաւորս։ Այլ խոստացաւ նմա իշխանութիւն աւելի քան զոր ունէրն. և Հայեցոյց զնա 'ի կարծիս անտիս, որ 'ի վերս էր քան զիւր տէրութիւնն. իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ 'ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեսցէ, թէ հրպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարեսցին յաշխարհին։

Այլ իբրեւ յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամաց նորա, գիտաց և ծերն գառնացեալ, եթէ թշնամի եղեալ և ցնորեալ և քակեալ է 'ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ 'ի միտս իւր տրտմեալս, և ածէ զմտաւ՝ թէ և զամենեսեան այսպէս կարիցեմք որսալ յանգիւտ կորուստն։ Այլ իւրոյ հնարագիտութեանն տայր զիմաստութիւնն. և այնմ ոչ էր տեղեակ, թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է 'ի սուրբ եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ 'ի սիրոյն Քրիստոսի։

Քանզի մոռացօնք եղեն նմա զալուստ որդւոյն Աստուծոյ, և ոչ յիշեաց զքարոզութիւն սուրբ աւետարանին. ոչ 'ի սպառնալեացն զանգիտեաց, և ոչ յաւետիսն մխիթարեցաւ։ Որպացաւ զաւազանն՝ որ յղացաւ զնա, և ոչ յիշեաց զընկալուչ սուրբ Հոգին՝ որ ծնաւ զնա։ Այնարգեաց զմարմինն պատուական՝ որով սրբեցաւն, և առ ոտն եհար զարիւնն կենդանի՝ որով և քաւեցաւն 'ի մեղաց։ Ոչնչեաց զգիր որդեգրութեանն, և

Digitized by Google

իւրովք ձեռաք խորտակեաց զհաստատուն կնիք մատանոյն։ Այլ 'ի Թուոյ երանելեայն, և ապստամբեցոյց ընդ իւր զբազումս։

Զեռն արկ կամակորութեամբ և եմուտ յորդեգրութիւն դիւապաշտութեանն, և եղեւ ասան չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ։ Ի ձեռն էառ իբրեւ զվահան, և ազաւ զնա իբրեւ զրահս, և եղեւ իբր զինուոր կատարեալ կամաց նորա։ Պարտեաւ հնարիւք ընդ իմաստունս, և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեղս, և 'ի ծածուկ ընդ խորհրդականս. ձեռն էարկ և եհան զբազումս 'ի գնդէն Քրիստոսի, և խառնեաց 'ի գունդս դիւաց։ Այլ 'ի բազում յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ իբրեւ զօձ 'ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զբազմագոյնս 'ի շինականաց, և զայլ ոմանս յանուանեալ քահանայից։

Որոց անուանքն են այս՝ գործակցաց նորա. իշխանն ուրշտունեաց Աղտակ անուն, իշխանն խորխոռունեաց Դադիշոյ անուն, իշխանն վահեւունեաց Դիւտ անուն, իշխանն բագրատունեաց Տիրոյ անուն, իշխանն ապահունեաց ՄանէՃ անուն, իշխանն գաբեղենից Աղտէն անուն, իշխանն Անկեայ Ինջուղ անուն, իշխանն Արծայ Ներսեհ անուն, իշխանն միւս եւս պալունեաց Վարազշապուհ անուն, սեպուհ մի ամատունեաց Մանէն անուն. բազում և այլ ազատ մարդիկ, զոր ոստանիկան անուանեն յարքունի տանէ։

Այս բովանդակ զիւր բոլոր աշխարհն ապստամբեցոյց յուրացութիւն, ոչ միայն ըստ աշխարհին քաջմութեանն, այլ և զբազումս յուխտէ եկեղեցւոյն. մանաւանդ սուտ երիցամարքն, որով գործէր զչարիսն. երէց մի Օանգակ անուն, երէց մի Պետրոս անուն, սարկաւագ մի Սահակ անուն. զորս յղէր առ անմեղ մարդիկ, խաբէր և պատրէր. սուրբ աւետարանաւն. երդնուին և ասէին, եթէ 'ի Թագաւորէն չնորհեսցի ամենեցունց քրիստոնէութիւնդ։ Այս այսպէս խորամանկ խաբէութեամբ հանէին զբազումս 'ի սուրբ միաբանութենէն, ածէին և խառնէին 'ի գունդս ուրացողացն։

Այս ժողովեաց զամենայն զայթակղութիւն, և արար

գունդ զօրաց բազմաց. գրեաց և եցոյց զբազումս 'ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով հրպէս աշակերտեաց 'ի մոլորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկցեալս երեւեցոյց զզօրսն Հայոց։

Եւ իբրեւ այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց 'ի Հայոց, և Աղուանից ոչ ետ յառաջ խաղալ, և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Պրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոց ստութեամբ, առ այր մի՝ որոյ Վասակ անուանէր, յայնց մամիկոնեանից՝ որ կան 'ի ծառայութեան Յունաց։ Եւ 'ի թշուառութեան ժամանակին այրն այն սպարապետ էր ստորին Հայոց, և հաւատարիմ զօրացն Հոռովմոց 'ի սահմանին Պարսից, և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք։ Եգիտ այս Վասակ զայն Վասակն իւր գործակից 'ի մեծամեծ չարիսն, զոր միաբանեցին երկոքեանն։

Պրէր և ցուցանէր հանապազորդ նա, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին. և զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել 'ի թագաւորանիստ քաղաքն Կայսեր. մինչեւ զսուրբ եպիսկոպոսայն զմիասն եւս ուծացոյց 'ի նոցանէ, և զամենայն զօրսն Յունաց յերկբայս արար յուխտէն։ Մանաւանդ զի 'ի ձեռն սուտ քահանայիցն պատրէր և խաբէր իբրեւ ճշմարիտ մարդովք, աւետարան հանդերձ խաչիւ տայր տանել, և զիւր զամենայն սատանայական ստութիւնն նոքօք ծածկէր։ Պնէր զինքն յաստուածպաշտութեան կարգի և զամենայն կողմ ուրացելոցն. առաւել զինքն հաստատէր հաստատուն քան զամենայն զօրսն Հայոց. երդնոյր և հաստատէր, եւս և զամենայն հրամանս թագուութեան յաղքունուստ ցուցանէր։

Այն էին և կամք Յունաց աշխարհին, լսել զայն ախորժութեամբ. այլ 'ի ձեռն նորա առաւել եւս 'ի նոցն յեղեալ տապալեցան։ Այնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամիսականաց աշխարհին, 'ի Ցմրիսն և 'ի Կորդիսն, յԱրցախս և յԱղուանսն, 'ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց, յղէր սնդէր, զի ասպնջականութեան ոք արժանի մի արասցէ։

Digitized by Google

Այլ ըստ մեծի չարութեան նորա առաւել եւս ժամանակն եբեր նմա զյաջողութիւն իրացն. զի ամենեւին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ գնդին Հայոց, բայց յայնց Հմնաց, որոց բանս եղեալ էր։ Վակայն և վասն նոցա կուտեաց զբազում այրուձին Պրեաց, արգել և փակեաց զդրունս ելին նոցա. քանզի ոչ տայր դադար ամենեւին Թագաւորին Պարսից, այլ յղէր և կոչէր գունդս բազում 'ի պահակն Ծորայ, և զԿրաց աշխարհին բովանդակ գումարէր, զզօրսն Վինաց և զՇղբաց, և զԿատն, զՊաւն և զՊղուարն և զԿրսանն և ըզՀեճմատակն, զՊասին և զՊասին և զՊիւքօնան և զամենայն զօրսն Ֆաւասպարանն, զլեռնայինն և զդաշտայինն, և զամենայն ամրակոծին լերանցն։ Այր զոր կարասաւ, մեծաւ պարգեւօք և առատաձեռն բաշխելով զգանձսն արքունի, և էր զոր հրամանաւ Թագաւորին սաստիւ տապնապէր։

Այս ամենայն իբրեւ արար և կատարեաց ըստ հրամանի Թագաւորին, օր ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին Պարսից, որ զղեալ և Թաքուցեալ էր 'ի քաղաքն Փայտակարան։ Համարձակեցաւ այնուհետեւ և նա ցուցանել զինքն բազում ազգաց. էր որոց ահ արկանէր, և էր որոց սիրով պարգեւս բաշխէր։ Կոչէր առ ինքն զԿատակ, և ոչք ընդ նմա իշխանքն ամենեքեան. բազում պարգեւս բաշխէր նոցա յարքունուստ, և զօրացն՝ որ 'ի նոցա բանի էին։ Ցանէր զառաջեաւ և զուրացեալ երիցունսն. ցուցանէր, հաստատէր և յայտ առնէր, եԹէ սոքօք որսացայց զնոսա՝ քակտել 'ի միաբան ուխտէն։ Իսկ հազարապետն իբրեւ զայն լսէր, յոյժ շնորհակալ լինէր երկոցունցն, և յոյս առաջի դնէր նոցա. ԵԹէ լեցի մեր յաղԹութիւն, զայլոց քահանայից կեանս դոցա շնորհեցից, և զմեծ վաստակ դոցա ցուցից Թագաւորին։

Այս այսպէս շարժեաց և շփոԹեաց զաշխարհն Հայոց, մինչեւ զբազում եղբարս հարազատս քակեաց 'ի միմեանց. ոչ եԹող միաբան զՀայր և զորդի, և 'ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն։

Այս անդէն իսկ յիւրում աշխարհին եղբօրորդիք երկու էին նորա 'ի սուրբ ուխտին առաքինութեան. գրեաց և եցոյց վասն նոցա յարքունիս, և էառ իշխանութիւն

Digitized by Google

'ի վերայ կենաց նոցա, մերժեաց և եհան զնոսա յաշխարհէն, զի մի այլ դարձցին անդրէն։ Հալածեաց և փախոյց զամենայն միայնակեացս աշխարհին, ոյք հայհոյէին զանդարձ ամբարշտութիւն նորա, որ արար և կատարեաց զամենայն չարիսն ընդդէմ Ճշմարտութեանն. և զոր ինչ ոչ գիտէին անօրէն հեթանոսքն՝ իմացուցանէր նոցա, և վասն ուխտին քրիստոնէութեան, եթէ ուրպէս հնարիւք կարասցէ բառնալ յաշխարհէն Հայոց։

Օ այս ամենայն չարիս իբրեւ ետես 'ի նմա Ս՝ Իրենեսնէ, քան յանձն իւր՝ առաւել 'ի նա էր յուսացեալ։ Հարցանէր և ստուգէր, թէ քանի այր կայ 'ի Հայոց աշխարհին 'ի գնդին Ս արդանայ ընդ ամենայն բազմութիւնն։ Իբրեւ լուաւ 'ի նմանէ՝ թէ աւելի քան զվեթասուն հազար են, խնդրեր եւս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի այն ոք իցեն՝ որ սպառազէնքն իցեն, և կամ քանի այն ոք իցեն՝ որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն. սոյնպէս և վասն վահանաւոր հետեւակացն։

Իբրեւ լուաւ զթիւ համարոյ բազմութեանն, առաւել եւս փութացաւ ուսանել՝ թէ քանիք իցեն պարագլուխք քաջ նահատակացն, զի երիս ընդ միոյ պատրաստեսցէ առ մի մի 'ի նոցանէ։ Զոմ զայլ ամենայն, այլ և դրօշից անգամ իւրաքանչիւրոց տեղեկանայր 'ի նմանէ. և թէ քանի գունդ զզօրն բաժանիցեն, և ո՞ր ոք 'ի նոցանէ սաղարք լինիցին, և ո՞ր զօրագլուխ յորմէ՛ կողմանէ յառաջ մտանիցէ, և զինչ անուանք՝ իւրաքանչիւր համհարզ անցանիցեն, և քանի փողահարք 'ի մէջ գնդին ձայնիցեն։ Ա՛ակնիշ գործիցեն արդեօք, եթէ արձակ բանակեսցեն. Ճակատ առ Ճակատ գործիցեն, եթէ համագունդ ընդ մի տեղի դրդիցեն։ Ա՛ ոք 'ի նոցանէ յերկբայս կայցէ, և կամ ո՞ ոք 'ի նոցանէ զանձն 'ի մահ դնելով գունդ գործիցէ։

Իբրեւ զայս ամենայն տեղեկացեալ 'ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլխեանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա լուիցեն ամենեքեան։ Իբրեւ զամենայն զօրն զօրագլխաքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն, որում անուն էր Ս՝ուշկան՝ Իսասաւուրտ։

Իբրեւ ինքն խաղայր անդրէն գնայր յերկիրն արեւեբ-

լից. և յանդիման եղեալ մեծի թագաւորին, պատմէր զամենայն անցս իրայն, զիւր հնարաւոր իմաստութիւնն և զ|| ասակայ խաբեբայ պատրանսն հայթայթանացն, որպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու՝ զի քակեալ երկպառակեաց զգունդն Հայոց։ Զրեւ լուաւ զայս ամենայն թագաւորն 'ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր, և ասէ անսուտ երդմամբ. Եթէ ապրեսցի անօրէնն այն 'ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանաք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու։

Digitized by Google

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՑԱՐԶԱԿՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՑՑ

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ, իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց. որպէս անդստին 'ի սկզբանէ է տեսանել զբազում բազում անգամ 'ի բազում տեղիս։ Մարդիկ, որ սիրոմն Աստուծոյ իբրեւ զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով, իբրեւ անարի գոլով վատասիրտք, կամ 'ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից, կամ 'ի խողխողումն սիրելեաց, կամ 'ի գերութիւն ընտանեաց, ելանել 'ի հայրենի երկրէն և անկանել 'ի ստրկութիւն յօտարութեան. առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն. այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի 'ի նմանէ միայն մի գերի ելցեն. և ամենայն երեւելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ 'ի միտս իւրեանց։ Այս զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիւտից։ Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց։

Զանգի իբրեւ ետես մեծն Արդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց։ Զի էպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց եւս զերկմտութիւն, որ դեռ եւս ընդ նմա միաբանեալք էին, քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ դեռ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղին միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան 'ի սուրբ ուխտէն։ Հրա-

Digitized by Google

ման տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք, փոխանակ յետս կացելոցն՝ որ ելին զՀետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս 'ի տեղի նոցա մատուցաներ, և զիւրաքանչիւր զօրս տան նոցա. զի դեռ եւս ինքն ունէր զամենայն աշխարհն։

Եւ փութով ամենեքեան 'ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին 'ի տեղւոջն, Դերշապուհ արծրունի, և Խորէն խորխոռունի, և ինքն սպարապետն, և Արտակ պալունի, և Վահան ամատունի, և գունդն վահեւունեաց, և Թաղուլ դիմաքսեան, և Արշաւիր աբշարունի, և Շմաւոն անձաւացի, և Տաճատ գնթունի, և Ատոմ գնունի, և Խոսրով գաթեղեան, և Կարէն սահառունի, և Հմայեակ դիմաքսեան, և միւս եւս այլ Դաւրիկ դիմաքսեան, և Դերսեհ քաջբերունի, և Փարսման մամիկոնի, և Արսէն ընձայացի, և Արուկ սլկունի, և Վրէն տաշրացի, և Աղրսամ արծրունեացն, և Շահ խոռապետն արքունի, և Խուրս սրրուանձտեաց, և քողեանքն և ակէացիքն և տրպատունիքն և զօրքն ուշտունեաց և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ։

Նոքա ամենեքեան համագունդք հասանէին 'ի գործ պատերազմին 'ի դաշտն Արտազու, և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր՝ ընդ հեծեալ և ընդ հետեւակ։ Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփ և Պետրոս երէց, բազում և այլ քահանայք, և եւս բազմագոյն պաշտօնեայք։ Ոչ ոք ինչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսա 'ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգեւոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն։

Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ. Ի բազում պատերազմունս մտեալ է իմ և ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է՝ որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք։ Եւ միանգամայն այն ամենայն էին

մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք։ Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւէր, և անողորմ մահ 'ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, և պարգեւս մեծամեծս յանցաւոր և 'ի մահկանացու թագաւորէն ընդունէր։ Այս մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ և պարգեւս մեծամեծս։ Անարդ և անօգուտ զքաջութիւնն համարիմ, և առ ոչինչ զպարգեւսն զբազումս. վասն զի ամենեքեան խափանելոց են։ Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարէաք, որչափ եւս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց և մեռելոց, և դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց։ Այսպէսն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք 'ի մարմնոյ աստի, զի մոցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցեմք 'ի նմանէ։

Արդ աղաչեմ զձեզ, ով քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք 'ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, և գահու 'ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամաք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին քանք իմ 'ի լսելիս մեծամեծայ և՝ փոքունց։ Մի երկուցեալ զանգիտեսցուք 'ի բազմութենէ հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի զթիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն 'ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն Աշմարտութեանն. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յաւութիւնս քաջութեան՝ վատութիւն մի խառնեսցուք։

Անաւանդ զի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց 'ի ձէնջ, 'ի ժամանակին՝ զի զանօրէն իշխանն խաբեցաք, պատրեցաք իբրեւ զմանուկ մի տղայ անպիտան. իբր այն եթէ 'ի վերինն երեսս զկամն նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց 'ի ծածուկ զիսորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ եմք 'ի նմանէ։ Որ և դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրե-

լեայ մերոց՝ որ 'ի մեծի նեղութեան էին, հնարս խընդ-
րեաք վասն յանդորր հանելոյ. զի նոքօք հանդերձ մարտ
եղեալ կռուեացուք ընդ անօրէն իշխանին վասն հայրե-
նի աստուածատուր օրինացն։ Այլ իբրեւ նոցա ոչ ինչ
կարացաք օգնել, անհնար լիցի այս՝ եթէ վասն մարմ-
նաւոր սիրոյ զԱստուած ընդ մարդկան փոխանակիցեմք։

Իսկ արդ յերկուս և յերիս կռիւս Տէր ինքնին մե-
ծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քա-
ջութեան ժառանգեցաք, և զզօրն արքունի չարաչար
հարաք, և զմեզն անողորմ սատակեցաք, և զպղծու-
թիւն կռապաշտութեանն 'ի տեղեաց տեղեաց սրբե-
ցաք, զանօրէն հրամանն թագաւորին եղծաք ապականե-
ցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեառնացեալ
ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ,
զազանացեալ սրտմտութիւնն դադարեաց։ Որ 'ի վե-
րայ ամպոց սրոտայր, նկուն եղեալ՝ քան զսովորական
բնութիւնն 'ի վայր գտաւ ընդ մեզ խօսելով։ Որ բա-
նիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր 'ի
վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և
սրով կռուի։ Որ իբրեւ զՀանդերձ կարծէր ունել մեզ
զքրիստոնէութիւնն, արդ իբրեւ զգոյն 'ի մարմնոյ՝ չկա-
լէ շրջել, թերեւս և ոչ այլ կարացէ մինչեւ 'ի կատա-
րած։ Զանգի հիմունք սորա հաստատութեամբ եղեալ
են 'ի վերայ վիմին անշարժութեան, ոչ 'ի վերայ երկ-
րի, այլ 'ի վեր յերկինս, ուր ոչ անձրեւք իջանեն և ոչ
հողմք ընչեն և ոչ հեղեղս յարուցանեն։ Այս մեք թէ-
պէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատովք յերկինս
եմք շինեալ. ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ
շինուածն Քրիստոսի։

Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ
ոչ երբեք մոռասցի զգործս նահատակութեան ձերոյ։
Ո՛վ քաջք, մեզ այս մեծապէս է՝ զոր կատարեաց Աս-
տուած 'ի ձեռն մերոյ բնութեանս, յորում և զօրու-
թիւնն Աստուծոյ մեծապէս երեւի։ Օ՛ի եթէ զայլս
կատորելով 'ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս
անձանց ժառանգեցաք, և զքաջ անուն ազգատոհմին
մերոյ թողաք եկեղեցւոյ, և վարձուց ակնկալութիւն 'ի
Տեառնէ է, որ պահի իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ ըստ
սրտին յօժարութեան և ըստ գործոց առաջարկութեան,

Digitized by Google

ոչչափ եւս առաւել եթէ մեք մեռանիցիմք 'ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում և երկնաւորքն են ցանկացեալ, եթէ գոյր հնար։ Այլ զի այս պարգեւք ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի 'ի բարերար Տեառնէն, և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց, այլ յաննախանձ պարգեւատուէն. որպէս և ասէ իսկ 'ի սուրբ կտակարանին. Որ առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ։

Այս մեզ կարի քաջ 'ի դէպ եղանէ հրաման պատասխանուոյս այսորիկ. որպէս և առաւելապէս երեւեցաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւելապէս երեւեսցուք արդարացեալք մարդկան և հրեշտակաց և հօրն ամենեցուն։ Զի որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ 'ի գործ ամբարշտութեանն, որտասուս բաղում հեղան 'ի սուրբ եկեղեցւոջն, և եւս բազմագոյն 'ի մէջ սիրելեացն մերոյ։ Այս և ընկերք մեր սրով սրտմտեալ սպառնային մեզ, և մահ դառնութեան 'ի վերայ հասուցանել կամէին, և ծառայքն մեր սարսուցեալ փախչէին 'ի մէնջ։ Այս հեռաւորաց, որոց լուեալ էր զանուն քրիստոնէութեան մերոյ, քանզի ոչ էին տեղեակ խորհրդոցն մերոց, ողբս 'ի բերան առեալ անդադար աշխարէին զմեզ, և անգիտութեամբ հայհոյութիւնս բազում խօսէին զմէնջ։ Այս որ մեծն քան զամենայն ասայից. ոչ միայն մարդիկ յերկրի, այլ և հրեշտակք յերկինս զերեսս իւրեանց դարձուցին 'ի մէնջ, զի մի տխուր դիմաք հայեսցին 'ի մեզ։

Այս ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտանուն 'ի մէնջ 'ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրեւ ըզթախծեալ սգաւոր՝ յոգի և մարմին էաք տրտմեալք, այսօր զուարթացեալ և զգաստացեալք յերկոսեան առհասարակ եմք լրջացեալք. քանզի և զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն. չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց։ Այս կիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեք 'ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ 'ի մտաց և 'ի խորհրդոց մերոց։

Զայս ամենայն առաքինի զօրավարն խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն. դարձեալ և զմի մի 'ի նոցա-

նէ քաջալերէր 'ի ծածուկ և պտտապնդէր, և զամենայն պակասութիւն աղքատութեան ընոյր։ Որոյ ոչ ինչ գոյր զօրականին, յանձնէ և յընկերաց մատուցանէր. որոյ զէն չէր, զէն պատրաստէր. և որում հանդերձ պիտոյ էր, հանդերձ զգեցուցանէր, և որում երիւար՝ երիւար տայր։ Յև առատ ուսՃկաբ ուրախ առնէր զամենեսեան, և զուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն։ Յև ըստ պատերազմական կարգին զքաջ արանց զյիշատակաբանս հանապազ երկրորդէր առաջի նոցա. զի և ինքն իսկ տեղեակ էր 'ի մանկութենէ իւրմէ սուրբ կտակարանաց։ Զոր և 'ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն մանկաբայեցւոց ընթեռնոյր 'ի լսելիս ամենեցուն. և յորզառատ բանիւք զելս իրացն իմացուցանէր նոցա, որպէս մարտուցեալ կռուեցան 'ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին անտիոքացւոց։ Զի թէպէտ և 'ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան եկաց մինչեւ ցայսօր ժամանակի, ոչ միայն յերկրի, այլ և անմոռաց յերկինս։ Ցա և զայն յուշ առնէր զօրականին, որպէս ազգատոհմն Մատաթեայ քահանայ բաժանեցան 'ի միութենէ նորա, դարձան 'ի հրաման թագաւորին, շինեցին մեհեանս, մատուցին զոհս պղծութեան, խոտորեցան յՄ՝ստուծոյ, և ընկալան զպատիժս պատուհասի մահուան 'ի սուրբ միաբանելոցն։ Իսկ Մ՝ատաթի և որք ընդ նմանն էին՝ ոչ ինչ քաջալ թուլացան, այլ եւս առաւելապէս պնդեցան, և ձեռնամուխ եղեն 'ի գործ պատերազմին բազում ժամանակս։ Զայս ասէր, և անդէն 'ի դաշտին զտեղի առեալ՝ զզօրսն զետեղէր, և յամենայն կողմանց տակաւ զայրուձին կազմէր։

Իսկ յետ բազում աւուրց զօրագլուխն Պարսից խաղայր գայր ամենայն հեթանոսական բազմութեամբն, և եկեալ հասանէր յաշխարհն Հայոց 'ի Հէր և 'ի Զարաւանդ գաւառ։ Յև անդէն 'ի գաւառին զտեղի առեալ նորա, բանակ բոլորէր, փոս հատանէր, պատնէշ կանգնէր, շերտաւոր փակէր, ամրացուցանէր իբրեւ զքաղաք ամենայն պատրաստութեամբ։ Զունդ բազում հատանէր 'ի զօրաց նորա, ասպատակաւ արշաւէր, յաւարի առնուլ կամէր զգաւառս բազումս։

Զայն իբրեւ լուան զօրքն Հայոց, սեպուհ մի յազ-

Digitized by Google

գէն ամատուներաց, Ղանձար անուն, ընտրեցին յամենայն զօրականէն լի իմաստութեամբ և քաջութեամբ։ Եւ ընդ առաջ նորա հազարօք երկու, հար սատակեաց զբազմութիւն գնդին, և զմնացեալսն 'ի նոցանէ անդրէն փախստական 'ի բանակն արկանէր։ Եւ ինքն ողջանդամ այսրէն դառնայր, և լինէր տօն ուրախութեան մեծ յաւուրն յայնմիկ զօրացն Հայոց։

Դարձեալ միւսանգամ ուրացեալն Վասակ անդրէն 'ի հնարս հայթայթանաց մտանէր ըստ առաջին կեղծաւորութեան իւրոյ. շրջեցաւ 'ի ձեռն սուտ երիցանցն՝ զոր յառաջագոյն ասացաք, նոքօք հրամանաւ արքունի 'ի պատգամաւորութիւն խօսէր, և երդմամբ հաստատէր զքրիստոնէութիւնն անդրէն ունել։ Եւ զայս արարեալ զբազում աւուրս՝ ոչ կարաց զմիաբանութիւնն քակտել, մանաւանդ զսուրբ ուխտ եկեղեցւոյն, որ ոչ էր հեռացեալ 'ի զօրականէն։ Որպէս երանելի երէցն Վեւոնդ հրաման առեալ 'ի սուրբ ընկերացն 'ի մեծէն Յովսեփայ և յամենայն մեծամեծացն, 'ի քահանայիցն և 'ի զօրապլխացն, եբաց զբերան իւր և ասէ բարձր բարբառով առաջի հրեշտակացն.

Յիշեցէք ամենեքեան զհարսն զառաջինս, որ յառաջքան զծագումն որդւոյն Աստուծոյ յիւրաքանչիւր ժամանակս։ Հանգի իբրեւ մերժեաց և ընկէց զմեզ չարն յաստուածային տեղւոյն, գտաք մեք անկեալք ընդ անողորմ դատաստանաւք ըստ մեղացն յանցաւորութեան, որ 'ի կամն ազատութեան մերոյ գործեցաք զանարժանս, և զարարչական զօրութիւնն շարժեցաք 'ի վերայ մեր 'ի ցասումն բարկութեան, և զողորմած դատաւորն յուսկեցաք վրէժ առնուլ անաչառութեամբ յարարածոյս. մինչեւ հրաման տուեալ երկնային ծովուն հեղուլ 'ի վերայ ցամաքիս, և հաստատուն յատակք երկրիս ծակոտեալ՝ ընդդէմ զհակառակն գործեցին։ Վերինք և ներքինք եղեն մեզ գործիք տանջանաց՝ առանց բարեխօսի վրէժ առնուլ յանցանաց մերոց։

Պարէն արդարն Լոյ միայն գտաւ կատարեալ յազգի մարդկութեանս, որ ցածոյց զսրտմտութիւն բարկութեան տերունեան ցասմանն, և եղեւ սկիզբն առաջարկութեան առ աՀուն բազմութեան մարդկային ազգիս։ Դարձեալ և Աբրահամ 'ի փորձութեանն իւ-

րում գտաւ առաքինի, և զընկալեալ պարգեւն յԱ-
ստուծոյ՝ ինքեան ձեռօք փոխ անդրէն նմին մատուցանէր,
վասն այսորիկ և յառակս ընկալաւ զնա Աստուած. զի
'ի նմա տպաւորեալ տեսանէր զանսրեւոյթ գալուստ
որդւոյն Աստուծոյ, և զըմբռնումն անբմբռնելւոյն և
զբնումն անմահին, որ իւրով մահուամբն խափանեաց
զիշխանութիւն մահու։ Այլ եթէ մահուամբ մահ մե-
ռանի, մի երկիցուք մահակից լինել Արիստոսի. զի
ընդ որում մեք մեռանիմք, ընդ նմին և կենդանանամք։

Յիշեցէք, առաքինիք, զմեծն Մովսէս, որ մինչ չեւ
հասեալ էր յարութեան հասակն՝ խորհուրդ սուրբ նա-
հատակութեանն 'ի տիս տղայութեանն երեւէր նմա.
և տուն թագաւորին եգիպտացւոց 'ի ծառայութիւն
մտանէր նմա, և ակամայ դայեկութեամբ սնուցանէր
զնա. և 'ի ժամ փրկելոյ զժողովուրդն 'ի նեղութենէն,
միջնորդ եղեւ երկնի և երկրի, միանգամայն և աստուած
անուանեցաւ 'ի վերայ եգիպտացւոցն։ Վանգի ուր զը-
տաւ սուրբ խորհուրդն զօրացեալ, անձամբ իւրով վրէժ
առնոյր յեգիպտացւոցն. իսկ ուր աստուածային յայտ-
նութիւնն 'ի վերայ նորա լինէր՝ 'ի ձեռն գաւազանին
գործէր զմեծամեծ աքանչելիսն։ Այլ վասն սուրբ նա-
խանձուն զոր ունէր՝ եհար զեգիպտացին և ընդաւա-
զեաց. վասն որոյ զմեծ անուն դնէր նմա, և առաջնորդ
ժողովրդեանն զնա կացուցանէր։ Այլ բազում այն է,
որ հեղմամբ արեամբն արդարացաւ, և անուանեցաւ
մեծ քան զամենայն մարդարէս. ոչ միայն զարտաքին
թշնամիսն կոտորելով, այլ զազգատոհմսն, որ փոխա-
նակեցին զԱստուած ընդ որթուն յանապատին։

Այլ եթէ նա 'ի հեռուստ այնպիսի վրէժ խնդրէր
գաղտեան որդւոյն Աստուծոյ, մեք որ ակամատեաք ե-
զաք, և մեծամեծ վայելեցաք յերկնաւոր պարգեւսն
շնորհաց նորա՝ եւս առաւել պարտիմք վրէժխնդիր լի-
նել մատակայ ՀՇմարտութեանս։ Որ եդ մահուամբ զան-
ձին իւր 'ի վերայ մեղաց մերոց և արդարացոյց զմեզ
յանհնարին դատապարտութենէն, դիցուք և մեք զան-
ձինս մեր մահուամբ 'ի վերայ անմահ զօրութեանն, զի
մի նուազք քան զվրէժխնդիրսն գտանիցիմք։

Յիշեցէք զմեծ քահանայն Փենեհէս, որ սպանմամբ
եբարձ զպղծութիւնն 'ի ժամ սատերազմին, և յաղ-

գէ յաղգ երդմամբ հաստատեաց զքահանայութիւնն։ Մի մոռանայք և զսուրբ մարգարէն զԻսայիաս, որ ոչ կարէր հանդարտել հայել՝ի կռապաշտութիւնն Բաբելու. և արդար նախանձուն իւրոյ զուիթ հարիւրսն ինքեան ձեռօք սատակեաց, և զերկուս յսուտսն անշէջ հրոյն մատուցանէր լուցկիս. և զաստուածային վրէժն ինդրելով՝ անբմբռնելի և ահագին կառաքն յերկրէ՝ի յերկինս վերացաւ։ Դուք՝ եւս մասին մեծի վիճակի հասեալ էք. զի ոչ եւս կառք առաքին ձեզ՝ի վերացումն, այլ ինքնին Տէրն կառաց և երիւարաց հզօր զօրութեամբ և սրբովք հրեշտակօք ընդ առաջ եկեալ՝ ձեզ իւրաքանչիւր թեւս բուսուցանէ, զի նորա ուղեկիցք լինիցիք և նմին քաղաքակիցք։

Եւ այլ զինչ եւս երկրորդեցիս առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ, զի քան զիս տեղեկագոյնք և հըմուտք էք սուրբ կտակարանացն։ Դաւիթ՝ի մանկութեան ժամանակին քարիւ կործանեաց զմեծ բլուրն մեղէն, և ոչ ինչ զանգիտեաց յահագին սրոյ հսկային. ցրուեաց զգունդս այլազգեացն, և ապրեցոյց զզօրսն՝ի մահուանէ, և զժողովուրդն՝ի գերութենէ. եղեւ անդրանիկ թագաւորացն Իսրայելի, և անուանեցաւ հայր սրդուոյն Աստուծոյ։ Եւ անուանեցաւ առ՝ի պէտս ժամանակին, և դուք Աշմարտիւ ծնեալք՝ի սուրբ Հոգւոյն որդիք էք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի։ Մի՞ոք զձեր բաժինն՝ի ձէնջ հատանիցէ, և զձեզ օտարախորթ արարեալ՝ տարաբաժին հանիցէ։

Յիշեցէք զամենայն զօրավարսն Իսրայելի զառաջինսն, զՅեշուն, զԳեդեոնն, զՅեփթային և զայլսն ամենայն. որք Աշմարիտ հաւատովք էին, հարին կոտրեցին զզօրսն հեթանոսաց, և սրբեցին զերկիրն՝ի պիղծ կռապաշտութենէն։ Եւ վասն հաստատուն արդարագործութեանն, որ ոչ ինչ երկմտեցին՝ի խորհուրդս իւրեանց, արեգակն և լուսինն առանց ականջաց լուան և կատարեցին զբան հրամանի նոցա. ծով և գետք ճանապարհ գործեցին առաջի նոցա ըստ ոչ սովորութեան. և բարձրացեալ պարիսպք քաղաքին ձայնիւ լոկով անկեալ կործանեցան։ Եւ այլքն ամենայն՝ որ ըստ հաւատոյ քաջութիւնս կատարեցին՝ի դարս իւրաքանչիւր, գովեցան՝ի մարդկանէ և արդարացան յԱստուծոյ։

Digitized by Google

Աստուածն նոյն Տէր է որ 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր և առ յապա, և յաւիտենից յաւիտեանս, և անդր քան զամենայն յաւիտեան։ Ոչ նորոգի, զի ոչ հնանայ. ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ. ոչ փոխի անյեղյեղուկ բնութիւնն Աստուծոյ. որպէս և ինքն իսկ ասէ բերանով սուրբ մարգարէին. Այս եմ, ես եմ, 'ի սկզբանէ նոյն մինչեւ յաւիտեանս. ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ զբօշելոց։

Այս գիտելով, եղբարք, մի թուլութեամբ քանի՛ցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակարութեամբ յարձակեսցուք 'ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ գան 'ի վերայ մեր։ Որ յոյսն մեզ կրկին երեւի. եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան։ Յիշեսցուք զբանն Աղաքելոյ, որ ասէ, թէ փոխանակ ուրախութեան՝ որ նմա առաջի կայր, յանձն էառ զհամբերութիւն մահու, և մահու խաչի. վասն այսորիկ և Աստուած զնա առաւել բարձրացոյց, և ետ նմա անուն՝ որ 'ի վերոյ է քան զամենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։

Այս քանզի որ ճշմարտութեամբ միայեալ է ընդ որդւոյն Աստուծոյ, հոգւոյն աչքք տեսանէ զանեղեւոյթ յստակ լոյսն ճառագայթից իմաստալի սրեգականն, որ յամենայն ժամ և յամենայն օր գեր 'ի վերոյ ծագեալ երեւի ամենեցուն, և սրբատեսիլ և սրբահայեացս անպղտոր յստակութեամբ ձգտեցուցանէ զհայեցուածս, և թափանցանց եղեալ ընդ երկինս՝ յանմատոյց տեսիլն մերձեցուցանէ, և կորովութեամբ կշռէ զերկրպագութիւն զերից հատուածոցն միաւոր զօրութեանն։ Այս արդ որ ընդ Աստուծոյ աստիճանն ոտնփոխ եղեալ իցէն, և բարձրութեամբ յարքունիսն հասեալ, և զամենայն մեծութիւն բովանդակ տեսեալ, նա միայն է՝ որ ժառանգէ զանանց ուրախութիւնն և զանտրտմանկան միխթարութիւնն։

Այ, տեարք իմ պատուականք, յետ այսչափ 'ի բարձունս վերանալոյ, այսրէն յերկիր անկեալ թաւալիցիմք, այլ տեղւոյ առեալ անդրէն 'ի բարձրութեանն հաստատեսցուք։ Զի՞ պէտ և հայեսցուք 'ի ստորին կողմ

երկրիս, տեսանեմք զսա լի ամենայն ապականութեամբ և անսուրբ պղծութեամբ։ Զանգի զինչ աղէտք տա-
ղակուսի են, որ ոչ գործին յերկրայինս ախտաբերս. թշուառութիւնք աղքատաց և անթիւ չարչարանք նա-
ցուն, աղցաւոր ծանրութիւնք հարկահանաց, զզուանք և կռփանք 'ի բռնաւոր ընկերակցաց, քաղց և ծարաւ
ըստ կարօտութեան բնութեանս։ Առնամանիք ձմե-
ռայնոյ և խորշակք ամարայնոյ, հիւանդութիւնք տա-
ղաժամք և ախտք մահաբերք հանապազ տանջեն զմարդիկ. երկիւղ արտաքնոց և արհաւիրք 'ի ներքնոց ան-
դադար 'ի վերայ հասանեն. ցանկան մահու յառաջ
քան զժամանակն, և ոչ գտանեն. և բազումք են՝ որ փորեն և ինդրեն, և խնդալից լինին յորժամ գտանեն։
Իսկ որ թուին մեզ, եթէ յաջողեալք են 'ի մեծութեան և փափկանան ուրախութեամբք 'ի պակասելի կեանս,
մեծամտեալ հպարտանան յանցաւոր մասունս աշխարհիս, նոքա են՝ որ կուրացեալ են 'ի ճշմարիտ կենացն։
Իսկ արդ զինչ այն չարիք իցեն՝ որ 'ի նոսա ոչ գործին. ընդ մեծութիւնն խառնեալ է յափշտակութիւն
ընչից աղքատաց, ընդ սուրբ ամուսնութիւնն՝ գէՀ սրդ-
ծութիւն։ Յորս վայելեն ընտրութեամբ, նոցուն երկրպագութիւն իբրեւ Աստուծոյ մատուցանեն, մոլորեալք 'ի ճշմարիտ կենացն։

Ոչ ահա աշխարհս ամենայն արարչին բոլորեցուն է գոյացութիւն. և զոր նոքայն պաշտեն և պատուեն՝ ապաքէն 'ի սմին նիւթոյ է մասն. իսկ արդ մասունքն մասանց կան 'ի ծառայութիւն։ Զի եթէ մի մասն աշխարհիս ապականացու է, հարկ է թէ և ամենայն մասունքն ընդ նմին ապականին։ Զա և 'ի մասանց անտի՝ պարտ է թէ և ընտրութիւնք երեւեսցին. իսկ արդ որ լաւ է՝ յայտնի է ամենեցուն, և որ գիտէն իմանալ՝ նա է ընտիր 'ի մասանցն։ Զպա թէ այդ այդպէս է, քան զամենայն պաշտամունս հեթանոսաց, որում երկիր պագանեն, երկրպագուքն են առաւելեալք քան զանբան տարերսն, որոց չարաչար կան 'ի ծառայութեան. և զ[ն Աստուած՝ որ 'ի մարդ կերպարանեցաւ՝ չպաշտեն՝ այլ արարածոց տանին երկրպագութիւն. որոց մեղաց չիք քաւութիւն յարդար ատենին։

Զ)ն անդր 'ի բաց թողցուք զքաւարարային խորհուրդս

Digitized by Google

մոլորելոյն. եղկելիս և ողորմելիս քան զամենայն մարդիկ զնասա հանարեսցուք. մանաւանդ զի կամաք են կուրացեալք և ոչ 'ի հարկէ, և ոչ երբէք գտցեն զՀանապարհն Ճշմարտութեան։ Այլ մեր բացահայեաց աչօք տեսեալ զլոյսն երկնաւոր, մի պատահեսցէ մեզ խաւարն արտաքին։ Օ՜ի ոչք էին 'ի խաւարի, եկն առ նոսա լոյսն Ճշմարիտ, կուրացեալք վերիպեցան 'ի կենացն. իսկ ոչք ընկալայքդ հաւատովք՝ որդիք էք և ոչ օտարախորթք, սիրելիք և ոչ թշնամիք, բաժանարդք և ժառանգարդք վերին իմանալի քաղաքին։

Ընդ է աւաջնորդ փրկութեան մերոյ. ասատ քաջութեամբ նահատակեցաւ, և զնոյն ուսոյց ամենայն նիզակակից գործակցաց իւրոց Քրիստոսոյ. յորմէ և դուք էք այսօր կրկին երեւեալք, օրհնեալք հաւատովք ընդդէմ անեղեւոյթ թշնամւոյն, պատենազէն զբահիւք դէմ ընդ դէմ ընկերակից սատանայական գործոյն։ Այս եթէ այսպէս և եթէ այնպէս, զերկաբեան կալմանան 'ի պարտութիւն մնանէք, որպէս և Տէրն ինքնին ասաց. աշխարհի թուեցաւ թէ մեռաւ, այլ նա յայնժամ տարաւ զկատարեալ նահատակ առաքինութիւնն. զախոյեանն ընկէց, զպատերազմն եհար, զթշնամին յրուեաց, զաւարն ժողովեաց, զգերին դարձոյց, զպարգեւսն բաշխեաց ամենայն սիրելեաց իւրոց 'ի ձեռն իւրաքանչիւր առաքինութեանց։

Գիտէք դուք ամենեքեան, յառաջ ժամանակաւ հասեալ ձեր 'ի գործ պատերազմի, թէպէտ և էր ձեր սովորութիւն՝ քահանայից հանապազորդել 'ի մէջ բանակիս, 'ի ժամ Ճակատուցն յանձնեալ ձեզ 'ի նոցանէ աղօթիւք՝ յամուր տեղւոջ ուրեք թաղուիք զնոսա. իսկ այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբր վառեալք զինու և պատրաստեալք 'ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամին Ճշմարտութեան։ Այս եթէ մեռանել եւս հասանէ 'ի նոցանէ, սակայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց. քանզի լաւագոյն զմեռանելն կամին քան զմեռուցանելն։ Որպէս զի կրկին աչս ստացեալ ունիցին։ Հաւատոց աչօք զքարկոծանս մարգարէիցն տեսանեն, և մարմնոյ աչօք զքաջութիւն ձերոյ նահատակութեանդ։

Պանաւանդ թէ 'ի ձեզ զերկոսեան իսկ տեսանեմք. քանզի և դուք իսկ տեսանիք զչարչարանս սուրբ Աստուածածնայն և զսպանմունս զամենայն սուրբ մարտիրոսացն, որոց մահուամբն հաստատեցաւ սուրբ եկեղեցի, և հեղումն արեան իւրեանց եղեւ 'ի պարծանս վերնոցն և ներքնոցն։ Արդ մինչեւ 'ի գալուստն երկրորդ՝ նոյն նա հատակութիւն կատարի չարչարանաց։

Յայս վայր խօսեցաւ 'ի գիշերին յայնմիկ սուրբ երէցն Յովհան, և փառաւորելով կատարեաց զՄէնն ասելով։ Եւ սեղան ուղղեալ՝ զամենասուրբ խորհուրդն կատարեցին. ուղղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երբախայ 'ի բազմութեան զօրուն՝ զգիշերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւօտս սուրբ օրինացն հաղորդեցան, և այնպէս լուսազգեստ եղեն՝ որպէս 'ի տերունական մեծի սուրբ զատկին։ Եւ մեծաւ զուարճութեամբ և յոյժ խնդութեամբ աղաղակեաց ամենայն բազմութիւն զօրացն և ասեն. Հաւասարեսցէ մահ մեր՝ ընդ մահու արդարոցն, և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ մարտիրոսացն. և հաճեսցի Աստուած կամաւոր պատարագաւս, և մի տացէ զեկեղեցի իւր 'ի ձեռս հեթանոսաց։

Digitized by Google

ՎԵՑԵՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԸՆԴԴԷՄ ԿԱՂ ՀԱՑՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Յետ այսորիկ իբրեւ ետես զօրավար գնդին Պարսից, եթէ հատան պատգամաւորքն 'ի միջոյ՝ խաբել զնոսա, և բարձաւ յոյս ակնկալութեան իւրոյ ցրուել զնոսա յանքակ միաբանութենէն, յայնմ ժամանակի յառաջ կոչէր զանօրէնն Ասսակ և զամենայն ուրացեալ իշխանսն, որ էին ընդ նմա յաշխարհէն Հայոց. հարցանէր զնոսա, և ուսանէր 'ի նոցանէ զհնարագիտութիւն յաղթութեան։ Այս իբրեւ ուսեալ տեղեկացաւ զառն առն իւրաքանչիւր քաջութիւնս, կոչէր և ըզբազում 'ի զօրագլխացն՝ որ էին ընդ իւրով ձեռամբ, և հրամայէր ածել զառաջեաւ զերամակս փղացն. և 'ի գունդս գունդս զգազանսն բաժանէր, և առ մի մի փիղ երեք հազար սպառազէնք. թող զայլ զօրսն ամենայն։

Լսէր և ընդ մեծամեծսն արքունի հրամանաւ և ասէր. Յիշեցէք այր իւրաքանչիւր զպատուէր մեծ թագաւորին, և դիք առաջի զանուն քաջութեան. ընտրեցէք զմահ քան զկեանս վատութեամբ։ Մի մոռանայք զիւղն և զպսակն և զուռան և զառատաձեռն պարգեւսն, որ չնորհի ձեզ յարքունուստ։ Տեարք էք իւրաքանչիւր գաւառաց, և ունիք իշխանութիւն բազում. դուք ինքնին գիտէք զքաջութիւն աշխարհին Հայոց և զառն առն իւրաքանչիւր նահատակութիւն արութեան. գուցէ ձեր 'ի պարտութիւն մատնեալ, կենդանեաւ վրիպիցէք 'ի մեծ կենսացն զոր ունիք։ Յիշեցէք զկին և զորդիս ձեր, յիշեցէք զսիրելի բարեկամն ձեր. գուցէ ոտնահար լինիցիք յարտաքին թշնամեացն և ողբակիցք 'ի նեղչին սիրելեացն։

Այս և յուշ եւս առնէր նոցա զբազում ընկերակիցս

Digitized by Google

փախուցեալս, որք թէպէտ և 'ի պատերազմէն ապրեցան, սրով ընկալան զվճիռ մահուն իւրեանց. ուստերք և դստերք և ամենայն ընտանիք իւրեանց յանաշխարհիկս գրեցան, և ամենայն հայրենի գաւառք հատան 'ի նոցանէ։

Այս ասէր, և առաւել քան զսոյն սաստկացուցանէր զհրամանն արքունի։ Կարգէր կազմէր զզօրսն ամենայն, և տարածանէր երկայնէր զՀակատն յերկայնութիւն դաշտին մեծի։ Յու իւրաքանչիւր գազանացն յաջմէ և յահեկէ զերեքհազարեան սպառազէնսն պատրաստէր, և զընտիր ընտիր նահատակայն շուրջ զիւրեաւ գումարէր. այսպէս ամրացուցանէր զգունդն Պատեան իբրեւ զաշտարակ մի հզօր և կամ իբրեւ զաւերդ մի անմատոյց։ Հրանս բաշխէր, դրօշս արձակէր, և 'ի ձայն մեծի փողոյն պատրաստ հրամայէր լինել։ Իսկ ըզգունդն զապարհայիկ, և զԿատշաց և զՀնոցաց և զԿեղաց, և զայլս եւս ամենայն զընտիր ընտիր զօրուն մարդիկ 'ի մի վայր ժողովէր, և հրաման պատուիրանի տայր ընդ աջմէ կողմանէ գնդին իւրոյ պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին։

Իսկ արին Պարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր, և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր։ Զգունդն առաջին տայր 'ի ձեռն իշխանին արծրունեաց, և նիզակակից նմա զմեծ իշխանն Պոկաց. և զայլն ամենայն նախարարեան համահարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին թեւս աստի և անտի կազմէր նոցա։ Յու զգունդն երկրորդ տայր 'ի ձեռն Խորենայ խորխոռունեաց, և նիզակակից նմա զընծայինն և զԿերսեհ քաջքերունի։ Յու զգունդն երրորդ մատուցանէր 'ի ձեռն Մամիկոնեայ վանանդեցւոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ գնթունի, և զաւգումն 'ի քաջ արանց աստի և անտի 'ի թեւս նոցա։ Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայր իւր զՀամազասպեան։ Կարգէր և կազմէր զՀակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին գէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն։

Յու իբրեւ այսպէս պատրաստեցան երկոքեան կողմանքն, լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ

զայրանային, և գազանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան. և ամբոխ աղաղակին յերկոցունց կողմանցն՝ իբրեւ 'ի մէջ ամպոց շփոթելոց՝ ձայնմունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և 'ի փայլուն պատենազէն վառելոցն իբրեւ նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Այս և 'ի բազում սուսերացն շողալ, և 'ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրեւ յերկնաւոր ահագին հրաձգութիւնք եռային։ Բանզի ոչ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։

Ընդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ 'ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին։ Այս խումբ ապրարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն 'ի մէջ փակէին, և զանգիտեալ գունդն Պարսից 'ի դժուարութենէ գետոյն՝ զտեղեաւն զեռալ սկսան։ Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, ձի 'ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ։ Աստուկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիահաւաղ խաղային։

Յայնմ մեծ տագնապի 'ի վեր հայեցաւ քաջն Արդան, և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր 'ի տեղին, և զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգաղանաքն, և շրջան առեալ կոտորէր մինչեւ 'ի նոյն տեղի։ Այս այնպէս շտապ տագնապի 'ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Ատեան քակտեալ բաժանեցան 'ի մեծամեր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ 'ի փախուստ դառնային։

Այս դէտ ակն 'ի վեր համբառնայր Ուշկան՝ Լուսալաւուրտն, քակեալ զմանս տեսանէր 'ի գնդէն Հայոց, և զկնի մնացեալ 'ի հովիտս լերանցն։ Ամն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զգօրս

Digitized by Google

Բրեայ, որք զտեղն առեալ կացին ընդդէմ գնդին Վարդանայ։ Եւ անդէն 'ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ Թանձր անկեալ դիականց իբրեւ զքարակոյտս դերբեկաց երեւէին։

Այն իբրեւ ետես Ռուշկան Իսալաւուրտն, մնայր գազանացն Բրտաշրի, որ 'ի վերայ գազանացն նստէր 'ի բարձր դիտանոցին և կամ իբրեւ յամուր քաղաքի, և 'ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդն ստիպէր, և յառաջամարտիկ զօրքն զնա 'ի մէջ փակէր։ Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցաքն ոչ սակաւ նախճիրս 'ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղեւ առնուլ զկատարեալ նահատակութիւնն։

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատեր. բազմաց օրհասք մահու հասանէին, մանաւանդ 'ի Թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրեւ զփայտահարս մայրաւորաց։ Ընդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ Հիմարտիւ 'ի վերայ սուրբ մարմնոց երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոցն։ Եւ որ մնացեալքն էին, վանեալք և ցրուեալք լինէին 'ի լեառնադաշտս և յամուրս ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւսանգամ զմիմեանս սատակէին։ Եւ մինչեւ 'ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն։

Եւ քանզի գալնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատայն, զթագուստ լքելոցն, զսրտաթափումն զանարի արանցն, զՀչիւն կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս եղեալ երկոքին կողմանքն 'ի պարտութիւն մատնեցան։

Այլ քանզի անկեալ էր զօրավարն Հայոց 'ի մեծ պատերազմին, ոչ ոք գոյր այնուհետեւ 'ի մէջ դլխա-

Digitized by Google

ւոր, յոր յեցեալ Ժողովէին գունդն մնացելոցն։ Ամ-
պէտ և բազում այն էր՝ որ ապրեցան, քան թէ որ մե-
ռանն, սակայն ցանեալ ցրուեցան. և հասեալ անկա-
նէին 'ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնա-
նային 'ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ
առնուլ իսկ ոք կարէր։

Եւ այս անուանք են քաջ նահատակացն՝ որ անդէն
'ի տեղւոջն կատարեցան։ Յազգէն մամիկոնէից քաջն
Վարդան հարիւր երեսուն և երեք արամբք. յազգէն
խորխոռունեաց Խորէնն կորովի ինն եւտասն արամբք.
յազգէն պալունեաց արին Ներսակ յիսուն և եօթն ա-
րամբք. յազգէն գնթունեաց զարմանալին Ցաշատ ին-
նեւտասն արամբք. յազգէն դիմաքսենից իմաստունն
Հմայեակ քսան և երկու արամբք. յազգէն քաջաբ-
ունեաց հրաշակերտն Ներսեհ եօթն արամբք. յազ-
գէն գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք. յազ-
գէն ընծայնոց արդարն Ներսէն եօթն արամբք. յազգէն
Վրուանձտայ յառաջադէմն Դարեգին երկու հարազա-
տաքն և ութուտասն արամբք։

Ներս երկերիւր ութսուն և եօթն նահատակք, ընդ
ինն մեծամեծ նախարարսն անդէն 'ի տեղւոջն կատա-
րեցան։ Եւ յալքունի տանէ և 'ի տանէ արծրունեաց
և յիւրաքանչիւր յայլոց նախարարացն տանէ, թող
զայս երկերիւր ութսուն և եօթնս, այլ եւս եօթն հա-
րիւր և քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր 'ի
դպրութիւն կենաց գրեցին 'ի նմին աւուր 'ի մեծի պա-
տերազմին։ Եւ միահամուռ լինի ամենայն՝ հազար և
երեսուն և վեց այր։

Իսկ 'ի կողմանէ ուրացելոցն անկանէր յայնմ աւուր
երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր։ Ինն
այր 'ի նոցանէ՝ 'ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ
և կարի յոյժ 'ի խոր խոցեցաւ Մուշկանն 'Ամատա-
ւուրտ։ Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հա-
րուածսն եօթնպատիկ զիւրոյ զնդին քան զՀայոցն,
բեկաւ անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ, և ոչ հանդար-
տէր կալ 'ի վերայ խորհրդոց մնացն. քանզի ոչ որպէս
կարծէր զպատերազմն՝ կատարեցաւ։ Մանաւանդ իբ-
րեւ հայէր տեսանէր զբազմութիւն անկելոց իւրոյ կող-
մանն, և թիւ համարոյ եւս առնէր, և իբրեւ այնչափ

Digitized by Google

յոլով գտանէր զիւր անկեալսն քան զՀայոց զնդին, եւս առաւել վասն երեւելի արանցն, զորս յականէ յանուանէ գիտէր Թագաւորն, 'ի մեծ տապնապի լինէր այրն յանձն իւր։ Արդարութեամբ զիրսն գրել և ցուցանել 'ի Թագաւորէն երկնչէր, դարձեալ և Թաքուցանել եւս ոչ կարէր, քանզի ոչ ծածկէր այնպիսի մեծ կռիւ։

Եւ մինչդեռ յայսմ մտաց խորհրդի էր յանձն իւր և նեղէր 'ի միտս իւր, ուրացեալն Վասակ որ զանձն իւր 'ի մէջ գազանացն Թաքուցեալ ապրեցուցանէր, մըխիթար մատուցանէր մտացն լքելոց. և ուսուցանէր նմա հնարս նենգութեամբ, Թէ դրպէս կարասցէ մարտնչել ընդ ամուրսն խաբէութեամբ։ Արդմունս կնքէր արքունի հրամանաւ և վկայութեամբ անձին իւրոյ և խաբեբայ երիցամբքն, որ ընդ նմայն էին. պատգամաւորս առնէր զնոսա, և երեւեցուցանէր զԹողութիւն ապստամբութեանն առ 'ի շինութիւն եկեղեցւոյ շնորհել անդրէն, և զամենայն կարգս անդրէն յարմարել ըստ առաջին սովորութեանն։ Դէպէտ հրամանն Թագաւորին հաստատութեամբ էր տուեալ, վասն զի յոյժ բեկաւ զօրութիւն նորա, որպէս զի երկոքին կողմանք նորա հարան, սակայն զօրքն Հայոց վասն նենգութեանն Վասակայ, որ բազում անգամ հասեալ էին 'ի վերայ ստութեան նորա, վասն այնորիկ և հրամանի Թագաւորին վաղվաղակի ոչ կարէին հաւատալ։

Digitized by Google

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՑԵՂԱՆԱԿ

ՑՈՐՈՒՄ ՆԿԱՐԱԳՐԻ ԴԱՐՁԵԱԼ ԱՌԱՔԻԼՈՒԹԻՒՆՆ ՀԱՑՈՑ ԵՒ ԶԱՐԱԳՈՑՆ ԵՒՍ ԵՐԵՒԻ ԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆ ՎԱՍԱԿԱՑ

Լ՚ՐԴ դարձեալ յայնժամ դրդեաց զՍ՚ուշկան՝ Լիւսալաւուրտ և զամենայն աւագանին Լ՚րեաց, առեալ զզօրն՝ հասանէր ՚ի վերայ ամրոցին, յոր անկեալ էին գունդ մի ՚ի զօրացն Հայոց հանդերձ սուրբ քահանայիւքն, և մնրտ եղեալ կռուէին շուրջ զբերդաւն։ Լ՚ւ իբրեւ ոչ ՚ինչ կարացին ազդել նոցա, դարձեալ յերդմունս ապաստան եղեալ, զի ուխտիւ ի՚ջուսցեն զնոսա առանց դաւ ինչ գործելոյ, և երկիցս և երիցս անգամ ետուն տանել զաւետարանն։ Թէպէտ և քահանայքն յանձն առնուին զի՚ջանելն կալ առաջի, բազումք ՚ի զօրականացն ոչ կարէին հաւատալ սուտ ուխտին Պասակայ. քանզի սկսաւ երթալ ՍՍ՚ուշկան՝ Լիւսալաւուրտ զՀետ չար խրատուն Պասակայ։

Լ՚ւ ոմն ՚ի քաջ զօրականէն՝ Հայոց, որ անկեալ էր ՚ի բերդն փախստեամբ, Լ՚ակ անուն, ելեալ ՚ի պարիսպն Թշնամանս դնէր անօրինին, և յիշեցուցանէր առաջի Պարսից զօրագլխին զամենայն չարիսն, զոր անցուցեալ էր նորա ընդ աշխարհն Հայոց։ Յորոց բազում իսկ լուեալ՝ արդարացուցանէին զամբաստանութիւնն, ոչ միայն ՚ի Հայոց կողմանէն, այլ եւս առաւել զօրքն Պարսից։ Պոյն այրս այս ՚ի նմին գիշերի եօթն հարիւր արամբք եկ գնաց ՚ի բերդէ անտի, և ոչ կարացին ձեռն արկանել ՚ի նա։

Իսկ որ ՚ի ներքս յամրին մնացին, Թէպէտ և գիտէին Ճշմարտիւ զխաբեբայ երդմունս նոցա, ոչ ունէին համբաւ ՚ի ներքս։ Իբրեւ ոչ կամաւ իջեալ կացին առաջի, հրամայեաց ապանանել ՚ի նոցանէ երկերիւր և երեքտասան այր։ Լ՚ղաղակեցին ամենեքեան և ասեն.

Լոհանամք զքէն Տէր Աստուած մեր. մինչդեռ շէն են եկեղեցիք և անքակ տաճարք վկայից և միաբան սուրբ ուխտ եկեղեցւոյ առաքինացեալ, արժանի արարեր ըզմեզ կոչմանդ երկնաւորի։ Հաւասարեսցէ մահս մեր ընդ մահ քաջ նահատակացն, և խառնեսցի արիւնս մեր ընդ արիւն անկեալ վիրաւորացն. և հաճեսցի Տէր ընդ եկեղեցիս իւր՝ բազմութեամբ կամաւոր զուարակացս, որ ելանեն 'ի վերայ սուրբ սեղանոյս։ Օ այս ասելով 'ի տեղւոջն կատարեցան երկերիւրքն և երեքտասանքն։

Իսկ սուրբ քահանայքն՝ որ անդ դիպեցան յամուրսն, երանելիքս այս Յովսէփ և Ղեւոնդ բազում ընկերակցօքն իւրեանց, մատուցին և նոքա զպարանոցս իւրեանց առաջի սրոյ դահճապետին, ասելով զնոյն բանս՝ զոր խօսեցան երկերիւրքն։ Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելեացն ըստ մարմնաւոր կենացս, այլ իմաստութեամբ հնարս խնդրէին լինել փոխանակ ամենայն աշխարհին շինութեան։ Ա՝ ան որոյ և բողոք 'ի դուռն կարդային, և զամենայն ամբաստանութիւն արկանէին զանօրէնն զԱ՝ ասակաւ։ Օ այս իբրեւ լուաւ Ա՝ ուշկան Լիւսալաւուրտ, ոչ իշխեաց 'ի նոսա ձեռն արկանել մահուամբ. այլ զՅովսէփ և զՂ՝ եւոնդ գան հարեալ, հրամայեցին պահել զգուշութեամբ. քանզի բողոք 'ի դուռն կարդացին։ Իսկ զայլ քահանայսն արձակեցին յիւրաքանչիւր տեղիս, հրաման տուեալ վասն շինութեան և խաղաղութեան աշխարհին։

Այլ մարդիկն Հայոց, որ հասեալ էին 'ի վերայ յեղյեղուկ հրամանաց թագաւորին և ուրացեալ չարիմացին Ա՝ ասակայ, ոչ ինչ հաւատային սուտ թողութեանն, այլ քաջալերէին զմիմեանս և ասէին. Օ՞ի պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս, և կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոյ սիրելեացն։ Օ՞ի եթէ քաջ նահատակքն մեր անկան 'ի մեծ պատերազմին, և բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաժոյժ 'ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինքն եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարքն մեր հասին յանարգութիւն թշուառութեան, լքին զիւրաքանչիւր իշխանութիւն և են 'ի հալածանս նեղութեան, որ և ամենայն փափկութիւնն Հայոց եհաս 'ի վիշտս վտանգի և յանհնարին ապականութիւն, ոչ ան-

Digitized by Google

սամք խաբեբայ հրամանացդ և անկանիմք 'ի ձեռս անօրէն իշխանացդ։

Զողին այնու հետեւ իւրաքանչիւր զգեօղս և զաւանս և զագարակս. երկին հարսունք յառաջաստիւ և փեսայք 'ի սենեկաց, անկան ծերք յաթոռոց և տղայք 'ի գրկաց. երթային երիտասարդք և կուսանք և ամենայն բազմութիւն արանց և կանանց, հասեալ ունէին զամուրս անապատին և զանխաբ տեղիս բազում լերանց։ Զաւ համարէին զգաղանաբար բնակութիւնն ապուռածպաշտութեամբ 'ի քարանձաւս կելոյ, քան ուրացութեամբ փափկանալ յիւրաքանչիւր շինուածս։ Դրանց տրանջելոյ համբերէին խոտարուտ կերակրոյն, և ոչ յիշէին զսովորական խորտիկսն։ Հանդերեալ էին նոցա դարանափորքն իբրեւ զյարկս բարձր շինուածոց, և գետանկողինքն իբրեւ զնկարեալ պատշկանս։

Աղմնաք էին նոցա միմանք երգոց, և ընթերցուածք սուրբ գրոց կատարեալ ուրախութիւնք։ Մենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան, և ոգիքնոցունց՝ պատարագ ընդունելի։ Դանդի ոչ ոք 'ի նոցանէ ողբայր յուսահատութեամբ զանկեալսն 'ի սրոյ, և ոչ ոք հեծեծելով հառաչէր 'ի վերայ մերձաւոր սիրելեաց իւրոց։ Միտքութեամբ ընկալան զյափշտակութիւն ընչից բազմաց, և ոչ յիշէին ամենեւին՝ եթէ եղեալ իցեն նոցա ստացուածք։ Համբերութեամբ ձգնէին և մեծաւ առաքինութեամբ տանէին զքաջ նահատակութիւնն։ Զի եթէ ոչ բացաւ աչօք տեսանէին զյոյսն խնդալոյ, և ոչ կարէին իակ գործել զայնպիսի մեծ առաքինութիւն։

Դանդի բազումք յազգէ 'ի մեծ նախարարացն էին, և եղբարք և որդիք և դուստերք, հանդերձ ամենայն սիրելեօք իւրեանց 'ի մէջ ամրական վայրացն, ոմանք յանլոյս ելեալին Սաղտեաց, և այլ բազումք 'ի կողմանս հարաւոյ՝ յանմատոյց ամուրսն Ցմորեաց, և կէսքն 'ի Թանձրախիտ մայրիսն Դրձախոյ, և այլ ոմանք անդէն 'ի միջոց աշխարհին բռնացան 'ի վերայ բազում ամրոցացն։ Եւ ամենեքին մեծաւ համբերութեամբ տանէին զբազում նեղութիւնն վասն յուսոյն Դստուծոյ. աղաչելով զայս միայն ինդրէին յԴստուծոյ, մի տեսանել նոցա զաւեր սուրբ եկեղեցեաց։

Digitized by Google

Եւ այլ որպէս ցուցաք բազում անգամ զամբարշտին չարութիւն, յորդորէր և ստիպէր զզօրսն Պարսից 'ի մեծաւոր կողմանց աշխարհին, զի հրամանաւ արքունի զօր եկեսցէ յօգնականութիւն նոցա։ Եւ հասեալ բազում այրուձի՝ յաւելոյր 'ի թիւ անկելոցն, և լինէր գունդ բազմութեան իբրեւ զառաջինն։ Եւ յառաջ խաղային 'ի միջոց աշխարհին, մարտ եղեալ կռուէին ընդ մեծ ամուրս Կապոյտ լերինն։ Իսկ որ 'ի ներքսն էին՝ քաջութեամբ մարտուցեալ հարկանէին զբազումս 'ի գնդէն Պարսից, և զմնացեալսն փախստական 'ի բանակն արկանէին։ Իսկ նոքա դարձեալ յողջանս մնացեալ, նուաճել խաբէութեամբ կամէին։

Իբրեւ ոչ ոք հաւատաց իջանել առ նոսա, զի մի մատնեսցին չարաչար 'ի ձեռս թշնամեացն, սակայն վասն երդմանցն հարկ եղեւ քահանայի մի իջանել առ նոսա, որում անունն էր Երշէն։ Խօսէր ընդ նոսա յաղերս ընտանութեամբ, և ցուցանէր զանմեղաս փախուստ անմեղացն. արկանէր գութ առաջի ուրացելոցն Վասակայ, և պաղատելով յիշեցուցանէր նմա զառաջին՝ կարգ ուխտին քրիստոնէութեան, զի թերեւս սակաւիկ մի քաղցրասցի յանհնարին դառնութենէն։ Եւ այլ նա ոչ ինչ լուաւ և անսաց բազում բանիցն նորա, կապեաց և խաղացոյց զերանելին և որք ընդ նմա իջեալ էին։

Մանաւանդ իբրեւ ետես եթէ երթայ զօրավարն զհետ խրատու կամաց նորա, սկսաւ այնուհետեւ 'ի բազում տեղիս արձակել զասպատակաւորն, և զոր արտաքոյ քան զամուրսն գտանէր զբազմութիւն մարդկանն, վարեցին 'ի գերութիւն. և դամբար 'ի ձեռն առեալ հրձիգ առնէին զբազում տեղիս։ Իսկ որք էին յամուրս Ցմորեաց, իբրեւ լուան զայս ամենայն չարիս, զոր գործեցին զօրքն արքունի, ոչ ինչ շահ օգտի համարէին ըզկալն 'ի մէջ ամրականացն։ Քաջութեամբ ելեալ յարձակեցան օգնականութեամբ ամրականացն, և հասեալ 'ի մեծաւոր աշխարհն պարսկաց, յանկնայ կոտորելով՝ նախճիրս արեան գործէին, և զմնացեալսն գերի առեալ տանէին, և անդէն յամուրսն արկանէին, և զշինուածս աշխարհին՝ դամբար 'ի ձեռն առեալ հրոյ ճարակ տային։

Դարձեալ և որք էին 'ի լերինս Խաղտեաց, իբրեւ տեսին եթէ յանդգնաբար զօրքն պարսկաց յաներկիւղս

ինքանէին յամուրս աշխարհին Հայոց, յարձակեցան և նոքա մեծաւ զօրութեամբ 'ի ձորագաւառն Ցայոց։ Եւ գտին անդ գունդ բազում 'ի զօրացն արքունի, որ գերի առնուլ կամէին զամրակաս աշխարհին. դարձեալ և կարծէին եւս եթէ գանձք նախարարացն անդ իցեն, վասն այնորիկ և յանխնայ յուզէին զվայրն։

Եւ զա և տեսին եւս անդ 'ի գեօղս երկուս, զի վեկեղեցիսն այրեցեալ էր. առաւել եւս վասն այնր 'ի նախանձ բրդեցան բարկութեամբ։ Յարձակեցան, հարան 'ի դիմի միմեանց, և կամակարութեամբ յաղթեալ, բեկեալ արկին զզօրութիւն գնդին Պարսից, և կոտորեցին զբազումս 'ի նոցանէ, և զմնացեալսն փախստական հանէին յաշխարհէն։ Եւ յայնչափ յանդուգն յարձակմանէն՝ միայն երանելին Հմայեակ, եղբայր սպարապետին Հայոց Վարդանայ, յանխնայ քաջութեամբ մարտուցեալ՝ կատարեցաւ նահատակութեամբ 'ի վերայ սուրբ ուխտին միաբանութեան։ Եւ այլքն ամենայն ողջանդամ ապրեալք երթային զհետ փախստականին։

Եւ իբրեւ այս այսպէս կատարեցաւ, դադարեցին զօրք Թագաւորին խառնամուխ լինել յամենայն տեղիս անխտրութեամբ, և եւս առաւել ձեռնպահ լինել եկեղեցեայն։ Դարձեալ միւսանգամ անդրէն հարցանել սկսան յարքունիսն։

Զա և որ Վրձախայ մայրիսն անկեալքն էին փախստականք, ոչ ինչ լռեալ դադարեցին խաղաղութեամբ. այլ հանապազ յղէին յաշխարհն Հոնաց, շարժէին և յորդորէին զգունդն Հոնաց, և յիշեցուցանէին նոցա զուխտն՝ զոր եդեալ էր ընդ Հայս և անսուտ երդմամբ հաստատեալ։ Հաճոյ թուէր բազմաց 'ի նոցանէ լսել զբանսն քաղցրութեամբ։ Զա և մեղադիր եւս յոյժ լինէին նոցա, եթէ 'ի կռիւն ընդէր ոչ եկիք պատրաստութեամբ։ Եւ իբրեւ յառաջնումն ինչ ոչ հնարէին զմիմեանս հաւանեցուցանել, առա գունդ բազում գումարէին, և անդէն յարձակեալ հասանէին 'ի սահմանս տերութեանն Պարսից. և զբազում գաւառս հարեալ, բազմագոյն եւս գերի առեալ տանէին յաշխարհն իւրեանց, և յայտնի ցուցանէին թագաւորին զմիաբանութիւն՝ զոր ունէին ընդ գնդին Հայոց։

Իսկ իբրեւ այս ամենայն ազդումն հասանէր առ զո-

բավարն Պարսից, սրտմտեալ զայրանայր. և մեծաւ բարկութեամբ կուտէր զվնասն 'ի վերայ անօրինին Ա ասակայ, իբր թէ նա իցէ սկիզբն և առաջնորդ ամենայն չարեացն, որ գործեցան։ Այս անդէն չու արարեալ գընայր խաղայր հասանէր յաշխարհն Պարսից. գրէր և ցուցանէր յարքունիս զամենայն ստուգութեամբ, և զվնաս գործոյն արկանէր զուրացելոցն։

Իբրեւ լուաւ Թագաւորն զամենայն աւեր աշխարհին, և ստուգեաց զիրս մեծի պատերազմին, բեկանէր անկանէր 'ի մեծ խրոխտալոյն, և լըեալ դադարէր 'ի հանապազորդ և 'ի խաբեբայ խորհրդոցն. յուզէր և քննէր զվրիպումն անհանձար գործոյն, և կամէր տեսանել՝ ասելով. Ո՞ՎՔ իցէ որ զիս ՀՇմարտութեամբ 'ի վերայ իրացդ հասուսցէ։ Իսկ որ էր գիտակ անօրէն գործոյն, անդրէն 'ի դրան արքունի, նոյն հազարապետն Միհրներսեհ, յառաջ մատուցեալ ասէ ցԹագաւորն. Ո՞ՎՅԴ ես ասեմ քեզ, արքայ քաջ. եԹէ կամիս ստուգութեամբ լսել զարդարն, որք գլխաւորք քրիստոնէիցն են 'ի Հայս, տուր կոչել, և գան յօժարութեամբ և ասեն քեզ զամենայն արդարութեամբ։

Յայնժամ զմի ոմն յաւագ նախարարացն, Մորոմիզդ անուն, որոյ իշխանութիւնն իսկ խառն էր ընդ Հայոց աշխարհին և գործակից էր զօրավարին 'ի նմին պատերազմի, գրէր և յանձն առնէր նմա զաշխարհն Հայոց մարզպանութեամբ։ Այս զՄուշկան Գիւսալաւուրտ հանդերձ ամենայն մնացեալ զօրուն գումարէր յաշխարհն Մզուանից և Վինաց և Ղազաց և 'ի ՀեՀմատակաց և 'ի Գաւասպարաց և 'ի Խիբիովան, և յամենայն ամրականն, զորս աւերեալ էր գնդին Հոնաց վասն ուխտին Հայոց։ Որպէս և յոյժ իսկ տրտմեալ էր Թագաւորն, ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօրացն, այլ եւս առաւել ընդ աւերել պահակին՝ զոր 'ի բաղում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել. որ և յայնմ ժամանակի դիւրեաւ առեալ քանդեցաւ, որում և չէր իսկ ակնկալութիւն շինութեան։ Իսկ զԱ ասակ հանդերձ գլխաւոր քրիստոնէիւքն 'ի դուռն հրամայեաց կոչել։

Ընդ եկն եմուտ մարզպանն Մորոմիզդ յաշխարհն Հայոց սիրով խաղաղութեամբ։ Հրամանաւ արքունի

կոչեաց առ ինքն զՍահակ սուրբ եպիսկոպոսն ուրշտու-
նեաց, ուսանել 'ի նմանէ զիրացն ամբաստանութիւն։
Բայց թէպէտ և նորա աւերեալ էր ատրուշան մի, և
բազում չարչարանօք հարեալ էր զպաշտօնեայս կրա-
կին, ոչ ինչ զանգիտեաց գալ յատեան հրապարակին.
Դարձեալ և 'ի տանէն արծրունեաց բարեպաշտօն ե-
ւեց մի Մուշէ անուն, որ առաջնորդէր աշխարհին արծ-
ռունեաց, աւերեալ էր և նորա զկրակատուն մի, և կա-
պանօք և տանջանօք բազում չարչարանս անցուցեալ էր
ընդ մոգսն. և սա ոչ ինչ զանգիտեաց, այլ կամաւ եկն
և յանդիման եղեւ մարզպանին։ Այս երկու եւս այլ
քահանայք երանելիք, որոց անուանքն են Սամուէլ և
Աբրահամ. քանզեալ էր և սոցա զատրուշանն Մ-
տաշատ, և յառաջագոյն ըմբռնեալ էին 'ի կապանս յու-
րացեալն Սասակայ. ածին և զնոսա յառաքինի ըն-
կերսն։ Այս Ժողովեցին եւս 'ի նոյն տեղի զմեծն Յով-
սէփ և զՍ եւոնդ և զԲաջաջ և զԱրշէն։ Այս իբրեւ
ուսաւ և տեղեկացաւ յամենեցունց մարզպանն, գրեաց
և եցոյց յարքունիս զամենայն Հնմարտութեամբ որպէս
զիարդ լուաւ 'ի բերանոյ նոցա։

Բայց Սասակ թէպէտ և յառաջագոյն հասեալ էր
'ի դուռն, ըստ կամաց իւրոց այլ ընդ այլոց երթեալ
պատմէր զամենայն ստութեամբ, սակայն 'ի միտս թա-
գաւորին ոչ կարէր զանձն արդարացուցանել. այլ պա-
տասխանի արար նմա և ասէ. Յորժամ քրիստոնեայքն
եւս եկեսցեն, հասարակ լուայց յատենի։

Իսկ զսուրբ քահանայսն վասն զի կապանօք տանէին՝
յետ երկուց ամսոց և քսան աւուր հասանէին 'ի ձմե-
ռոյն արքունի։ Իբրեւ լուաւ մեծ հազարապետն, եթէ
ածին զնոսա 'ի քաղաքն, ինքնին իսկ ականատես լինէր
նոցա։ Բայց թէպէտ և տեղեկութեամբ լսէր 'ի նոցա-
նէ զամենայն, ոչ կարէր ձեռն արկանել և չարչարել
զնոսա. քանզի բազումք 'ի նախարարացն Հայոց դեռ
եւս բռնացեալ ունէին զաւուրս աշխարհին, և դեռ եւս
մարզպանն յերկիւղի էր։ Այսն որոյ զգուշութեամբ
հրամայեաց պահել զսուրբսն, և զաշխարհն հրամայեր
սիրով նուաճել. վասն որոյ և ինքն իսկ շրջէր և ժողո-
վէր և շինէր ուխտիւ հաստատութեան։

Այս եպիսկոպոսացն հրաման տայր ունել զիւրաքան-

Digitized by Google

չիւր իշխանութիւնն, և ըստ առաջին սովորութեանն պաշտել յայտնութեամբ, և համարձակ եւս գալ 'ի հրապարակ։ Այս և ընծայից և պատարագաց արժանի առնէր թողուլ զառաջեաւ։ Այլ քանզի բազում գաւառս առեալ և աւերեալ էր զօրականին, թողուլ հրամայէր զհարկս աշխարհին. և զայրուձին եւս զարքունի թեթեւացոյց առ ժամանակ մի։ Այլ միայնակեացք որք էլեալ և կորուսեալ էին, հրամայէր գալ և ունել զիւրաքանչիւր տեղիսն։

Այլ զամենայն կարգս աստուածպաշտութեանն, որպէս զիարդ և ունէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն, նոյնպէս և այժմ, ասէ, կալցին։ Այլ եթէ որ 'ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարքունուստ, ասէ մարզպանն, եթէ յազատաց իցեն, եթէ 'ի շինականաց իցեն, եթէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և թողեալ իցէ, եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս. երդմամբ կնքէր և առաքէր 'ի կողմանս կողմանս։ Որ և բազումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածս։

Այս և որ մեծն է քան զամենայն, որ 'ի բռնութենէ որք ակամայ կալեալ էր զմոգութիւնն, հրովարտակս առաքէր յարքունուստ, անդրէն ունել զքրիստոնէութիւնն։ Այլ յանդիման խօսէր թագաւորն, որք էին 'ի դրանն արքունի, եթէ Որք ոչ սիրով ունին զդենիմազդէզն, այնպիսեացն և աստուածքն են ցասուցեալ, և ես ոչ ինչ եմ շնորհակալ. և այսօր զնոցն հրաման տամ ամենեցուն, 'ի կամս մարդոյն թողեալ ըստ իւրաքանչիւր մտաց, որպէս զինչ և կամի պաշտել՝ պաշտեսցէ. ամենեքեան իմ ծառայք են։ Օ՜այս ասէր, և գրով հրաման տայր ամենայն աշխարհի։

Իբրեւ զայս լուան և տեսին բազումք՝ որ էին ցանեալ և ցրուեալք 'ի հեռաւոր տեղիս, գային և ունէին զիւրաքանչիւր արարս։ Իսկ նախարարքն որ էին յամուրս աշխարհին և կամ 'ի հեռաւոր օտարութեան, իբրեւ տեսին զշնութիւն երկրին՝ մանաւանդ զեկեղեցւոյն հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային։ Այսան որոյ և պատգամ յղեցին առ մարզպան աշխարհին, զի 'ի դուռն ցուցցէ զբանս նախարարացն։ Իսկ նա վաղվաղակի յար-

Digitized by Google

քունուստ գիր ողբանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա հրամանաւ արքունի։ Այլ թէպէտ և գիտէին նոքա զդառնութիւն տերութեանն՝ թէ սուտ են յամենայնի, կամեցան չարչարակից լինել սրբոցն. զի եթէ մահ եւս առաջի կայցէ, ոչ ինչ զանգիտեսցեն երկիւղիւ։

Այլ զայս լուեալ Թագաւորին, ոչ կապանօք, այլ արձակ ոտիւք և արձակ ձեռօք հրամայեաց առ ինքն կոչել։ Ածին վաղվաղակի զկին և զորդիսն, և զինչս իւրաքանչիւր ետուն 'ի ձեռս մարզպանին. և ինքեանք փութանակի գնացին 'ի ձմերոցն արքունի։

Այլ մինչ դեռ անդրէն 'ի ձմերոցին էր Թագաւորն, ատեան հարցափորձի 'ի մէջ նոցա հրամայէր լինել։ Այլ նատաւ հազարապետն՝ զի լուիցէ կողմանցն երկոցունց։ Այլ իբրեւ յերկարեցաւ ամբաստանութիւնն զաւուրս բազումս, պարտաւորեցաւ կողմ ուրացելոցն։ Բանզի ցուցանէին զթուղթն՝ զոր տուեալ էր Վասակայ և ամենեցուն որ ընդ նմա էին, զի միաբանք ի՛ցեն ընդ նմա յուխտ ապստամբութեանն. Թուղթ մի 'ի Վրաց աշխարհէն, և Թուղթ մի յԱղուանից աշխարհէն. սոյնպէս և Թուղթ մի յԱղձնիս, և հրովարտակ մի առ Թագաւորն Յունաց, և Թուղթ մի առ մեծ սպարապետն Անտիոքոս։ Այլ 'ի բոլորեսին յայսոսիկ Թուղթն վաւերականի մատանի Վասակայ եղեալ էր։ Սոյնպէս խառն էր նա և 'ի մահ մոգուցն 'ի Օարեհաւանի։ Այլ զբազում բերդս՝ զոր հանին 'ի պարսկաց, յայտ առնէին զնորա Թուղթն և զհրամանն. քանզի նա էր մարզպան 'ի ժամանակին։

Որպէս և հրեշտակութեամբ իսկ զոր յղեալ էր առ Յոյնս նախարար մի, որում անուն էր Աստոմ, յաղագէն գնունեաց, սա մատուցեալ յանգիմանէր զնա առաջի մեծի ատենին հրովարտակաւն իսկ՝ զոր տուեալ էր նոցա իւրով մատանեաւ։ Այս և 'ի մէջ իսկ բերէր զամբաստանութիւն նորա Մուշկան Լիւսալաւուրտ, և յայտ առնէր պատերազմակից ընկերոքն իւրովք, որ և յետ վճարելոյ պատերազմին բազում արիւն ետ հեղուլ Վասակ. Թէ որպէս սուտ երդմամբք խաբէր և իմաստանէր յամրոցաց անտի. էր՝ զոր կոտորէր, և էր՝ զոր գերի տանէր զծառայս և զաղախնայս արքունի։ Այլ 'ի վերայ

Digitized by Google

այսր ամենայնի վնասու, և գող եւս գտանէր հարկի աշխարհին, որ յարքունիսն երթայր։

Եւ և յուրացեալ ընկերացն նորա բազումք էին, որ յայտ արարին զչարիս նորա՝ զոր գործեալ էր ընդ աշխարհն Հայոց։ Եւ 'ի մնացեալ մոգացն և 'ի փշտիպանացն՝ որք 'ի կապանսն ապրեալ էին և ապա ածին յարքունիս, հարցին և ցնոսա վասն նորա և ասեն. Դուք էք ինչ տեղեակ վասն չարութեան սորա։ Նոքուն պատասխանի և ասեն. Ամենայն անցք չարչարանաց՝ որ անցին ընդ մեզ, և բազում հարուածք որ եղեն 'ի զորքն արքունի, և աւեր և գերութիւն աշխարհին Հայոց, և կորուստ հարկացն արքունի, սկիզբն և առաջնորդ չարեաց այրդ այդ եղեւ։

Եւ մինչ դեռ այս ամենայն ամբաստանութիւն զնը-մանեալ էր զայնչափ բազում աւուրս, յառաջ մատեան և իւր ազգականքն, որ եւս յառաջագոյն գատախազ լեալ էին զնմանեալ առաջի արքային, սկսան կարգաւ ցուցանել և յայտ առնել, որպէս զի բարեկամացեալ էր նա ընդ Հեռանայ Հոնի միաբանութեամբ բազասական արքային, 'ի ժամանակին՝ զի կոտորեաց Հեռանն այն զգօրսն Պարսից Մզուանս, և ասպատակաւ եհաս յերկիրն Յունաց, և բազում գերի և աւար խաղացոյց 'ի Հոռոմոց և 'ի Հայոց և 'ի Վրաց և Մզուանից. որպէս զի 'ի վերայ իսկ եհաս խորհրդոցն ինքն իսկ Թագաւորն, և սպան զբազասական արքայ։ Եւ Վասակ մարզպան էր Հայոց 'ի ժամանակին, և Թշնամեացն արքունի խորհրդակից գտաւ։ Յուցին և յայտ արարին ազգականքն նորա, որպէս զի հմուտ և տեղեակ իսկ էին չար խորհրդոցն նորա. զամենայն ցուցանէին և յայտ առնէին առաջի Թագաւորին. և զայլ եւս բազմագոյն խարդախութիւնսն, որ ստութեամբ վարէր զկեանս իւր՝ ոչ միայն առ ընկերս, այլ և առ Թագաւորն ինքնին գլխովին. զի ոչ երբեք արդարութեամբ վաստակեալ էր 'ի մանկութենէ։

Յայնմ ժամանակի հրաման ետ հազարապետն. Եկեք այսր և 'ի կապելոցն, որք էն 'ի բանտի անդ։ Լուծին և ածին յերանելեացն զՍահակ եպիսկոպոս ուրշտունեաց և զսուրբն Յովսէփ և զՊ եւոնդ երէց։ Եւ իբրեւ մերկացան ամենայն բանք ասէին առաջի նոցա,

եւ պատասխանի Սահակ եպիսկոպոսն և ասէ. Որ յայտնի ուրացեալն են 'ի Աշնարիան Աստուծոյ, ոչ գիտեն զինչ գործեն և կամ զինչ խօսին. քանզի խաւարեալ են խորհուրդք նոցա. զտեարս պաշտեն սուտ պատճառանօք, և ընդ ընկերս մտանեն յուխտ ստութեան։ Այս են նոքա դարանք սատանայի, զի նոքօք իսկ կատարէ զգառնութիւն կամացն իւրոց, որպէս երեւի իսկ 'ի գոյն յայդ Սասակ։ Բանզի մինչ ունէր զանունն քրիստոնէութեան, վերինն երեսօք կարծէր ծածկել և թաքուցանել զամենայն չարութիւն իւր առաջի ձերոյ անգէտ տերութեանդ, և զամենայն նենգութիւնն իւր քրիստոնէութեամբն ծածկէր։

Ուստի և ձեր իսկ կարծեցեալ՝ մեծապէս պատուեցէք զդա առաւել քան զարժանն իւր։ Հաւատացէք դմա զաշխարհն Սիւնեաց. Հարցէք, եթէ գոհ իցեն զքրմանէ։ Լուտք դմա զտէրութիւնն Սիւնեաց. լուարուք յազգականաց այտի դորա, զինչ պատմեն զդմանէ։ Բարեկք զդա մարդպան Հայոց. զոր նախնեացն ձերոց մեծաւ աշխատութեամբ գտեալ էր, դա 'ի միում ամի կորոյս զերկիրն ամենայն։ Տեսէր, իբրեւ բարձաւ 'ի դմանէ պատուական անունն Աստուծոյ, զոր ունէր ստութեամբ, մերկ երեւեցաւ ամենայն չարագործութիւն դորա։ Օ՛ի եթէ առ Աստուածն իւր սուտ գըտաւ, առ ո՞ոք 'ի մահկանացուաց աստի դա արդար գտցի։

Բրդ ամենայն ամբաստանութիւն՝ որ այժմ յայտնի եղեւ զդմանէ, ո՞չ ահա ձեր իսկ յառաջագոյն լուեալ էր. բայց յոր դէմն ծածկեցէքն, դուք ձեզէն իսկ քաջ գիտէք։ Ինձ այսպէս թուի, եթէ սուտ յուսով դա զձեզ խնդացոյց։ Բայլ ոչ դուք և ոչ դա և ոչ որ զկնի ձեր գալոցն է, զայն 'ի մեզ ոչ կարէ տեսանել։ Բրդ արարէք զդա որպէս և կամիք. ցմեզ զի՞ հարցանէք։

Օ՛արմացաւ մեծ հազարապետն ընդ միտս իւր, և 'ի խորհուրդս իւր քննէր զամենայն բանս ատենին։ Բանզի հասեալ էր 'ի վերայ, եթէ յիրաւի դատապարտեցաւ այրն ըստ անարժան գործոցն իւրոց, եմուտ և եցոյց զամենայն բանս ատենին յարքունիսն։ Այս իբրեւ լուաւ թագաւորն և ստուգեաց 'ի հազարապետէն զառնն պարտաւորութիւն, բարկացաւ յոյժ և 'ի խոր խոցեցաւ. բայց միայն երկայնմտութեամբ կամեցաւ հաստ-

ցանել զնա 'ի մեծ անարգութիւն։ Զուռ եկաց աւուրս երկոտասան, մինչեւ 'ի գլուխ չոգաւ փուրսիշ ամբաստանութեանն։

Այս եղեւ յաւուր միոջ մեծի զամենայն երեւելի և և զպատուականն հրամայեր յընթրիս կոչել։ Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առաջի կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր 'ի թագաւորէն. կապէր և զպատուավուրան, և զխոյրն ոսկեղէն դնէր 'ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդն յակռնջն, և զգումարտակն 'ի պարանոցին, զամոյրն զթիկամբքն և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յաղբունիս. շքեղ և երեւելի քան զամենեսեան երեւէր բազմութեանն։

Իսկ նախարարքն որք կամք 'ի Հայոց չոգան՝ անձամբ տուեալ զանձինս 'ի փորձութիւնն, և սուրբքն որ յառաջագոյն հասեալ էին, կապանօք ունէին զամենեսեան առ դրանն արքունի։ Իբրեւ տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ, և բազմամբոխ զնդաւ գայր յարքունիս, 'ի միտս իւրեանց սկսան այպանել և ասել. Ո՛վ անմիտ վաճառական, զանմահ և զանանց պատիւ ետուր, և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ եւս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես։

Հաս և նստաւ 'ի ներքին դահլիճն, որ էր հրապարակ մեծամեծացն։ Զդէզ եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր ցնա և ասէր. Զբայ յղեայ առ քեզ. յորմէ՞ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, ասա ինձ վաղվաղակի, վասն որոյ արդար վաստակոց։ Այս յուշ առնէր նմա զամենայն բանս ատենին, յորում դատապարտեցաւն. նա և զոր ոչ եւս անդ խօսեցան՝ զայն եւս յայտնէր նմա։ Օ՛յ ոչ քան կարգի ունէր նա զտէրութիւնն Լինեայ աշխարհին, այլ նենգութեամբ և քուութեամբ ետ ապանանել զՀօրեղայր իւր զԼաղինակ, և յինքն տարաւ զտէրութիւնն Իբրեւ քարտիկար յաղբունիս։ Այս և այլ եւս բազում բանիւք դատապարտեցին զնա, որում ամենայն աւագանին վերկայ գային։ Պատանձեցաւ ամենեւին, և չգտաւ բան ճշմարիտ 'ի բերան նորա։ Իբրեւ կրկնեցին և երեքկնե-

ցին ցուցանելով 'ի ներքս յարքունիսն, հատաւ վՃիռ մահու 'ի վերայ նորա։

Բդ եկն եւ դահՃապետն, և մատեաւ առաջի ամենայն մեծամեծացն մերկեաց 'ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի։ Կապեցին զոտս և զձեռս, և կանանցաբար նրատուցին 'ի ձի մատակ. տարան ետուն յայն զընդան, ուր կային մահապարտք ամենայն։

Իսկ նախարարքն Հայոց և սուրբ եպիսկոպոսքն հանդերձ երիցամբքն, թէպէտ և էին 'ի մեծի պատուհասի, ոչ ինչ յիշէին զնեղութիւնսն՝ որ անցեալ էր ընդ նոսա, և կամ որ այլ եւս ակնկալութիւն էր գալ 'ի վերայ, այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւնն՝ որ եղեւ յԱստուծոյ։ Մխիթարէին զմիմեանս և ասէին. Բաջութեամբ պատերազմեցաք, առաւել եւս համբերութեամբ Ճգնեսցուք։ Լուեալ է մեր 'ի սուրբ հարցն մերոց, եթէ գլուխ ամենայն առաքինութեան համբերութիւն է, և իմաստութիւն երկնաւոր՝ կատարեալ աստուածպաշտութիւն, և զայս ոչ ոք կարէ գլուխ տանել առանց չարչարանաց։ Իսկ չարչարանքն յորժամ ընդերկարանայ 'ի վերայ, յայնժամ բազմանայ վարձ հատուցմանց պարգեւին։

Բայց թէ այդ այդպէս է, զայս միայն աղաչեսցուք զԱստուած, զի համբերել կարասցուք ամենայն փորձութեանց. և Տէր ինքնին արասցէ հնարս մերում փրկութեան։ Լուեալ է մեր զդատաստան քառասուն զինուորացն Քրիստոսի, որք բազում հարուածս տանջանաց ընկալան։ Մինն 'ի նոցանէ փութացաւ 'ի բաղանիսն, և վրիպեաց 'ի պսակէն. իսկ երեսուն և ինն համբերութեամբ կատարեցան, և հասին այնմ աւետեաց, որում ցանկացեալն էին։ Իսկ մեր ընկերակիցն աւանիկ, որ յառաջագոյն որոշեցաւ 'ի մէնջ, ահա եղեւ գործակից սատանայի։ Մինչ դեռ ոգիքն 'ի մարմնին էն, ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց, որ ոչ միայն սրբոց է ողբալն, այլ և ամենայն գազանաբարոյ մարդկան։

Զայս ասէին, և բազում արտասուս 'ի վերայ կորուսելոյն հեղուին. և անդէն զերդս հոգեւորս 'ի բերան առեալ ասէին. Բարի է յուսալ 'ի Տէր քան յու-

Digitized by Google

ռալ 'ի մարդիկ. բարի է յուսալ 'ի Տէր քան յուսալ յիշխանս. ամենայն ազգինք շրջեցան զինեալ, և անուամբ Տեառն յաղթեցին նոցա։ Բաջալերէին զմիմեանս և ասէին. Ո՞ այս գիտելով, եղբարք, մի՞ երկիցուք յանաստուած ազգէս հեթանոսաց, որ քան զմեզուս վատթարագոյն եւս են 'ի զայրանալն իւրեանց. զի և նոցա ցասումն 'ի սատակումն անձանց իւրեանց լիցի. այլ մեք զանուն Տեառն կարդասցուք, և վանեսցուք զամենեսեան։

Իսկ ուրացեալն Վասակ հայէր 'ի միաբանութիւն ուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն, և զուարթագոյն և պայծառք երեւէին որպէս յառաջագոյն յարքունիսն. հայէր և կարօտեր, և ոչ ոք խառնեաց զնա 'ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին։ Յու օր ըստ օրէ բերէին իբրեւ զգէշ ընկենուին 'ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին։ Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչեւ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն։ Յու այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին 'ի վերայ տան նորա, որ մինչեւ զհարց և զհաւուց և զիւր արարս և զգարդս կանանց եւս եդ 'ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Յու յայն տեղի հատուցին, մինչեւ հարցանել նմա եթէ կայցէ՞ ինչ գանձ 'ի գերեզմանս նախնեացն մերոց. և եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան 'ի տուժին։

Յու իբրեւ այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս դժնդակս անդէն 'ի կապանան։ Ջեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մնեցաւ թանձրամանութիւն նորա։ Յուացին որդունք ընդ աչս նորա, և 'ի վայր սորեցին ընդ ուրնգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիղք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա։ Բրղխեաց 'ի նմանէ հոտ մնհու, և փախստական եղեն 'ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Եղուն միայն կայր

Digitized by Google

կենդանի 'ի բերան նորա, և ոչ գտաւ խաստովանութիւն 'ի շրթունս նորա։ Նաշակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ 'ի դժոխս անհնարին դառնութեամբ։ Ամենայն ելեն նման ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովքն ամենայն թշնամիք նորա։

Այլ այն որ կամէրն թագաւոր լինել մեղաք Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա. քանզի իբրեւ զշուն մեռաւ և իբրեւ զգեշ քարշեցաւ։ Ել յիշեցաւ անուն նորա 'ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ել ինչ ելթող չարիս՝ զոր ոչ գործեաց 'ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց 'ի մեծամեծ չարեաց՝ որ ոչ անցին ընդ նա 'ի մահուան նորա։

Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ 'ի կրշատամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն որ զայս լուեալ գիտասցէ, նզովս 'ի հետ արկցէ, և մի լեցի ցանկացող գործոց նորա։

Digitized by Google

ԱՐՏԱՔՈՑ ԵՕԹՆ ՑԵՂԱՆԱԿԻՆ

ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԱՐՋԵԱԼ ՎԱՄՆ ՆՈՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ՁԱՐՁԱՐՄՆԱՑ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՑՆ

Լ՝ուրդ 'ի վեշտասաներորդի ամի տէրութեան նորին Թագաւորի, դարձեալ անդրէն խաղալոյ գնայր յաշխարհն Հրուշանաց մեծաւ սլտամտութեամբ 'ի գործ պատերազմին։ Եւ գնացեալ 'ի Ալ՝ըկանէ, և եղեալ յԱ՝ալսր աշխարհ, նովին կապանօք ճնախարարսն և զքահանայսն հրամայեաց պահել 'ի դղեկ քաղաքին 'ի Լիւշապուհ. և զերկուս յերանելի կապելոյն ընդ իւր խաղացոյց։ Լ՝հ արկանէր ամենայն քրիստոնէութեան ընդ որ անցանէր։

Իբրեւ զայն տեսանէր Հոն մի, որ էր յազգէ Թագաւորացն 'ի Լայլանդրաց աշխարհէն, Լ՝ենլ անուն, և 'ի ծածուկ խոնարհէր առ քրիստոնեայսն, և սիրով յօժարութեամբ ուսանէր 'ի նոցանէ զՀնարտութիւնն, և կամաք իւրովք նուաՀեալ էր ընդ իշխանութեամբ Թագաւորին, և կարի յոյժ դառնանայր 'ի միտս իւր յորժամ տեսանէր չարչարեալ զսուրբսն։ Եւ իբրեւ այլ ոչ ինչ էր ձեռնհաս, փախստական անկանէր առ աղքայն Հրուշանաց։ Եղբայր և պատմէր նմա զամենայն անցս չարչարանացն, զոր անցոյց Թագաւորն ընդ աշխարհն Հայոց. տեղեակ եւս առնէր զնա վասն խրատմատութեան պահակին Հոնաց. ցուցանէր և զերկպառակութիւն զօրացն, որ բազում ազգք բաժանեցան 'ի սիրոյ Թագաւորին. ազգէր նմա և զտրտունջ զԼ՝ռեաց աշխարհին։

Զայս իբրեւ լուաւ Թագաւորն Հրուշանաց, ոչ ինչ

Digitized by Google

երկմտութեամբ թերանայր յառնէն, և ոչ կարծիք լըտեսի անկանէին 'ի միտս նորա։ Բանզի սակաւ մի յառաջագոյն նորա լուեալ էր, դարձեալ իբրեւ ստուգեաց եւս 'ի Բէլայն յայնմ՝ եթէ խաղացեալ գայ 'ի վերայ աշխարհին Բուշանաց, փութացաւ վաղվաղակի զօր ժողովէր, գունդ կազմէր՝ ելանել նմա ընդ առաջ հզօր ձեռամբ։ Օ՜ի թէպէտ և ոչ կարէր յանդիման տալ պատերազմ ընդդէմ նորա, այլ 'ի վերջի թեւոյն անկեալ, բազում հարուածս հասուցանէր 'ի վերայ զօրայն արքունի։ Եւ այնպէս նեղեալ շտապէր, զի անձուկ լայնարաւ վատախտարակ արարեալ՝ այսրէն դարձուցանէր, և ինքն ասպատակաւ զհետ մնեալ աւերէր զբազում գաւառս արքունի. և ինքն ողջանդամ անդրէն յերկիրն իւր դառնայր։

Եւ իբրեւ ետես եթէ անարգանօք և վատթարութեամբ դարձեալ եմ 'ի պատերազմէս, զինչաւ փոքր մի 'ի հպարտութենէն, և գիտաց եթէ յերկպառակութենէ զօրայն եղէն չարիքն ամենայն։ Եւ առ մղձկել սրտին՝ չգիտէր թէ յո՞ թափէր զթոյնս դառնութեանն։ Իսկ մեծ հաղարապետն յոյժ էր յերկիւղի, քանզի ինքն էր պատճառք ամենայն չարեացն՝ զոր գործեաց։

Ակսան բանս 'ի բերան դնել մոգպետին և մոգացն, որք մատուցեալ յանդիման ասէին ցթագաւորն. Բարքայ քաջ, մեք 'ի դենէ իսկ գիտեմք, զի ոչ ոք 'ի մարդկանէ կարէ կալ առաջի քոյոյ մեծի զօրութեանդ. այլ վասն քրիստոնէիցն, որ են ընդդէմ օրինաց մերոց, բարկացեալ են մեզ աստուածքն, զի մինչեւ ցայսօր կենդանի պահեցեր զնոսա։ Եւ յիշեցուցանէին եւս նմա, որպէս նոքա 'ի բանտի անդ անիծանէին զքեզ։ Եւ բազում և այլ հայհոյութիւնս խօսէին զարքոյն, և զօր հանապազ զնոսա յաչաց հանէին, և զմիտս թագաւորին ածէին 'ի ցասումն բարկութեան. մինչեւ փութացաւ վաղվաղակի հեղուլ զարիւն անմեղայն։

Եւ հրաման վասն երկուցն՝ որ անդէն 'ի կարաւանին առ իւրն էին, Սամուէլ և Աբրահամ, զի գաղտ կորուսցէն զնոսա։ Իսկ որք էին 'ի դղեկ քաղաքին, հեռի էին 'ի կարաւանէն իբրեւ օթիւք հնգետասան։ Հրամայեաց համբարակապետին, որում անունն էր Դենշաղուհ, զի յառաջ քան զնա երթիցէ 'ի քա-

Digitized by Google

զաքն, ուր էին սուրբ քահանայքն Տեառն, և չարաչար տանջանօք իշխեսցէ դատել և հարցանել, և սրով վախճանել։

Ա.յլ զնոսա մոգպետին՝ յառաջագոյն, որում յանձն արարեալ էր, բազում անգամ աւելի քան զՀրամանն արքունի չարչարեալ էր. քանզի իշխան դենպետ էր Ա.պար աշխարհին, և առաւել ջերմագոյն էր 'ի մոգութեանն. քան զբազում գիտունսն եւս տեղեակ էր զրագեշտական օրինացն։ Այս և զոր մեծ պարծանս համարէին ըստ իւրեանց մոլորութեանն կարգի, համակգէն անուն էր. գիտէր և զանպարտաքաշն, ուսեալ էր և զբողպայիտն, ունէր և զպալհաւիկն և զպարսկագենն. քանզի այս հինգ կեշտք են՝ որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոգութեանն։ Բայց արտաքոյ սոցա է միւս եւս այլ վեցերորդ, զոր մոգպետան կոչեն։

Թուէր իմն անձին, եթէ կատարեալ իցէ ամենայն գիտութեամբ. հայէր ընդ երանելիսն, եթէ առ 'ի սը գիտութեան մոլորեալ են 'ի մեծ գիտութենէս մերմէ։ Այդ մնոտի կարծիս 'ի մտի՝ անդադար չարչարել զնոսա, զի թերեւս առ չժուժալ մարմնոյն նեղութեանց՝ լուայց 'ի նոցանէ բանս ինչ ողջանաց։ Ա՝ ասն որոյ զատ և ո՛ր ոշեաց 'ի նախարարացն զքահանայն, և հեռացոյց 'ի նոցանէ բացագոյն. և արկ զնոսա 'ի ներքնատուն մի գէՀ խաւարչտին։ Այս հրամայէր վեց առն երկու քաշ կէնս ժամէ 'ի ժամ, և դորակ և կէս ջուր. և ամենեւին ոչ զոք թողոյր մնա երթալ 'ի դուրս բանտին։

Այս իբրեւ աւուրս քառասունս այսու նեղէր զնոսա, և ոչ լուաւ 'ի նոցանէ բան թուլութեան, այլ իմն ածզմտաւ, եթէ ոք յիւրոց ծառայիցն գաղտ եգիտ ինչ 'ի նոցանէ, և 'ի ծածուկ տացէ նոցա կերակուր։ Ինքն երթեալ կնքէր զերդ և զդուռն բանդին, և զկարգեալ ռոՀիկն տայր յիւր հաւատարիմն տանել նոցա. և ա՛ր զայս աւուրս հնգետասան։ Սակայն և այնպէս երանելիքն ոչ ինչ շտապեալ տագնապեցան. այլ մեծաւ համբերութեամբ տանէին զՀգնութիւնն, և անդադար սաղմոսիւք կային 'ի հանապազորդ պաշտամանն. և 'ի կատարել աղօթիցն զուարթագին գոՀանալով, սակաւիկ մի հանգչէին 'ի գետնախշտի յանկողինն։

Ինկ պահապանքն, որ 'ի վերայ կապելոցն կային, յոյժ

էին զարմացեալ ընդ առողջութիւն անհիւանդութեան նոցա, իբրեւ լսէին զանդադար հնչումն ձայնիցն։ Ա՛ սան այնորիկ պատմեցին յականջս մոգպետին և ասեն. Ա՛ յ էն արքն այն լոկ առանց մեծի զօրութեան. զի եթէ պղնձի մարմինք ունէին նոքա, արդ լուծեալ էր 'ի գէշ խոնաւոյ անտի։ Բազում ժամանակք են մեր, զի յանձն է մեզ պահպանութիւն բանդիս. ոչ յիշեմք՝ եթէ 'ի կապելոյ ոք ամենեայ ժամանակ կեցեալ է 'ի տանդ յայդմիկ։ Ա՛ յդ մեք ասեմք քեզ. եթէ առեր հրաման մահու նոցա և սպանանես, դու գիտես. ապա թէ ոչ, պահել յանձն արարաւ քեզ և ոչ դատել զնոսա, քա՛ լաչար վտանգ է կապելոցն։ Ա՛ յս և մեք զահի հարեալ եմք և յոյժ երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնսն։

Ա՛ յ իբրեւ զայս լուաւ մոգպետն, յարուցեալ ինքնին երթայր 'ի մէջ գիշերին յերդ բանդին։ Ա՛ յ հայեցեալ 'ի ներքս ընդ մութ գիշերոյն, այն ինչ լինէր նոցա 'ի պաշտամանէն հանդչել, և տեսանէր զանձն իւրաքանչիւր կապելոցն, զի իբրեւ զկանթեղ անշիջանելի վառեալ բորբոքէր։ Զ՛ ահի մեծի հարաւ, և ասէր ընդ միտս իւր. Զ՛ ինչ է այս մեծ աքանչելիքս. աստուածք մեր ուրեմն եկեալ իջեալ են 'ի բանդս, և նոցա փառաւորութիւնն լուցեալ բորբոքի։ Ա՛ յ եթէ նոքա առ սոսա ոչ մերձենան, մարդոյ լոկոյ անհնարին է զայսպիսի պայծառութիւն լուսոյ զգենուլ։ Ա՛ մ այսպէս լուեալ էր վասն կեշտիս այսորիկ, եթէ առ յոյժ յիմարութեանն մոլորեալ են, և ստութեամբ կերպարանին յաչս տգէտ մարդկան. թերեւս և այս տեսիլ այնպէս ինչ երեւեցաւ ինձ։

Ա՛ յ ոչ կարէր համբրէն կալ 'ի վերայ իրացն երեւման։ Ա՛ յ մինչ դեռ յայսմ մտաց խորհրդի էր, դարձեալ սուրբքն յիւրաքանչիւր խշտեկացն կանգնեցան կացին 'ի սովորական պաշտամանն։ Յայնժամ ՀՀմարտեալ գիտաց մոգպետն, եթէ ոչ այլ ընդ այլոց տեսանէր՝ որ երեւեցաւն նմա, այլ 'ի նոցունց յանձանց փայլէր լուսաւորութիւնն։ Յայնժամ կրկին անգամ զահի հարաւ և ասէ. Ա՛ ՀՀմ 'ի կապելոցն եղեւ այսպիսի յայտնութիւն. ես և ոչ զմի ոք ոչ գիտեմ, և ոչ լուեալ է իմ 'ի հարցն յառաջնոց։ Ա՛ յ քանզի անհնարին շար-

Digitized by Google

ժեցաւ 'ի մեծ սքանչելեացն, և գողային ամենայն մար-
մինքն, և թմբրեալ կիսամեռ լինէր 'ի վերայ տանեացն
մինչեւ յառաւօտն. և 'ի ծագել լուսոյն իբրեւ զբաղ-
մօրեայ հիւանդ յարուցեալ երթայր 'ի վանս իւր, այլ
և ոչ ումեք իշխեաց ամենեւին պատմել զոր ինչ եղեան։

Կոչեաց առ իւր զպահապանն և ասէ ցնոսա. Այր-
թայք հանէք զկապեալն 'ի վերնատուն մի ցամաքա-
գոյն, և անդ պահեցէք զնոսա զգուշութեամբ, որպէս
և ասացէքն։ Մի ոմն 'ի դահճաց անտի, իբրեւ լուաւ
զհրամանս մոգպետին, փութով ընթացեալ երթայր,
իբրեւ մեծ իմն աւետիս տանէր նոցա։ Հրամայեաց ձեզ,
ասէ, ելանել 'ի ցամաք վերնատուն մի. արիք վաղվա-
ղակի, և մի հեղգայք, քանզի և մեք իսկ պաղատեցաք
վասն ձերոյ տառապանացդ։

Իսկ սուրբն Յովսէփ հեզաբար սկսաւ խօսել ընդ
դահճապետին և ասէ. Այրթ ասա ցյիմար առաջնորդն
ձեր. չէ լուեալ քո վասն հանդերձեալ գալստեան Տեա-
ռընն մերոյ և կամ վասն մերոյ հրաշակերտ շինուածոցն,
որք մեզ կան պահին 'ի սկզբանէ պատրաստութիւնքն.
վասն որոյ դիւրեաւ համբերեմք մեծի նեղութեանս
առ սէր այնր յուսոյ՝ զոր տեսանեմք։ Դու բարւոք ա-
րարեր, զի արգահատեցեր մեծի նեղութեանս մարմնոյ.
այլ ոչ ինչ եմք ձանձրացեալք իբրեւ զանաստուած ոք,
որ չիք այլ ինչ յոյս 'ի միտս նորա քան որ երեւինս։
Այլ մեք առ սէրն Քրիստոսին մերոյ՝ ընդ այս յոյժ
եմք խնդացեալ, և կատարեալ պարգեւս զսա իսկ հա-
մարիմք, զի ժամանակեայ վշտաբեր զանժամանակ երա-
նութիւնն ժառանգեսցուք։

Այթէ շինուածոց իցեմք ցանկացեալք, ունիմք շի-
նուածս յերկինս առանց մարմնաւոր ձեռագործի, որ ոչ
երեւին ձեր արքունիքդ առ նոքաւք։ Այսպէս և հանդեր-
ձից և փառաց և անախտ կերակրոց, զոր եթէ ոք կա-
մեսցի ասել ձեզ, չհանդարտէ լսել ձեր տկարութիւնդ.
վասն զի կուրութեան հնութեամբն չտեսանէք և ոչ
լսէք և ոչ իմանայք, այլն սակս զմեզ զուր և անիրաւ ա-
ռանց յանցանաց անողորմն դատիք։ Այլ մեր թագաւ-
որն առատ է և բարերար, և բաց է դուռն արքայու-
թեան նորա. եթէ կամեսցի ոք դիմել՝ դիմեսցէ հա-
մարձակ. 'ի դարձելոյ յասպաշխարութիւն չնախանձի և
ոչ ընդ ումեք երբեք։

Digitized by Google

Բայց վասն դիւրութեանն՝ որ զու հրամայեցեր առնել մեզ, էր մեր իշխանութիւն անդրէն յաշխարհին մերում չանկանել մեզ 'ի ձեռս թագաւորիդ, որպէս և այլքն՝ զի ապրեցան յայսպիսի փորձանաց. այլ որպէս կամաք և յօժարութեամբ եկաք, իբրեւ թէ գիտէաք զվիշտ վտանգիս, ոչ ինչ զանգիտեցաք յայսպիսի ձգանց, ոչինպէս և կամիմք՝ զի և այլ եւս ծանրացուցես 'ի վերայ մեր, մինչեւ քո չարութիւն կամացդ յագեսցի 'ի մեզ։ Օ՛ի թէ Քրիստոսածն մեր, որ է արարիչ երկնի և երկրի և ամենայն երեւելեաց և աներեւութից, և առ սէր իւրոյ բարերարութեանն խոնարհեցաւ առ ազգս մարդկան, և զգեցաւ մարմին չարչարելի, և անց ընդ ամենայն հանդէս առաքինութեան, և կատարեաց զամենայն գործ տնտեսութեան, 'ի կամս իւր մատնեցաւ 'ի ձեռս խաչահանուացն, մահու մեռաւ և եդաւ 'ի գերեզմանի, և զօրութեամբ աստուածութեանն իւրոյ յարուցեալ երեւեցաւ աշակերտացն և այլոց բազմաց, և վերացաւ առ հայր իւր յերկինս, և նստաւ ընդ աջմէ հայրենի աթոռոյն, և չնորհեաց մեզ զօրութիւն երկնաւոր, զի ըստ նորա անմահութեանն՝ և մեք մերով մահկանացու մարմնովս կարիցեմք չարչարակից լինել անմահ մեծութեանն, և նա ոչ եւս իբրեւ զմահկանացու հանարի զմեր մահն, այլ իբրեւ անմահից հատուցանէ մեզ զվարձս վաստակոց մերոց, արդ փոքր հանարիմք մեք զչարչարանս զայս առ սէր փոխարինին, զոր էարկ առ ազգս մարդկան։

Իբրեւ լուաւ զայս ամենայն բանս մոգպետն 'ի դահճապետէ անտի, խռովեցաւ, պղտորեցաւ 'ի միտս իւր, և հատաւ քան յաչաց նորա զբաղում զիշերս։ Իսկ յաւուր միոջ յերեկուն պահուն յարուցեալ երթայր առ նոսա միայնիկ լռիկ, և ոչ զոք առնայր ընդ իւր 'ի սպասաւորացն։ Այլ իբրեւ եհաս 'ի դուրս տանն, հայէր ընդ ծակ մի 'ի ներքս և տեսանէր ըստ առաջին տեսլեանն. բայց նոքա 'ի քուն կային խաղաղիկ։ Հեզաբար կարդաց յանուանէ զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր պարսկերէն։ Այն 'ի դուրս և հարցանէր. Ո՞վ ես դու։ Այս ինքն իսկ եմ, ասէ. կամիմ 'ի ներքս մտանել և տեսանել զձեզ։

Այլ իբրեւ եմուտ 'ի մէջ սրբոյն, ոչ եւս երեւէր նմա

այլ նշանն. և պատմեաց նոցա զերկիցս երեւումն սքանչելեացն։ Եւ պատասխանի Պ եւանդ երէցն և ասէ. Աստուած, որ ասաց 'ի խաւարի լոյս ծագել, որ և ծագեաց և լուսաւորեաց իմաստութեամբ զաներեւոյթ արարածս, նոյն զօրութիւն և այսօր ծագեաց 'ի խաւարեալ միտս քո, և բացան աչք կուրացեալ ոգւոյդ, և տեսեր զանշիջանելի լոյս Հնորհացն Աստուծոյ. փութա, մի հեղգար. գուցէ դարձեալ կուրացեալ ընդ խաւար գնայցես։

Եւ զայս իբրեւ ասաց, յոտն կացին ամենեքեան ասելով զքառասներորդ երկրորդ սաղմոսն. Աղաքեա, Տէր, զլոյս քո և զՃշմարտութիւն քո, զի նոքա առաջնորդեսցեն և հանցեն զմեզ 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո։ Աղաղակեա Ճշմարտիւ, Տէր, առաջնորդեցեր և ածեր զմոլորեալս զայս յանանց ուրախութիւնդ և յանմերժելի հանգիստդ։ Ահա նմանեալ է օրս այս սուրբ չարչարանացն քոց. որպէս ապրեցուցեր զմահապարտ աւազակն յերկրորդ մահուանէն, և նովաւ բացեր զաղխեալ դուռն Աղենայ, այսպէս գտեր և զայս կորուսեալս. որ էր պատճառք մահու բազմաց, արդ արարեր զսա պատճառք կենաց մեզ և անձին իւրում։ Փոհանամք զքէն, Տէր, գոհանամք և ձայնակիցք լինիմք սուրբ մարգարէին. Մի մեզ Տէր, մի մեզ. այլ անուան քում տուր փառս վասն ողորմութեան և Ճշմարտութեան քոյ. զի մի երբեք ասասցեն 'ի հեթանոսս, թէ ուր է Աստուած նոցա. որպէս և այսօր իսկ յայտնի եղեւ զօրութիւն քո մեծ 'ի մէջ ապարասան խաւարազգեստ ազգիս։

Իսկ որ ձրին եգիտ զաստուածատուր Հնորհսն, սկսաւ և նա առանձինն ասել. Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմ դողացայց։ Զանզի գիտեմ Ճշմարտիւ, եթէ բազում են այսուհետեւ թշնամիք իմ, և կամին մերձենալ և ուտել զմարմինս իմ. այլ դու, Տէր ամենայնի, եկիր վասն ամենեցուն կենաց, զի դարձցին և կեցցեն առաջի քոյոյ մարդասիրութեանդ։ Մի որոշեր զիս 'ի սուրբ գառանցս՝ յորս խառնեցայ, զի մի ըստ քո փարախդ արտաքս եղեալ՝ չար գազան դարձեալ բեկանիցէ զիս։ Մի հայիր, Տէր, 'ի բազմամեայ ամբարշտութիւնս

իմ, զի մի մոլորեալ 'ի Ճշմարիտ կենացդ՝ զբաղումն անդրէն 'ի կորուստ աշակերտիցեմ. այլ ոլոց եղէ պատ-Ճառք մահու, նոցին եղէց և պատՃառք կենաց։ Սատա-նայ՝ որ ինեւ խրոխտացեալ պարծէր 'ի մէջ մեծի կո-ղբստականացս, ինեւ կորացեալ ամաչեսցէ 'ի մէջ իւ-րոց աշակերտացն։

Այս զայս իբրեւ ասացին, նմին իսկ ետուն կատարել զաղօթսն, և դադարեցին նովաւ հանդերձ մինչեւ 'ի պահն երրորդ. և այնպէս խաղաղացեալ կացին 'ի քուն ամենեքեան մինչեւ 'ի ժամ առաւօտուն։ Իսկ նորա յոտն կացեալ, և 'ի քուն ոչ մնանէր. այլ զձեռսն իւր 'ի վեր համբարձեալ՝ կայր յաղօթս։ Այս մինչ դեռ ընդ երդ պշուցեալ հայէր յերկինս, յանկարծակի տունն լի եղեւ լուսով. և երեւեցան նմա սանդուղք լուսեղէնք՝ որ կանգնեալ էր յերկրէ յերկինս, և գունդք գունդք զօրաց ելանէին 'ի վեր. և էր ամենեցուն տեսին նոր և չքնաղ, ահաւոր և սքանչելի իբրեւ զտեսիլ հրեշտա-կի։ Ելանէր և զթիւ համարոյ 'ի միտս իւր զիւրաքանչիւր գնդիցն, զոր տեսանէր. էր՝ որ զհազարի, էր՝ որ զերե-սուն և զերից, էր՝ որ զերկերիւրոց և զերեքտասանից։ Այս այնպէս մեծագոյնս մերձենայր, մինչեւ Ճանաչել նմա զերիս 'ի նոցանէ, զԱրդան և զԱրտակ և զՍո-րէն։ Այս ունէին ինն պսակ 'ի ձեռին, խօսէին ընդ մի-մեանս և ասէին. Ահա եկն եհաս ժամ, զի և սոքա խառնեսցին 'ի գունդս մեր. քանզի և մեք սոցա իսկ մնայաք, և առհաւատչեայ պատիւ սոցա բերաք։ Այս ո-րում ոչ եւս մնայաք՝ եկն երեւեցաւ և խառնեցաւ, և եղեւ իբրեւ զմի 'ի զինուորաց Քրիստոսի։

Այս երիցս անգամ երեւեցաւ չքնաղ տեսիլս առն երանելւոյ։ Զարթեալ զուրբան 'ի քնոյ անտի, և պատ-մեաց նոցա զամենայն տեսիլն կարգաւ։ Իսկ նոքա յարու-ցեալ կացին յաղօթս և ասէին. Տէր, Տէր մեր, զի սքանչելի է անուն քո յամենայն երկրի. համբարձաւ մեծվայելչութիւն քոյ 'ի վերոյ քան զերկինս. 'ի բե-րանոց մանկանց տղայոց ստընդիացաց հաստատեցեր զօրհնութիւն, զի եղծցի թշնամին և հակառակորդն։ Զի ոչ եւս է այսուհետեւ ասել, եթէ տեսից զերկինս զգործս մատանց քոց, այլ թէ տեսից զքեզ, Տէր երկնի և երկրի. որպէս երեւեցար իսկ այսօր 'ի ձեռն նուրբ

զօրականացն քոց հեռաւոր օտարիս, որ անցեալ էր լատ ակնկալութիւն կենաց իւրոց։

Ահա դու, Տէր, ողորմութեամբ քով պատկեցեր զսիրելիս քո, և գթութեամբ քով ելեր 'ի խնդիր կորուսելոյս, դարձուցեր և խառնեցեր 'ի դաստ սրբոց քոց։ Ոչ միայն ետես սա զերկինս՝ զգործս մատանց քոց, այլ ետես զերկինս և զանակիս նորա, և մինչ դեռ է յերկրիս՝ խառնեցաւ 'ի գունդս բիւրաւոր հրեշտակաց քոց։ Լուտես և զոգիս արդարոց կատարելոց, ետես և վնասնութիւն փառաց անսերեւոյթ պատրաստութեանցն, ետես և 'ի ձեռին նոցա զանշուշտ ռաքունայն, որ հանդերձեալ պահի 'ի ձեռն Ճարտարապետին։ Լրանի՜ սմա վասն սուրբ տեսլեանս, և երանի՜ է մեզ վասն տրա մերձաւորութեանս առ մեզ. քանզի հաստատեալ գիտացաք սովաւ, եթէ որում այսպիսի աքանչելիք յայտնին, մեծ մասն ընկալաւ սա յանսպառ քոց բարութեանցդ։ Ընտրառ են պարգեւքն քո, Տէր, և առանց խնդրելոյ տաս ում և կամիս քոյով յորդ և աննախանձ առատութեամբդ։ Լու եթէ որ ոչ խնդրեն՝ չարդելուս 'ի նոցանէ, բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան քոյ, որ 'ի մանկութենէ մերմէ ցանկացեալ եմք բարեմասնութեան սրբոց քոց։ Օ՜նորագիւտ դաստակերտս քո բարեխօս առնեմք վասն անձանց մերոց. մի ընկղմեսցի նաւ հաւատոց մերոց 'ի մէջ ալէկոծեալ ծովու մեղաց։

Լու այսպէս յերկար կատարելով զաղօթսն, յորդ և առատ արտասուս հեղուին 'ի վերայ անձանց իւրեանց։ Պուրթ ողբանաց արկանէին առաջի բարերարին, զի լսելի լիցի ձայն պաղատանաց նոցա, և հաստատուն կացցեն 'ի վիշտս Ճգանցն, զի մի զրկեսցին 'ի ցանկալի պատկացն, զոր ունէին սուրբքն 'ի ձեռս իւրեանց, որպէս և աղղեցաւ նոցա 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ, զի մերձեալ էր ժամանակ կոչման նոցա. որպէս զի երթիցեն և աներկիւղ դադարեսցեն 'ի կատարածելի ակնկալութենէն, որում համբերէին բաղում տառապանօք, զի առհաւատչէիւ փոքու հասցեն երկնաւոր մեծութեանն, որում 'ի վաղնջուց իսկ էին ցանկացեալք։

Լու քանզի ինքն իսկ մոգպետն իշխան էր աշխարհին, և նմա յանձն արարեալ էր զկապեալսն քաղաքին, վասն այնորիկ և համարձակութեամբ ընդ առաւօտն հանեալ

տանէր յապարանսն իւր։ Լուանայր և սրբէր զնոսա 'ի չարչարանաց բանդին, առնոյր զջուր լուացմանն սրբոցն և արկանէր զիւր մարմնոմն։ Ուղղէր 'ի տան իւրում աւազան, և ընդունէր 'ի նոցանէ զաւրբ մկրտութիւնն. հաղորդէր 'ի կենդանարար մարմինն և 'ի քաւիչ արիւնն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Խարձր բարբառով աղաղակէր և ասէր. Մկրտութիւնս այս լիցի ինձ 'ի լուացումն մեղաց իմոց, և 'ի ծնունդս նորոգութեան վերստին Հոգւոյն սրբոյ, և Հաշակումն անսահմ խորհրդոյս 'ի Ժառանգութիւն երկնաւոր որդեգրութեանն։ Ոմանք և ըստ մարմնոյ առաջի նոցա սեղան կերակրոյ, և մխիթարութեան բաժակ մատուցանէր նոցա, և միաբանէր ընդ նոսա հաստին օրհնութեան։

Ամենայն թէպէտ և ինքն եհաս յերկնաւոր բարին, և անսերկիւղ էր 'ի մարդկանս հարուածոց, սակայն վասն ընտանեացն յոյժ ունէր կասկած, զի մի իբրու փնասակարք մատնեսցին յիրս արքունի։ Ամն այնորիկ 'ի ծածուկ կոչէր 'ի գիշերի և զնախարարսն, որ 'ի նմին քաղաքի էին 'ի կապանս, և առնէր ծախս մեծամեծս։ Այլ էին ամենեքեան 'ի մեծի խնդութեան վասն սքանչելեացն, որ երեւեցաւ նոցա։ Ամենայն յիշէին ամենեւին, եթէ վիշտք ինչ անցեալ էին ընդ նոսա։

Այլ 'ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն 'ի միտս սրբոցն վասն երիցու միոյ, որ էր ընդ նոսա 'ի սուրբ կապանսն. զի 'ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, և տգիտագոյն եւս էր 'ի գրոց մխիթարութենէ։ Նրա մայեցին նմա ունել զգլուխ բազմականին. ետ պատասխանի երանելին և ասէ. Օ՜ինչ է այդ՝ զոր դուք գործէք, և կամ յինէն զի՞ թաքուցանէք զծածուկս խորհրդոցդ։ Այս քան զկրսերս ձեր խոնարհագոյն եմ, և քան զեւս փոքունս յաշակերտաց ձերոց տգիտագոյն եմ, զիմ՞որ կարացից այդմ տանել։ Այս իսկ մեծ էր ինձ, զի սուրբ կապանաց ձերոց հաղորդեալ եմ այսօր։ Այթէ արժանի համարիք զիս ձերում սեղանոյդ, կալարուք դուք զիւրաքանչիւր տեղի բազմականիդ, և հրամայեցէք ինձ զիմ տեղին։ Այս բռնադատեաց սուրբ եպիսկոպոսն միաբանութեամբ ամենայն սրբոցն, և 'ի վերոյ քան զամենեսեան բազմեցուցին զնա։

Այս իբրեւ բոլորեցաւ ակումբ բազմականին, և հա-

զորդեցան ամենեքեան՝ի կերակուրն զուարթութեամբ, յոսն եկաց սուրբն Յովսէփ, և սկսաւ զուրախութեան նուագն մատուցանել և ասել այսպէս. Ուրախ լերուք ամենեքեան՝ի Քրիստոս. քանզի վաղիւ այս ժամ իցէ, ահա մոռացեալ իցէ մեր զամենայն նեղութիւնս և զչարչարանս զոր կրեցաք։ Այլ փոխանակ սակաւ աշխատութեանս մերոյ՝ բազմապատիկ հանդիստ ընդունելոց եմք, և փոխանակ խաւարային արդեանի բանդին՝ մտանելոց եմք յերկնից քաղաքն լուսաւոր, որոյ քաղաքի քաղաքապետ ինքն Քրիստոս է, հանդիսապետ՝ յորում աստղարիսի նախ ինքն առաքինեցաւ առնելով զնը-շան յաղթութեան։ Այլ այսօր նոյն Տէր է, որ յաջողէ մեզ զնոյն նշան ընդունելով՝ ի փրկութիւն անձանց մերոց և՝ ի պարծանս մեծափառ սուրբ եկեղեցւոյ։ Այլ զոր օրինակ տեսէք դուք զեղբայրս զայս՝ ի գլուխ բազմականիս մերոյ, սոյնպէս սա նախ ընդունելոց է վաղիւ զպսակն՝ ի ձեռն կատարմանն իւրոյ։ Օ՛ի ահաւասիկ եկն եհաս և մերձեցաւ առ մեզ թշնամին կենաց մերոյ և պսակիչ սուրբ չարչարանաց ծառայիցս Քրիստոսի։

Օ՛այս իբրեւ ասաց, լուաւ՝ի նմանէ բանս պնդութեան, որով յոյժ մխիթարեցան ամենեքեան. ասէ. Ի սուրբ աղօթից ձերոց այդպէս արասցէ ինձ Քրիստոս, և կատարեսցէ զելս վախճանի իմոյ յաշխարհէս ըստ բանի քում։ Այլ ահա ընդ ասելդ քո ազդումն եղեւ հոգւոյս իմոյ, և յիշեցի ես զմարդասիրութիւնն Քրիստոսի, որոյ և գալուստ իսկ նորա յաշխարհս վասն մեր մեղացն եղեւ։ Գ՝թասցի յիս որպէս և յաւազակն՝ ի ժամ խաչին. որպէս նովաւ զդրունս փակեալ Դրախտին եբաց, և յառաջեցաւ լինել կարապետ այնոցիկ՝ որ անդրէն՝ ի նոյն տեղի դառնալոց էին յուրախութիւն, արասցէ և զիս այսօր Տէր Յիսուս Քրիստոս սպասաւոր ձերում մեծաշուք գնդիդ։

Բ՝անիկ վասն միոյ մեղաւորի՝ որ դառնայ յապաշխարութիւն, անվախճան լինի ուրախութիւն հրեշտակաց յերկինս. որպէս զի գիտեն իսկ զկամն Տեառն իւրեանց։ Բ՝անզի վասն միոյ կորուսելոյ ոչխարին եկն՝ ի խնդիր, վասն այնորիկ և նոքա խնդակիցք լինին վասն միոյ դարձելոյ յապաշխարութիւն։ Գ՝երեւս վասն իմ

եկեալ էր մեծ զօրավարն Հայոց բաղում սուրբ ընկերակցօքն իւրովք. զպահն վասն ձեր բերեալ էր, այլ զուրախութեան աւետիսն հասարակաց տայր։ Եւ առաւել եւս ընդ իս էին զարմացեալ, զի ոչ ճանաչէին զիս 'ի կեանս իւրեանց, ահա 'ի սուրբ մահն իւրեանց՝ կամէին զի և ես մասն ընկալայց ընդ երանելիսն։

Աղաչեմ զձեզ, տեարք իմ և հարք, աղօթս արարէք 'ի վերայ անարժանութեանս իմոյ, զի արժանի եղէց մեծի աւետեացն հասանել, որ յանսուտ ձերոց բերանոցդ բարբառեցաւ 'ի լսելիս իմ։ Արդ փութամ տեսանել զօրն, և յաւուր անդ զժամն եկեալ հասեալ 'ի վերայ մեր։ Եւ երբ իցէ զի ելից 'ի թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ, երբ իցէ զի տեսից զքեզ Տէր Յիսուս, երբ իցէ զի աներկիւղ եղէց 'ի մահուանէ, երբ իցէ զի տգիտութիւնս իմ հացէ 'ի կատարեալ գիտութիւն։ Օգնեա ինձ, Տէր, օգնեա ինձ, և կարկառեա զամենաշքեղ աջդ յօգնականութիւն. զի խոստման բանիցս իմոց և գործք արդեամբք կատարեսցին 'ի վերայ մեր. և փառաւոր լիցի յիս 'ի մեղաւորս անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Օ այս իբրեւ ասաց երանելին, յոտն կացին 'ի բազմականացն անդ, գոհանային ասելով. Փառք քեզ, Տէր, փառք քեզ թագաւոր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ Հոգւովդ սրբով, զի գտցուք առաջի քո հաճոյք և մի ամաչեցեալք, զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր։

Ի նմին ժամու եղեւ խորհուրդ մեծ 'ի մէջ նոցա, թէ զինչ օրինակաւ կարասցեն ապրեցուցանել զմոգպետն. զի մի լուեալ յարքունիսն, իբրեւ զհուր բորբոքեսցի բարկութիւն 'ի վերայ մնացելոցն։ Իբրեւ ոչ ինչ կարացին 'ի ժամուն վճարել, միաբանութեամբ աղօթս արարեալ՝ յԱստուած ապաստան առնէին ըզկեանս առնն հաւատացելոյ։

Իսկ նախարարքն հրաժարեցին 'ի սրբոցն յորդառատ արտասուօք, և ողբալից ուրախութեամբ անկեալ յոտս նոցա աղաչէին մեծաւ պաղատանօք՝ յանձն առնել զնոսա Հոգւոյն սրբոյ։ Օ մի ոք 'ի մէնջ, ասեն, թուլացեալ և ելեալ արտաքս 'ի հաւասար միաբանութենէս, կերակուր լիցի չարաբարոյ գազանին։

Digitized by Google

Իսկ երանելիքն միաբան քաջալերէին զնոսա և ասէին. Օրացարուք, եղբարք, 'ի Տէր, և մխիթարեցարուք 'ի մարդասիրութիւնն Աստուծոյ, որ ոչ թողու զձեզ որբս և ոչ 'ի բացէ առնէ զողորմութիւն իւր 'ի մէնջ հաւատով 'ի Քրիստոս. բազում բարեխօսիւքն՝ զոր ունիմք առ նմա, ոչ շինչանի վառումն կանթեղաց ձերոց, և ոչ ուրախ լինի խաւարասէր թշնամին կենաց ձերոց։ Այլ նոյն Տէր է, որ զօրացոյց զառաջին նահատակսն՝ խառնելով զնոսա 'ի գունդս հրեշտակաց իւրոց. նոցուն սուրբ ոգիք և ամենայն դասք արդարոց հասցեն ձեզ յօգնականութիւն համբերութեան, զի ընդ նոսին նոցունց պսակացն արժանի լինիջիք։

Այս խօսէին ընդ նոսա, և զգիշերն ամենայն սաղմոսիւք 'ի գլուխ տանէին. իսկ 'ի ժամ առաւօտուն ասէին ամենեքեան. Ծագեա, Տէր, զողորմութիւնս քո՝ զոր ճանաչէն զքեզ, զարդարութիւնս քո՝ զոր ուղիղ են սրտիւք։ Մի եկեսցէ 'ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողացուսցեն զմեզ. անդ անկցին ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն. մերժեցան, և այլ մի կարասցեն հաստատել։

Եւ անդէն վաղվաղակի հասին դահիճքն 'ի դուռն բանդին. մտին 'ի ներքս և տեսին, զի որ յառաջ մոգպետն էր, և նմա իսկ յանձն արարեալ էր պահել զնոսա, նստէր 'ի մէջ նոցա և լսէր 'ի նոցանէ, նա և քաջալերէր եւս զնոսա չերկնչել 'ի մահուանէ։ Իբրեւ տեսին զմեծ սքանչելիսն դահիճքն, յոյժ զարմացան ընդ իրսն, այլ ոչ ինչ իշխէին հարցանել ցնա. բայց չոքան և պատմեցին Դենշապհոյ, որում յանձն արարեալ էր զչարչարանս սրբոցն։ Իսկ նա իբրեւ լուաւ 'ի դահճացն արքունի, զահի մեծի հարաւ 'ի միտս իւր, թէ գուցէ և ինքն անձամբ 'ի ներքս լցցի. քանզի և ծանօթագոյն եւս էր առնն։ Հրամայեաց հանել 'ի բանդէ անտի զամենեսեան կապանօքն, և հեռացուցանէր 'ի քաղաքէ անտի երկոտասան պարսիկ հրասախաւ։ Եւ 'ի ծածուկ խօսէր ընդ մոգպետին, եթէ զի՞նչ պատճառք իցեն կապանաց նորա։ Եւ պատասխանի այրն և ասէ ցնա. Մի խօսիր ընդ խս 'ի ծածուկ, և մի լսեր զխորհուրդս լուսոյ 'ի մէջ խաւարի, զի բացան աչք իմ արդ. քանզի տեսի զլոյսն երկնաւոր։ Եթէ կամիս լինել խորհրդա-

կից կենաց, հարց ցիս յանդիման, և պատմեմ քեզ զոր տեսի զմեծամեծսն Աստուծոյ։

Եւ իբրեւ լուաւ 'ի նմանէ զամենայն, և ստուգեաց եւս վասն իւրոյ միաբանութեանն, եթէ ոչ քակտի 'ի սրբոցն հաւանութենէ, ոչ իշխեաց ձեռն արկանել 'ի նա, թէպէտ և ունէր հրաման յարքունուստ։ Այլ փութացաւ, և ինքն երթեալ պատմէր թագաւորին 'ի ծածուկ զամենայն որպէս զիարդ լուաւ 'ի նմանէ։

Եւ պատասխանի թագաւորն և ասէ ցԱնշառուհ. Մի՞ ոք ամենեւին լուիցէ զայդ 'ի քէն, մանաւանդ վասն տեսլեանն մեծի՝ որ երեւեալ է նմա, զի մի տգէտ մարդիկ երկմտեալ՝ բաժանեսցին 'ի մեր հաստատուն օրինացս։ Մի՞նչ մեք զայլս կամիմք հնազանդեցուցանել՝ թերեւս զոգիս դացեն, իբրեւ նոցա ոչ ինչ կարացաք առնել, մեր որ վարդապետ օրինացդ էին, զկնի նոցա մոլորութեանն խոտորեցան։

Եւ զա և այն եւս չար է մեզ քան զամենայն, զի ոչ դուշնաքեայ ոք խոտորեցաւ 'ի նոցա օրէնսն, այլ այր մի համակդեն, երեւելի ընդ ամենայն վերին աշխարհս։ Եթէ փայքարիմք ընդ նմա, նա տեղեկագոյն է քան զամենայն վարդապետս աշխարհիս. գուցէ 'ի հիմանէ խարխարեալ աւերէ զօրէնս մեր։ Եւ եթէ դատիմք զնա ընդ այլ չարագործսն, նա և այնպէս հուչակեալ է. լանէ համբաւ քրիստոնէութեան նորա, և մեծ անարգանք զկնի դէնիս ձգին։ Եւ եթէ սրով եւս վախճանեսցի, բազում են քրիստոնեայք 'ի կարաւանիս, ընդ ամենայն երկիր ցանեալ ցրուեսցեն զոսկերս նորա։ Սա կաւիկ ինչ էին մեզ անարգանք առ ամենայն մարդիկս, ուր մեծարեալ պատուէին ոսկերքդ նաճարացւոցդ. իսկ եթէ մոգացդ և մոգպետացդ զնոյն պատիւ կրեսցեն, մեք մեզէն լինիցիմք քակտիչք օրինացն մերոց։

Այլ այժմ իմ է քեզ երդումն տուեալ յանմահ դիսն. նախ զգաւնացեալ ծերն կոչեա առաջի քո։ Եթէ հաւանեսցի սիրով, և զղջացեալ ապաշաւեսցէ զկախարդութիւն նոցա, մեծարեսջիր զնա սիրով՝ պատուով ըստ առաջին կարգին. և մի՛ ոք գիտասցէ զթշնամանս նորա ամենեւին։ Այլ թէ ոչ հաւանեսցի, և ոչ կամեսցի անսալ բանից իմոց, յարուսջիր 'ի վերայ նորա բազում ամբաստանս յաշխարհէ անտի, զի վնասակար

գտցի յիրս արքունի. և աշխարհաւ փուրսիշ 'ի վերայ յարուաջիր, և շկոթակ արասջիր յայն կոյս քան զԱուրան և զՄակուրան. և անդ ընկեցեալ զնա 'ի վերապ մի, և ընկալցի զմահ թշուառութեան։ Այս զայլադենան փուլթանակի կարձեա 'ի կենաց աշխարհիս, զի մի դղրդեսցեն զօրէնս մերոյ աշխարհիս, Օ՛ի եթէ զձարտար մոգպետն այնպէս արագ աշակերտեցին, տգէտ մարդիկ զիմրդ կարասցեն կալ առաջի նոցա պատիր խաբէութեանն։

Ապրդ եկ նստաւ Պենշապուհ արտաքոյ բանակին յատենի, որպէս ասացաք, հեռի երկոտասան հրասախաւ։ Հարցանէր ցմոգպետն և ասէր. Իշխանութիւն առի վասն քո, ոչ միայն բանիւ հարցանել, այլ և ամենայն հարուածովք տանջանաց։ Մինչ չեւ ձեռն արկեալ է իմ 'ի քեզ, ընկալ զմեծարանս և արհամարհեա զանարգանս, և ինայեա 'ի պատուական ալիսդ։ Մոգ անդր 'ի բաց զքրիստոնէութիւնդ՝ զոր ոչ ունէիր 'ի բնէ, և դարձիր անդրէն 'ի մոգութիւնն, որպէս զի վարդապետ էիր բազմաց։

Այս պատասխանի երանելին և ասէ. Զաչեմ զքեզ, տէր, որ յառաջ իբրեւ զհարազատ եղբայր համարեալ էիր յաչս իմ, և այսօր թշնամի կատարեալ. մի ըստ առաջին սիրոյն զթար դու յիս, այլ կատարեա 'ի վերայ իմ զկամն չարութեան թագաւորին ձերոյ. և որպէս առեր իշխանութիւն 'ի վերայ իմ, դատեա զիս։

Յայնժամ իբրեւ ետես Պենշապուհ, եթէ առ ոչինչ զսպառնալիսն արքունի համարեցաւ, և ոչ ողոքանացն երեսս ինչ արար, և քան 'ի ծածուկ՝ յայտնի եւս կամէր զի խօսեսցի, կատարեաց 'ի վերայ նորա ըստ խրատուն արքունի։ Այս գաղտագողի ընկեցաւ 'ի հեռաւոր օտարութիւն, որպէս զիարդ և ուսաւ 'ի վարդապետէն, և արար։

Այս հրամայեաց եւս Պենշապհոյ երկուս եւս ընկերակիցս օգնականս յաւագ գործակալացն, զՆիկանն՝ որ էր մարզպետ արքունի, և զՈՒլան հանդերձապետ 'ի ձեռանէ մովպետան մովպետի։

Ապրդ երեքեան սոքա իւրաքանչիւր սպասաւորաք առին զսուրբն յայնմ անսպատէ, և փոխեցան նոյնչափ եւս հեռագոյն 'ի միւս եւս դժնդակ տեղի 'ի նմին գի-

Digitized by Google

ջերի։ Եւ զոք 'ի կարաւանէն անդր ոչ թողին տեսանել, ոչ 'ի Հայոց և ոչ յամենայն քրիստոնէից, և ոչ բնաւ յարտաքին հեթանոսաց։ Եւ սպասաւորքն՝ որ էին 'ի վերայ կապելոյն անդէն 'ի քաղաքին, հրամայեցին պահել զգուշութեամբ, զի զհետս նոցա մի՛ ոք գիտասցէ՝ ընդ որ տանիցեն 'ի մահու տեղի, մի՛ նոքա և մի՛ ամենեւին ոք 'ի մարդկանէ։

Բայց այր մի Լյուժիկ անուն 'ի զօրացն արքունի, որ 'ի ծածուկ ունէր զքրիստոնէութիւնն, և վիճակեալ էր 'ի դասս դահճացն, և կայր 'ի սպասու օրապահացն հանդերձ գործիական տանջանարանաւքն, եկն եմուտ 'ի մէջ զիշերին և խառնեցաւ 'ի դասս նախարարացն։ Առաջին դասն 'ի միջնոյն կարծէր զնա, և միջինն երրորդին, և երեքեանն միմեանց համարէին զնա. և ոչ ոք 'ի նոցանէ եհարց՝ եթէ դու ո՞վ ես ընդ մեզ, ոչ 'ի տերանցն և ոչ 'ի սպասաւորացն։

Իբրեւ հասին 'ի տեղի անապատին, որ ամենեւին անբոյս էր 'ի դալարւոյ, և այնպէս էր ապառաժ դրժնեայ, զի և ոչ նստելոյ անգամ տեղի գտաւ անդ նոցա, իջին հեռագոյն նախարարքն երեքեան, և հրամայեցին դահճացն իւրեանց կապել զոտս և զձեռս նոցա։ Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա, և երկու երկու ընդ ապառաժ տեղիսն քարշելով, զի ամենեւին խայծ ոչ մնաց 'ի մարմնոս երանելեացն։ Եւ ապա լուծին և ածին 'ի մի տեղի։

Լուսերի իմն նոցա այսպէս, եթէ կակղեցաք զխրատութիւն նոցա, և հնազանդեցուցաք զբիրտ ապստամբութիւն նոցա. և արդ զինչ և խօսիցիմք, անսայցեն բանից մերոց, և առնիցեն զկամն թագաւորին, և ապրեալ լիցին յանհնարին տանջանացն։ Եւ զայն ոչ կարացին քաջ իմանալ, եթէ իբրեւ զքաջ զինուորս վառեցին զնոսա, և 'ի հրահանգս կրթութեան վարժեցին զնոսա. և իբրեւ զգաղանս վայրենիս, արիւնախանձս ուսուցին զնոսա։ Եւ եթէ ունէին սակաւ ինչ կասկած յառաջագոյն, հայեցեալ նոցա 'ի չարաչար վերս մարմնոյն իւրեանց, զառաջին երկիւղն 'ի բաց մերժեցին։ Կական իբրեւ արբեալք անպգայք զմիմեանս ելանել 'ի բանից պատասխանիս. և փութային իբր ծարա-

ւիք յաղբիւր, եթէ ո՛ նախ վաղ զիւր արիւնն հեղցէ յերկիր։

Եւ մինչ դեռ յայսմ պատրաստութեան էին սուրբքն, խօսել սկսաւ ընդ նոսա Պենշապուհ և ասէ. Լաբայ յղեաց զիս առ ձեզ. ամենայն աւեր աշխարհին Հայոց, ասէ, և կոտորածք զօրացն՝ որ հասին 'ի վերայ, 'ի ձէնջ եղեն փնասքն ամենայն. և բազում նախարարք՝ որ այժմ կան կապանօք չարչարեալ, վասն ձերոյ յամառութեանդ եղեւ այդ ամենայն։ Եւ յլ և արդ եթէ կամիք ինձ լսել, ասեմ ձեզ. որպէս եղերուք պատճառք ամենայն չարչարանաց մնհուն, այսօր լերուք պատճառք կենաց ձերոց։ Եւ նախարարքն՝ որ կան 'ի կապանս, 'ի ձեռն ձեր է իշխանութիւն արձակել զնոսա, և աւեր աշխարհին ձերոյ ձեօք չինի, և բազումք որ վարեալ են 'ի գերութիւն, անդրէն դառնան։

Եհա դուք ձերոյին աչօքդ տեսէք այսօր, եթէ զորպիսի այր տոհմիկ, զոր Թագաւորն ինքնին յականէ յանուանէ ճանաչէր վասն մեծի գիտութեան օրինացս մերոց, և կատարեալ էր յամենայն 'ի դեռնիս և ամենայն մեծամեծաց սիրելի, և գրէ թէ բոլոր աշխարհս կախեալ էր զնմանէ. և վասն զի անարգեաց զդեռնիմազդեղն, և պատրեցաւ 'ի ձեր տխմար գիտութիւնդ, ոչ ինչ խնայեաց Թագաւորն 'ի մեծ պատիւ նորա, այլ իբրեւ զգերի մի զանաշխարհիկ չիօթակ արարի զնա յայնչափ օտարութիւն հեռաւոր, զի ընդ երթալն իսկ ոչ ժամանէ 'ի տեղի պատուհասին իւրոյ։

Եւ դարձ եթէ 'ի բուն դայեկութիւնն վասն պատուական օրինացն ոչ խնայեաց 'ի նա, որչափ և առաւել 'ի ձեզ յօտարաշխարհիկսդ, որ մնհապարտ իսկ էք յիրս արքունի։ Եւ չիք ինչ ձեզ այլ հնար կենաց, բայց եթէ երկիր պագանիցէք արեգական, և կատարիցէք զկամն Թագաւորին, որպէս և ուսոյց զմեզ մեծն Օրազդեշտն։ Եւ եթէ զայդ առնէք, ոչ միայն արձակիք 'ի կապանացդ և ապրիք 'ի մնհուանէ, այլ և մեծամեծ պարգեւօք յուղարկիք յաշխարհն ձեր։

Յառաջ մատուցեալ Պեւոնդ երէց և Թարգման կացոյց զՍահակ եպիսկոպոս՝. Օ՛իմրդ լուիցուք, ասէ, երկդիմի հրամանացդ քոց. ահա զերկրպագութիւնդ նախ ետուր արեգական, և զկատարումն երկրպագու-

թեան 'ի կամն թագաւորին ձգեցեր. մեծարեցեր զարեգակն՝ յառաջ ձայնելով զանուն նորա, և մեծացուցեր զթագաւորն աւելի քան զարեգակն. և յայտ արարեր՝ եթէ առանց կամաց իւրոց սպասաւորէ արեգակնն ապարատոց, իսկ թագաւորն 'ի կամն ազատութեանն իւրոյ՝ զոր կամի աստուածացուցանել, և զոր կամի ծառայեցուցանել. և ինքն 'ի ձշմարտութեանն վերայ չեւ է հասեալ։ Մի՝ ի խօսիր ընդ մեզ իբրեւ ընդ տղայս, զի հասակաւ կատարեալ եմք, և գիտութեան ոչ եմք անտեղեակ. ուստի սկսար դու, այսր տաց քեզ պատասխանի։

Այսպէս զմեզ եղիր պատճառս աւերածոյ աշխարհին մերոյ և հարուածոց զօրացն արքունի. մեր օրէնքն զմեզ այդպէս ոչ ուսուցանեն, այլ յոյժ պատուել հրամայեն զերկրաւոր թագաւորս, և սիրել զնոսա յամենայն զօրութենէ մերմէ, ոչ իբրեւ զմարդ ոք դուզնաքեայ 'ի մարդկանէ, այլ իբրեւ Աստուծոյ՝ ձշմարիտ կալ 'ի ծառայութեան. և եթէ զրկիմք ինչ 'ի նոցանէ, փոխանակ ընդ երկրաւորիս զերկնիցն խոստացաւ մեզ զարքայութիւն։ Այլ ոչ միայն զարքանեկութիւն հպատակութեան պարտիմք հարկանել նոցա, այլ և մահու չափ զանձինս 'ի վերայ դնել սիրոյ թագաւորին։ Այլ որպէս յերկրի ոչ ունիմք իշխանութիւն փոխանակել զնա ընդ այլում տեառն, նոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն փոխանակել զձշմարիտ Աստուածն մեր ընդ այլում, որ չիք Աստուած բայց 'ի նմանէ։

Այլ ասեմ՝ քեզ՝ որում սակաւիկ մի տեղեկագոյն ես։ Մի՞վ 'ի քաջ զօրականէն զկնի մնանիցէ 'ի պատերազմ. և եթէ զայս արասցէ, ոչ քաջ անուանի նա, այլ յոյժ վատ։ Այլ կամ ո՞ յիմաստուն վաճառականաց ըզպատուական մարգարիտն փոխանակիցէ ընդ անարգ թրուշայի, բայց եթէ յիմարեալ իցէ տգիտութեամբ, որպէս և ձեր մոլորութեան առաջնորդքդ։

Մի՝ իայն զտեր զմեզ 'ի բաղում առաքինեացն մերոց, և կամիս գողութեամբ աւերել զամուրս խորհրդոց մերոց. չեմք մեք միայն՝ որպէս և դուդ կարծես. չիք տեղի ունայն, ուր չիցէ Քրիստոս թագաւորն մեր. բայց միայն այնոքիկ ենք թափուր 'ի նմանէ, որ իբրեւ զքեզ և զաղրադեւ իշխանն քո, որք ուրացեալ էք 'ի նմանէ։

Digitized by Google

Օ՛ի թէ զինուորք աշխարհին մերոյ, որ աշակերտեալքն էին մեօք 'ի Քրիստոս, առ ոտն հարին զահագին հրամանս Թագաւորին ձերոյ, և զմեծամեծ պարգեւս առ ոչինչ համարեցան, և զհայրենի տերութիւնն 'ի բաց կողոպտեցան, չխնայեցին 'ի կին և յորդիս և 'ի գանձս մարմնաւորս կենաց աշխարհիս, նա և ոչ զարիւնն իւրեանց ածին ինչ զմտաւ վասն սիրոյն Քրիստոսի, այլ զերկրպագուս արեգականն՝ որ ձեր վարդապետք էին, չարաչար հարուածովք սատակեցին զնոսա, և մեծամեծ չարիս հասուցին 'ի վերայ զօրացն ձերոյ, և բազումք 'ի նոցանէ անկանէին 'ի նմին պատերազմի, և այլք մատնեցան 'ի պէսպէս փորձութիւնս, և կէսքն ընկեցան 'ի հեռաւոր օտարութիւն, և եւս բազմագոյնք վարեցան 'ի գերութիւն։ Այլ ամենեքին նոքա յառաջեցին քան զմեզ յաղթայութիւնն Աստուծոյ, և խառնեալ են 'ի գունդս վերին հրեշտակացն, և ցնծան 'ի պատրաստեալ յուրախութիւնսն, յոր հասեալ խառնեցաւ երանելի այրն, զոր դու ասես շկօթակ արարի։ Երանի տամ նմա, և երանի երկրին՝ ընդ որ նայն անցանիցէ, և տեղւոյն՝ ուր նայն վախճանեսցի. ոչ միայն զաղքունեօք ձերովք անցանէ պատուականութեամբ, այլ և զերկնից լուսաւորքդ՝ որում դուքդ երկիր պագանէք։

Այս պատասխանի Մովսէս հանդերձապետ և ասէ ցնոսա. Աստուածքն բարերար են, և երկայնամտութեամբ ջանան ընդ ազգի մարդկան, զի գիտասցեն և ծանիցեն զիւրեանց փոքրկութիւնն և զնոցա մեծութիւնն, և վայելեսցեն 'ի պարգեւս աշխարհիս, զոր տուեալ է յիշխանութիւն 'ի ձեռս Թագաւորի, և 'ի բերանոյ նոցա ելանեն հրաման մահու և կենաց։ Այլ ձեզ ոչ է իշխանութիւն այդպէս ընդդիմանալ կամաց նոցա և ոչ առնուլ յանձն զերկրպագութիւն արեգական, որ ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս, և ջերմութեամբ իւրով հասուցանէ զկերակուր մարդկան և անասնոց. և վասն հասարակաբաշխ առատութեանն և անաչառ մատակարարութեանն անուանեցաւ ՄՀՀր աստուած, զի չիք 'ի նմա նենգութիւն և անիմաստութիւն։ Վասն որոյ և մեք երկայնամիտ լինիմք 'ի վերայ տգիտութեան ձերոյ. քանզի չեմք մարդատեացք իբրեւ զդաղանս շաղղակերս և ա-

գիւնարքուս։ Խնայեցէք յանձինս ձեր, և մի խառնեսք զմեզ ակամայ յաբիւնդ ձեր։ Լոռղեք անդր զառաջին յանցանս ձեր, և զառաջիկայ իրս ուղղեցէք. զի և այլոցն վասն ձեր լիցի ողորմութիւն 'ի մեծ Թագաւորէն։

Զ. այլ ետ պատասխանի Սահակ եպիսկոպոս և ասէ. Իբրեւ ուսեալ և յոյժ խրատեալ՝ զգեղեցիկ հոգ յանձին ունիս շինութեան աշխարհի և փառաց Թագաւորին. բայց զայս կարի տգիտաբար ուսուցանես, զի աստուածս քաղուն խոստովանիս, և զմի կամն ոչ ասես ամենեցուն։ Այլ Թէ վեհքն առ միմեանս մարտուցեալ են, մեք խոնարհագոյնք քան զնոսա զիարդ կարասցուք հաւանել բանից քոց։ Մի՛ խաբանեա զՀուր և զկրակ, զի ուսցուք 'ի նոցանէ զխաղաղութիւն. կոչեա զարեգակն 'ի տուն որպէս կրակ, և եԹէ նմա ոչ մարԹի գալ՝ զի մի աշխարհ 'ի խաւարի մնասցէ, յղեա զդաստա նա, զի ուսցի 'ի նմանէ զանկարօտութիւնն։

Այլ եԹէ մի է բնութիւն աստուածոցն քոց, հաւասարեցեն առ միմեանս զուգութեամբ. լիցի անկերակուր կրակ իբրեւ զարեգակն, և մի խափանեսցին ծառայքն արքունի 'ի ծախս ուռՀկաց սորա։ Զ. Դրդ մինդ անյագ ուտէ, և հանապազ մեռանի. և մինն որ չուտէ, առանց օդոյն նուազի լոյս ՃառագայԹից իւրոց. ցրտանայ ձմերայնի, և սառուցանէ զամենայն դալարաբոյսս խոտոցն. տոԹանայ յամարայնի, և հրակէզ առնէ զամենայն կենդանիս։ Այլ որ ինքն յար 'ի փոփոխման կայ, ոչ կարէ հաստատուն կեանս ումեք շնորհել։ Այլ քեզ ոչ կարեմ մեղադիր լինել. որոյ ոչ տեսեալ է զմեծ Թագաւորն, պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն. իսկ եԹէ ոք զայս 'ի հմուտ գիտնոցն արասցէ, վաղվաղակի մահ 'ի վերայ հրամայեն։

Զ. այլ վասն արեգական, եԹէ կամիցիս ուսանել, զՀշմարիտն ասացից քեզ։ Մ՝ան է նա աշխարհիս ա-ռաքաւոր, 'ի բաղում մասանց մի մասն որոշեալ է. կէսքն 'ի վերոյ են քան զնա, և կէսքն 'ի ներքոյ նորա։ Զ. է նա առանձին սուրբ յստակ լուսով, այլ 'ի ձեռն օդոյն հրամանաւն Ստուծոյ տարածանէ զՃառագայԹս իւր, և հրային մասամբ ջերուցանէ զամենայն գոյացեալս 'ի ներքոյ իւրոյ կայանին։ Իսկ վերինքն ոչ ինչ մասն ունին 'ի նորա ՃառագայԹից. քանզի իբրեւ յա-

Digitized by Google

ման ինչ արկեալ է զլոյսն 'ի գունդ նորա, և 'ի վայր կոյս հեղու բերանացեալ՝ առ 'ի պէտս ներքնոցս վայելչութեան։ Եւ զոր օրինակ նաև մի թռուցեալ 'ի վերոյ ծովային ջուրցն բազմութեան, անգիտութեամբ դնայ զուղեւորութիւնն 'ի ձեռն հմուտ և ճարպարն նաւապետին, այսպէս և արեգակն 'ի ձեռն կառավարին իւրոյ ունի զփոփոխմունս շրջանին իւրոյ տարեւոր ժամանակին։

Եւ որպէս այլ մասունք աշխարհիս հաստատեալ են վասն մեր կենացն, և զնա իբրեւ զմի յայլոց մասանց տուեալ է մեզ յառաջնորդութիւն լուսոյ, որպէս զլուսին և զաստեղս և զօդս յարածումս և զամբս անձրեւաբերս. նոյնպէս և յերկրիս մասանց ծով և զգետս և զաղբիւրս և զամենայն պիտանացու ջուրս, նոյնպէս և զցամաքայինս ամենայն պիտոյիւք իւրովք։ Ստուած և զմի ոք 'ի սոցանէ չէ արժան անուանել. և եթէ ժպրհիցի ոք ասել, զանձն տգիտաբար կորուսանէ. և աստուածանուն մեծարելով զնոսա՝ նոքա ոչ ինչ օգտեցան։ Այլ՝ իոյ իշխանութեան երկու թագաւորք ոչ լինին. և եթէ մարդ զայդ քեզ յանձն ոչ առնու, քանզի եւս հեռի է առ 'ի Յ՝ստուծոյ բնութենէն այդպիսի կարգ շփոթեալ։

Լ՝ուրդ եթէ կամիս ուսանել զՀնմարիսն, քաղցրացս զդառնութիւն սրտիդ, և բաց զաչս մտացդ, և մի յարթնութեան կուրութեամբ ընդ խաւար գնայցես. որ անկեալ ես 'ի խորխորատ, և զամենեսեան կամիս առ քեզ ձգել։ Եւ եթէ քոյքն գան զկնի մոլար վարդապետութեանդ՝ որ ոչ տեսանեն և ոչ իմանան, մի և զմեզ կարծեր դոյն օրինակ. քանզի բաց են աչք մտաց մերոց և սրատեսիլ եմք։ Այլ՝ արմնոյս աչօք զարարածս տեսանեմք, և իմանամք զսա յայլմէ արարեալ. և ամենեքեան են ընդ ապականութեամբ։ Եւ՝ սակ արարիչն ամենեցուն աներեւոյթ է 'ի մարմնաւոր աչաց, այլ մտաց իմանալի զօրութիւն նորա։

Եւ վասն զի ետես զմեզ 'ի մեծի տգիտութեան, և ողորմեցաւ մերում անուսումնութեանն, յորում և մեք իբրեւ զձեզդ երբեմն զերեւելիսս կարծէաք արարիչ և գործէաք զամենայն անառակութիւնս, վասն այնորիկ առ սէր իւր եկն մարմնացաւ 'ի մարդկանէ, և ու-

ասց մեզ զաներեւցեալ աստուածութիւնն իւր։ Զի զի բարձրացոյց զինքն 'ի խաչն կախաղանի, և զի մարդիկ զՀետ լուսաւորացոյց մոլորեցան, մերկեաց յարեգականէ զլոյս ճառագայթիցն իւրոց, զի եղեցի խաւար սպասաւոր մարդկութեան նորա. զի որ իբրեւ զձեզ անարժանք իցեն, մի տեսցեն զկեանս իւրեանց 'ի մեծի անարգութեան։ Որպէս և այսօր որ ոչ խոստովանի զխաչելեալն Աստուած, նոյն խաւար մածեալ է զոգւով և մարմնով նորա. որպէս և դու իսկ այսօր 'ի նմին խաւարի կաս, և զմեզ դեռ եւս չարչարես։ Պատրաստ եմք ըստ օրինակի Տեառն մերոյ մեռանել. որպէս զիարդ և կամիս կատարեա զկամն դառնութեան քո։

Յայնժամ իբրեւ հայեցաւ 'ի նոսա անօրէնն Դեն-շապուհ, և ետես 'ի մեծի ուրախութեան զուարթագին զամենեսեան, գիտաց եթէ ոչ գնան առ նոսա բանք սպառնալեաց և ողբանաց։ Հրամայեաց զմի ոմն 'ի կրբսերագունիցն յառաջ մատուցանել, երեց մի Աբրէն անուն, վասն որոյ յառաջ կասկածն իսկ եղեւ սրբոցն։ Կապեցին զոտն և զձեռն, և մեծաւ ուժով պրկեցին, մինչեւ Ճարճատիւն հատաւ ամենայն ջղացն. և այնպէս կայր մեծ ժամն յանհնարին պրկոցն։

Լքաց սուրբն զբերան իւր և ասէ. Զհա շրջեցան զինեւ շունք բազումք, և ժողովք չարաց պաշարեցին զիս. ծակեցին զոտս իմ և զձեռս իմ, և փոխանակ բերանոյ իմոյ աղաղակեցին ամենայն ոսկերք իմ։ Ելուր ինձ, Տէր, և լուր ձայնի իմում, և ընկալ զոգի իմ 'ի ժողովս սուրբ զօրականին քո, որ երեւեցաւ նորակերտ դաստակերտին քոյ։ Լաս որ կրսերս եմ յամենեսեան, ողորմութիւն քո գթացեալ յառաջեցոյց զիս։

Լու զայս իբրեւ ասաց, ոչ եւս կարէր բանալ զբերանն յանհնարին պրկոցաց գեղարանին։ Լու անդէն վաղվաղակի դահիճքն հրաման առեալ յերից նախարարացն՝ սրով հատանել զպարանոց երանելոյն, և ընկեցին զմարմինն 'ի խորխորատ մի ցամաք։

Լու անդէն 'ի տեսլեանն սկսաւ խօսել Դեռնշապուհ ընդ եպիսկոպոսին և ասէ. Յորժամ եկի ես յաշխարհն Հայոց՝ զտարի մի և զվեց ամիս եհաս շրջել ինձ անդ. ոչ յիշեմ ես ամենեւին՝ եթէ բան մի տրտունջ յաւմեքէ լուայ վասն քո, նոյնպէս և աւաւել վասն Յով-

սեփայ. զի դա իսկ էր իշխան ամենայն քրիստոնէից, և հաւատարիմ յամենայն իրս արքունի։ Այս և զոր մարդպան աշխարհին լեալ էր յառաջ քան զիմ երթալն, մեծապէս գոհ էր զառնէս զայսմանէ. և ես ինձէն աչօք իմովք տեսի, զի որպէս հայր հաստատուն հանրեալ էր ամենայն աշխարհին, և անաչառութեամբ սիրէր զմեծամեծսն և զփոքունս։

Արդ փոխանակ ընդ ձեր՝ ես աղաչեմ զձեզ. խնայեցէք 'ի պատուական անձինս ձեր, և մի մատնիք 'ի մահ չարչարանաց ըստ առաջնոյն կարգի, զոր տեսէք աչօք ձերովք։ Զանզի թէ 'ի դոյն միտս յամառութեան կայք, և իմ եղեալ է 'ի մտի իմում բազում չարչարանօք կարձել զձեզ 'ի կենաց ձերոց։ Այս գիտեմ, զի 'ի հրապոյրս առնդ այդորիկ ելեալ էք դուք. քանզի ինքն ախտացեալ է մարմնով, և ձեռնարկութեամբ բժշկաց չիք գտեալ առողջութիւն. և հիւանդոտ կենօք ձանձրացեալ է, և փափագէ 'ի մահ քան 'ի կեանս։

Զ այս ետ պատասխանի սուրբն Յովսէփ և ասէ. Գոովութիւնդ՝ զոր ետուր դու նախ եպիսկոպոսիդ և ապա ինձ, յիրաւի արարեր և ըստ կարգի պատուեցեր վասն ալեացդ, այդպէս իսկ արժան է։ Այլ ձշմարիտ ծառայից Աստուծոյ ոչ է օրէն դիմադարձ լինել երկրաւոր իշխանաց, և ոչ զոք 'ի ժողովրդոց տրտունջ առնել վասն մարմնաւոր զօշաքաղութեան. այլ ցածութեամբ և հեզութեամբ ուսուցանել զպատուիրանս Աստուծոյ, և առանց խարդախ իմաստութեան խաղաղասէր լինել առ ամենեսեան, և անաչառ վարդապետութեամբ առ մի Տէրն արարածոց առաջնորդել բոլորեցունց։

Այլ վասն առնս այսորիկ հրապուրանաց՝ զոր ասացեր, և զայդ ոչ ստեցեր, այլ կարի զձշմարիտն ասացեր։ Զի ոչ իբրեւ զօտար ոք հրապուրէ զմեզ, և ոչ իբրեւ զպատրող ոք խաբեբայ մոլորեցուցանէ զմեզ, այլ յոյժ սիրէ զմեզ։ Զանզի մի է մայր մեր եկեղեցի՝ որ երկնեացն զմեզ, և մի է հայր մեր սուրբ Հոգին՝ որ ծնաւ զմեզ. զիարդ համահաղք և միոյ մօր որդիք երկպառակք լինիցին, և ոչ միաբանք։ Զոր քեզ թուին՝ թէ հրապոյրք իցեն, մեր 'ի տուէ և 'ի գիշերի դոյն խորհուրդ էր՝ զի անքակ ունիցիմք զկենաց միաբանութիւնս։ Իսկ ետեղ սա ձանձրացեալ իցէ՝ ելանել յախտաւոր

մարմնոյս, առաւել եւս մեք ամենեքեան. զի չէք ոք ա-
մենեւին 'ի ծնունդս կանանց, որ ունիցի զմարմինս ա-
ռանց ցաւոց ջարչարանաց։

Յետ պատասխանի Դենշասպուհ և ասէ։ Ո՞այդ ոչ
գիտէք, որչափ երկայնամիտ լինիմ ես 'ի վերայ ձեր.
այս ոչ հրամանաւ արքունի է այսչափ երկայնաբան լի-
նել ընդ ձեզ պայքարաւ, այլ յիմանէ քաղցրութենէ
թողացուցի ձեզ. զի չեմ իբրեւ զձեզ անագորոյն, զի
անձանց ատելի էք և այլոց թշնամիք։ Իմ զի աղ և հաց
կերեալ է յաշխարհին ձերում, գութ և սէր ունիմ
ընդ աշխարհն ձեր։

Յետ պատասխանի Դեւոնդ երէց և ասէ. Որ առ
արտաքինսն գութ և սէր ունի, զպատուիրանն Աստու-
ծոյ կատարէ, այլ պարտի և յիւր ոգիսն ինայել. զի
չեմք անձանց տեարք, այլ է որ համարս ինդրէ 'ի մէնջ
և վասն արտաքնոց և վասն ներքնոց։ Աւյլ որ ասացեր՝
յինէն անասամ ձեզ և ոչ հրամանաւ թագաւորին, եթէ
դուք տուր էք անցանել ըստ հրամանաւ թագաւորին
ձերոյ, զայդ բարիոք առնէք, զի աւերիչ աշխարհի է և
պատակիչ անմեղ մարդկան, բարեկամ սատանայի և
թշնամի Աստուծոյ։ Աւյլ մեք ոչ կարեմք անցանել ըզ-
հրամանաւ մերոյ թագաւորին, և ոչ զանանց կեանսն
մեր կարեմք փոխանակել ընդ ապականացու պատրանս
աշխարհիս։

Աւյլ վասն իմ զի ասացեր, չգտեալ զառողջութիւն
'ի բժշկաց, սիրէ զմահ քան զկեանս, այդ բանք ոչ այ-
նոսիկ են՝ որ տեսանեն զամենայն չարչարանս աշխար-
հիս։ Աղէ ցածո գքեզ սակաւիկ մի 'ի զայրագին սրրտ-
մտութենէդ, և եկ զհետ ճշմարիտ բանից իմոց, և հայ-
եաց կարգաւ ընդ իրս աշխարհիս։ Ո՞ոք 'ի մահկանա-
ցուացս ունի կեանս անտրտունջս. ոչ ահա ամենայն լի
են ախտիւք, է որ 'ի ներքոյ, և է որ արտաքոյ. ցուրտ
և տօթ, քաղց և ծարաւ և ամենայն աղքատութիւն
կարօտութեան։ Աւրտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտա-
կութիւն, գէշ պղծութիւն անառակ յարձակմամբ. 'ի
ներքոյ՝ ամբարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն,
անդարձ մոլորութիւն 'ի կամաւոր ազատութենէն։

Այլ դու որ զբժիշկս խոտեալ անարգեցեր, թէ չէք
իմ 'ի նոցանէ գտեալ զառողջութիւն, չեն ինչ զար-

Digitized by Google

մանք, վասն զի մարդիկ ՝ն նոքա. է ցաւ՝ որում գտա-
նեն հնարս առողջութեան, և է՝ որ ապատամբէ ՝ի հնա-
րից նոցա. վասն զի ամենեքեան եմք մահկանացուք,
այն որ բժշկէն և որ բժշկին։ Այլ երանի թէ և դուք
ըստ բժշկական արուեստին բերէիք զնմանութիւն. զի
ոչ փոքր է ճշմարտութիւն նոցա բժշկութեանն։ Բան
զի յորժամ տեսանեն նոքա զոք հիւանդացեալ, ոչ յա-
պաղէն երթալ առ նոսա, այլ փութացեալ հնարին մա-
տուցանել զառողջութիւն։ Անաւանդ եթէ յարքու-
նիս մի ոք ՝ի սիրելեաց թագաւորին ախտանայցէ, և հա-
սեալ ՝ի մեծ հրապարակն՝ տեսանիցէ զբաղմութիւն
պատուաւորացն և զառողջութիւն գեղեցիկ երիտասար-
դացն, և եւս ՝ի ներքս մատուցեալ ՝ի սրահն արքու-
նի, և անդ տեսանիցէ զամենայն սպասաւորացն զչքնաղ
և զսքանչելի տեսիլն, ոչ ինչ զարմանայ ընդ հրաշա-
կերտ տեսիլն։ Այս և եթէ գահոյք ականակապք իցեն
և համակ ոսկեղէնք՝ յորոց վերայ հիւանդն անկեալ
դնիցի, չէ ինչ նմա փոյթ զայնմ ամենայնէ։ Այլ ՝ի
բաց հրամայէ առնուլ զոսկէհուռ վերարկուսն, և ձեռն
՝ի ներքս տարեալ՝ զնոսա զամենայն մարմինն, եթէ ջերմ
իցէ բնութիւնն, և եթէ սիրտն ՝ի տեղւոջն հանդարտ
կայցէ, և կամ թէ լեարդն կակուղ իցէ, և կամ թէ
շարժք երակացն յարմար իցեն. և ըստ նմին զգարման
բժշկութեանն առնիցէ՝ ընորհելով նմա զառողջութիւն։

Իսկ արդ եթէ մարդկային բժշկութիւնն այսպիսի
գիտէ քամահել զամենայնիս, և միայն զիւր արուեստն
յառաջ մատուցեալ՝ զգործն կատարէ, որչափ եւս ա-
ռաւել ձեզ արժան էր, որ զբոլոր աշխարհս ունիք յիշ-
խանութեան մեծի, հոգ յանձին տանել՝ նախ զհոգիսդ
բժշկել յամենայն ախտալից մոլորութեանց աշխար-
հիս, և մարմնովք իսկ կային ամենեքեան ձեզ ՝ի ծա-
ռայութեան։ Արդ այժմ զի դուք տգիտացարուք, և
զանմահ հոգիսդ մահկանացու արարէք յանշէջ հուր
գեհենին, մարմնովդ՝ եթէ կամիք և եթէ ոչ կամիք՝
ախտացեալ էք յախտաւորութիւն անառողջութեան.
և զմեզ նախատէք մարմնոյ ցաւովք, որ ոչ ՝ի կամն մե-
րոյ ազատութեան է, այլ որպէս դիպեցաւ ՝ի բնու-
թեանս մարմնոյ իւրաքանչիւր մարդոյ։

Եւ Քրիստոս ճշմարիտ Աստուած կենդանի և կեն-

դանարար՝ 'ի կամն իւրոյ բարերարութեան եղեւ բը-
ժիշկ հոգւոց և մարմնոց, և նա ինքն 'ի ցաւս չարչարա-
նաց իւրոց բժշկեաց զամենայն ազգս մարդկան։ Այս եւս
խանդաղատագոյն գթացեալ, վերստին ծննդեամբն ծը-
նեալ զմեզ յառողջութիւն՝ անցաւս և անվէրս, և 'ի
ծածուկ հարուածոց զհին ծակոտուածն վիշապին ող-
ջացոյց. և արար զմեզ անապիս և անարատս հոգւով և
մարմնով, զի ի ցեմք բանականէից հրեշտակաց և զօրք
երկնաւոր թագաւորին մերոյ։ Այս քո զայս ոչ գիտա-
ցեալ, և ոչ վայելեալ յերկնաւոր պարգեւն Աստու-
ծոյ, և ոչ եւս այլ կամիս ուսանել 'ի մէնջ. այլ և զմեզ
եւս վրիպեցուցանել կամիս, որում չկք հնար, և մի
այլ լեցի, և ոչ կարես իսկ առնել։

Այլ վասն իմոյ ախտակից մարմնոյս ասացից քեզ
կարճառօտս։ Անդամ և ուրախ եմ յորժամ տեսա-
նեմ զմարմինս իմ չարչարեալ. գիտեմ, զի զօրանայ
յիս առողջութիւն հոգւոյս իմոյ։ Անաւանդ զի ու-
նիմ ինձ գրաւական զմեծ վարդապետն հեթանոսաց,
որ 'ի ցաւս մարմնոյ անձինն մխիթարեր, և 'ի կոփումն
աստանդական մարմնոյ պարծէր, և ասէր. Օ՛յ ի եթէ
տնկակիցք եղայք նմանութեան մահու նորա, որչափ եւս
առաւել լիցուք հաղորդք յարութեան նորա։ Այլ դու
որ ունիս իշխանութիւն 'ի վերայ մեր, դատես զմեզ
ըստ չարութեան կամաց քոց։ Ցեմք ինչ զանգիտելոց
յահագին յահաւոր սպառնալեացդ քոց, և ոչ երկիւ-
ղած 'ի դառն մահուանէն՝ զոր ածելոց ես 'ի վերայ մեր։

Յայնժամ մեկուսացոյց սակաւիկ մի զերանելին 'ի
միմեանց, և միայն ասէ ցսուրբ եպիսկոպոսն. Զոմոլ-
թիւն, զոր ետու քեզ յառաջ, ոչ իմացար պատիւ ան-
ձին քոյ։ Զիշեցուցանեմ քեզ զչարիսն, զոր գործեցեր
դու, զի անձամբ զանձն քո արասցես մահապարտ։ Ա՛ր-
դարեւ դու աւերեցեր զատրաշանն յուրշտունիս, և կամ
զկրակն դու սպաներ. նա և որպէս լուայ և ստուգեցի,
թէ և զմոգան դու չարչարեցեր, և սպան պաշտամանն դու
տարար. ապդ եթէ ապդարեւ դու առեր, պատմեա ինձ։

Այս պատասխանի սուրբն և ասէ. Ո՞ՀՀ կամիս ու-
սանել զայդ յինէն, եթէ յառաջագոյն գիտէիր։ Զեն-
շապուհ ասէ. Այլ է համբաւ, և այլ է ճշմարտու-
թիւն։ Եպիսկոպոսն ասէ. Որպէս կարծեսդ ասա ինձ։

Digitized by Google

Դենշապուհ ասէ. Իմ լուեալ էր, եթէ զամենայն վը-
նասն յոբշտունիս դու արարեր։ Եպիսկոպոսն ասէ. Եւ
զի այդպէս հաւատեաւ 'ի վերայ հասեր, կրկին զի
հարցանես։ Դենշապուհ ասէ. Ո՞չ մարիսան 'ի քէն
կամիմ ուսանել։ Եպիսկոպոսն ասէ. Ոչ զոգուտ կենաց
քոց կամիս ուսանել յինէն, այլ արեան իմոյ ցանկան
միտք քոյ։ Դենշապուհ ասէ. Ընդ դազան արիւնա-
խանձ, այլ վրէժինդիր եմ աստուածոյն անարգութեան։
Եպիսկոպոսն ասէ. Ո՞ տարերս համերս աստուածս
անուանես, և զպատկերակիցս քո մարդիկ խողխողել
կամիս. տալոց հատուցանելոց ես վրէժ թագաւորաւն
քով յանկաշառ ատենին Աստուծոյ։ Եւ զոր քո չար
կամօքդ կամիս լսել յինէն, զայդ ես ասեմ քեզ։ Ա-
տուն արդարեւ ես աւերեցի, և զմոգան ես չարչարեցի
գանիւ, և զկահ պղծութեան՝ որ 'ի տանն էր՝ 'ի ծովն
ես ընկեցի։ Այլ զկրակ ոչ կարէ սպանանել. քանզի
ամենիմաստ արարիչն արարածոց հոգ խնամոյ տարեալ
յառաջագոյն՝ անմահս հաստատեաց զընութիւն չորից
նիւթոցս։ Այլ սպան դու զոգ եթէ կարես, և կամ ա-
պականեա զհող՝ զի մի բուսուցցէ զդալարն, փողոտեա
զգետ՝ զի մեռցի։ Եթէ զայդ երեսին կարես առնել, ա-
պա և զկրակ կարես սպանանել։

Այլ եթէ Ճարտարապետն մեր միաբանեաց զչորից
տարերացդ զանքակութիւն, ահա և գտանի բնութիւն
հրոյ 'ի քարինս և յերկաթս և յամենայն տարերս զընդ-
նելիս, ընդէ՞ր ստութեամբ զրպարտես զիս, թէ դու
զկրակ սպաներ։ Այլ զի դու սպան զջերմութիւն արեգա-
կան, զի ունի նա մասն հրոյ. և կամ տուր հրաման,
զի մի թափեսցի հուր յերկաթոյ։ Որեւանի այն՝ որ
շնչէն և շարժի և գնայ և ուտէ և ըմպէ. ե՞րբ տեսեր
դու զկրակ գնայուն կամ խօսուն կամ գիտուն։ Այլ
զոր կենդանի քո չէ տեսեալ, մեռեալ խոստովանիս։
Վասնի անթողլի է ամբարշտութիւնդ ձեր քան զամե-
նայն հեթանոսաց, որ գիտնագոյնք են քան զձեզ. որ
թէպէտ և 'ի Ճշմարիտն Աստուծոյ մոլորեալ էն, զան-
խօս տարերս Աստուած ոչ խոստովանին։ Այլ եթէ
դու անգիտութեամբ կորնչելի ասես զընութիւն հրոյ,
ոչ առնուն քեզ յանձն արարածքս. քանզի խառն է
դա յամենեցունց։

Digitized by Google

Դենշապուհ ասէ. Այլ ինչ մտանեմ ես ընդ քեզ 'ի պայքար քննութեան վասն բնութեան արարածոցս. այլ խոստովանեա ինձ, եթէ դու անցուցեր զկրակն, եթէ ոչ։

Պատասխանի ետ Եզանելին և ասէ. Արուվհետեւ ոչ կամեցար լինել աշակերտ Հնմարտութեանն, ասացից զկատն հօրն քոյ սատանայի։ Այս ինձէն մտի 'ի կրակատուն ձեր, և տեսի՝ զի կային պաշտօնեայք ամբարիշտութեանն սնոտի կարծեացն ձերոց, և կրակարանն լի հրով առաջի նոցա բորբոքեալ այրէր։ Հարցի ցնոսա բանիւք և ոչ գանիւ, թէ զինչ համարիք 'ի միտս ձեր զկրակ պաշտամանս այսորիկ։ Նոքուն պատասխանի և ասեն. Մեք ինչ ոչ գիտեմք. բայց այսչափ ինչ իմանամք, զի սովորութիւն է նախնեացն և հրաման բուռն թագաւորին։

Ասեմ դարձեալ ցնոսա. Այս զբնութիւն կրակիդ զինչ իմանայք. արարիչ կարծէք, թէ արարած։ Ասեն միաբան ամենեքեան. Արարիչ մեք զդա ոչ գիտեմք, նա և ոչ հանգուցիչ աշխատելոց։ Զեռք մեր փապարեալ են 'ի կացնի, և ոգունք մեր տեռեալ են 'ի փայտակրի, աչք մեր գիջացեալ են արտասուօք 'ի կծուութենէ ծխոյ դորա, և երեսք մեր մրոտեալ են 'ի խոնաւութեան թանձրութենէ նորին ծխոյ։ Այլ թէ շատ մատուցանեմք նմա զկերակուրն, յոյժ քաղցնու. և եթէ բնաւ չտամք, ամենեւին անցանէ. և եթէ մատ երթամք և երկիր պագանեմք, կիզու զմեզ. և եթէ ոչ երթամք մատ ամենեւին, մոխիր լինի։ Մեր այդպէս հասեալ է 'ի վերայ բնութեան դորա։

Ասեմ դարձեալ ցնոսա. Խակ լուեալ է ձեր, եթէ այր ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն։ Նոքուն պատասխանի և ասեն. Օ՛ի 'ի լեալոյ հաբցանես զմեզ, այլ հայեաց ընդ առաջիկայ իրսդ. զի օրէնսդիրքն մեր ոգւովք մնաց միայն կուրացեալ են, այլ թագաւորն մեր մարմնով միով ակամբն կոյր է, այլ ոգւոյն բնաւ չիք իսկ աչք։

Ասան այնորիկ և ես իբրեւ լուայ զայս 'ի մոգացն, յոյժ ողորմեցայ. զի տգիտութեամբ զարդարն խօսեցան։ Սակաւիկ մի չարչարեցի զնոսա գանիւ, և նոցուն իսկ ետու զկրակն 'ի ջուրն ընկենուլ, և ասացի այսպէս.

Աստուածք, որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն 'ի ներքոյ երկնից. և ապա զմոգն 'ի բաց արձակեցի։

Զայս ամենայն իբրեւ լուաւ Դենշապուհ 'ի բերանոյ սուրբ եպիսկոպոսին, անհնարին զահի հարաւ 'ի Թըշնամանաց Թագաւորին և յանարգանաց դենին։ Զան որոյ և երկեաւ իսկ մատուցանել զնա 'ի տանջանս հարուածոց, Թէ գուցէ այլ եւս մեծ անարգանս զԹագաւորէն տացէ ասել յատենին, և 'ի նա ձգիցին կարծիք Թշնամանացն. զի երկայնամտութեամբ պայքարեցաւ ընդ նոսա։

Եւ քանզի սուսերը ընդ մէջ ածեալ նստեր յատենի ահ արկանելով սրբոցն, գոչեաց իբրեւ առիւծ զայրագին, և հանեալ զսուսերն գազանաբար յարձակեցաւ 'ի վերայ երանելեացն. և Եհար եպիսկոպոսին զաջ ուսն Թիկամբն հետ, և զձեռն 'ի վայր ընկեց։ Եւ նորա յաջհեակ կողմն յերկիր անկեալ, և դարձեալ անդրէն պատրսպարեր, առնոյր զաջ ձեռն 'ի վեր. աղաղակեաց մեծաձայն և ասէ. Ինկալ, Տէր, զկամաւոր պատարագս՝ որ ինձէն զիս քեզ մատուցի բոլորովին, և խառնեա զիս 'ի գունդս սուրբ զինուորացն քոց։

Դարձեալ քաջալերէր զընկերակիցսն իւր և ասէր. Հապա առաքինիք, Եհաս ժամ կատարման մերոյ. խցէք զաչս մարմնոյ վայր մի, և այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս։ Եւ Թաւալելով ընդ արիւնն անձին իւրոյ ասէր. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, հանապազ օրհնութիւն նորա 'ի բերան իմ։ Ի Տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք և ուրախ եղիցին։ Եւ ասելով զսաղմոս զայս կատարէր մինչեւ ցայս տեղի. Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր, և պահէ զամենայն ոսկերս նոցա։

Եւ մինչ դեռ կայր յուժի մարմնոյն սակաւիկ մի, իւրովք աչօք իսկ հայեցեալ՝ տեսանէր յերկնից եկեալ գունդս բազում հրեշտակաց և վեց պսակ 'ի ձեռին հրեշտակապետին։ Դարձեալ և լսէր եւս բարբառ 'ի վերուստ, որ ասէր. Քաջալերեցարուք, սիրելիք իմ. զի ահա մոռացայք զվշտալի կեանսդ, և հասէք երանելի պսակացդ, որ ձերով Ճարտարութեամբդ կազմեցէք. առէք դիք յիւրաքանչիւր գլուխ։ Զ ինիւթ պատրաստական 'ի ձէնջ հիւթեցաւ, իսկ Ճշմարտութիւն

գործոյդ յամենասուրբ Ձեռացն Քրիստոսի կազմեցաւ. զոր 'ի սպասաւորաց այսր իսկ ընկալեալ՝ ընդ Ստեփանոսի լինիք պատկակից։ Այս և զայն եւս քաջապէս տեսանէր, զի դեռ եւս շողայր սուրն 'ի վերայ պարանոցի երանելեացն։

Օ որ իբրեւ ետես սուրբն Ղեւոնդ, եթէ ոչ եւս զմի մի կամին հարցանել և դատել, այլ միանգամայն հրաման եղեւ մահու, ասէ ցերանելին Յովսէփ. Ա՛ստիր, յառաջիւ ընդդէմ սրոյն, զի դու աստիճանաւ 'ի վեր ես քան զամենեսեան։ Այլ զայս իբրեւ ասաց, կարգեցան կացին մի ըստ միոջէ. և առ ձեռ տագնապի ատիպելոյ դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զսպարանոցս երանելեացն առաջի սուրբ եպիսկոպոսին. և նորա ընդ հանել ոգւոցն աղաղակեաց և ասէ. Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն, և խառնեա զմեզ 'ի գունդս սիրելեացն քոց։ Այլ միանգամայն կատարեցան ամենեքեան 'ի նմին տեղւոջէ։

Այլ եթէ զմոգպետն եւս, որ հաւատաց 'ի Քրիստոս, կամիցիս ընդ նոսա 'ի համար արկանել, թուով են եօթն. թող զերկուսն եւս որ 'ի Ղ ատգետն կատարեցան, և միւս եպիսկոպոսն Թաթիկ անուն յատրեստանի։ Բայց անդէն 'ի տեղւոջն վեցեքին, որոց անուանքն են այսոքիկ. Սահակ եպիսկոպոս յուրշտունեաց, սուրբն Յովսէփ 'ի Ղ այոյ ձորոյ՝ 'ի գեղջէ Հողոցմանց, Ղեւոնդ երէց 'ի Ա՛ռնանդայ՝ 'ի գեղջէ Լիչաւանից, Մուշէ երէց յԱ՛ղբակոյ, Ա՛ղշէն երէց 'ի Բագրեւանդայ՝ 'ի գեղջէ յԱյղեգեկայ, Բաջաջ սարկաւագ՝ ուստի եպիսկոպոսն էր յուրշտունեաց։ Իսկ երանելի մոգպետն 'ի Կիւշապուհ քաղաքէ, Սամուէլ երէց յԱ՛յրարատոյ՝ 'ի գեղջէ յԱ՛ղածոյ, Ա՛բրահամ սարկաւագ 'ի նմին գեղջէ։

Ա՛ղդ զվեց զայս սուրբս յանապատին՝ ուր կատարեցին, Ղենշապուհ և մոգպետն և Ղ նիկանն և մայպետն անդէն 'ի տեղւոջն պահապանս ընտրեցին յիւրաքանչիւր սպասաւորացն, և պահել հրամայեցին զմարմինս երանելեացն ցաւուրս տասն կամ եւս աւելի, մինչեւ կարաւանն արքունի անցեալ գնասցէ. զի մի այլազգինքն եկեալ բառնայցեն զոսկերս դոցա, և բաշխեալ սփռեսցեն ընդ աշխարհս ամենայն, յոր և մարդիկ եւս ա-

Digitized by Google

ռաւել յորդորեալ մոլորիցին զկնի նաճարացւոց ա-
ղանդին։

Իսկ Իսուժիկն, զոր յառաջագոյն ասացաք, զինու-
հանդերձ մնայր անդէն ընդ պահապանն որպէս զմի 'ի
նոցանէ. այր լի իմաստութեամբ և կատարեալ աստուա-
ծային գիտութեամբ, սպասէր և դէտ սկսն ունէր՝ եթէ
որովհետև օրինակաւ հնարս գտցէ զոսկերս սրբոյն գողանալ
'ի նոցանէ։

Եւ իբրեւ աւուրք երեք անցին 'ի վերայ, արհաւիրք
մեծ անկանէին 'ի վերայ ամենեցուն, և իբրեւ թըմ-
բրեալ և կիսամեռք անյարիրք անկեալ դնէին զերիս ա-
ւուրսն։ Իսկ 'ի չորրորդումն աւուրն երկուք 'ի պահա-
պանացն չարաչար լլկեցան 'ի դիւէ։ Արձեալ հա-
սարակ գիշերաւ չափ՝ ձայնք ահեղք հնչէին, և թըն-
դիւնք և որոտաձայնք 'ի ներքուստ՝ որպէս դղրդումն
գետնաշարժի. երկիրն դողայր 'ի ներքոյ նոցա, և շո-
ղունք սուսերաց փայլատակունս արձակէին շուրջ զնու-
քօք։ Եւ զամենեսեան զդիակունսն կանգնեալ տեսա-
նէին, և զնոյն բանս ատենին ահագինս բարբառէին 'ի
լսելիս նոցա. մինչեւ խուճապել նոցա ընդ միմեանս,
դեռ եւս զիրեարս սատակէին։ Եւ այսպէս տապնա-
պեալք և ցնորեալք մինչեւ այր ղընկեր 'ի փախուստ
չգիտեր ընդ որ երթայր։ Եւ եկեալ պատմէին մեծաւ
զարմացմամբ զամենայն անցս չարչարանացն, զոր կրեցին։

Ի խորհուրդ մտին նախարարքն երեքեան, և սկսան
զարմանալով ասել ցմիմեանս. Ո՞րչ գործեսցուք,
զի՞նչ արասցուք վասն անքնին աղանդոյն քրիստոնէից.
քանզի մինչ դեռ կենդանի էին, զարմանալի էր կեանք
նոցա. ընչատեացք էին իբրեւ զանկարօտս, սրբասէրք
էին իբրեւ զանմարմինս, անաչառք էին իբրեւ զարդա-
րադատս, աներկիւղք էին իբրեւ զանմահս։ Եթէ զայս
ամենայն ասեմք իբրեւ զտգիտաց և իբրեւ զյանդգնե-
լոց, իսկ զայն զի՞ առնիցեմք, զի ցաւոտք ամենայն 'ի կա-
բաւանի աստ նոքօք առողջանան։ Եւ կամ որ մեծս է
քան զայդ ամենայն, ոչ՞ ուրուք դի կանգնեալ երեւե-
ցաւ 'ի կենդանեաց կամ բարբառ բանից ոք լուաւ 'ի
նմանէ։

Ո՞ի տուտ չեն մեր սպասաւորքն. մեր մեզէն իսկ հա-
սեալ է 'ի վերայ ստուգութեան սոցա։ Եւ եթէ կա-

մեցեալ էր ստոյգ մարմնաւոր ինչ ազահութիւն 'ի ներքս խառնել, սակաւ մի ակնարկէին քրիստոնէից 'ի կարաւանիս, զկշիռ իւրաքանչիւր մարմնոց նոցա ակի առնուին։ Դարձեալ և արքդ, որ 'ի գիւէ չարչարեցան, զի յայնժամ ցաւոտք էին՝ և մեք գիտեմք. յայտ է եթէ այսօր նշանն մեծ երեւեցաւ։ Եթէ լուռ լինիմք, այսպէս մեզ և անձանց մերոց կասկած իսկ է. և եթէ տանիմք զդոսա առաջի թագաւորին, լսելով նորա 'ի դռցանէ զայդ ամենայն մեծամեծ սքանչելիս, գուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ։

Այս պատասխանի մոգպետն և ասէ ցնոսա. Ոչ զիս ոստիկան արարին 'ի վերայ ձեր երկոցունցդ. զի այդչափ նեղեալ տագնապիք յանձինս ձեր. դուք զգործ ձեր կատարեցէք, և զհրամանն արքունի 'ի գլուխս տարայք։ Արդ եթէ համբաւդ այդ յայտնեացին, և հարցափորձ ինչ լինիցին առաջի արքային, այդ խնդիր մեր մոգաց է. դուք անհոգ լերուք, և մի ինչ ածէք զմտաւ։ Այլ եթէ զարհուրեցայք ինչ յոգիս ձեր, վաղագոյն առաւօտուցն 'ի դարիթիւրե եկայք. զի վաղիւ անդ մովպետան մովպետ ասասի յազէ, և նոյն հաձեալ հաւանեցուցէ զմիտս ձեր։

Իսկ Խուժիկն իբրեւ լուաւ զայս ամենայն, և գիտաց՝ եթէ փայթ ինչ ոչ է նոցա յայնմհետէ սուրբ ըսպանելոցն, փութացաւ վաղվաղակի էառ տասն այր, որոց զչափ գիտէր զքրիստոնէութեանն, և հասեալ 'ի տեղին՝ շէն եգիտ զամենեսեան։ Այլ քանզի կասկած ունէր տակաւին 'ի նոցուն 'ի դահճացն, դարձեալ փոխեցին անտի զսուրբսն յայլ տեղի բացագոյն իբրեւ երկու հրասախաք։ Այլ իբրեւ յանհոգս եղեն, սրբեցին կազմեցին զոսկերս երանելեացն. բերին 'ի բանակն և ունէին 'ի ծածուկ. և առ սակաւ սակաւ յայտնեցին նախ զօրականին Հայոց, և ապա բազում քրիստոնէիցն՝ որ էին 'ի կարաւանին։ Այլ զառաջին պտուղ ընծային մատուցանէին կապեալ նախարարացն. և անդէն վաղվաղակի արձակեցան նոքա 'ի կապանաց իւրեանց, և սպառնալիք մահուանն անցին զնոքաք. և հրովարտակք թողութեան առաքեցան յաշխարհն Հայոց։

Արդ այս երանելի Խուժիկս, որ արժանի եղեւ 'ի ծածուկ սպասաւոր լինել սրբոցն, որ ինչ 'ի մահուանէն

և այսր ասացաւ դատակնիք վճռիս այսորիկ, սա երկրորդեաց մեզ զամենայն կարգաւ. զբարաչար քարշումն, և զհարց և զփորձ դատաւորացն, և զիւրաքանչիւր անձանց սրբոցն զպատասխանիսն, և զկատարումն մահուան նոցա, և զահագին արհաւիրսն՝ որ 'ի վերայ պահապանացն անկաւ, և զհեծեծումն քննութեան նախարարացն երեցունց, և զամիսփումն սուրբ ոսկերաց նոցա. ոչ խառն 'ի խուռն 'ի մի վայր ժողովելով, այլ զմի մի 'ի նոցանէ ուրոյն ուրոյն 'ի վեց տապանս ժողովեր. և զանուանս իւրաքանչիւր ուսեալ և 'ի վերայ տապանացն նշանակեալ էր։ Այլ զկապանսն երկաթիս ընդ իւրաքանչիւր ոսկերսն եղեալ էր, քանզի դահճացն 'ի բաց ընկեցեալ էր. որպէս և զհանդերձս զիւրաքանչիւր տապանի նշանակեալ էր։

Այլ կատարեցան սոքա վեցեքեան սուրբ և ցանկալի մահուամբն իւրեանց որ օր քսան և հինգ էր հրոտից ամսոյ, 'ի մեծ անապատին ՅԱպար աշխարհի 'ի սահմանս Լիւշապուհ քաղաքի։

ԴԱՐՁԵԱԼ ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՆՈՑՈՒՆՑ

Իսկ աշակերտք երանելեացն 'ի կապանս կային 'ի Նեղբս 'ի քաղաքին. եկն դահճապետ մի արքունի և եհան զնոսա 'ի քաղաքէ անտի արտաքս։

Եհան 'ի նմին քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ, քանզի և նոքա 'ի կապանս էին վասն անուանն Քրիստոսի. եհարց զնոսա բանիւք, և ոչ հաւանեցան երկիր պագանել արեգական։ Զարշարեաց զնոսա գանիւ, և նոքա եւս առաւել 'ի նոյն միտս ելին. կտրեաց զնոսա ունջս և զականջս, և եւս տանել յասորեստան, զի կացցեն 'ի մշակութեան արքունի։ Այրթային մեծաւ յօժարութեամբ, իբրեւ այն՝ թէ մեծ պարգեւս գտեալ 'ի թագաւորէն։

Որդ եկն դարձեալ նոյն դահճապետն առ աշակերտս սուրբ սպանելոցն, ընտրեաց երկուս 'ի նոցանէ որ համեստագոյնքն էին, առեալ մերկուսի յայլոցն և ասէ ցնոսա. Օ մինչ անուանք են ձեր։ Այսպէս պատասխանի մինն և ասէ. Ես 'ի ծնողաց ինձ Լսորէն, և զմա Աբրահամ.

Digitized by Google

իսկ ըստ հնարհաստատ կարգին՝ ծառայք Քրիստոսի եմք, և աշակերտք երանելեացն՝ զոր ստանեք։

Եւ պատասխանի դահճապետն և ասէ ցնոսա. Իսկ արդ զինչ գործ է ձեր, և կամ բնաւ ոչր իսկ ածեալ է զձեզ այսր։ Եւ այս ետ պատասխանի Աբրահամ և ասէ ցնոսա. Օ այդ ձեզ 'ի վարդապետաց մերոց արժան էր ուսանել. զի ոչ դուք զնաքեացք ոք էիք նոքա, այլ ունէին ստացուածս հայրենիս ըստ արժան բաւականին, ըստ նմին և ապատաւորս, էր որ իբրեւ զմեզ, և էր որ լուսագոյն քան զմեզ. որոց մնուցեալ և ուսուցեալն էր, ընդ նոսա եմք եկեալ։ Եւ մանզի և պատուէր իսկ ունիմք յաստուածատուր օրինացն մերոյ՝ սիրել զնոսա իբրեւ զսուրբ ծնողս, և սպասս տանել նոցա իբրեւ հոգեւոր տերանց։

Յաւեաւ դահճապետն և ասէ. Իբրեւ զանխրատ և զաներկիւղ ստամբակս խօսիս։ Եւ 'ինչդեռ 'ի խաղաղութեան և յաշխարհի էիք, բարիոք էր. յորժամ զբուսահ եղէն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան ըստ գործոց իւրեանց, ձեզ չէր արժան ամենեւին մնալ երթալ առ նոսա։ Եւ՞չ տեսանէք 'ի մեծ կարաւանիս, յորժամ ոք 'ի պատուաւորացն 'ի դիպահարՀն արքունի լինիցի, ոգոյ հանդերձ ապանի, և զատեալ և որոշեալ 'ի բացէ նստի միայնիկ, և ամենեւին հուպ ոչ ոք իշխէ երթալ առ նոսա։ Եւ դու այդպէս իբրեւ զանյանցի աշակերտ պարծելով խօսիս։

Եւ այս ետ պատասխանի Խորէն և ասէ. Եւ՞չ ձեր կարգդ անիրաւ է և ոչ մերս ստութեամբ. նախարարն յանցաւոր՝ ուստի զպարգեւն գտեալ էր, այնպէս պարտ էր նմա հպատակ լինել, զի 'ի պատուոյն վերայ և այլ եւս պարգեւս մեծամեծս գտանէր 'ի նմանէ։ Եւ՞ դդ փոխանակ զի զայն ոչ արար, ձախողակի յետս ընդդէմքն պատահեաց նմա։ Եւ մեր վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին, և կամ առ թագաւորն մեղուցեալ էին, նոյն օրինակ և մեք առ նոսա առնէաք. ոչ յաշխարհի մնալ երթայաք, և ոչ 'ի տար աշխարհ այսր զհետ նոցա գայաք։ Եւ՞դդ քանզի առ երկոսին կոզմանն արդարութեամբ կեցեալ էն, և դուք զուր տարապարտուց սպանէք զնոսա, մեք արդ եւս առաւել ապաստաւորեմք սուրբ ոսկերաց նոցա։

Բ.սկ ցնոսա դահՃապետն. Ես յառաջագոյն իսկ ասացի, եԹէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղեւ աւադիկ, եԹէ յամենայն ՀԼաս նոցա խառն էք դուք։ Ա.բրահամ ասէ. Յո՞ր ՀԼաս։ ԴահՃապետն ասէ. Ա.ռաջին 'ի մահ մոգուցն, ապա և յայլսն ամենայն։ Ա.բրահամ ասէ. Ա.յդ ոչ միայն 'ի մէնջ է, այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ. Թագաւորք ձեզ տան հրաման, և դուք 'ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք։

ԴահՃապետն ասէ. Ի Մ.իհր աստուած երդուեալ իմ, խստագոյն եւս խօսիս քան զվարդապետն քո. յայտ է եԹէ ՀԼասակարագոյնք եւս էք դուք։ Ա.յդ ոչ է հնար ձեզ ապրել 'ի մահուանէ, բայց եԹէ երկիր պագանիցէք՝ սրեգական, և կատարիցէք զկամն օրինացս մերոց։

Խորէն ասէ. Յայժմ իբրեւ զմարդ չարախօսէիր, և արդ իբրեւ զշուն անսիտան ընդ վայր հաջես։ ԵԹէ զոյր արեգական ականջք, դու տայիր նմա Թշնամանս դնել. արդ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա։ Յի՞մ տեսեր զմեզ պակասագոյն քան զՀարսն մեր. մի՞ բանիւք զփորձ առնուլ կամիս զմեր, այլ հանդէս արա քոյ չարութեանդ և մերում բարութեանս, և ամենչեցեալ գտանի հայրն քո սատանայ, ոչ միայն 'ի մէնջ՝ որ կատարելագոյնքս եմք, այլ և որ կարի փոքրիկն Թուի քեզ, նա դիցէ վերս սաստիկս յոգիս և մարմնոյս քո։

Օ.այս իբրեւ լուաւ դահՃապետն, սրտմտեալ բարկացաւ 'ի վերայ նոցա։ Ետ քարշել չարագոյն քան զառաջինսն. և այնչափ սաստիկ քարշեցին, մինչեւ բազմաց կարծիք եղեն՝ Թէ մեռան։ Իսկ իբրեւ ժամք երեք 'ի վերայ անցին, դարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասէն. Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Ա.ստուծոյ, որում կատարեցան հարքն մեր հոգեւորք։ Հապա, մի՞ դլար և մի՞ դադարեր, այլ զոր ինչ առ նոսայն արարեր, զնոցն և առ մեզ կատարեա։ ԵԹէ չարագոյն Թուին քեզ գործք նոցա, կրկին և զմերս համարեսջիր. զի նոքա բանիւք հրամայէին, և մեք գործովք զարդիւնսն կատարէաք։

Յայնժամ եւս առաւել զայրագնեցաւ 'ի վերայ նոցա, և հրամայեաց զմահու գան հարկանել։ Եւ առ մի

մի 'ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր 'ի դահճացն։ Եւ մինչ դեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոցունց ականջն մօտ կտրել։ Եւ այնպէս բրեցին, որպէս թէ չիցէ լեալ 'ի տեղւոջն։

Զարթեան որպէս 'ի քնոյ 'ի տաստիկ հարուածոյն, սկսան աղաչելով պաղատանս մատուցանել, և ասեն. Աղաչեմք զքեզ, քաջ զինուոր Թագաւորին, կամ կատարեա զմեզ իբրեւ զՀարան մեր մահուամբ, և կամ ապա զպատուհասդ ըստ օրինակի վերջնոցս։ Զի ահա լսելիք մեր առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր, իսկ հոտոտելիքս դեռ եւս աստէն 'ի տեղւոջ կան յանցս չարչարանաց. մի՛ կիսապարգեւ առներ զմեզ յերկնից բարութենէն։ Արբեցեր զմարմինս մեր քարշելով և զլսելիս մեր կտրելով, սրբեա և զբընգունս մեր հատանելով. քանզի որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն։

Զատ պատասխանի հեզութեամբ դահճապետն և ասէ. Զթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով, կարծեմ՝ եթէ և աշակերտեք զիս 'ի ձեր յամառութիւնդ։ Զի ահա արդ և զիորհուրդս ազգունի 'ի վեր հանեմ ձեզ։ Յայդ վայր եղեւ հրաման պատուհասիդ ձերոյ, և 'ի վերայ դորին պատուհասի՝ երթալ ձեզ յասորեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ընդ ձեզ հայեսցի, մի՛ 'ի դմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց Թագաւորին։

Զոեն ցնա երանելիքն. Դու զմեր երկիրս կիսագործ Թողեր, մեք յարքունի երկիրն կէս մարմնովք մերովք ոչ վաստակեմք։ Իբրեւ զայս լուաւ դահճապետն, աղաչեաց զզինուորսն՝ որ տանէին զնոսա, և ասէ. Զի՝ այն աստի դուք առէք գնացէք, և հասեալ յասորեստան՝ ուր կամ իւրեանց է և շրջեսցին։

Զայս են Հայոց խոստովանողք, որ զխեղութիւնն և զչարչարանսն խնդութեամբ ընկալան յանձինս իւրեանց։ Եւ վասն զի վրիպեցին 'ի սուրբ մահուանէն, սգով և տրտմութեամբ երթային զերկայնութիւն ճանապարհին։ Եւ ծանր թուէին նոցա կապանք ոտիցն և ձեռացն, իբրեւ զայն՝ թէ ընդէր ոչ եղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն։

Եւ իբրեւ տարան հասուցին զնոսա յերկիրն բաբի-

Digitized by Google

լացուց, 'ի գաւառ մի զոր Շահուղն անուանեն, թէ պէտ և էին յարքունի պատուհասին, սակայն և յայտ և գաղտ մեծապէս ընկալեալ եղեն 'ի բնակչաց աշխարհին։ Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրտմագին էին, իբր այն՝ եթէ սակաւ վաստակեցաք և մեծապէս հանգչիմք. և հանապազ 'ի նմին զղջման կային։

Եւ անդէն Թեւակոխէին տեսանել զսուրբ կապանսն նախարարացն, և լինել սպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա։ Սմացուցին զայս մեծամեծաց աշխարհին, որք էին 'ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն։ Եւ հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց՝ աղդ առնել ամենայն երկրին, զի հաճոյ Թուեսցի ամենեցուն՝ 'ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սուրբ կապելոցն 'ի հեռաւոր օտարութեանն։

Եւ այսպէս ամ յամէ ժողովէին ըստ իւրաքանչիւր կարի մարդկանն, ոմն սակաւ և ոմն շատ, ոյր զինչ և 'ի ձեռս պատրաստութիւն լինէր, եթէ դրամաց և եթէ դահեկանաց, ժողովէին կազմէին տային յերանելիսն՝ տանել նոցա։ Եւ այսպէս յարբանեկութեան կային, մինչեւ տասն ամն լցաւ սպասաւորութեանն։

Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին 'ի ջերմոջ աշխարհին, և անդադար էին 'ի ձանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեշոմն և ընդ Պաշկար և ընդ ամենայն ասորեստան և խուժաստան, սաստիկ տապով հարեալ 'ի խորշակէ մեռանէր սուրբն Խորէն, և աւանդեալ լինէր 'ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վանքսն։

Իսկ երանելին Աբրահամ կայր 'ի նմին առաքինութեան անդադար. և զամենայն տուրս հաւատացելոցն շրջէր ժողովէր և տանէր 'ի մեծ հեռաստանն, և ինքն մատակարարէր ըստ իւրաքանչիւր կարօտութեան։ Եւ այնպէս յերկարեցաւ մինչեւ յերկոտասներորդ ամն պատժաւորացն, մինչեւ աղաչել զնա միաբան ամենեցուն, զի հաւանեսցի երթալ յաշխարհն Հայոց. զի ընդ մնանել նորա առ նոսա, 'ի նմա տեսցեն և զքաջ նահատակն՝ որք կատարեցան սրով, 'ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չարչարանացն։

Եւ յորժամ մարտիրոսք և խոստովանողք և կապեալք նուաւ տեսանին, նուաւ օրհնի աշխարհն ամե-

նայն, նովաւ օրհնին և տղայք նոցա յաձուն, նովաւ զգաստանան երիտասարդք նոցա 'ի սրբութիւն, նովաւ համեստանան ծերք նոցա յիմաստութիւն։ Նովաւ ուսանին իշխանք նոցա զմարդասիրութիւն, նովաւ անկանի գութ Աստուծոյ 'ի սիրտս թագաւորին՝ շինել և խաղաղութիւն առնել բոլոր աշխարհին։ Նովաւ եկեղեցիքն պարծին իբրեւ քաջ և կատարեալ զինուորաւ, նովաւ վկայարանքն զարդարին, նովաւ և վկայքն ցնծացեալ բերկրին։ Նովաւ և դաշտն Աւարայրի պայծառացեալ ծաղկալից լինի, ոչ յանձրեւաբերը ամպոց, այլ 'ի սուրբ և յարիւնաբուխ վկայից ցանեալ և ցրուեալք սպիտակութիւնք սուրբ ոսկերացն։ Յորժամ կոխեսցեն ամենավաստակ ոտք խոստովանողին զայնատարած տեղիս պատերազմին, յորժամ կենդանի մարտիրոս ընդ նա շրջեսցի, կենդանի առ կենդանիս երթեալ՝ ամենայն աշխարհին կրկին լինի կենդանութիւնն։

Զի տեսեմք, ասեն, յորժամ տեսցեն զսա ամենայն միայնակեացք աշխարհին Հայոց, սովաւ յիշեսցեն ըզհոգեւոր գունդս պատերազմողացն, որ փոխանակ մեր, ասեն, ետուն զանձինս 'ի մահ, և հեղին զարիւնս իւրեանց 'ի հաշտութիւն պատարագ Աստուծոյ։ Սովաւ յիշին սուրբ քահանայքն, որք խողխողեցան յօտարութեանս և ցածուցին զսրտմտութիւն բարկութեան թագաւորին։ Սովաւ թերեւս զի և զմեր կապանս յիշեսցեն, և աղօթս առնելով խնդրեսցեն Աստուծոյ, զի գերէդարձ լիցի մեզ անդրէն 'ի հայրենի երկիրն մեր։

Զանգի յոյժ անձկացեալ եմք՝ ոչ միայն ըստ մարմնոյ կարօտութեան, այլ առաւել տեսանել զսուրբ եկեղեցիսն մեր և զսրբասէր պաշտօնեայսն մեր, զոր 'ի նմա կարգեալ հաստատեցաք։ Եւ եթէ միւսոյս յաջողեսցէ մեզ Աստուած երթալ և ընուլ զկարօտութիւն ճնացելոցն, գիտեմք զի և մեզ բանայ Աստուած զդուռն ողորմութեան իւրոյ՝ ընդ նոցն Ճանապարհ երթալ, ընդ որ ոտք սրբոցս կարապետեն։

Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհնախարարացն, մեծաւ թախանձանօք ածէին զխոստովանողն 'ի հաւանութիւն։ Եւ վասն զի ոչ էր սովորութիւն երբեք բարւոյն ընդդէմ դառնալ, ըստ առաջին սովորութեան և յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կա-

Digitized by Google

տարել զՀրամանն զմիաբան հաւանեցելոցն յաստուա-
ծային առաքինութիւնն։ Այն եմուտ յաշխարհն Հայոց։

Փութացան և եկին ընդ առաջ նորա վաղվաղակի արք
և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազ-
մութիւն ազատաց և շինականաց։ Անկանէին առաջի,
փարէին զոտիւք և զձեռօք սրբոյն, և ասէին. Օրհ-
նեալ Տէր Աստուած 'ի բարձունս, որ առաքեաց մեզ
հրեշտակ յերկնից՝ բերել մեզ աւետիս յարութեան,
զի լինիցիմք ժառանգք արքայութեան։ Օ՛ի ահա 'ի
քեզ կերպարանեալ տեսանեմք զամենեսեան զհրաժա-
ռեալն յուսով յարութեամբ, և զկապեալն ակնկա-
լութեամբ արձակելով։ Ի քեզ տեսանեմք և զաշխար-
հին շինութիւն խաղաղութեան. քեւ եկեղեցիքն մեր
ցնծացեալ բերկրին, և քեւ սուրբ վկայքն մեր անդա-
դար լիցին մեզ 'ի բարեխօսութիւն առ Աստուած։ Օրհ-
նեա զմեզ, սուրբ հայր մեր. դու ես բերան հանգու-
ցելոցն, խօսեաց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի
յոգիս մեր լուիցուք 'ի ծածուկ զօրհնութիւնս սրբոյն։

Հորդեցեր Ճանապարհ այնոցիկ՝ որ անձկացեալ էին
զալ յերկիր իւրեանց, խնդրեա յԱստուծոյ՝ զի ստէպ
եկեսցեն զհետ սուրբ կարապետիդ։ Այլ որպէս հորդե-
ցեր զարդելեալ Ճանապարհ երկրի, բաց և յերկինս ըզ-
դուռն աղօթից մերոց. զի և մեր մեղաւորաց մտցեն
պաղատանք առաջի Աստուծոյ 'ի բարեխօսութիւն նո-
ցին կապելոց. և մինչ դեռ եմք յելանելի մարմնոս, որ-
պէս տեսաք զքո զերանելի սրբութիւնդ, տեսցուք և
զսիրելի անձկալիսն մեր, որ 'ի բազում ժամանակաց
հարեալ և պաշարեալ եմք յոգիս և մարմնոս մեր։ Ընդ
հաւատամք յանսուտ յոյսն, զի որպէս լցեալ կատարե-
ցաւ 'ի քեզ տեսիլս 'ի սուրբ սեր քո, այսպէս և ընդ
մնոյ ունիմք տեսանել զՃշմարիտ վկայն Քրիստոսի,
որ հանապազ խանդակաթ եմք 'ի տեսիլս երկնաւոր
գեղջ նոցա։

Հայց երանելի խոստովանողն, թէպէտ և այսպէս
սիրով ընկալեալ եղեւ յամենայն աշխարհէն, ոչ ինչ
կամեցաւ ամենեւին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կա-
ւոտութեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամե-
նայն բազմամբոխ ժողովրդոց, և առաքինի եղբարքք է-
րիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ Ճգնութեամբ։

Digitized by Google

Զոր եթէ կամիցի զբ'ի կարգ արկանել, դժուարաւ կարասցէ ասել զվարս առաքինութեան նորա։ Զի եթէ զանքնութիւնն ասիցես, իբրեւ զկանթեղ անշէջ կայր զամենայն գիշերս. և եթէ զսակաւապիտութիւն կերակրոցն, համարեաց՝ եթէ զանկերակուր հրեշտակացն բերէր զնմանութիւն։ Եթէ զհեզութիւն ցածութեանն կամիցիս ասել, ոչ զոք 'ի կենդանեաց կարիցես գտանել նման նմա. և եթէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել, դարձեալ զոր օրինակ չպատրի մեռեալ 'ի կարասի, զնոյն օրինակ ճշմարտութեամբ և առ երանելին իմաջիր։

Նյագական ձայնիւ հանապազորդեալ էր 'ի պաշտաման, և անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ 'ի բարձունս խօսէր։ Զի եղեւ նա անհամելոց, և խթան ընդոստուցիչ ամենայն հեղգացելոց։ Զորովեցաւ նովաւ ագահութիւն, և կարի յոյժ ամաչեաց նովաւ շուայտութիւն որկորամոլութեան։ Զողջութիւն եղեւ նա աշխարհիս Հայոց, և բազում վիրաւորք 'ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն։ Եղեւ նա վարդապետ կատարեալ վարդապետաց իւրոց, և սուրբ Հայր խրատտու հարանց իւրոց։ Ի լուր համբաւոյ նորա իմաստնացան տգէտք, և 'ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լկտիք։ Ընակեալ էր ըստ մարմնոյ 'ի նեղ խցկանն, և ահ սրբութեան նորա անկեալ էր զհեռաւորք և զըզմերձաւորք։ Զարհուրեցան դեւք և փախեան 'ի նմանէ, իջին հրեշտակք և բանակեալ էին զնովաւ։

Յոյնք երանի եռուն վասն նորա աշխարհիս Հայոց, և բազում բարբարոսք փութացան տեսանել զնա մարմնով։ Սիրելի եղեւ նա սիրելեացն Աստուծոյ, և զբազում 'ի թշնամեաց ճշմարտութեանն ած 'ի հաւանութիւն սուրբ սիրոյ։ Սկիզբն արար առաքինութեան անդրստին 'ի տղայ տիոց իւրոց, և նովին առաքինութեամբ կատարեցաւ 'ի վախճան կենաց իւրոց։ Որպէս ոչ խառնեցաւ 'ի կարգս սուրբ ամուսնութեան աշխարհիս, այսպէս չեմուտ ընդ մարմնաւոր պիտոյիւք ամենայն ապականացու իրաց աշխարհիս։ Եւ եթէ պարտ է պարզաբար ասել, որպէս փոխանակեաց զպէտս մարմնոյ ընդ պիտանացու հոգեւոր իրաց, այսպէս փոխադրեալ եղեւ յերկրէ 'ի յերկինս։

Digitized by Google

ԱՆՈՒԱՆՔ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ, ՈՐՔ ԿԱՄՕՔ ՑՕԺԱՐՈՒԹԵԱՄԲ ՎԱՍՆ ՍԻՐՈՑՆ ԳՐԻՍՏՈՍԻ ԵՏՈՒՆ ՁԱՆՁԻՆՍ Ի ԿԱՑԱՆՍ ԱՐՔՈՒՆԻ

Յազգէն Ալունեաց երկու եղբարք Խաբգէն և Խակուր, յազգէն արծրունեաց Ներշապուհ և Շաւասպ և Շնգին և Մեհրուժան և Պարգեւ և Ցաձատ, յազգէն մամիկոնէից Համազասպեան և Համազասպ և Բրտաւազդ և Մուշեղ, յազգէն կամսարականաց Բրշուիր և Դաթուլ, Վարձ, Ներսեհ և Բշոտ, յազգէն ամատունեաց Վահան և Բռանձար և Բռնակ, յազգէն գնունեաց Բտոմ, յազգէն դիմաքսեանից Դաթուլ և Սատոյ, երկու եւս այլովք ընկերօք. յազգէն անձեւացեաց Շմաւոն և Օուարէն և Բռաւան, յազգէն առաւեղենից Փապակ և Վարազդէն և Գաղ. յարծրունեաց տոհմէն Բպրատ, 'ի տոհմէն մանդակունեաց Սահակ և Փարսման, յազգէն տաշրացեաց Վրէն, յռափսոնեան տանէն Խաբիկ և Յուիտան։

Բայս երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ 'ի կրսերագունիցն, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք, իսկ ըստ հոգեւոր առաքինութեանն ամենեքեան երկնային քաղաքացիք։ Այս բազում եւս այլ ազատ մարդիկ, են որ յարքունի տանէ, և են որ 'ի տանէ նախարարացն իսկ նոցուն, նիզակակիցք և մարտակիցք քաջ նահատակացն։ Այս ամենեքին սոքա կամք մատնեցան 'ի սուրբ կապանս չարչարանացն։

Բայլ մեք առ այժմ ոչ ընդ այս եմք զարմացեալ միայն, զի կամք չոգան մեռին 'ի փորձութիւնն, այլ առաւել ընդ այն եմք սքանչացեալ, զի մարդիկ փափուկ իբրեւ զնոսա՝ ընդարձակասուն բնակիչք ձիւնեղէն լերանց՝ եղեն բնակիչք խորշակաբեր դաշտաց։ Որ զօրէն ազատ երէոյ շրջէին 'ի մէջ ծաղկաբեր լերանց, ընկեցան 'ի բոցակեզ աշխարհն արեւելից կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք։ Հաց նեղութեան և ջուր կարօտանացա, խաւարարգել 'ի տուէ և անլոյս 'ի գիշերի, անվերարկուք և անանկողինք, գազանաբար գետնախշտիք լինէին զիւն ամ և զվեց ամիս։ Այս այնպէս մեծաւ խլն-

գութեամբ տանէին զնեղութիւնն, զի ամենեւին ոչ ոք տրտունջ հայհոյութեան 'ի բերանոյ նոցա լուաւ, այլ յորդառատ զոհացողութիւն ըստ նմանութեան բարեկեցիկ մարդկան, որ են յաստուածպաշտութեան։

Յաւ մինչ դեռ էին յայնպիսի նեղութեան, կարծիք եղեն 'ի միտս Թագաւորին՝ թէ առ յոյժ վշտին ձանձրացեալ են դառնութեան կենաց իւրեանց։ Զղեաց առ նոսա զմեծ հազարապետն և ասէ. Զոմանեայ յայսմ հետէ զգաստացայք յանձինս ձեր, և մի կայք 'ի նոյն յամառութեան. պագէք երկիր արեգական, և արձակիք 'ի չարաչար կապանացդ, և ունիք անդրէն զիւրաքանչիւր հայրենի կեանս ձեր։

Յտուն պատասխանի երանելիքն և ասեն. Զգ փոքձ ինչ եկեալ հարցանես ցմեզ, եթէ արդարեւ Թագաւորն իսկ յղեաց զքեզ։ Յրդուաւ հազարապետն և ասէ. Ընդ այդր բան աւելի կամ պակաս՝ որ ոչ 'ի բերանոյ նորա ելեալ է։ Զսեն ցնա անդրէն. Զոք միանգամ աշակերտեալ են Ճշմարտութեանն, ոչ երբեք փոխին 'ի նմանէ. այլ որ էին՝ նոյն կան։ Զիթէ յայնժամ առ չիմանալ ինչ պնդեցաք, և այսօր նեղութիւնս իմասանացոյց ինչ զմեզ. այլ ոչ այնպէս։ Զայլ զղջումն մտաց մերոց այս է, եթէ ընդէր ընդ առաջինն չկատարեցաք զկեանս մեր։ Զայց արդ ազաչեմք զքեզ և քեւ զԹագաւորն ձեր, մի այլ վասն այդպիսի իրաց հարցանէք ցմեզ. այլ զինչ եղեալ է 'ի մտի ձերում վասն մեր կատարեցէք։

Զբրեւ լուաւ զայս մեծ հազարապետն, յոյժ գովեաց 'ի միտս իւր զանդութիւն հաստատութեան նոցա. և յայնմ հետէ սկսաւ արկանել սէր ընդ նոսա՝ իբրեւ ընդ սիրելիս Զստուծոյ։ Յաւ բազում բանիւք ողջանաց ածէր զԹագաւորն 'ի հաւանութիւն, զի Թողութիւն արասցէ նոցա 'ի կապանացն իւրեանց։ Օ ի Թէպէտ և փոխեցաւ նա 'ի գործոյ հազարապետութեանն արքունի, և 'ի բազում իրս գտաւ ինաաակար, ինքն իսկ յանձն իւր կրթէր զաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ և մեծաւ անարգանաց յուղարկեցաւ 'ի տուն իւր, ասկայն զկապելոցն ոչ երբեք չարտիսաս կամէր լինել մինչեւ ցօր վախճանի կենաց իւրոց։

Զսկ յերանելեացն բազումք, 'ի նոցանէ՝ որ մանկա-

գոյնքն էին, ուստի զդպրութիւն հայրենի աշխարհին իւրեանց և եղեւ նոցա այն կերակուր հոգեւոր, որով զանձինս քաջալերէին և զընկերսն մխիթարէին։ Եւ այնպէս զմայլեցան 'ի միտս և յոգիս իւրեանց, զի և որ ծերագոյնքն էին 'ի նոցանէ, փափկացան մատաղացան մանկացան։ Օ՛ի թէպէտ և դպրութեան ժամանակքն անցեալ էին, սակայն բազում սաղմոս 'ի բերան առեալ՝ հոգեւոր երգակից լինէին մատաղերամ բազմութեան մանկտւոյն։

Եւ այնպէս բարձրացուցանէին զպաշտօնն արքութեան, մինչեւ ոմանք 'ի դառն դահճաց, մեծապէս քաղցրութիւն անկանէր ընդ լսելիս նոցա, և որչափ 'ի ձեռս իւրեանց էր՝ արտաքոյ արքունի հրամանին դիւրութիւն առնէին նոցա, և սէր խնամոյ ունէին առ ամենեսեան, և բազում անգամ զմարմնաւոր պէտս նոցա ընուին նոքա։ Մանաւանդ զի նշանք եւս բժշկութեան յԱ՛ստուծոյ յաջողեալ լինէր 'ի ձեռս նոցա. որպէս զի բազումք 'ի դիւահարաց սրբեցան 'ի նմին քաղաքի ուր կապեալքն կային։ Եւ բրեւ ոչ որ գոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտաժետք քաղաքին, և ընդունէին 'ի նոցանէ զիւրաքանչիւր ցաւոց զառողջութիւն։

Եւ և որ մեծ իշխանն էր աշխարհին, զոր և Դարեւշղոմ Շապուհ անուանէին, և նմա իսկ յանձն էին ամենայն պատժաւորքն, մեծապէս գութ սիրոյ էարկ առ ամենեսեան։ Օ՛ծերս 'ի նոցանէ առ հարս ունէր, և զմանկագոյնս 'ի նոցանէ իբրեւ զսիրելի որդիս գգուէր։ Բազում անգամ գրեաց և եցոյց յարքունիս զվիշտս նեղութեան կապելոյն, և զառն առն իւրաքանչիւր ըզբարս ազնուականութեանն ցուցանէր նոցա. առաջի մեծամեծացն տառապէր, Ջանայր ազգի ազգի հնարիւք, մինչեւ բազում բարեխօսիւք ածին 'ի հաւան զթագաւորն։ Դրամայեաց լուծանել զկապանս նոցա. և բառնալ 'ի նոցանէ զսուգ պատուհասին, և ազատել նոցա հանդերձ՝ զօրէն նախարարութեանն. կարգեաց նոցա ուռճիկ, և զպատրաստութիւն սպառազինութեանն հրամայեաց յարքունուստ։ Գրեաց և յանձն արար մեծ սպարապետին, զի ընդ զօրս արքունի երթիցեն 'ի գործ պատերազմի։

Այս իբրեւ այս այսպէս կարգեցաւ, և կազմեցաւ նոր հրաման Թագաւորին, 'ի բաղում տեղիս՝ ուր և հասին՝ առաւելեալ գտան 'ի գործ արութեան, մինչեւ գովութեան հրովարտակ վասն նոցա 'ի դուռն տային։ Որպէս զի քաղցրացաւ իսկ մտաց Թագաւորին, հրամայեաց զամենեսեան ածել զառաջեաւ։ Այլին և յանդիման եղեն Յաղկերտի արքայից արքային։ Այտես զնոսա զբարութեամբ, խօսեցաւ ընդ նոսա բանիւք խաղաղութեամբ, և խոստացաւ տալ նոցա զիւրաքանչիւր իշխանութիւն ըստ կարգի հայրենի պատուոյն, և արձակել զնոսա յաշխարհն օրինօք քրիստոնէութեանն, յորոյ վերայ և մեծապէս էին չարչարեալ։

Այս մինչ դեռ անդէն մեծաւ խնդութեամբ շրջէին 'ի կարաւանին առաջի Թագաւորին, 'ի նմին ժամանակի հասանէր վախճան կենաց Թագաւորին՝ յինն և 'ի տասներորդ ամի Թագաւորութեանն իւրոյ։ Այս ընդ հակառակս ելեալ երկու որդիք նորա՝ 'ի վերայ տէրութեանն կռուէին. սաստկանայր գործ դառնութեան պատերազմին զերկուս ամս։

Այս մինչ դեռ նոքա յայնմ խռովութեան էին, ապրստամբեաց և Աղուանից արքայն. վասն զի քեռորդի էր նոցա, և ըստ կարգի հայրենի հաւատոցն՝ քրիստոնեայ էր յառաջ, և Յաղկերտ արքայից արքայ բռնի մոգ արար։ Այս նորա գտեալ ժամանակ անձինն պարապոյ, հարկեցաւ զանձն 'ի մահ դնել. լաւ համարեցաւ մեռանել 'ի պատերազմի, քան ուրացութեամբ ունել զԹագաւորութիւնն։ Ա՛ն այսր ամենայնի յապաղումն եղեւ չարձակելոյն նոցա յաշխարհն։

Իսկ կրտսեր որդւոյն Յաղկերտի դայեակն, Ամահամ անուն 'ի Մեհրան տոհմէն, Թէպէտ և ետես զգունդն Աբեաց ընդ երկուս բաժանեալ, սակայն կիսոփն գաղանաբար յարձակեցաւ 'ի վերայ երեց որդւոյ Թագաւորին. հար, սատակեաց զգունդն, և ձերբակալ արարեալ զորդի Թագաւորին, անդէն 'ի տեղւոջն հրամայէր սպանանել։ Այս զմնացեալ զօրսն ածէր հաւանեցուցանէր, և առնէր միաբանութիւն ամենայն Աբեաց գընդին. և Թագաւորեցուցանէր զիւր սանն, որում անուն էր Պերոզ։

Զի Թէպէտ և Աբեաց աշխարհին առնէր մեծա-

պէս խաղաղութիւն, սակայն Աղուանից արքայն ոչ կամէր նուաճել անդրէն 'ի ծառայութիւն. այլ խրատեաց զպահակն Հորայ, և անցոյց յայս կոյս զզօրսն Աստքթաց. միաբանեաց զմետասան թագաւորս ըզլեառնորդեայսն, և ընդդէմ եկաց պատերազմաւ Ադրեաց գնդին, և բազում վնասս արար զօրացն արքունի: Թէպէտ և երկիցս և երիցս ետուն հրովարտակս աղաչանաց, ոչ ինչ կարացին ածել զայրն 'ի հաւանութիւն. այլ գրով և պատգամաւ յանդիմաներ զնոսա, վասն զուր աւերածի աշխարհին Հայոց: Յիշեցուցանէր նոցա զմահ նախարարացն և զչարչարանս կապելոցն: Ի վերայ անչափ սիրոյ և վաստակոց, փոխանակ կեանս առնելոյ՝ զարեւ հատէք, ասէր: Լաւ լիցի ինձ, ասէ, զնոցա չարչարանսն յանձն իմ առնուլ, քան թողուլ զքրիստոնէութիւնն:

Այս իբրեւ տեսին, թէ ոչ բռնութեամբ և ոչ սիրով կարացաք ածել 'ի հաւանութիւն, դանձս սաստիկս ետուն տանել յաշխարհն Այլանդրաց, բացին զդրունս Ադանաց և հանին գունդ բազում 'ի Հոնաց, և կռուեցան տարի մի ընդ Աղուանից արքայի: Թէպէտ և թողթափեցան և ցրուեցան զօրքն իւր 'ի նմանէ, սակայն զնա ոչ կարացին հնազանդել. այլ և հարուածք եւս մեծամեծք հասին 'ի վերայ նոցա, էր որ կռուով և էր որ ախտիւ չարչարանօք: Այս յայնչափ ժամանակաց ընդերկարել պաշարմանն, մեծ կէս աշխարհին աւերեցաւ, այլ ոչ ոք 'ի նմանէ երկմտեալ բաժանեցաւ:

Յղեաց առ նա դարձեալ թագաւորն Պարսից. Ազքոյրդ իմ, ասէ, և զքեռորդիդ 'ի բաց տուր ածել զի 'ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր, և աշխարհդ քեզ լիցի: Իսկ սքանչելի այրն ոչ 'ի տերութեանն վերայ կռուէր, այլ յաստուածպաշտութեանն: Օմայրն և զկինն ետ տանել, և զաշխարհն բովանդակ 'ի բաց եթող. և ինքն զաւետարանն առ և յաշխարհէն 'ի բաց կամէր գնալ:

Այս իբրեւ լուաւ թագաւորն, կարի զեղջ և ապաշաւ անկանէր 'ի միտս նորա, և զամենայն վնասս իրացն զհարբն իւրով արկանէր: Անուտ երդումն կնքէր և տայր տանել առ նա, եթէ յաշխարհէդ միայն մի գընար, և զինչ ասես՝ առնեմ: Խնդրեաց զմանկութեան

սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա 'ի տը-
ղայութեանն՝ հազար երդ. առ զայն 'ի Թագաւորէն,
և նոտատ 'ի նմա միայնակեցօք հանդերձ։ Եւ այնպէս
հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտամանն,
զի և չիշէր ամենեւին՝ թէ և Թագաւոր լեալ իցէ
յառաջ։

Եւ այս ամենայն յերկար խոտորութիւնք, որ եղեն
մինչեւ 'ի հինգերորդ ամն Պերոզի արքայից արքայի,
պատճառք եղեն չարձակելոյ նախարարացն Հայոց. այլ
ոռձիկաւ և 'ի տաճար մտանել յարքունիս մեծապէս ա-
ռատացոյց քան զամաց սովորութիւնն։ Եւ 'ի նմին հին-
գերորդ ամին զբաղմաց նոցա անդրէն զկեանսն շնոր-
հեաց. և այլոցն առ յոյսն խոստացաւ՝ յամն վեցերորդ
միանգամայն արձակել զամենեսեան կենաց և պատուով։

Բայց 'ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի։

Թակ կանայք երանելի առաքինեացն, և կապելոցն և ան-
կելոցն 'ի պատերազմին, ընդ ամենայն աշխարհն Հայոց
հատորէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են՝
զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ։ Զի հինգ հարիւ-
րով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ որ միայն
առագաստինքն էին, այլ զբաղումն 'ի կրսերագունեաց
անտի։

Զմենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերե-
լով, ոչ ինչ ընդհատ երեւեցան յամենայնէ՝ որ ոչ ճա-
շակեցին զաշխարհ։ Զանգի եթէ աւագագոյնք էին,
և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոց
զգեցան։ Զոչ ինչ յիշեցին ամենեւին զանուն փափկու-
թեան մայրենի ազատութեանն, այլ իբրեւ մարդք՝ որ
վշտամբերք լեալ իցեն անդստին 'ի շինական սովորու-
թեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդ-
րագոյնք եւս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն
վշտաց։

Զոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներեւոյթ
զօրութիւնն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նե-
ղութեամբք առաւել եւս բարձին զբեռն ծանրութեան։
Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպա-
սաւորս, ոչ ոք երեւէր 'ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկնին իցէ
և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և

միապէս գետնախշիկը երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնարկ լիներ. քանզի և չճանաչէին իսկ զիսոտեղէնսն ընտրել 'ի միմեանց. մի գոյն թխութեան փարայիցն, և մի գոյն սեւութեան մնարից բարձիցն։

Ոչ գոյր նոցա համեմ խահամիքք անուշարար առանձինն, և ոչ հացարարքք որոշեալ 'ի պէտս ապասու ըստ աղատաց կարգի, այլ հասարակաց էր։ Շաբաթամուան ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր 'ի ձեռս արկաներ, և ոչ կրտսերքք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օշնան 'ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ իւղ 'ի զուարթութիւն խրախութեան։ Ղեդան առաջի սուրբք սկսեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չէկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց 'ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա՝ թէ գուցէ ոք ամենեւին 'ի բնականունդ դայեկաց և կամ բնաւ 'ի սիրելի հարազատաց։

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան 'ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանքք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրքք ապաստանի նոցա։ Ղորացան աղաղեցան բուրաստանքք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա։ Ոչ ոք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ոչ ոք իւրեանց լուան զվիշտս չարչարանաց սիրելեաց իւրեանց. առան գանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենեւին զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գըրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր պաստեռունս և 'ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային 'ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ 'ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամ ձովք երէոց, խոտաբուտ կենօք իբրեւ զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենեւին զսովորական փափկութիւնն։ Աեւացեալ ներկան մարթք մարմնոց նոցա. վասն զի ցերեկ

արեւակէզք էին և զամենայն գիշերուն գեռնաբեկք։ Պաղմոք էին մշտնջենաւորք՝ մրմունջք 'ի բերանս նոցա, և միութարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէից։ Դիւաբանեցին երկու երկու՝ իբրեւ ամոլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեանն, զի առանց վրիպելոյ հասցեն 'ի նաւահանգիստն խաղաղութեան։

Որոացան զկանացի տկարութիւն, և եղեն արուք առաքինիք 'ի հոգեւոր պատերազմի. մարտ եղեալ կը-ռուեցան ընդ մեղն կարեւորս, հատին կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա։ Խամճութեամբ յաղթեցին խորամանկութեանն, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա։ Խոնարհութեամբ կոփեցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն։ Զօթիւք բացին զփակեալ գըրունս երկնից, և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս 'ի փրկութիւն. լուան աւետիս 'ի հեռաստանէ, և փառաւորեցին զՍտուած 'ի բարձունս։

Այրիք որ 'ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք առաքինութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ Խակ կանայք կապելոցն կամք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. 'ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և 'ի հեռաստանէ եղեն վարդապետք միութարիչք բանդարդելեացն։ Որատամքք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ուռնիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա 'ի միութարութիւն։ Նարիւն ճիպոանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն։

Խազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք, տեսին և ինդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց

Digitized by Google

նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց։ Ընդարձակ յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա 'ի հեռաստանէ. 'ի Ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ 'ի նոսա։

Այլ իբրեւ այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Ընտաքնոյն երեւէին իբրեւ այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրոմն։ Ոչ եւս սովորեցին հարցանել զեկեալ ոք 'ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն՝ քաջութեամբ 'ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրոմն։

Այլ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց, և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր։

ՎԵՐՋ

Digitized by Google

ԲԱՆ ԽՐԱՏՈՒ

ՑԱՂԱԳՍ ՄԻԱՆՁԱՆՑ

Պարդիկ, որ են 'ի մարմնի և կամՔ ետուն զանձինս իւրեանց յաստուածպաշտութիւն, անդատին 'ի տղայութենէ խոկան՝ կրթին 'ի վշտամբերութիւն. հեռանան 'ի հայրենի բնակութենէն, և վարին յանապատ յանշէն երկիր. ոչ իբրեւ չարակնելով նախանձոտք փախուցեալք 'ի բաղմամարդոյ աղքատաց, այլ զի տեսանեն զաշխարհս լի ամենայն չարեաք, խոյս տան 'ի խորշս և 'ի ստորոտս անապատ վայրաց։

Օ որ տեսանեմք իսկ յաՃախ 'ի կոզմանս հարաւոյ բազմութիւն արանց՝ առանց կանանց միաբանութեան, յաղգաց և 'ի լեզուաց զմիով վայրաք հասեալք, ժողովեալք իբրեւ 'ի հայրենի գաւառս՝ առնեն զբնակութիւնս երկու ընդ երկուս, և կամ երեք ընդ երիս, և կամ եւս բազումն քան զսոքսս։ Այս շինեն իւրաքանչիւր խցկունս զատուցեալս 'ի միմեանց. որոմք պուճնաքեայ առ ցրտոյն պահպանութիւն, և զոյգ նմին ձեղուն՝ առ արեգական պահպանիլ. յատակք անպաՃոյՃք՝ շատացեալք խոտեղէն անկողնաք։ Այս քանզի բնութիւնս մեր ղուղակ է՝ սիրէ ծածկել զմերկութիւն, առնեն և նոքա հանդերձս անպաՃոյՃս և յոյժ գձուձս, կաղոքս ամարանի և թեզանաւորս ձմերանի, արկանեն և աղաբողինս մեկնաւորս։

Անաւանդ 'ի պարս շրջագայ անդադար պաշտամանն՝ երգս հոգեւորս հօրն բոլորեցուն մատուցանեն զուարթ հոգւով։ Այն ընդդէմ միմեանց զաչս 'ի վայր արկեալ՝ զծայրս ոտից մատանցն նկատելով, իբր թէ մի կէտ տեսակի ամենեքեան հայեացին. զաչ ձեռն 'ի վերայ ծնօտին եղեալ և զահեակն 'ի վերայ կրծիցն, որպէս կարծեմ ուսեալ 'ի բնական հարցն։ Այրկու են պատուականագոյնք 'ի մարմնի, կենդանական և խոհա-

Digitized by Google

կան, երկոքումբք երկոցունց սպասաւորեալ. կենդանա-
կանին՝ արտմտականն է հակառակ, իսկ խոհականին՝
արտաքերական բանս։ Զ՝որդ ձախուն զերասանակ 'ի
ձեռն առեալ՝ զարտմտականն սանձակոծիցէ, և զաջ ձեռն
'ի վերայ աջոյ ծնօտին եդեալ՝ խոհականին սպաս ունի
առ դրան բերման բանին, զի մի այլակութիւն յուղիղ
փառատրութիւնն խառնեսցի։ Զ՝ու ընդ այսու երկու
մասամբքս նահանջին ամենայն զգայութիւնքս. աչք
յուղիղ տեսութիւն և ականջք 'ի զգաստ լսողութիւն,
միտք 'ի սուրբ իմաստութիւն, և այլն ըստ իւրաքանչիւր
մասին։

Զ՝ու իբրեւ այսպէս կարգեալք և յօրինեալք, ամե-
նեքեան 'ի նմանութիւն վեցթեւեան սերովբէից շուրջ
պարփակեալք, ձայնս անհատս 'ի վեր հնչեցուցանեն,
և օրհնութիւն եռաչափս 'ի խորհուրդ միաբանութեան
արարչին իւրեանց բոլորեն։ Ո՛տիւն ամենայն պարա-
պեն երգոցն քաղցրութեան, յագեալք և զմայլեալք
'ի կերակուրսն երկնայինս՝ առլցեալք հասանեն 'ի ժամ
երեկոյին։ Զ՝ու քանզի մարմին ունին ըստ բնութեանս
մերում զգայութեանս, ուտեն՝ զի մի քաղցիցեն, և
ըմպեն՝ զի մի ծարաւեսցին։

Զ՝որդ դու իբրեւ լսիցես զուտելն, մի առ մերս ընթա-
նայցես. զի հաց է նոցա անպաճոյճ և բանջար վայրենի՝
զոր համով աղին համեմեն, և ջուր յստակ՝ զոր յամ-
պոց բերմանէ 'ի գուբս ժողովին։ Վակայն և զայս ոչ
երբեք 'ի տուրնջեան մատուցանեն 'ի դարմանս պիտոյից
մարմնոց. այլ միաբան պահելով զերկայնութիւն ա-
ւուրն, տեղի տան արեգական մտանելոյ. ձգեն երկայ-
նեն զերեկունն, մինչեւ աստեղք յիւրաքանչիւր կայանս
պայծառանան. զոհանան իբրեւ ընդ մի բերան առա-
լով. Ի՝ խաւարային ժամու զիսաւարային կերակուրս խա-
ւարային մարմնոյս տացուք։

Զ՝ու զայս ասելով, 'ի ձայն բարձր փառատրեն զսուրբ
Զ՝որորդութիւնն, ինդալից ուրախութեամբ ակրմբին
յիւրաքանչիւր տեղիս։ Զ՝ու որպէս ասացաքն՝ ուտեն հաց
և զուպա, և ըմպեն ջուր յուրտ։ Զ՝անզի գոն 'ի նոսա
ծերք փափկավարք, մատուցանեն ջուր ջերմ, զոր և բա-
րեխառն անուանեն. այլ գինի և կամ այլ ինչ զանա-
զանեալ, և գտանի ոչ 'ի սուրբ միայնանոցս նոցա։

Digitized by Google

Եւ յարուցեալ յանպատճոյճ ընթրեացն, միաբանութեամբ ասեն. Փառք քեզ Տէր, փառք քեզ թագաւոր մեր, զի ետուր մեզ կերակուր ուրախութեան. լցո զմեզ Հոգւով սրբով, զի դտցուք առաջի քո հաճոյք, և մի ամաչեսցուք. զի դու հատուցանես իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։ Եւ այսպէս տեառնագրելով զինքեանս՝ տան զանձինս սակաւ մի անօսր քնոյ. զի մի տհալ կերակրովք գեղեցիկ չինուած մարմնոյն շփոթեալ խանգարիցի։ Եւ եթէ յամեն եւս 'ի քունն, երազ հոգեկան տեսանեն, և անդէն զանուրջն մեկնեն իբր զբանս սուրբ մարգարէիցն։

Եւ զարթուցեալք առ հասարակ անդէն 'ի շրջանս պարուց բոլորին. ոչ հակառակք և ոչ ընդդիմացեալք, քաղցր հաւանութեամբ և հեզ հանդարտութեամբ։ Առաջնորդք դասուցն հնչումն ձայնի արձակեն, երգս հոգեւորականս քաղցրանուագս փոփոխելով. իսկ այլ կրսերագոյնքն ձայնիցն միտ դնելով, խառնեն զիւրաքանչիւր բարբառն յարմարելով և կազմելով զմիաբանութիւն հնչմանն, զի իբրեւ 'ի միոջէ բերանոյ ամենայն բազմութիւն ձայնիցն հնչիցէ։ Եւ այսպէս յերկարելով զձայնաւոր պաշտօնն, ծունր դնեն ամենեքեան, յաղօթս կան լռութեամբ. և 'ի ձեռն առաջնորդի աղօթիցն կանգնեալք ամենեքեան զփառատրութիւնն կատարեն։

Եւ կատարեալ զտուընջեան պաշտօնն, լաւ համբերեցան զգիշերան վաղայարոյց լինելով մինչեւ յառաւօտ աղօթիցն պարապեալք, և ընթեռնուն զգիրս սուրբս. իսկ ոք ունին շնորհս վարդապետութեան, առնեն մեկնութիւնս 'ի մխիթարութիւն լսողացն։ Պատմեն վասն լինելութեան աշխարհի յոչընչէ եղեալ, և կարգեալ մի ըստ միոջէ զիարատս բարեաց կարգեն 'ի լսելիս ժողովրդոցն վկայութեամբ սուրբ գրոց։ Եւ այսպէս ուսուցանելով մինչեւ մնռանալ լսողացն զամենայն իրս աշխարհականս, և չյիշել ամենեւիմբ զհարկաւոր կերակուր և ըմպելիս։

Եւ այնպէս ուրախացեալք 'ի սերն Աստուծոյ, մինչեւ չհամարեալ զինքեանս 'ի մարմնի, այլ յերկինս. և հեշտութեամբ անցուցանեն զերկայնութիւն գիշերոյն մինչեւ յառաւօտ։ Զանազի սոսկացեալք են յերկրէս

Digitized by Google

և զգեցեալք զերկինս։ Մինչէ մահ առ դրունս նոցա, և դառնայան դժոխք յիջանել նոցա։ Կենդանութիւն նոցա դրունք են աղօթից աշխարհի, և ոսկերք նոցա գանձ են ամենայն սպաւիրելոց։ Ուր նոցա յորդորիչ է ամենայն հեղգացելոց, և գործք նոցա վարդապետութիւն ամենայն կամեցողաց. դասակիցք են հրեշտակաց, և օթեւանք սուրբ Յերուսաղեմեանն։

Որդ զայս ամենայն գիտելով, եղբարք, պարտիմք թեւակոխել. և զնոյն նախանձ սրբութեան յանձինս բերելով, նմանողք լիցուք այնպիսւոյ բազմագունդ միայնացելոց յաշխարհէ և դիմելոց 'ի քաղաքամայրն վերին, որ ազատ է յախտից երկրաւորաց. քանզի ընկերակիցք են մերոյ բնութեանս, որ զօրացուցանէ զտկարութիւնս։ Որ՝ի այն կամեաց, բուռն հար հաւատովք, յուսա, սիրեա, և կարես տեսանել զայնպիսի նահատակութիւն։ Զի ոչ ինչ համեմատ են չարչարանք ժամանակեանք առ կեանսն՝ որ պատրաստեալ է այնպիսի ձգնողաց։

Քանզի յոյժ իսկ երկուցեալ եմ ես ընդ հեղգութիւնս մեր. գրեթէ զամենեսեան տեսանեմ թաւալեալ յերկրաւոր ստուգութեան։ Իսկ արդ բնութիւնս իմ ոչ կշտամբեալ յանգիմանել զիս, եթէ ստեղծայ մերկ, և եթէ եղայ 'ի դրախտին մերկ, և եթէ ելի անտի մերկ, և եթէ ծնայ մերկ, և եթէ անդրէն յերկիր մերկանդամ երթամ։ Որդ եթէ տանել աստի ոչ կարեմք, զի՞ եւս աստէն 'ի սմին թարթափիմք յաշխարհիս։ Որ՝երկայիր սոսկայիր, ով միայնակեացդ, մի թաւ ամուր ընդանակ լինիր նենգաւոր թշնամւոյն. գուցէ 'ի դարան մտեալ մնասցուս՝ զքեզ անդէն 'ի քեզ արշաւեսցէ կողոպտել, զերծանել 'ի քէն զգանձն երկնաւորս։ Խաւական համարեաց քեզ զտերունական կանոն, աչ ոք յերկրաւորացս կարէ երկուց տերանց ծառայել. որ յայտնագոյն իսկ ցուցանէ առանց միջնորդի և մեկնութեան. Ոչ կարէք դուք, ասէ, Աստուծոյ հաճոյ լինել և Մամոնայի։

Եւ արդ ես տեսանեմ 'ի մերում աշխարհիս և ոչ զոք ազատեալ յայսպիսի աղետից։ Յետս ընդդէմ ընթերցաք զգեղեցիկ գրեալսն. 'ի պատճառս ուխտաւորութեան հեռացաք 'ի սուրբ ծնողացն, և սպարաք բա-

զում հարս օտարոտիս. զորս պատուելոյ արժանի էր՝ անարգեցաք, և յորս ոչն ունէաք իշխանութիւն գնել մեծարանս՝ զախտ աղետից մերոց յոյժ ծախեցաք։ Զ-զատացաք 'ի հարկաց աղքունի՝ զորս առանց մեղայ էք հարկիլն, և մնաք ընդ հարկաւ ստացուածոց, որ լի են անառակ ագահութեամբ։ Ելեալք յանկողինս սուրբ հարսանեաց, և արարաք մեզ բարձրագահոյս առաւել քան զաշխարհի։ Փափկանամբ յանկողինս յարմարեալս, և յածեալ կոծին միտք մեր 'ի խորհուրդս աղտեղիս զգիշերն ամենայն։

Կոչիկք ոտից մերոց յանդիմանեն զմեզ, եթէ ոչ են սուրբ ճանապարհք մեր։ Հանգերձք մեր աղաղակեն զգործոց մերոց, եթէ մերկ եմք յերկնաւոր զգեստուցն։ Կրիւարք մեր ցուցանեն զմեզ, եթէ ոչ եմք յափշտակելոց ընդ առաջ Տեառն 'ի վերայ օդոց։ Շինուածք ապարանից մերոց յայտ առնեն, եթէ ոչ ունիմք մեք տաճար առանց ձեռագործի յերկինս, յոր մտանելոց են ամենայն զաւք ասկացելոցն յերկրաւոր ախտից։ Կալուածք անդաստանաց մերոց կշտամբեն զմեզ, եթէ չիք մեր բաժին 'ի վիճակն երկնաւորս։

Որդուք անյագք եղաք 'ի կերակուրս, և առանց չափոյ արբաք գինի պղտորիչ խորհրդոց և մտաց։ Խոր 'ի քուն ննջեմք ամենեքեան, և երազ թուի մեզ ճշմարտութիւնն։ Կափուցեալ են աչք մտաց մերոց 'ի տեսական խորհրդոց, և անյագ պակշոտեալ հայել 'ի կեանս աշխարհիս։ Զ-զգեղեալք զլսելիս 'ի սուրբ ընթերցուածոց, և ունկնդիր եմք բառաչման խաչանց մերոց։ Ել եկն մեզ հոտ անոյշ 'ի Հոգւոյն սրբոյ, վասն զի սիրեցաք մեք զլուղ ախտալից աշխարհիս։ Ել ճաշակեցին քիմք ոգւոց մերոց զկերակուր երկնային, վասն զի պարարեցաք զանձինս մեր 'ի զանազան խորտիկս։ Որթ է գոյն դիմաց մերոց, վասն զի ոչ զուարթացան երեսք մեր 'ի խորհուրդս սրբութեան։ Յաւալից են անդամք մարմնոց մերոց, վասն զի յառաջ քան զմարմինս՝ զոգիս ախտացուցաք։ Դերեզմանաց բուելոց նմանեցաք յանձինս մեր, վասն զի ունայն եմք 'ի հնորհաց սուրբ Հոգւոյն։

Ապան այսորիկ և ամենայն չարիք եկին հասին յաւուրս մեր. կենդանեաւ մերով տեսաք զդիակունս ան-

Digitized by Google

ձանց մերոց։ Բաղջ նահատակք մեր անկան 'ի պատերազմի, և սուրբ քահանայք մեր խողխողեցան 'ի ձեռաց անօրինաց. գեղեցիկ երիտասարդքն զենան 'ի սպանումն, և բազում կուսանք վարեցան 'ի գերութիւն. գիրգ կանայք անկան 'ի տառապանս այրութեան, և բազում որբք կականին դառնապէս։ Ազատ եկեղեցի անկաւ 'ի ծառայութիւն հեթանոսաց, և սուրբ քահանայք նորա կոփին չարչարին յանօրէն հաբկահանաց։ Բարձեալ է ողորմութիւն յաշխարհէ, և հեռացեալ է գութ յիւրաքանչիւր մտաց։ Արկինք 'ի վերուստ բարկացեալ են, և երկիր 'ի ներքուստ կայ յերերի տատանման։

Շինուածք մեր եղեն գերեզմանք դիականց մերոց, և վանտակք ձեռաց մերոց տապալեցան 'ի վերայ մեր։ Պայթեաց և պատառեցաւ թանձրութիւն երկրիս, և բազում մարդիկ 'ի վայր հոսեցին։ Ոչ սպասեաց որդի հօր, և ոչ քոյր զաչս եղբօր կալաւ, և ոչ եղ ձայն լալոյ կանանց 'ի վերայ ծննդոց իւրեանց, վասն զի լքոյց սով զաբերանս նոցա։ Հղօրք խորտակեցան յանկարծակի իբրեւ զմայրս բարձունս։ Իբանանու. հնձանք եղեն բարկութեան, և ճմլեցան ամենեքեան իբրեւ զոգկոյզս ընդ ոտամբ, փոխանակ գինւոյ՝ արիւն անմեղաց ցայտեցաւ 'ի հանդերձս մեր։ Պառնացաւ քան զբեղի կերակուր 'ի քիմս մեր, և 'ի քացախ դարձաւ սուրբ ըմպելիք մեր։ Ինդ հարեալսն հարաք ամենեքեան յոգի և 'ի մարմինս մեր, և ընդ մեռեալսն զմահ ճաշակեցաք։ Ընդ ո՞չ սպաքէն վասն մերոյ հեղգութեան անցին այս անցք չարչարանաց ընդ աշխարհ։

Ոչ անդր 'ի բաց կաց յաշխարհէ, որ վաղդ եկեր մեկնեցար յաղետից սորա. թօթափեալ ընկեա 'ի բաց զկեղեւանս ախտալից աշխարհիս։ Երկեաց իբր զըմբշամարտիկ, օծ իւղովն Քրիստոսի, զի մի կռուեսցին 'ի քեզ ձեռք ախոյանին։ Լակ արդ եթէ հեթանոսք, որ ըմբռնեցան 'ի տեսական խմաստութիւն, ոչ միայն 'ի ստացուածոց 'ի բաց կացին, այլ և յօրինաւոր կերակրոց հրաժարեցին, համառօտ և անպաճոյճ ըմպելեօք շատացան յանձինս իւրեանց, և աղաքինի մահուամբ վախճանեցան 'ի կատարած կենաց իւրեանց, ո՞րչափ եւս առաւել մեք պարտիմք նմանողք լինել սիրելեացն Քրիս-

տոսի, որք հրեշտակակրօնք զանձինս կարգեցին, խառնելով զինքեանս 'ի գունդս վերնոյն։

Լկայք և մեք, ով միայնացեալք, զօրէն Թշնամեացն մնցուք 'ի մերն ստացուած իբր յօտար երկիր, արմատախիլ զծառատունկս Թշնամւոյն կոտորեսցուք. իբրեւ զգերի առեալ ծախիցեմք 'ի նեղեալս զինչս մեր, ոչ զի ատիցեմք զազգականս, այլ զի սիրիցեմք զաղքատսն, որ են զօրականք Քրիստոսի և Ճշմարիտ բարեխօսք։ Այլ Թէ ասէն կապիս ընչիւք, և քեզէն վարես զքեզ յանգարձ գերութիւն, ուր չիք անդ գինք փրկանաց։ Փութա փութա Ճեպեա, եղբայր, ապրիլ յայնպիսի անողորմ գեհենէ. զի կարիցես հասանել յամուր քաղաքն, ուր ոչ գոյ քեզ կասկած կամ երկիւղ խախտիլ և վարիլ 'ի գերութիւն։

Լու եթէ եկեսցես զհետ գեղեցիկ վարդապետութեան հարցն, զորս վերագոյնն գծագրեցի քեզ զվարս սուրբ միայնակեցացն, յայնժամ կարասցես համբառնալ զաչս մտացդ առանց ախտից չարչարանաց, հայել և տեսանել զքեզ գեր 'ի վերոյ քան զամենայն երկինս։ Լրանի տայցես անձինդ քաջապէս Ճողոպրեալ 'ի վշտալից կենաց աշխարհիս, և խառնեսցիս յերամ միայնակեցացն, 'ի գունդս սրբոց արդարոցն, 'ի վիճակ առաքելոցն, 'ի գումարս մարգարէիցն, 'ի կաճառս մարտիրոսացն, 'ի բանակս հրեշտակացն և 'ի ժողովս անդրանկացն, 'ի մեծ քաղաքն երկնից, 'ի բազմականն աբրահամեան, և 'ի կերակուրս երկնայինս և յրմպելիս անկարօտս։ Զոր ես այնուհետեւ մարգարէն, որ ոչ պատուեցար 'ի մարմնական աշխարհիս. այլ Թեւածեալ Թռուցար յանմարմին աշխարհի, և հանգուցեալ գաղարեցեր յանապական ուրախութիւնսն։ Յորս լեցի և մեզ՝ վերջին գրչութեամբ աշխատողաս՝ միաբանութեամբ սուրբ ուխտիս վայելել, շնորհաւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

Digitized by Google

Digitized by Google

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՅԵՍՈՒԱՅ

ԵՒ

ԴԱՏԱՒՈՐԱՅ

Ա

Կոչեցաւ Յեսու նաւեանց 'ի Տեառնէ առաջնորդ Իսրայէլի. ընտրեաց երկու յերիտասարդացն Իսրայէլի, և առաքեաց առ 'ի լրտեսել զերկիրն և զՅրիքով։ Եւ էպէտ և առաւելաւ մեծացաւ քան զՄովսէս, ոչ ելանէր ըստ կարգ վարդապետին իւրոյ։ Մովսէս երկոտասան առաքէր լրտեսս. սակայն երկու ընտրեցան յառաքինութիւնն. թէ երկոտասանից խարխարեցաւ, զօրութիւն երկուցն կալաւ զտեղին, մինչեւ ամենայն ապստամբութիւնն նուաղեցաւ։ Եթող Յեսու զերկոտասանսն 'ի բաց, և զերկուսն բաւական համարեցաւ առ 'ի Ճշմարտութիւնն։ Մովսէս զերկոտասան ազգն միաբանեաց 'ի մասն լրտեսութեանն, զի այր զիւրաքանչիւր զտոհմն յորդորեսցէ քաջալերել. եթող յետոյ զբազումն, և յԸստուած միայն ապաւինեցաւ, քանզի և ինքն անցեալ էր ընդ հանդէս առաքինութեանն։

Բ. Վասն անցանելոյ Յեսուայ ընդ Յորդանան։

Ընդ 'ի սինէական լերինն զԺողովուրդն չարար արժանի 'ի վեր 'ի լեառն ելանելոյ, բայց միայն զՄովսէս. և յայտ արար զանմատոյցն պատիւ աստուածութեան

Digitized by Google

իւրոյ։ Այլ ասա առ ամին Յորդանանու զնոյն պատիւ մեծարանաց տապանակին ցուցանէ, բացագոյն երթեալ Ժողովրդեան 'ի նմանէ իբրեւ երկու հազար կանգուն. անդ մնատամբն Աստուծոյ փորագրեալ էր զգիր տախտակացն. ասա և անուն Յիսուսի գրով հաստատեալ կայր. "Մարդարէ ձեզ յարուցէ, ասէ Մովսէս, յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք,,։ Մեծ ամն 'ի հեբրայեցւոցն եկեալ պատմեաց մեզ. Յողովուրդն, ասէ, յամին և 'ի ծովն և 'ի Մովսէս մկրտեցան. և Աստուած անուն լոեր 'ի տեղւոջն։ Նովին բարբառով և ես երկրորդեմ։ Ոտք քահանայիցն 'ի Ջուրն Յորդանան մկրտեցան; իսկ այլ մարմինն ցամաք մնաց, վասն զի երկաթոյ ծնունդք էին և ոչ ջրոյ։ Տապանակն զանձն իւր ոչ մկրտէ, վասն զի անուն մարդոյ առանց մարմնոյ և հոգւոյ ոչ մկրտի. սոյնպէս և անուն Աստուծոյ անուամբ տապանակին նշանակէր։ Պահի անունն 'ի ցամաքի առանց մկրտութեանն, մինչեւ զգեցցի նոյն անուն մարմին և ոգի, և նովին մարմնով և ոգւով մկրտեսցի 'ի նոյն 'ի Յորդանան գետ։

Գ. Յաղագս կրկնակի վիմացն։

Երկոտասան վէմքն որ ելին 'ի գետոյ անտի, նման էր թիւն երկոտասան Առաքելոցն. և երկոտասան քարինքն որ իջին անդրէն 'ի գետն, երկոտասան ազգատոհմացն, որ ոչ կարացին ելանել 'ի ծովէ մեղաց։ Ընդ անցանել Ժողովրդեանն ընդ Յորդանան գետ՝ հաստատեսցաւ ցամաքեցաւ ջուր գետոյն. է որ 'ի վերս դարձաւ, և է որ 'ի վայր հոսեցաւ։ Այլ զայդ քարինսդ զոր հանաք 'ի միջոյ գետոյդ, և եդաք 'ի տեղւոջ՝ որ անուանի Գաղգաղ։ Պարտ է զբանս իմանալ. Ջուրքն՝ որ ոչ ըստ բնութեան 'ի վերս կոյս դարձան, հեթանոսաց 'ի վերս յերկինս ելանելն է. և Ջուրքն որ 'ի մեռեալ ծովն Սողոմայ հոսեցան, Ժողովրդեանն անդրէն 'ի մեղս դառնալն է։

Digitized by Google

Դ. Վասն Թլփատութեան՝ որ 'ի բլուրն է, և ոչ 'ի սրտի։

Թլփատութեանն Մովսէս ոչ էր օրէնսդիր, վասն այնորիկ և ոչ խափանել կարէր. և զոր խափանելն ոչ կարէր, և ոչ մեծարել կամէր։ Այն այնր որ յառաջն տեսանէր, լռեալ դադարեաց ամ՝ քառասուն և երկու յանապատի անդ. զի ետես զտկարութիւն նշանին։ Նշանաւորն եւեթ էր՝ յայլոց ազգացն որոշելով, այլ ոչ լրումն աստուածային կամացն արդարութեան։ Այլ ետ նմա անցանել ընդ Յորդանան գետ. 'ի մէջ բազմամարդի աշխարհին՝ ուր պիտոյ էր նշան դրոշմին այնորիկ, պահելով և զատուցանելով զանձինս իւրեանց 'ի բազում ազգացն։ Յեսու որդի Լաւեայ առ երկու ինչ պիտանացու փութայր Թլփատել զորդիսն Իսրայէլի, զատուցանելով յազգացն և անքակ միաբանելով 'ի Հրամանս պատերազմացն։ Բայց ինդիր առաջի կայ սակաւ բանիւք ասել վասն նորին Թլփատութեանն, եթէ ընդէ՞ր քարամբք Թլփատեր և ոչ երկաթով. քանզի ասէ գիր՝ եթէ "Դարձ Յեսու դանակս գայլախազեայ, և այնու Թլփատեաց զորդիսն Իսրայէլի"։ Ամարտս պատրաստէր զնոսա. և ամենայն զէնք պատերազմողացն յերկաթոյ կազմին, որք Թանալոց էին յարիւնս բազումս հինգ ազգացն զաւակին Համայ. տէգք և նիզակատէգք, սուսերք և սլաքք նետից, և ամենայն սպառազինութիւնք վառելոցն, Թէպէտ և որիշ որիշ էին տեսանելով ըստ իւրաքանչիւր զինուց, սակայն նիւթքն ամենայն երկաթ էր։ Սուրբ պահեաց զնոսա յարենէ Թլփատութեանն. զի Թէպէտ և ժամանակեան էր նշանն, սակայն աստուածային էր։ Ոչ մարթէր գործին, որ կենաց պատճառն էր, առժամայն շրջել և լինել նոցա մահու պատճառ։ Սակայն երկրագործ մարդկան երկաթն է կենաց պատճառ, որ զեզկիր գործեն. և վասն ագահութեան իւրեանց զմիմեանս զրկեն և զլանան, և անցանեն ըստ եղեալ սահմանս հարցն իւրեանց։ Պոյ եւս և այլ տեսակ՝ որ վատթարագոյն է քան զերկուս ասացեալսն։ Բազմաց յանուն աստուածոյն կուռս երկաթիս գործեն, տեգս և նիզակատէգս նուիրեն այնմիկ,

որպէս եղեւ. գարշելի էր տեսողացն ներգործողաց, զորս Յեսու ոչ արժանի համարեցաւ մատուցանել 'ի նիւթ լիութեանն. այլ և այնչափ մեծարեաց զդանակն գայլախաղեայ, մինչեւ ընդ իւր աւանդեաց 'ի Թամնասաքարի։

Ե. Վասն սպարապետին երկնաւորի և վասն Յեսուայ որդւոյ Նաւեայ։

Սպարապետ եմ, ասէ, զօրաց մեծաց Տեառն։ Յայտ արար և եցոյց՝ զի երկոտասան բիւր հրեշտակաց եկեալ հասեալ էր յօգնականութիւն երկոտասան ազգին, և նա վերագոյն քան զբազմութիւն գնդին զանձն ցուցաներ։ Եւ այլ եւս խոնարհագոյն մատամբ աղերսեր Աստուածն Իսրայէլի և ասէ. Խոտոտուրդ իմ զի արարի քեզ և կամ զինչ մեղայ քեզ. ոչ վասն քո յայտնեցի դիւթին Իսրայէլամու. Իսրայէլ առաքեաց կոչեաց զնա 'ի Սիջագետաց անիծանել նզովել զքեզ, և զիս նմա յայտնեցի՝ դիւթին և յանցաւորին, զի դու մի յանցանիցես. և եւս անարգագոյն իշոյն, զի դու իմասանացեալ զգաստասցիս։ Եւ եթէ առ անարգսն այնպիսի յայտնի Աստուած վասն մարդկան սիրոյ, զինչ ինչ ասիցէ ոք վասն հրեշտակի՝ որ երեւեցաւ Յեսուայ, եթէ ոչ ինքն Աստուած էր՝ և երեւէր իբրեւ զհրեշտակ։

Զ. Վասն ձայնական կործանման Երիքովի։

Երիքով, որպէս ասէ գիրն, ամրացեալ փակեալ կայր ամփոփեալ. ամենեւին ոչ ոք ելանէր 'ի նմանէ, և ոչ ոք մտանէր 'ի նա։ Տիպք օրինակի էր նա բազմադիմի մեղաց առաջին մարդկային բնութեան։ Երիքով եօթնեկին պարսպօք ամրացեալ փակեալ կայր. ոչ Աստուած ապաւինեալ, այլ յորմոցն լայնութիւնն և 'ի բարձրութիւնն. և մարդոյս բնութիւնն եօթն մասամբք պարսպեալ էր զարտաքին և զներքին չինուածս նորա. երկու աչօք և երկու ականջօք և երկու ռունգացն առուօք, և բերան նորա եօթն մեծամուր խորհրդոց։ Այս

Digitized by Google

եօթնեկին պարտապէ ապաստամբեալ մարդիկ՝ ոչ հնազանդեցան Ի՞սուծոյ, ցարդարութիւն փակեալք 'ի փակելումն, ամրացեալք էին և կաշկանդեալք 'ի կապեալն ապաստան էին. ամենայն թշնամիք իւրեանց ընդ նոսա բնակեալ էին, անձամբ զանձինս իւրեանց սպանեալ էին. կենդանւոյն դիակունք մեռեալ 'ի գերեզմանի բնակեալ էին, և 'ի քաղաքի համարէին գերեզմանք նոցա՝ որ 'ի վախճանի ձայնիւ աւերելոց էին։

Լսին եմուտ Յեսու որդի Լաւեայ առ քահանայսն և ասէ ցնոսա. Հրամայն պատուիրանի տուք ամենայն մարտիդ, պատերազմող ամենայն մարդկանդ յառնել պատել շուրջանակի զքաղաքն. և տապանակն կտակարանաց երթիցէ զհետ նոցա, և եօթն քահանայքն եօթն փող 'ի ձեռն առեալ զտերունին՝ հարկանելով զհետ տապանակին երթիցեն։ Լեց օր՝ մի մի նուագ հարկանիցէք. և յաւուրն եօթներորդին եօթն անգամ եկեսջիք առաջին օրինակաբն. և յեօթներորդ աւուրն յեօթն նուագին՝ ուժգնագոյն քան զայլ աւուրցն հարկանիջիք զփողն. և 'ի գոչիւն բարբառոյ զօրացդ ամենեցուն՝ արձակեսջիք 'ի վերայ քաղաքիդ, և առ հասարակ պարիսպքն անկեալ կործանեսցին առաջի ձեր։

Բայց ես սակաւ մի ըստ երրեակ մնասանցն շարժեցից զմիտս իմ՝ որոշելով զվեցան 'ի նոցանէն, և յեօթներորդումն առնուլ զնշանակ յաղթութեանն։ Զվեց օրն մի մի նուագ. երկու երկուորեակ թուով են արարածքս՝ և ապականացուք. առաջինն կոչի մնանաւոր՝ լոյսն արեգականս. երկրորդն՝ ներքին երկինս, որ վերին ջրոցն է հաստատութիւն. երրորդն՝ երեւումն ցամաքի և բոյսք աճեցեալք. չորրորդն՝ գունդք լուսաւորացդ. հինգերորդն՝ ծնունդք ջրոց և բղխումն ցամաքի. վեցերորդն՝ որ գազանք և մարդիկ արարան։ Լեցեքինքս, որպէս յառաջ ասացաք, յառաջախաղաց և կայանաւորք են. չարասէր թշնամին մեր 'ի սկզբանէ արկ ընդ ապականութեամբ զվեց մնասունս աշխարհիս, իբրեւ որմարդեալ արաբ զմեզ և բանդիւք տանջեաց։ Լու զանապական եօթներեակն կամեցաւ ընդդէմ մեզ կապել. յԴամայ մինչեւ ցՈվսէս այսպէս. իսկ առ Ովսէսիւ լուծաւ իշխանութիւն նորա։ Լու եթէ Ովսէս զթագաւորութիւն նորա մահուն աւերեաց, զոր ապա յետոյ 'ի

ծանօթութիւն եկեալ մեծի մարգարէին Դաւթայ՝ ասէր «Ինչ-մոյն պակասեաց զէն մինչեւ 'ի ոտս. զքաղաքս նոցա աւարեցեր»։ Եւ եթէ ընդ մարդկան միայն տայր Յիսուս պատերազմ, այլ 'ի խորհուրդս ծածկեալս՝ ընդ սատանայ և ընդ դեւս կռուէր։ Ի ձայն փողոյն մեծի սաստկաձայն լալիք անասուած մարդկանն լինէր. 'ի ձայն փողոյ կոծոյ՝ շուրջ գային քահանայքն զքաղաքաւն։ Զվեց աւուրցն լացին զվեցօրեայ արարածն, որ յառաջագոյն մեռեալ էին 'ի մեղս իւրեանց. յաւուրն եօթներորդի՝ որ նա ինքն է անմեղ և անապական, յայնմ աւուր սպանին զմահ և կործանեցին զքաղաքս նորա։

Այս թէ ասիցէ ոք. թէ մարդ և անասուն քաղաքին սատակեցան 'ի սուր սուսերի զօրականին, նիւթք պղնձոյն և երկաթ առ ինչ սրբեցան և նուիրեցան 'ի գանձս տան տեառն։ Ա երագոյն ասացի, դժոխոցն նմանութիւն ասաց զՅրիքով. և Յիսուս զդժոխս աւերեաց, և զմահ սպան 'ի միջոյ նորա և մարդկան. մարդոյ պատուհաս էած 'ի վերայ, և անասուն զի արիւնակից մարդկանն՝ չարար արժանի ապրեցուցանել զնոսա։ Սակ կռանակուռ նիւթք կահին օտար էր 'ի բնութենէս մերմէ, ոչ ինչ մարմնաւոր պատուհասին. ոչ ինչ յանձանց ազահութիւն հրամայեաց բառնալ, այլ յամենատուրբ գանձն աստուածային նուիրացն։

Դարձեալ գոյ և այլ բարառնութիւն 'ի տեղւոջս։ Որպէս պղինձն հանդերձ ամենայն նիւթակցովքն իւրովք անզգայ և անմատոյց է 'ի պղծութիւն, եթէ կամեցեալ էր մարդկանն կամաւոր սրբութեամբ, անպիղծս կարէին ունել զինքեանս։

Է. Վասն Ռեբեքայ երիքովացոյ, որ հաւատով ապրեցաւ 'ի սրոյն Յիսուսայ։

Յանդգնագոյն ասացից վասն ազի արձանին։ Յամենայն դարս եկեղեցի մնքսէ 'ի հեթանոսաց. 'ի սկզբանն 'ի մահաբեր ծառոյն զծառն կենաց՝ որ կայ պահի մեզ 'ի վախճանի. յեղբայրասպանէն Կայենէ զՀաբէլ՝ որ գովութեամբ քարոզ կամաւոր յեկեղեցւոջ. 'ի շուայ-

լեալ դաստն՝ զԼոյ արդար ընտանեաւքն հանգերձ. յա-
նիծեալ սահմանացն Ղամայ՝ զԼեքիսեղեկ. 'ի մա-
դիանացւոցն՝ զԱմամբ, 'ի մովաբացւոցն՝ զՀռութ,
'ի Լոգունայ՝ զկինն անանուն։ Լէ, ասեն. 'ի պատուհա-
սի եղեւ։ Լկայեմ և ես, և յելս իրացն հայեաց. 'ի
շանթակէզ հրոյն ապրեցաւ ընդ խառնաւոր դստերսն
'Ի ովտայ, ոչ վարեցաւ 'ի պատուհասի չարեացն, նշան
գեղեցիկ կանգնեցաւ առ երիս ինչս պիտանացու։ Ղուք
էք, ասէ, աղ երկրի. 'ի ձեզ աղի ամենայն անհամու-
թիւն աշխարհիս։ Լան է աղ հողոյ, միանգամայն և
ջուր մածեալ. ուր ջուր է, անդ և օդ խառնի. ունի աղն
բնութեամբ և զհրոյ ջերմութիւն. և չորեքեան նիւթք
աշխարհիս 'ի յանցանացն Լդասայ անկաւ ընդ ապակա-
նութեամբ և դարձաւ 'ի հողոյ բնութիւն։ Լակ առ
կնոջն 'Ի ովտայ չորեքեան նիւթք ձուլին և առնին աղի
բնութիւն. ամենեքեան նոքա կենդանի են յեկեղե-
ցւոջ։ Լուար զանուն եկեղեցւոյն, ուսիր և զաւանդ
զթարգմանութիւն անուանդ. և եթէ դու տեղեկագոյն
իցես, այլոց փութասիր ուսուցանել։ Լեկեղեցի աստ՝
կոչումն անուանի, որպէս 'ի չգոյութենէն է 'ի գոյու-
թիւն. վերատին նիւթ գործի աշխարհս, 'ի մահուանէ
'ի կեանս, 'ի ցրմանէ 'ի ժողովումն։ Ղոյր էր կնոջն
'Ի ովտայ Լոախաբ՝ և զաւակ 'ի Ղամայ յաղգէն. հա-
ւատաց յԼստուած և եղեւ դուստր Լբրահամու, ոչ
ասի զաւակ Ղանանու։ Լդն է պատուհասի նշանակ,
և անանցութեանն խմացմունք, և յարութեան բնու-
թիւն։ Լդն արձան՝ թէպէտ և նշանակէ յաղթող ե-
կեղեցեաց, զհարուածս հինգ քաղաքացն քարոզեսցէ.
իսկ հաւատք կնոջն առաքինւոյ՝ նշանակ է եկեղեցւոյ,
և Հնազանդութեան և փրկութեան, և յոյս դարձի հե-
թանոսաց, և դուռն բացեալ մեղաւորաց. միանգամայն
քարոզէ զգալուստ որդւոյն Լստուծոյ։

Ը. Վասն անշինութեան Երիքովի, և քարկոծելոյն Ա.քարայ։

Լպա եթէ ոք ժպրհեսցի անցանել ընդ նզովս ընդ
այս, ի՛ր օր զհիմն արկանիցէ, զանդրանիկ որդին թա-
ղիցէ. և ի՛ր օր կատարեսցէ, զկրսերն. բոլոր միջոց շի-

Digitized by Google

նուաճոյն ընդ անիծիւք մնաց։ Իսկ Յեսու որդի Նա-
ւեայ գործիական ձայնիւ աւերէ զՅրիքով, և բնական
նզովիւք անիծանէ զշինելիս նորա, զայս դժոխս զոր գե-
րեզման հաստատեցին մարդիկ։ Ի գալուստ որդւոյն
Աստուծոյ 'ի ձայն փողոյ աւերելոյ՝ և ոչ մնայ անդր ոսկր
վախճանելոցն և ոչ մի որպէս զՅրիքով, ամենեւին ոչ
մնաց շունչ կենդանի. և ոչ փորին այլ գերեզմանք մարդ-
կան յերկրի, որպէս և վեց քաղաքն այլ ոչ շինին մին-
չեւ յաւիտեանս ժամանակաց. վասն այնորիկ և Յեսու
անջինջ անէծս կոէր 'ի վերայ տեղւոյն այնորիկ անշի-
նուլթեանն։ Իսկ Թագաւորն անօրէն Աքաաբ անցա-
նէր զանիծիւք մարգարէին. Թէպէտ և զտեղին փոխա-
նակեաց, զանունն չեբարձ 'ի քաղաքէն. եթող զՀին-
Յրիքով, և խոնարհագոյն մերձ 'ի կողմանս Սոդոմայ
շինեաց, և անուանեաց նոր Յրիքով։ Յաւ բան նզովիցն
կատարեցաւ 'ի վերայ նորա և որդւոց նորա. ետ հա-
տոյց զամենայն տոկոսիս անձամբ և կնաւն և եօթանա-
սուն և երկու որդւովքն զորս կոտորեաց Յեհու։ Յաւ ջնն-
ջեցաւ յիշատակ նորա յաղագս համարէ արդար Թագա-
ւորացն։ ՅԹէ ոչ օրհնութիւնքն Յոլիսէի մարգարէի
հասեալ էին 'ի վերայ նորա, վաղագոյն քանդեալ լի-
նէին քան զառաջինն Յրիքով։

Թ. Ընդէր վիճակաւ և ոչ մարգարէութեամբ ցուցաւ Աքար յանցաւորն Աստուծոյ։

Զի վիճակն զմարգարէի գործ գործէ, որպէս 'ի ծո-
վուն, նոյնպէս և 'ի ցամաքի։ Պարձեալ մարդկան խրն-
դիր ետ առնել յանցաւորին, զի մարդն 'ի մարդկանէ
յանդիմանեսցի։ Պողոմնքն այս է՝ որպէս ցուցանի. ամ-
ման մի նկարագեղ. և բաժակ մի կրկին յերկերիւր սա-
տերէն, և լեզու մի ոսկի։ Բաժակն արժէր ուԹ հա-
րիւր դրամ, իսկ լեզուն ոսկի՝ կշիռք են իբրեւ զլտերսն.
Թողին զլտերսն անուն, և զձեւոյն անուն կարդացին լե-
զու։ ԲրծաԹն և ոսկին 'ի նուիրացն Աստուծոյ գողա-
ցաւ. իսկ զցեցակեր ասրեղէն հանգերձն՝ 'ի նգովելոցն
զքաղաքն և զինչս նորա։ Մենայնին գող Աքար է։

Digitized by Google

Ժ. Յաղագս դաբաւոնացուցին խաբէլին զՅեսու, և ապրելոյ 'ի սրոյ նորա։

Իսկ քանանացիքն անիծեալք, և յիրաւի անիծեալք, ոչ ունէին զերկիրն 'ի լարաբաժին ժառանգութեան, այլ 'ի խաբէութենոյ և 'ի պատահմանց. քանզի մասն Եմոյ ցեղին հասեալ էր։ Դատաւոր արդար անիրաւ դատաստան ոչ առնէ. "Անիծեալ, ասէ, որ փոխեսցէ զսահմանս հարց իւրոց"։ Օ այս սահմանափոխութիւնս նախ քանանացիքն անցին զանիծիւքն. իսկ Աստուած' իրաւարար ամենեցուն, անդրէն դարձուցանէ։ Եւ Յեսու որդի Դաւեայ ոչ 'ի բազմութենէ նոցա զարհուրեցաւ, և ոչ 'ի պատրաստութենէ նոցա սոսկացաւ. առեալ զբազմութիւն զօրաց իւրոց' 'ի Դաղգաղայ 'ի Դարիզին լեառն հասանէր։ Օ Դարիզին եկեղեցացոյց, և զԴերաղ սարկաւագանոց շինեաց. զոր և անէծս կարդաց 'ի Դերաղ, և զօրհնութիւնս 'ի Դարիզին։

Եւ զինչ իցեն այս երկու լերինքս հուպ յիրեարս և բաժանեալ 'ի միմեանց։ Մինութիւն երկդիմի բնութեանս մերում. զանէծս 'ի գործս աղտեղի բնութեանս մարմնական, և զօրհնութիւնս յոգիս և 'ի մարմինս 'ի գործս արդարութեան։ Զայն զի ձոր բաժանէ զԴերաղ և զԴարիզին, և 'ի միջոցին շինեալ քաղաք Շամրին։ Եւ այս ոչ է օտար 'ի մեր բնութենէս. 'ի միջի սահմանք զսրտին բնութիւն, և զնոյն խորհրդարան հոգւոյ և մարմնոյ։ Երդեցի աջակողմն մեր Դարիզին, և ձախակողմն մեր Դերաղ։ Հարկ է ընդ երկու ցնցուղս ականջաց 'ի ներքս մտանել, և ընդ ձայնական հնչումն 'ի սիրտն ազդեալ. զօրհնութիւնն 'ի ներքս առցուք, և և զանէծսն արտաքս հալածեսցուք. ապա երկոքին կողմանքս մեր Դարիզին եղէն և ոչ Դերաղ։

Դայց այժմ ինդիր է վասն երկձղի փայտիցն՝ զորմէ թագաւորքն քանանացւոց կախեցան։ "Դրէք, ասէ, զտաս ձեր 'ի վերայ արանց թագաւորացդ"։ Յայտնի՝ քաջ զօրականքն զմարդիկ կոխէին, իսկ 'ի ծածուկ՝ ըզստատանայ և զամենայն չարութիւն նորա։ Լապէ զնա Յեսու որդի Դաւեայ գործակցօքն իւրովք հանդերձ,

Digitized by Google

և գնե ընդ ոտիւք երկրաւոր սպառազինաց իւրոց։ Մնքն ոչ կոխե, զի Յեսուդ անուն հրամայել գիտե զդատողական խրատն, 'ի ձեռն նոցա կարգէ յուղղութիւն։

Հինգ թագաւորքն զորս կոխեն և կախեն զփայտից, կայ 'ի տեղւոջն ընդդիմանութիւն և տեսական տարացոյց։ Հինգ թագաւորքն մարդադէմք էին կերպարանքն, և օձաձեւք էին, հին վիշապին բնակութիւնք. իսկ տեսակք, գործք, տարացոյց, ձեւ՝ բնաւոր օձին։ Ուստ հինգ թագաւորացն հինգ ոտք են օձին, 'ի սողելն իւրում հինգ պատ առնու կրկնելովն։ Կոչեաց զեբրայեցիսն Յոգիպտոսէ առնուլ զվրէժ անիծիցն յառաջնոյն օձէն և 'ի վարդապետէ նորա։ Կապէ զնոսա Յեսու զհնգեսեան զօձաձեւսն, և տայ կոխել այնմ զաւակին՝ յորում կայծակն կենաց ծածկեալ պահէր։ Արդկայնն ոտքն կոխելին, և աստուածայինն հուրն այրէր զմեղսն։ Օ փայտն ոչ հրամայէ կոխել, զի չէր օձաձեւ. թիւ թագաւորացն օձաձեւ էր, զձեւն կոխեաց։

Եթէ 'ի բնութիւն մարդոյս եկեսցես և խմաստուն մտաւք քննեսցես, գտցես նման նորա աղատութիւնն. եթէ կամի՝ օձաձեւ լինի, և եթէ կամի՝ աստուածաձեւ։ Ազաքինութիւն մարդոյն՝ է աստուածայինն կերպարանք. զոր Աստուած բնութեամբ ունի, մարդ ստանալով կարէ ստանալ։ Այս եթէ ընդ երկիր պչնուցու, և զգործովք սորա շաղեալ պատի, ինքն զինքն օձաձեւ արար, որպէս աչք, ականջք, բերանով, և հինգերորդ ներքին համքն։ Արիաբան շաղեալք պատին սոքա հնգեքեան, մանաւանդ զի իգական մասամբք, կանացի ձայնիւք մեղկին լսելիքն մարդոյն. մեղկեալն հանեալն անկանի անքակութեամբ ընդ զուգակցին, աչք ընդ աչս կքի, և հոտ ընդ հոտ հոծի, բերան համբուրէ, և համք ընդ համ խառնին, զոր խոկումն անուանեցան։ Այս չարք՝ միաբանութիւն առ ծառոյն յայտնեցան։ Յղացաւ օձն զկերպարանս աներեւոյթ չարութեանն և եղեւ արու բնութիւն միջնորդութեամբ պտղոյ ծառոյն. պատրեաց և մեղկեցոյց զհինգ զգայութիւնս իգական մասին։ Յապուշ կրթեաց զմիտք կնոջն, և մոռացումն արար զպատուիրանն Աստուծոյ. մինչ չեւ մրտեալ 'ի պատերազմն՝ պարտեցաւ 'ի հայելոյն. յորմէ զու պարտիս զգուշանալ։

Digitized by Google

ԺԱ. Վասն արեգական և լուսնի, որք լուան Յեսուայ և եղեն զօրավիգն նմա 'ի գործ պատերազմի։

Եւ հինգ թագաւորքն միայն էին անդ, այլ որպէս ոմանք յարտաքնոցն ասեն, թէպէտ և առասպելական բանք իցեն, երեք բիւր դեւք, ասեն, որ անկան յերկնից, հանին զմարդն 'ի գրախտէն, և զաղտոր աշխարհս ընկեցին ընդ մեղաւք և ընդ մահուամբ։ Այլ այն օր 'ի Գաբաւան երեսուն հազարն այն եկեալ էին 'ի թիկունս օգնականութեան հինգ թագաւորացն, թերեւս կապրացեն սատակել զորդիսն Եբրայեցւոց, յորում ՀՐԱՇՆ ազատ՝ երեւէր անշիջանելի. և խաւարասէր զօրք չարին բազմանային, իբրեւ զթանձրութիւն մարախոյ զերկինս ծածկէին։ Գոչեաց Յեսու որդի Նաւեայ իբրեւ զառիւծ. ներքուստ 'ի վեր դողացոյց, փախոյց և ցրուեաց զնոսա իբրեւ զվատ երամն աղուեսուց։ Սուր 'ի վերայ եղեալ կոտորէր զնոսա մինչեւ 'ի կողմանս Ազեկայ և Մակեդեայ։ Իսկ նոքա մինչ դեռ փախստեայ երթային յերեսաց որդւոցն Իսրայէլի զառ 'ի թափոշն Սորոնիմ, որոտաց Տէր յերկնից, և սկսաւ արկանել 'ի վերայ նոցա վէմս կարկտախառն. յորոց սատակեցան քանանացիքն առաւել քան 'ի սրոյ որդւոցն Իսրայէլի։

Իսկ եթէ Յեսու բաւական էր առնուլ զվրէժ բարկութեան 'ի նոցանէ, վէմք կարկտին զինչ պիտոյ էին նմա յօգնականութիւն. վերագոյն ասացի՝ թէ խմացար։ Սորոն է սատանայ, ոչ 'ի վերայ հողոյ, այլ 'ի վերայ օդոյ, որ իբրեւ զամպ եկն եկաց 'ի վերայ քանանացւոցն ամենայն բազմագունդ դիւաքն իւրովք։ Յեսուայ նիզակն անդ չկարէր հասանել, վերին օգնականի պէտք էին. զէն առ զէն և ձայն առ ձայն մարդկաձայն բարբառոյն. ձայն որոտմանն երկնաւոր սրոյն՝ հրածին կարկուտն՝ զվերին դիւացն զգունդսն տանջեցին։ Այսուհետեւ Յեսու զԱստուած վերագոյն քան զարեգակն և զլուսին, որ և հասեալ կայր նոցա յօգնականութիւն։ Թանիւ զանուանս լուսաւորացն հրամանաւ 'ի մէջ բերէր Յեսու. այլ մտոք՝ Տեառն լուսաւորացն հրամանն տայր, զի կացուսցէ. որպէս և գրեալ է. "Արեգակնդ 'ի վերայ Գա-

Digitized by Google

բաւոնի կացցէ, և լուսինն 'ի վերայ ձորոյն Լեռնայ։
Մեռելեաւոյն Թեւս ունի արեգակն քան զլուսինն.
իսկ Յեսու որդի Նաւեայ Թեւաւորին և անթեւին
հասարակ առնէր զհրամանս պատասխանւոյն. վասն զի
զկառավարն ամենեցուն մօտակաց տեսանէր։

Դուռն են լսելիք մտաց. արեգակն և լուսին դրունս
ոչ ունին լսելեաց, ընդ որ անկաւ հնչումն ձայնին 'ի
ներքս։ Յորժամ ականջօքդ պարագաղէս զհրամանն հը-
զօրագոյն, ինքեանք քեզ առանց ականջաց ի կող պա-
լել նման։ Ոչ հրաձգութիւնս յերկինս ինդրէր, այլ
զարեւապաշտոն յանդիմանէր։ Մշտաշարժ ասեմք զա-
րեգակն, որպէս զօդոյ բնութիւն։ Դիւրին է կենդա-
նւոյ կեալ 'ի միում տեղւոջ. իսկ յարաշարժ հնչոյ նո-
րա անհնարին է։ Յեսու այնպէս սաստեաց լուսաւո-
րացն, իբրեւ զանշունչ քարինս ընդարմացոյց՝ միով առ-
երկուս կշռելով։

ԺԲ. Առ ինչ անուանեցաւ Մասեփատ լալեաղ։

Լալա եկն ելհաս հրեշտակն Տեառն 'ի Գաղգալա 'ի
լալեաղ անդր, որ յետոյ Մասեփատ անուանեցաւ. և
Դաւիթ մարգարէ կարդաց նմա հովիտս տրտմութեան։
Լոյն հրեշտակն որ 'ի Գաղգալա Յեսուայ յայտնե-
ցաւ, նոյն երեւեցաւ 'ի Մասեփատ. և 'ի Բեթել խօ-
սեցաւ, և յանդիմանեաց զնոսա։ Հանգարձին իսրայէ-
լացիքն զձայնս իւրեանց և լացին դառնապէս առ հա-
սարակ. վասն այնորիկ անուանեցաւ անուն տեղւոյն այ-
նորիկ Լալեաղ և Հովիտ տրտմութեան։ Նա մատու-
ցին անդ պատարագս Տեառն Աստուծոյ Իսրայէլի։

ԺԳ. Վասն գեղմանն Գեդէոնի, որ կրկին ուներ զապացոյցն։

Ասէ Աստուած ցԳեդէոն. Արարի քանզամ են զոչոքդ,
որ ընդ քեզ են. ոչ տամ ես զՄադիամ 'ի ձեռս քո
նոքազք. զուցէ պարծեսցին որդիքն Իսրայէլի 'ի վերայ
իմ և ասասցեն՝ թէ ձեռն իմ հզօր փրկեաց զիս և ոչ
տէր Աստուած։ Դարոզ կարդասցես զօրացդ և ասաս-

Digitized by Google

ցես. այպէս ասէ տէր Աստուած Իսրայէլի. եթէ իցէ
ոք 'ի ձէնջ վատասիրտ զահի հարեալ՝ դարձցի։ Այ-
դարձան 'ի Ժողովրդենէ անտի քսան և երկու հազարք։
Դարձեալ խօսեալ սկսաւ Տէր ընդ Գեդէոնի և ասէ.
Տակաւին բազում են զօրքդ. ա՛ռ տար զնոսա 'ի ջուր
անդր, և անդ զփորձ ցուցից դոցա քեզ. և եղիցի՝ զոր
ասացից թէ ընդ քեզ երթիցէն, և զոր ասացից թէ
ոչ երթիցէն՝ նոքա դարձցին։ Ապա խօսեալ սկսաւ Տէր
ընդ Գեդէոնի և ասէ. Ամենայն այր 'ի զօրականացդ՝
որ միանգամ լափելով լափեսցէ լեզուաւ իւրով 'ի ջրոյ
անտի իբրեւ զշուն, 'ի մի կողմ որոշեսջիր զնոսա. և
ամենայն որ 'ի գուշն հարեալ՝ ցու�ն հարկանիցէ, զայն
ուրոյն կացուսջիր։ Այ գտան շնաբարքն լակելով արք
իբրեւ երեք հարիւր. և այլքն ամենայն 'ի գուշն հա-
րեալ ցուակաթեալ ըմպէին։ Կարի բազում են զօրքդ,
ասէ Աստուած ցԳեդէոն. յորժամ պատերազմին յաղ-
թես, մոռանաս զիմ բարերարութիւնս, որպէս սովոր
են առաջին հարքն ձեր։

Այրկու իմացական տեսակ յայտնեցան 'ի տեղւոջ
անդ։ Զահի հարեալ վատասիրտքն, քանզի մարմնա-
սէրք էն՝ ընդ երկիր միայն աչուցեալ՝ զերկինս ոչ կա-
րէն տեսանել, յաւիտենական կեանքն ծածկեալ է 'ի
նոցանէ։ Իսկ ինն հազար եօթն հարիւր արքն 'ի ջուրն
քննութեան փորձեցան. և նոքա յոլովագոյն երկրա-
թաւալք էն, և զեխ կենաց աշխարհիս ցանկացեալք.
թողեալ զկանգնորդ կեանսն՝ 'ի պորտ և յորովայն սո-
ղեալ կան։ Թէպէտ և ոչ վատասիրտք անուանեցան,
և ոչ 'ի քաջացն կողմանէ արժան էր զնոսա ասել։ Այ-
ցա 'ի գուշն հարեալ, 'ի վերայ կրծիցն անկեալ՝ արջա-
ռաբար ըմպէին ջուր. զանասնական բարն յայտ արա-
րեալ, որոց երկիրս միայն է բաժին։ Մի Հանապարհ է
երկոցունց յիւրաքանչիւր տունս դառնալոյ. "Տունք
նոցա, ասէ, գերեզմանք նոցա եղիցին"։ Ո՞ ասն զի 'ի
հողս իւրեանց կարդացին զանուանս իւրեանց, նոքա ե-
ղիցին բնակութիւնք նոցա յաւիտեան. չիմացեալք ըզ-
մարդկային պատիւն, հաւասարեցան անասնոց և նմա-
նեցին նոցա։ Այս նախատինք 'ի մարդարէէն մարդկան
ասացան։ Իսկ երեք հարիւրքն սակաւիկ մի զգլուխն խո-
նարհեցուցեալ 'ի ցանկալի վտակս ջրոցն՝ անուշու-

թեամբ ծայրիւք մատանց ձեռինն, 'ի ներքոյ 'ի վեր ընդ-
գէմն երեսացն շրջելով, լեզուաք իբրեւ զշունս լակեր-
ոչ զաւանդակ ծարաւն արբուցեալ, այլ փոքր 'ի շատէ
զերաշտութիւն կոկորդացն զովացուցանել։ Լեզուաքն
զջուրսն լակէին, մտաքն ցանկացեալ փութացեալ զա-
ւրիւն թշնամեացն յերկիր թողուլ։ Հշանակ է տակ
մարդոց սակաւապէտ ստացուածոց. թողեալ զհիւթա-
նիւթ մամոնային, ընդ գունդս դիւացն տան պատե-
րազմ. զիայթոց մեղացն փշրեն։ Որոց երկիրն եհաս
'ի վիճակ ժառանգութեան քաջացն, նոքա ոչ միայն
մաղիանացուցն յաղթեն, այլ և անուանեալ աստուա-
ծոցն յաղթեն։

Յառաջ քան զընտրութիւն զօրացն՝ նշան 'ի Տեառ-
նէ խնդրեաց Դաւիթն. նա զմի մեկնակ խնդրեաց, Ը-
տուած երիս տեսակաք խորհուրդս յայտնեաց նմա.
զգաստութիւն և զերեք հարիւր արանցն, և զսափորոցն՝
հանդերձ ճրագաքն լուցելովք և ձայնական փողովքն։
Մի բարկանար, Տէր, ասէ. եթէ ընդ իս իցես ճշմար-
տութեամբ, գալարեցից եղից զգաթս 'ի մէջ կալոցն.
և ինքն անձրեւ 'ի վերայ գեղմանն միայն, և շուրջ գնո-
վաւ երկիրն ցամաք մնասցէ։ Այս եղեւ այնպէս. քամեաց
զջուրն 'ի գգաթէ անտի, և ելից զկուրն։ Այս 'ի վաղիւ
անդ ոչ նոյնպէս. երկիրն թացաւ, և գգաթն ցամաք
մնաց։ Յօղն մի էր, և գգաթն նոյն էր. բայց տեսիլ
նշանին յերկուս բաժանեցաւ։ Շուրջ զգգաթութն լինէր
ջուրցն՝ արիւն մաղիանացուցն էր. իսկ ցամաք մնալ
գգաթութն՝ արանցն էր ողջանդամ ապրել 'ի պատե-
րազմէն։ Բայց ինքանել անձրեւուն 'ի վերայ գեղմանն,
Հոգին սուրբ Ը՛ստուծոյ, որ խօսեցաւ 'ի մարգարէսն,
և նոքաք զամենայն երկիրս ոռոգեաց։ Այս զի խորհուրդ
էր տեսական՝ առժամայն և առ 'ի յապա պահումն, ոչ
'ի բաց հեղու զջուրն, այլ 'ի կուր մի արկանէ և պահէ։

Դաւիթ թագաւոր նոցա և մարգարէ՝ յետ բազում
ամաց եկեալ, Հոգւոյն սրբով ասէր. "Ինքն որպէս
զանձրեւ 'ի վերայ գեղմանն.,։ Այս եթէ զինչ է տերու-
թիւն նորա՝ յայտ առնէ. "Ը՛նդաջի նորա նախ հնդիկք
անկցին.,։ Խանձողն զերծեալ յերկնային հրեղէն բը-
նութենէն անկաւ յերկիր, և եղեւ հնդկագոյն։ Բայց
որդիք ժողովրդեանն՝ որ փարիսեցիք անուանեցան, 'ի

Սոլոմոնի վերայ առնուն զբոլոր բանս սաղմոսին։ Զի մաստուածութիւն նորա անձրեւ ասացին, և զքառասնամեայ զիսաղաղութիւնն զինչ արասցեն արդեօք. զի ոչ կարասցէ հասանել 'ի կատարումն լուսնի։ Որոց առաջի հնդիկն անկաւ, 'ի նա կատարի բոլոր սաղմոսն։ Իսկ փոխանակ գզաթուն՝ ապաքէն զսուրբ կուսին բնութիւնն ասացաք. և փոխանակ ցօղոյն երկնից՝ զբանական աւետիս հրեշտակին. ապա և փոխանակ կրին՝ ըզմեծ գետն Յորդանանու խմացիր, յոր և գառն Աստուծոյ մկրտեցաւ։

ԺԴ. Վասն սափորոցն և նոցա կահիցն։

Աբրի, ասէ Աստուած ցԳեդէոն. առ զպատանեակն զԳառայ, և էջ 'ի բանակն Մադիամու գիշերի, և լուիցես անդ բանս յօգնականութիւն անձին քո։ Յետ անդր մերձեցեալ Գեդէոնի պատանեկաւն հանդերձ 'ի թիւ մի յիսներորդացն դասուց՝ պահանորդ պահանորդի մի զգիշերային տեսիլն պատմէր։ Լսելոյ տեսանէի, ասէ. նկանակ մի գարեղէն հոլով գայր հասանէր, ասէ, հարկանէր զխորանն Մադիամա, և անդէն կործանէր։ Լսելոյ որ լուան՝ վաղվաղակի զմեկնութիւն երազոյն ասաց. Ահ է այն այլ, ասէ, բայց սուրն Գեդէոնի որդւոյ Յովասու. 'ի ձեռն նորա մատնեաց ուրեմն Աստուած զմադիանացիսն։ Լսէր 'ի գարեղէն նկանակ առակեցան նոքա։ Գարի անասնոց կերակուր է. գոյ և 'ի մեզ անասուն մնան. բոլոր հողեղէն բնութիւն մարմնոյս անասնական մասունք են. վասն զի 'ի միոջէ հողոյ ստեղծեալ եմք մեք և անասունքն, և եկամուտ անմահութեամբն առաւելեալ եմք քան զնոսա։

Հրաման ետ Գեդէոն և ասէ. Հապա, ժիր կացէք, զի յայսմ գիշերի մատնեաց Աստուած զՄադիամ 'ի ձեռս մեր։ Այս ասէր, և առ իւրաքանչիւր սափորն որ 'ի ձեռին դնէր՝ և 'ի նմին ճրագ մի անշիջանելի կառուցանէր, որպէս զսափորն 'ի ձախումն և յաջումն ըզփոքն։ Լսելոյ զինու զնոսայն վառեաց, նովին և ինքն կազմեցաւ. բայց յառաջ խաղաց ինքն քան զնոսա, վասն զի գեր 'ի վերոյ է երրեակ թուոյն։ Ինդ իս հայ-

Digitized by Google

եսջիք, ասէ. յինէն օրինակ առջիք։ Այս ասէր, և 'ի նմին 'ի բանակ թշնամեացն ինքանէր, ուժով մեծաւ փող հարկանէր 'ի ձայն եղջիւր փողոյն։ Նոյնպէս և երեք հարիւրքն յերից կողմանց զբոլոր բանակն 'ի մէջ առեալ պատեցին. զսափորսն խորտակեցին, և զՀրաշագունեան յաջ ձեռն առեալ՝ ձախումն զփողսն հարկանէին. այր յիւրաքանչիւր տեղւոջ անցեալ կայր իբրեւ զբոց բորբոքեալ. անդադար փող հարկանելով՝ զամենայն բանակն 'ի դղրդումն կացուցանէին։ Զոմանց ոտից ուրուք հասանելոյ և ձեռին մերձենալոյ՝ ամենայն վրանք և խորանք յերկիր կործանեցան. այր զսուր 'ի վերայ ընկերի իւրոյ ի՝ջուցանէր. սկիզբն արարեալ 'ի միջում պահու մինչեւ յառաւօտն զմեծ մասն բազմութեան բանակին անձամբ զանձինս իւրեանց կոտորէին։ Իսկ Գեդէոն և երեք հարիւրքն ընդ տեղիս կալով զզփողսն հարկանէին, գոչէին խիզախէին և ասէին. Սա՛պա, սուր յաղթութեն Տեառն Աստուծոյ և Գեդէոնի։

Զարտուած խեցեղէն սափորոյն 'ի հողոյ է, և վառումն անշէջ Հրաշագին 'ի հրոյ և 'ի պատրուգէ, և ձայն եղջիւր փողոյն՝ օդով և կենդանական շնչով մարդոյն, և երեքեան սոքա 'ի մերում բնութեանս բազկացեալ գոյանան։ Զոր այն որ ապականեցաւ 'ի մեղաց՝ 'ի մարմնոյ նոյս գոյացութիւն հողեղէն մասն, իբրեւ զանթուրծ ամանն անպիտան եղեալ խորտակեցաւ։ Զոր ինչ Հրաշագն 'ի սափորին՝ և սա ընդ ապականացու մարմնոյն անյայտ եղեւ։ Նոյնպէս և բանական հնչումնդ ոչ տայր ձայն յերկինս յերկրէ. վասն զի 'ի մեղաց անտի ապականեալ իանդգարեցաւ մարմնատոր գործին. իբրեւ զՀող անբան և անմտունչ անկեալ դնէր 'ի մարդոյս բնութիւն ընդ ոտիւք մնՀու. ոչ յանդորրութեան գոՀանալ մարթէին զԱստուծոյ, և ոչ 'ի նեղութեան սպաղատել առնա։ Իսկ մերոյ բնութեանս Հնչմարտութեամբ առ 'ի մկրտութիւն մերոյս տեւանի։ Զանթուրծ սափոր 'ի ջրոյ թրջի. իսկ մեր անթրծութիւնս անդ թրծի, և թանձրութիւնս անօսրանայ Հարստութեամբ, և Հրաշագն որ 'ի ներս՝ լուցեալ բորբոքի։ Զթէ միայն 'ի տեղւոջն Հաստատեալ կայցեմք՝ լուցեալ անշիջանելի իմացական Հրաշագնն, ինքն անձամբ զանձն Հարկանէ թշնամին մեր, և իսափանեալ լինին պատերազմունք նորա 'ի մէնջ։ Զո-

պէս և ինքնասաց ձայն Աստուծոյ յայտ առնէ 'ի սուրբ յիշատակարանին. "Եթէ սատանայ զսատանայ մերժէ, յանձն իւր բարժանեցաւ, անցեալ ուրեմն է տէրութիւն նորա,,: Եւ Հշմարիտ առակօք յայտ առնէ. տուն և թագաւորութիւն որ յանձն իւր բարժանի, ոչ կարէ կալ հաստատուն:

Այսպա խօսել սկսաւ Գեդէոն և ասէ. Խնդրեցից և ես 'ի ձէնջ խնդրուածմի, եթէ տացէք ինձ. այր իւրաքանչիւր 'ի զօրականիդ եկեսցէ առ իս, բերցէ գինդ մի ոսկի: Զսեն ամենեքեան. Հաւասիկ տամք: Տարածեցին բաճկոն մի մեծ, և բերին այր իւրաքանչիւր գինդ մի և ընկենուին 'ի շեղջակոյտ անդր. և եղեւ շեղջակոյտ գնդացն՝ ոսկւոյ լտերս իբրեւ հազար և եօթն հարիւր: Եւ առ ինչ արդեօք զգինդսն մեծարգոյ համալեցաւ քան զամենայն: Յայտնի է և ոչ կարեմք թագուցանել. յորժամ գինդք ձօնեալք զականջաց կախիցեն կամ զարանց կամ զկանաց, լսելիք մարդոյն պղծելով պղծեցան 'ի շարժել գնդացն. զոր Տէր գնդացն յիշէ, որում ձօնեցանն: Յորժամ դուռն լսելեացն խարխարեցաւ, բոլոր բնութիւն մարմնոյն աւերեցաւ, ընդ նմին և հոգիքն խարխարեցան: Մի լսելիք են բարւոյ և չարի. դատաւոր ընտրող միաքն լինին և վարդապետ 'ի ներքս անդր: Կողոպտեաց Եհան զգինդս նոցա, ընդ նմին և սրբեաց զայլանդակ լսելիս նոցա:

Սուր եկի արկանել յերկիր. ոչ կոտորել ասաց Տէրն, այլ քակել զայր 'ի հօրէ և զդուստր 'ի մօրէ. և եղիցի տանուտեառն թշնամիք՝ ընտանիք իւր: Աստուածային սուրն զմեղացն կապանս կտրեաց, և քակեաց զմեզ 'ի նոցանէ: Հայր և մայր կարդացաք քարի և փայտի, այլ և պաշտեցաք եւս. այսուհետեւ ոչ նոյնպէս անուանեմք, այլ 'ի պէտս հրոյ և շինուածոյ մեզ ծախեմք: Եւ այսպէս փոխանակ պատուոյ թշնամանեմք և անարգեմք զնոսա:

Digitized by Google

ԺԵ. Վասն դատերն Յեփթայեայ և պատարագել 'ի հօրէն։

Աստուած որ զմիս զուարակաց ոչ ուտէ և զարիւն նոխազաց ոչ ըմպէ, զիաւրդ արիւն մարդոյ քաղցրանայցէ նմա. զոր և մարդոյս բնութիւնն ոչ առնու յանձն առանց գրոյն հրամանի, և 'ի միտն անդամ ուրեք մի անկցի այսպիսի խորհուրդ։

Ահա, ասեն, զԱսահակ ինդրեաց յԱբրահամէ։ Զառնու քեզ յանձն ընթերցուածն զայդ. ոչ ասէ ինդրեալ, այլ փորձեալ զգէղեցիկ կամն նորա՝ յայտնի եղոյց ամենայն մարդոյ, այլ ոչ եթէ զմարդ 'ի պատարագ ընկալաւ։ Իսկ ընդէր, ասեն, պատարագեցաւ դուստրն Յեփթայեայ. ոչ ընդ վայր խոտեցին հեթանոսք զպոռնկորդին չմատուցանել 'ի քրմութիւն, վասն զի չէ անապական ծնունդ առ 'ի հօրէ. որպէս բազում խառնուածս ունի մարմնով, բազում ունի և զայլընդակութիւն բարուց։ Յեփթայի պոռնկորդի էր, տարագիր հալածական 'ի հարազատ եղբարցն առ 'ի հօրէ. և ամենայն Իսրայէլ վատնեալ զկնի դիցն օտարաց. և որդիքն Լմնայ անտերունչ գտեալ զաշխարհն՝ հին բաղայս 'ի վերայ դնէին. Յելանեն ձեր յաշխարհէն եգիպտացւոց՝ զաշխարհն մեր հարէք պատերազմաւ և կալարուք. արդ զայն վրէժ եկեալ խնդրեմք։ Երդ յայնմ վտանգի երթեալ ծերակոյտն Իսրայէլի ուխտիւ ածին զՅփթայի, կացուցին իշխան 'ի վերայ իւրեանց։ Իսկ նա տեսեալ զբազմութիւն զօրացն Լմնայ՝ զարհուրեցաւ 'ի միտս իւր և ասէ. Եթէ Աստուած Իսրայէլի, եթէ մատնեսցես զնոսա 'ի ձեռս իմ, և դարձայց ողջանդամ 'ի մեծ պատերազմէն յաղթող, ով և ելցէ 'ի տանէ իմմէ ընդ առաջ իմ, քեզ պատարագ մատուցից։ Այս գործն զանիցն աջողեցաւ։ Զուի ինձ թէ պատարագն ընդունելի է. ահա, ասեն, թէ զիաւրդ եւ յաղթութիւն նմա Աստուած, և ապրեցաւ Իսրայէլ 'ի հարուածոցն 'ի ձեռացն Լմնայ։

Մի զարմանար ընդ Աստուծոյ առ այդ աբանչելագործութիւն։ Իշոյն ծնօտիւն կոտորեաց Սամփսոն հազարայր. միթէ ծնօտին տամք զյաղթութիւնն. և կամ որ մանչին փայտիւ զեօթն հարիւրսն սատակեաց։ Ոչ այն

ծնօտին, և ոչ այն փայտին։ Եւ որպէս երկոքեանն, նոյնպէս և դատերն Յեփթայեայ։

Զարձեալ և 'ի պատմութեանն այլ ընդ այլոյ կայ։ Զ'ը և ելցէ, ասէ, 'ի դատերաց նորա։ Եւ զկնի այնր ասէ, թէ այն միամեր էր նորա։ Զուսի ինձ՝ թէ և պատմութիւնն ոչ ունի զկարգն հաստատուն։ Զչ որ ելցէ 'ի դատերաց իմոյ ընդ առաջ իմ, այլ զինչ և ելցէ 'ի տանէ իմմէ։ Ի տան մեծի և փոքու գոն անասունք սուրբք և անսուրբք. և եթէ ուղտք և էշք, կամ բնաւ շուն պատահէր ընդ առաջ, միթէ պատարագելիք էին։ Զչ նոքա և ոչ սա. այլ վրիպական բանք ելին 'ի տգիտաց ժամանակին։ Հանարեաց թէ զդուստրն ուխտեաց. յորժամ էլ նա ընդ առաջ՝ ընդէ՞ր վայեաց, ընդէ՞ր պատուեաց զպատմուճանն, ընդէ՞ր ասաց՝ խոչ ընդ ոտն և խոչ ընդ ակն։ Եթէ ուխտիւն եղեւ յաղթութիւնն, գոհանալ պարտ էր և ոչ զղջանալ։ Զղջաս 'ի վերայ առ և ասէ. Վա՜յ ինձ, դուստր իմ, ընկձելով ընկձեցեր զիս. և ես զբերան իմ բացի վասն քո յուխտ պատարագաց, և արդ ոչ կարեմ դարձուցանել։ Զբրահամ, զայս ոչ ասաց, որպէս երեւի մեզ։ Եթաց զբերան իւր ազջիկն և ասէ. Զիս դարձ, հայր իմ. եթէ ինեւ եւ Զ'ստուած զյաղթութիւն Զպայէլի և ապրեցոյց 'ի ձեռաց ամենասյուոցն, որպէս և ելին բանքն 'ի բերանոյ քոյ՝ որա հանարձակ։

Զայդ զայն արժան է մեզ գիտել, զինչ է զոր ասաց աղջիկն. Զմնդրուած մի խնդրեմ 'ի քէն, հայր իմ, մի՛ արգելուր յինէն. Թող երթայց ամիս երկուս լացից զկուսութիւնն իմ, ոչ 'ի գիւղս և ոչ 'ի քաղաքս, այլ 'ի լերինս։ Եւ հայրն վաղվաղակի յանձն առնու և ասէ, երթ դուստր իմ։ Զ'ի դատարկաբանութիւն թուիցի ինչ քեզ այսպիսի խնդրուածս աղջկանն. լաւագոյն է քան զյանձնառութիւն պատարագելոյն։ Ի լերինս խնդրեցին զկոծն և ոչ 'ի քաղաքս, զի մի յափշտակեալ գտցի աղջիկն յանօրէն մարդոց, և 'ի քաջութիւն առաքինութեանն վստահութիւն խառնեսցի։ Զակ յերկարումն երկուց ամոցն՝ և այն նշանակ մեծի իմաստութեանն նորա։ Զիւանդ որ յերկար ախտանայ, ուծացեալ լինի գութք հարազատաց նորա. փութան տապնապին զելս վշտացելոյն յաշխարհէս։

Լեկն եհաս ժամանակ պատարագելոյ նորա։ Ընդ ժողովեցաւ ամենայն Իսրայէլ 'ի Դանայ մինչեւ ցԲերսաբէէ՝ մարդախողխող տեսանելով զՀայր առ որդւով։ Երկու ամիս լացին 'ի լերին, հնչեաց բարբառ գուժի նորա ընդ ամենայն երկիր, ժողովեաց և ած զբազմութիւնն մարդկան. քանզի կարծեցին ամենեքեան՝ թէ նոր օրէնք դնին, ոչ 'ի մարդկանէ, այլ Յաստուծոյ։ Սատկացան վերջին լաւինքն քան զառաջին երկուց ամսոցն. 'ի միտս իւրեանց այսր և անդր կոծեալ լինէին, յիշելով զԲրահամ և զժամանակ փորձութեան նոցա։ Ամենայն բազմութիւնն արանց և կանանց զայս խորհուրդ 'ի մտի եդեալ՝ կարծէին զՅուսուած այցելութիւն եկեալ հասանել նոցա։

Եւ ընդդէմ պատարագին իբրեւ կարծիք մտաց նեղեալ տագնապէին, և յայտնութիւն ձայնի ոչ եղեւ վերուստ 'ի վայր, փութացաւ Յեփթայի և եհան զսուրն վաղվաղակի. կափոյց զաչս մտացն յանտեսութիւնն, մինչեւ աղիքն գալարէին 'ի գութ խանդաղատանաց. թէպէտ սիրտն 'ի բերանն էր, հարաւ սուրն 'ի փողս դստերն և կտրեաց։ Ու 'ի գոչիւն հեղման արեանն, և 'ի հռնչիւն կոկորդին, և 'ի շարժումն բոլոր մարմնոյն՝ առ հասարակ ամենայն բազմութիւնն բոլոր մարդկանն միաձայն միաբարբառ ՀՀեցին. իբր թէ երկինք և երկիր լացին զմահ միամօրին, զանտանելին յողջակէզ յանհրաման սեղանոյ անտի։

Ո՞ւ ոք ամենեւին յանուսումնութենէ զայս պատարագ Յստուծոյ կարծիցէ հրամայեալ։ Այլ թէ 'ի Պաւղոսի թղթոյ անտի յանդիմանեսցես զիս վասն Յեփթայեայ յիշելոյն, յայսմ վայրի ոչ ելանէր ըստ կարգն մարգարէութիւնն Մովսէսի. որպէս նա զաշխարհս Յստուծոյ սկիզբն առնէ լինելոյ, և սա զՀաւատս։ Ոստ նմին օրինակի և Պ ուկաս աւետարանագիրն վասն մարդանալոյն Յեառն սկիզբն արարեալ 'ի Յովսեփայ՝ երթայ ելանէ Յադամ և Յստուած, զչարս և զբարիս 'ի ներքս փակելով կարգաւ ասէ զանուանս նահապետացն. զի զաստուածածանութիւնն գիտասցես, այլ ոչ եթէ զընտրութիւն մարդկանն։ Լովին մտաց և Պաւղոս վարի. սկիզբն առնէ վերուստ 'ի վայր Յստուծոյ արարածոց. Յաբելէ անցանէ գայ առ Նոյ, առ Նոյ և

սա Ի՞բրահամ, սա Ի՞սահակ, սա Հակոբ և յամենայն կարգս ծննդոց նորա։ Ի՞նդին կարգի յիշէ և զԻ՞ովդէոն, և զԼ՞փթայի և զԱ՞մփսան, զայցելութիւնն Ի՞ստուծոյ յայտ առնելով 'ի վերայ նոցա, ոչ 'ի լաւութիւն մարդկան հայեցեալ Պաւղոսի, այլ 'ի մարդասիրութիւնն Ի՞ստուծոյ, զորս 'ի չարութենէ 'ի բարութիւնն ընտրեաց. զԼ՞փթայի յաւազակութենէ, զԱ՞մփսան յանզաւակունեաց։ Ի՞այց քանզի Ի՞ստուծով էր յաղթութիւնն պատերազմացն նոցա, բաւական համարեցաւ Պաւղոս ասել զնոսա 'ի կարգ հաւատացելոցն. միանգամայն և յորդորումն հեթանոսաց բազմութեանն, որպէս և առ նոսա, յԻ՞ստուած։

ԺԶ. Առ Սամփսան։

Ի՞որժի հաստատեցաւ նա բարկութեան 'ի վերայ այլազգեացն. նոքաւ կամէր առնուլ Ի՞ստուած զվրէժ որդւոցն Լ՞նակայ։ Լ՞ւ անդ էր շնապէս մի յառիւծուց. գոչեաց և յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Ի՞ռիւծ առիւծոյ պատահեցաւ. մինն հինաւուրց լի չարութեամբ, և մինն այն ինչ կորիւն առիւծու մնատաղ յաւուրց, և լի երիտասարդ զօրութեամբն. հին առիւծն գոչէր մեծաձայն ահ արկանելով մնատաղ կորեանն. իսկ նա զօրութեամբ մունչէ՝ քաջանհելով զանոյժ քանս, և փափուկ մարմնովն հեղձուցանէր։ Ի՞նդ ուրեմն չարասէր թշնամին մարդկան՝ մինչ դեռ հրեշտակն Ի՞ստուծոյ զաւետիս չբնաղ մանկանն հօր և մերն աւետարանէր, լուաւ զամենայն բան կարգի զոր ասաց նմա հրեշտակն. դէտ ակնունէր նմա թէ ուր կորուսցէ զնա 'ի դեղս։ Լ՞ւ յորովայնէ 'ի մանկանէն ոչ կարաց զնասել նմա. եկն եմուտ 'ի չար գազանն մանրգնեալ, կատաղեցոյց և յարոյց 'ի վերայ նորա. թերեւս կարասցէ զաստուածատուր շընորհն խափանել, զգանկալի ծաղիկն խամրացուցանել, զարծարծեալ լոյսն Ի՞սրայէլի շիջուցանել։ Ի՞սազում գունգք դիւացն ընդ նմա եկեալ յօգնականութիւն եկին մանրն յառիւծն գազանացեալ. մունչէաց ընդդէմ եօթնագիսակ մանկանն։ Ի՞սկ նա իբրեւ զուխտաւոր քահանայ՝ զալ ձեռն դնէր 'ի վերայ գլխոյն և զահեակն

արկանէր զնեբբին կղակաւն. 'ի գիրկս իւր առեալ հեղձուցանէր զերեւակի սրտմտութիւնն, և թմբրեցուցեալ զանմահ չարութիւնն՝ ընդ նմին և զշունչ գազանին քաղեալ հանէր։ Բաղուկ առ բազուկ կարկառէր, և ձայն առ ձայն բարբառէր, զբազում գունդս դիւացն 'ի բաց հալածէր. ոչ բրաւ ջախջախեալ և սրով հատեալ՝ զգեղեցիկ բնութիւն առիւծոյն ոչ ապականէր, որ էր խորհուրդ բոլոր աշխարհիս։

Ա.ՐԴ յետ բազում աւուրց անցանելոյ 'ի վերայ դիակն առիւծուն, սրբեցաւ նա 'ի նեխ դիջութենէն, թափուր և ունայն մնաց որովայն նորա. թափուր և ունայն կացին երկինք և երկիր, վասն զի ոչ շողացին 'ի սմա հրեշտակք երկնաւորք։ Դեւք ձրձիտք մուտ և ել առնէին 'ի փոր նորա, բերէին զեկամուտ դառնութիւնն, և հանէին զբնական քաղցրութիւնն. որպէս և 'ի միջոյ աշխարհիս և 'ի մարդոյ յիւրաքանչիւր՝ քաղէին հանէին 'ի մտաց նորա զքաղցրութիւն բանիցն Ա.ստուծոյ։ Ա՛արդիւկ կենդանի մեռեալ դիականց նմանէին, հոտ մահու հարկանէր ամենեցունց. կենացն հոտով օծաւ խնկեցաւ մանուկն Սամիսոն, անոյշ հոտո

Տես զերկոտասան Յ՚ռաքեալսն և զարմացիր։ Մե-
ղուք արագաթեւք զգաւառին վայրօք եւ եթ կարեն շը-
ջել, զառօրեայ փոշի ծաղկանցն՝ ինչիւթ մեղուագործու-
թեանն փութան մատուցանել։ Յ՚ռաքեալքն անթեւք
և թեւաւորք՝ զՀեռաստանն իբրեւ մեղրա-
գործեցին։ Օ՞ինչ ծաղիկք պատուականք ի՞նչն, զոր
ոչ Յ՚ռաքեալսն տեսանիցես. զՀին աշխարհս նորոգե-
ցին, որպէս մեղուքն զմեռեալ առիւծն նոր ծաղկօք նո-
րոգեցին։

Զ՚նաց չոքաւ, ասէ, Սամիսոն, կալաւ երեք հարիւր
աղուէս և կապեաց ձետ ընդ ձետ երկուս երկուս, և
մէն մի ջահ լուցեալ եդ՝ ի մէջ ձեռոց նոցա, և արձա-
կեաց զնոսա ընդ անդաստանս այլազգեացն։ Զ՚ան ո-
րոյ այլաբանութիւն ունի բանս. ուստի զծածուկ զաս-
րիս ոգւոց որ կայ՝ ի նմա՝ տեսանեմք։ Լ՚սկեղեցի հեթա-
նոսաց որ Յ՚ռաքելոց անտի հիմնարկեցաւ, անդաստան
ամենալից բոլոր աշխարհս այս երկնացաւ. վասն զի
Տէրն երկնի և երկրի անքակ միաբանութիւն գործեաց
ամենեցուն։ Զ՚ինչ դեռ յայսպիսի հրաշակերտ վայել-
չութիւն ծով և ցամաք առ հասարակ ցնծացեալ բերկ-
րեին, գունդք դիւացն առ հասարակ քայքայեալ ցրուե-
ցան յօտարութիւն. քանզի թիւնք հին վիշապին ան-
համեցան. մարդիկ առողջ մարմնով և սուրբ հոգւով
հրեշտակային կեանս կէին յեկեղեցւոջ. յեղակարծումն
ժամու ամպ ագահութեան ախտացաւ, առագաստեալ
կալաւ զաչս առատ մատակարարացն, և արգել՝ ի նոցա
նէ զլոյսն իմանալի, որ առ սակաւ սակաւ տարածեցաւ
կալաւ զբոլոր աշխարհս։ Լ՚սկ զկնի ամենայն չարեաց՝
աստատին՝ ի սոցանէ իսկ բորբոքեցաւ հուր անշիջանե-
լի՝ ուսումն այլանդակաց, որ վատթարագոյն են՝ ի տե-
սանել քան զերամակս ձրձիտ աղուէսուց. հարիւր կեր-
պարանօք բերին զՀնարտութիւն վարդապետացն, և
սիրտք իւրեանց հեռացեալ են՝ ի Հնարիսն Յ՚ստուծոյ։

Զ՚այց թերեւս ասիցէ ոք. զի՞նչ եւս պիտոյ էր հրա-
կային՝ ծնօտի իշոյն կարօտանալ։ Զ՚ամենայն միտ դիր կար-
գաբանութեան գրոցն և անտի ուսանիս։ Սուրբ ուխ-
տաւոր մանուկն՝ զինչ պիղծ մերձենայր՝ ի ձեռս նորա,
որբեալ լինէր. որպէս պիղծ առիւծն և՝ ի պղծագործ
մեղուէն, նոյնպէս և ծնօտ իշոյն առժամայն զէն օգնա-

կանութեան 'ի ձեռին նորա, իսկ առ 'ի յապա մաքրութիւն հեթանոսաց. զոր և Տէրն արարածոց սրբեաց։ Սամիսոն զյայտնի պատերազմն ոսկերք վճարեաց. ոսկերք մարտիրոսացն զյայտնի և զծածուկ մեղս 'ի մարդկանէ 'ի բաց սրբեցին։ Իսկ ջուրն, ասեն, 'ի ծնօտէ ի ջրն առ ինչ հոսեցաւ։ Որ զյաղթութիւն ետ նմա 'ի ձեռն ծնօտին, անտի և զծարաւն յափոյց. որ զէն փրկութեան եղեւ, նոյն և պատճառք կենաց նորա. էարբ զջուրն 'ի ծնօտէ իշոյն, ընդ նմին էարբ զիմաստութիւնն Աստուծոյ։ Զնձին իւրում կարծէր Սամիսոն զյաղթութիւնն մեծ պատերազմին. ծնօտին ոչ տայր զյաղթութիւնն։ Այլ ծարաւ կռուել ընդ նմա. զոր ոչ ծանեաւ 'ի յաղթութեան իւրում, ծանեաւ զնա 'ի սատակիչ ցամաքմանն իւրում։ Այլ սակաւիկ մի ակնարկեցից և արդ 'ի ժամանակիս յայս։ Ոսկրն ցամաքեալ անսանոյն՝ անյուսալի էր թէ ջուր ելցէ 'ի նմանէն. աշխարհս ցամաքեալ յարդարութենէ՝ յանյուսալի էր թէ առաջին յանցանքն ձրի թողցին։

Այլ նա, ասէ, 'ի Գազա և եմուտ առ կին մի պոռնիկ։ Յուզեցան արք քաղաքին և զգիշերն ամենայն պահեցին զնա պահապանօքն։ Բայց քանզի ընորհքն Աստուծոյ առ նմա էր, առաւել քան զչափն գործեաց նոր սքանչելիս. զդրունս քաղաքին սեամքքն հանդերձ և դռնափակօքն թափեաց և եբարձ՝ գնաց 'ի լեառն մի բարձր, և կանգնեաց 'ի լերինն Վեբրոնի։ Որոյ տեսեալ է զքաղաքն և զդրունս քաղաքին, նա զարմանայ առաւել քան զյոյժ։ Այլ է այս օրինակ իմանելոյն Տեառն մերոյ 'ի դժոխս և աւերելոյ զքաղաքս մահու և այլ ոչ յիշելոյ 'ի վախճան ժամանակս։ Այս եթէ ինչ վասն կնոջն պոռնկի սոսկասցին միտք քո, զմտաւ ածջիր դու զբոլոր աշխարհիս զպոռնկութիւնն և զարմացիր յոյժ, զի ոչ խորշեցաւ և ոչ գարշեցաւ։

Բայց խնդիր առաջի կայ, թէ զինչ եցէ յեօթն մասունս բաժանումն գիսակաց նորա. որում և հրեշտակն պատուիրեաց զգուշութեամբ՝ չելանել երբեք երկաթոյ 'ի գլուխս նորա։ Թէպէտ եօթնեակին՝ որպէս ասացեալ է մեր յայլում վայրի, վասն զի մի է զօրութիւնն աստուածային զրոց, վեց 'ի նոցանէ զվեցօրեայ արարածքս նշանակէ՝ որ 'ի սկզբանէ. իսկ եօթնեերորդն՝ սուրբ փա-

Digitized by Google

փուկ նուիրեալ Աստուծոյ օր, որ և անաշխատելի զօրութեան հանգիստ անուանեցաւ։ Այս ուրեմն աշխարհս և աշխարհարարն յուխտաւոր մանկանն սպասաւորեալ կերպարանեցաւ։

Եւ այս հնորհք տեսանելին 'ի Սամփսոն ըստ եօթներեակ գիտակաց նորա թուոյ, յօրինակ գեղեցիկ շառաւեղին՝ որ բուսանելոց էր յարմատոյն Յեսսեայ, յիշելով զբանն Հայրեայ մարգարէի, զեօթն մասունս Հոգւոյն արբոյ ասացեալ 'ի վերայ նորա ըստ նորին թուականին ձեւոյ. և Պաւղոս առաքեալ ասէ 'ի կորնթացւոց թղթին, "Եգ Աստուած յեկեղեցւոջ առաքեալս, մարգարէս, հովիւս և վարդապետս, զօրութիւնս, բժշկութիւնս, ազգս լեզուաց, թարգմանութիւնս լեզուաց,,։ Այս հնորհք եօթնեկի առ իւրաքանչիւր անձին տեսանի. և եթէ մի յայրացանէ պակաս ինչ յումեքէ, խեղ ասեն նման և ոչ ողջանդամ. ապա թէ եօթնեքեան կորիցին, մեռեալ է և ոչ կենդանի։

Այլ զենութիւն հերացն պարտիմք ասել՝ թէ զիարդ 'ի նոսա զօրութիւնն Հոգւոյն բնակեալ էր, և ոչ 'ի սիրտս և ոչ 'ի միտս և ոչ յայլ մասունս արդարութեան։ Օ՛ի ահաւասիկ առ պիղծ կանայս մնային նա, և Հոգին Աստուծոյ ոչ թողոյր զնա 'ի ձեռաց. և 'ի կորել հերացն նորա՝ եթող զնա հնորհքն Աստուծոյ, տկարացաւ և եղեւ իբրեւ զմի յանուժ մարդկանէ։ Հոգի օծութեան ունէր Սամսոն թագաւորն. նոյն Հոգին զօրացոյց զնա 'ի պատերազմին ամենացւոց. այլ յանցանելն իւրում զպատուիրանաւն Աստուծոյ՝ ինքն յընքենէ ընչեաց զօծութիւնն Հոգւոյն սրբոյ. եթող զնա Տէր, և սկսաւ չարչարել զնա այսն պիղծ։ Աստ ոչ օծութեան Հոգի ունէր Սամփսոն, այլ զօրութեան. և զօրութիւնն գեռ 'ի նմա էր, ոչ կարէին պիղծ կանայքն խափանել զզօրութիւն նորա. բայց յորժամ հասան գէպք նորա, ընդ նմին հատանի և 'ի մեծ զօրութենէ։ Այս էր նշանակ բազմութիւն մազոյն օրհնութեան Աստուծոյ, որ առ Աբրահամու. "Զլիցի զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից և իբրեւ զաւազ առ ափն ծովու,,։ Օ՛ բազմութիւն աստեղաց և զաւազ ոչ ոք կարէ թուել, բայց միայն որ արարն զնոսա. նոյնպէս և զհերացն բազմութիւնն ոչ ոք կիտէ։ Աւաւել քան

զայս իմաստիրք զբազմութիւն զօրութեանն Աստուծոյ որ 'ի Սամփսոն։

Արդ էր ըստ իմաստութեան Հոգւոյն Հոգի ունուցանն. այլ որպէս այլաբանեն նոքա զօրացեալք, Սամփսոն օրինակ աբրահամեան տոհմին ազգի ժողովրդեան իւրեանց, յորս գոյր զօրութիւն օրհնութեան Աստուծոյ, այս ինքն յեսթնեկի գիսական՝ որով պակեալ էր գլուխն Սամփսոնի դատողին Իսրայէլի, որ ցուցանէր զզօրութիւն օրհնութեան Աստուծոյ 'ի նախնին իւրեանց Յ Աբրահամ, որպէս 'ի նահանին մեր Յ Դաւիթ՝ թէ "Աշեցէք և բազմացարուք և լցէք զերկիր,,. նոյնպէս և առ Աբրահամ որդին Դաւթայ՝ թէ "Բազմասցի զաւակ քո իբրեւ զաստեղս երկնից և որպէս զաւազ,,։ Եւ գլխաւորեալ աշեցաւ և աւարտեցաւ առ երկոցունց օրհնութիւնն Աստուծոյ, որպէս աւետիք բարեացն Աստուծոյ վասն ուխտաւոր մանկանն, այս ինքն առ ծնօղն Սամփսոնի։ Եւ մինչ դեռ կայր նա յուխտի նորա, զհազարան հալածէր և զբիւրոն շարժէր. և յորժամ բացամերժեաց զանձն իւր յուխտէն Աստուծոյ, յայնժամ 'ի ձեռն պոռնկին մատնիչ գտաւ սուրբ խորհրդոյն Աստուծոյ. զի պարապնդեցաւ կարաւնօք եսթնագիսակ վարս գլխոյ նորա, նշանակ և ենթակայ եսթնարփի ընորհացն Աստուծոյ. 'ի պոռնկէն յապաւեալ լինէր. կտրեցաւ զօրութիւնն. նախ թմբրեցուցեալ զնա անապակաւ, և անդէն 'ի մէջ ծնգաց իւրոց գամեալ զնա՝ լքմամբ զքաջ և զարի հսկայն. մոլեկան ախտիւն իբրեւ պարանաւ պարաւանդեալ զնա հոգւովք նախ կուրացոյց զնա մնօք, և յետ այնորիկ մարմնով 'ի ձեռս այլազգեացն։

Եսթնեկի յանցանօքն շինջոյց յինքեան զեսթնարփի ընորհս Հոգւոյն եսթնագիսեան հերացն հատանմբ. ծաղը և այսն եղեալ առ հաստարակ եսթն ազգացն քանանացւոց։ Որ այսպէս լքեալ և աղքատացեալ գոլով կացուցին զնա յաղօրիս, զայն՝ որ կոտորէր և մանրէր և առ աթուր հարկանէր զայլազգիսն յօրինակ ազգի ժողովրդեանն իւրոյ. որ նոյնպէս եսթնեկի յանցանօքն իւրեանց առ որթուն, և որպէս պղծեցանն 'ի Ներգ բեգովք՝ զեսթնաջնհեան աշանանակն լուսոյ ազատութեան իւրեանց նուաղեցուցին յանձինս իւրեանց, և

որպէս դպրոցականացան 'ի գործս իւրեանց, և պոռնկեցան 'ի գնացս իւրեանց։ "Զհա երդուայ 'ի բազկաց Թեան խնամ, Թէ մոցեն 'ի հանդիստս,,. և ոչ մտին, այլ նոքան տապաստ յանապատին։ Յեգիպտոս էին մոռաք ելեալքն Յեգիպտոսէ. իսկ բուսեալքն 'ի նոցանէ՝ յորս գոյր կայծակն օրհնութեան, զօրացեալ նոքա ժառանգեցին զերկիրն աւետեաց։ Զոյնպէս վաղվաղեցին ոսքս որպէս և հարքն իւրեանց, և մոռացան զգործս Աստուծոյ. խառնակեցան ընդ հեթանոսս, հաւատարիմ ծառայեցին կռոց նոցա որպէս ըզնոսա. և ոչ անսացին նմա, այլ ապտաքոյ Աստուծոյ խորհրդոցն կացուցին զանձինս իւրեանց. վասն այնորիկ տիրեցին նոցա ատելիք իւրեանց, և խոնարհ եղեն 'ի ներքոյ ձեռին եօթն ազգին քանանացւոց։ Եւ Թէպէտ և բազում անգամ փրկեաց զնոսա, այլ նոքա առաւել քան զհարս իւրեանց դառնացուցին զնա 'ի խորհուրդս իւրեանց։ Եւ ահա յապաւեալ և հաւատալ նուազեցան քան զամենայն ազգս, Թէպէտ և արմատն ոչ հատաւ և ՀԻՒ ողկուզին ոչ ապականեցաւ, զի օրհնութիւն Տեառն գոյր 'ի նմա, որպէս ասէ բան մարգարէին. "Մի ոչ Տեառն զօրութեանց Թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍոդոմ լինէաք և Գոմորոյ նմանէաք,,. և դարձեալ. "Մի պակասեցէ իշխան Յուդայ, և մի պետ յերանաց նորա,,, որ էր յարմատոյն Յեսսեայ։ Զի Թէպէտ և ելեալքն Յեգիպտոսէ հարքն և ծնունդք նոցա խոտորեալք զտան և Թիւրեալք, և բազում եղեն քան զՀեր գլխոյ անօրէնութիւնք նոցա, զի ոչ կացին յուխտի նորա, հանգարձ զձեռն իւր 'ի վերայ նոցա սատակել յանապատին, և 'ի Բանան մատնել այլազգեացն հեթանոսաց։

Եւ գլուխ ամենայն չարեաց նոցա՝ որ յետ ծառայից նորա, որ կոտորեցին, և զսեղանս նորա կործանեցին, որպէս ամբաստան լինի Յդիա զԱրայելէ, և 'ի Տէրն մեզան, զժառանգութիւնն յարիշտակել կամելով զժառանգն սպանին. և այնուհետեւ կոտորեցան և սպառեցան մինակքն անիրաւութեան, որպէս գիտակքն այնոքիկ յապաւեալ և հաւատալ՝ որ էր 'ի գլուխ ուխտաւորին Սամիսոնի. և զայգին նոցա ետ 'ի ձեռս այլոց մշակաց՝ որ եղեն բուսնակք նորոգ և կենդանի, պտղաբեր եղեալ և աճեցուն

Digitized by Google

յարմատոյ անտի նահապետացն, այս ինքն 'ի գլխոյ ժողովրդեանն։ Այլ զբանն զոր երդմամբ եդ ընդ Աբրահամու և ընդ զաւակի նորա յուխտ յաւիտենից, յիշեաց 'ի ձեռն զաւակի նորա՝ որ եղեւ նմա ըստ մարմնոյ, որով օրհնեցան ամենայն ազգ երկրի։ Այրածնեալք 'ի հաւատոց անտի Աբրահամու՝ կոչեցան որդիք նորա և ժառանգք աւետեաց նորա, և եղեն նորատունկք սիրելի՝ ծնունդք լուսոյ շուրջ զսեղանով խաչին զօրացեալք Հոգւովն 'ի փառս։ Որով կարողք եղեն ամենայն զօրութեամբ խաչին 'ի դիմի հարկանել չարին յաւուր մարտի և պատերազմի, և եօթնպատիկ հատուցանել նեղչայն նեղութիւն ծառայութեան, և նեղելոյն պատրաստել հանդիստ ազատութեան։ Այս այսպէս ըստ բնաւորին՝ նորագործ կազմածօք մնեալ 'ի տուն հզօրին՝ զգործիս նորա յափշտակեցին. և զամուրս նորա հանդերձ սեամբքն հաստատելովք, որ իբրեւ պարանօք եռահիւսիւք երրորդական միականութեամբ նորին զօրութեամբ, և աջեայն և ահեկեացն հակառակօքն միաբանելովք 'ի կործանումն զօրացեալք հակառակամարտին, յինքնաքարշմամբ զողնայարս տանց նոցա 'ի միմեանս՝ խարխարեալ փլուցին 'ի վերայ գլխոց նոցա. և կորուսին զանձինս իւրեանց չարչարանօք 'ի նոցանէ ընդ այլազգիս վասն աստուածահրաման օրինացն և սքանչելի անուան նորա, զի գտցեն զնա յաւուրն յետնում և պահեսցեն 'ի կեանսն յաւիտենականս։ Այս այսպէս զնախատինս նախատչայն զմեզ՝ բարձին 'ի մէնջ, և փառաւորեցաւ անուն սրբոյն Իսրայէլի. և պարծիմք այսուհետեւ՝ նովին փառօք փառաւորեալ 'ի փառս նախնական մերոյն փառաց։

Այս և այլ տեսութիւն, որ եղեւ շնորհալի գիսակացն նորա. խորհուրդ եօթնօրեայ կենցաղոյս, որով թուով ժամանակս սկսանի, և անդր 'ի նա դարձական յոգնապիսութեամբ բաղմանայ, և 'ի նոյն թիւ եօթներեկին կատարի. 'ի միակէն սկսեալ և 'ի մասնականն բաղմացեալ, և 'ի նոյն աւարտումն բոլորեալ, և ըստ շնորհի արարչութեան միմեամբք զօրացեալք։ Այնպէս և ըստ ժամանակին եղեալքս 'ի գերագոյն գոյէն գոյացեալք յառաջատեղով 'ի յոգնապիսութեան եղանակութիւն, այս ինքն 'ի բնութիւնն, 'ի տեսակ, 'ի դեղ և 'ի վայել-

Digitized by Google

չութիւն տրամաբարդութեան զօրացեալք՝ անհակառակ և անմարտ բերելով ըստ բնութեան, այն որ ըստ բաղորին տեսանի։ Իսկ յորժամ ախտակրեցան մասնաւորքն 'ի բոլորին տարբերական այլայլութեամբ, արտամերժեալք եղեն 'ի համազօր իսկականութենէն. 'ի հնութիւնն ապականութեան ստորանկեալ բանական բնութեանս հանդերձ զգայականօք և գոյացականօք, որոց պատճառ գտաւ՝ իշխանականաւն պակասեալ 'ի բաբուոյն՝ զօրացաւ ջարն հնայուցիչ եօթնակի յանցանօքն նախաստեղծին, յոգնապիսութեամբ առաւելեալ և բազմացեալ քան զհեր գլխոյ. և տոռամբք մեղաց պարաւանդեալ ամենայն զգայութիւնք ախտակրեալք գողացեալ եղեն ըստ հեշտութեանն։ Եւ ահա ծառայք գտան այլազգի դիւացն և մեղացն. մինչեւ յայց եւ պարիչն և փրկիչն Աստուծոյ՝ ոչ այլ ուստեք, բայց 'ի բնութեանս եգիտ զկայծակն նորոգման մերոյ հնութեանս. զոր 'ի պատճառս նորա առեալ զմարմին խոնարհութեան մերոյ, վերընծայեալ նորոգեաց ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց յազատութիւն փառաց որդւոյն Աստուծոյ. եկեալ ամենայն եղականօքս հանդերձ, որ ըստ ինքեան ապականեցաւ, և ահա փառաւորեալ զօրացան և գտան յաղթողք 'ի վերայ յաղթողին՝ որ կենայցն է հակառակ։ Եւ վերաբուսեալք առին հասկ և եղեն յայր կատարեալ, և միաւորական զօրութեամբն յօդեցան 'ի գլուխն Քրիստոս։ Եւ այնուհետեւ յայտնի եղեւ աստուածպետականին Յիսուսի կեանքն 'ի մարմնի մերում. որով կենեղուստ եղեալ, յաղթող գտան մահաբերին։

Այսպէս զանազանի խորհուրդ եօթնագիսակ հերացն Սամփսոնի 'ի խորհուրդ Աստուծոյ. զի ստեղծ Ցեր Աստուած զմարդն հոգ յերկրէ և զկենդանական շունչն եդ 'ի նմա, և այնպէս արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր. գոյապարդողական զօրութեամբն տուպաւորեալ վերածեաց 'ի նմանութիւն պատկերի անմահական և անապական իւրոյ փառացն։ Իսկ 'ի ձեռն ուխտազանց յանցաւորութեանն վայրածեցաւ տարամերժեալ 'ի մակաղրեալ յաստուածակերտ փառացն որ 'ի նմա։ Եւ ահա գոյր 'ի ծնունդս Աստուծոյ հնայուցիչ նոյն զօրութիւնն մահու և ապականութեան. նա և գոյր 'ի դարս

Digitized by Google

դարս նշան յաւերժական փառաց նորա, անմահականն՝ յաւերժական կեանս նախահօրն. նոյնպէս ընդ անմահիւ անապականն՝ 'ի փոխումն Յովքայ և 'ի վերացումն Յոլիայի. իսկ լուսազգեստութիւն՝ 'ի լուսաւորութիւն երեսաց փառացն Մովսէսի, և զօրութիւն անձին նորա՝ յեօթնագիսակ 'ի հերս գլխոյն Սամփսոնի։ Իսկ յամենայնէդ նուաղիլ սոցա յետ մահուն, տարաւերժեալ նորա յետ յանցանացն նշանակէ։

Իսկ առ Սամփսոնի այլ ինն յայտնի նորահրաշ եւս տեսութիւն։ Զանգի յետ յապաւելոյն հանդերձ զօրութեամբ զհերս գլխոյ նորա, ընդ երկար ժամանակս աճեաց բուսողօրէն եօթնագիսակ հեր գլխոյ նորա. և 'ի վախճան ժամանակաց իւրոց կանգնեաց նշան յաղթութեան յօրինակ ծննդոցս Դամայ. որ յետ մահուն և 'ի դժոխս իջանելոյն գոյացուցիչ կենաց՝ կենդանարար նովին սկզբնական կենացն զօրութեամբ դիմեաց 'ի դժոխս, և սերմանեաց 'ի նմա զբուսական զօրութիւնն կենացն հատի, և բազում արդիւնարար ներգործական զօրութեամբ վերաբերեաց ընդ ինքեան ամենայաղթ նշանաւ։

Ելա և այլ տեսութիւն։ Զանգի զօրութիւնն Աստուծոյ, որպէս ասէ գիր, 'ի տկարութեան առաւել կատարի, որպէս յոլով ունի օրինակ. զի Դամ՝ որ 'ի պատկեր և 'ի նմանութիւն Աստուծոյ արարաւ, 'ի հողոյ ստեղծաւ. և Ելոյ լաստափայտիւն ապրեցաւ հանդերձ ամենայն կենդանեօք, և սերմն աշխարհի պահեցաւ։ Ի Ճախսյրձն մականի Յակոբ հօտս բազում ստացաւ. 'ի ձեռն համբակի միոյ գերւոյ՝ զԵգիպտոս բացակայ և մերձաւոր գաւառաք յեօթնամեայ սովոյն կերակրեաց. 'ի ձեռն մունի և գորտի զԵգիպտոս տանջեաց։ Մովսէս ծայրիւ հարեալ գաւազանաւն Մովսէսի՝ զհամատարածն վիմատառեաց, նովին և զապառաժն հոսանուտս գործեաց. ձեռաց տարածմամբ Մովսէսի զՄանդէկ բազմութեամբ ստատակեաց. տապանակաւ զՅորդանան 'ի վեր կապեաց, և զԵրիքով 'ի ձայն փողոյ 'ի վայր կործանեաց, զքանանացիսն տկար պիծակաք թայթահարեալ կոտորեաց, և 'ի ձեռն փողոյ և ջահի զՄադիամ վանեաց. և ծնօտիւ միով ցամաքելով Սամփսոն յայլազգեացն զհազարսն ստատակեաց և զբիւրսն վա-

Digitized by Google

նեաց։ Որպէս պաղատիտ թզոյ զվերան Եդեկիայի բժըշ-
կեաց, այսպէս տկար և ընչին հերով երկնային և ոչ
երկրաւոր ցուցանէր յաղթութիւն. զի ոչ մարդոյ ե-
րեւոյթ զօրութիւնն, այլ Աստուծոյ անտեսականի. զի
ոչ յոսկերաց ստուարացելոց, այլ 'ի հերաց նուազացե-
լոց. զի առաւելութիւն զօրութեանն իսկ Աստուծոյ՝
և ոչ 'ի մէնջ, յանդիմանութիւն թերահաւատին Ի-
սրայէլի։

Եթէ այր մի եբրայեցի այնչափ զօրանայր հնորհօքն
Աստուծոյ՝ որ ենթակայացեալ էր յեօթնագլխեան հերս
գլխոյ նորա, անպարտելի զօրութիւն ցուցեալ՝ միայն
յանձն իւր ցուցանէր զբոլոր ազատութիւն ազգի ժո-
ղովրդեան իւրոյ, վասն որոյ դատեաց զԻսրայէլ ամն
քսան, ուրչափ եւս առաւել բոլոր ազգն հաղարօք և բիւ-
րօք՝ եթէ կացեալ էին յուխտին Տեառն և ըստ իրա-
ւանց նորա գնացեալ։ Եւ արդ ապախտաւոր գտաւ հնոր-
հացն Աստուծոյ, և մոլեկան ախտին երկիր եպագ Սամի-
սոն. և անդէն մերկացաւ 'ի հնորհացն, լքաւ և կնատե-
ցաւ. ուստի և ուստերաց և դստերաց հեթանոսաց յա-
ղօրիս համակեալ, այպն և խաղ եղեւ նոցա։ Ոչնպէս
և ամենայն Իսրայէլ յորժամ որթոյն երկիր եպագ, և
երնջուցն զոհեաց, Ռամաւսեայ նուիրեաց և զԱհաղ
պաշտեաց, 'ի Ղանձիկն Աղկարոնի հարցանէր և նրս-
տեալ լայր զՍամուէլ, յայնժամ մատնեաց 'ի գերու-
թիւն զզօրութիւնս նոցա, և 'ի սուր հեթանոսաց էած
փակեաց զնոսա, և ոչ ոք էր որ օգնէր նոցա. և այսպէս
լի եղեւ նախատանօք 'ի մէջ հեթանոսաց։

Իսկ Սամիսոն որչափ նախատեցաւ 'ի նոցանէ, այն-
չափ լի արար զերեսս նոցա անարգանօք 'ի յաձել հե-
րացն և 'ի զօրանալ հնորհացն Աստուծոյ 'ի նմա։ Այս-
պէս և Իսրայէլ յետ դարձի գերութեանն. յորժամ
հայեցաւ Աստուած 'ի նեղութիւնս նոցա, յայնժամ
յիշեաց զուխտ իւր՝ որ ընդ Աբրահամու, և զղջացաւ
փոխանակ նոցա ըստ բազում ողորմութեանն. այց ա-
րար և ժողովեաց 'ի հեթանոսաց զորդիս ազգի ժողո-
վրդեան իւրոյ. և այնուհետեւ ոչ ասէն 'ի նոցանէ՝ թէ
ուր է Աստուած նոցա։ Եւ ահա յայտնի եղեւ զօրու-
թիւնն Աստուծոյ 'ի վերայ նոցա առ 'ի խնդրել զվրէժ
մահու յատելեաց իւրեանց, և հատուցին դրացեաց

Digitized by Google

եօթնապատիկ։ Եւ այսպէս փառք Աստուծոյ ծագեցաւ առ նոսա, որով փառաւորեալ պարծին 'ի Տէր. զի նմա վայել է փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ՅԱՂՕԹՍՆ ՈՐ ԱՍԷ

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ

Լ՝ պարզ բնութեամբ, և առաւել ունի զբարձրութիւն՝ բանից՝ 'ի վերս հայեցոյց, և զԱստուած Հայր ուսոյց ամենեցուն. որդւոց առ Հայր կարդալ՝ անձուկ գըթոյն ստիպէ զնոսա, և կամք կարօտութեանն զՀայրն ածէ 'ի գութ ողորմութեան։ Ասա կամաց Հօրն՝ և որդիքն պարտին լինել. ապա և Հայրն ըստ կամաց որդւոցն՝ զպէտս նոցա կատարէ, և բոլոր մեծութեան իւրոյ զնոսա առնէ ժառանգորդս։ Հայրդ անուն՝ մի է հոգեւորաց և մարմնաւորաց. պէտքն ըստ մասանց բաժանեալ որոշին 'ի միմեանց։ Երկրաւոր հայս ախտք ցանկութեան մարմնոյ շարժեցին յորդէծնութիւն, ըստ ախտաւոր յղութեանն՝ ախտաւոր որդիս ծնանել։ Փոփոխական է հայրութիւնն. երբեմն որդի եղեւ հայր. նա հրաժարեաց 'ի կենաց աշխարհէս, բարձաւ 'ի նմանէ հայրութիւնն. 'ի տեղի մատեաւ որդին և եղեւ հայր, և զնոյն ճանապարհ գնաց։ Այսպէս փոխանորդութեամբ վախճանելոց է աշխարհս։

Մի է Հայր Հշմարիտ և արարիչ բոլոր աշխարհիս. առանց ախտից յղացաւ, և առանց ցաւոց ծնաւ զամենայն զերեւելիս և զաներեւոյթս. որ ծնաւն՝ նոյն եկեալ օգուտցանէ զորդիսն կարդալ առ Հայրն երկնաւոր, զի մի հանապազ 'ի խանձարուրս և յորրանս կացցէ աշխարհս, կաթնածուծք և ջամբակերք, թաթաւեալ և թաղեալ գարշելի աղտովք. յորմէ ճանձրացան մարք և ստնտուք, և զերեսս 'ի բաց դարձուցին դայեակք և անուցիչք։ Այս են սոքա օրէնք և մարդարէք. 'ի ծով լուացին և ոչ կարացին սրբել. ընդ գետս անցուցին և ոչ ողողեցան. յաձախեցին յօձառս և լուացան բարակաւ, և ոչ սրբեցան. զիւրեամբք ածեալ բարձին, ըն-

Digitized by Google

կեցին և 'ի բաց կացին։ Պ՝Թացաւ Հայրն երկնաւոր, խոնարհեցաւ յերկնից յերկիր, եգիտ զամենեսեան յաբիւն յապաժոյժ, 'ի զոհս մեռելոտի կռոց պաշտամանն։ Բ՝ը, լուաց, սրբեաց, զգեցոյց զհանդերձն երկնաւոր, և մերձեցոյց անդրէն 'ի նոյն որդեգրութիւնն։ Ասոյց ըզհայրենի վարդապետութիւնն, զի կարդասցեն առ սիրելի Հայրն երկնաւոր։ Յորժամ, ասէ, յաղօթս կայցէք, մի տղայաբար շատախօսք լինիջիք. Ք՝ստուած սրտին խորհրդոցն է լսող, և բարի գործոցն է հատուցանող փոխարէն բարի։ Ի՝երանով վկայութիւն այսչափ է բաւական ասելն. "Հայր մեր որ յերկինս, սուրբ է անուն քո"։

Ի՝եծ է այս պարգեւս քան զամենայն պարգեւս առ մարդիկ, Ք՝ստուծոյ՝ Հայր լինել մարդկան։ Ոչիք իշխանութիւն հրեշտակաց զայս ասել. Թէպէտ և հզօրք են և հոգեւորք, սպասաւորք են և ոչ որդիք։ Ի՝վ մարդ, զգոյշ կաց անձին քում; յորպիսի պատիւ մեծարեցար՝ մինչեւ Հայր քեզ զՔ՝ստուած իշխեցեր անուանել. և զայս եւս ած զմտաւ քով, ըստ Հօրն պատուի և զքեզ ձեւացո, զի ծանիցեն վերինք և ներքինք՝ Թէ արդարեւ Ք՝ստուծոյ որդի ես։ Ի՝անիւ ծնանի Ք՝ստուած զմարդն. Թէպէտ և բանիւ ոչ կարես, մի՛ ըստ մարմնոյդ կամաց Թաղաւիր ընդ երկիր. հատ ընկեա 'ի քէն 'ի բաց զաւելորդ ցանկութիւնս։ Շատ և բաւական հանարեա քեզ զհարկաւոր կերակուրն. մի՛ անցաներ և շուայտանար։ Ի գիրութենէ սոնքանայ մարդ, և 'ի բազում Ճարպոյ ելանեն անօրէնութիւնք, որպէս յարբեցութենէ գիջութիւնք պղծութեան. այնպիսին ոչ կարէ անուանել զՔ՝ստուած Հայր։ Ա՝յ ահա քեզէն իսկ վկայեցեր ասելով՝ սուրբ է անուն քո. անուն Ք՝ստուծոյ ո՞ կարէ դնել. սուրբն ասելով՝ այն է Ճշմարիտ անուն Ք՝ստուծոյ։ Ասուտ աստուածոցն անուանքն ոչ են սուրբ. ոմն գող, ոմն սպանող, ոմն շուն, և ամենեքին իւրաքանչիւր ախտիւքն չարչարանայ. մանաւանդ Թէ չիցեն իսկ, և ոչ այլ լինելոց են։ Ի՝արդիկ որ զնոսա աստուածս անուանեցին, նոքա ոչ են Ճշմարիտ որդիք Ք՝ստուծոյ. որոց ուստեցանէ կարդալ առ Ք՝ստուած, և որոց յաղօթան հրամայէ կալ առ Հայրն, նոքաք բանայ դուռն ամենեցուն, զի ամենեքեան ընդ այն դուռն դիմեսցեն

մնանել, զնոյն աղօթս ուսցին՝ ասելոյ զԱստուած և ասել. Հայր մեր որ յերկինս, սուրբ է անուն քո։ Որ-ժամ Հնմարտախօս ուսցին լինել յաղօթսն, ապա և Հնմարտագործք երեւեսցին յաշխարհի, յայնժամ կարեն ըքանել և 'ի բաց թողուլ զսուտ աստուածսն. որ քարին և փայտին հայր և մայր կարդային, և 'ի նոցանէ 'ի բաց կացին, և յանառակ գործոց իւրեանց հրաժարեցին, արբեցան միաք իւրեանց 'ի գիտութիւն իմաստութեան, և բացան բերանք նոցա համարձակս բարբառել և ասել. "Լկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի"։

Իբրեւ թագաւորեաց Աստուած 'ի վերայ ամենայնի, արքայութիւն նորա 'ի վերայ կամարարաց իւրոց։ Զի-այն, ասէ, եկեսցէ արքայութիւն քո։ Այս իբրեւ զայն, "Ծագեսցէ աստղն Յակոբայ, և յարիցէ այր յԻսրայելէ, և հասցէ և սատակեսցէ զբոլորութիւնս Մանչեկայ"։ Աստղն ծագեաց, և այրն յարեաւ, եհար սատակեաց զսատանայ, որ էր զբոլորութիւն հեթանոսաց։ Այս կամք Աստուծոյ էին 'ի սկզբանէ, և կատարեցան 'ի գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այս աղօթս բանիւք պարտիւք ուսանել, և հաւատովք յուսալ յերկրորդ գալուստ նորա, յորժամ ըստ աղօթից մերոց և գործք մերերեւեսցին ստուգութեամբ։

"Լկեսցէ արքայութիւն քո"։ Զնքն արքայութիւնն ուսուցանէ վասն իւր խօսել. "Լր յաշխարհի, և աշխարհ նովաւ եղեւ, և աշխարհ զնա ոչ ծանեաւ"։ Ուսուցանէ Հայր ասել, զի զնա միայն գիտասցես արարիչ աշխարհի, արարչութեամբ՝ բոլորովին, որդեգրութեամբ՝ մարդոյ միայն. որ արարն՝ նոյն և արքայ, և որ եկն՝ նոյն և արքայութիւն նորա. որ բնութեամբ Աստուած մեր, նոյն Հայր մեր՝ շնորհօք աստուածութեամբն իւրով։ Յորժամ Աստուած Հայր է ամենեցուն, Քրիստոս եղբայր է ամենայնի՝ որ առնեն զկամն նորա։ Լր արքայ, և եղեւ քո եղբայր։ Այս պարգեւք մեծ են քան զառաջին արարչութեանն. յայնժամ ըստ պատկերի Աստուծոյ ասացաւ լինել մարդ, իբրեւ թէ ըստ օրինակին ձեւացոյց. որպէս և կամեցաւ հոգեղէնն հողեղինիս տիպք լինել, զի և սա 'ի նա ուսցի առաքինութեամբ ձեւանալ։ Իբրեւ ոչ կարաց միաբանել նմա,

ինքն իսկ զնորա տիպն էառ, որպէս և ինքն գիտէ. ինքն ձեւացոյց անխախտելի և անքակտելի զորպիսութիւնն, անհասանելի և անասելի, միայն հաւատոյն և յուսալի, և զնա միայն արժանի սիրելութեան՝ որ մերոյն ընդ մեզ խօսի և ուսուցանէ. խօսի ազգակցաւն և ուսուցանէ զաներեւոյթ աստուածութիւնն յերեւելիսս, զի երեւելեաւքս զաներեւոյթ արքայութիւնն ծանիցես. որով եկն՝ նոյն և երկրորդ անգամ եկեսցէ։ Այժմ վարդապետութիւնն զաշակերտսն որդիս ասաց, և զծանայս տէրս արարեալ, և զմահկանացուս յանմահութիւն հրաւիրեալ ասելով՝ եկեսցէ արքայութիւն, 'ի զգուշութիւն պատրաստութեան. ապա 'ի հատուցմունս իւրաքանչիւր իշխանութեան։ Արչափ և զքեզ կարասցես վիճակեցուցանել, 'ի մասունս արքայութեան վերաբերել, ըղձական են աղօթքն, և 'ի վերս քան զանութիւնս մեր պարգեւս խոստանայ։

"Այլեցին, ասէ, կամք քո,, ։ Կամք Աստուծոյ է սրբութիւն մարդոյն, զի բաժանակից արար արքայութեան իւրում. ոչ զի ոչ կարիցեմք հասանել յայն բաժին, այլ զի դիւրաւ ստանայցեմք զհամբերութիւնն վասն յուսոյն մերոյ իբրեւ զայնոսիկ՝ որոց զաղօթսն ուսոյց. եթէ նոքա կատարեցան ըստ աղօթիցն, ապա և մեք կարեմք. միայն հաւատս յուսա սիրեա, և անդէն կատարեցար իսնդութեամբ։ Այս եթէ տրտմութեամբ չարչարակից լինիս Քրիստոսի, ինքն Աստուած զօրացուցանէ 'ի համբերութիւնն. և եթէ ոչ գոյր կարողութիւն, և ոչ զայնպիսի զաղօթսն Աստուած ուսուցանէր մեզ։ Յառաջինսն հայեցարուք և քաջալերեցարուք. ոչ զչարչարանսն միայն բաւական համարեցան անձանց 'ի հաւատս, այլ և զմեռանելն քան զապրելն. 'ի նահատակաւորիս հայեցան և կատարեցան։ Այլոցա՝ բանիւ գովողք եղիցուք, և գործովք՝ զանձինս մեր 'ի նոյն նահատակութիւնն կատարեսցուք։ Հասարակաց է Աստուած հայր ամենեցուն. հասարակ պարտիմք որդիք լինել ամենեքեան, զի և մի է ժառանգութիւնն զոր բաշխեաց ամենեցուն։

"Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի,, ։ Իբրու կարէ Աստուած զբոլոր մարդիկ երկնաւորս առնել, զաղօթսն 'ի մեր կամն ընկենու. զի մեք երկրա-

ուրքս՝ մեզէն կարեմք լինել երկնաւոր ։ Եվ երին զօրքն ամենեւին կամաց նորա սպասէն սիրով. ընեալ կան 'ի միաբանութեան փառաւորելով զԱստուած, և յահագին փառաց նորա ծածկէն զոտս և զերեսս, զի յինքեանս սիրեսցեն զԱստուած. փոխանակ աչօք տեսանելոյ՝ զսէրն բաւական համարին յանձինս իւրեանց. 'ի նոցա սիրոյն և Աստուած զկամն իւր սիրով 'ի նոսա կատարեաց։ Եվ 'ի փութացուք մնրմնաւոր աչօք տեսանել զԱստուած, զի մի ծախիցիմք տարաժամ։ Երն 'ի մէնջ լեցի առ նա պատգամաւոր, և 'ի սիրոյ նորա կատարեսցին կամք նորա 'ի մեզ։ Որ ինչ ուսուցին մեզ մարգարէքն, զայնու փութացուք երթալ. քանզի նոքա բանիւք խօսեցան և գործովք կատարեցին. ոչ այլ ոք էր նոցա վարդապետ, այլ որ քեզ զաղօթս ուսոյց. և դու բանիւ ուսիր զաղօթս, և գործով փութա կատարել։ Եվ հեռի ես 'ի հրեշտակաց, այլ ընդ նոսա կաս յաղօթս, զի ընդ նոսին փառաւորեսցես զԱստուած. որպէս դու ընդ նոսա միաբանիս, նոյնպէս և նոքա ընդ քեզ երգակից լինին յաղօթսն և յօրհնութիւնսն։ Նա մարձակ բանսա զբերանդ և ասես, "Աղերսին կամք քո որպէս յերկինս և յերկրի,,։ Եվ՝ եթէ ոչ այս իշխանութիւն քան զառաջինն օրհնութիւնսն. անդ 'ի վերայ երկրի միայն տիրել իշխանութեամբ. ասա, ասէ, յերկինս և յերկրի։

"Զհաց մեր հանապազորդ տուր մեզ,,։ Երկրաբոյս հացս Աստուած առանց աղաչելոյ ամենեցուն ընդարձակ է առ հասարակ. "Զմարդիկ և զանասունս կերուցանես դու, տեր,,։ Այս որպէս մնրթի ասել. սա և հանապազորդ իսկ չէ. տղայութիւն արգելու, հիւանդութիւն կարձէ, կարօտութիւնն խոտիանէ, մահ քակէ և 'ի բաց հատանէ։ "Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին և մեռան. այս է հացն ճշմարիտ՝ որ յերկնից իջեալ. յայսմ հացէ եթէ կերիցէ ոք՝ մի մեռցի յաւիտեան,,։ Լսէին 'ի նմանէ զբանս, և ոչ կարէին վաղվաղակի 'ի միտ առնուլ. կրկնէ և երեքկնէ զնոյն բան և ասէ, զի դիւրաւ լուիցեն և հաւատովք ընկալցին ըզբանին զօրութիւն. "Այս եմ, ասէ, կենդանի հացն՝ որ իջեալ յերկնից. յայսմ հացէ որ ուտէ, մի ճաշակեսցէ զմահ,,։ Այս հացս ուսուցանէ յաղօթսն խնդ-

Digitized by Google

րեալ Աստուծոյ հանապազորդ։ Եթէ քաջ միտ դնես, որ զայս հայս սրբութեամբ ուտէ և ըստ արժանի սմա պատրաստէ զանձն իւր, երկրաւոր արքայութեանս նա ոչ կարօտանայ. 'ի մահկանացու ձեռս անմահ հաց ե՞ դեալ՝ անդէն վաղվաղակի և ձեռքն անմահացան. և ուտելով զսա՝ բոլորովին մարդն ընչով և հոգւով և մարմնով հոգիացաւ և բաժանակից եղեւ Քրիստոսի. միայն զսկիզբն զօրութեան մինչեւ 'ի վախճան անարատ պահելով։ Զիք ինչ յերկրաւոր չարչարանաց, որ նմա յաղթէ. արհամարհեալ է առաջի նորա արծաթ, և ոսկի ատեցեալ է յաչս նորա, ցաւ համարի զմեծութիւն աշխարհիս, վասն զի խորհուրդք իւր սրբեցան յաղատութիւն երկնաւոր՝ անմահ հացիւն առլցեալ։ Այն եղեւ բաւական ամենայնի. եթէ տղայ է, կատարելահասակ երեւեցաւ. եթէ 'ի ցաւոց տկարացաւ, զօրութիւն Աստուծոյ 'ի նմա բնակեցաւ. եթէ վախճանեցաւ 'ի կենաց աշխարհիս, զանմահ կեանսն ընդ իւր տարաւ առ Աստուած։ Օ այս ուսուցանէր Տէրն մեր յաղօթսն աղաչել առ ինքն՝ զհաց մեր օր ըստ օրէ տուր մեզ, ոչ յերկրէ, այլ 'ի Տեառնէ. յայտ է թէ և ոչ յերկնից, այլ զՏէրն ամենեցուն. "Այս է, ասէ, իմ մարմին, և այս է իմ արիւն"։ Թէպէտ և անփշրելի էր, վասն սիրոյ քո փշրեցաւ. և զքեզ՝ որ 'ի կամս քո փշրեցար, անփշրելի աստուածութեամբն յինքն յարեաց. "Ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տայցես սրբոյ քում տեսանել զապականութիւն"։ Յուրբաթու խաչեցաւ 'ի փշրումն մահու. 'ի միաշաբաթոջ զփշրեալ ոսկերսն Աղամայ ժողովեաց և յարեաց յանմահութիւնն, և երեւեցոյց բազմաց ճշմարտութեամբ և ոչ առ աչօք. մի օր հացացաւ 'ի վերնատանն, և հանապազ հացանայ յեկեղեցիս 'ի վերայ սուրբ սեղանոյն. նախ ինքն յինքենէ ճաշակեաց, և ապա զմեզ զամենեսեան ճաշակիցս արար նմին չարչարանաց։ Այս և ոչ այսուհետեւ 'ի չարչարանս է, այլ 'ի հայրենի փառն փառաւորի 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ, և զմեր ամենեցուն զչարչարանս եբարձ յիւր անչարչարելի աստուածութիւնն։ Օ այս յոյս հաւատոց մերոց իբրեւ զիարիսիս հաստատուն պահեսցուք յոգիս և 'ի մարմինս մեր. որպէս սիւն շինուածոյ է հաստատութիւն, հա-

Digitized by Google

ւատք մարդոյ են անքակուԹիւն առ Յիսուած. որով համարձակուԹեամբ կարէ բարբառել և ասել. "Թող մեզ զպարտսն մեր, որպէս և մեք Թողումք մերոց պարտապանաց,,:

Այս են աղօԹք ՀՀմարիտ, բանական և գործնական. յորժամ դու ոչ պահանջեսցես զպարտսն յընկերէն քո առ քեզ, յայնժամ և Յիսուած զբոլոր յանցանս Հնորհեսցէ քեզ յանմեղուԹիւն: Ուր Պետրոսի՝ զիարդ ուսաւ 'ի Տեառնէ: Այս եօԹն անգամ կամեցաւ Թողուլ զյանցանս եղբօրն, Տէրն մեր զեօԹն եօԹանասուն անգամ ասաց: Պետրոս իբրեւ զմարդ սահման եդ, Տէրն մեր ոչ սահմանեաց զբարերարուԹիւն մարդասիրուԹեան աստուածուԹեանն իւրոյ: Հանապազ մեղանչեմք բանիւք և գործովք մերովք, և Յիսուած տեսանէ և զանց առնէ, զի երկայնմտուԹեամբն իւրով ածցէ զմեզ յապաշխարուԹիւն. մեղանչէն իսկ՝ է մարդոյն 'ի կատարեալ արդարուԹիւն. իսկ եԹէ յանցեաւ իբրեւ զմարդ, փուԹացի զղջանալ յապաշխարուԹիւն: Ի բաց են դրունք ողորմուԹեան նորա, ոչ փակէ ընդդէմ ապաշխարողաց. մանաւանդ որք հաւատովքն գիտեն խնդրել, նոքա և առաքինուԹեամբ կարեն ՀգՀնել 'ի վաստակս հոգեւորս. նոքա ոչ միայն զպարտսն Թողուն ընկերաց իւրեանց, այլ և զինչս իւրեանց բաշխեն 'ի կարօտեալս. զօրուԹիւն Յիսուածոյ է՝ որ ՀգՀէ զնոսա յառաքինուԹիւն, որպէս և առաջինքն առնէին. "Ուր միանգամ, ասէ, գեղից և ապարակաց և ընչից տեարք էին, վաՀառէին զիւրաքանչիւր ստացուածս և բերէին դնէին առ ոտս Յառաքելոցն,,: Տէր մեր զնոսա քարոզս բանին առաքեաց. նոքա քարոզք էին բանին, և ընչից մատակարարք: Զայն բանի յունկն Հասանէ, և սէր վերնոյն առանց բանի ուսուցանէր զառատուԹիւն. ոչ զի աղքատանալ կամէին, այլ զի այլում մեծուԹեան Հասցեն՝ երկնաւորին: Այս դու յորժամ ընկերին Թողուս զպարտիսն քո, ոչ զի ատելով ատէիր զիրսն քո, այլ զի սակաւ ողորմուԹեամբն զոր արարեր՝ զբազմապատիկ պարտսն քո զոր պարտէիր՝ Թողցէ քեզ Յիսուած: Օ այս բանից զՀետ երԹիջիր. յորժամ ընկերին քում Թողուս, և դու ԹողուԹեան արժանի եղեր:

ՀմտարձակուԹեամբ բանաս զաւերանդ և ասես. "Մի

տար զիա՛ի փորձութիւն, այլ փրկեա՛ի չարէն։,, ։ Ոչ են կամք Աստուծոյ զմարդն տանել՛ի փորձութիւն, այլ ապրեցուցանել՛ի փորձութենէ և փրկել՛ի մահուանէ. զի որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն՝ ի մահ մատնեաց, նովաւ զամենայն բարիս շնորհէ ամենեցուն՝ որ խնդրեն՝ ի նմանէ։ Ոչ պէտ և ոչ է մեր կարողութիւն փոխարէն հատուցանել Աստուծոյ, որչափ կարն է մեր՝ մի՛ հեղգասցուք։ Ակաւապէտութիւն մեր՝ ի պահս համարեալ է, և չափաւոր արքունի՝ ի գինեհատութիւն, միջին հանդերձքն յանսիգութիւն, և հարկաւոր ստացուածք յաղքատութիւն. վասն երանութեանն հեզաբան լինել ընկերին ուսուցանել ցածութիւն։ Այթէ անքուն ոչ կարեմք լինել, մի՛ քնաւ զգիշերն քնոյ տացուք, զի մի՛ քնաւ մոռացկոտ լիցուք՝ ի սաղմոս և յօրհնութիւնս։ Այթէ զկարօտութիւն աղքատաց ոչ կարեմք լցուցանել, մի՛ պատառաւ և բաժակաւ կարօտացուսցուք զնոսա։ Ա՝ի գացի յափշտակութիւն որբոց և այրեաց՝ ի ստացուածս մեր. ամենայն զինչ և իցէ մեր՝ նուիրեալ լիցի Աստուծոյ. յայնժամ՝ և անձինք մեր լիցին նմա պատարագ հաճոյ և ընդունելի։ Ամենեցուն փութալ արժան է՝ ի պատուիրանս Աստուծոյ՝ առնել և կատարել, արանց և կանանց, ծառայից և ազատաց, զի Տէր մեր վասն ամենեցուն թողութեան եկն. և նորա մարդասիրութեանն վայելէն փառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ցաջորդ Հաւրդ պատին յանուն Եղիշէի Վարդապետի. այլ հարազատութեանն և իմաստիցն չիք երաշխաւորել։

Digitized by Google

Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Հրաշափառ և պայծառ մեծի լուսաւորութեան աւուրս հանդիպեցաք, զմարգարէական զերգս առեալ աղաղակեսցուք սուրբ սրտիւ և կատարեալ հաւատով. "Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ,, : Այս և առաքելական քարոզն գոչէ ասելով. "Ահա ժամանակ ընդունելի, ահա օր փրկութեան,, : Երկրորդ և վերջին ծնունդ Քրիստոսի ըստ մարմնոյ, յետ առաջնոյ և անպատումն և անհաս և անքննելի ծննդեանն : Այն անժամանակ 'ի Հօրէ ծնունդն ոչ քննելի մտաց մարդկայնոց, և ոչ հասու եղեալ անմարմին և երկնաւոր զօրութեանցն. բայց միայնոյ Հօրն՝ որ զնայն ծնաւ, և ծնիցելոյ միածնին և քննողին Հոգւոյն սրբոյ զկարս Աստուծոյ : Իսկ երկրորդի ծննդեանս ժամանակեայ լինելով մարմնով 'ի կուսէ յառաջ եկեալ, յայտնեալ երկնաւորաց և երկրաւորացս մասնաւորաբար, այլ ոչ կատարելապէս : Իսկ երկրորդս գերագոյն խորհրդոյ զօրութիւն. քանզի ըստ Թուոյ երեսնամեայ գոլով գայ 'ի մկրտութիւն, կատարեալ յամենայնի ըստ աստուածութեանն, կատարեալ և 'ի հասակի մարդկութեանս : Այս քանզի երից տասանց գործէ զմարդն կատարեալ, ըստ այսմ ստեղծագործեալ և առաջինն Ադամ, խաբեալ յօձէն արտաքոյ լինի փափկութեանն դրախտին. ըստ այսմ կատարելութեան տնօրինեալ երկրորդ Ադամն ջախէ զգլուխ վիշապին 'ի Յորդանանու հոսանսն :

Ադ 'ի սկզբանն շրջէր Հոգին սուրբ առանց կերպի 'ի վերայ ջուրց առ յօրինել զտարր արարածոց, զոր կոխեաց նախանձաւոր թշնամին : Աստ Հոգին աղաւնակերպ տեսլեամբ զասպականութիւն արարածոց վերստին հրաշագործեաց. զծածկեալ խորհուրդն յաւիտենական ծանոյց, յայտնեալ զանձնաւորութիւն Երրորդութեանն. ձայն Հօր և 'ի վերայ սիրելի միածնի Որ-

դեայ։ Յառաջնումն ապականի երկիր ջրհեղեղաւն կո-
ւրստեամբ. իսկ աստ կենագործի երկիր ջրհեղեղաւն
մկրտութեամբ, ոչ յընկղմումն արարածոց ըստ բնու-
թեանն, այլ զմեղաց ընկղմէ զգործ։ Ընդ թաղումն 'ի
ջուրսն սեռի մարդկան զեղծումն գործեաց. աստ թա-
ղումն 'ի ջուրսն նորոգումն և կենաց հաղորդութիւն։
Ընդ աղաւնի շղաբեր ունելով, զաւետիս ցածութեան
բարկութեանն աւետարաներ. աստ աղաւնւոյ նմանու-
թիւն զկենացն առհաւատչեայ և զմշտնջենաւոր յա-
ռակայութիւն առ աստուածութիւնն աւետարաներ ձայ-
նիւ Հօր, որ զեկուցաներ զսիրելութիւն Որդւոյ։ Ա-
սոր կուսածինն յամրորդւոյն ընդունի զձեռնադրու-
թիւնն, Աստուածն Ճշմարիտ յորդւոյ քահանայապե-
տին, ամենասուրբն 'ի մեղաց 'ի լցելոյն Հոգւովն սրբ-
բով յորովայնի մօրն։ Ա՛յս է շարադրութիւն ազգակ-
ցութեան Մարիամու առ Յոլիսաբեթ, այլ ոչ ըստ ազ-
գականութեան տոհմից. վասն զի ոչ խառնակի ցեղն
Յուդայ ընդ ցեղապետսն 'Ղեւեայ։ Այլ զայսոսիկ օ-
րինադիրն ցուցանէ։

Որդ զմի ձանապարհ վարեցին Քրիստոս և Յով-
հաննէս. այլ Քրիստոս տիրաբար և աստուածապէս և
մարդասիրաբար, իսկ Յովհաննէս ծառայապէս, մար-
գարէօրէն և բարեկամաբար. զմի ունելով կարապետ
երկոքեան զԱբրահել հրեշտակապետն։ Այլ ոչ հա-
մեմատի Զաքարիա ընդ Մարիամու. զի առ քահա-
նայապետն ահիւ և իշխանաբար առաքեալ՝ զամլոյ ար-
գանդին պղաբերութիւնն քարոզէր. և 'ի չհաւանել
ծերոյն՝ կապեաց զլեզուին յարձակումն զքահանային։
Իսկ առ Մարիամ զաւետիս գալստեան Բանին աւե-
տարանեաց. և 'ի չհաւանել կուսին՝ զՀոգւոյն սրբոյ
զեկաւորութիւնն պատմէ կարող այնմ խոստմանն լի-
նել, յիշատակ բերելով զմարգարէականն բան։ Ուստի
և 'ի լեռնակողմն հրեաստանի ընթացեալ 'ի նկատել
զասացեալն հրեշտակապետին որ վասն յղութեանն Յ-
ոլիսաբեթի. որ զաղգականութիւնն առ միմեանս հա-
մեմատէր, զՄարիամն առ Յոլիսաբեթ. այս ինքն
զկուսական արգանդին զյղութիւնն, և զամլոյն զպտղա-
բերութիւնն յանցեալ ժամանակի։

Որդ մնանէ Մարիամ 'ի տուն Զաքարիայ, կեն-

Digitized by Google

դանի տապանակն ունելով յինքեան զԲանն կենդանի։ Իսկ Աղիսաբեթ ունելով յինքեան յիւրում տապանակին զձայն Բանին կենդանւոյ, և տուեալ ողջոյն Աղիսաբեթի Մարիամ, խայտաց ձայնն ընդ գալուստ Բանին։ Յարգանդէ յարգանդ նոր սքանչելիք լինէին։ Աղիսաբեթի մանուկն յարգանդէ մօրն յորովայնի կուսին բնակեցելումն զպարտս երկրպագութեանն հատուցանէր։ Ո՛վ հրաշիցս. 'ի միում վայրկեան ժամանակի յորովայնի բնակեալքն բացայայտեն զՀնմարտութիւնն. մինն ծառայաբար մատուցանէր, իսկ միւսն սիրապէս ընդունէր զնայտումն խոնարհութեանն։ Յետ այսորիկ հասանէր օր ծննդեան Աղիսաբեթի. և կոչելով զյոր-ջորջումն անուանն՝ լուծանի կապանք լեզուին հօրն և քահանայապետին. քանզի ոչ էր պարտ 'ի գալ ձայնին լռել հօրն։ Երդ հասանէ օր ծննդեան կուսին, և խոզէ զկապանս նախահօրն քահանայապետիւն յաւիտենական, որ կոչեցաւն Յիսուս։

Դարձեալ դադարէ Յովհաննէս յանապատին ամս երեսուն, և առաքի 'ի մկրտութիւն յետ կատարելոյ այնց ժամանակաց։ Լռեալ դադարէ և Յիսուս նոյնգունակ. մնեալ ընդ Թուոյ ամաց երեսնից՝ և գայ 'ի մկրտութիւն, անաղտն 'ի մեղաց, առլցեալն անդստին յորովայնէ մօրն Հոգւովն սրբով, առաքեալն 'ի Հօրէ սիրապէս առ առաքեալն 'ի Հոգւոյն սրբոյ յանապատէն ծառայապէս, Տէրն մարգարէիցն և Առաքելոցն առ Առաքեալն և մարգարէն, սկիզբն և անդրանիկն ամենայն արարածոց առ 'ի յետին մարգարէիցն և առ 'ի վերջին օրինացն և առ անդրանիկն Առաքելոց և առ որ 'ի յայնմ հետէ արքայութիւն Աստուծոյ բռնադատի։ Այս կարապետս՝ կատարած հնոց օրինացն Մովսէսի. և սկիզբն նոր օրինացս՝ Քրիստոս։ Տեսէ՛ր զառ 'ի միմեանց զՀնմարտութիւնն հետեւողութեամբ, այլ ոչ համեմատաբար. զի ոչ հեռաձգեալ որոշին նմանութեամբն, և ոչ բովանդակին յարելութեամբ։ Ի թէպէտ և ասիցի ծնունդ և ծնունդ, այլ մինն կուսական, իսկ միւսն ամլական. մին 'ի Հոգւոյն սրբոյ յղացեալ, իսկ միւսն սերմնական 'ի Զաքարիայէ սաղմնառեալ։ Բազում օրինակս ունի յինքեան Աղիսաբեթ. իսկ 'ի կուսութեանն ծնանել և 'ի կուսութեան մնալ մօրն, ոչ

Digitized by Google

օրինաք և ոչ 'ի մէջ արարածոց լինեալք կամ լինելոց է կարողութիւն. բայց միայն 'ի միոյն 'ի միածնէն ըստ բարբառոյ մարգարէութեանն Եսայեայ՝ որ գուշակեաց Իմմանուէլ զծնիցեալն։ Տեսանեմ զանջրպետութիւնն 'ի մէջ Քրիստոսի և Յովհաննու, մերձեալ և յոյժ հեռագոյն։

Արդ երկեայ յայտնեցի քեզ և զանուանցն զանազանութիւն զՅիսուսի և զՄկրտչին, պէսպէս և այլագունակ մերձենալով և հեռանգելով։ Որի տէր Յիսուս, ասի և տէր Յովհաննէս. այլ նա ըստ բնութեան տէր և արարչութեան, իսկ Յովհաննէս ըստ հասարակաց առ 'ի միմեանց յորջորջմանց։ Դարձեալ կոչի մարդ և Յիսուս. սակայն ոչ իբրեւ զմի 'ի մարդկանէ, զի ոչ ունի ըստ մարմնոյ հայր, որպէս և ոչ ըստ առաջին ծննդեանն մայր։ Իսկ Յովհաննու հայր և մայր գոլով յապականացու սերմանէ ունելով զմարդեղութիւնն։ Կոչի Քրիստոս ծառայ ըստ մարմնոյ, եթէ "Արդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել,". ոչ ըստ բնութեանն, այլ կամաւոր աղքատութեամբ։ Իսկ Յովհաննէս ըստ բնութեան գոլով ծառայ հաւասար մեզ 'ի ծառայական կերպի։ Դարձեալ անուանի արեգակն արդարութեան Քրիստոս, անուանի և Յովհաննէս Ճրագ. անուանք լուսաւորութեանն, և զանազանութիւն յոյժ մեկուսի. զի մին զաշխարհս լուսաւորէ անվախճան լուսովն, իսկ միւսն աղօտաբար սուղ ինչ առ աչս մատուցանէ զտեսաւորութիւնն։ Ճանապարհ ասի Քրիստոս. իսկ Յովհաննէս պատրաստող Ճանապարհին Տեառն։ Քարոզէ Քրիստոս աշխարհի ապաշխարել, զի մերձեալ է արքայութիւնն երկնից. քարոզէ և Յովհաննէս. այլ և Յիսուս ընդհանուր տիեզերաց, իսկ Յովհաննէս յատուկ միայն ազգին Իսրէից։ Դառն է Քրիստոս բարձող զմեղս աշխարհի սակս խաչին. գառն է և Յովհաննէս Հերովդիադայ մոլեգնութեամբն զենեալ։ Լա վասն փրկութեան առ 'ի մուտս սրբութեան յաւիտենականի, և սա վասն յանդիմանութեան օրինացն։ Լարապետ կոչի Քրիստոս տիեզերաց. կարապետ ասի և Յովհաննէս երկնային կարապետին։ Մկրտէ Քրիստոս, այլ 'ի Հոգի և 'ի հուր զկատարեալ մկրտութիւնն. մկրտէ և Յովհաննէս, այլ

Digitized by Google

միայն ապաշխարութեամբ։ Մկրտեցաւ Քրիստոս դաշ-
ձեալ արեամբ. մկրտեցաւ և Յովհաննէս արեամբ ձեռ-
նադրեալ 'ի Հերովդիայ։ Քարոզէ Քրիստոս որք ընդ
իշխանութեամբ մնան էին 'ի դժոխս. քարոզեր և Յով-
հաննէս նոյն 'ի դժոխս զգալուստ արեգականն արդա-
րութեան։ Յոլով և պէսպէս պատմէ կտակ աստուա-
ծային զյորջորջումն անուանցն զանազանութեանցն, որ
բաւականացեալքս կալցին։ Բայց և ոչ զմեծն և զառա-
ւելագոյնն թողում. ասել արժանաւոր վարկանիմ զան-
զուգականն և զարարչականն։ Աստուած է Քրիստոս,
աստուածացոյց և զՅովհաննէս. Քրիստոս բնութեամբ,
իսկ Յովհաննէս ըստ նորին։ Որպէս է որդին Աստու-
ծոյ ըստ բնութեանն Աստուծոյ, իսկ Յովհաննէս և որ
ըստ նորա՝ հաւատովք որդիք ըստ շնորհաց։ Զայլ մի
հիացուսցէ զքեզ ասացեալքդ՝ եթէ աստուածացոյց զՅովհաննէս. որ և զիս աստուածացուսցէ, ըստ այնմ՝
եթէ երեւեսցի Աստուած 'ի մէջ աստուած եղելոց և
թագաւորաց. քանզի ասէ մարգարէութիւնն. «Այս ա-
սացի թէ աստուածք իցէք, կամ որդիք բարձրելոյն»։
այլ և առ Մովսէս ասէ. «Նշան զքեզ աստուած Փա-
րաւոնի»։ Ըստ այսմ օրինակի ասին սուրբքն աս-
տուածք, այլ ոչ ըստ անզուգական արարչութեանն։

Զայլ դարձեալ վերստին երկրորդելով զկարապետին
շարադրելով զանուանսն և առընթեր զփրկչականն ա-
նուն, զի 'ի մեծի այսմ աւուր ընծայեցուցից 'ի լուսա-
ւորական յայտնութեանս զբանիւ իմոց զպտուղ։ Զառա-
քեալ և մարգարէ առաքեցելոյն 'ի Հօրէ Բանին. մար-
գարէ՝ որ զմարգարէացեալսն տեսեր. կարապետ արե-
գականն արդարութեան. Ճրագդ մեծի լուսոյն. արու-
սեակդ թափանցիկ և անհասանելի լուսոյն. պատրաս-
տող կենաց Ճանապարհին. քարեկամ փեսային. ձայն
Բանին. քարոզ Ճշմարտութեանն. ձեռնադրող այնմ՝
որ ձեռօքն իւրովք ստեղծ զամենայն. վկայ վկայեցելոյ
'ի Հօրէ Բանին. մկրտիչ՝ որ մկրտէ 'ի հուր և 'ի Հոգին. 'ի ծնունդս կանանց վերագոյն ամենայն արարածոց. աւետարանիչդ Միոնի, քարոզդ Երուսաղէմի,
աղաղակելոյ ասելով. Ահա գառն Աստուծոյ՝ որ բառնայ
զմեղս աշխարհի. ահա գառն Աստուծոյ՝ որ 'ի խաչին
պատարագի, և զապականութիւն արարածոցս նորոգէ

ջրով և Հոգւով և արեամբ. հրեշտակ մեծի խորհրդոյ հրեշտակին, որ երիւք կատարեալ մկրտութեամբն զերից զանձնաւորութեանն կատարէր զդաւանութիւն։ „Ջրով զապականեալսն մաքրէր, որպէս առ համաշխարհական բարկութեամբն. բայց սակայն լուացումն բարկութեան և կորստեան, իսկ սա լուացումն կենդանութեան, և մաքրումն հոգւոյ ընդդիմակաց զօրութեանն յարձակելոյն 'ի սատանայական հոգւոցն ազդեցութեանց։ Իսկ հրով, որպէս զի փորձեսցէ իբրեւ զոսկի ընտիր, զի խոտանն տոչորեսցի, և 'ի բանից որոշեսցի 'ի պատուական նիւթոցն. զի զտեալ ընտիր կացուսցէ ըստ մարգկային բնութիւնս. ստեղծագործելով վերստին աբարշագործեաց։ Այս է մեծի մկրտութեանն զօրութիւն, լուսաւորութեանն պայծառութիւն, որով Հայր յայտնի և Որդի Ճանաչի և սուրբ Հոգին քարոզի. մկրտչին պատիւն համբաւի. մկրտեալն զմկրտչին աւաւելութիւնն քարոզէ ասելով. "Ոչ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս. բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա„։ Նմա փառք յաւիտեանս. ամէն։

Ի ԹԱՒՈՐ ԼԵՐԻՆ

ՅԱՑՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԱՌ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

Մինչդեռ երթային նոքա 'ի Ճանապարհի, ասէ Տէր մեր ցերկոտասանսն. "Օ՞ ուստեք ասեն զինէն մարդիկս թէ իցեմ,,: Պատմեցին նմա զարտաքնոցն, զի այլ ընդ այլոց կարծէին: Բայց ցնոսա. "Իսկ դուք զի՞նչ ասէք զինէն,,: Յառաջեցաւ Պետրոս և ասէ. "Դու ես Քրիստոս Յիսուս որդի Աստուծոյ: Դովեաց Տէր մեր զգեղեցիկ վկայութիւն նորա, և Հօր իւրում ետ գայտնութիւն ընորհին. և զի դեռ եւս Պետրոս այսր և անդր դեգերէր, կարծէր եթէ Քրիստոս ոչ մեռանիցի, ոչ քաջ գիտացեալ՝ եթէ մահուամբն նորա մահ մեռանի և աշխարհ կենդանանայ. ետես Տէր մեր եթէ մոռացաւ Սիմոն զերանութիւնսն երկնաւորս, արկ մորմոքումն բանից 'ի լսելիս նորա. բոլոր ինքն շարժեցաւ յահագին երկիւղէն իբրեւ լուաւ 'ի Տեառնէ, եթէ "Պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել, մեռանել և յերիր աւուր յառնել,,. յոյժ տրրատեցոյց անուամբ մահուն, և առաւել քան զյոյժ մխիթարեաց աւետեաւք յարութեանն: Իսկ նորա 'ի մեծ տագնապէ մահուն յիշատակաւք մոռացաւ զաւետիս յառնելոյն. որպէս և է տեսանել 'ի բնութեանս մերում. հին ախտքն բնութեանն մեղացն՝ ոչ տայ թոյլ վաղվաղակի եկամուտ նորոյ կենացս 'ի ներքս անկանել. որպէս և որդիք ժողովրդեանն հին կուրութեամբն խանտային ընդ նորոյ կենացս երեւումն, անուանելով զնա Նոյնա կամ Յրեմիա կամ զայլ ոք յառաջին մարգարէիցն, չար 'ի մխիթարութիւն անձանց իւրեանց մահկանացուացս: Մահկանացու կարծէք՝ զմիտս ժողովրդեանն յերկուացուցանելով յայնմանէ, որ եկն կատարել զբանս մարգարէիցն: Նովին ախտիւ խօթանայր և

Digitized by Google

Պետրոս. զվկայութիւնն գեղեցիկ մատոյց, զխորհուրդն չարաչար հիւանդացոյց. իբրեւ յանզգայ սաստկագոյնս ընդդէմ չոգաւ. «Հաւ քեզ, մի լիցի այդ բան,, ասէ։ Զբոլոր հին կարծիս մտացն ած թափեաց, զառաջին գեղեցիկ վկայութիւնն ելոյծ. Հայր յայտնեաց նմա զբոլոր աստուածութիւնն Որդւոյ, զի աստուածութեամբ և մարդկութեամբ զչարչարանսն ընդունիցի, և որ չարչարիցի՝ նոյն և յառնիցէ։ Յայսմ աւետիս խնդալ էր ամենեցուն, և ոչ ըղձիւք արգելուլ զնա յերկոցունց։ Տեսեր, ուր զաստուծոյն խօսեցաւ, երանի ետ նմա. իսկ ուր ըստ հին մարդոյն խորհեցաւ, ասաց նմա յայտնապէս. «Յետս երթ, սատանայ, զի ոչ խորհիս զԱստուծոյն, այլ զմարդկանս,,։

Արդոյ խորհուրդք իբրեւ զծուխս անպիտան են. 'ի ծուխս անդր սաստեաց և հետակոծոյս արար զնա 'ի նոր մարդոյս, զի իսկ ինքնածագ լոյս առանց ապականացու խորհրդոյ, որ և արքունիքն իսկ անուանելոց էին՝ յորս սաստեաց. և առ ընկէց զնա յետոյ իւր, զի ինքն ըզկամն Հօր իւրոյ կատարիցէ առանց գայթակղութեան իրիւք դնելոյ։ Ուսոյց և նոցա չարչարանս ընդունել յիւրաքանչիւր անձինս, և անդէն առ նմին յուսով յարութեամբ հաստատեաց զնոսա. ոչ միայն որ յապայն լինիցի, այլ զի և առժամայն փոքր 'ի շատէ ցուցցէ զնմանութիւն երկրորդ գալստեանն իւրոյ, որպէս և ասէ իսկ անսուտ վկայութեամբ. «Արդարեւ ասեմ ձեզ, իցեն ոմանք որ այժմ աստ կայցեն, մի ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ, զի եկեալ հասեալ իցէ զօրութեամբ իւրով,,։

Այս յայսմ տեղւոջ երեւի ոմանց սակաւիկ մի ընդդէմ միմեանց բանք աւետարանագրացն։ Մատթէոս յետ վեց աւուր ասէ. իսկ Ղուկաս և Մարկոս յետ ութ աւուր ասեն. այլ մեք բաւական համարիմք զոմանց ասացեալսն. Մատթէոս, ասեն, զաստի անտիսն եթող և միայն զմիջոցն առ 'ի համար. իսկ երկուքն և զխոստանաքն և զերեւեալն հանդերձ միջաւն. և հաճոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս. և մեք 'ի նոցունն հաւանիմք միաբանեալ, որպէս ցուցանէ մեզ Մարկոս աւետարանագիր. Այս եղեւ յետ բանիցս այսոցիկ իբրեւ անցին աւուրք ութ, առեալ Տէր մեր ընդ իւր

զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և ել 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղեւ առաջի նոցա, և ձորձք իւր եղեն փայլուն և սպիտակ յոյժ, որպէս զի ոչ կարէին թափիչք երկրի այնպիսի ինչ սպիտակացուցանել. և երեւեցան նոցա Մովսէս և Եղիա զի կային և խօսէին ընդ Յիսուսի և պատմէին զելս նորա զոր կամէր կատարել յԵրուսաղէմ: Յայս վայր սուրբ աւետարանագիրս երկրորդեաց զյայտնութիւնն երկնաւոր: Յամենայն բանս աստուածային գրոց՝ յոյժ է զարմանալ հողեղէն բնութեանս. իսկ յայնպիսում յերկնաւոր երեւման՝ ոչ միայն մեք տկարանամք, այլ և անմարմին զօրութիւնք երկնից: Զ զբոլոր ժամանակսն զոր շրջեցաւ Տէր մեր յաշխարհի՝ առաւել զանցուցանէ ըստ մարդկան խոնարհութեանս. իսկ 'ի լերինս յայսմիկ՝ և ըստ հրեշտակացն անցոյց ահաւորութիւնն. ոչ միայն զի ինքն լոսեղէն փառօքն երեւեցաւ, այլ զի և վմահուն եբեկ դրունս, և զառաքելոյն կատարեաց զխոստմունս. "Ընտրեալդ, ասէ, այսպէս լաւ խորհել, զի առանց մեր մի ինչ կատարեսցի": Եւ Դաւիթ յաղաղակելն իւրում ասէ. "Ինձ սպասեն արդարք մինչեւ հատուսցես": Եւ երկրորդ մեծ ձայնիւքն 'ի մեծամեծաց մինչեւ ցփոքրկունս՝ կատարածին ոչ ուրուք ընկալեալ լինի զհատուցմունսն իւրաքանչիւր. որպէս 'ի միում շաբաթու հաստատեաց զամենայն արարածս, 'ի միում աւուր շաբաթանան երկինք և երկիր, և ամենայն մարդ ընդունի ըստ վաստակոց իւրոց: Ընդ էած ընդ իւր զՄովսէս և զԵղիա 'ի վկայութիւն. զի Մովսէսիւ զյարութիւն մեռելոցն ուսուցանէ նոցա, և Եղիայիւ ցուցէ զսիրելի մահ աստուածութեանն իւրոյ նոցա, որում Եղիայն յոյժ էր տեղեկագոյն, և ցանկայր թէ երբ լինիցի տեսանել. և տեղին Ճշմարիտ էր արքայութիւն, քանզի լիով էր անդ միասնական Երրորդութիւնն: Եւ վասն զի ոչ է Ընտուած 'ի տեղւոջ, երեւեցաւ մարմնականացն իբրեւ զտեղաւոր. և 'ի տեղւոջն ուր Ընտուածն գումարեցաւ՝ առանց պատկառելոյ անուանի արքայութիւն. քանզի այն իսկ է արքայութիւն՝ ուր աստուածութիւնն երեւի:

Եւ դու, ով տէր իմ Պետրոս, ընդէր զահի հարեալ ես 'ի մահուանէդ, ուստի բոլոր բարիքն զեղանին աշխար-

Digitized by Google

հի. զոր և այժմ իսկ յայլոց զդոյն լուիցես. զի սակ ա-
ւետարանագիրն եթէ Մովսէս և Դանիել զելանորա պատ-
մէին զոր կատարելոցն էր Յերուսաղէմ։ Լուր իբրեւ
ետես Պետրոս, եթէ մեռեալք և կենդանիք զնոցն բանս
քարոզեն, և ինքն կամաք Տէր յայն եկեալ է Հօր միա-
բանութեամբ, եւս քաջ վտանգեցաւ յառաջին եր-
կիւղն. քանզի հաստատեալ գիտաց եթէ 'ի մահուանէ
Տէր մեր ոչ է զանգիտելոց, և մեզ թողուլ և փախչել
զսա անհնար է. նա և զայն եւս քաջագոյն ածէր զմի-
տաւ՝ եթէ յորժամ իշանէ սա 'ի լեռնէ սատի, պարզ
Յերուսաղէմ երթայ, ուր մեզ կասկած իսկ է մահու.
վասն այսր խղճի մտաց իւրոց սկսաւ ասել ցՏէր, զի
հրամայեսցէ առնել տաղաւարս իւրաքանչիւր նոցա, և
զՄովսէս և զԴանիել մի արձակեսցէ անդրէն. որպէս թէ
ասիցէ ոք 'ի կարծիս մտաց իւրոց, թէ չիք յայսմ լե-
ւին իշխանութիւն մահու, և եթէ 'ի լեառնս յայս մահ
երկնչի ելանել. Հրեայքն իսկ ոչ կարեն յանդգնել 'ի
սա. ապա եթէ և մեք իսկ երթիցուք Յերուսաղէմ,
յորժամ և Մովսէս և Դանիել ընդ մեզ իցեն, ոչ կա-
րեն քահանայքն խուել զմեզ. քանզի յոյժ տեղեկա-
գոյն են սաստիկ ահին սոցա։ Լոյն Մովսէս է այս որ
յանապատին բիւրս բազում կոտորեաց 'ի նոցանէ, և
բանիւ հրամանաւ սորա բացաւ երկիր և եկուլ զբա-
նակս նոցա։ Ոչն անտեղեակ և վասն Դանիայի, թէ սա-
կաւիկ ինչ խոժոռին ընդդէմ սորա, կապէ զերկինս և
արգելու զանձրեւ 'ի սոցանէ. և եթէ եւս յանդգնես-
ցին՝ իջուցանէ հուր յերկնից և այրէ զթշնամին ճըշ-
մարտութեանն. 'ի բազում տեղիս գիտեն զզօրութիւն
ահի սորա, ոչ միայն անուանեալ քահանայքն, այլ և
արտաքին ուրացողքն նոցա. չէ մոռացեալ նոցա զսա-
տակումն զուլթհարիւր քրմաց նոցա զոր ինքն իւրովք
ձեռօքն կոտորեաց 'ի հեղեղատն Կիշոնի. և եթէ Լ-
քսաբ թագաւոր երկնչէր 'ի սմանէ, որչափ եւս Լնանա
և Կայիափա՝ որ տկարագոյնք են քան զԼքսաբ։

Վասն այսր ամենայն կարծեաց նոցա որ մարդկաբար
երկնչէին, յոյժ ողորմեալ նոցա Հօր 'ի վերուստ ասէ.
"Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք,,։ Ծառայք
երկրաւորք պահապանք լինէին տեառն իւրեանց. զի եր-
կոքեան անկեալք են ընդ ախտիւք երկիւղի. երկնից

տէրութիւնն ոչ ինքն յումեքէ պահեալ լինի, այլ նա պահէ զամենեսեան իւրով զօրութեամբն։ Այս տաղաւարս հարկանել դուք մի՛ աշխատիք. եթէ կարի ջեռաւրուք, ահա տուեալ է ձեզ ամպ հովանի, ընդ ամպովդ հովանեաւ զովացարուք։ Այս բարբառ իբրեւ եկն նոցա յերկնից, հայեցան տեսին զՅիսուս միայն. և ապա կարացին իմանալ, եթէ յահէ անտի թմբրեալ էին նոքա, և ոչ գիտէին զինչ խօսէին։ Այս եթէ թմբրեալս կոչէ զնոսա գիրն, զիաւրդ ծանեան զՊ՚ովսէս և զՅ՚ղիա. յայտ է թէ յիմարելոց էին թմբրեալք, այլ ոչ 'ի լսելոյ և յիմանալոյ. զոր աչօքն տեսին՝ ճշմարիտ էր, և զոր ականջօքն լուան՝ չէր սուտ. այլ քանզի կարի ահագին էր ժամն, ոչ կարաց մարդկային բնութիւնն հասու լինել երկնաւոր բնութեանն. վասն զի այսր և անդր սայթաքէին և մեղադրել ոք ոչ կարէր։ Օ՚ի եթէ մեծն Աբրահամ զվերին զօրութիւնն բողոքովին մարդացեալս ետես, բախեալ 'ի յոգիսն՝ ոչ կարէր կալ 'ի վերայ ճշմարտիւ, այսր և անդր տարաբերէր զմիտն. տեսանէր երիս և մի կարծէր, կարծէր մի և խօսէր ընդ երիս. երեւէին մարդ, նա իմանայր Աստուած. և ո՞իսկ 'ի հողեղէն բնութեանս կարացէ ճշմարտիւ կալ և իմանալ զայն զանբաւ մեծութիւն. ոչ միայն մարդիկ մարմնաւոր, այլ և ոչ պարզ բնութիւնքն երկնից։ Յիրաւի կոչէ գիրն թմբրեալս զնոսա. յորմէ զօրութենէ լերինք հալին և անդունդք ցամաքին, և ամենայն թանձրահող երկիրս 'ի հիմանէ դղրդեալ սասանի. ողորմութեամբ իւրով խնայէ 'ի մեզ, զի գործք ձեռաց նորա եմք. որպէս հանապազ յամենեսեան և այն օր երկեան 'ի լերինն։

Պ՚ետեմք զի աստուածային գիրք այլ ընդ այլոց չխօսին, այլ զամենայն պատմեն ճշմարտիւ. բայց է բան, որպէս ասի՝ նոյնպէս և իմանի. այլ պիտոյ է ծածկեալ մտաց բանին յայտնութիւն, որ հաւատովք ընդունին 'ի փրկութիւն անձանց։ Ծ՚անեան, ասեն, պետրոսեանք զՊ՚ովսէս և զՅ՚ղիա. իբրեւ ասես, եթէ այն ծանեան, զիաւրդ ասեն ծանեան՝ զոր ոչն գիտէին. քաջ 'ի միտ առ զզօրութիւն բանին, և մի մոռացկոտ լինիր իբրեւ զտէր Պետրոս. 'ի գլուխ Ճառիդ ընթերցիր, արքայութիւն ասաց տեղւոյն. չիք անդ մոռացումն մարդկային, այլ յիշողութիւն անմոռացման. քանզի մեզ

Digitized by Google

նմանութեամբ էր տեղին արքայութիւն, իսկ առ աստուածութիւնն ամենայնիւ բովանդակ։ Ուստի մեզ էր ոչ զբնական դպրութիւնս, այլ զիմացական գիտութիւնն. իբրեւ թէ փոխեցան արքն յերկրէ յերկինս, զոստի իմացմունս թմբրութիւն կոչեցին. զանտեսն ճանաչելով՝ արքայութեան մանկունս անուանեաց, և մարգարէութեան մանկունս. ուստի նոցա գիտութեամբ, զի ոչ եւս կարօտանայցեմք յերկնաւոր ժառանգութեանն, անծանօթս լինել առաջնոց, միջնոց և վերջնոց։ Յորժամ արքայութեան որդիք լինիցին արժանաւոր մարդիկ, ծանօթութիւն յաստուածատուր շնորհէ անտի բաշխի. զոր այժմ մնօք իմանամք՝ ընդ հայելի օրինակ անուանեցաւ. իսկ յորժամ մարմնական քող 'ի մէնջ բարձցի, դէմ յանդիման տեսանեմք զաստուածութիւնն որպէս և մարթի, զհրեշտակսդ բնութիւն բովանդակ, զանծանօթն իբրեւ զանձինս մեր, արտաքնովքս իբրեւ զարտաքին դէմն, մնօք զարտաքին և զներքին։ Այլ զի դեռ եւս պետրոսեանք մարմնաւորք էին, կաթեաց 'ի նոսա նշոյլ իմանալի շնորհին 'ի յոգիսն. բաւանդակ ծանեան զՊողսէս և զՅղիա. իսկ արտաքին զգայութեամբք էր 'ի տեղւոջ անդ՝ որ այլ ընդ այլոյ խօսեցան. և այլոյ մասամբ դարձեալ ողորմեցաւ նոցա Աստուած. այն է՝ զի հաւաստեաւ ծանեան զՊողսէս և զՅղիա. և զի մի ինչ գէզ մնասցէ 'ի միտս նոցա, 'ի բանից անտի նոցա եւս քաջ հաստատեցին զծանօթութիւնն։ Որքա յայտնի իսօսէին ընդ Տեառն, և սոքա զամէն լիով լսէին 'ի նոցանէ, և զոր լուանն՝ այլ ոչ իմացան. զի եթէ մոռացեալ էին՝ և գրէին ոչ աւետարանագիրքն։

Ասայ ինդիր այս կայ առաջի. զինչ արդեօք Պողսէս խօսէր ընդ Տեառն, և կամ զինչ Յղիա երկրորդէր առաջի նորա։ Աւետարանիչն պատմէ եթէ զելս նորա ասէին զոր կատարելոց էր Յերուսաղէմ. ելքն նորա մահ նորա է, և 'ի մահուանէ իսկ նորա եղեն ամենայն բարութիւնքն երկնաւորք։ Այլ ուր արդեօք գրեաց Պողսէս վասն մահու որդւոյն Աստուծոյ։ Պ'ի այդպէս հարցաներ ցիս թէ ուր արդեօք գրեաց. ամենայն մարգարէք և օրէնք վասն մարդանալոյ Անտին Աստուծոյ պատմեցին մեզ, չարչարելոյ և մեռանելոյ և յառնելոյ.

'ի Ծնունդն. "Արդարեւ ձեզ յարուսցէ Աստուած յեղբարց ձերոց,, յօրէնսդրութիւն նորոց կատարա-նաց. մի իբրեւ զիսն ասելով՝ նմա լուիջիք, զիւր օրէնսն լուեցոյց. զՏեառնն յառաջ հրամայեաց մատուցանել, 'ի մկրտութիւնն, 'ի ծուխն, յամպն, 'ի սիւն հրոյն, 'ի խո-ցումն կողին, 'ի վտակաբուխ վէմն։ Եթէ յինէն ոչ ընդունիս, Աբրահամոյ հարկաւ՝ որ ընդունիս. "Ա էմն, ասէ, որ երթայր զհետ ժողովրդեանն՝ նա ինքն էր Քրիս-տոս,,. 'ի փայտ խաչին, 'ի գաւազանն նշանագործ, 'ի մահ անարատին, 'ի հեղումն արեան գառանցն Եգիպ-տոս, 'ի զօրութիւն մահուն՝ փրկութեամբ նոցին 'ի ծա-ռայութենէ, զաւետիս յարութեանն, զայն սուրբ ոս-կերքն Յովսեփու պատմէին նոցա. մեռեալք զկենդա-նիս ապրեցուցին 'ի մահուանէ. զվերանալն նորա՝ մեծն Դաւիթ գրեաց նոցա և ամենեցուն. "Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողով,,։ Օ՛այս ամենայն և Եղիա գիտէր, քանզի մի հոգի էր որ խօսէր յամենեսեան, միօրինակ գիտէին ամենե-քեան. էր ոք որ սակաւ բանիւք զայս ասէր, և էր որ բազմագոյն առնէր զյանդիմանութիւնն, սակայն զօրու-թեամբ զսոյն երկրորդէն։ Օ՛այս ամենայն խօսէին ընդ Տեառն Մովսէս և Եղիա, զի Աբրահամն վկայ լինիցին անսուտ բանից նոցա, եթէ վաղու հասեալ էր դատաւճիռն մահու 'ի վերայ նոցա, և մի ոք իշխեսցէ լինել ընդդէմ բանիցն նորա. և որպէս երեւեցաւ յայտ-նի, յայնմ հետէ այլ ոչ ոք իշխեաց երկրորդել զնոցն բանս առաջի Տեառն։

Բայց դու իբրեւ լուիցես զկաղն մովսիսեանց և խո-սել ընդ նմա, մի վարկպարազի անփոյթ առնիցես և մի սակաւ բանս իմանայցես, և մի ընդ վայր շատխօսու-թիւն համարեսցիս. քաջ զմտաւ ած և տես զպատուա-կան արան. եթէ միտ դնես, զբոլոր երկրային արքու-նեօքս զանց առնէ տեղին. և կամ ոչր առաջի կանն, և կամ ոչք կանն՝ եթէ ոչ զերկնից մեծութիւնն ունէին, ոչ կարէին առաջի Տեառն երկնից կալ և խօսել ընդ նմա. այլ սիրով իւրով ած զնոսա, և ողորմութեամբ իւրով մերձեցոյց առ ինքն, և ներելով իւրով արար նոցա զունկնդրութիւնն. վասն որոյ կարացին լինել յերկարաբանք։ Թուի ինձ թէ յոյժ ողբային զաղ-

գատոհին, զի գուԹ ունէին 'ի վերայ գաւառացն վասն քաղցր արմատոյն. ԹէպԷտ և լեալ էր 'ի նոցանէ յառաջ արդարք բազումք, յայնմ ժամանակի չար տեսանէին զամենեսեան։ Նշմարտեցին եԹէ եկն եհաս ժամանակ, և մերձեցաւ օրն յորում շինչանելոց էր նոցա Ճրագն առկայծեալ, և եղէգն ջախջախեալ արմատաքի խլելոց էր. 'ի ծածուկ ողբային զազգն 'ի միտս իւրեանց. տեսին եԹէ ամենայն ինչ նոցա 'ի հեԹանոս փոխելոց է, և նոքա մնան լոկ իբրեւ մարմին առանց հոգւոյ։ Տեսին և զբարերարուԹիւնն Աստուծոյ, որ ոչ կամի ընդ կորուստ և ոչ ընդ մի մարդոյ, համարձակեցան հարցանել զՏէր՝ որ գիտէր զծածուկս սրտից նոցա, եԹէ գուցէ՞ ինչ հնարս, ասեն, այլով օրինակաւ քեզ չմեռանել, և ազգին չկորնչել, և հեԹանոսաց լինել փրկուԹիւն։ Իսկ Տէր մեր ոչ տրտմեցոյց զսիրելի ծառայսն իւր, այլ զհարցումն պատասխանուոյն 'ի կամն Հօր իւր արար։

Գուցէ ասիցէք ցիս, ուստի՞ իշխեցեր զանգիրսդ երկրորդել։ Այս իսկ տեսի զՏէր զի լայր զԱրուսաղէմ, և յոյժ լայր զազգն ընտրեալ. նոյնպէս մեծ էր, զի այսօր 'ի վերայ երեսաց իւրոց յաղօԹս անկաւ առ Աստուած. ոչ մարդ էր դուզնաքեայ, այլ բոլոր զօրուԹեամբ իւրով, յերկար տաժանուԹեաւ զողջոյն գիշերն, մինչեւ քրտունք սաստիկք հոսեցան 'ի նմանէ։ Այս 'ի կատարել աղօԹիցն, զմովսիսեանց հարցուածն երկրորդէր. "Հայր, ասէ, եԹէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն". և անդէն վաղվաղակի զինդիր իրացն 'ի կամն Հօր իւրոյ ապաստան առնէր։ Այս դարձեալ եկաց յաղօԹս, և զնոյն բանս երկրորդեաց։ Այս մեզ այս կարեւոր է ուսանել քան զամենայն. որպէս նա ըստ կամն Հօրն ոչ կամեցաւ ելանել, և մի դու ըստ նորա կամն ելանիցես։ Այսն որոյ և եղիայեանք ոչ կարացին մեղադիր լինել Տեառն. նոյնպէս և պետրոսեանք որք ակամասեաք եղէն, ոչ միայն մեղադրեալք, այլ և նոքա չնորհակալու ընդ ամենայն տիեզերս։ Այս է յերկարաբանուԹիւն արանցն առ Տէր, ոչ միայն շատ խօսելով ընդ նմա, այլ ամենեւին չգնալ 'ի նմանէ, նա և եԹէ հնար ինչ գուցէ՝ մեռանել ընդ նմա. և եԹէ Մովսէս ոչ մարԹէր կրկին մեռանել, վասն Այնիայի՝ եԹէ Տէր կամէր՝ գոյր հնար։

Յորժամ առաջին հարցուած նոցա 'ի գլուխ ոչ չոգաւ, վասն երկրորդին յոյժ էին ցանկացեալք։ Ո՞ ոք 'ի սիրելի զօրականացն մնասցէ 'ի պատերազմէ, յորժամ Թագաւորն ինքնին 'ի վերայ Թշնամւոյն ելանիցէ. և եԹէ երկրայինքն զայս առնեն, ոչք յերկբայս են յաղԹիլ քան Թէ յաղԹել, քանիսն յօժարութեամբ երկնաւորին լինել նահատակակից. զի ոչ մահու կասկած առաջի կայ, այլ անմահ կենաց յաղԹութիւն։ Յայսմ պատերազմէ ոչ ումեք օրէն է զանգիտել, ոչ արանց և ոչ կանանց, ոչ արդարոց և ոչ մեղաւորաց, Թէ հնար է՝ գուցէ և երկնաւորացն։ Բայց սա աւասիկ Թէպէտ և Յոլիայի կարի անձկալի՝ լինել նմա խաչակից, բայց արգել զնա Տէր, զի մի՝ ոք յարդարոց խաչեսցի ընդ նմա. քանզի ոչ իսկ էր եկեալ եԹէ վասն արդարոց խաչեսցի, այլ վասն բարւոյ՝ որպէս և համարձակեցաւն իսկ մեռանել, զի իւրով մահուամբն զամենեցուն մահ խափանեսցէ։ Արգել զՅոլիա 'ի մահուանէ, զի մի ըզտուեալ պատիւն հանցէ 'ի նմանէ. և ոչ միայն զՅոլիա արգելու լինել իւր մահակից, այլ և ոչ զմի ոք յարդարոց՝ ոչ կամի եԹէ ոք մեռցի ընդ նմա, այլ 'ի մեղաւորաց, ոչ իւրով բանիւ, այլ զոր քահանայապետքն կամեսցին. յայնժամ Թերեւս և անդ երեւեսցի նորա բարերարութիւնն, զոր և յառաջագոյն իսկ ասացեալն է, եԹէ վասն մեր ընդ անօրէնս համարեցաւ։ Ա՛ռ սէր իւր ինայեաց Յոլիա, զի կեցցէ յանմահութեան պարգեւին, և լիցի քարոզ երկրորդ գալստեան նորա։

Գիտէ Աստուած զինչ գործէ, և զբարին ինքն առանձինն կատարէ. շատ իցէ քեզ եԹէ 'ի նորա յոյսն գիտիցես վայելել, և յորժամ նա դուռն բացցէ քեզ. ապա եԹէ կամիս՝ և դու կարես գործել իբրեւ զնա, որպէս եղեւ Աբաքելովքն և լինի Քրիստոսիւ մինչեւ ցայսօր։ Գիտեմ զի բազումք ցասուցեալ են ինձ. Տէր մեր, ասեն, զարքայութիւնն եցոյց 'ի լերին անդ, և դու եկեալ զմահու ճառս պատմես մեզ։ Մի՛ դիր ճառիդ, և անտի հաւանիս. ելանել իսկ նոցա 'ի լեառնն՝ մահու պատճառք եղեն սկիզբն. և եկեալ մովսիսեանց զնոյն երկրորդեցին առաջի Տեառն, և մեք 'ի նոյն ճառ տեսաք զարքայութիւնն։ Յոյժ սպիտակ էր պայծառութիւն ձորձոյն և անցանէր ըստ արեգակնային ճառա-

Digitized by Google

գայթս այն. ըստ արժանաւոր տեղւոյն և հանդերձիցն վայելչութիւն պիտոյ էր. այլ կատարեալ այնիւ էր արքայութիւնն՝ ուր Հայր և Որդի մարդկան յայտնին. զայն և անփոփոխ իսկ է իմանալ, անանց կալ մնալ յաւիտենական։ Այլ 'ի սպիտակութիւն ձորձոյն սակաւիկ մի ակնարկեցից 'ի մահ անմահին։ Մենայն արարածք յանմխիթար սուգ նստէին. վասն զի անմահին Աստուծոյ անմահ պատկեր՝ մարդս է. ընդ մահուամբ անկեալ դնէր յանլոյծ խաւարի, և սգածէին առ հասարակ արդարք և մեղաւորք, և ծանրալից հանդերձ սգոյ ունէին, որ է նմանութիւն խաւարի. և ոչ ոք կարէր յեղելոցս զծանրութիւն սգոյն բառնալ յաշխարհէ, բայց միայն այնիւ էր հնար՝ որով եղեւն ամենայն։ Որդ զարդարեցաւ 'ի մահն իւր, ոչ երկրային պատուական հանդերձիւք, այլ բնական ինքնածագ լուսոփն իւրով, զի հալածեսցէ յաշխարհէ զիշխանութիւն խաւարի, և զթախծալից տրտմութիւն մարդկան մխիթարեսցէ. և զներկուած հին տրտմութեանն՝ իւրով անապական լուսոփն սպիտակացուսցէ։ Այս մարդիկ որ 'ի վերայ մահուան սիրելեաց իւրեանց տխրին և մթանան, և զրեթէ կենդանոյն զմահ ճաշակեն, հայեսցին նոքա 'ի զբաւարթութիւն պայծառութեան մահու որդւոյն Աստուծոյ, և բարձցի 'ի նոցանէ սուգն անյոյս տրտմութեան, և լցին յուսով յարութեամբն, և մի եւս այլ երկիցեն 'ի մահուանէ, որ դողացոյց զարդարս և զմեղաւորս։ Զայն այսորիկ խօսիմք 'ի տեղւոջ աստ զճառս մահու, զի տեսանեմք 'ի սմա զարքայութիւն երկնից, որ եկեալ հասեալ է զօրութեամբ իւրով մեծաւ համարձակութեամբ։ Զայն հարկանեմք 'ի վերայ մահու. վասն զի յուսով 'ի վերայ արքայութեան տեսաք զանձինս. հաճեալ եմք ընդ տեղի լերինս, ուր կրկին յայտնութիւնն եղեւ առ մեզ, մանաւանդ թէ երեքկին. մեռեալ գիտէաք զՈՒՎԼԷՍ և կենդանի տեսաք. նա եբեր զաւետիս յարութեան ամենայն մարմնոյ։ Կիսահաւատ ազգն Հրէից զՀոգին Աստուծոյ յափշտակեալ խոստովանէին, և զմարմինն իբրեւ զանպիտան ինչ գոյացութիւն 'ի վայր ընկեցեալ. եկն երեւեցաւ բովանդակ հոգւով և մարմնով, զի բարձցէ զխիղճ 'ի մտաց նոցա, եթէ կամեսցին ընդունել։ Արդեաք եթէ ոչ անցանէ թագա-

Digitized by Google

ւորութիւն մահու. տեսաք անդ 'ի լերին զմահ մեռեալ. և զկենաս թագաւորեալ։

Եթէ դուք կամիք՝ անդէն 'ի Ճառս լերինն դարձցուք, քանզի և ինքեալ իսկ չեմք 'ի լեռնէ անտի. և մինչ անդն եմք՝ զանտիսն եւեթ խօսեսցուք. և զմինչ անդ բանքն են՝ համակ զնովիմբ եկեսցուք. և եթէ առ 'ի պէտս այլոց բանից ինքցուք 'ի լեռնէ անտի, դարձեալ 'ի նոյն լեառն ելցուք. եթէ երկիցս և եթէ երիցս, սակայն զնոյն ասասցուք. մինչեւ կատարեսցի Ճառս, շուրջ զլերամբն փակեսցուք։ Բայց առ այժմ 'ի վեր անդ զտէր Պետրոս հարցանել պարտ է, եթէ առ ինչ սիրեցեր այդչափ զլեառնդ և այդր կամիս առնել քեզ բնակութիւն, քեզ և ընկերացդ. եթէ առնիցես՝ սակաւիկ մի պատեհագոյն է քեզ և Տեառն և Մովսէսի։ Եւ այդ ինձ կարի պատեհագոյն թուի։ Յարեաւ, ասէ, 'ի մեռելոց, վասն այսր կամիմ թէ աստ կայցեն։ Յարուցեալ՝ որ տաղաւարի կարօտանայ, այնմ եւս յարութեան իսկ չէ արժան ասել, այլ երազ և առ աչօք երեւումն։ Ուրեմն չեւ եւս տեղեկացեալ վասն յարուցելոյն, սակաւ մի Ճաշակ եցոյց քեզ յարութիւնն, ընդ տեսանելն և թմբրեցար. եթէ այնպէս փառաք էին նոքա քեզ՝ որ անփոփոխ ընդունելոյն են, դու ապաքէն եւս առաւել վըստանգէիր։ Բայց ոչ կարեմ մեղադիր լինել քեզ, զի դեռ եւս հրէախառն ես. ընթեռնուս զգրեալսդ օրինացն, այլ իմանալ չեւ եւս կարացեալ զարժանն։

Ի լերինն շքեղացան դէմքն Մովսէսի, և հարքն ձերոր կարացին հայել յերեսս նորա մերկ, և դու զոգիդ ընդ մարմնական վարագուրովդ ծածկեալ ունիս։ Մովսէս ծածկելով զդէմն՝ մերձեցոյց զնոսա առ ինքն, և Տէր զայն քող մերկանայ 'ի սրտից ձերոց. անգամին իսկ ունի զմարդասիրութիւն առ ազգդ ձեր. աստուածանուն մեծարեաց զծառայս իւր և փառաք իւրովք զարդարեաց զնա, և ժողովուրդն առ ասելութեան իւրեանց փախչէին 'ի նմանէ. և նա նշանաք և արուեստիւք արծարծէր զնոսա, զի ընդելեալ մարդասիրութեամբ նորա մերկ դիմաք կարացեն տեսանել զաստուածութիւնն։ Այն սա նա է, որ բազում իրաք կրթեաց ըզձեզ, զի այսօր արժանի լինիցիք տեսանել զՃաՃանչ լուսոյ աստուածութեանն. բայց այսօր դու լաւագոյն ցու-

ցարք քան զնոսա. թէպէտ և զարհուրեցարք, այլ ոչ 'ի փախուստ դարձարք. այդպէս երեւեցաւ, եթէ սէր Աստուծոյ մեծապէս բնակեալ է 'ի քեզ՝ քան յառաջին ժողովուրդն։

Այլ և արդ շուրջ զքեզ հայեաց քաջ. ընդ ո՞ւմ շրջիս, առ ո՞ւմ նստիս, ո՞ր ես ուղեկից, և կամ ո՞ր խորհրդակից։ Ո՞չ դու ետուր զգեղեցիկ վկայութիւնն և դու խոստովանեցար զԲրիստոս որդի Աստուծոյ. ո՞վ քաջ. Աստուած խոստովանիս և 'ի տաղաւարս բնակեցուցանես. զայդ ոչ միայն Բրիստոս չառնու քեզ յանձն, այլ և ոչ ընկերակից քո Նոյնիա. զվերանալն նորա տեսեր դու, և պատիւ մեծութեանն երեւեցաւ քեզ. եթէ զայն Հնմարիտ գիտացեր, զայս ոչ արժանապէս խօսիս։ Յինչ նիւթոց կազմեսցես զխուղդ, ասա ինձ. ապաքէն 'ի փայտէ և 'ի խոտոյ. ո՞վ մեծ յերկոտանանդ, քաջայուշ լեր. կառս ունի հրեղէնս, երիվարս բոցեղէնս, հուր և խոտ 'ի միասին ոչ բնակեն. բայց եթէ զայն եւս արտաքոյ թողուցու, ինքն 'ի նոյն պատիւ է զարդարեալ. և եթէ ոչ այնպէս էր, զիարդ հանդարտեր կայր բոցոյն առաջի։ Ահեզ այսօր սակաւիկ մի սպիտակութիւն երեւեցաւ, և դեռ աստանդեսս բանիւք. ուր Նոյնիայն բնակեալ է, եւս առաւել պայծառագոյն է, քան որ քեզդ երեւեցաւ. և դու զայդպիսի այր 'ի տաղաւարս հրաւիրես, և ոչ պատկառիս 'ի շքեղ պատուոյ նորա։ Դարձեալ և զտէրդ աշխարհաց 'ի կարօտութիւն ածցես և 'ի տեղւոջ կարծես. զդա զիտեա տեղի ամենեցուն և զամենեցուն կարօտութիւն բառնալ։ Ոչ 'ի տեղւոջէ այսի երեւեցաւ դա պատուական, այլ տեղիդ դովաւ շքեղացաւ։ Սակաւիկ մի սպիտակ ձորձով զարհուրեցար, յորժամ բուռն հայրենի փառաքն տեսցես, յայնժամ և ոչ զմի տեղի յերկրաւոր պատուականաց աստի դմա համարեսցիս արժանի. այլ բարբառն որ եկն 'ի վերուստ՝ զայն գիտեա դմա տեղի և փառս և վայելչութիւն անպատում։ և դու յայն հայեաց, զհետ այնր ձայնի լեր կաթոգին։ Այժմ աչք մարմնոյդ լցան լուսով, ապա բոլորովին իսկ դու լուսալի լինիս. զի և դու իսկ քեզ հազիւ կարիցես հասու լինել։ Այլ տերդ արքայութեան՝ չէ կարօտ տաղաւարաց. ամպոփն արժան էր քեզ ուսանել, որ եհար ժո-

զովիրդեանն տաղաւարս յանապատի անբաւ բազմութեանն. ամենն էր բաւական հովանի, և զբոլոր գիշերն լոյս հրոյ առաջնորդէր. և եթէ 'ի չարսն այնպէս գրեթայր, ոչչափ եւս առաւել 'ի ձեզ տառապեալս։ Օ՜ամենայն ինչ թողէք և զհետ դորա շրջիք. զի՞նչ ասէ ձեզ՝ լուարուք, և զամենայն բարի կամն ձեր՝ դա կատարէ։ Ընդէն իսկ 'ի տեղւոջդ փոքր մի աղէխարշեցայք 'ի տապոյ փառաց դորա, արագ արագ թանձրացոյց զամպն 'ի վերայ ձեր. եթէ սակաւ մի յամեալ էր՝ և դուք և տեղւդ բոցակէզ լինէիք. նա և 'ի բնական ջերմութենէս աստի են տեղիք, ուր ամարանի հրդեհք բորբոքին. և եթէ մանաւանդ լոյս այդպիսի սաստիկ տապով հարկանէ՝ զի՞նչ կարծես զինքնածագն լոյս, եթէ թոյլ տայր որ ունէր զծով և զցամաք՝ առ հասարակ կիզոյր։ Յայնմ լուսոյ ճաճանչ սակաւ մի երեւեցաւ Պաւղոսի. թէպէտ և ոչ այրեաց զմարմին նորա, զլոյս աչաց նորա եկէզ. թէպէտ և այլ չնորհեցաւ նմա, զառաջինն կորոյս։ Ողորմութեամբ իւրով ծածկեալ ունի ինքն զինքն, զրկ թէ ոչ բաւէն տեսանել զաստուածութիւն նորա։ Տեսէ՞ր, ուր խոնարհութեամբ խօսի Աստուած ընդ արարածս, զմարդասիրութիւնն իւր յայտնէ. եթէ որպէս էրն՝ և յայտնէր զինքն, եղեալքս յապականութիւն դառնային առաջի նորա։

Արդ մի՛, տէր Պետրոս, բարիոք թուեցի առնել դմա տաղաւարս, զի չէ ժամանակդ այդպիսի գործոյ, և ոչ դու ունիս կազմած շինողաց. չես տեղեակ հիւանութեան, և ոչ գիտես յորմ կարգել քարինս։ Ի արդաւպետ անուանեցաւ և զիւր արուեստն ոչ թաքոյց 'ի քէն. բայց եթէ դու մառացկոտ ինչ իցես, ես ոչ գիտեմ. հանապազ քո առաջի գործեաց և գործէ, և յոյժ կամի զի ուսցիք և բանիւք և գործովք, որպէս ինքն առանց մարմնաւոր աշխատութեանց վարէ զարուեստն, 'ի դոյն նահատակութիւն և զձեզ կրթէ։ Մի՛ ընդ քուն խօսիր և մի զշնմարտութիւնն երաշակոծ եղեալ՝ այլ ընդ այլոյ պատմես. յերկնաւոր մանրագոյս հոտոտեցար, զհետ հետոց դորա ուսիր վերաբերիլ. 'ի ստուերաշուք տարերցս երանել փութայիր, քան նստել ընդ սուաւ. յանապական լուսոյն 'ի ծմակային տեղիս մի աղաչեր բնակել զայդպիսի չքնաղ լոյս. թէ և ջրայինքն տեսա-

Digitized by Google

նէին՝ 'ի ցամաք դիմէին, և եթէ 'ի սանդարամետա-
կանն ծագէր՝ 'ի վեր կորզեալ ածէր զամենեսեան. ե-
թէ գոյր իշխանութիւն՝ հրեշտակաց թողեալ զայն երկ-
նից լոյսն՝ առ այդ լոյսդ ինքանէին։ Այդ լոյս յերկնից
յերկիր երեւի, զերկրաւորս յերկինս տանի հանէ. և
յորժամ յերկրէ 'ի վեր ծագէ, զվերինսն 'ի վայր խո-
նարհեցուցանէ. այդ լուսով ետես Յակոբ զտեր լուսե-
ղէն սանդղոցն. 'ի լուսեղէն տեղիս բնակեալ էր Այնիա,
զայն լոյս թողեալ՝ առ այս լոյս խոնարհեցաւ և եկն.
յայդ լոյս աւանդեալ էր Մովսէս, աղդեցաւ նմա 'ի
Սաբաւ լերինն, փութացաւ եկն առ անձկալիդ։ Տե-
սանէ՞ս զիարդ փարին երկոքեան զլուսոցն. չյադին բա-
զում բանիւն զոր խօսինն ընդ նմա. 'ի ծագել այդ լու-
սոյ՝ արեգակն խաւարեցաւ, որպէս աստեղք յարեգա-
կանէ. արեգակն 'ի դմանէ չերեւեցաւ։ Այս քեզ յոյժ
երանի տամ, զայդ տեսեր և յայն հրաւիրեցար. ամե-
նայն աշակերտ զվարդապետին արուեստն փութայ ու-
սանել։ Ո՞չ 'ի քոց տաղաւարաց անտի եհան դա զքեզ.
խղկուեաս ինն արարեալ ձեր 'ի ծովեզերին, վասն այդր լու-
սոյ՝ ետ թողուլ ձեզ զայն, զի յայդ թեւակոխեսջիք, ընդ
այդ ընդելջիք, զայդիւ եկեսջիք, 'ի դոյն խոկասջիք, դմին
արժանի լինջիք զգենուլ։ Ընդ տեսեալ զաղդ թռչնոցդ.
ձագուցն յորժամ թեւքն թաւացեալ հաստանան՝ ոչ ըն-
թացս ունին 'ի վերայ բունոցն, այլ 'ի հայրենի արուեստ
վերաբերին. զոր տեսանենն՝ զմտաւ ածեն զայն. մինչդեռ
մատաղաբոյս են թեւքն՝ անդէն 'ի տեղւոջն ստէպ ըս-
տէպ շարժին. յորժամ բոլոր վարազաթեւք աճեցեալ
մեծանան՝ տակաւին 'ի վեր վազեն ոստախաղաց լինե-
լով և աներկիւղք եղեալ յանկանելոյ, ապա բարձրա-
ցեալ 'ի վերոյ օդոց ճախրեն զվերամբք, թռուցեալ առ
ամպովք քերեն, անկասկածք անցանեն գնալ յերկրա-
սող վնասակարացս։

Օրինակաւ ինն Տէր զձեզ ուսուցանէ. կրթեաց 'ի
նշանս և յարուեստս մեծամեծս, զի ամենայնիւ զձեզ
յինքն սպասաւորեալ միացուսցէ, զի և դուք զայլս 'ի
մնհուանէ 'ի կեանս որսասջիք. սարար զձեզ կիրթս և
հմուտս և տեղեկագոյնս, զի իցէք պատճառք կենաց
ամենայն աշխարհի։ Բայց դու որ ոչ էիր 'ի լերին անդ,
մի իբրեւ զանուն լուսոյն լեսս՝ առ այսմ լոյս հարցին

Digitized by Google

կացցեն միտք քո. զայս լոյս հանապազ տեսանեմք, ոչ յիմարիմք և ոչ թմբրիմք, և ոչ ամենեւին երկիւղ ինչ անկանի 'ի սիրտս մեր. այլ որ զցայգն եմք՝ նոյն եմք և զցերեկն. վասն զի նիւթեղէն արարած է, և մեզ 'ի տպաստաւորութիւն առեալ. պղտոր, մթին, փոշեխառն, մրրկեալ, խթացեալ տեսեր, և ոչ զերկինսն վերինս կարէ ցուցանել. և այնչափ օտար է յայնմ լուսոյ, որպէս և նկարեալն 'ի կենդանւոյ։ Որպէս և ինքն աստուածութիւնն բաղում մասամբք երեւեցաւ մարգարէիցն, և մի ոք 'ի նոցանէ զԱստուած ոչ կարաց տեսանել. այլ նմանութեամբքն որով տեսին՝ բաւական համարեցան. հանգեան կամաք իւրեանց և կատարեցան բանք նոցա գործովք։ Որպէս և այսօր 'ի լերինն երեւեցաւ, այն է զոր հանապազ տեսանէին. այլ ոչ այսօր նոյնպէս տեսին, և ոչ այլ ընդ այլոց զայլ ոք Քրիստոս տեսին. որ էրն՝ զնոյն տեսին, ոչ նոյնպէս գձուձ. փոքր մի վերագոյն քան զառաջինն տեսին և թմբրեցան 'ի նշանաց անտի. և եթէ աւելի քան զձեզ կարծէիք՝ այլ ոչ ինչ 'ի վեր հայէին միտք ձեր։ Աստուծոյ նշանագործութիւն բոլոր արարածքս են. զաշխարհս ոչ 'ի նշանս ինչ արարեալ է ումեք, զի և զոյր իսկ ոք ոչ յառաջ քան զաշխարհ. և նա բնութեամբ ունի զբարերարութիւնն. զոր ինչ կամի՝ կարէ առնել, ոչ 'ի պէտս իւրոյ անկարօտ բնութեանն, այլ 'ի յեղելոցս 'ի լրումն առանց պակասութեան. և զմարդ սիրէ քան զբոլոր արարածս. և կամի 'ի ձեռն նշանացն՝ զի զանեղ բնութիւնն ծանիցեն, և 'ի Ճանաչելոյ անտի լնցի սիրոյ բարեկամութիւն. և դարձեալ եւս վերագոյնս ձգիցէ, որպէս թէ իւր իսկ առնիցէ զահակից։ Օ որ և այսօր առ ձեզ նորին սիրոյ եցոյց զօրութիւն, ոչ երկրաւոր նշանաց, այլ երկնից մանաւորութեամբ. ցայսօր զմարմնականսն տեսանէիք իբրեւ զմարդ, վարդապետ կարդայիք, ըստ մարդկութեան եւեթ խմանայիք զզարմացումդ. վասն այսորիկ փարատեաց 'ի նոցանէ զմարմնաւոր տգիտութիւնն, զի երկնաւոր յայտնութեամբն կրթեսցէ զնոսա, և մի համակ զմարմնականաքն եկեսցեն. որպէս և ասէ գիրն, եթէ "Յայլակերպս եղեւ առաջի նոցա"։ Յայլակերպսն ոչ այլ ինչ է իմանալ, այլ աստուածակերպ երեւեցաւ առաջի նոցա, զի և զնոսա յայն կեր-

պարանս փոխեաց 'ի Ժամանակի իւրում. կրթեցան աչք նոցա հայել 'ի մարմնաւորութիւնն Տեառն. ոչ կարացին խորհուրդք նոցա համբառնալ յերկինս. ընդհարան աչք նոցա 'ի լոյս փառաց նորա, կարացին զարժանի էութիւն նորա իմանալ։ Ի բազում բարձր տեղիս ելեալ էին նոքա ընդ Տեառն, այլ ոչ մնաք. այնպիսի տեսիլ եղոյց նոցա այն օր զիմանալի լոյսն, զի կրթեսցէ զնոսա յեւս առաւելութիւն։ Բստ մարմնոյ 'ի լեառն ելին, մնաք վերացոյց յամենայն աշխարհական ցանկութեանցս. բարձր է լեառն քան զքաղաքս, զնոսա քան զբնաւ աշխարհս բարձրացոյց։ Լրբեամն ելին ընդ Տեառն 'ի Գալիլեայ 'ի լեառնն՝ ուր զերանութիւնսն աւետարանեաց նոցա. բանս երկնաւորս լուան, այլ միտք նոցա ոչ ինչ բարձաւ 'ի յերկրաւորացս. իսկ աստ բանիւք ինչ ոչ խօսեցաւ ընդ նոսա. լուսով երկնացոյց զլեառնն, և լուութեամբ երկնաւորս արար զնոսա։

Եւ իսկ 'ի բնութեանս մերում, յորժամ շրջիմք 'ի բազմամբոխ քաղաքի, զքաղաքական կարգսն սիրեմք ուսանել. յաճախագոյն պչնումք ընդ փառս երկրաւորս, և խոնարհին միտք մեր յիրս երկրաւորս ապականացուս. և եթէ ոչ մեծաւ պատրաստութեամբ զգոյշ կացցես անձին քում, հաղիւ կարասցես ապրել 'ի պատիր զբօսանաց աշխարհիս։ Պատն որոյ և Պողոսէս հանեալ զժողովուրդն Յդիպտոսէ, շրջան առ յանապատի անդ ամս քառասուն, և ապա կարաց լինել նոցա օրէնսդիր. իսկ իբրեւ բնակեցան 'ի քաղաքս բազմամարդիս, և զեղեալ օրէնսն ոչ կարացին պահել։ Եւ է ճշմարիտ, որ ընդ երկիրն պչնու՝ զերկինս ոչ կարէ տեսանել։ Ապա և Տէր մեր իբրեւ Յդիպտոսէ եհան զաշակերտսն 'ի լեառն անդր, և ուսոյց նոցա զանգիր օրէնս երկնից. քանզի և մեր տեղին առաջին անգիր էր։ Գիր զմարմնականացն խօսի, անգրութիւն զանմարմին էութիւնն ցուցանէ։ Գիր՝ զմահն Պողոսէսի պատմէ, իսկ անգրութիւն՝ զյայտնութիւն Տեառն առ աշակերտսն։ Գիրն ինքն անցական է, և զանցաւոր աշխարհս արկանէ ընդ պատմութեամբ. անգիրն յինքեան գրէ զանցաւորս, զի անանցս արասցէ։ Գիրն զվերանալն Յդիպտոսի նիւթական պատուականաւոր ասէ. անգրութիւն զերկնութիւնն Տեառն և զԵդիպտեանց։ Ոչ իբրեւ այլք յայ-

լում նատեալք և եկեալք, այլ ինքն ինքեանմբ երեւեցաւ 'ի վերոյ քան զերկինս. ոչ այրեցող բնութիւն՝ մարմնականացս ահ արկանելով, այլ լոյս փայփուկ և արտաքոյ, զոսկեւ և ժառանգաւորաց աղքայութեան՝ յանմարմնականաց տեղին զգենուլ։ Զ՝ինչխի տեր երեւեալ, և լաստ իւրում էական բնութեանն չնորհեաց և ծառայիցն զնոցն փառաւորութիւն. զի եթէ ոչ այնպէս էին, և ոչ մերձենալ կարէին 'ի հուրն ամենակէզ։ Զ՝ի պետրոսեանք որք տեսողք են աստուածային փառացն, և նոքա 'ի վեր կորզեցին 'ի ծանր մարմնականացս, հասանելով մինչեւ յիմանական հրեշտակաց բնակութիւնս. անցեալ կային զեր 'ի վերոյ մահուանմբ, որպէս և երեքն՝ ոգնպէս և երիւքն. ոչ միայն չերկնչել 'ի մահուանէ, այլ և 'ի բաղում տեղիս հաւածական առնել զմահ 'ի մարգկանէ. քանզի յոյժ մեծացաւ աղքատութիւնն նոցա։ Զ՝ելին իբրեւ զերկչոտս գտանել 'ի վերոյ քան զերկիւղ. ելին իբրեւ ընդ որգւոյ մարդոյ, զնոցն տեսին անդ որդի Զ՝ստուծոյ. ելին տգիտագոյնք, ուստն անդ զկատարեալ գիտութիւն. ելին ընդ այնմ զոր գիտէին ծնեալ 'ի կուսէ, իմացան անդ զնոցն ծընեալ 'ի Հոգւէ յառաջ քան զաշխարհս. ելին ընդ այնմ՝ որ մերտեալն էր 'ի Յովհաննէ, տեսին անդ զնոցն՝ որ բնակեալն էր 'ի Հառագայթս անմատոյց լուսոյ փառացս իւրոց. ելին ընդ այնմ՝ որ հետոտս վաստակեր զնալով, զնոցն իմացան անդ որ նստի 'ի կառս քերովբէական. ելին ընդ այնմ՝ որում Հրեայքն սպառնային ըղմանէն, զնոցն գիտացին տեր մահու և կենաց. ելին ընդ այնմ՝ զոր աղաչէին մի մատնել զինքն 'ի մահ, իմացան եթէ ոչ սա երթայ 'ի մեռեալս՝ աբրահամեանք ոչ կարէին գալ առ մովսիսեանս. և զոր արգելուին 'ի մահանէ, յառաջ քան զժամանակն փութային տեսանել զմահ նորա։ Զ՝ըքայութեան պատճառանաք եհան զնոսա 'ի լեառն անդր. իմաստնացոյց եթէ առանց մահու միածնին ոչ ոք կարէ ժառանգել զարքայութիւնն։

Զ՝ի իբրեւ երկոքեան հատածքս այս ունին յինքեանս զերկնաւորս և զերկրաւոր բարութիւնս, առ ինչ արգեալք պատուիրեր Տէր մեր աշակերտացն և ասէր, ամենեւին չասել ումեք զմեծ յայտնութիւնն որ երեւեցաւ նոցա։ Զ՝այս սովորութիւն է վարդապետութեանն

Բրիստոսի. յորժամ զմարդասիրութիւնն ցուցանէր բժշկելով առ ախտաժետս նոցա բազմաց 'ի նոցանէն զնոյն պատուիրէր։ Մի ումեք, ասէ, ասիցէք վայրապարկամ 'ի գիւղս կամ 'ի քաղաքս. զի և դու զնոյն ուսանիցիս չառնել աշխարհագոյժ զողորմութիւնս քո. ապա եթէ պիտոյ եւս է ցուցանել, փոխանակ բանից գործքն քարոզեսցեն։ Պատուած զբոլոր աշխարհս արար և ետ մեզ, և երախտիս ինչ ոչ համարեցաւ մեզ, բայց միայն ճանաչել զնա և զհետ երթալ կամաց նորա։ Պատուիրեաց աշակերտացն լինել աստուածանման. քանզի ժառանգ իւր հաստատեաց զնոսա և նոքօք զամենայն աշխարհ. յորժամ Պատուծով առնիցեն զամենայն մեծամեծս վարդապետին իւրեանց, ծածկագիտին միայն աւանդեսցեն զիւորհուրդն։ Պարձեալ և յոյժ ինայեաց 'ի նոսա. միթէ ըստ մարմնոյ ինչ պարծեսցին վասն մեծամեծ սքանչելեացն՝ զոր և գործեցին և տեսին անդ. զի ընդ մեզ թշնամեաց շրջէին և ոչ բարեկամաց, և աւելի առաջի կեղծաւոր մեկնչաց, որ իբրեւ զճանճս կեղտաբեր էին, ուր գտցեն թարախս՝ առաւել եւս զայրացուցանէն զվէրն. չարագոյն եւս քան զայս լինէին բանք նենգաւոր մարդոց. որպէս և եղէն իսկ նոքա պատճառք մահու ժողովրդեանն, ոչ միայն հողածին մարմնոյ, այլ և անմահ ոգւոյ սպանողք։

Պատուիրեաց նոր նորոգելոցն՝ որք արբին զճաշակս նոր գինւոյն, մի արկցեն 'ի տիկան զզօրութիւն գինւոյն 'ի հինսն, զի ոչ հանդարտեն ընդունել զոյժ նորա. արգել զնոսա 'ի մեծ ճնասէն. քանզի գիտեր եթէ տիկքն պատառին և գինին հեղուս 'ի կորուստ նոցա, որպէս առ Կայիափայիսն իսկ երեւեցաւ. զի յորժամ տեսանիցէք զորդի մարդոյ զի նստի ընդ աջմէ զօրութեանն Պատուծոյ, իբրեւ զտիկ հին ցելաւ 'ի պատառել պատմուճանին իւրոյ. բոլոր ինքն հեղաւ անկաւ յաստուածային աշտիճանէն. և եթէ 'ի Ցեառն բանից անտի այնպէս զարկան անկան զանալիք, զինչ համարիցիս դու՝ եթէ յաշակերտաց անտի լուեալ էր վասն երկնաւոր սքանչելեացն. ոչ ահա իբրեւ զհուր բորբոքեին ընդդէմ նոցա, այրեին զանձինս և զնոսա առ հասարակ։ Զանազի յորժամ լսէին 'ի նոցանէ՝ անդէն հարցանէին զնոսա, զինչ էր առաւելութիւն վերին տեսլեանն։ Այլ եթէ

վան Մովսէսի և Այդիայի պատմէին նոցա՝ սուտ հա-
մարէին, զի ոչ կարէին յայտ ուրեք ցուցանել. թէ ա-
սէին՝ եկին երեւեցան և գնացին, զայն ոչ արդար հա-
մարէին, քանզի ոչ ունէին զՀաւատոյն գիտութիւն.
յայնժամ և զոր աչօքն իսկ տեսեալ էր 'ի Յեառնէ՝
չհաւատային։ Դարձեալ թէ և վասն սպիտակ ձորձոյն
ինչ ասէին, կրկին կորուստ կորստականացն իսկ հասա-
նէր, կամ լսէին իսկ ոչ զբանս նոցա, կամ 'ի մէջ բե-
րէին զսպիտակ ձորձս նոցա. քանզի երկրապիշք միայն
էին և անհաւատ լսելիք, զիմանալի յայտնութիւնն ոչ
կարէին տեսանել. և նոքա 'ի լերին անդ մարմնաւոր ինչ
յայտնութիւն ոչ տեսին, այլ երկնաւոր զօրութիւն ի-
մանալով, զայն՝ որոյ 'ի յայտնութիւնն նա միայն գիտէ,
և ում կամի ինքն յայտնէ ըստ մասանց, և մնացն մի-
այն ծոց բաւէ ժողովելով, այլ ոչ բանիւ պատմել և
սիրել 'ի լսելիս ուրուք. զի որ բանիւ գծագրի՝ ընդ մարմ
նաձեւութեամբ անկանի երեւումն նորա. իսկ երկնա-
ւոր փառքն յայսմանէ վերագոյն են, և 'ի մարդկանէ և
'ի հրեշտակաց։ Լուր Պաւղոսի առաքելոյ, որ ոչ միայն
'ի լեառն բարձրացաւ, այլ և յերկինս երրորդ և 'ի դը-
րախտն, և զպատրաստութիւն սրբոյն ետես, և զբար-
քաւ պարգեւատուին լուաւ, այլ դէմ յանդիման ոչ
կարաց հանդիպել. և բարբառ որ էին նմա 'ի վերուստ
ըստ մասանց՝ զզօրութիւն քանիցն ոչ ումեք կարաց երկ-
բորդել։ Այսպէս և վասն երկնաւոր պարգեւացն՝ զի
պատրաստեալ պահին՝ զայն ասաց. այլ 'ի պատուական
երկրաւորաց ատի նմանել ումեք ոչ կարաց, իբրեւ է
Աշմարիտ հանդերձեալ. և մեք յայն եմք յուսացեալք՝ զոր
Պաւղոսն ետես և պատմել ոչ կարաց. հաւատացեալք
'ի Քրիստոս լեալ իմանան և զիմացեալն տեսանեն. և
յուսով այնպէս ակն ունիմք՝ որպէս և երանելին Պաւղոս։

Ա՛ռդ վասն այսր ամենայնի զոր Ա՛ռաքեալքն 'ի լերին
անդ տեսին Հոգւով սրբով, չհրամայեաց պատմել 'ի
լսելիս թերահաւատ ժողովրդեանն. մի՝ զի կարէին իսկ
ոչ նոքա պատմողք լինել. միւս եւս՝ որոց պատմէին՝ նո-
քա ոչ էին արժանի լսել։ Որպէս և ինքն Տէր յառա-
ջագոյն ուսոյց զԱ՛ռաքեալսն. "Մի՛ տայք, ասէ, զսրբ-
բութիւն շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առա-
ջի խոզաց,,. շան՝ սուրբ և պիղծ կերակուր ընդ մի հա-

մարեալ էն. և խողի քան զպատուական մարգարիտ ընդ պարանոցի՝ խոհերական տիզմ յոր թաւալի՝ լաւ թուի. զայս տեսանել՝ չար պարգեւաց տուողին թուի, և եւս չարագոյն արտաքին տեսողաց։ Ա՛ան որոյ և Տէր մեր զլուսաւոր խորհուրդն լուսոյ մանկանցն յայտնեաց, զի եղիցին վկայք Հնմարտութեանն լուսոյն՝ որ երեւեցաւ նոցա 'ի լերին անդ. և նովին լուսով լուսացեալք կայցեն մնասցեն իբրեւ զանստուեր Հառագայթս. և նոքին եղիցին քարոզք լուսաւորութեան նորա, որք եղեն իսկ և կատարեցան. և ամենայն արարածք որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու՝ յայն լոյն յանանց դիմեցին, և նովին լուսովն լուսաւորեցան և լուսաւորեցին մինչեւ յերկրորդ յայտնութիւն նորին լուսոյ. և նոյն Տէր գալոց է լուսաւոր ամպովք յերկնից ամենայն լուսաւոր զօրօք երկնաւորօք. և 'ի նոյն լոյս լուսաւորին մեռեալք, և կենդանիք ամենայն արժանաւորք՝ յանփոփոխ և յանվախճան յաւիտեանս։

Յոյժ կասկած եղեւ մտաց իմոց իբրեւ մերձ եղէ 'ի կատարած Հառիս. ապա յիշեցի եթէ իբք անխնդիրք մնացին 'ի միջի սորա. քանզի փոքր 'ի շատէ տեղեկացայն եմ խուզող մտաց՝ որ անմեղութեամբ քննեն զգբրութիւն բանին 'ի շահն անձանց և 'ի փառս սուրբ եկեղեցւոյ։ Տեսանեմք իսկ աստէն և 'ի մերում աշխարհիս, բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին, յորոց ցնծացեալ բերկրի սուրբ եկեղեցի հեթանոսաց։ Այս հաւատ յանձին պահելով զեղբէրին յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց, զանձինս պարապեցուցեալ 'ի վաՀառաշահ օգտից. ոչ ինչ ընթանան զհետ ընչաւէտ մեծութեան, այլ գործ հանապազորդ այնպիսեացն՝ պահք և աղօթք, զանձինս պահել յամենայն ոգէսպան փնասուց։ Այլ հարցք և խնդիրք վասն ծածկեալ բանին զոր ընթեռնուն 'ի սուրբ կտակարանս, գիտեմ զի հարցանեն յայսմ Հառի ցմիմեանս և ցիս. Յարեաւ, ասեն, Մովսէս 'ի մեռելոց մարմնով և եկն 'ի Նաբաւ լեառն առ Տէրն մեր. Նէլիայի ահա էր ինչ խափան, որպէս վերացաւն երագ՝ ահա երագագոյն եւս գայր. Մովսէսի ընդ այն ինչ ոչ զարմանամք եթէ ընդ Նէլիայի արագութեամբ գտաւ. այլ

եթէ մարմնով յարեաւ և կամ եթէ հոգւով՝ կերպա-
բանեցաւ առաջի նոցա։ Եթէ մարմնով յարեաւ՝ Ճշշ-
մարիտ վիշտ եղեւ նմա, այն որ աղաչէր զԱստուած միան-
գամ չմեռանել՝ կրկին արդեօք զմահ Ճաշակեաց. մա-
նաւանդ զի զՆոյնիա ետես յանմահութեան, և զՑէր
հայրենի փառօքն յաւիտեանս. և ինքն անդ եւս 'ի
հողոյ եկեալ և անդէն արագ արագ դառնայր. կարի
դժուարագոյն է տեղիդ ասէն։

Ինձ ոչ ծանրագոյն թուի հարցուածդ. է ինչ որ 'ի
գրոց ունիմ առնել անդրէն պատասխանի, և է ինչ որ
յանգիր էութենէն՝ հայելով յաստուածային զօրու-
թիւն. և ընդդէմք ինչ ոչ էն միմեանց. քանզի գիրն
'ի լսելիս ազգէ զաստուածային պատուիրանս, իսկ ան-
գրութիւնն՝ յաներեւոյթ մտացն տախտակս. և են եր-
կոքեան աստուածատուր շնորհք, զոր աչք տեսանեն,
շրթունք ընթեռնուն, ականջք լսեն. առանց գրոց միտք
բերեն զմեկնութիւն։ Ընդ քաջ մտառուացն մեծ է
որովայն և անձանձրոյթ է ծոմն, և անծանրանալն է
բազմութիւն բեռիւն. որչափ և անկանի 'ի ներքս, ոչ
յագեալ շատանայ բազմութեամբն. աղաչելով զԱ-
ստուած՝ ընկալեալ զերկակն և երրեկին կարիցէ հասու
լինել. որպէս և է տեսանել, որք առանց գրոյ խորամուխ
եղեն 'ի սէր որդւոյն Աստուծոյ՝ Ճշմարտութեամբ հա-
սու եղեն գրելոցն, և ոչ ինչ ծածկեցաւ 'ի նոցանէ յան-
գիր օրինացն Աստուծոյ. որպէս և ինքն իսկ Առաքեալ
ասէ. "Օ՛ի այն զոր կամք յաղօթս՝ որպէս արժան իցէ
ոչ գիտեմք, այլ ինքն Հոգին հասանէ 'ի թիկունս՝ 'ի
հեծութիւնս անմռունչս բարեխօսէ առ Աստուած,,։ Ա-
մենայն սուրբք առանց բանի պատմութեան խօսին ընդ
Աստուծոյ, և առանց ձայնի արձակելոյ 'ի վերուստ՝ լսեն
կամաց նորա. և զոր ասենն և զոր լսենն՝ ընդ գրով արդ-
կանել ոչ կարեն, և առաքինի գործովք իւրեանց յայտ-
նի առնեն զանգիր օրէնսն Աստուծոյ։ Եւ յորժամ
զայսպիսի զօրութիւն յոգիս մեր հետաքննեմք, կարեմք
զծածուկս բանին Աստուծոյ ծածկապէս խմանալ, և ըզ-
տուչութիւն պարգեւին որ շնորհեաց մեզ՝ արտաբերեմք
բարբառով. զի և յայլոց լսելիս ազգիցէ հնչումն երկ-
նաւոր։

Յարոյց Նոյնիա զմեռեալ և երկուս Նոյնիշա, և կրկ-

նամահ ոք ոչ ասէ նոցա, այլ մի կեանք և մի մահ. և Տէր մեր յարոյց զմեռեալս, նոյն ասի և նոցա. այս-քանք էին և Մովսէսի. քանզի յառաջին մահուան իւրում ոչ հիւանդացաւ. ինքն Տէրն կոչեաց զնա 'ի լեառն, և ինքն Տէրն որպէս և զտէր առանց չարչարանաց աւանդեաց զնա գերեզմանին։ Այսմ և մահ իսկ ոչ է արժան ասել՝ այլ և փոփոխումն. Դաւիթ և զայս քուն իսկ անուանեաց. "Այս ննջեցի և 'ի քուն եղէ, զարթեայ և Տէր ընդունելի մեր է,,։ Դու իսկ որ հարցանեսդ՝ ո՞չ հանապազօր 'ի քուն մնանես, ընդ առաւօտն յարուցեալ կանգնիս. ոչ ինչ տրտմիս յաղագս յառնելոյն. զի գիտես եթէ անդէն հասանէ ընդկողմանել։ Այլ թէ ասիցես թէ այս դիւրագոյն է և այն դժուարագոյն, մի՛ ասեր, սուտ կարծես. հազար անգամ մահն Մովսէսի դիւրագոյն է, քան զքունդ քո։ Այլ թէ քաղցեալ և ծարաւի 'ի քուն մնանիցես, յար ուտես և ոչ յագիս. աղբեր աղբեր շրջիս և ոչ ըմպես. և եթէ բրոնագատեցար ինչ աւելի քան զչափն անքուն, զառաւօտն ցանկաս տեսանել. և եթէ պայմանաւ կերակրոյն և առողջութեամբ մարմնոյդ դէպ եղեւ քեզ շարժել զաղտեղութիւն, և կամ լինիս երազակոծ, այսր և անդր միտքդ դրդուին, որով 'ի տուընջեան քեզ չարաւ թուիցին. և չիք իսկ ամենեւին խաղաղութիւն 'ի մերում շարժմունս։ Իսկ յայսմանէ Տէրն մեր զՄովսէս պարկեշտագոյնս ամփոփեաց. ծերութիւն ոչ թարշամեցոյց զգեղ նորա, և հիւանդութիւն ոչ ապականեաց զմարմին նորա, ոչ յառաջնում նուազին հեծութեամբ էջ 'ի դժոխս, և ոչ 'ի վերջնում հրաժարեալ 'ի Տեառնէ դանդաղեցաւ ինչ թերեւս. և վասն այնորիկ Աստուած ինքնին իսկ ամփոփեաց ... սա 'ի մահ անդր. 'ի ձեռն նորա փոխեաց զնա և ծածկեաց. և ձայն նորա կոչեաց զնա, և զանուն հովանի արար 'ի վերայ նոցա. նոյն ինքն փութանակի ած առ սիրելին իւր զՄովսէս, որպէս և ինքն Տէրն մեր ասէ. "Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ,,։ Յարոյց Որդի զՊ աղար կարդալով առ Հայր. յարոյց զՄովսէս Հայր միաբանութեամբ Որդւոյ, զի երեւեցան իսկ առ նմա. ըստ այսմ իմաստիր զանքակ միաբանութիւնն սուրբ Երրորդութեանն, և յարարչութեան և 'ի փրկութեան և 'ի նշանագործութեան և 'ի

յարութեանն նոյնոգ մանն։ Այլ վասն Մովսէսի յարութեան մարմնոյն մի՛ ինչ տակարասցին միտք ուրուք. չէ՛ Ճառ բանիցս այսոցիկ առակ օրինակի, որպէս մեծատանն 'ի դժոխս և կամ Աբրահամու և 'Ղազարու յարքայութեանն. այն զհանդերձելոցն յայտ առնէ։ Տեսեր և յաշակերտաց անտի չիք ոք այնմ վկայ. քանզի ծածուկքն Աստուծոյ միայն են յայտնի. իսկ որ Ճշմարտիւս երեւեցան, զայս և մարդիկ ընդ Աստուծոյ կարացին տեսանել։

Բայց ես յոյժ աղաչեմ զամենեսեան, ինչ որ յերկրէ և այսր է՝ բազում այն է որ քննի իմաստուն մտաց, և սակաւ այն է որ ծածկի 'ի մէնջ. իսկ առ աստուածութիւնն և ոչ քան զական քթթումն՝ անկանի ընդ գիտութեամբ. զի ետ վէմն զջուրն՝ զայն գիտեմք ամենեքեան. որպէս ետ, ծածկեալ 'ի մէնջ. որպէս երթայր զհետ նոցա, թարգմանեալ մեզ Պաւղոս. զիմիրդ գնայր առանց ոտից, զայն և ոչ Պաւղոս գիտէր. նոյն իսկ Պաւղոս զվերանալն իւր յերկինս՝ զնչան Ճանապարհին եթէ հարցանես՝ ոչ գիտէ պատմել։ Զի եկն Մովսէս 'ի մեռելոց մարմնով՝ հաւատամք Ճշմարիտ. որպէս եկն, և ոչ ինքն Մովսէս գիտէ։ Հաւատամք եթէ կերան անմարմինքն զՃաշն Աբրահամու. նոյնպէս հաւատամք եթէ եկին Մովսէս և Այլիա առ Տէրն մեր 'ի Թաբովր. և եթէ ոք յայսմանէ յերկբայս լինի, երեք սիւնքն մեզ վկայեն դարձեալ. և եթէ այլ ոք անհանձար մտօք ասիցէ, եթէ կերպարանաւ միայն երեւեցան, այդմ չէ հնար, մի՛ հաւատար. ստուեր 'ի հայելւոջ երեւին բանք. ոչ ստեն աստուածային գիրք՝ ուր առակն է. ոչ 'ի մարդկանէ խնդրեն վկայ, այլ մտաց իմացուցանեն զմեկնութիւն բանին. իսկ ուր Ճշմարտութիւնն է, յայտնի երեւի պարզաբանութիւնն։

Աստ Այսայի. "Տեսի զտէր յաթոռ բարձրութեան,,. Ճշմարիտ էր տեսիլն, այլ ոչ զորպիսութիւնն կարէր տեսիլն ցուցանել մեզ. ուր կամի Աստուած՝ առակօք խօսի ընդ ծառայս իւր մարգարէս. և ուր եւս խոնարհութեամբ խօսի՝ և զինքն թանձրացուցանէ, որչափ բաւէ մեր քնութիւնս տեսանել. և վկայս ածէ հրաշակերտս և 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ արդարոց. է զի 'ի կենդանեաց և է զի 'ի մեռելոց։ Նոյնպէս և յայսմ տեղւոջ բազում ինչ նշանս արար Աստուած 'ի ձեռն Մովսէսի,

Digitized by Google

և մեծարեալց վնա քան զամենայն մարդարէսն. զսա յաղոյց 'ի մեռելոց, զսա տեսաք զի կայր և խօսէր ընդ Քրիստոսի. որպէս տեսաքն և վկայեաք, որպիսութիւն յարութեանն նորա՝ Տեառն միայն յայտնի։ Զայլ զի ելկին Մովսէս և Եղիա և խօսեցան ընդ Քրիստոսի և տեսին երեք Աւաքեալքն, վկայեալք Հնմարիտ բանից նոցա. և որ յաչս մեր անհնար է, Աստուծոյ՝ ամենայն ինչ հնարաւոր է։

Զայլ վասն լերինն գեղեցկութեան և վայրացն վայելչութեան՝ եթէ կամիք ախորժելով ունկն դնել, տակաւիկ մի երկրորդեցից ձեզ զտեսիլ ցանկալի տեղւոյն։ Լսելով յաւետարանէն գիտէք ամենեքեան զտեղին. բայց մեր և անձամբ իակ հասեալ և աչօք տեսեալ, ոչ յատուկ միայն առանձինն, այլ բազում ընկերակցօք. որոց և կամ իակ եղեալ ունկնց մեալ 'ի լերինն, ոչ ըստ մարմնոյ ախորժութեամբ բազձանաց, այլ առ գութ տիրոջն Քրիստոսի։ Քանզի բնակեալ են անդ բազմութիւն աքանչելի եղբարց, որք հոգւով յաճախագոյն վարին՝ քան թէ մարմնով։ Քանզի թէ ըստ մարմնաւոր մնաց որ հայի 'ի տեղի անդ, վայելչագոյն երեւի քան զտեսիլս բազում լերանց. նախ զի նիստ նորա է 'ի մեծ դաշտի միոջ յերկրին գալիլեացւոց, և այլ լեառն ամենեւին հուպ ոչ գոյ 'ի նմա, բայց տեսանելով հեռագոյն. և ինքն է բարձր և բոլորանիստ. և շուրջ զուրբեւ ունի ինքնաբուխ գուբս ջրոց և խիտ առ խիտս ծառաստունկս բազումս՝ որք պտղաբերին յանձրեւաբուղխ ամպոց, և լինին ազգի ազգի միրգք քաղցրահամք. և բազումք և այլ համադամք անուշութեան. որթք գինեբերք, որ իբրեւ թագաւորաց ըմպել արժանիք. ըզդէմն լերին յաճախագոյն ծառք ձիթենիք և եղջիւրենիք. չորեքեան օրք 'ի նա ընչելով, յոլովագոյն հիւսիսի զօրանայ 'ի նա։ Եւ շաւիղն ընդ որ Տեառնն ելեալ է, յոյժ ողորդ է եղն, այսր և անդր մանուածով արարեալ ճանապարհ. ով և կամի ելանել կալ յաղօթս, դիւրաւ զելն 'ի վեր առնիցէ։ Յորժամ ելանէ որ 'ի բուն գագաթն լերինն, բոլոր դաշտն առ հասարակ յայտնի երեւի, յարեւելից կողմանէ մինչեւ 'ի Յորդանան գետ, յարեւմուտս՝ մինչեւ 'ի ծովն մեծ յաշխարհն ծայդանացւոց, 'ի հիւսիսի՝ մինչեւ 'ի ծովն Տի-

Digitized by Google

բերեալ, 'ի հարաւ՝ մինչեւ յայդմիկ ելանելոյ եղբայրս
լուցեալ. և ամենայն բազմութիւն վայրապար հատոր գիր
առ գիր և ազգատակ առ ազգատակ, և բազում քաղաքք
'ի մէջ հոգաս. և ինքն կատարս լերինն՝ հովանաձեւ գոգա-
ցեալ. գոն և ծառք ստեպաւազոյնք և թանձրահող բա-
զում 'ի նոսա։

Եւ 'ի տեղւոջն ուր երեւեցաւ հոգաս Տէր լուսաւոր
պայծառութեամբն, յարեւելից կողմանէ հովանացն,
յետ բանիցն Պետրոսի՝ հեռագոյն 'ի միմեանց շինեալ
երիս եկեղեցիս, և ունին պաշտօնեայս բազումս, զա-
ստուածք և զարշելիք յամենայն մարմնաւոր ցանկու-
թեանց. թէպէտ և կերան մարմնով, այլ ոչ վարին ըստ
մարմնոյ քնքշանաց. այնպիսի են առաքինիքն՝ զի և կար-
ծէ ոք ոչ գնացանէ թէ շարժեցեալ գնասս կարօտութիւն
մարմնոյ. ոչ երբեք ընկալան յուտեաց ոսկի կամ որ-
ծաթ կամ հանդերձ, կամ բնաւ որ ինչ պիտոյ է մարմ-
նոյ. այլ զգոյնս հաճոյ թուեցաւ միաբանելոց սահմնե-
ցան՝ առն իւ բազանչիւր զարդեալ փայտաւոր երիսմատնի,
և այնիւ խարխապեալ յուղեն զթանձրահող հովանացն,
սերմանելով 'ի նոսս ցորեան և գարի, և թէ այլ ոմանք
իցեն, 'ի սիտոս կելոյ մարդկան. և 'ի չափ հատեալ հաս-
կացն՝ ծայրատեսեալ հնձելով ոմանաշուք կատեալ մարդու-
ցն ոտն հողանցն հոսելով զարդիւնս շինելոցն. և արիեալ
'ի շահանգաստս, գնացն զարձեալ ինքեանք լեռսն 'ի ձեռն
երկանի. սեծաւ ուստանութեամբ զոր ըստ զրկ զարտ-
ուղարանն զհարիւրատոր կերակրիցն. և դարմանին հացիւ
և ջրով լցեալ, և ոչիւ հասեալ ելով, զոր և խորտակին ու-
հատանեն։ Գ՝ազնեն և այլ յուսելուած յանուշութիւն
կերակրոց. 'ի ձմեռանային ժամանակի քաղեն զնին լե-
ռին և թթուեցուցանեն ոչիւ և ջրով և զարդիւ. և
զարդեալ ինքեանք խակ ասին, կարի օգուտակար է 'ի տապ
ատուցս խորշելի։ Եւ շրջբարանի ամենեւին ինչ 'ի վեր
'ի լեռանն ոչ եղանէ. այնպիսի ատրդ զարհեն զերս ձա-
հասարարելն; իբրեւ թէ փոքրիկ հրեշտակաց իցեն և ոչ
մարդկանն. քանզի են խակ ազգարեալ իբրեւ զանմար-
մինսն։ Դիք հոգաս խուզ յուանանս վասն կերակրոց. բայց
եթէ 'ի ձարխս ունելի կանթեղաց որ հանապազորդ փա-
ռեալ ծայրն յերեսս եկեղեցեան։ Դիք հոգաս գիսոն 'ի տա-
սիրաս, բայց եթէ 'ի տապս տեղուն բաժանին։ Դիք

Digitized by Google

նոցա դարման պաՀուՀանաց 'ի պէտս հիւանդաց, և ոչ պատրաստութիւնք վասն օտարաց. այլ օտարաց և ընտանեաց հասարակ է նոցա միաբանութիւն. իբր ոչ եթէ ինքեանք մարդատեացք ինչ էին, այլ մարտ եղեալ կռուին ընդ ապստամբ մարմնոյս, եթէ գուցէ զասպարէզն չկալեալ ուղիղ՝ զՀեծեալն քարավեժ առնիցէ։ Վասն որոյ և ոչ կամին Հանապազ Ճաշակել. այլ սովորութիւն է նոցա բնական ամարանի ազանելով, և ձմերանի Հաւաքելով զաւուրս շաբաթուն. իսկ որ Հզօրագոյնքն են 'ի նոսա՝ զողջոյն շաբաթն ձգեալ 'ի գլուխս տանին։ Այսպա եթէ ոք երթայր 'ի Հեռաստանէ առ սէր սուրբ ժողովոյն, կամ՝ եղեւ ամենեցուն 'ի սովորականն լուծանել բերան. կարի յոյժ փոյթ յանձին ունին 'ի Հոգեւոր կերակուրն, զի մի երբեք դադարեսցեն 'ի Ճաշակելոյ. թէպէտ և Հանապազ ուտեն անյագութեամբ՝ եւս առաւել քաղցնուն և ծարաւին։ Ոչ միայն զՀարիւր և զյիսուն սաղմոսն արկեալ 'ի վար ձայնիւ, այլ բովանդակ զսուրբ կտակարանս եկեղեցւոյ, որով փառաւորեալ և սՀաւոր ձայնիւք շքեղացուցանեն զսուրբ եկեղեցիսն 'ի լերին անդ։ Այլ զոր ընթեռնուն բանիւք, և է զոր պաշտեն փոփոխական ձայնիւք, զդադարումն ոչ երբեք առնուլ յագելով՝ փոխանորդութեամբք միմեանց գունդք գունդք աբեղայիցն, յերիս եկեղեցիս բաժանելով հասարակութեամբ առանց կատարելոյ ուրնին զկարգ պաշտամանն, զտուընջեանն և զգիշերուոյ. իսկ զերեկունն և զառաւօտին ժամն՝ ոչ եւս փոխանակաւ յաջորդութեամբ միմեանց, այլ միաբանելով ընդ միմեանս լինի բազմութիւն ժողովոյն վեցերորդ քան զայլոց ժամուցն։ Այս մի յերիս եկեղեցիս մեծագոյն է քան զերկուսն, զոր և Տէրունականն իսկ անուանեն. և յերկուս անդ եղեալ են զնշխարս Աւաքելոցն, որք և հիմնարկեցին իսկ զտեղին այն օր՝ ասելով զանուն երից տաղաւարացն. և անուանեն զնոսա վկայարանս սուրբս, և յիշատակեն զնոսա յանուն Պօղոսի և Յոյնայի. և զբոլոր աղօթսն 'ի կիւրակէին կատարեն. իսկ յերկուսն եւս երթան և անդ զՊատուաճ փառաւորեն։ Այս են ամենեքեան մաշկագեացք, գիտեն և ձեռնակերտիկ աշխատեստ. ոմն է որ զգիւրիրդն առնէ, և ոմանք զնոյն նիւթս սասպատս գործեն. եթէ այլ ինչ պէտք են՝ գործեն, ընդ

լեառնն 'ի վայր իջանելով. և զամենայն զինչ և գործեն զարուեստն՝ ոչ յայլ ինչ պէտս օգտի, այլ 'ի զինս ձի-թոյ կանթեղայն հանապազորդ վառանն, և 'ի ծախս օղենեացն, ուստի զմաշկեղէն հանդերձիկն ձեւեն, նոսվին և զհողաբիրան հայթայթեն։ Դարձեալ հարկատուք են միմեանց տիրով. քանզի գոն 'ի միջի նոցա օտարատուն, և յիւրաքանչիւր վաստակոց անդր հարկին. են 'ի նոսա ծերագոյնք, որք ոչ հարկին զպէտս անձանց վճարել միաբան. վասն այնպիսեացն առաւել հոգտանին քան անձանց. վասն զի հրեշտականմանք են, ոչ միայն արտաքին պիտոյիւքն սիրեն զմիմեանս, այլ և զծածկութիւն խորհրդոց իւրաքանչիւր որ ոչ թաքուցանել յընկերէ. եթէ յանկարծ շարժեցան միտք ուրուք յիշելով զկերակուր տենչալոս, յայտնէ զխտան իւր միւսումն որ լաւագոյն է քան զնա. միաբանութեամբ աղօթս արարեալ 'ի վերայ՝ վաղվաղակի եկն յառողջութիւն անցաւութեան. քանզի և ինքն իսկ որ հիւանդացաւն՝ տեղեկագոյն գիտէ կուռել ընդ ելամուտ չարին խորհրդոց, մանաւանդ զի փորձիւ իսկ զչափ առեալ էր յառաջագոյն, եթէ ընդ կերակուրս մտանեն ամենայն մեղք 'ի բնութիւն մարդոյն. եթէ զայն դուռն մեղաց փակէ որ, բազում վնասք արգելուն 'ի նմանէ. զոր ոմանք բազմագլուխ գազան կարդացին զպարարուն որովայնի։ Տեսէ՛ր, և նոքա նախ զնա սպանին, և յայլ եւս 'ի վնասարար գլխոց նորա՝ աներկիւղք դադարեցին 'ի լերին անդ, զի յերկրաւոր բարձրութենէն յերկնաւոր բարձրութիւնսն առ Տէրն իւրեանց կարասցեն վերաբերել, որպէս Մովսէսն և Եղիայն փառօք երեւեցան Տեառն 'ի նմին լերին։

Եւ ես տառապեալս քան զամենայն մարդ, որ հետեւեցայ հետիոտս ընդ տէրունական շաւիղն 'ի լեառն անդ, և աչօք տեսի զժողով սքանչելի եղբարց, աղաչեմ զընթերցողդ և զլսողդ, աղօթս արարէք 'ի վերայ իմ և ձեր հասարակ. ընդ նոսա ապրեսցուք յահաւոր դատաստանացն Աստուծոյ, և երկնից արքայութեանն արժանի լինել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից։

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԸՆՏ ԶՕՎՀԱՆՆՈՒ ՍԻՐԵԼԻՈՅ

Ի ՉԱՐՁԱՐԱՆՍ ՏԵԱՌՆ

Յոյժ սաստիկ զարմանամ ընդ ժպրհութիւնս մեր, թէ յո՞ր բարձրութիւնս ձկտեցաւ հասանել. ոչ զի ե՞հաս զարմանցաւ, այլ զի կամիցաւ հասանել և ոչ ե՞հաս, որպէս և կարծէ իսկ ամբաստանութիւնս մեր. զատ 'ի ծայրիւք բարձրութեանն բերիլ, և գործէ սողելով զառ երկրաւս զամենայն վատթարութիւնս։ Պանդի բաղումք են ծնունդք վատթար մտաւորեան, և անպիտան են պտուղք որ 'ի նմանէ Հաշակին խորհուրդք։ Պանդի ինքն 'ի վեր, և գործք գետնանախտանքն և հեշտութիւնք ագահողիք և ցանկութիւնք անառակք, սերք լկատութեանց և տենչանք անյագութեանց, զբաղումն մեծութեանց և հանգիստ ժամանակեանքն ոչ ինչ ամենեւին 'ի վեր կարացեալ հայել, և զնմանալն մեծութիւնն տեսանել յոգիս և 'ի մտրմիս։ Զոր երթէ սակաւ մի մերձենայիս և ընդհարցիս ընդ այն մեծութիւն, ծաղր արասցես զառ 'ի ներքոյ արեգականս. հեռասցիս այսուհետեւ յախտալի տեսակացս, և միշտ դէռ խրես 'ի մարմնի՝ վերացուցեալ դնիցես զքեզ 'ի վերոյ քան զամենայն երեւելիսս։ Որպէս և մեծն այս Յովհաննէս աւետարանագիրս ակիզեն ասէ, ոչ 'ի ծովէ, ոչ 'ի ցամաքէ, և ոչ յարդարոց մարդկանէ, և ոչ 'ի տեղւոջէ անտի ուստի ծագումն կենդանի երեւեցաւ. նա և ոչ ի վեր յերկնէ և յերկրի լմնեալ թեանցն։ Միակ բառի պարտ է սկսանել. յանակրբանէն. ըստ ժամն և ըստ ժամանակս, ըստ զարթ և ըստ յաւիտեանս հատանել յանիմանալին և յանըմբռնելին, 'ի միապոյ զօրութիւնն, ուստի ամենայն աքանչելի լմնելութիւնն։

"Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն,,. որ և բոլորեցուն սա է պատ-

Digitized by Google

Հաւ։ Արդ զայս Հիմարտութիւնս լսելով մի յանցաւոր կար 'ի կեանս և 'ի ժամանակեայս. այլ ընդ նմին Արքելոյ Թռիցուք յանմարմին տեղին, տեսանելով անդ զբանն Աստուած մարմնացեալ, և աղաչեսցուք զՏէրն ամենագութ, զի ծագեսցէ զլոյս Հնորհի իւրոյ յոգիս և 'ի մարմինս մեր. և լուսաւորեսցին աչք մտացս մերոց, լինելով մեզ արժանի ըստ նորա փառացն պատմող սուրբ Հարցանաց և լուսաւոր յարութեան նորա. յորմէ մեծացեալ է յոյժ եկեղեցի, և ունի բաղում Հարս հոգեկիրս, առաքեալս, մարգարէս, Հովիւս Հիմարիտս. որոց ստացուած է զանձն երկնաւոր։ Այլ որչափ բաղում են Հարքն Հոգեւորք, և բաղում ունին որդիս առաքինիս, և որչափ բաղում են յոյժ ժառանգութիւնքն՝ առաւել քան զայն եկք և ժառանգիչք։ Իսկ եթէ առաջինքն 'ի դարս իւրեանց գտան կատարեալք վաստակօք, արթնութեամբ տքնեալք, և Հաւատովք Հաստատեալք, և մեծաւ Հգնութեամբ 'ի Հեռաստանէ Հայեցեալք, անդուստ զինքեամբք տեսեալ զՏէրն ամենայնի, որ եկն 'ի փրկութիւն ամենեցուն, ոչ վրիպեցին 'ի կենարար աւետեաց նորա. ընկալան և Հաւատացին, և կան Հաստատուն մինչեւ ցայսօր։ Այսքէն և որդւոցս ընդ նոյն Հետս Հարցն պարտ է ընթանալ, զնոյն Հաւատս ունելով, զնոյն վաստակս յանձին բերելով, նովին Համբերութեամբ երկայնամիտ լինելով, նորին միւսանգամ գալստեանն ակն ունել, նորին աւետեացն սպասել։ Եւ յորժամ այսմ ամենայնի խոկք և կիրթք իցեմք, ընդհարք և ընդեալք 'ի վաստակս Հարց մերոց Հոգեւորաց, և երեւիցիմք եթէ նոցա Հարց Հոգեւոր որդիք եմք, նա և 'ի ձեռն Հոգւոյն խսկ օգնականութեան կարիցեմք գտանել զժառանգութիւն սուրբ Հարցն զոր աւանդեցին մեզ։ Զի ահաւասիկ առաջինքն սերմանեցին և մուցին, և միջինքն հնձեցին և վաստակեցին, և մեք եկեալ մնաք ի վաստակս առաջնոցն։

Արդ և մի մեք վերջինքս հեղգութեամբ ծուլացուք, գուցէ վրիպեալ գտանիցիմք 'ի սկսմանէն, յաՀմանէն, և անպտուղք 'ի ծայրէն գնացեալք իբրեւ վատ ժառանգիչք՝ սովամահ զանձինս առնիցեմք, ահա գիտեմք իսկ ամենեքեան թէ ունի եկեղեցի բաղում մեծութիւն և գանձ երկնաւոր, զոր ոչ ոք կարէ Հասու լինել և ար-

Digitized by Google

կանել ընդ թուական համարօք։ Բայց ես փոքր 'ի շատէ ասացիս զդիտակս ծայրիս երկնաւոր պտղոցն 'ի բազմաց զմանն. զի միով մասամբն երեւեսցին ամենայն մասունքն։ Զի թէպէտ և յոյժ առլցեալ իցէք ամենեքեան աստուածային մեծութեամբն, ես ոչ ինչ առ 'ի յոյժ գիտութեան առաջ անցեալ մատուցանիցեմ զձեզ 'ի նոր հաւատս գլխաւորելով, կամ նորաձայն բարբառս ինչ օտարոտիս պատմելով, որ քաւ և մի լիցի, կամ ասել կամ լսել զայնպիսիս 'ի սուրբ եկեղեցւոջ։ Այլ առ գութ սիրոյն Տեառն ամենեցուն, և առ խնդաղաղատանս հարցն մերոց առաջնոց, որք հաւատովքն իւրեանց եղեն սիւնք հաստատութեան յաղթողք եկեղեցւոյ, կամիմք և մեք ըստ մերում փոքր գիտութեանս՝ տալ զանձինս յաշխատութիւն 'ի տուէ և 'ի գիշերի, անդադար լինել յընթերցուածս երկնաւոր կտակարանաց, և 'ի մտածութիւն տեսական խորհրդոց. զի և 'ի մեզ կաթեսցէ նշոյլ Հոգւոյն սրբոյ. զի Աշմարտեսցուք ընդ անվրէպ շաւիղս որ տանիցին ընդ նուրբ Հանապարհն՝ մտանել ընդ նեղ դուռն 'ի մեծ քաղաքամայրն երկնաւոր։

Արդ ահա հասաք 'ի կէտն միջին՝ որ է սկիզբն վերջին, և կատարումն առաջին։ "Զ'միս այս, ասէ, եղիցի ձեզ սկիզբն ամսոց յամիս տարւոյն"։ Զարգարեալ նոր ջնաղ զօրութիւն Հոգւոյն սրբոյ օրէնսդրէ 'ի ձեռն Մովսէսի՝ որ բուռն հարկանէ զամսոյն, և ամսոյն պատճառանօք տանի հանէ յարարչութիւնն։ "Զ'ուաջին ամիս այս, ասէ, ձեզ սկիզբն ամսոց", որ է արեգ ամիս. զի 'ի սկզբանն լինելութեան ոչ է սա ամիս, այլ օր և սկիզբն, և օր դարձեալ նորածին և ամիս նախադաս և ժամանակ գարնանային։ Զի 'ի փարատել ջուրցն յերեսաց երկրէ և ընդ երեւել ցամաքին՝ ձայն 'ի վերուստ արձակեալ "Բուսուսցէ երկիր զբոյս խոտոց սերմանեցելոց և ծառոց պտղաբերեցելոց", և անդէն երկիր ըստ հրամանն երկնային լուսեալ իբրեւ մտաւոր և բանաւոր՝ զարդիւնս գործեալ 'ի մէջ բերել։ Այս ըստ իւրաքանչիւր տեսակաց կատարելութիւն երեւէր միանգամայն խոտոց և ծառոց. ոչ միայն անձինք ըստ ազգի և ըստ նմանութեան, այլ և պտուղք իւրաքանչիւրք հասեալք

և կատարեալք։ Այն ամիսս այս յաւուրս արկածից ջրհեղեղին, որ զբովանդակ տարին արգելեալ փակեցաւ արդարն 'ի ներքս 'ի տապանին, ողորմութիւն 'ի վերուստ կաթեցեալ՝ հրամայէ նմա ելանել 'ի տապանէն և ամենեցուն որ ընդ նմայն էին, լինի ամիսս այս սկիզբն ամսոց յաւուրս տարւոյն. և միւսանգամ երկիր դալարաբեր լինէր, և մնուցանէր զամենայն կենդանիս որ 'ի նմա, զի աՀեցեալք բազմասցին արարածք ըստ առաջին գոյացութեան։

Ա.ՐԴ Մովսէս՝ որ արժանի եղեւ Հոգւոյն սրբոյ պատմել զլինելութիւն արարածոց, դնէ զամիսս զայս 'ի սկզբանն սկիզբն լինելութեան աշխարհի, և խանգարման ջուրցն ապականելոյ զերկիր. յարմարական թուոց ամսոց զամիսս զայս ցուցանէ սկիզբն։ Այս փրկեալ Մովսէսի զժողովուրդն յեգիպտոսական ծառայութենէն՝ օրինադրէ զերբայեցիսն 'ի մեծ տօնիս ասելով. "Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց յամիսս տարւոյն,,։ Ոչ միայն փրկելով զնոսա 'ի չարաչար ծառայութենէն, այլ և զատուցեալ 'ի հեթանոսական տօնիցն հրամայէ 'ի տան և 'ի չորս ամսոյն զենուլ գառն. ըստ տան իւրաքանչիւր առնել տօնս 'ի գիշերին՝ յորում կատարեսցի լուսաւոր խորհուրդ յարութեանն Քրիստոսի։

Ա.ՐԴ որովհետեւ գտանի ամիսս այս սկիզբն արարչութեան, հիմն հաստատութեան գոյացութեանց աՀմանց, և թուական ժամուց և ժամանակաց և դարուց կատարման աշխարհիս, և պատարագ հաշտութեան 'ի սմա մատուցաւ՝ որպէս և վերագոյնն ասացաք՝ յաւուրս արդարոյն, և պատՀառք ազատութեան 'ի խիստ ծառայութենէ աբրահամեան զաւակին, արդ որովհետեւ փրկիմք յերկրաւոր ծառայութենէս յաղատութիւն, յայսմ վայրի, եղբարք, մտադիւրութեամբ վաստակեսցուք. զօրէն առաքինի մշակաց 'ի խոր հերկեսցուք և Հնութեամբ մեծաւ զխստութիւն երկրիս կակղեսցուք, զի 'ի խոր բրելոյ շուրջ զանիւն արմատախիլ զմշասակար սէզն քաղեսցուք. զի գեղեցիկ սերմանեցեալք ցորեանահատքն զտէր անդոյն ուրախ արասցեն։ Զի եթէ յոլոն նշանախեց՝ որ է մի 'ի փոքրկանց տառից, և ունի զտեղի մեծամեծաց, և եթէ ոք զնա արհամարհիցէ՝ յետնեալ գտանիցի յարութեստին իւրում,

ուրչափ եւս առաւել մեզ արժան է երկնչել զանց առնելով զմեծամեծ պարգեւօք Հոգւոյն սրբոյ, որոյ սկիզբն և միջոցն և կատարածն լի է երկնաւոր մեծութեամբն։ Զի եթէ սկսայց 'ի միակէն և անցից 'ի հաբիւրեակն և հասից 'ի հազարն և յանդգնեցայց 'ի բիւր բազում, առաւել քան զնոյնս անդրէն մնայ բազում։

Եպիսկոպոսն քեզ տարացոյց կատարեալ՝ որով հաւանեսցին միտքդ գալ 'ի Աշնարիտ հաւանութիւն։ Որ ժամ ծարաւեալ յաղբերն դիմեսցես դու և եւս բազումք ընդ քեզ, եթէ բիւր անգամ ըմպիցես, ոչ կարասցես արբանմբն քով զաղխումն աղբերն ցամաքեցուցանել, և ոչ զնոյն ջուր արբցես զոր յառաջն արբեր։ Այլ եթէ նստիցիս առ աղբերն, ոչ նմին ջրոյ կրկին դիպեսցիս, և ոչ օտարոտի ինչ դարձեալ 'ի նա խառնեալ տեսանիցես, և ոչ որ երեկն՝ քեզ այսօր կրկին երեւեսցի։ Իսկ արդ եթէ բնութիւն ջուրցն անհատ գնացիւքն այսպէս մեծամեծ խոհականութիւնս ցուցանեն մարդոյ, քանի՞ եւս առաւել բանքն աստուածայինք՝ եթէ արբցես զնա յոգիս ծարաւեալս. ոչ երբեք առլցցիս ծանրութեամբ, այլ թեթեւացեալ անդէն 'ի նոյն փափագիցես։ Եպիսկոպոսն և հանն և բնութիւնն նոյն իցէ, այլ տեսակք խոհականութեանցն այլ և այլ Աշաչակիցին 'ի միտս իմաստասիրաց, և ամենեքեան առ մինն զլիաւորեալ հայեցուցանեն Աշնարտութիւն։

Արդ զինչ է այն որ հրամայէ արգելուլ զպառնն 'ի տանտերոջդ աւուր անոյն, զկենդանին 'ի մէջ կենդանեաց, զձայնաւորն 'ի մէջ բանաւորաց։ Արդեաւ խորհուրդ յայտնի. յոր եթէ կամեսցի ոք, ամենայն իրօք կարասցէ հայել։ Զի տասնեակն ունի զկատարումն թուականին, և թուականն զնիւթական գոյութիւն աշխարհիս։ Զի նիւթականաւն զմարմնականս առցէ ուսումն կատարեալ վարդապետութեան։ Այլ 'ի լուսալիր լուսնին առ երեկոյի ժամանակին զենու պատարագն. որ յայտնապէս ցուցանէ զարատութիւն պակասութեան օրինադրեցելոյ տօնին։ Դայց զի է մեծախորհրդութիւն Աշնարիտ գառինն Աստուծոյ, որ գալոց և փրկելոց է զԻսրայէլ, ոչ Յոգիպտոսէ միայն, այլ 'ի սատանայական ծառայութենէ, նշանակի արիւն գառանցն 'ի վե-

բայ-սեմոց իւրաքանչիւր, և պահէ զտունս ամենեցուն 'ի հարուածոց, յորում եգիպտացիքն հարան 'ի մեծամեծաց մինչեւ 'ի փոքունս։ Եւ զոր օրինակ ուրախ լինին երկրագործք 'ի տեսիլս ծաղկանց ծառոց յառաջքան զհասանել պտղոց, այսպէս և մեք ուրախ լիցուք 'ի խորհուրդ տօնիս այսորիկ մինչեւ զենցի գառնն Աստուծոյ, որ է տօն փրկութեան Հրէից և հեթանոսաց։ Որդ փոխանակ զի ոչ ունէին իւրեանց իսրայէլացիքն երկիր բնակութեան և տաճար յանուն Աստուծոյ ժողովել ամենեցուն, և ոչ զաղգն 'Ի Եւեայ ձեռնադրեալ 'ի քահանայութիւն, բաւական համարեցաւ շնորհն Աստուծոյ զանձն իւրաքանչիւր առնել տաճար և բնակութիւն Աստուծոյ, և յամենայն տունս լինել քահանայս։

Այլ մեք այսու ամենայնիւ ձեպով 'ի կատարեալ հրամանն Մովսէսի անցցուք. որ գործով զգառնն Աստուծոյ առ որդին Իսրայէլի օրինադրէ, և զօրութեամբ առ որդին Աստուծոյ 'ի հեռաստանէ ակնարկէր։ Մի հում ուտիցէք, ասէ, որ է դաղանային շաղղակերութիւն. և մի եփեալ ջրով, որ է տարածումն և զեղխութիւն աստէն յաշխարհիս. և մի բնաւ չուտիցես, որ է վրիպումն ուրացութեան. այլ խորովով կերիջիր, որ է անպաձոյձ ծախումն երկնաւոր հրոյն։ Մաղվաղակի կերիջիք, մի յամելով իբրեւ եթէ միով մնասամբ մարմնոյն ուտել. այլ զօրութեամբ զօրէն հրոյ ամենայն մասամբք գոյացութեան իւրոյ։ Գլուխն հանդերձ ոտիւքն և փորոտեաւն, ասէ։ Եւ կարի յոյժ վայելչաբար վնախատեղծ գլուխն և զատորադիր ոտս մարմնոյն հանդերձ ենդական փորոտեաւն հրամայէ ուտել, զանց արարեալ ընդ չարչարանացն, զի յերեցունց քաջապէս ապրել կարացեալ։ Սակ զաւելորդն յերիցն մնացեալ յայգ՝ հրով հրամայէ այրել, որ է մեղք և անօրէնութիւնք։ Պարձեալ ասելով գոտիք ընդ մէջ և կօշիկ յոտս, ցուպ 'ի ձեռին, ճրագունք լուցեալք, ամենեքեան այսք նշանակք են արութեան պնդութեան՝ առաժամայն յելս գաղթին փոյթք, իսկ առ յապա՝ գաղութ լինել 'ի բնաւ աշխարհիս կենաց։ Զանգի գոտիքն ուսուցանեն զարիական պատերազմն, և ցուպքն զարքունեանն և զիրատականն. իսկ կօշիկքն զաներկիւղութիւն ճանապարհին՝ անվնաս գնալով 'ի վերայ թիւնաբեր սողնոց. և

լուցեալ Հրագունքն զանշէջ մնաց մարդոյն լուսաւորութիւն, որ զտէր խորհրդոյն 'ի հեռաստանէ իբրեւ 'ի մօտոյ տեսանէ, առաւել յայտնագոյն յասէին, եթէ "Օրհնեալ նորա մի՛ բեկանիցէք և 'ի յայգ մի՛ հանիցէք", որպէս և եղեւ իսկ, զոր և յառաջիկայ բանիս տեսցուք։

Զրդ եթէ Մովսէս յառաջագոյն կրթէր զժողովուրդն յայսպիսի յայտնագոյն խորհուրդ՝ յորում ծածկեալք յԱստուծոյ առ յապա յայտնելոց էին, և մարգարէքն նովին հոգւով զնոյն քարոզէին, և արդարքն հաւատային, և ժողովուրդն ամենայն զալստեան Տեառն ակն ունէին, որպէս և կինն շամիտացի ասէր՝ եթէ յորժամ Մեսիայն եկեսցէ՝ նա մեզ զամենայն պատմեսցէ, արդ նոյն Տէր՝ որ զայս ակնարկութիւնս առ ժողովուրդն կատարեաց, 'ի սմին արեգ ամենան աւետարանեցաւ 'ի հրեշտակէն սրբոյ կուսին 'ի Նազարէթ. զի զսոյն ամիսս արասցէ սկիզբն նորոյ փրկութեանս։ Եւ եմուտ արգելաւ գառնն Աստուծոյ յորովայն կուսին՝ լինելով անդ ամիսս ինն. զի բացցէ զաչս կուրացելոցն, յիշատակելով նոցա զզենումն գառինն որ յԵգիպտոս. զի աՀեցեալք և 'ի չափ հասեալք կատարեալ գիտութեանն՝ թերեւս ոչ վրիպեսցին 'ի գառնէն Աստուծոյ, որ փրկելոցն էր զնոսա յանլոյծ կապանացն հնութենէ մեղաց։ Որպէս զի և ինքն իսկ գառնն Աստուծոյ զամենայն դեգերումն յամելոցն երեսնամեայ ժամանակաւն և աւելի եւս ամօք առ որդիս ժողովրդեանն գումարէր ծննդեամբ ծագմանն և յայտնութեամբ մկրտութեանն, որպէս զի զնշանագործութիւնն զամենայն 'ի մէջ հրէաստանի կատարէր, և զընտրութիւն Աստուածեղոցն 'ի նոցունց որդւոցն որոշէր, և հանապազորդ կրթելով զամենեսեան ուսուցանէր յօրինաց և 'ի մարգարէից՝ եթէ վասն իմոյ գալստեանս քարոզեցին ամենեքեան, և ասելով յԱստուածն՝ եթէ "Ահա ուրեք առաքեալ, բայց միայն առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի"։ Ահա և զաւետիս հարցն հաստատէր մնանելով ընդ թլփատութեամբ, յանձն առնուլ՝ ծանօթս և բարեկամս առնել 'ի մէջ ամենեցունց. զուռն բանայր յինքն մերձենալոց մաքսաւորաց և մեղաւորաց. հաղորդականս առնէր զդեւս 'ի սահմանաց ընտրեալ ազ-

Digitized by Google

գին. զախտս և զչարչարանս բժշկէր, թօթափեալք յանձանց՝ ողբ հաւատով մերձենային 'ի նա։ Եւ որ մեծն էր քան զամենայն, 'ի բազում տեղիս բազում անգամ զմահ կապէր, և դնէր 'ի ներքոյ իւրոյ յաղթող զօրութեանն. և զմեռեալս կենդանիս պահանջէր յանօրէն բռնաւորէն. և զամենայն արտաքոյ հատեալ յամենայն աչաց, սուգ և տրտմութիւն փախստեայ լինէր յերեսաց նորա. ատելութիւն հալածէր և ագահութիւն յանգիմանէր. խաւար փախչէր և լոյս թագաւորէր։

Եւ զայս ամենայն իբրեւ այսպէս յօրինեալ կազմեաց, քահանայքն և քահանայապետքն հարեալ նախանձուն ախտիւք՝ կափուցին զաչս իւրեանց 'ի լուսոյն Աշմարտութեան, և խցեալ զլսելիս իւրեանց՝ ոչ կամեցեալ ունկնդիր լինել օրինաց և մարգարէից, և ոչ ընդունել զքարոզութիւնն՝ որ կատարէր զաւետիս մարգարէիցն։ Այլ 'ի վերայ այսր ամենայնի բարեգործութեանցս հակառակեալք և ընդդէմ զարձեալք արգելուին զԺողովուրդն անունկնդիր լինել կենդանարար վարդապետութեանն։ Արդ եկեալ եհաս 'ի նոյն ամիս, որ 'ի սկզբանց զխորհուրդ կենարարին նշանակէր, և Տէրն ամենեցուն առ սէր որդւոցն Աստուծոյ 'ի նոյն գութ եկեալ զնոյն զատիկ ընդ նոսա խնդութեամբ կամէր կատարել. զի թերեւս յետս փարատեսցի խաւար նախանձու 'ի խորհրդոց նոցա, և բացցին աչք մտաց նոցա՝ զորս կամքն կուրացուցին. և ծանիցեն զՏէր տօնին՝ որ եկն 'ի կեցուցանել զարարածս առ հաստակ, ողբ մեռեալ էին 'ի մեղս իւրեանց։

Բայց արդ դու լուր զմեծամեծ չարին։ Իբրեւ մերձեցաւ, ասէ, տան բաղարջակերացն՝ որ անուանեալ կոչէին զատիկ, գիտացին եթէ գայ Յիսուս 'ի բազմութիւն Ժողովրդեանն ուսուցանել զնոսա, զահի հարան և յոյժ յերկիւղի էին, եթէ գուցէ կամ զեղբարս բանայցէ կամ զանդամալծս բժշկիցէ կամ զդիւահարս արքէ. մանաւանդ եթէ զմեռեալ ոք յարուցանիցէ, ամենայն Ժողովուրդն հաւատան 'ի նա։ Ա՛ն ասն այսր երկիւղի խորհուրդ արարին քահանայապետքն և մեկնիչքն և պատմեցին իշխանացն և ուսուցին զբազմութիւն Ժողովրդոցն, զի ուր տեսցէ ոք՝ գուշակեսցէ. և

ինքեանք իսկ վառեալք իբրու զինուք, զի ուր և գտա-
նիցեն՝ սպանցեն։

Այլ իբրեւ այսպէս ոչ հնարեցաւ նոցա, գտաւ նոցա
օգնական՝ որ 'ի սկզբանէ իսկ բնակեալ էր 'ի սիրտս նո-
ցա։ Այլ 'ի ձեռն միջնորդի ուրեմն՝ որ անուամբ էր ընդ
աշակերտսն, և գործակից չարակամաց քահանայիցն լի-
նէր, որպէս և աւետարանն յայտնագոյն իսկ ցուցանէ.
"Սատանայի իսկ, ասէ, արկեալ էր 'ի սիրտն Յու-
դայի, զի մատնեսցէ զնա նոցա"։ Ցեսանեմ, զի գոր-
ծակից էին՝ ոչ քահանայութեանն, այլ սատանայա-
կան գործոյն։ Զոգաւ առ նոսա և ասէ. Զինչ տայք
ինձ, և ես մատնեցից զվարդապետն։ Այլ նոքա մատու-
ցին նմա վաղվաղակի կշիռ երեսուն արծաթոյ։ Ո՛վ մա-
լիք, և ոչ քահանայք. զի թէպէտ և չարաչար մատ-
նէր, այլ զանուն գեղեցիկ խոստովանէր. վարդապետ
ասաց, և ոչ գող և սպանող, և ոչ այլ ինչ մի 'ի չարա-
գործաց աշխարհիս։ Զանազի զարծաթդ խոստանայք,
ընդէ՞ր ոչ գործոց նորա հարցանէք եթէ վասն որո՞ չա-
րեաց մատնես զնա 'ի ձեռս մեր։ Այլ թերեւս եր-
կեայք հարցանել եթէ վասն որո՞ չարեաց մատնեցեր
զնա. զայդ բարուք արարէք, զի ձեզէն իսկ գիտէք և
հաստեալ էք 'ի վերայ եթէ ոչ գտաւ նենգութիւն 'ի
բերան նորա, և ոչ անօրէնութիւն 'ի գործս նորա, ո-
րով ոչ ոք 'ի մարդկանէ զնա յանդիմանել կարէ։

Այլ աղէ դուք, հարցանեմ զձեզ, ընդէ՞ր տայք
զարծաթդ, և ուստի՞ տայք, և վասն էր երեսուն լիտր։
Այթէ մահապարտ է, որպէս ասէքդ, մի՞ առնէք զկո-
րուստ արծաթոյդ. ոչ ոք 'ի մարդկանէ զնէ արծաթոյ
զմահապարտ և սպանանէ. թոյլ տուք այդր, մեղքն
իւր ամբաստանեն զնմանէ. զգործոց նորա բուռն հա-
րէք, զի չարիք նորա մատնեն զնա 'ի մահ։ Այս գիտեմ
զի ՀՀմարիտք էք. մանաւանդ և իմաստունք և քահա-
նայապետք և առաւելեալք գիտութեամբ քան զամե-
նեսեան. գիտէք՝ աւադիկ գուշակ յաշակերտաց նորա,
հարցէք և գրեցէք զգործս վարդապետին իւրոյ։ Ակիզբն
արարէք՝ ուստի սկսաւն նա առնել, այդրէն իսկ 'ի տա-
նիդ գտանէք բաղում գալիլեացիս։ Այլ գտանէք անդ
'ի Հարանիսն զՋուրն գինի եղեալ, և 'ի Կափառնաում
'ի հինգ նկանակէն հինգ հազարքն յագեցեալք և եր-

Digitized by Google

կոտասան սակաւի լի մնացեալք. և եթէ 'ի Լայլին հաղ-
ցանէք, զորդի այրոյն միամօր 'ի մեռելոց յարուցեալ
տեսանէք. և եթէ 'ի տուն քահանայապետին մտանէք,
զնոյն տեսանէք. և եթէ յերկիրն գերգեսացւոց մտանէք,
ոչ միայն զբազմադեւ պատանին բժշկեալ տեսանէք, այլ
և զդեւսն 'ի ծովն հեղձուցեալ. և եթէ 'ի Պէնտադա
քաղաք մտանիցէք, ոչ միայն զկինն առողջացեալ տե-
սանիցէք, այլ և զտէրունական անդրին կանգնեալ, և
բժշկեալն բուռն հարեալ ունի զդրօշակէն Յեսուսն, և
ընդ նորին անդրեսուն բուսեալ արմատ՝ որ մատուցանէ
զբժշկութիւն ախտացելոց։ Լայց ես գիտեմ, զի ոչ
կարէք երթալ 'ի հեռաստան, քանզի և կամիք իսկ ոչ.
'ի Լեթանիա մատերուք, մօտ այդրէն հարցէք յ'Լա-
զար՝ եթէ ո՞ւր չոգաւ և կամ ուստի՞ եկն. և եթէ զդա
ոչ կամիք հարցանել, քանզի չարաչար պատմէ զձէնջ
վասն հանդերձեալ տեզւոյն որ պատրաստեալ է ձեզ.
և կամ յԼրիքով զկոյրն հարցէք, զոր 'ի հեռաստանէ
ձայնիւն բժշկեաց։ Լու եթէ զնոսա պատճառանօք կար-
ծէք, այդրէն իսկ 'ի դմին քաղաքի տեսէք 'ի Լեթ-
հեզդա զերեսուն և զուրթ ամ. զանողորմութիւնն ձեր
մահինձէն ազազակեացեն։ Լու 'ի Լելով հարցեալ, զառ
'ի ծննդենէ կոյրն տեսանէք լուսաւորեալ. և տեղեկու-
թեամբ իսկ գիտէ տալ պատասխանի։

Լրդ վասն որոյ գործոյ մատնի 'ի ձեռս ձեր վարդա-
պետն։ Լու եթէ գիտէք և չար են գործքն, ահա լուայք
ապաքէն, զրեցէք և մատուցէք դատաւորին ձերում,
զի 'ի գործոց իւրոց մատնեսցի։ Լպա եթէ բարի են
գործքն, որպէս և են իսկ բարի, ոչ գուք միայն պար-
տեալ ամաչէք, այլ և ամենայն մերձաւորք ձեր ընդ
ձեզ։ Լու որ մատնեացն՝ ոչ միայն ամօթոյ արժանի է,
այլ և բազում հարուածոց փոխանակ զայնպիսի չնորհս
զլանալոյ։ Լու եթէ ճշմարտասէրք էիք, դուք ձեզէն իսկ
առնուիք վրէժս 'ի նմանէ. զի որ ընդ այս հայէր, չար
ընդ բարւոյ ոչ հատուցանէր։ Լրդ քանզի զայդ ոչ ա-
ւարէք, արծաթ եւս տայք նմա. և ոչ 'ի տանց ձերոց,
այլ 'ի սուրբ նուիրաց տաճարին. ո՞չ ահա յանդիման-
եալ կշտամբիք. քանզի ոչ զմարդոյ աւանդ, այլ զԱ-
ստուծոյ հատանէք և կողոպտէք զամենասուրբ տաճարն.
ոչ 'ի փրկանս գերեաց և ոչ 'ի տուրս աղքատաց, այլ 'ի

Digitized by Google

գինս արեան արդարոյ. և արդարոյ ոչ 'ի մարդկանէ ուրուք, այլ զորդւոյ Աստուծոյ։

Այսպա յիրաւի ուրեմն Օսաբարիա մարգարէ յառաջագոյն գիտելով զչարութիւնդ ձեր, որ տարապարտուստ մարգարէիցն ձերոց մատուցանէիք վարձս բազումս, քանզի խօսէին զկամս չար անձանց ձերոց, և գովիչք եւս լինէին չարութեան գնացից ձերոց, ասէ և Հիմարիտ մարգարէն. "Եթէ բարւոք թուի ձեզ այդպիսեացդ ծախս անբաւս լինել, տուք և ինձ զվարձս իմ. ապա թէ ոչ, զբոյց արարէք, զի և ես գիտացից". Եւ նոքա վաղվաղակի կշռեցին և ետուն 'ի ձեռս նորա երեսուն արծաթի։ Եւ այս էր յաչս մարգարէին անհնարին դառնութիւն, տեսանել 'ի նմա զամենամեծ և զահագին չարիսն զոր գործելոց էր ժողովուրդն. ոչ կարէր հանդարտել ծանրութեան իրացն, առեալ արկանէր զայն 'ի տուն Տեառն 'ի բովս, զի թերեւս պատկառեսցեն 'ի մոլեկան գործոյն, որ և զդիւացն ամբարշտութեամբ զանցուցանէր։ Բայց ոչ յաւելուն և ոչ հատանեն 'ի կատարեալ չարեացն. պահեն զերեսուն թիւն և բերեալ մատուցանեն մատնչին, զի գնեսցեն զարիւն աստուածային, ոչ դիպուածով և ոչ որ են յանկարծակի 'ի ներքս անկեալ, այլ հնացեալ խորհրդով զոր կատարէին 'ի նորոգիչն ամենայնի չարութեամբ։

Բայց զերեսուն թիւ արծաթոյդ եթէ յոսկի փոխանակեսցես, լինի բաժանեալ յերրեակ յիսներորդ. և եթէ 'ի նոյն իսկ 'ի թիւ արծաթոյն, բազկանայ յերիս տասնեակս. առաջին տասնեկաւն անարգեցին զտասն պատուիրանն. երկրորդ տասնեկաւն ուրացան զիրկութիւն Մովսէսի. երրորդ տասնեկաւն չհաւատացին երկրին պարգեւաց։ Դարձեալ 'ի ձեռն սորին երրեակ թուականի զՀայր ընդ որթուն փոխանակեցին յանապատին, և քարկոծելով զմարգարէսն դառնացուցին զսուրբ Հոգին, և մնացորդաց նորուն թուականին գնեցին զսուրբ արիւնն յանձինս և յորդիս իւրեանց մինչեւ ցյաւիտեան։

Եւ քանզի զայրացեալք էին 'ի նախանձ բարկութեան իբրեւ գազանս անապատի, ոչ ինչ փոյթ արարեալ վասն պատուական տօնին, ժողովեցան քահանայքն և քահանայապետքն, ծերք և փարիսեցիք, և որ իշխան էր

Digitized by Google

տաձարին հանդերձ ամենայն բազմութեամբն՝ վառեալք իբրեւ զինուք, և առաջնորդս եւս ունէին, որում է տուն զարծաթն 'ի տաձարէ անտի. ընդ նմին և զօրաւիգն իբրեանց զանմարմին և զիմանալին սատանայ. և զժամանակ գիշերոյն օգնական, զի 'ի խաւարային ժամուն անկցին 'ի խորխորատն կորստեան։ "Ընդ որում ես համբուրեցից, ասէ, նա է, կալջիք և տարջիք զգուշութեամբ,,։ Ընդ ձախողակի ողջունին յետս ընդդէմ հատուցումն անդրէն ընդունի։ "Որում ես թացից, ասէ, 'ի սկաւառակէս և տաց, նա է որ մատնելոց է զիս,,. թացիցն՝ զօրհնութիւնն լուացից ասէ։ Որոյ սիրտն եղեւ բնակութիւն նենգաւոր թշնամւոյն, ոչ դադարի անդ շնորհն աստուածային. իսկ ուր աստուածային շնորհն ոչ բնակեալ լինի, նա կոխան անցաւորաց ձանապարհի է։

Իսկ Պետրոս որ լի էր բարեսէր նախանձու, մանաւանդ իբրեւ զաշակերտակիցն իւր ընդ նոսա ետես, ոչ կարաց համբերել սատանայական զօրութեանն. քանզի լուեալ էր յամենագէտ Տեառնէն, եթէ որ դոյ սուսեր՝ առցէ, և որ ոչն գուցէ՝ գնեսցէ և բերցէ։ Օ՜ինչ էն հրաման պատասխանւոյս այսորիկ. իբրու զի յայտնի է խմաստնոց, սրոյ նմանեցոյց զՀնարտութիւն. որոյ ստացեալ իցէ զաստուածպաշտութիւնն՝ պինդ կացցէ, և որ սակաւ մի թուլացեալ իցէ՝ գնեսցէ, ոչ սուսեր 'ի մարդոյ ումեքէ, այլ յորդւոյ մարդոյ զՀնարտութիւն, ոչ գնոյ արծաթոյ, այլ արեամբ անձին իւրոյ. քանզի՝ սուր եկն արկանել, ոչ միայն յերեւելի մերձաւորութիւնն, այլ և ընդ հոգի և ընդ մարմին յանձինս իւրաքանչիւր։ Այս է սուսերն բնական և ստացական. իսկ Պետրոս զերկոսեանն ունէր. բնական առսէր վարդապետին զոր ունէր 'ի սուրբ ոգին, իսկ ստացական որով զծառային ունկն 'ի բաց հատանէր։ Լաւ կարի վայելչաբար զծառային և ոչ զաղատի, զմեղաց և ոչ զարդարութեան, զունկն զապստամբ, ոչ զգլուխն պատուեալ զմանն, և ոչ զամենայնս. քանզի ոչ այլ ինչ նման է ծառայութեանն, որպէս զգայութիւն մտաց։ Քանզի ակն ընդհարութեամբ՝ միտքն ընդ իմանալին բախեցան, և ունկն ընդ լսողութեամբ, աչք 'ի տեսաւորութիւն պատրաստեցան, և խոհականութիւն ան-

զուտ պատասխանատուութիւնն արտաքինաց. իսկ ընկերային հոգատարութիւն զհաշակիցսն զարթոյց յընտրութիւն արշաւութեան. և 'ի ձեռն զգայութեանցս այսոցիկ ամենայն զգալիք առին զգուշութիւն պահպանութեան։

Իսկ ակամայն դժուարագոյն իմն է առնուլ պահպանութիւն անձայնութեան, որ և կոչի իսկ 'ի բազում անարժան ձայնից. և ոչ միայն ծառայ մեայ, այլ և ծառայեցելոց զգայութեանցս կրկին ծառայեցեալ։ Որդ հանելով 'ի բաց զունկն ծառային, նշանակեաց զանդրտին 'ի սկզբանէ զանլրութիւն և զանհնազանդութիւն մարդկան։ Բայց քանզի շատ է զի և բարերար Տէր երկնի և երկրի զամենայն խեղութիւնս մեր եկն 'ի բժշկել, և զթերութիւնս մեռաց մերոց լնուլ և կատարել, ոչ զանց արար մարդասիրութիւն նորա և զունկամբ ծառային. այլ առեալ անդրէն 'ի տեղւոջն եղեալ՝ անվէր և անապի զտեղին ցուցանելով, որ է նշանակ դարձի մեղուցելոցն յապաշխարութիւն. և խօսի ընդ ամենեսեան աղերս բանիւք և քաղցր բարբառով։

Բայց քանզի զօրութիւնն էր անպարտելի, թէպէտ և յոյժ խոնարհագոյնս խօսի, սակայն եռ էանն ասելով Աստուածն մարդացեալ, երկիցս անգամ անդրէն յարաջ քնութիւնն զարկոյց զնոսա և ոչ իմացան։ Ողորմեալ այնուհետեւ և բարերարին անարժանիցն, երիցս անդէն 'ի տեղւոջն կատարէ բան. զՊետրոսի զսուրն անդրէն հրամայէ դարձուցանել, և զինքն փոխանակ աշակերտացն մատնէ 'ի ձեռս ունելեացն, միանգամայն և զՀօր կատարէ զհրամայեալն զբաժակ մահուն ըմպելով։ Այս քանզի էր Աստուած անսուտ, եղեւ մարդ ճշմարիտ՝ անկասկածելի աստուածութեամբն աներկիւղ մատնէր 'ի ձեռս ունելեացն. իսկ մարդկային բնութեամբն երկիւղագին խանդաղատական աղօթիւք զայն որ կարողն էր փրկել 'ի մահուանէ՝ աղաչէր ոչ դուզնաքեայ և մտահաճոյ, այլ ընդ այլոց ինչ երազատես լինէր, այլ յառաջահոգակ և նախախնամ հովիւ կենդանի բանաւոր խաշանց կանխագէտ տեսանէր զինչ լինելոցն էր։

Որեալ այնուհետեւ զաշակերտսն զայ հասանէ 'ի տեղին զոր յառաջագոյն նկարեալ էր մարգարէին.

Digitized by Google

“Յողովեցից, ասէ, զամենայն ազգս երկրի, և իջուսցից զնոսա 'ի ձորն Յովսափաթայ. և անդ նստայց դատել զամենայն ազգս շուրջանակի,,։ Արդ ոչ զի յառաջագոյն ասացեալ էր մարգարէութեանն՝ ակամայ իրքն կատարէին, այլ նոյն ինքն հոգի Աստուած մարգարէիւքն խօսէր որ ինչ լինելոցն էր. ոչ այսօր, այլ որ 'ի սկզբանց յեղումնն ըստ կամաց յաջաստութեանն առաջին մարդոյն էր։ Այս քանզի ոչ հարկաւոր էին իրքն, այլ ըստ խրատու թշնամւոյն և ըստ յօժարութեան վատթարի ոգւոյ անփոյթ արարեալ զյօժարութիւնս, քաջաբեր լինել քան անարգագոյն պտուղս։ Այս քանզի Տէրն ամենեցուն ոչ եկեալ էր 'ի դատապարտութիւն, այլ փրկել 'ի ծառայութենէ և նորոգել յաջաստութիւն, խնդրէր աղօթիւք յայնմանէ՝ որ առաքեաց կորզել զաշխարհ 'ի մեղրութենէ, և հաստատանել 'ի Հօրն արքայութիւն։

Արդ ետես յայսմ տեղւոջ եթէ եկեալ հասեալ է ամենայն արարածք ակամաստես լինել մահուան որդւոյն Աստուծոյ, եթող զաշակերտսն 'ի խոնարհագոյն տեղւոջն, և ինքն սակաւիկ մի 'ի վերագոյն տեղին մատեաւ. անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց՝ խոնարհեալ համբուրէր զգէմն երկրի, և հեղոյր զսուրբ զարտասուսն 'ի սուրբ հատուած հողոյն, և բառնայր զառաջին անէծսն։ Դարձեալ կանգնէր, 'ի վեր հայեցեալ կարդայր առ Հայր աղօթիւք ասելով. Հայր եթէ հնար ինչ է, անցո զբաժակս զայս յինէն։ Բերու տէր էր հնարից և անհնարից, առ Հայր կարդալով ցուցանէր զմիանական Յարարդութիւնն, և միանգամայն և ըզմարդկութեանս բնութիւն, որ այնչափ վերաբերեցաւ յաստուածութիւնն։ Զօթս առնէր ոչ միում ազգի և կամ միում մասին, այլ ամենայն մարդկան և տիեզերաց. ոչ մարդկան միայն, այլ ամենայն կենդանեաց, ցամաքայնոց և ջրայնոց և օդայնոց, երկնի և որ յերկինս։ Օ ի թէպէտ և որդի էր ըստ աստուածութեանն, սակայն 'ի ձեռն մարմնազգեցիկն լինելոյ՝ ուսաւ 'ի չարչարանացն մահու զնեղութիւն ամենայն կենդանեաց, որ անկեալ են ընդ ապականութեամբ մահու. զի յորժամ իրքն կատարեցան 'ի յապականութիւն ամենայն

մահկանացուացս, կարող իցէ օգնական լինել յանչարչարութիւն. նա և որ առաջիկայ իրքն էին, ոչ փոքր և ոչ դուշնաքեայ ինչ էր, այլ ահագին մեծապէս։

Զի եթէ 'ի մահուանն Ովսիայ որդւոյն Ամոսայ 'ի տարապարտուց մեռանելոյն՝ ամենայն Իսրայէլ առնուլ սուգ՝ ոչ մի ցեղ կամ երկու, այլ ամենեքեան, զոր մեծապէս մարգարէն ողբայ, "Յաւուրն յայնմիկ, ասէ, դիցես կոծ սաստիկ իբրեւ զկոծն ադադռոամմոն որ 'ի դաշտին, ազգ տանն Դաւթի առանձինն և կանայք նոցա առանձինն, ազգք տանն Լեւթանայ առանձին և կանայք նոցա առանձինն, ազգք տանն Շ մաւանի առանձին և կանայք նոցա առանձինն, որչափ եւս առաւել 'ի մահ որդւոյն Աստուծոյ երկինք խոնարհեալ, երկիր դղրդեալ, և ամենայն իմանալի զօրութիւնքն զարհուրեալ։

Իսկ ամենայնի Տէրն յայսմ վայրի ոչ մի անգամ միայն, այլ և երկիցս և երիցս 'ի վայր անկանի, իբրեւ թէ երկինք յերկիր. և դարձեալ կանգնեցաւ՝ որպէս թէ զերկիր ընդ իւր կանգնէ 'ի վեր տարրացեալ, միութիւն գործելով երկնաւորաց և երկրաւորաց. և ոչ փոքր ինչ էր ծանրութիւն բեռինն՝ զերկինս բառնալով և զերկիր կախելով զինքեանէ։ Տեսանէ՞ս, և ոչ քիրան դուշնաքեայ բղխեր յաստուածային մարմնոյն, այլ քիրան ուժգին և արիւն. և արիւնն ոչ միով մնասամբ, այլ վտակք բազմահոսանք. որով զերկին որբեր, և զերկիր լուանայր, և զոդ մաքրեաց յառաջին ծիսոյ ՀԵՆ. ՀԵՐԱՑ զոհիցն ապականութեան։

Եւ 'ի վերայ այսր ամենայնի աքանչելագործութեանց՝ աշակերտքն անկեալ դնէին անընդգոստ քնով։ Եւ սակայն մարդասէր Տէրն հեզաբար հանդարտութեամբ մատուցեալ ընդոստուցանէր զաշակերտան, իբրեւ թէ զաշխարհ 'ի քնոյ, և աղերս բանիւք ասելով. Ո՛վ Պետրե, այդպէս վայրիկ մի ոչ կարացէք արթուն կալ. քանզի վեց օր արարի զերկին և զերկիր և զամենայն զարդս նորա. և արդ ահա այս վեցհազարեան ամ է, որովք անկեալ խանգարեցան ընդ ապականութեամբք, և իմ եկեալ փրկել և անդրէն նորոգել։ Արդ աղէ զարթիր և արթուն կաց սակաւ մի, և թափեա 'ի քէն զծանրութիւն քնոյդ, և տես զի՞նչ ինչ գործելոց է ընդ

իս աղգատոհմդ քո 'ի վերայ ամենայն բարեգործութեանց իմոց մինչեւ ցայսօր։ Օ ինչ կամին հատուցանել ինձ ժողովեալ ամենեսուն իբրեւ 'ի վերայ մահապարտի, ոչ ըստ աշխարհի սովորական մահու սպանանել, այլ մեծապէս անարգանաց։ Եւ ես յոյժ խռովեալ եմ և ողբամ դառնապէս, քանզի 'ի մահուան իմում գիտեմ զինչ լինելոց է. ընտրեալ տաճարս աւերելոց է, քահանայութիւնն լռեացի, պաշտօնն դադարէ, ընթերցուածք սուրբ կտակարանացն որ վասն նորա աղաղակէին՝ 'ի տուգ մոռանեն. հուրն հանապազորդ չինչանի, պատարագք խափանին, ողջակէզքն որ վասն մեղաց՝ զտեղի առնու, ուխտադրութիւնն որ 'ի հեռաստանէ՝ ոչ եւս եկեսցէ. անձկեալ քաղաքն Երուսաղէմ աւերեսցի, և ամենայն Իսրայէլ ցրուեսցի։ Եւ դուք իսկ երկոտասանքդ որ ընդ իս էք, յայսմ կիրերի գայթակղելոց էք. քանզի գրեալ է, պարտ է զի և կատարեսցի. "Հարիցս զհովիւն, և ցրուեսցին խաշինքն,,։ Իսկ ապդ խաշինք առանց հովուի՝ ապա մատնին 'ի ձեռս գիշակեր գազանաց. մանաւանդ զի առ եւս սատանայ յայսմ աւուր օձան խարբալել զձեզ իբրեւ զցորեան. և ես աղաչեցից զՀայր, զի մի պակասեսցին հաւատք քո։

Եւ բարեղք ասաց եթէ մի պակասեսցեն. քանզի աստուածութեանն ոչ են կամք տեսանել զչարութիւն մարդկան, բայց և մարդոյն պիտի առաքինութիւն զգենուլ յանձին զգուշութիւն, և 'ի Հօրն արքայութիւն և յուրախութիւն մտանել։ Օ՛ի մի պակասեսցեն, ասէ. այլ ոչ եթէ մի ուրացին։ Իւրանալն և չուրանալն 'ի ձեռս նորա էր. իսկ ընդունելն անդրէն գործ մարդասիրութեան։ Եւ որպէս վասն ամենայն Իսրայէլի ողբալից աղաչանաք աղաղակէր առ Հայր, զի մի կորիցէ ազգն ընտրեալ, այնպէս և վասն երկոտասանիցն յանձն առնէր Հոգւոյն սրբոյ, զի հաստատուն կացցեն 'ի ժամ փորձութեանն։ Իսկ Պետրոս առ գութ սիրոյն Տեառն իւր անփորձաբար խիզախէր, բայց Տէրն որ ինչ լինելոց էր՝ յառաջագոյն պատմեացնէ. և Պետրոս 'ի փորձանացն իմաստնացեալ՝ դառնապէս արտասուաք և մեծաւ զղջմամբ վերստին զանձն հաստատէր յաշխատութիւն։ Եւ այն որ 'ի ժամ փորձութեանն քան զնմ

կակղագոյն, յետոյ քան զանդամանդեայ եւս առաւել խստագոյն երեւեցաւ։

Ո՛, քանի՛ մեծ ժպրհութիւն քահանայիցն և քահանայապետին, և ամենայն մեծամեծացն որ ընդ նոսա. մինչդեռ Տէրն ամենայնի վասն ամենեցուն աղաչէր ողբալով զի մի՛ մատնեսցին յանբժշկելի հարուածն, նոցա ոչ ինչ փոյթ արարեալ 'ի յիսկապէսն որ լինելոյ էր, այլ յանդգնագոյն եւս քան զսոդոմայեցիսն յարձակեցան 'ի վերայ։ Եւ յերաւի ասացի թէ եւս չարութեամբ քան զնոսա. քանզի 'ի Սոդոմ հրեշտակքն նշան ինչ ոչ արարին, այլ զՍոդոմ իսկ արարին նշան ահագին ամենայն տեսողաց, և արժանապէս հատուցումն անարժանիցն հատուցաւ. զի եթէ վասն անարգութեան հրեշտակացն ամենայն մասունք երկրին ընկալան զաստուածային հարուածքն, իսկ ուր Տէր հրեշտակացն կրէր զանարգանս մահու, ո՞վ բաւական է հատուցանել վրէժ դատաստանին այնորիկ. ոչ միայն թանձրացեալ մարմինս որ աստէն յերեւելիսս ընդունի զվճիռն մահու, այլ և անապական ոգիքն ընդ սմին մարմնոյ կապեալ և անկեալ յանշէջ հուր գեհենին, որ առաւել սաստկութեամբ այրեսցի քան զերկիրն սոդոմացւոց։

Եւ հասեալ, ասէ, քահանայապետն և ամբոխն՝ առանց պատկառելոյ արկին զձեռս իւրեանց կալան զՅիսուս, կապեցին և առեալ տարան 'ի տուն քահանայապետին։ Կապեցին զայն, որ եկն արձակեաց զմեզ 'ի կապանացն անլոյծ։ 'Ի տուն տարան զայն, որ երկինք և երկիր ոչ տանին. հրեղէն բնութիւնն 'ի մէջ փայտեղէն տան մտեալ կայր, և ոչ ծախէր տունն. որ ինքնուցանէր հուր 'ի պատարագս նոցա և ընդունէր 'ի քաւութիւն մեղաց, ինքն ընդունողն առաջի կայր պատարագամատուցին, յորմէ սերովբէքն և քերովբէքն թեւաքն ծածկէին զոտս և զերեսս իւրեանց յահէ մեծութեան նորա։

Օ՜տէր տաճարին վասն տաճարին պահանջէին։ Ո՛վ մեծամեծ յանցանացն. զինչ ինչ չար ասաց. "Քակեցէք, ասէ, զտաճարդ, և ես յերիր աւուր շինեմ,,։ Ա՛նք իսկ, ասեն, լուաք։ Ո՛վ քահանայք, և մե՞ծ իցէ արդեօք յանցանքս այս։ Ասեն՝ և կարի մեծ. շինեմ,

ասաց, և ոչ եթէ աւերեմ. թուի ինձ եթէ դուք զե-
ղիս աւուրս ոչ կարէք աւերել, նա և ոչ բազում ամն։
Բայց բարւոք ասէր թէ քակեցէք. քանզի 'ի սկզբանէ
քակել եւեթ գիտէք, և ոչ շինել։ Արդ քակեցէք
զազգս արդարոցն, և ես այլ արդարս շինեցից 'ի միջի
ձերում. քակեցէք և դուք զմարգարէութիւնն յան-
ձանց ձերոց, սակայն ես այլ մարգարէս յարուցից ձեզ
քարոզել զճշմարտութիւն. անարգեցէք դուք զվէմն՝
որ էր գլուխ անկեան, և ես այլ երկոտասան վէմս կանգ-
նեցի յաշխարհի ձերում, զի շինեցից զձեզ 'ի վերայ
անշարժ հիմանն՝ և ոչ կամեցարուք։ Իսկ արդ զինչ
մեծ է եթէ քակէք զտաճարդ, և յերիր աւուր կանգ-
նեմ զդա։ Երկինս ոչ ապաքէն առանց աւուր կանգ-
նեցի, և զերկիր առանց ժամու հաստատեցի, և զամե-
նայն գոյացութիւնս 'ի վեց աւուր զարդարեցի. դուք
զտաճարդ 'ի քառասուն ամ շինեցիք, ես զմարդ 'ի
քառասուն օր նկարեցի յարգանդի. դուք զտաճարդ 'ի
քառասուն ամ շինեցիք, ես զձեզ քառասուն ամ շի-
նեցի յանապատին՝ և ոչ շինեցարուք։ Արդ որովհե-
տեւ քառանամեայքդ՝ անխրատեալք և չշինեալք 'ի
վերայ վիմին՝ որ տայր ձեզ զՋուրն 'ի նմին անապատի,
արդ քակեցէք դուք զայս տաճար զոր տեսանէքս զիս,
և ես յերիր աւուր շինեցից զսա առանց ձեռագործի.
զի այլ թէ կամիցիք քակել, ոչ կարէք։ Բայց զայդ
տաճար զոր Սողոմոն շինեաց, եթէ կամիք և եթէ ոչ
կամիք, դա քակելոց է 'ի թշնամեաց ձերոց. մանաւանդ
թէ ողբքն իմ իսկ դառնապէս ասացեալ են 'ի վերայ տա-
ճարիդ. որպէս և դու իսկ, ո՛վ քահանայապետ Կայիա-
փա, մարգարէացար ոչ 'ի կամաց քոց. "Բայցեն, ա-
սես, այնուհետեւ Հոռոմք, և բառնայցեն զազգս մեր
և զտեղի և զօրէնս մեր,,. որ և լինելոց է ոչ յետ բա-
զում աւուրց, այլ առ կենօք քովք տեսցես զայն։

Եւ զայս ասելով՝ վերամբարձագոյն եւս հայեցու-
ցեալ, ցասոյց զքահանայապետն և ասէ. որ այժմն մը-
տեալ կամ առաջի քո կապանօք և մեծ անարգու-
թեամբք, տեսցես յերկինս վերացեալ, և նստիմ 'ի
հայրենի ախոռն յաջմէ զօրութեանցն Աստուծոյ։
Այս լուեալ քահանայապետին, ձեռն զօձիւք հար-
կանէր, և յերկուս զպատմուճանն պատառէր. զի 'ի

Digitized by Google

պատառել պատմուճանին, զազգն ամենայն զայրացուս-
ցէ յարուցանել 'ի վերայ Յիսուսի։ Բայց Թերեւս յի-
բաւի պատառեցեր զպատմուճանդ. զի ընդ նմին պատա-
ռելոց էր և քահանայութիւնն։ Վասնզի արժան իսկ
էր զօձիս պատառել 'ի մեծամեծ չարութեանն զոր գոր-
ծելոց էր յայսմ տեղւոջ։ Այս առակքն տերունեան
յոյժ հանդիպեցան ճշմարտութեամբ. "Ոչ ոք արկա-
նէ գինի 'ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինի
նոր զտիկս հինս,,. յորս սակաւիկ մի կաթեաց զօրու-
թիւն ուժոյ՝ սակաւիկ գինի նորոյ, և անդրէն հին տիկ-
քըն յերկուս հերձաւ։ Իսկ արդ զինչ ինչ մեծ ասաց.
որդւոյ մարդոյ նստել ընդ աջմէ Աստուծոյ ասաց։ Ո՛
հնացեալ կուրութեանն, որ ոչ ամենեւին և առ ոտս
անգամ տեսանեն. զօրհանապազ սաղմոսարանն երգէ.
"Աստ տէր ցտէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ
եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց,,։ Ոչ ե-
թէ զնստեալն յարուցանելով հրամայէ անդրէն նստել,
այլ զձեւն նստելն ածէ 'ի նստուցանել, և ոչ զեղեալ
թշնամին կրկնէ անդրէն դնելով զայլաձեւ եղեալսն,
որ իբրեւ զքեզզ է ընդդիմացեալ, դնէ պատուանդան
ոտից նորա։ Այս եթէ դժուար թուիցի քեզ մարդոյ որ-
դի Աստուծոյն լինել, ընդէ՞ր ոչ յառաջագոյն պատառե-
ցեր, յորժամ լուար 'ի Հոգւոյն սրբոյ 'ի ձեռն Մով-
սիսի "Որդի իմ անդրանիկ Իսրայէլ, արձակեա զի ե-
կեսցէ պաշտեսցէ զիմ պաշտօնն,,. ապա թէ ոչ՝ սպա-
նանեմ զորդին քո զանդրանիկ։ Արդ վասն քո կամիմ
եթէ սպանանէ Աստուած զորդի զանդրանիկ զթագա-
ւորին եգիպտացւոց, զի դու լիցիս որդի անդրանիկ Աս-
տուծոյ. և դու հայհոյեսս և սպանանես զմիածին որ-
դիդ Աստուծոյ, և բարկացեալ ես եթէ ընդէ՞ր նստու-
ցանէ ընդ աջմէ իւրմէ։

Այս ընդդիմութիւն և ընդ դիւաց ամբարշտու-
թեամբքն զանց առնէ, պատերազմ տայ ընդ Աստու-
ծոյ և ընդ մարդկան և ընդ սուրբ Հոգւոյն միանգա-
մայն, որ ասաց ցիս տէր. "Որդի իմ ես դու, ես այսօր
ծնայ զքեզ,,։ Այս անդէն զիշխանութիւնն 'ի ձեռս տայ,
ոչ միայն 'ի վերայ ազգին յորմէ ծնանի, այլ ամենայն
հեթանոսաց 'ի ծագաց մինչեւ 'ի ծագս երկրի։ Արդ
որովհետեւ ատեցեր և մերժեցեր զխաղաղութիւնն 'ի

բաց 'ի քէն, խումբ առեալ աշխարհական պատերազ-
մաւ 'ի վերայ երկրի, զոր յառաջագոյն իսկ նշանակէիր
դու 'ի հարկանել փողոյն 'ի գլուխս ամենց և 'ի շաբաթս
քո և 'ի լրմունս և 'ի պակասութեան լուսնի և յամե-
նայն տօնս երեւելիս քո, յայտ է եթէ 'ի սկզբանէ 'ի
մարտ պատերազմի մտեալ էիր ընդ իս։ Զոր որ ընդ
ամենայն երեւելիս կռուէիր, ամենեքեան ընդ քեզ
տայցեն պատերազմ. փողն լռեսցէ, շաբաթն լուծցի,
լրմունք լուսնին քեզ յերկրի հեթանոսաց երեւեսցին,
երեւմունք հրեշտակաց քեզ այլ մի հանդիպեսցին։
վասն զի ամենայնքս 'ի վերայ քո հեղեալ էին 'ի պատիւ
և 'ի փառս մեծարանաց։ Զոր Հոգին սուրբ ելցէ և
գնասցէ 'ի քէն, զի այլ մարգարէ 'ի միջի քում մի մար-
գարէասցի. որովհետեւ ասացեր թէ հայհոյեաց, և իշ-
խեցեր զայդ ասել, ամենեքեան քում սուտ բանիցդ ե-
տուն վկայութիւն թէ մահապարտ է։

Իսկ արդ որոյ մահապարտի, ով նզովեալք, կռուփս
հանեն և ընդ երեսս թքանեն։ Կռփես զայն որ զար-
դարեաց զգլուխ քո յականս պատուականս, և թքանես
ընդ երեսս այնմ որ յարարչութեանն փչեաց 'ի քեզ
հոգի կենդանի. վասն որոյ և կոյրդ շրջի աղաղակէ յայտ-
նութեամբ ընդ փողոցս քաղաքիդ, "Որում Յիսուսն
ասեն, ասէ, նա կաւ արար թքով և ծեփեաց զաչս իմ,
հրամայեաց լուանալ 'ի Սելոմէա, և տեսանեմ,,։ Կոյրն
լուսաւորեցաւ, և դու լուսաւորդ կուրացար։ Տեսանէս,
քանզի յանդգնութիւն անհանձարիցն էր, և անհամե-
մատ համբերութիւնն Աստուծոյ, յանօրինաց կռփի, և
'ի մեղաւորաց թուք յերեսն ընդունի ազատիչն ամե-
նայնի։ Այս 'ի վեր է քան զբնութիւն մարդկային. որ
արար զարարածս, նա միայն կարաց տանել յայսմ ա-
մենայնի։

Զարձեալ հարցանեմ զքեզ այդրէն, ով քահա-
նայապետ. ուստի՞ ետուր զարծաթն մատնչին. ո՞չ յա-
ռաջ ասացի քեզ թէ մի՞ տար. ոչ երբեք գնի արծա-
թոյ արիւն արդար. ահա այժմ այդրէն 'ի քեզ ըն-
դունիս զերկոսեանն։

Իբրեւ ետես Յուդա եթէ մատնեաց զՏէր 'ի դա-
տաստան մահու՝ յոյժ զղջացաւ, և դարձոյց զարծաթն
առ քահանայապետսն և առ ծերս ժողովրդեանն և

ասէ. մեղայ զի մատնեցի զարիւն արդար։ Եւ նոքա ասեն. մեզ չէ փոյթ, դու գիտես. և նա ընկէց զարծաթն 'ի տաճարն, և ինքն գնաց 'ի խեղդ արկ և մեռաւ։

Ո՛վ Յուդա, քանի՛ չար եղեւ քեզ թողուլ զՀիշատիտ վարդապետն քո, որ ուսուցանէր քեզ զգնացս արդարութեան և զիւօսս ստուգութեան. ո՞վ ուսոյց քեզ զյետս ընդդէմ խոստովանութիւն։ Մեղայ, ասէ, զի մատնեցի զարիւն արդար։ Հշակերտ որդւոյ մարդոյ էիր, զվարդապետութիւնն յերկնէ և յերկրէ ուսանէիր, զնշանագործութիւնս զՀոգւոյն սրբոյ տեսանէիր, որդի զդա Աստուծոյ գիտէիր. և այժմ ասես՝ մեղայ զի մատնեցի զարիւն արդար։ Ո՞վ երբեք յարդարոց ասատեաց ծովու և դադարեցին ալիք նորա. կամ յորո՞ մարգարէի դեւքն հնազանդեցան երբեք, որպէս յանուն Յիսուսի Քրիստոսի 'ի ձեռն Եօթանասնից։ Քան ասացեր եթէ զարիւն արդար մատնեցի, ընդէ՞ր ոչ ասացեր եթէ զորդին Աստուծոյ մատնեցի. թող ամաչեցեալ լիներ Անանա և Սայիափա առաջի ամենայն ժողովրդեանդ։ Քան առ քահանայսդ բերեր զարծաթդ, ընդէ՞ր առ Պիղատոս ոչ տարար. քան 'ի մէջ տաճարիդ ընկեցեր, ընդէ՞ր ո՞չ ընկեցեր զայդ 'ի յատենական դատաստանիդ. թող կոչէր դատաւորն զամենայն պատուական ժողովրդեանն, և յանդիմանեալ կշտամբէր զքահանայապետսն՝ եթէ զայր անմեղ արծաթոյ գնէք և սուտ բանիւք դատապարտէք, և կցո՞ղդ առնէք զիս ամբաստութեանդ ձերոյ։ Դարձեալ՝ քան չոքար 'ի տուն և խեղդեցար, ընթացեալ քո քեզէն առ դատաւորն Հիշ առեալ և զաղաղակ բարձեալ՝ ասելով առաջի ամենայն բազմութեանդ զմեծամեծսն և զաքանչելիսն զոր գործէր վարդապետն քո։ Եւ եթէ այնպէս ոչ լսէին բանիցն քոց, կացեալ ի՞ցիւ քո առաջի խաչին, և խաչելոյն առաջի ասացեալ՝ թէ մեղայ զի մատնեցի զարիւն արդար։ Որ հայրն էր զթութեանց և տէր ողորմութեանց, որ ամենեւին է փրկիչ և ամենայնի կեցուցիչ, որ ոչ եկն դատապարտել զմարդիկ, այլ արդարացուցանել և շնորհել զյանցանս իւրաքանչիւր որ դառնան առ խաչեցեալն։ Ա՛խ էին մեղքն քո մեծ քան զգթութիւնն Աստուծոյ, որ 'ի ձայն բարձր աղաղակեր և ասէր. ամենայն որ ծարաւի է՝ եկեսցէ առ իս, և արբ-

ցէ յինէն զքուրն կենդանի, միանգամայն 'ի թողութիւն և յանմահութիւն։ Ոչ ապաքէն զմեծ արիւնն իւր վասն մեծ մեղաց աշխարհի հեղու յերկիր, և նովին սուրբ արեամբն գներ զմեռեալս և զկենդանիս. համարեա թէ դու մի 'ի նոցանէ էիր։ Որ զամենայն կարէր առնել, քեզ միայն չհամարեցար բաւական 'ի փրկութիւն. յայտ է եթէ որ զառաջին մարդն յանցոյց, նոյն նա քեզ զգեցոյց զնորոգենի կուրութիւնդ. որում ոչ ծագեաց նշոյլ շնորհի որդւոյն Աստուծոյ յոգիս մոլորեալդ, վասն որոյ և ընդ վայր հարար, և զհեզ-ամենուկ դառնութիւն ժառանգեցեր։

Այպա յիրաւի ուրեմն սուրբ Հոգին ողբ առեալ 'ի բերանոյ Դաւթի ասէ. "Աստուած օրհնութեան իմոյ մի լռեր. զի բերան մեղաւորի, բերան նենգաւորի բացաւ 'ի վերայ իմ. խօսեցան զինէն 'ի լեզուս նենգաւորս, և բանիւ ատելութեան զիս պատարեցին. մարտեան ընդիս 'ի տարասպարտուց, այլ ես յաղօթս կայի"։ Ընդ ամենայն սաղմոս այս՝ չարութեամբ և անիծիւք 'ի վերայ մատնչին ասացաւ, զոր մեծաւ համբերութեամբ Տէր 'ի խաչելութեանն կատարեաց։ Այս վասն զի զանպատճառն մեղաց 'ի մահ դատապարտեաց, կատարեցաւ 'ի վերայ նորա բանն, "Որ հայհոյեսցէ, ասէ, զՀոգին սուրբ, ոչ թողցի նմա յայսմ աշխարհի և մի 'ի հանդերձելումն"։ որպէս և եղեւ իսկ 'ի վերայ նորա։ Դանդի և աշակերտակիցքն բարկացեալ էին և քահանայքն ցասուցեալ և ընտանիքն իւր ոստուցեալ. ոչ ոք փոյթ արար ինդրել զանգիւտ կորուստ նորա, և ոչ ոք ինքոյց զնա 'ի չարաչար կախաղանէն. ուռաւ փոր նորա, և հեղաւ որովայն նորա, և ցրուեցան ամենայն ոսկերք նորա 'ի դժոխս. իբրեւ զշուն մեռաւ, և իբրեւ զդէշ քարշեցաւ. ել սին 'ի վաստակոյն, և ընկեցաւ անուն նորա 'ի դպրութենէ կենաց։

Իսկ քահանայապետք և ծերք ժողովրդեանն առին զարծաթն և ասեն. Ոչ է արժան զայդ ունել 'ի գանձս, զի գինք արեան են. խորհեցան և գնեցին զդաշտակն բրտի։ Ո՛վ մեծի անմտութեան քահանայից. տալ արժան էր զարծաթդ 'ի տաճարէ այտի, և ընդունել չէր արժան. ոչ այժմ պղծեցաւ արծաթդ, այլ յառաջագոյն բազում ժամանակաւք՝ յաւուրց անտի Երեմիայի

մարգարէի. "Ա՛ռի, ասէ, զերեսուն արծաթին զգինս վաճառելոյն զոր գնեցի յորդւոցն Իսրայէլի, ետու զնա 'ի գինս ագարակի բրտի,,: Օ՛ի մի՛ կարծիցէք եթէ մարդոյ է տեսութիւնս, ասէ՞ մարգարէն. "Որպէս և հրաման ետ ինձ տէր,,: Ա՛հաւասիկ երեւիք դուք եթէ ծնունդք էք սատանայի, զի զգործսն չՀօր ձերոյ կատարէք հանապազ: Ա՛րդ ոչ եթէ արծաթդ պիղծ է, այլ դուք պղծեցիք զսրբութիւն արծաթոյդ:

Պիղծ էր Պողիադ այլազգի, և պիղծ զինուք կամէր կոտորել զԻսրայէլ. իսկ Ա՛ստուած 'ի ձեռն Դաւթի կործանեաց զՀպարտութիւն նորա, յորում քնակեալ էր սատանայ, և նորուն զինուն եհատ զգլուխ հսկային. և զսուրն որով եհատ, ոչ միայն պիղծ չՀամարեցաւ, այլ և յոյժ սուրբ, և ետ զնա ցԱ՛բիաթար քահանայապետ. և նա առեալ եդ 'ի պահեստի ընդ սեղանովն, Ա՛ստուծոյ նուիրեալ զյաղթութիւնն և ոչ մարդոյ. և սեղանն ոչ պղծեցաւ: Այ շինեաց Սողոմոն զտաճարն, ոչ զօրութեամբ հեթանոսական մտիւքն, և օգնականութեամբն Խիրանայ կռապաշտի, ուստի և Յեղաբէլ նզովեալ մոլորեցոյց զԻսրայէլ: Դարձեալ ուստի՞ նորոգեաց Օ՛օրաբաբէլ զգոյն տաճարին. իբրու յայտնի է ամենեցուն: Դանզի 'ի գալատեանն դարձին իւրեանց՝ հարին զաղգս բազումս, և աւարօք գերութեանն կազմեցին զաւեր տաճարին, զոր և մեծ մարգարէն Ագդէաս յանդիման բարբառի. "Ազիցին փառք տանս այսորիկ, ասէ, մեծ վերջինս քան զառաջինն,,: Այ զի՞ պիղծ համարիցին զկապուտ դիականցն անկելոց, ասէ՞ Օ՛աքարիա. "Այ եղիցի յաւուր յայնմիկ որ 'ի վերայ սանձաց ձիոցն 'ի սրբութիւն տեառն,,. որ կատարեցաւ գործով 'ի վերայ Յրուսաղէմի 'ի հարկանել երկոտասան բիւրուցն յաւուրս Յեսուայ յովսեդեկեանցն քահանայի մեծի, և Օ՛օրաբաբէլի սաղաթիէլեանց:

Ա՛ստ ոչ եթէ զարծաթդ չէ արժան ընդունել 'ի գանձն, այլ զձեզ հանել յամենասուրբ տաճարէդ. որ ոչ միայն զարծաթ դորա պղծեցէք, այլ և զօրէնս Մ՛ովսէսի՝ չընդունելով զկատարիչ օրինացն. վասն այսորիկ ամբաստանեն զձէնջ ոչ միայն սպասք տաճարիդ, այլ և երկինք և երկիր ամենայն զարդուք իւրեանց:

«Եւ առեալ ածէն, ասէ, զՅիսուս 'ի վանացն Կայիափայ կապանօք առ Պիղատոս. և նոքա ոչ մտին 'ի ներքս, զի մի պղծեսցին»։ Ո՞ւր իցէ սրբութիւն ձեր, ո՛վ քահանայք. զսուրբ տաճարն 'ի գինս վաճառելոյն պղծեցէք. զանձինս ձեր և զամենեցուն՝ որ մերձ են առ ձեզ, յանձնառութեամբ սուրբ արեանդ պղծեցէք. արդ ընդ՞ի ոչ մտանէք յատենատունդ։ Եթէ արդարութեամբ լինի դատաստանդ, դա ոչ արժանի մահու գտանի, և դուք ապրեալ լինիք յարդար արենէդ. իսկ տեղիդ զորոյ յատակ այդր սուրբ գարշապարքդ կոխեցին, եթէ յառաջադոյն ինչ ունէր զաղտ անիրաւութեան, 'ի ձեռն արդար դատաստանիդ սրբեալ և մաքրեալ լինի ամենայն տունդ ատենիւդ հանդերձ։ Այլ եթէ 'ի դատաւորէդ ինչ խորշիք իբրեւ յանթլփատ հեթանոսէ, ահաւադիկ դա առ ձեզ արտաքս ելանէ, մերձ առ ձեզ կալով առանց միջնորդի խօսի ընդ կարծեցեալ սուրբ քահանայապետդ։ Այլ թուի ինձ՝ թէ յորմէ դուք խորշիք, դորա յառաջադոյն իմացեալ է ոչ միայն զպղծութիւնդ ձեր, այլ և զմեծդ անիրաւութիւն. քանզի և գիտաց իսկ՝ եթէ առ նախանձու մատնեցին զնա, վասն որոյ կրկնէ և երեքկնէ և բազում անգամ հարցանէ. Զի՞նչ ինչ չարիս գործեալ է, ասէ, զի ածէք մատուցէք զսա 'ի մահ դատաստանի։ Իսկ իբրեւ ոչ գտանէին ամենեւին տեղի պատասխանատուութեան, խռովութեան իմն մեծի պարտ առնէին 'ի Գալիլէէ մինչեւ ցՅրուսաղէմ. դարձեալ և թագաւորութեան զրպարտութիւն 'ի վերայ դնէին։

Իբրեւ ետես, ասէ, Պիղատոս՝ եթէ ինքեանք ոչ մտանեն, ինքն էլ առ նոսա. և սոգտանելով զնոսա 'ի միտս իւր՝ ասէ. Ո՛վ, գիտեմ զի քահանայք էք և քահանայապետք, ոչ երբէք գիտէք սուտ խօսել, քանզի սուրբ էք. և 'ի ներքս անգամ առ իս ոչ մտէք, զի մի պղծիցիք. արդ ասացէք ցիս՝ զի՞նչ չարիս գործեալ է նորա, զի թողէք զուրախութիւն պատուական տօնիդ ձերոյ, և իբրեւ արդարութեան նախանձորդք վրէժխնդիր էք, իբրեւ թէ չարագործի. զրով տուք ինձ զառն ամբաստանութիւն, զի ըստ գործոց նորա զդատաստանն հատուցից։ Ա՛մեն ամենեքեան միաբան. Ո՞ւր

զիտեմք, զի մահապարտ է ըստ օրինաց մերոց։ Բար-
կացաւ դատաւորն և ասէ. Այուի ինձ՝ եթէ ՀՀմարտա-
տեացք ումանք էք դուք. զիարդ կարեմ ես զայր անմեղ
առանց յանցանաց սպանանել. արդ առէք և ըստ օրի-
նաց ձերոց որպէս և սովոր էք՝ դատեցարուք։ Պատաս-
խանի ետուն քահանայապետքն և ասեն. Մեք հրա-
ման ունիմք յօրինաց մերոց չսպանանել զոք։ Ասէ դա-
տաւորն. Այլ ես երկնչիմ յօրինաց հռոմայեցւոց առանց
յանցանաց դատել զարդար ոք։ Ասեն քահանայապետ-
քըն. Մեք վկայեմք՝ եթէ մահապարտ է, քանզի խռո-
վիչ է և զանձն իւր 'ի թագաւորութիւն մատուցանէ։
Ասէ դարձեալ դատաւորն. Որպիսի՞ խռովիչ. յափշտա-
կող իբրեւ զաւազակ, թէ բռնութեամբ իբրեւ զթա-
գաւոր, թէ յափշտակող և աւարառու. յորմէ՞ լերին
ընակեալ էր, և զո՞ր ՀՀանապարհս պաշարէր, և զո՞'ի Հա-
նապարհորդաց կողոպտեաց, և կամ զո՞ր գաւառ հի-
նեալ աւարեաց. զինչ շատ տարաւ 'ի գերութիւն, ըզ-
մարդիկ եթէ զանասուն. ածէք զմնացեալ ոք յընակե-
րաց գերելոցն, զի և 'ի նոցանէն ես ՀՀմարտեցիկ. և
եթէ զգանձս ուրուք ա՛ռ բռնաբար, ընդէ՞ր յառաջա-
գոյն ինձ ոչ բողոքեցէք. և եթէ որպէս ասէքդ՝ թէ
թագաւորութեամբ խռովէ զմեզ և հանէ 'ի հարկաց
կայսեր, ցուցէք ինձ ո՞վ են սպասաւորք դորա, և կամ
քանի՞ զինուոր ունի, և որպիսի՞ սպասաւորութիւն զի-
նուց, որով կարէ զգէմ ունել հռոմայեցւոց՝ հանելով
զձեզ 'ի ծառայութենէ կայսեր, որպէս ասացէքդ։

Լսբրեւ տեսին քահանայքն թէ յանենայն կողմանց
ած և արդելեաց զնոսա յանպատասխանատուութիւն,
սկսան լսբենի զիմաք խօսել ընդ դատաւորին և ասեն.
Ո՛վ քաջ դատաւոր, ընդէ՞ր ոչ հաւատաս արդարոցս.
դու իբրեւ զմեզ տեսեր յատենիս, չէր արժան քեզ
այդպիսի բանիւք բաղում քննութիւնս առնել, այլ
միայն հաւատալ մեզ, և զինչ ասեմք՝ վաղվաղակի կա-
տարել։ Լսբրեւ զայն լուաւ Պիղատոս, ստգտանէր զան-
մտութիւն պատասխանեացն նոցա, դարձուցեալ ընդ մի-
տրս իւր զքահանայապետն։ Լսմուտ անդրէն Պիղատոս
առ Յիսուս և ասէ. Ասդարեա՛ դո՛ւ ես թագաւորն
Հրէից։ Լստ պատասխանի Յիսուս և ասէ. Դոյո՞վ
բանիւ խօսիս դու ցիս զայդ, եթէ այլ ոք եղ քեզ բանս

'ի բերանդ։ Ասէ Պիղատոս. Այս ոչ հրեայ եմ. ազգաս տոհմն քո մատնեաց զքեզ 'ի ձեռս իմ, ի՞նչ արարեալ է քո նոցա։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Աբքայ եմ իսկ արդարեւ, ո՛վ դատաւոր, այլ ոչ յայսմ աշխարհէ։ Ասէ դատաւորն. Թէ այդպէս է, Թագաւոր ոմն ես դու։

Այլ եւ անդրէն Պիղատոս առ Հրեայսն և ասէ ցնոսա. Գիտասջիք ամենեքեան, զի ես և ոչ մի ինչ պատճառս մահու կարեմ 'ի վերայ նորա գտանել. է ձեր սովորութիւն՝ մի օր 'ի կապելոց արձակել 'ի տօնի աստ. կամիք զի արձակեցից ձեզ զարքայդ Հրէից։ Հասարակ զաղաղակ բարձին ասելով. Մի՛ զդա, մի՛ զդա, այլ արձակեա մեզ զորդի Աբբայ։ Այլ էր այն որդի Աբբեայն աւազակ մի։ Իբրեւ զայն լուաւ Պիղատոս, յոյժ տըրտմեցաւ ընդ կատաղութիւն ժողովրդեան։ Յամենայնի, ասէ, տեսանեմ զձեզ վրիպեալս 'ի Հնմարտութենէն. խռովութենապարտ արարէք, և ոչ մի ինչ բան գտաստս 'ի վերայ կարացէք դնել. Թագաւորութեան անուամբ հայհոյեցէք, և զգործ իշխանութեան ինձ ոչ ցուցէք։ Օ՜այս այր մի աւազակ՝ որ 'ի բաղում ժամանակաց բազում չարիս գործէր, որ 'ի դաշտի զՀանապարհս պաշարէր, զմարդիկ կոտորէր, զուղեգնացս խափանէր, ըզտուարածս 'ի լերանց հալածէր, Հանապարհաց հատս առնէր, 'ի շէնս զորմն ծակոտէր, և զմեծատանց դանձս տանէր, զաղքատս անողորմն լացուցանէր, Աստուծոյ չերկնչէր և 'ի մարդկանէ չամաչէր, 'ի դատաւորաց չպատկառէր, 'ի տանջանաց չզանգիտէր, 'ի տուգանաց չակնածէր, յամենայն պղծութիւնս խառնէր, զամենայն չարիս գործէր, և ես 'ի բազում ժամանակաց 'ի խընդիր էի, և մեծաւ Հնութեամբ Հազիւ ըմբռնեցի, արդարաժա՞ն էր ձեզ զայսպիսի այր յայսմ տօնի խնդրել։

Այսուն պատասխանի քահանայապետքն և ասեն. Ա՜ան զի մեծ է տօնս, կամիմք զի մեծամեղ այր ապրեալ լեցի 'ի մեծի տօնիս։ Այս պատասխանի Պիղատոս քահանայապետիցն և ասէ. Որովհետեւ այդչափ մարդասէրք էք և զմեծամեղի փրկութիւն խնդրէք 'ի մեծի տօնիս, արձակեցից ձեզ զՔրիստոսն. որպէս դուք ասէք՝ նա է մեծամեղ քան զամենեսեան։ Օ՜այս լուեալ հիացան ամենեքեան, և ոչ գտան պատասխա-

Digitized by Google

նիք՝ի բերանս նոցա. յուզեցին զամբոխս բազմութեանն, ՝ի ձայն բարձր աղաղակեցին և ասեն. Մի զդա, մի զդա, այլ արձակեա մեզ զորդի Աբբայ։ Իսկ դարձեալ Պիղատոս. Իսկ զի՞ արարիս զարքայն Հրէից։ Նոքա նորովին բարբառով եւս սնդագոյն քան զառաջինն ասէին. Խարձ՝ի մէնջ և հան՝ի խաչ։

Եւ մինչ դեռ անդէն յատենին էր դատաւորն, առաքեաց առ նա կինն իւր և ասէ. Ոչկայ ինչ քո և արդարոյդ այդորիկ, քանզի բազում անցք անցին ընդ իս յայսմ գիշերի վասն դորա։ Առաքեաց դատաւորն անդրէն առ կինն և ասէ. Այս զի՞ առնեմ, բանից բան տամ քահանայապետից, և պատասխանեաց պատասխանի կարեմ դարձուցանել քահանայիցս. իսկ աղաղակի բազմութեանս ես ոչ կարեմ կալ առաջի. ոչ միայն օգնել ոչ կարեմ առնս այսմիկ, այլ և յանձնէ յոյժ երկնչիմ, եթէ գուցէ յակամայ խառնեցայց յարիւն արդար. դու՝ի տեսլեան գիշերոյ զարմացեալ և զարհուրեալ ես ընդ արդարութիւն սորա. բայց ես՝ի տուրընջեան իսկ զահի հարեալ եմ յերեսաց սորա։ Օ՛ի որպէս առաւել է մարդ քան զստուեր անձին իւրոյ, այնչափ առաւել է երեւումն տեսլեան սորա քան զարհաւիրս գիշերայինս։

Արդ իբրեւ ետես դատաւորն եթէ ամենայն բազմութիւնն միաբան աղաղակեն ասելով՝՝ի խաչ հան, և եթէ՝ի նա եւս ձգեն զբանս հայհոյութեան վասն արքունի իրաց, վաղվաղակի ջուր խնդրեաց և լուաց ըզձեռսն, և զանձն իւր՝ի բաց թօթափեաց առաջի ամենայն բազմութեան՝ ասելով՝՝ի ամենայն՝ ասելով՝՝ յանդիման քահանայիցն և քահանայապետիցն. Պիտասջիք, ով Հրէայք, քաւեալ եմ ես յարենէդ յայդմանէ, զոր դուքն կամիք՝՝ի տարապարտուց հեղուլ։ Եւ նոքա միաբան յանձն առին։ Արիւն դորա, ասեն, թէ արդարոյ է՝՝ի գլուխս մեր, և եթէ մեղաւորի է՝՝ի գլուխս մեր և որդւոց մերոց, և թէ որդւոյ Աստուծոյ՝՝ի մեր և յորդւոց մերոց և յորդիս որդւոց մերոց։ Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբա զորդի Աբբեայ, և զՅիսուս կալեալ ետ՝՝ի ձեռս նոցա, զի՝՝ի խաչ հանիցեն։

Ո՛վ անբաւ բարերարութեանն Աստուծոյ և անկշիռ մեծութեան սիրոյ նորա, որ քան զմիտս և զխորհուրդս անցանէ, ոչ միայն քան զիմաստնոց մարդկան, այլ և

Digitized by Google

քան զվերին զուարթնոցն։ Զմենայն որ հերկեն զերկիր, զայլոց մարմին կակղեն, և զարտաքին սերմանեացն մնուցանեն զբոյսս. իսկ Յիսուս երկնայինն երկրացաւ, և կամաք եկն 'ի հերկումն և 'ի կակղումն, և յիւր մարմինն եբարձ զամենայն չարութեան մերոյ սերմանիս։ Խսուրբ երեսս ընկալաւ թուք պիղծ 'ի պիղծ և 'ի հայհոյիչ բերանոց. և որ ամենասուրբ թքովն եբաց զաչս կուրութեան մարմնոց և զոգւոց մերոց, ընկալաւ ապտակ 'ի ծառայէն ծառայից, և յապտակաց անարեւոյթ հարուածոցն զերծոյց. ետ զինքն յապտակս՝ որ էրն ազատ և ազատիչ ամենեցուն, զի իւրով ազատութեամբն ազատեսցէ զմեզ 'ի ծառայութենէն. որում կամաք տուաք զանձինս յանարժան ծառայութիւն, և նովին կամաք փշաբոյս արարաք ոչ միայն զերկիր՝ այլ և զմարմինս մեր, մանաւանդ թէ և զհոգի առաւել քան զմարմին, խլեաց արմատաքի զբոյսս չարաչար փշոց մերոց. և ոչ եթող աստէն յերկրի, այլ բոլորեաց կազմեաց զօրէն պատուական պսակի, և եդաւ 'ի գլուխ։

Ո՛վ քանի է չարութիւն մարդկան, և կամ ո՛րչափ բարերարութիւն Աստուծոյ. այն որ պսակեաց զքահանայսն յոսկի և 'ի զմրուխտ և յայլ բազում ականս պատուականս, և զարդարեաց զնոսա 'ի զարդ ոսկեհուռն պճղնաւոր, և 'ի զանգակաձայն հնչումն, և 'ի զարմացումն վկասին, փոխանակ այսր ամենայնի տեսանեմ զձախողակի հատուցումն. զի ոչ միայն պսակ 'ի փշոց եղէն 'ի գլուխս նորա, այլ և եղէգն ձաղանաց յաջոյ ձեռին նորա։ Խայց յոյժ առաւել զարմանամ ընդ այս իրս, զիա՞րդ իցէ եղէգն ձաղանաց. թուի ինձ թէ ոչ այսօր բուսաւ եղէգնս այս, այլ յաւուրց անտի Խսայեայ մարգարէի. "Ո՞րպէս աղօտ աղօտ, ասէ, մի՛ շիջցի. և եղէգն ջախջախեալ մի՛ բեկցի, մինչեւ հանցէ 'ի դատաստան զիրաւունս արդարութեան"։ Խյս յայտնի է ամենեցուն. լուսով ատեանք ուղղին և եղեգամբ զիր հաստատի։ Իսկ արդ եթէ ճրագ աղօտ աղօտ էր Յովհաննէս, որպէս և էր իսկ ճշմարիտ, որչափ նոցա գալ էր՝ փութացան շիջուցանել. այլ նա առաւել քան զճառագայթս արեգականն բացափայլ արձակէր զնշոյլ լուսոյ իւրոյ։ Զարդ բարիոք կատարէք զկանխագիր բանս մարգարէիցն ձերոց, այլ չարաչար ընդունիք զվճիռ դա-

տաստանի յանձինս ձեր։ Լղեգամբ մարդիկ գրին և արձակին յաղատութիւն 'ի չարաչար ծառայութենէ. իսկ դուք աւադիկ երկրաբոյս եղեգամբ աստուածային ձեռամբն անջինջ դեղով գրիք և արձակիք յերկնաւոր սղատութենէն 'ի սատանայական ծառայութիւնն. ապա յիրաւի ուրեմն առնուք զեղեգն 'ի ձեռանէ դորա և հարկանիք զգլուխ դորա. զի երեւեսցի եթէ անձամբ զանձինս հրաժարեցուցանէք 'ի գլխոյդ յայդմանէ, որ պսակելոց է զամենայն սուրբս յանթառամ պսակ արքայութեանն։

"Ղարձեալ, ասէ, մատուցին նմա գինի ընդ լեղի խառնեալ. Ճաշակեաց և ոչ կամէր ըմպել,,։ Լու այս եւս առաւել մեծի սիրոյն երեւի տեղի. այգին զոր փոխեաց Յգիպտոսէ, բազում այգիս խլեաց 'ի Ղանան և զնոսա տնկեաց, պարսպեաց օրինօք և ամրացոյց մարգարէիւք. կացոյց նմա թագաւորս վերակացուս, և առաջնորդս քահանայս և քահանայապետս, ուխտս և պատարագս, նուէրս աստուածայինս 'ի տուէ և 'ի գիշերի։ Լին տէր այգւոյն 'ի ժամ պտղոյն ընդունել 'ի նոցանէ զՃաշակս վայելչութեան գինւոյն. գինին զբնութիւն անուշութեանն ոչ փոխեաց, քանզի աստուածային աջոյն էր տնկեալ զայգին։ Լեղի 'ի գինի անդր խառնեալ տային ըմպել։ Լեղին կատարեալ դառնութիւն է. այս բերբ ոչ աստուածային տնկոյն են, այլ գիւտք չարասէր մարդոց և նախանձոտ կամաց, որք զանխառն զանգանել կամին և 'ի սուրբ բնութիւն գործոյն Աստուծոյ զիւրեանց դառնութիւն մեղայն խառնել կամեցան։ Ո այս աստուածութիւնն քեզ յանձն ոչ առնու. քանզի ոչ եթէ սակաւ մի խառնեցին զլեղին, այլ այնչափ թանձրացուցին, զոր և մարգարէն Դաւիթ յառաջագոյն ասէր ողբալով. "Լտուն 'ի կերակուր ինձ լեղի, և 'ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ,,։ Որովհետեւ առատ էք 'ի չարութիւնս և կապեալք 'ի բարեգործութենէ, զայդ կամ ձեր ոչ կատարեցից։ "Ճաշակեաց և ոչ կամէր ըմպել,,։ Ղանզի նոքա այնպէս կամէին եթէ հնար ինչ իցէ՝ յոյժ կերիցէ զլեղին, և առաւել յոյժ արբցէ զքացախն։ Լու եթէ ոք ասիցէ, ուստի՞ գիտես զկամն աներեւոյթս, մանաւանդ և զանգրեալսն, 'ի պատրաստութենէ անտի խմացիր. ոմ՞ արդեօք երբ

բեք 'ի մարդկանէ գտան 'ի ժամ մահուն լեղի և քաղցախ 'ի միխիթարութիւն. բայց միայն այսոցիկ՝ որոց աւագնորդ և վարդապետ էր հայր նոցա սատանայ. որք ընդ նմին իսկ ժառանգելոց են զպատրաստեալ տեղին երկոցունց կողմանցն։

Ելոյ Խարաբբայն զոր արդարագոյն համարեցան, չնորհեցաւ նոցա արձակել 'ի դատաւորէն, և այլ եւս չարս երկուս աւազակս, որոց էին գործք իւրեանց չարութեամբ և դժնդակագոյնք քան զամենայն մահապարտաց, որ յայնմ ժամանակի պահէին 'ի բանդի դատաւորին, և 'ի նմին աւուր դիպեցան 'ի խաչելութեանն Քրիստոսի, մի ընդ աջմէ և միւսն ընդ ահեկէ նորա. զի մի՛ և մի բան 'ի կանխագիր մարգարէութենէ անտի ոչ վրիպեսցի։

Եւ երթային զհետ նորա բազմութիւն արանց և կանանց, քահանայից և քահանայապետաց մեկնիչք օրինացն և ծերք ժողովրդեանն, ակամատեսք լինել փութային մահու անարգանաց կենարարին իւրեանց. և յոյժ խնդութիւն էր 'ի միտսին մոլորելոցն, եթէ 'ի մէջ աւազակացն խաչեսցի, հայհոյեալ յերկրէ և դատապարտեալ յերկինս։ Քանզի ունին մարդիկ բարս բընութեան. յորժամ տեսանեն զոք 'ի մեծի թշուառութեան և 'ի հարուածս չարչարանաց և 'ի ձաղանս անարգութեան մահու, կարծեն ամբարիշտ մտաքն՝ իբրեւ յԱստուծոյ զպատիժ պատուհասին եկեալ հասեալ 'ի վերայ նորա, որոմնեալ բարկանան, և հնարին յանձանց եւս դառնութենէ յաւելուլ 'ի տանջանս պատժաւորացն։ Եւ այս անխորհրդածութիւնս ծնունդ է կայր մտաց, որ միայն զառժամայն խնամայ և զառաջիկայսն ոչ տեսանէ, որք անկեալք 'ի Հնամրտութենէ և վրիպեալք 'ի հանգերձեալ կենացն. որպէս եղեւ իսկ 'ի կենսագիւտ տեղւոջն՝ ընտրութիւնք երկոցունց կողմանցն, ոմանց 'ի վայր անկեալ, և ոմանց 'ի վեր ելանել։ Քանզի մինչ դեռ փոյթք էին 'ի հայհոյութիւն, և սրատեսիլք 'ի ձաղանս անարգանաց նորա, կամէին ըսել և զնորին զթշնամանութիւնս 'ի բերանոյ աւազակաց։ Քանզի մարդ յորժամ դառնացեալ 'ի վիշտս տանջանաց և հատեալ է յոյս կենաց նորա, մերձեալ է 'ի դուռն անդարձ մահու, մանաւանդ յայնպիսի մա-

Digitized by Google

հու՝ յորում աւաղակքն կային, ոչ ինչ պատկառի այն-
պիսին թշնամանել զդատող իւր, նա և յերկինս ձգել
հայհոյութիւն բանից։

Բայց արդ դու եկ յարեաց 'ի լուսաւոր տեղին և մեր-
ձեցիր 'ի փրկական խաչն տերունական, և տես անդ
զնոր և զչքնաղ գործսն՝ որ գործեցան։ Երիս փայտս
կանգնեալ և երիս մարդս խաչեալ՝ հատարակ կան 'ի
միում պատժի, ոչ որ քան զոք 'ի դիւրագոյն տեղւոջ,
այլ մի քան զմի 'ի դժնդակագոյն հարուածս։ Յայսմ
վայրի յոյժ զարմացեալ հիանամ, թէ ուստի գտաւ ա-
ւաղակն ջատագով ճշմարտութեանն. յայտնի ակամբ
ետես և ոչ ինչ զարմանալիս. յառաջագոյն ոչ ինչ գի-
տեր զճշմարիտ վարդապետութիւն Տեառն. յիւրոց
գործոցն՝ ունայն էր յարդար վաստակոց. իմաստութիւն
երկնային հեռի էր 'ի նմանէ, քանզի ծնունդ էր մեղայ
և սնունդ դառնութեան. այր մի որ 'ի մանկութենէ իւր-
մէ իբրեւ մոլի 'ի վայր անկեալ 'ի քաղաքէ, հեռացեալ
'ի մարդկանէ, ատեցեալ զլոյս տունջեան, և սիրեցեալ
զխաւար գիշերոյ, կցորդ էր քաղաքաւեր գողոց, և հա-
ղորդ յափշտակող աւաղակաց. խորհուրդք նենգաւորք
և գործք վատթարք, բարեկամ անարգաց և սիրելի
լիտեաց, ատելի զգաստից և զգրալի ամենայն բարե-
սէր մարդկան. որսացեալ 'ի դատաւորէն ըմբռնեցաւ
ըստ բաղում յանցանաց իւրոց. և ըստ բաղում յանցա-
նաց իւրոց կայր 'ի պատիժս մահուն։ Այս արդ զինչ
խօսի. յընկերն սաստելով և զանձն իւր դատապարտե-
լով՝ յանդիմանիչ քահանայիցն գտանի, ևս առաւել
քահանայապետիցն։ Ինձ թուի՝ եթէ զդատաւորն յոյժ
գովով, միանգամայն և զատեանն կշտամբէ և զնման-
տուն աթոռակիցս դատաւորին յամօթ առնէ։

Բայց ընկեր նորա յանկակից էր հայհոյող ժողովրդ-
դեանն, և սկսաւ հենգնելով ասել. Եթէ արդարեւ
դու ես Քրիստոսն, փրկեա զանձն քո և զմեզ ընդ քեզ։
Իսկ միւսն 'ի ձայն բարձր լու 'ի լու ամենայն ժողովրդ-
դեանն կոչել սկսաւ ընդ ընկերին և ասել. Յաստու-
ծոյ ոչ երկնչիս դու, նա և 'ի մարդկանէ արժան էր քեզ
ամաչել. մեք ըստ յետս ընդդէմ գնացիս մերոց ձախո-
ղակի զհատուցումն ընկալաք, իսկ սա ընդդէմ. զի սորա
չար ինչ ոչ էր գործեալ, և երբեք ումեք 'ի մարդկանէ

չիք մեղուցեալ։ Օ այս նորա ասելով, ամենայն բազմութիւն դատողացն ամաչեցեալ լինէր։ Եւ գոչեալ բարձրաձայն զդրէն զբանս իւր աւազակն ասէ. Տէր Յիսուս, յիշեա զիս 'ի գալստեան արքայութեան քո։ Օ անուն ոչ գիտեմ զառնս զայսմիկ, և աւազակ ամաչեմ ասել. զի վերագոյն գտանի ոչ միայն քան զբարեգործ ոք 'ի մարդկանէ, այլ և քան զյոյժ խրատեալս յօրինաց և 'ի մարդարէից։

Լաստի է քեզ այդ, ում յապշտակող. ուր կաս, զո՞ տեսանես, և ընդ ո՞ւմ խօսիս. 'ի խաչի տեսանես խաչեցեալ, և խօսիս ընդ Տեառն Յիսուսի միանգամայն և ընդ արքայի որդւոյ՝ որ իշխէ արքայութեան և բաշխէ պարգեւս ամենեցուն։ Լակ արդ զինչ տեսեր, միթէ կակղացոյց զփայտ խաչին իւրոյ առաւել քան ըզքոյդ. ո՞չ տեսանես աւազիկ փայտ չորեքկուսի 'ի վերայ վիմի կանգնեալ, զոտս և զձեռս երկաթով բեւեռեալ, անլոյծ կապանօք պնդեալ. տիգաւորք շուրջ պատեալ, քահանայք հայհոյեն, քահանայապետք դատվեն, ծերք լկտութեամբ այսն առնեն, փարիսեցիք լակտութեամբ ոտնհարեն. բազմութիւն ժողովրդեանդ 'ի ձայն բարձր աղաղակեն ասելով. Օ այս ապրեցոյց, զանձն իւր ոչ կարէ փրկել։ Լու ինքնին իսկ տեսանես եղէգն ձաղանաց և քացախ լեղի խառնեալ 'ի կերակուր և յըմպելի, զհանդերձն մերկացեալ, զպատմուճանն վիճակեալ, մերկ զփայտէ կախեալ, գլուխ 'ի փքոց պսակեալ, երեսք թքալից, և ծնօտք ապտակեալք. և դու ասես՝ յիշեա զիս 'ի գալստեան արքայութեան քում։

Լաստի արդեօք ծագեաց այնպիսի լոյս յոգիս աւազակին, յոյժ զարմացեալ եմ և սաւաւել քան զյոյժ աքանչացեալ. 'ի Լազարեթ ոչ երթեալ, ծննդեանն չէր տեղեակ, 'ի Լանա գալիլեացւոցն սորա չէր երթեալ, 'ի հարսանիսն զսա ոչ զք կոչեաց, 'ի թակոյկաբուղխն գինւոյն սորա չէր արբեալ, 'ի նկանակածին հացէն սորա չէր կերեալ, զկաւածեփ կոյսն ոչ էր տեսեալ, 'ի շամրտացի կնոջէն սորա չէր աշակերտեալ, ըզմահիճն անդամալուծին սորա չէր տեսեալ, յունայն գերեզմանն 'Լազարու սորա չէր երթեալ, զբողոք դիւացն յերկիրն Գերգեսացւոց չէր լուեալ. և զի՞ մի մի

թուեցից յանուանէ. որպէս ունայն էր անձն իւր 'ի բա-
րեգործութենէ, սոյնպէս անտես և անլուր էր յամե-
նայն նշանագործութեանց Տեառն մերոյ։ Զի փոխա-
նակ այսր ամենայնի փառաւորութեանց տեսանէր այր
մի լի անարգանօք 'ի մահու խաչին, և խոստովանէր
զնա տէր Յիսուս, որդի Աստուծոյ, և իշխան արքայու-
թեան փառաց Հօրն. աներկեայ հաւատ, անթերա-
հաւատ խնդիրք։ Վասն որոյ և լսէ անսուտ պատաս-
խանի. Զարդարեալ ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես 'ի
դրախտին։ Կարճառօտ խնդիրք և համառօտ պատաս-
խանի. բանիւ հաւատաց, բանին բան պատասխանի
լսէր. զինչ կայր իւր 'ի ժամու անդ՝ բոլոր զինքն ետեղ
առաջի Տեառն ամենայնի իբրեւ զմարդ և զաղքատ,
բայց միայն մեծացեալ հաւատովքն։ Իսկ Տէր ոչ իբրեւ
զմարդ և ոչ իբրեւ զաղքատ և իբրեւ զնախանձոտ, և ոչ
իբրեւ զկիսապարդեւ, այլ իբրեւ զբարերար առատ մե-
ծատուն անչարակնածութեամբ չնորհէ ոչ զման պար-
գեւին, այլ զամենայն զբուն զհայրենի տեղին. ոչ ուր
ծառն մահու, այլ ուր միայն ծառն կենաց. ոչ ուր ան-
ցանկ տեղին էր՝ ուր օձն սողեցաւ եմուտ, այլ զոր ինքն
Աստուած պարսպեաց 'ի սուր տեգ նիզակի իւրոյ հրեղէն
շուրջանակաւ զոր քերուբէն ինքնին պահէր. զորոյ ըզ-
ցանկն ոչ ոք կարաց յարդարոյն խրամատել, ոչ Աբրա-
համ, ոչ Սահակ, ոչ Յակովբ, ոչ Մովսէս ինքն օրի-
նօքն, և ոչ մարգարէքն քարոզութեամբքն. ոչ քահա-
նայք պատարագօք և ոչ ղեւտացիք 'ի պաշտաման իւ-
րեանց. ոչ ուխտաւորք յուխտաւորաց, ոչ հարք Հնմա-
րիտք և ոչ թագաւորք արդարք, ոչ գունդք մարտիրոս-
սաց և ոչ վիճակք Դաքելոց. մանաւանդ թէ եւս վե-
րագոյն ասացից, ոչ հրեշտակք, ոչ հրեշտակապետք,
ոչ աթոռք, ոչ տերութիւնք, ոչ պետութիւնք և ոչ իշ-
խանութիւնք զդուռն դրախտին բանալ ոչ կարացին,
բայց միայն աւազակս այս։

Յիրաւի ուրեմն ասացաւ թէ աւազակն եբաց ըզ-
դուռն դրախտին. քանզի 'ի ժամուն յայնմիկ ամենայն
արարածք 'ի սուգ տրտմութեան էին. արեգակն թա-
քուցեալ, լուսին խաւարեալ, աստեղք ծածկեալ, տիւ
հեռացեալ և գիշեր մերձեալ, վերինք զարմացեալք և
ներքինք յիմարեալք, աշակերտք փախուցեալք և ծա-

նութք հեռացեալք, բարեկամք չարախօսք և մերձաւորք թշնամանողք. ամենեցուն թողեալ՝ ամենեւին յետս կացեալք, միայն սա մերձեալ 'ի խոստովանել։ Ոչ զառ 'ի ծնողենէն սկիզբն առնէր, և ոչ 'ի մանուսուր նշանագործութենէ բաւական հարկանէր. այլ և վերանայր ըստ ախտական տեսակս և յաներեւոյթ արքայութիւնն հասանէր և ասէր. Յիշեա զիս յանչարչարելի արքայութեան 'ի քում գալստեանն։

Որ ինչ այն գալուստ, և կամ ուստի գայցէ, և կամ վասն որոյ իրաց գայ. և զիաւրդ գիտացեր դու, ով աւազակ, պատմեա մեզ. որովհետեւ ընկեր եղեր Յովսէսի, դու աւադիկ քան զՅինա 'ի վերս ամբարձար և զանմարմին տեսիլ տեսեր. Թուի ինձ թէ Հոգին սուրբ հանդիպեցաւ քեզ, և զՀայրն բոլորեցունց տեսեր դու. և զոր մեծն Պաւղոս ոչ կարաց թարգմանել մեզ ըզպատրաստեալ պարգեւսն, դու յառաջագոյն մտեր և ժառանգեցեր զայն։

Ը.յո, ասէ, այդպէս է ճշմարիտ. քանզի Տէր ինքնին ինձ առաջնորդեաց, և խոստացեալ եւս է. ոչ միայն յղեաց զիս 'ի դրախտն թէ օձն հանիցէ զիս ամուր միւսանգամ։ Այսն այսորիկ ընդ իս իցես, ասէ, 'ի ներքս 'ի դրախտին։ Ինդ իսն ասելով, ոչ ժամանակեան և ոչ անժամանակեան, այլ բնաւ հանապազորդեան. միշտ Ը.ստուած ինքն ընդ իւր, միշտ հաւատացեալ՝ ընդ նմա Ը.ստուած։

Այսն այսորիկ եկն 'ի չարչարանս, զի չարչարեցելոյն օգնական լիցի։ Ը.ռաջին պտուղն առաջին ծառոյն ըզմարդն առաջին սպան. իսկ առաջին պտուղ խաչին զառաջնորդն մահու յանձին իւրում սպան. և 'ի մեռանել մահուն՝ առաջին պտուղ աւազակն կթեցաւ 'ի զօրութենէ խաչին։ Այվ չարադեւ քահանայք, և այլ եւս այպանիցէք զխաչդ, և կամ զիսաչեալդ ձաղիցէք. մինչ կամիք ընդ անօրէնսն սպանանել զդա, յանօրինէ անտի օրինաւորքդ կշտամբեալ յանդիմանեցայք, և անօրէնն քան զօրինաւորսդ գեր 'ի վերոյ գտաւ ոչ միայն քան զձեզ, այլ և քան զօրէնսդ ձեր գլխովին։

Ա.ւ ընդէր արդեօք այսպէս. քանզի ոչ եթէ օրէնքն տկար ինչ էին, այլ դուք տկարացուցանէք զնոս չպահելով զօրէնսն, վասն զի ոչ հաւատովք էիք։ Իսկ

Digitized by Google

դա հաւատովք ետես զօրէնսն և զօրէնսդիրն։ Զօրէնս ետես, զի կարօտեալ էին հաւատոց և ոչ գտանէին. զօրէնսդիրն ետես, զի էին կատարել զօրէնսն և ոչ պակասեցուցանել. միանգամայն յառաջ մատեաւ, պատուեաց զօրէնսն հաւատովքն, քանզի խոստովանեաց 'ի տուիչ օրինացն. մեծարեաց և զօրէնսդիրն, զի ասաց նմա՝ Աստուած և որդի Աստուծոյ, բաշխիչ պարգեւաց և տէր արքայութեան։ Զի զեւ սկիզբն հաւատոց և կատարիչ օրինաց, որդի Աբրահամու և սիրելի մարգարէից, աշակերտակից առաքելոց, առաջնորդ մարտիրոսաց, ժառանգորդ արքայութեանն, դռնապան դրախտին կենաց, միանգամայն սիրիչ և սիրելի Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։

Արդ յոյժ սիրելի է ինձ քանս Գրաքելոյ զոր ասէ. "Ուր առաւել եղեն մեղքն, առաւել եղեն շնորհքն Աստուծոյ"։ Արդ զայս լսելով, եղբարք, ամենեցուն մեր միտք ճշմարիտ գիտելով ընթանան առ ազգն տեսական, 'ի զաւակն արդարոց, յերկիրն պարգեւաց՝ յանձկալի քաղաքն Երուսաղէմ, 'ի հրաշակերտ տաճարն Աստուծոյ. ուր օրէնքն աստուածատուրք և մարգարէքն հոգեկիրք, արդարք շնորհալիցք, հարքն կատարեալք և որդիք խրատեալք. ուր նշանք երկնայինք և արուեստք երկրայինք, ուր յայտնութիւնք հրեշտակաց և ընդունելութիւն պատարագաց 'ի ձեռն կենդանի Հոգւոյն սրբոյ, որով Աստուած Հանաչի ճշմարտապէս այնոցիկ՝ որոց ոգիքն սրբութեամբ համեմատեալ են ընդ Աստուծոյ։ Արդ վասն այսր ամենայնի յոյժ սիրեմ զաշխարհն, և յաշխարհին անդ զգաւառն, և 'ի գաւառի անդ զքաղաքն ընտրեալ, և 'ի քաղաքին զբարձրացեալ տեղին Գոլգոթա, և 'ի տեղւոջ անդ զեւս բարձրացեալ վէմն, և 'ի վերայ վիմին զաշխարհաձեւ խաչն, և 'ի վերայ խաչին զխաչեցեալն, որ կայր առաջի երկնաւոր տեսողացն, և էր գեր 'ի վերոյ ոչ միայն քան զբարձրութիւնս լերանց, այլ և քան զերկինս. նա եւս քան զերկինս երկնից բարձրացեալ։

Այս զի այսպէս է ճշմարիտ, հայեաց 'ի տեղին, և տես ճշմարիտ զեղեցութիւն գործոցն որ անդ կատարեցան առանց երկբայութեան։ Զանգի մերկացուցին զտէրն արարածոց, զայն որ զգեցոյց զարգուք լուսոյ զեր-

կինս, և պսակեաց զերկիր անուշահոտ ծաղկօք։ Եւ վիճակեցին զպատմուճանն զայն՝ որ առանց կշռոյ և վիճակի ետ որդւոց մարդկան զգեստ զարդուց 'ի ծովէ և 'ի ցամաքէ։ Եւ ոչ արբուցին ջուր 'ի ծարաւու այնմ որ մեծ բղխմամբ ամպոց բազմահոսան յորձանօք ոռոգանէր զամենայն երեսս երկրի. մինչեւ ասել նմա 'ի չարչարանսն, ծարաւի եմ ես։ Հաստիչն աղբերաց ծարաւի եմ ասէ. տերն Ովկիանոսի և տուիչն անձրեւաց, անկարօտն յամենայնի և լցուցիչն կարօտելոյ՝ ծարաւի եմ ասէր։ Զոյն որ 'ի սկզբան լինելութեանն այնչափ ջրայեղց գործեաց զարարածս, մինչեւ սուրբ Հոգին շրջէր 'ի վերայ ջրոց և ընդ վիհս մեծամեծս 'ի վայր հոսեցոյց զանչափ խորութիւն ծովուց, և Ցէրն այսր ամենայնի 'ի գութ սիրոյ առ իւրսն եկեալ, և յիւրոցն մեծապէս չարչարեալ և չարչարանս ընկալեալ, մինչեւ բաժակի միոյ ջրոյ կարօտեալ, ասելով ծարաւի եմ, և ոչ ոք տայր նմա ըմպել։

Ո՛ սիրտք դառնացեալք և միտք խարխարեալք և անձինք յիմարեալք. զի եթէ գոյր յումեք 'ի մեզ այսօր գութ երկնաւոր սիրոյն և տապ նորին անձկոյ, ասէաք և մեք ընդ նմա՝ ծարաւի եմք, լինելով չարչարակից մեծի տանջանաց նորա։ Եւ ոչ զի արբցուք գինի 'ի միսիթարութիւն սգոյ, այլ զի յօժարութեամբ և չարչարանօք զմահ և զձաղանս փրկչին յանձն առեալ՝ քաջութեամբ 'ի հանդէս նահատակութեան համբերութեամբ ընթացուք, և զախոյեանն կանգնեալ՝ վանեսցուք զթշնամին։ Զայլ և կարօտեսցուք բաժակի միոյ ջրոյ առ 'ի միսիթարութիւն ծարաւոյ։ Եւ զա արժանաւոր սիրողաց Քրիստոսի պարտ է ընդ սուրբ մարգարէին ձայնակից լինել. "Զենոյր ոք, ասէ, և առնէր զգլուխս իմ շտեմարանս ջրոց բազմաց և զաչս իմ աղբիւր յորդ արտասուաց,,։ Եւ զինչ առնէիր այդու ամենայնիւ, ուլ մարգարէ։ "Լ տուէ և 'ի գիշերի լայի զԼսրայել,,։ Զորդ որ յահագին անապատին բազմածով վտակս բղխեաց յանջրդի վիմէն, նոյն ինքն առանց նոցունց աշխատութեան զհետ երթայր ժողովրդեանն՝ արբուցանել զազգն ընտրեալ։ Զորդ նոյն վէմ վանն նոցուն և աստ մարդացեալ՝ ծարաւի եմ ես, ասէր։ Եւ ոչ միայն զի չտան ջուր, այլ և փոխանակ ջրոյ՝ քացախ ընդ լեղի խառնեալ մատուցանէին նմա։

Digitized by Google

Այլ կամ ոչ՝ զոր 'ի մարդկանէ ելեալ սիրտ քարեղէն կամ պղնձի մարմին՝ զայս ասելով հանդարտել արտասուաց։ Օ՜ի եթէ յանջատման սիրելեաց մերոց ցտիմք և կոծիմք, ձչեմք դառնացեալ սրտիւք, այրիմք խորովիմք 'ի գութ սիրելեաց մերոց, և ըստ մասանց մարմնոյն՝ ողբք դառնութեան ձայնս արկանեմք։ Այլ զայս առնելով ոչ զարժանն կատարեմք, քանզի զպարտն հատուցանեմք. ոչ զի ինքն է պարտական, այլ զի զմեր պարտիսն իւրովին հատուցցէ. և ոչ զի 'ի պարտեացն ապրել աղաչէր, այլ յոյժ ցամաքեալ և պասքեալ՝ ջուր խնդրէր սակաւիկ մի, լուանալ զերաշտացեալ քիմն։ Ծարաւի եմ ասէր. յականէ զոք ոչ կարդայր, զանուն ուրուք առանձին ոչ ասէր. զաղերսն 'ի մեզ անդր արկանէր, զկարօտութիւն ամենեցուն յայտնէր, զանողորմածութիւնն յամենեսեան տեսանէր։

Բանզի ճմլի սիրտս, հեղձնուն ոգիքս, փղձկին միտքս, և զխանդաղատանսն Մարիամու ոչ կարեմ ասել։ Բանզի մինչ դեռ կայր Տէրն 'ի շտապ տագնապին, մծտ առ նմա կային, ասէ, մայր նորա և քոյր մոր նորա Մարիամ մագդաղենացի և այլ եւս կանայք՝ որ յառաջագոյն հաւատացեալք էին զալստեանն որդւոյն Աստուծոյ. աչք իւրեանց տեսանէին զմեծ չարչարանսն, և ականջք իւրեանց լսէին զՀայհոյութիւնսն, մանաւանդ իբրեւ լուան 'ի բերանոյ նորա՝ թէ ծարաւի եմ։ Այլ դուք ձեզէն գիտէք զբարս բնութեան կանանց՝ որչափ խանդաղատագոյնք են յողորմածութիւն, և մանաւանդ առ սիրելի ծնունդս իւրեանց։ Իսկ արդ զինչ կարծելի է 'ի ժամուն յայնմիկ վասն կանանցն այնոցիկ. զի թէ և էր հնար գտեալ նոցա, ոչ միայն ամենով մատուցանէին նմա ջուր, այլ և յորդագնաց վտակս առ խաչիւն գործէին։ Այլ իբրեւ այսպէս ոչ էր 'ի ձեռս նոցա, զկրծից հարկանէին, զսիրտն կոծէին, 'ի միտսն ողբային, և արտասուս յորդագոյնս բզխէին, վայ անձանց կարդային, և զմահ քան զկեանս ընտրէին. մինչ դեռ կային յաշխարհի, հարեալ դիականց նմանէին։ Ա՜ սան այսր ամենայնի յառաջագոյն պատասխանի լուեալ 'ի Տեառնէ՝ զոր ողբալով ասէր 'ի վերայ ամենայն ազգին. Դատերք Երուսաղէմի, մի լայք 'ի վերայ իմ, այլ լայք 'ի վերայ անձանց և ուստերաց և դստերաց ձերոց.

Digitized by Google

զի եկեսցեն աւուրք՝ յորս ասիցեն, երանի ամլոց և ընդ-
դերաց այնոցիկ՝ որ ոչ ծնան, և ստեանցն՝ որ ոչ սնու-
ցին. յայնմ ժամանակի սկսանիցին ասել լերանց՝ թէ
անկերուք 'ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ.
զի եթէ ընդ փայտ դալար զայս արարին, իսկ ընդ չորն
զինչ գործեսցեն։

Յայնժամ 'ի տեղւոջն ստուգաբանի կանխասացու-
թիւն մարգարէին Օ աբարիայ, որդւոյ Խարեբեայ, և
նմանի մահ որդւոյն Ամմիէլայ՝ մահու որդւոյն Աստու-
ծոյ։ Զանազի Ովսիաս այս՝ այր արդար էր և թագաւոր
Իսրայելի. առաջնորդէր ժողովրդեանն 'ի Ճանապարհս
աստուածպաշտութեան, և երբեք ումեք մարդկան ինչ
ոչ մեղանչէր. այլ յորդորելով բովանդակեաց զսիրտս
ամենայն մարդոյ՝ ածել 'ի մի երկրպագութիւն Աստու-
ծոյ։ Այլ մինչ դեռ խաղաղասէր վարուք կատարէր ըզ-
կեանս իւր, եկն ել 'ի վերայ նորա Փարաւոն Կաղ յերկ-
րէն եգիպտացւոց, եդ ընդ նմա պատերազմ և սպան զնա
յերկրին հրէաստանի։ Այլ քանզի արդարութեամբ էր
թագաւորութիւնն Յովսիայ, և միամօր առ 'ի ծնունդենէ,
և զուր մեռեալ 'ի պատերազմի, խանդաղատէ մարգա-
րէն 'ի մահ թագաւորին. և յորդորեալ զամենայն ցեղն,
ածէ 'ի կոծ լալեաց. և նմանեցուցանէ զսաստկութիւն
կոծոյն կոտորելոց նռնենեաց 'ի դաշտին։ Զուի ինձ ե-
թէ ցանկալի և վայելուչ է ծաղիկ նռնենեաց 'ի տեսիլ
աչաց մարդկան. և 'ի շնչել խորշակի, դիւրահոս վայ-
րաբեր լինի առ հասարակ. և այն որ էր յառաջ պայ-
ծառագոյն քան զամենայն ծաղիկս, յետոյ տրտում և
տխուր լինի քան զամենայն ծառս փշաբերս։ Զայն ո-
րոյ և մարգարէն ծաղկի և պսակի նմանեցուցանէ զար-
դար թագաւորն. ունայն և թափուր մնաց ժողովուրդն
իբրեւ ծառս մրգաթափս որ անպիտան երեւին 'ի տե-
սիլ մարդկան։

Զրդ չորիւք թաւական ցեղիւքս, զոր էած մարգարէն
'ի կոծ թագաւորին, զարս առանձին և զկանայս առան-
ձինն, իբրեւ զոգի և զմարմին բոլոր բովանդակեաց 'ի
սուգ թագաւորին. որպէս և Տէր մեր ասելով ցկանայսն՝
զատեքք Երուսաղէմի. և ցուցանէ նոցա թէ կոծելոց
են 'ի վերայ անձանց և 'ի վերայ ամենայն Իսրայելի.
ոչ միայն արք և կանայք առանձինն՝ որպէս տան Դաւ-

թի և երից ընկերաց իւրոց, այլ ամենայն ազգք և ա-
զինք՝ ոչ միայն մարդկան, այլ և վերին զօրութեանց՝
որպէս երկնի և երկնաւորաց, և են թուովք, և 'ի ձեռն
չորիցս կոծին ամենայնքս։ Եւ ընդէր արդեօք լինիցի
այս. վասն զի ամենեքեան գտան յանողորմածութեան.
Հրեայք 'ի զուր պարտաւորեցին և մատնեցին։ Արդ
որովհետեւ երկոքեան կողմանքն միաբանեցան 'ի չարու-
թիւնս, 'ի ձեռն չորից տարերցս չորիւք մասամբք՝ չորք
անկիւնք յերկրիս յահ մեծ և յահագին կոծ առ հա-
սարակ ամենայն երկիր կոծեսցին, արք առանձին և կա-
նայք առանձինն. Իսրայէլ կոծեսցի, զի անջատեցաւ 'ի
Աշմարիտն Աստուծոյ. հեթանոսք կոծին, զի անջատին
'ի սուտ աստուածոցն իւրեանց. երկոքեան կողմանքն
մնանեն 'ի սուգ և 'ի կոծ սաստիկ. և դառնայ կոծն ո-
մանց յանգիւտ կորուստ, և ոմանց 'ի կորստենէ յանանց
լոյսն։ Յայսմ վայրի կատարի Աշմարտութեամբ քան
մարգարէին որ ասէ. "Կոծեսցին ամենայն ազգինք ա-
ռանձինն,,։ 'Այս և անդէն առ խաչին Տեառն ոչ փոքր
և դուշնաքեայ էր կոծն, այլ յոյժ մեծ և ահագին, որ
զանցուցանէր զամենայն կոծով։

Ի նմին ժամանակի, ասէ, բարձրացաւ Տէր մեր 'ի
վերայ խաչին. արեգակն խաւարեցաւ, վարագոյր տա-
ճարին ցեղաւ մինչեւ 'ի վայր, երկիր շարժեցաւ, վէմք
պատառեցան, գերեզմանք բացան և բազումք 'ի մեռե-
լոց յարեան, և յետ յարութեանն Տեառն մտին 'ի քա-
ղաքն սուրբ և երեւեցան բազմաց։

Եւ ընդէր արդեօք թագեաւ արեգակն և կորեաւ
այս գեղեցիկ տունջեանն, և թանձրացեալ տարրացաւ
խաւարն 'ի վերայ երկրի։ Յայտնի է, և կարեմք ոչ
թագուցանել զՀշմարտութիւնն. քանզի զՀանդերձն
զերծին առին յիւրեանս, և զնա մերկ պրկեալ բեւե-
ռեցին 'ի փայտին, ոչ կարացին վերին գունդքն հայել
'ի մերկութիւն Տեառն երկնի և երկրի։ Վերովբէք որ
յառաջ քան զխաչելութիւնն շուրջ կային զաստուա-
ծութեամբն նորա, չկարացեալ հայել յահագին փառս
նորա, այլ երկուք թեւովք ծածկէին զերեսս իւրեանց,
և երկուք թեւօքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուք
թեւօքն համբարձեալք և վերաբերեալք կախէին զան-

Digitized by Google

պարտելի զօրութենէ նորա, և հրեղէն բերանովք զանհաստ սուրբ սուրբ սուրբն ասելով անյագ ձայնիւքն զաւրարչական զօրութիւնն փառաւորէին։ Նոյնպէս հրեշտակք և հրեշտակապետք և ամենայն դասք զուարթնոցն կան յահի և 'ի դողման. ոչ կարէին հայել և տեսանել զինքնագոյ բնութիւնն, տեղի տուեալ խարշին և թագչին յանմատոյց ճառագայթիցն յինքնածագ բնակեալ լուսոյն. ոչ միայն պատուելով զարարչական զօրութիւնն, այլ և գիտելով զիւրեանց նեղութիւնն ոչ ժպրհին հայել յանդգնաբար և մերձենալ և մօտել, զի մի ապականեալ ծախիցին յանմատոյց զօրութենէն։ Այս այս է խնայութիւն արարչին ամենեցուն, պահել զարարածս անվնաս յիւրաքանչիւր բնութեանն, և առաւել 'ի ժամուն յայնմիկ՝ յորում ահագին մահ որգոյն Աստուծոյ երեւէր վերնոց և ներքնոց, տարերքս սպասաւոր լինէին 'ի պատիւ խաչելոյն և 'ի ծածկոյթ զուարթնոց, որոց ոչ էին կամք հայել և տեսանել զանարգութիւն մահուն նորա։ Թիանգամայն և յամենայն առնելով զանհանձար ժողովուրդն՝ որ առանց ամենայն պատկառանաց հայէին 'ի մերկութիւն որդւոյն Աստուծոյ, մածեալ թանձրացաւ խաւարն 'ի վերայ լրբենի դիմաց նոցա, զի չէին արժանի հայել և տեսանել զկեանս իւրեանց 'ի վերայ խաչին։

Արդ զայս օրինակ յառաջագոյն տեսեալ Մովսէս հոգւոքն Աստուծոյ՝ կանգնեաց յանապատի անդ ատեան դատաստանի. քանզի 'ի վերայ փրկական բարեգործութեանց Աստուծոյ առ ժողովուրդն՝ գտան նոքա ոչ գոհացողք, այլ հայհոյողք և տրտնջողք 'ի Մովսէս և ՅԱստուած։ Բարկացուցին և դառնացուցին զսուրբ հոգին Աստուծոյ, և առաքեաց 'ի վերայ նոցա Աստուած օձս մահաբերս. առանց խնայելոյ հարկանէին և սպանանէին 'ի ժողովրդենէն զբազումս։ Իսկ Աստուծոյ ըստ իւրում բարերարութեանն յիշեցեալ զուխտն որ էր ընդ սիրելիս իւր, գթացեալ ողորմի հարելոցն և մաղկատելոցն յօձից սատակմանէ։ Հրամայէ Մովսէսի առնել օձ նիւթական, և բարձրացուցանել 'ի մէջ ժողովրդեանն. զի որ կարասցէ հայել և տեսանել զօձն Մովսէսի, ապրել կարասցէ 'ի դառն թիւնից սպանող օձիցն։ Այս այս է յոյժ սքանչելի և իմացական տեսու-

Digitized by Google

թիւնք. օձ հրամայէ առնել Մովսէսի, և զնիւթոյն ա-
նուն 'ի մէջ ոչ բերէ. և ոչ մի ինչ՝ որ անկանի ընդ կաս-
նաւ ճարտարաց, և ոչ յայլոց ձեռակերտիկ արուեստից՝
որ կազմի առանց հրոյ փորձութեան. այլ միայն հրամանն
տուեալ, Եղբա քեզ, ասէ, դու օձ. քեզ քեզէն ապրա,
ասէ։ Եւ յայս հայեցեալ Մովսէսի յոյժ իմաստնա-
նայ. տեսանէ զծածկութիւն իրացն հանդերձելոց, առնէ
օձ պղնձի։ Որպէս ինձ երեւի փոքր 'ի շատէ, ընդ ազօտ
յայտնութիւն իմաստութեանն զանսպարտելի զշնորհ-
սըն Աստուծոյ պղնձոյ նմանեցոյց Մովսէս, զի անվը-
նաս պահեսցին այնոքիկ՝ որոց ստացեալ ի՞նչ հաւատովքն
ճշմարտութեան զնա։ Այլ զձեւ պղնձի օձին ոչ յայլ
օրինակ բաղկացոյց, այլ 'ի թիւնաւորացն և 'ի սպա-
նողացն։

Եղբ տես զընտրութիւն որոշմանն. հարկանէին ա-
մենեքեան, մեռանէին ոչ ամենեքեան. իբրու յայտ է
ընտրութիւնք դատաստանին։ Եւ քանզի յորկորստու-
թենէ մտին մեղք յաշխարհ միջնորդաւ առաջին օձին,
նոյն ցանկութիւն կերակրոց շարժէր զմարմինս անյագ
ժողովրդեանն, յորմէ և գտաւ իսկ տրտունջ հայհոյու-
թեան 'ի բերանս նոցա. հարկանէին և խածանէին յա-
ձիցն՝ որ մահս 'ի վերայ հասուցանէր։ Բանզի ոչ ինչ
այլ գոյ նման ցանկութեան, որպէս զօձի բնութիւն խո-
րագէտ և նենգաւոր. սողի և սպրդէ մտանել ընդ նեղ
և ընդ նուրբ փապարս, մտանէ և ցուցանէ զգործ դառ-
նութեան մահուն. որպէս իգական ցանկութիւն հեղու
և տապալի 'ի տենչանս կերակրոց, շարժի և շուայլի յաղ-
թեցութիւն անյագութեան. ուստի բազմագլուխ գա-
զան ցանկութիւնն զօրանայ 'ի վերայ զգայութեանցն
մարդոյն և անյագ վարէ յիրս աղտեղիս։ Դարձեալ և
ձեւ սողնոյս այսորիկ շարժման ճշմարտապէս ցուցանէ
զշարժումս մերոյ բնութեանս, որպէս և ուսաք իսկ 'ի
բնական ապանց՝ որ անստութեամբ տան հաւանութիւն
իմաստնասէր մարդոց։ Զինգ պատ առնու օձ 'ի սողել
իւրում. իսկ առաջնոքն և զկնիքն ընուն զեօթներորդ
թիւն. և բերէ զնմանութիւն զմերոյ զգայութեանցս,
երկուք աչօք և զուգիւք ականջօք, ճաշակաւորութիւն,
խոհականութիւն և ներքին համք որովայնին՝ որ շար-
ժէ զամենայն մարդ 'ի մարմնական ցանկութիւնն։

Digitized by Google

Ա՛յդ այս է տեղալ օձիցն 'ի ցանկացող ժողովուրդն՝ որ ամենայն մնասամբքն զգայութեանցն յեղեալք էին 'ի ցանկութիւն, և գործով զկամն աղտեղութեանն կատարէին։

Իսկ ընդ հարկանել օձիցն՝ և մահու վախճանէին. և որ կոխեալն միայն լինէր 'ի շարժմանց ցանկութեանցն, զխածանելն խածան 'ի թիւնաբեր օձիցն, այլ ընդ մահուամբ ոչ արկանէր։ Կարէք հայել և տեսանել զօձն Մովսէսի, վասն զի օձ էր որ սպանանէր, և որ սպանանէրն՝ նոյն և մաղկատէր. և 'ի ձեռն միւս օձին տեսլեան՝ մաղկատեալքն ընդունէին զառողջութիւն. և պատեցան զբարձրացեալ օձիւն մաղկատեալքն և մաղկատիչքն. և նա միջնորդեցաւ և եկաց դատաւոր երկոցունց կողմանցն, և չնորհեաց ոմանց զառողջութիւն կենաց և ոմանց զընդդէմն։ Մեծ էր և օձն պղնձի՝ որ կազմեցաւ 'ի ձեռաց իմաստնոյն Մովսէսի. այլ մեծութիւն զօրութեանն նորա զնմանութիւն բերէր զբարձրացեալ խաչին՝ որ կանգնեցաւ 'ի Գողգոթա, զոր Տէրն ինքնին յառաջագոյն օրինադրեաց ասելով. Որպէս բարձրացոյց, ասէ, Մովսէս զօձն յանապատին, սոյնպէս պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ 'ի մէջ երկոցունց կողմանց, ոմանց յանդարձ մոլորութիւն, և այլոց 'ի ձանապարհ ճշմարտութեան։

Ա՛յդ խաւարեցաւ արեգակն 'ի վերայ մոլորելոցն, զի չէին արժանի տեսանել զարեգակն արդարութեան՝ որ բժշկէր զհարուածս աներեւոյթ առաջին օձին։ Այսորպէս յանապատին՝ այնոքիկ որ յոգիսն հարեալ լինէին 'ի ցանկական օձէն, մարմնովքն կատարէր զգործս ապականութեան, ոչ կարէին տեսանել զօձն Մովսէսի, քանզի չէին արժանի չնորհատուր թողութեանն, վասն այսորիկ մահուամբք անկեալ տապաստ յանապատին դնէին. իսկ ուր դուզնաքեայքն խոտղմամբքն ցանկութեամբքն ախտացեալք էին՝ 'ի դիւրագոյն գայլն 'ի բժշկութիւն, սոյնպէս և աստ 'ի գագաթն տեղւոջս պատեցան զքաչիւն Տեառն Յիսուսի անօրինք և օրինաւորք, անարժանք և արժանաւորք։ Որ հնութեան կուրութեամբք հարեալ էին, ոչ կարացին տեսանել զնմանն 'ի կեանս դարձեալ, և զմոլորութիւնն 'ի ճշմարտութիւն շրջեալ, զանէծսն յօրհնութիւն փոխանա-

Digitized by Google

կեալ, յառաջմայն նեղութիւնս հայեցան, և 'ի հան-դերձեալ հանգստենէն վրիպեցին։

Իսկ նա ըստ իւրում մարդասիրութեանն շնորհեաց զառողջութիւն բժշկութեան երկոցունց կողմանց՝ որք խոցոտեալք և խոցոտեալք էին 'ի թիւնից հին վիշապին, և շնորհեալ զառողջութիւն 'ի ձեռն հաւատոցն ական՝ որք կարեն հայել և տեսանել զորդին մարդոյ 'ի վերայ խաչին, որ ընկալաւ չարչարանս յիւր մարմնին. և զնոցն իմանայցեն որդի Աստուծոյ, արարիչ երեւելեաց և աներեւութից։ Բանզի ոչ եթէ իբրեւ զՈվսէսի օձն պղնձի է՝ որ կախեցաւ զփայտէ յանապատին, որ առ ոմանս զօրանայր յառողջութիւն, և առ ոմանս տկարանայր յանդարձութիւն մահու։ Բանզի նմանութիւն ասաց Տէրն մեր, և ոչ զորպիսութիւնն նմանութեան, որ ոչ բերէր զիսկութիւն Ճշմարտութեանն։ Զի եթէ բերէր, զի՞նչ եւս պիտոյ էր երկրորդին գալ մտանել 'ի նորա տեղին, զոր և մեծս Աւաքեալ թարգմանէ մեզ զզօրութիւն խաչեցելոյն. "Այն որ ոչ գիտէր, ասէ, զմեղս՝ վասն մեր մեղք եղեւ, զի մեք լիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ,, և մեղքն օձիւն մոին յաշխարհ։

Արդ ձեւացուցեալ զինքն Տէրն օձին տեսակաւ՝ տրպաւորեալ կերպարանեցաւ յեօթն թուական զգայութիւնս և յանհատ բարժանելի խոհականութիւնն. և եղէն մեղք, քանզի էաք ամենեքեան ընդ նովին մեղօք մաղկատեալք և մաղկատիչք. մաղկատեալք յառաջին հին թիւնից վիշապին, և մաղկատեալք յիւրաքանչիւր շարժմանց թուական զրոյ մասանց մարմնոյս։ Ծակոտեցան աչք մեր յանարժանս հայելոյ, և ախտացան ականջք մեր յայլանդակս լսելոյ, Ճաշակելիք մեր անյագ տենչալով, և շարժմունք մեր անասնական ցանկութեամբք, և խոհականութիւնս մեր հպարտ բարձրացեալք. և եղեաք ամենայնիւ և ոչ մի մասն արդարութեան։ Իսկ այն՝ որ ոչ գիտէր զմեղս և հեռի է յայսմ ամենայնէ, 'ի կամս իւրոյ բարերարութեանն եղեւ մեղս՝ որ ոչ էր նորա, զի մեք լիցուք արդարութիւն նովաւ. որ գոյն մեր՝ կորուսաք. արդ գտցուք նովաւ, զի մի կորուսցուք այլ։

Բայց այս է օձն պղնձի զոր բարձրացոյց Մովսէս

յանապատին. հարկանել ոչ գիտէ, զի չունի թոյնս 'ի բնութեանն. իսկ յայլոց ոչ հարկանի, զի անտանելի է գոյացութիւնն։ Զ՝ սոփեստ պատեցան հարեալքն և հարկանողքն. հարեալքն բժշկեցան և հարկանողքն պարտեցան, զի ջրեսցին թոյնքն իւրեանց յանապատելի զօրութենէ գոյացութեան մարմնոյն։ Եւ կախի օձս այս գիպայտ բարձրացելոյ. և ոչ յաներեւոյթ և ոչ 'ի ծածուկ տեղւոջէ, այլ 'ի յոյժ բարձրաւանդակի. ոչ թաքուցեալ և ծածկեալ հանդերձիւք, այլ մերկ ամենայն մասամբք տեսլեանն կայ 'ի մէջ բազմութեան ժողովրդեանն։ Յայտնի ամենեցուն է, և տեսանեն ոչ ամենեքեան. որ տեսանեն՝ ընդունին զաւողութիւն, և որք ոչն տեսանեն՝ հրաժարեն յաշխարհէս և յաշխարհէն կենաց։

Զ՝ այս յիրաւի ուրեմն Տէրն մեր նմանեցուցանէ օձիս այսմ ոչ զոք յարդարոց և ոչ զոք 'ի մարգարէից և ոչ 'ի հարցն կատարելոց ումեք, այլ մարդոյ ումեմն միայնոյ և յոյժ միայնացելոյ, ոչ դուզնաքեայ, այլ որդւոյ մարդոյ՝ որ ունի զբնութիւն ամենեցուն և 'ի վերս քան զամենեսեան, և ապարիչ ամենեցուն և բոլորեցունց նորոգիչ, և ունի զմարմին մաղկատելի, այլ ոչ մաղկատող. և մաղկատի 'ի մարմին, այլ ոչ յոգի։ Եւ մարմին ասացի 'ի ձեռս և 'ի յոտս, 'ի կողս և 'ի թիկունս, 'ի ծնօտս և 'ի գլուխս։ Իսկ զգայութիւնք նորա տեսակ ունին զմերոյ թուականիս, այլ ոչ հարկանին ըստ մերոյ նմանութեանս։

Զ՝ այս և ասացից իսկ փոքր 'ի շատէ սակաւ բանիւք։ Ի ձեռն աչաց յատաջ քան գործով մեղանչեն մարդիկ. իսկ Տէրն մեր Գրիգորոս աչօք հայեցաւ 'ի կինն բազմամեղ քան զամենայն քաղաքն՝ յորում բնակեալ էր. ծանեաւ զնա, և ծանոյց զինքն նմա։ Զ՝ չքն առ աչս հանդիպեցան, և յորդահոս արտասուս վիժեցին յապաշխարութիւն. մեղքն մեռան և արդարութիւնն կենդանացաւ։ Յսեղեօք մարդիկ գերին 'ի լկտի երգս ձայնից. նովին լսեղեօք ետուտ Տէրն մեր 'ի տուն քահանայապետին, և ետես անդ զմահ թագաւորեալ. և լուաւ անդ ձայնս ողբոց և կոծոց մեծաց, հալածեաց զմահ և լուցոյց զողբս կոծոցն յուսահատութեամբ։ Ունէր և զՀաշակաւորութիւն, այլ միայն զՀարկաւորաց և ոչ

զաւելորդաց. լցոյց զբազմաց կարօտութիւնս, և վաստակեցան թիկունք բեռնակրացն 'ի պատարուն 'ի սակաւիսն։ Այլ 'ի ձեռն խոհականութեանն ընդ Հօր 'ի բարձունս խօսէր, և յերկրի ընդ մարդկան շնորհալից խոնարհութեամբ շրջէր։

Այլ իբրեւ այս այսպէս էր Աշմարիտ, ոչ ինչ վրիպեալ գտայ ասելով եթէ մարմին մեր վերագոյն գտաւ քան զբնութիւնս մեր։ Այլ վասն այսորիկ ինքն զինքն նմանեցուցանէ պղնձի օձին իբրեւ մեղաց և արդարութեան. մեղաց՝ զի ըստ մերումս գոյացութեանս երեւեցաւ, իսկ արդարութեան՝ զի ոչ շարժեցաւ ըստ մերոց զգայութեանցս. և այսու ամենայնիւ արկանէ զլսողսն 'ի վրան տարակուսի. "Որպէս Մովսէս, ասէ, բարձրացոյց զօձն յանապատին, այսպէս պարտ է բարձրանալ որդւոյ մարդոյ"։

Զի՞նչ ասաց, ասեն, զայսպիսի բանս Տէրն՝ որ Աստուածն էր բնութեամբ և մարդ Աշմարիտ. արարիչ ըստ աստուածութեանն և արդար ըստ մարդկութեանն, ընդէ՞ր օձին նմանեցուցանէ զինքն։ Ո՞ խմաստուն լսողդ, զբարիոք ասացեալդ 'ի Տեառնէ մի այլ ընդ այլոց տգեղագոյնս լսես. օձի նմանեցոյց զինքն, ոչ խածանողին և հարկանողին, այլ անթիւնին և բժշկողին. քանզի 'ի ձեռն թիւնաւոր օձին հարաք և մեռաք, իսկ 'ի ձեռն անթոյն օձին բժշկեցաք և ողջացաք։ Պաքէն մարմին է գոյացութիւն օձին, մարմին է և բնութիւնս մեր. մարմին մարմնոյ դիպեցաւ 'ի դրախտին, մարմին ընդ մարմնոյ խօսեցաւ, մարմին 'ի մարմնոյ խաբեցաւ, և թիւնաւորն զանթոյնն եհար և սպան։ Մարմին էառ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ոչ զթիւնաւոր հին օձին, այլ զորոյ վիրաւորեցելոցն, և արար մահկանացու. մարմին մարմնոյ երեւեցաւ, անթոյնն թիւնաւորին, անմահացեալ մնասացելոցն, անչարչարելին չարչարացելոցն, անաւգական ապականացելոցն. ասա՛ ահա միանգամայն իսկ ասացից, անմահն մահկանացուին, և Աստուածն մարդոյն. սա՛ գոյացեալ և բաղկացեալ 'ի մարմին թանձրացեալ և կախեալ զփայտե՛ ոչ յանապատի և ոչ 'ի քաղաքի, այլ արտաքոյ քաղաքի և հեռի յանապատե։

Այլ ամենայն աշխարհք և քաղաքք ժողովեալ շուրջ պատեալ զնովաւ հայէին ամենեքեան, և տեսանէն ոչ

Digitized by Google

ամենեքեան։ Որոց տեսանեն՝ ջնջին թոյնք օձահա-
րութեանն, և առանց դեղոց ընդունին զկատարեալ ա-
ռողջութիւնն. աչք զգաստանան ցած հայելով և տե-
սանելով զաստուածութիւնն 'ի պարտաւոր մարմնին,
և 'ի ձեռն ակամայ լսեն նորին բարբառոյ աստուածու-
թեանն որ ասէ. "Հայր, 'ի ձեռս քո դնեմ զհոգի
իմ"։ Եւ ընտրող Հաշակելիք քաղցրանայ 'ի քիմն լո-
ղաց բարբառոյն, և լցուցանէ քան զամենայն հաճ ա-
նոյշ կերակրոց, և 'ի ձեռն մարմնաւոր զգայութեանցս
առողջանան ոգիքն, և լուսաւորին միտքն և լինին յոյժ
սրատեսիլք. հայրն 'ի չարչարանս խաչին և տեսանեն
զանչարչարելի աստուածութիւնն Որդւոյ, և վերաբե-
րին հաւատք թռուցեալ և հասանեն առ Հայրն բոլո-
րեցուն, և յիշեն զՅովսէս և զօձն պղնձի, որ էր ա-
ռակ օրինակի արդեան ժամանակին՝ որ կատարեցաւ 'ի
խաչելութեանն Քրիստոսի. վասն զի ոչ ամենեքեան
կարացին տեսանել։ Ոչնոցիկ՝ որոց խաւարեալ էին
սիրտք իւրեանց, և հնութեամբ կուրութեանքն շլա-
ցեալ էին ոգիքն իւրեանց, և մարմնաւոր նախանձուն
հարան և մաշեցան 'ի մարմնոյն իւրեանց, գայթագղե-
ցին և դղրդեցան առ միմին հաստատութեան, արգե-
լաւ յաչաց նոցա տեսիլ Հառագայթից լուսոյն՝ մեծա-
փայլ խաչին Քրիստոսի, որ ծագեաց 'ի մէջ ամենայն
արարածոց։

Զայն այսորիկ երեւեցաւ 'ի տեղւոջ անդ իրք ահա-
գինք՝ և գործք մեծամեծք և սքանչելիք. քանզի վարա-
գոյրն՝ որ արար Յովսէս հրամանաւն Աստուծոյ և ձը-
գեաց 'ի ներքս 'ի խորանին, զի իցէ միջնորդ՝ անե-
րեւոյթ տեսակ պահելով զսուրբն սրբոց, արտաքին
խորանն՝ յորում հանապազորդ ղեւտացիքն կատարէին
զպաշտօնսն իւրեանց, ապաքէն գնմանութիւն բերէր
զերկնից երկնին, յորում կարծեմք զընութիւն անե-
ղին. իսկ արդ զինչ եւս պիտոյ էր վարագոյրն, որ ծած-
կեալ պահէր զսուրբ սրբոցն՝ զխորհուրդսն անեղեւոյթ
զօրութեանն։ Իսկ այսօր ոչ 'ի խորհուրդն ձեռնարկեալ,
այլ 'ի բուն իսկ տէր խորհրդոյն, այն որ եկն
յայտնել և ցուցանել զխորհուրդն իբրեւ զժամանա-
կեան օգտութիւն, զի ծանիցեն և ընկալցին զանժամա-
նակեան տէրն խորհրդոյն. և նոցա ոչ միայն չընկալեալ,

այլ և մերկ մահուամբ 'ի փայտի բեւեռեալ. վասն ո-
րոյ և հերձաւ վարագոյրն, զի 'ի պատառել վարագու-
րին ունայն և թափուր մնաց սուրբ սրբոցն, քանզի եւ
գնաց սուրբ Հոգին 'ի տաճարէ անտի։ Այս փոխանակ
զի ոչ պատառեցին զՀանդերձս իւրեանց 'ի վերայ ա-
րեանցն զոր գործեցին, էարկ վարագոյրն զօձիսն 'ի վե-
րայ Ցեառնն իւրոյ՝ որ պահէր զխորհուրդ պատուոյ նո-
ցա։ Ի պատառել վարագուրին պատառեսցին սիրտք
քահանայապետիցն, յորժամ տեսցեն զպատիւ սրբու-
թեանն՝ որ յերկուս ցեղաւ, և ամաչեսցեն առաջի ամե-
նայն ժողովրդեանն՝ եթէ ոչ 'ի մարդ ձեռնարկեցին,
այլ 'ի տէր տաճարին։ Այս որպէս պատառեցաւ վարա-
գոյրն, ցուցանելով նոցա եթէ այսուհետեւ ոչ ինչ եմ
ես պիտոյ 'ի ծածկոյթ արուգ սրբութեանցն, յորում
ոչ եւս լիցին զօրութիւնք երկնաւորք, քանզի հեռա-
ցան անջատան նոքա 'ի Ցեառնէն երկնի և երկրի,
սոյնպէս և երկիր շարժեցաւ 'ի ներքոյ բնակչաց անս-
ըկն ժողովրդեանն։ Քանզի մասն է արեգական երկնի,
միով մասամբ որ արգել զլոյսն իւր յարարածոց՝ ամե-
նայն մասունք երկնի ընդ նմին խռովեցան և զգեցան
սուգ։ Այս քանզի մասն է վարագոյր բերոյ երկրիս, ընդ
միում մասին ամենայն մասունք երկրիս երերեալ դո-
ղացին՝ ոչ դուզնաքեայ, այլ յոյժ սաստիկ և ահագին.
և այնչափ ուժգին, մինչ զի և ոչ միայն թանձր հողն
սորա պայթեաց պատառեցաւ, այլ և վէմք մեծամեծք
հիմնացեալք՝ հերձան և պատառեցան։

Մի՛ թաքանեցին երկինք և երկիր 'ի մահու միածնին
Աստուծոյ. և յիրաւի արժանապէս։ Քանզի յորժամ
գայր յերկնից թագաւորն մեծ 'ի փրկութիւն և 'ի կեն-
դանութիւն, զերկինս ոչ շարժեաց և զերկիր ոչ դողա-
ցոյց, այլ հեզ և հանդարտ և յոյժ խաղաղութեամբ,
որպէս և Հոգին սուրբ երգեաց 'ի բերանն Դաւթի.
"Լսցէ իբրեւ զանձրեւ 'ի վերայ գեղման,,. քանզի 'ի
վերայ գեղման տեղալով, ոչ լինին ձայնք բարբառոյ և
ոչ բաբախմունք ձայնմանց և ոչ թնդիւնք դղրդմանց,
այլ յոյժ քաղցրութեամբ անլուր և անտեսակ ձայնից։
Այս գեղմն, ասէ, ոչ հատանելով և ոչ կտրելով 'ի կեն-
դանւոյն զգեղմն և 'ի բաց դնելով, զի այս և սովորու-
թիւն իսկ ոչ է մարդկան. այլ մինչ 'ի կենդանւոջն է,

Digitized by Google

և ինչանէ անձրեւ 'ի վերայ նորա, զփոշին սրբէ, զպղտն լուանայ, զկիզն աՀեցուցանէ, զկենդանին զուարթացուցանէ։ Ոչ տնմին նմանութեան սուրբ Հոգին 'ի ընմանութիւն ցողոյ ազդեցաւ 'ի սուրբ կուսին զօրութեամբ մեծաւ, անլուր անտեսակ երեւոյթ տեսակ. որպէս կամեցաւ կատարեաց զարժանաւորութիւնն խաղաղութեամբ առանց յուռովութեան և շարժման։ Այլ ոչ Հաս 'ի տեղիս յայս՝ ուր արժան էր զայն խաղաղութիւն առնել. և ոչ կամեցան, այլ զընդդէմն կատարեցին 'ի վերայ նորա։ Տեսանէս, զի նոյնք ընդդէմ առնոսին Հատուցաւ։

Բայց վասն զի Աստուած է, ոչ գոն նորա ընդդէմք, այլ յամենայն 'ի կողմանց ամենայնիւ օգտութիւնք երեւին. որպէս և 'ի շարժել վիմացն և 'ի պատառել երկրին՝ բացան, ասէ, գերեզմանք. և բազումք 'ի մեռելոց յարեան 'ի գերեզմանաց իւրեանց, և եկին մտին 'ի քաղաքն սուրբ և երեւեցան բազմաց։ Զանուն ոչ եւս ասէ զյարուցելոցն, և ոչ զտունսն իւրաքանչիւր ցուցանէ, նա և ոչ զթիւ յարուցելոցն յայտ առնէ. այլ միայն բազում ասելով. և բազումքդ ոչ սահմանեալ զատանին 'ի Թուական քանակաւն, այլ 'ի միմեանց առնուն զառաւելութիւն. որպէս հինգքն առ երիւքն, իսկ տասունքն առ հնգիւքն, այլ եւս բազումքն առ տասամեայքն. և սահման բազմութեան ոչ յանգի. եթէ մինչեւ 'ի կատարումն Թուականին Հասցես, անթիւն քան զթուականն բազմագոյն մնայ։ Բայց զի յաւրեանն Հնմարիտ, անսուտ աւետարանագիրն գրով Հաստատեաց և զյարութիւնն և զբազմութիւնն. և որպէս 'ի մէջ ասաց բազումն, նովին բանիւ անորիշ ասաց և զերեւումն։ Բազմայ, ասէ, երեւեցան. զանուն ուրուք յայտ ոչ առնէ։

Յմենայն ինչ նորոգ և աքանչելի գործք երեւեցան 'ի խաչելութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, քանզի նոր իսկ աշխարհ գործեցոց էր. և ասացից փոքր 'ի շատէ զնոյն իսկ զգործն՝ որ անդէն առ խաչիւն գործեցան, ոչ զիմ և ոչ զայլոց 'ի մարդկանէ, այլ զնորին Տեառն յաւաջագոյն ասացեալ բերանով սուրբ մարգարէին. "Եւ եղիցի օրն, ասէ, օր մի մեծ, զի ոչ լոյս ի՝ցէ և ոչ խաւար, այլ ցուրտ և պարզ. և օրն այն յայտ

նի Տեառն, զի ոչ տիւ իցէ և ոչ գիշեր. և ընդ երեկս եղիցի լոյս ,, : Տեսանէս զյայտնութիւն Հոգւոյն սրբոյ. 'ի սկզբանէ արարածոց այսպիսի օր ոչ դիպեցաւ, բայց միայն 'ի խաչելութեան Տեառն. զի ոչ լոյս իցէ օրն, վասն զի թաքեաւ արեգակին. և ոչ խաւար իցէ, ասէ, վասն զի չեւ էր ժամ գիշերոյն հասեալ. քանզի 'ի հասարակ աւուրն եմուտ արեգակն 'ի մայրն, խաւար ասաց և ոչ գիշեր. զի արգելան Ճառագայթք Ջերմութեանն, ցուրտ ասաց և ոչ Ջեր, և ցուրտ՝ ոչ դուզնաքեայ, այլ պարզ, հուրասատաց, նմանեալ է անպտղաբեր ձմերայնւոյ. և ձմեռն նշանակէ ատելութիւն չարին, որ և գործեցաւ իսկ առ ժողովուրդն : Եւ դարձեալ ասէ. "Ընդ երեկս եղիցի լոյս ,, : Երեկուն ժամդ դրացի և մերձաւոր է խաւարային գիշերւոյ, որպէս և աշխարհս մերձեալ էր 'ի վախճան կատարածի, և դրացի էր անվախճան խաւարին. և ընդ երեկս մեծի աւուրն անխաւար լոյսն 'ի խաչէն ծագեաց յոգիս այնոցիկ՝ որոց կարացին տեսանել զաստուածութիւն որդւոյն Աստուծոյ, և ընդ նմին լուսաւորեցան, զի խաւարայլ 'ի վերայ նոցա մի տիրեսցէ :

"Եւ օրն այն, ասէ, յայտնի Տեառն ,, : Եւ յայտնութիւնն այն ոչ միով մասամբ կամ երկուք, այլ ամենայն լրութեամբ բազմութեանն : Եւ զինչ մեծ յայտնութիւն աւուրն քան զայն, զի ամենայն ինչ նոր եղեւ և ահագին, և խաւար նոր և գիշեր նոր և օր նոր. նոր է և պատառումն վարագուրին, նոր է և շարժումն երկրին, նոր է և պատառումն վիմացն, նոր է և բացումն գերեզմանացն, նոր է և բազմութիւն յարութեան մեռելոցն, նոր է և յայտնութիւնն նոցա որ երեւեցանն բազմաց, նոր է և սուրբ քաղաքն : Եւ յիրաւի նոր ասացի զամենայն. քանզի նոր է խաչն, նոր էր և խաչեցեալն և նորոգիչ էր ամենայն նորոգելոց. վասն այսորիկ ոչ գրեաց զանուանս յարուցելոցն, և ոչ զայնոցիկ՝ որոց երեւեցանն. քանզի նմանութիւն և օրինակ էին աւուրն յարութեան մեծի, որք ոչ եւս մի մի յառնելոց են, և ոչ մնան 'ի բազմաց, այլ ամենեքեանս միանգամայնք առանց թուոյ և անուանակոչութեան : Բայց բազում անգամ զնոցն ասելով, ոչ ինչ վրիպեալ գտանիմք 'ի նորագործ իրաց, որ ամենայն ինչ նորպէս եղեւ :

Digitized by Google

Իբրեւ տեսին, ասէ, Հրեայքն եթէ խոնարհեցոյց զգլուխս իւր Քրիստոս և արձակեաց զհոգին, աղաչեցին զՊիղատոս վասն շաբաթուն, զի մի ազցին 'ի խաչին վերայ. այլ զի զբարձան բեկցեն և իջուսցեն 'ի խաչէ անտի։ Այս եկեալ զինուորքն զաւազակացն բեկին. իսկ իբրեւ եկին առ Յիսուս, տեսին զի նա կատարեալ էր, և ոչ ինչ մնտեան 'ի նա. բայց մի ոմն 'ի զինուորացն տիգաւ եհար զկողս նորա, և եկ անտի վաղվաղակի արիւն և ջուր։

Զհա դարձեալ նոր և սքանչելի տեսակ։ Ո՞վ երբեք ետես 'ի մարդկանէ, որ յետ մահուան իւրոյ խոցեսցի 'ի կողս իւր 'ի դի անձին իւրոյ, և եկանիցէ անտի արիւն և ջուր։ Յառաջ քան զայս չէք եղեալ, և զկնի այսորիկ ոչ լինիցի, բայց միայն 'ի մարմնին Յիսուսի Քրիստոսի։ Այս այս ոչ արտաքոյ մարգարէութեանն, այլ նորուն խոցեցելոյն հոգւով. "Դարձցին, ասէ, և տեսցեն զոր խոցեցինն". և հարցանեն ոչ խոցողքն, և ոչ տեսանեն զայն զոր խոցեցինն. այլք խոցեն և այլք տեսանեն և ընդունին ոչ զխոցեալ, այլ զողջացեալ և զողջացուցիչ վիրաց, և զվիրաց ոչ միայն զերեւելեաց, այլ և զանտերեւոյթ հարուածոց, և 'ի դեղս արիւն ածեան, և ջուր ջրոյ։ Այս եթէ կամիս, ընկալ Հնմարտապէս. քանզի ջուր է գոյացութիւն ամենայն կենդանեաց, և արիւն է կենդանութիւն ամենայն մարմնաւորաց. ընդ արեանն խառնեալ է մասն հոսման ջերմութեան, և ընդ ջրոյ զանգեալ է յոյժ հողոյս զօրութիւն, և ընդ երկոսին տեսակս միաբանին ամենայն տարերքս և ցուցանեն զգոյացութիւն մարմնոյն Աստուածն բանի, զոր էառ Հնմարտութեամբ զբնութիւն մերոյ գոյացութեանս զոր ինքն ստեղծ յանշուշտ արարչութեանն։

Ընդ եղեալ անտի ջուր 'ի լուացումն աւազանին սրբոյ, և արիւն բաժակ նորոյ ուխտին. զի ջրովն սրբեսցուք զանձինս 'ի մեղաց, և արեամբն չարչարակից լիցուք մահու խաչի նորա։ Զգրեալն կատարեցին ակամայ վասն անձանց իւրեանց և յօգուտ հեթանոսաց. մարգարէք՝ և ոչ անձանց կամաք Հնմարտութեանն, մշակք՝ և զայլոց երկիր գործեն, վաճառականք՝ և այլում ժողովեն մեծութիւն, առաքնորդք՝ և այլում բանան

Digitized by Google

գուն կենաց, ընթերցողք՝ և այլում մեկնեն զքան կտակարանաց և զառակս Աշմարտութեանն։

Զաչէցին, ասէ, զՊիղատոս, զի մի ագին՝ի վերայ խաչին։ Խարուոք հրաժարիք յայնմանէ, որ բարձաւ՝ի ձէնջ և տուաւ հեթանոսաց։ Այս քանզի ոչ կարէ մահ լինել դրացի կենաց, հրաժարիք և դուք յերեկուն ժամուդ՝ի կենաց փայտէդ, զի ծածկեսջիք ընդ ստուերաւ գիշերոյդ զոր սիրեցէքդ. ընդ նմին լսցի ձեզ բնակութիւն։ Օ անալուժան ինդրուածոդ զոր աղաչեցէքդ զդատաւորդ, զի զբարձան բեկցեն և լիջուացեն՝ի խաչէ անտի, երկհազարեան և եւս աւելի ամօք զոսկր գառինն ոչ կարացեր բեկանել ըստ հրամանին Մովսիսի, և զգառնդ Աստուծոյ միանգամ և խաչեցեր՝ և բեկանել կամիս. զոր ոչ առնու յանձն քեզ սուրբ Հոգին, զայդ կամօք քովք կատարել կամիս, զոր ոչ կարես։ Այլ առ ինչ արդեօք զայս առնիցէ Տէր. զանձն՝ի մահ տայր չարչարակից լինել աշխարհի, զոսկր բեկանել ոչ ունի յանձին. զոր սասցից փոքր՝ի շատէ։

Ըստ բնութեան և ըստ բարոյականին գոյացութիւն մարմնոցս մերոց յերկուց է բաղկացեալ, կակղութիւն մնայ, և անդամք գործական փորոտայ նիւթ էգ մասին, և ունի զպատճառ կենաց՝ի ձեռն սննդական մարմնոց։ Իսկ ջիլք, նեարդք, և շունչ և ոսկերք, զօրութիւն ալրու գոյացութեան. այդ է որ ըստ բնականին։ Իսկ բարոյականն, նիւթ իգական մասինն է, բովանդակ մարմնաւորութեանն, և հարստութեան ջլաց և ոսկերաց արուացեալ ինն պնդութեամբ. նմանի անախտ ինն պրնգութեամբն անբեկանելոյ երկնային մտաց։ Այսն որոյ և նիւթականն՝ անասուն մասինն գառանցն Յդիպտոս տուեալ լինին՝ի կերակուր ժողովրդեանն. իսկ ոսկերքն հանդերձ այլովք մասամբքն՝ի խոհականութեանն նմանութիւն պահեալ լինի առանց բեկանելոյ և փշրելոյ։ Այսն որոյ և գառինք իսկ զենանին պատարագ Աստուծոյ, և՝ի ձենձեր ծխոյ և ոչ՝ի կարօտութիւն լցման, այլ միայն յիմաստութիւն և՝ի խորհուրդ կատարեալ՝ի հանդերձելոյ լինելութեանն, որպէս երեւի իսկ՝ի պատարագել գառինն Աստուծոյ։ Օ լոլոր զինքն ետ՝ի ձեռն մարդկան, և զբոլոր մարդն աւանդեաց Աստուածն բանի. զբոլոր զկանխագիր բանն մարգարէիցն

յանձին իւրում կատարեաց, և բոլոր զքեզ Աստուած կատարեսցէ։

Եկեղն, ասէ, զբարձս աւազակացն. և առ Յիսուս եկին, ասէ, և տեսին զի նա կատարեալ էր։ Աստուստ բան և Հիմարիտ տեսակ այս է. զի որպէս կատարեալ էր ըստ աստուածութեանն, նոյնպէս կատարեալ էր ըստ չարչարանացն, կամօք և ոչ ակամայ. վասն այսորիկ, "Ոսկը նորա մի բեկանիցի,,։ Իսկ խոցումն 'ի կողն զոր ընկալաւ՝ աղբիւր բղխման աշխարհի. նորոգումն ջրոյն կենդանութեան, որ առաւել եւս տնկագործեսցէ, ոչ զծառս պարտիզին Եդեմ, այլ զծառս կենդանիս յեկեղեցւոջ Աստուծոյ։

Դարձեալ յետ այսր ամենայնի կատարման և Թաղումն Յիսուսի ընդունի անշուշտ վկայութիւն յազգէն Հրէից. զի միաբանեցին ամենեքեան վկայք մահու որդւոյն Աստուծոյ, այլ ոչ ամենեքեան միաբան կցորդք կենաց նորա։ Եկն, ասէ, Յովսէփ այր արդար, ազատ ըստ բնութեան, և մեծատուն ըստ աշխարհի. 'ի մարդկանէ ծածկութեամբ, և Աստուծոյ յայտնապէս։ Սա ոչ միայն 'ի չարութեան դորձս նոցա ոչ գտանի, այլ և ոչ 'ի խորհուրդս ամբարշտութեան նոցա։ Եւ արդ տես զառնն քաջութիւն. 'ի ժամուն յորում ամենայն ոք միաբանեալ էր և 'ի բաց կացեալք Աստուծոյ, սա միայն վառեցաւ 'ի ծածուկ զինուք առաքինութեան, և առ իւր զբաղմագունդ զօրացն հաւատոց. քաջալերեցաւ յանձն իւր, և յառաջ քան զմտանելն 'ի պատերազմ ետես զյաղթութիւնն՝ եթէ լինիմ պատերազմակից Աստուծոյ և յաղթեմ մարդկան։ Բայց գիտեմ, զի ոմանք լսելով զայս՝ ոչ ինչ զարմանան 'ի վերայ բանիցս ասացելոց. և այս է սովորութիւն անփորձ մտաց։ Մի դու, եղբայր, զայս փոքր 'ի շատէ ինչ համարիցես. քանզի ահագին էր տեղին և երկիւղագին ժամն, և կասկած մահու 'ի վերայ այնորիկ՝ որ իշխէր ասել եթէ յարդարութեան մեռաւ այրն. ոչ միայն յաղօթիցն հանէին զնա քահանայքն, այլ և քան զաւազակս չարամահ սպանանէին։ Այս և աւետարանագիրս ոչ դուշնաքեայ պատմէ զառնս լաւութիւն, այլ ուժգին և մեծապէս։

“Լին, ասէ, Յովսէփ արեմաթացի. համարձակեցաւ եմուտ առ դատաւորն, և խնդրեաց զմարմին Յիսուսի„։ Իբրեւ լսիցես զհամարձակեցաւն, մի դուշնաքեայ համարիցիս, այլ ոգւով և մարմնով ՀՁՆՈՒԹԻՒՆ. ոգւով, զի մեծապէս հաւատք պիտոյ էին 'ի ժամուն. քանզի ոչ իբրեւ զմարմին մարդոյ լոկոյ բառնայր, այլ իբրեւ զմարմին որդւոյ Աստուծոյ։ Դարձեալ ըստ մարմնաւոր կարգի ոչ միայն 'ի ժողովրդենէն էր նմա երկիւղ մահու, այլ եւս առաւել 'ի դատաւորէն և 'ի սպասաւորաց նորա. քանզի ածէին զմտաւ՝ եթէ զինչ են խնդիրք առնս այսորիկ. զայր մի՝ որ յայնչափ բազմութենէ վկայեցաւ եթէ մահապարտ է, որ և ըստ օրինի յանցաւորաց խաչեցաւ և մեռաւ, և սա եկեալ իբրեւ զանյանց և զանմեղ 'ի զուր մեռեալ՝ զմեծ և զՀՀմարիտ վկայ Աստուծոյ խնդրէ. գուցէ վազիւ և 'ի մեր վերայ հասանիցէ պատիժ պատուհասի։

Օ այս ամենայն զմտաւ ինչ ոչ ածէ այրս այս. այլ որպէս յառաջ հաստատեալ էր 'ի ՀՁՄարտութիւնն Արիմաթեայի, եւս առաւել 'ի մահուն հաստատուն եկաց։ Եւ բարձեալ զմարմինն Յիսուսի, պատէ ոչ ՀՁեպով և վարկպարագի, այլ յոյժ խորհրդով և զօրութեամբ 'ի կտաւս սուրբս և պատուականս, և զմուռս բազումս հանդերձ անուշահոտ խնկովք. և այս ոչ արտաքս քան զնախախնամութիւն Հոգւոյն սրբոյ լինէր։ Եկա և զոսկին զոր յառաջ ընկալաւ 'ի մոգուցն, փոխանակեաց 'ի ձեռն պատկերակերպ դահեկանին, ասելով ցորդիս ժողովրդեանն. Յորում կայսեր կերպարանդ գտանի, այդ նմա անկ է. իսկ յորում իմ կերպարան երեւի, այն իմ է։ Զանզի մարգիկ՝ որ են յիշխանութեան, անդրիս կանգնեն յանուն իւրեանց, և զդէմն նկարեն 'ի դահեկանի, զի 'ի ձեռն պատկերագիր նկարուն ոսկին մեծարեալ և յարգեալ լինի յաշխարհի։ Այս զիմ պատկերս կենդանի 'ի կենդանի դէմն մարդոյ նկարեցի. և ոչ ոք բերէ յաշխարհի զնմանութիւն Աստուծոյ, բայց միայն մարդ. ոչ ումեք երեւի Աստուած, բայց միայն մարդոյ. ոչ զոք սիրէ Աստուած յերկրէ, բայց միայն զմարդ. Աստուած միայն մարդասէր, և մարդ միայն աստուածասէր. Աստուած մարդոյ, և մարդ Աստուծոյ. վասն մարդոյ Աստուած մարդացեալ, և վասն Աստուծոյ մարդ

աստուածացեալ։ Զ՝ան այսորիկ երթայք տուք զկայսերն կայսեր, և զ՝Աստուծոյն Աստուծոյ։

Օ՝այս պատարագս յառաջագոյն ընկալեալ Քրիստոսի յերկրպագութենէ մոգուցն, զոսկին՝ որպէս սասցի՝ 'ի պատիւ թագաւորութեանն. իսկ զմուռս և զլիբանակս 'ի մահ վիրաւորելոյն և թաղելոյն։ Զոր պատեցաւ 'ի կտաւս 'ի ձեռաց մարդկան, զի դու պատիցիս 'ի զգեստ պատմուճանի փառաց որդւոյն Աստուծոյ։ Օ՝մրուսեցաւ դի մարմնոյ նորա, որ է տեւողութիւն անխախտելի պահուն յերկար ժամանակաց, զի զմռսեսցէ զքեզ 'ի տեւողութիւն ոչ 'ի ժամանակեան, այլ յանմահութիւն նորոգման սուրբ Հոգւոյն։ Խնկեցաւ իբրեւ մարմին մեռեալ, այն որ խնկելոցն է զամենեսեան 'ի հոտ անուշութեան, որ բուրէ 'ի լուսոյն կենաց. և եղաւ 'ի գերեզմանի նորում, յորում ոչ էր ինչ քնաւ ամենեւին եղեալ։ Զ՝որդ փոխանակ գերեզմանիդ տարցի զքեզ 'ի քաղաքն երկնաւոր՝ որ առանց ձեռագործի կաղմեալ իցէ։

"Զ՝ու եղ, ասէ, վէմ մի մեծ կափարիչ 'ի դուրս գերեզմանին և գնաց"։ Բարիոք առնես, ո՛վ տէր Յովսէփ, զի լինիս վկայ Հիմարիտ թաղման Տեառնդ. քանզի գիտես զժխտողութիւն ազգիդ քո, թէ գուցէ յուրատ լինիցին վաղիւ՝ եթէ քնաւ իսկ ոչ եղաք զնա յայդմ գերեզմանի. քանզի բազումք են որ ասեն, բազումք էք և դուք որ ոչ գիտէք ասել։ Լիկոդիմա գործակից քո, դա է որ ընդ Տեառն իսկ Հալստարագոյնս մնանէր 'ի քննութիւն բանից։ Բանզի վկայեն քեզ փորողք գերեզմանիդ, վկայեն և վաճառականք կտաւոյն, վկայեն և հարիւր լիտր զմռսոյն, վկայեն և դիւազարդքն՝ որ խնկեցին զմարմինն տերունեան. վկայեն և ձեռք օգնականացն՝ որք զմեծ վէմն յեցուցին 'ի դուռն գերեզմանին, եթէ արժան իցէ նմա գերեզման ասել և ոչ յարութիւն կենաց։

Ո՛վ տէր իմ Յովսէփ, յիշեցի և զմեծ վկայն քո զդատաւորն, առ որ չոգալն և խնդրեցեր իշխանութիւն բառնալ զմարմինդ։ Իսկ արդ այդ զի առնէ. եթէ ամենեքեան ընդ նոսա միաբանեսցեն 'ի ստութիւն, յորժամ և դու զյարուցեալն 'ի մէջ ունիցիս, զինչ ունիցին խօսել։ Եթէ պնդեալ յամառեսցեն ընդդէմ քո,

որպէս և սովոր իսկ էն, ասասցես ցնոսա՝ թէ որպէս կա-
պանօք ետուք ցՊիղատոս, և Պիղատոս ետ ցզինուորսն,
և զինուորքն ետուն ցիսաչն, և խաչն ետ ցգերեզմանն,
արդ ձեզ յընտիր լիցի, թէպէտ տուք ցիս 'ի գերեզմա-
նէն զմեռեալն, թէպէտ առէք ընկալայք զյարուցեալն.
ապա եթէ մի յայսցանէ ոչ առնէք, ձեր այլ ինչ գործ
ոչ է, այլ հրաժարել և 'ի բաց գնալ 'ի յարուցելոյս,
զոր և արարէք իսկ։ Արդ դու տէր իմ Յովսէփ, ինդա
և ուրախ լեր. քանզի մեծ էր Յովսէփն առաջին՝ ար-
դարեւ մեծամեծ յայտնութեանց արժանի։ Ի Յովսէ-
փայ 'ի Յովսէփ ձգտեցաւ մեծութիւնն. նա վկայ անա-
բատ ծննդեանն սուրբ կուսին, և սա վկայ թաղման սո-
ցին. և յերկուց ճշմարիտ վկայիցս երեւեսցի այլ բազ-
մութիւն վկայից լուսաւոր յարութեան նորա։

Դարձեալ եկին, ասէ, քահանայքն առ Պիղատոս.
Տէր, ասեն, յիշեցաք՝ զի ասէր մոլարն այն, եթէ յետ
երից աւուրց յառնեմ 'ի մեռելոց. արդ հրամայեա զի
պահեսցեն զգերեզմանն նորա, գուցէ դաւ ինչ յաշա-
կերտաց նորա լինիցի, և բաղումք զհետ համբաւոյն մո-
լորեսցին։ Ցուեալ ձեզ, ասէ, դաս մի զինուորաց. եր-
թայք՝ որպէս և գիտէք՝ զգուշացարուք։ Այս զայս հրա-
ման առեալ 'ի դատաւորէն՝ կնքեցին զգերեզմանն մա-
տանեօք երկոցունց կողմանցն։ Ա՛վ նախահոգակ քա-
հանայք, բարիոք առնէք՝ զի զգուշանայք. որ զանձինսդ
ոչ կարէք պահել, այլում պահանորդք կամիք լինել. և
դուք զարտուղի էք 'ի ճանապարհէն, և նմա մոլար և
մոլորեցուցիչ կարդայք. ուստի՞ գիտէք եթէ մոլար է
նա, և ոչ արժանի իսկ է ամենեցուն ցուցանել զճշմա-
րիտ ճանապարհն. թերեւս այպանիցէք դուք զմոգսն,
որք մոլորեցուցին զՀերովդէս, քանզի և օգուտ իսկ չէր
զնա կացուցանել 'ի վերայ ճշմարիտ ճանապարհին։

Յիշեցաք մեք, ասեն, զմոլարն զայն։ Ասուի ինձ՝ եթէ
այլ ընդ այլոց տայք զպատասխանիդ. մոլար ոչ է ար-
ժան ասել ձեզ նմա, այլ մոլորեցուցիչ զթիւրսդ. որ-
պէս ասէ. "Մոլորեցան նոքա յանապատի և ոչ 'ի ճա-
նապարհի"։ Այս առ ինչ արդեօք ասիցի 'ի Հոգւոյն
սրբոյ, հոգեկիր պատմութիւնն իսկ յայտ առնէ. "Ճա-
ռաջնորդեաց նոցա, ասէ, ընդ փղշտ ընդ կարճոյ ճա-
նապարհն. այլ շրջան առին յանապատին զքառասուն

ամ։։ զի ամենայն յանցաւորութիւնն սպառեսցի յանապատին, և ապա խրատեալք արժանի լիցին մնանել յայն երկիր պարգեւաց։ Որպէս կարծեմ, մոլորեցայք դուք ոչ յանապատի, այլ 'ի քաղաքի. ոչ յերկրէ խոստմանց, այլ 'ի Տեառնէն երկնի և երկրի. և արդ եկեալ առ դատաւորն զնա մոլար կարդայք։ Որ մոլորեցոյց, խօսի Ճշմարիտ. եթէ մոլար է, թոյլ տուք, ոչ ինչ պարտ է կասկածել 'ի բանիցն նորա։ Այսպէս եթէ զոր յառաջն առնէր՝ Ճշմարիտ է, և ոչ կարէք յուրաստ լինել. նա և եթէ լինիք եւս, նոքա բազմագոյնք են քան զձեզ՝ որ տան վկայութիւն նշանագործութեանն. ոչ միայն կենդանիք ողջացեալք 'ի ցաւոց, այլ և հրաժարեալք մահուամբ և այսրէն դարձեալք յարութեամբ. և ոչ միայն որդիք ազգիդ ձերոյ, այլ և բազումք 'ի հեթանոսաց և եւս բազմագոյնք 'ի դիւաց։ Արդ եթէ այսք ամենեքին ոչ մոլար զնա ասեն, այլ դարձուցիչ մոլորելոց, ապա եթէ ձեզ միայն թուի մոլար, երթայք զգոյշ լերուք, գուցէ զեղծիցիք, և ապա այլ ընդ այլսն յետոյ եւս պատճառս խնդրէք։ Հաւադիկ դատաւորդ առ ձեզ բարերար երեւեցաւ. զամենայն զինչ ասացէք, զկամն չարութեան ձերոյ կատարեաց. և այժմ ոչ միայր կամ երկու տոյ ձեզ օգնական, այլ բովանդակ գունդ մի զինուորաց. և զգունդն ոչ եթէ հասարակազգաց, այլ 'ի ձեռն առաջնորդի և սլետի՝ որ մեծ և հաւատարիմ էր դատաւորին։

Այս երթեալ ամենայն պատրաստութեամբ կնքեցին զդուրս գերեզմանին դատու մատանեօք իւրեանց. և ինքեանք անդէն զտեղի առեալ մեծաւ զգուշութեամբ անքուն պահելով, զի մի նենգ ինչ ուստեք լինիցի։ Եկ խմնատունք, մանաւանդ եթէ յոյժ մորոք. եթէ յառնել կամի 'ի մեռելոց, ապա զամենայն ինչ կարող է առնել. զդուրս գերեզմանիդ ոչ բանայ, և զնիքդ ոչ բեկանէ, և ձեզ զանձն ոչ ցուցանէ. դուք զիարդ կարիցէք գիտել՝ թէ յարիցէ զոր 'ի ներքս 'ի գերեզմանիդ աւանդեցէք. կարի թանձրաստիրտք էք, և առաւել թմբրեալք խելօք։ Խամարեաց եթէ զինուորքդ դատաւորիդ անտեղեակ իցեն իրրեւ զարտաքինս և ոչ զներքինս. դուք որ այդչափ տեսէք զմեծամեծ աքանչելիս և 'ի ժամ մահու դորա, տակաւին ապշեալ էք և ոչ

իմանայք՝ եթէ որ զերկիր շարժեաց և զերկինս դղրդեաց, զիաւրդ կարէք պահել դուք զնա, բայց եթէ պահիք դուք նովաւ։ Բանզի զինուորացն մեղադիր ոչ կարեմ լինել, զի սպասաւորք են դատաւորին, և հարկաւորեալք են կատարել զհրամանսնորա. այլ քահանայքն և մեկնիչքն յոյժ լալոյ և արտասուաց արժանի են։ Վէմ 'ի վէմ յեցուցեալ, և զվէմն 'ի ներքս արդելեն, մանաւանդ եթէ զարարիչն երկնի և երկրի. և մատանիս 'ի վերայ եդեալ, և պահապանացն զդուշացեալ։

Տեսանէս զյիմարութիւնն. դու քոյոց մտացդ չկարես պահապան լինել. մինչ դեռ կաս 'ի սուրբ տեղիս, դտանիս յանարժան տեղւոջ. դոս արդ 'ի քաղաքի, և տեսանես Խտաղնա. գործես 'ի ցամաքի, և 'ի ծովու նստիս 'ի նաւի. կաս 'ի յերկրի, և 'ի վեր յերկնից երկնի շրջիս ընդ գունդս հրեշտակաց։ Բայց վասն ձեր գիտեմ, զի ոչ երբեք կարացէք համբառնալ յերկրէս և տեսանել զգունդս երկնից, այլ հանապազ գետնաքարշ աստէն սողելով՝ նմանեցայք անդրաւարին հօրն ձերոյ. զի ոչ միայն հողակերք էք, այլ և հողահեղձք յոգիս և 'ի մարմնս. վասն որոյ ոչ գիտէք զինչ գործէիք։ Զի որպէս յամենայնի յամօթ եղեայք առաջի դատաւորիդ և ամենայն բազմութեան ժողովրդեանդ, եւս առաւել յամօթ լինելոց էք առաջի զինուորացդ՝ որ պահեն զգերեզմանդ։ Յորժամ դոքա զՀրամարիան ձեզ պատմեսցեն, անկանիք 'ի վարանս տարակուսի. սուտ ոչ կարէք առնել, քանզի հաւատարիմք են. յայտնել և արդարացուցանել դուք ոչ կամիք, քանզի կոյր աչօք էք 'ի դատաւորէդ և 'ի ժողովրդոյդ, միանգամայն և Յիսուսոյ։ Եւ արդ զինչ ինչ գործիցէք, եղուկ դուք և վայ ձեզ. չիք մխիթարութիւն և ոչ տեղի ապաստանի, բայց եթէ առ նոյն ինքն զոր սպանէքն և թաղեցէք. և քանզի մարդասէր է, ընդունի և ոչ յիշէ զառաջին յանցանսն։ Բայց ես գիտեմ զի դուք ոչ առնէք զայդ, քանզի չէք արժանի. այլ անդրէն 'ի տաճարն ընթանայք, քանզի դեռ եւս կան կարծիք սուտ յուսոյն։ Գիտեմ զի 'ի խորհուրդ մտանէք, և միտք ձեր ընթանան յարծաթն նզովեալ. զարծաթդ կորուսանելոց էք, ընդ նմին և զանձինս և զամենեսեան՝ որք լսելոց են ձերում մոլորութեանդ։

Այլ տէր մեր Յիսուս Քրիստոս զառ 'ի ներքոյ ա-
ռեգանս զամենայն զփրկագործն կատարեաց, և 'ի
սառորին կողմն երկրիս ամենայն զօրութեամբ իւրով
խաղաց գնաց ինքնանել տեսանել զզօրութիւն մահու, և
մինիթար տալ ազգամեան զաւակին՝ որք յուսահատու-
թեամբ նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու։ Այ-
իրբեւ եհաս յամուր պարիսպն դժոխոց և յերկաթի
պղնձանիգ դռունն, ձայն ահագին մեծ կարապետին
զպարիսպն առ հասարակ դողացուցեալ կործանեաց. և
զօրութիւն կենդանի հրոյն զկարծրանիգ դրունն իբրեւ
զմոմ հալեալ սպառեաց. և Հառագայթք ինքնածագ
լուսոյն առ հասարակ սփռեալ տարածեցան 'ի գոգս և
'ի խորշս անմատոյցս ամուր վայրացն նորա. մաշեցաւ և
սպառեցաւ թանձրացեալ խաւարն, և երեւեցաւ մերկ
խայտառակեալ զազրատեսիլ զարդ սանդարամետա-
կանին։

Յայնժամ Մահու զՀիչ առեալ, զաղաղակ բարձեալ
և լայր դառնապէս. գոչէր բարձրաձայն և ասէր. Մի՞վ
է սա՝ որ եկն եմուտ յանմատոյց ամուրս իմ, մերկնեաց
զիս 'ի բնական խաւարէն զգեստ իմմէ, և այրիմ 'ի
տապ տապակիս յահագին 'ի հրեղէն փառաց նորա. ոչ
ճնաց ինձ խորշ խաւարի և ոչ մութ գիշերոյ, ոչ դաշտ
փախստեան և ոչ լեռն թաքստեան և ոչ ծործոր ա-
պաւինի. չիք հեռաստան՝ թէ փախեայց, և ոչ խորխո-
բատ մթութեան՝ թէ կացցէ։ Մինդունդք աղա-
ղակեն թէ ասա է, և լերինք իբրեւ զմոմ հալին առա-
ջի փառաց սորա. գերեաց զամենայն տարտարոսս, դո-
զացոյց զզօրս խաւարինս՝ զձախոյ մանկունսն իմ։ Այ
է զինեւ, եղուկ եմ ես. կողոպտեաց զգանձս իմ, յա-
ւարի էառ զամենայն զմեծութիւնս իմ, ոչ եթող ինձ
յոյս միխիթարութեան, և ոչ զմի ոք յիմոց սեփական-
ացս։ Մի՞վ արդեօք իցէ սա, զի ես ոչ գիտեմ. Նոյնովք
և Նոյնիա այսրէն ոչ եկին. Աբրահամ և Սահակ և
Յակովք ընդ իս զայս ոչ գործեցին. Նոյ և Աբել և
ամենայն արդարքն ընդ ինեւ անկեալ դնին։ Մովսէս
և մարգարէքն ինձ հնազանդեալ են. Եղիսեդեկ և
ամենայն թագաւորք արդարք յինէն ոչ ապստամբե-
ցին։ Այ զի՞ մի մի թուիցեմ յանուանէ զազգս արանց
կամ կանանց. ահա 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր արդարքն

և մեղաւորք, հզօրք և տկարք, ծերք և տղայք, նա և որք չտեսին զլոյս աշխարհի, առ իս ժողովեալ են. ամենեքեան ընդ իմով իշխանութեամբ կան հնազանդեալ։ Իսկ ո՞վ իցէ սա, տայր ոք գիտացեալ։ Եթէ զտեղին կարէի գիտել, թերեւս և հնարս ինչ իմանայի. եթէ յերկրէ է, ապա և զգաւառն գիտէի և զազգատոհմն. զբնութիւնն զոր սեւանեմ, ըստ ամենայն ազգատոհմի մարդկան բերէ զնմանութիւն. մանաւանդ զթիւ մասանց մարմնոյն ոչ աւելի և ոչ պակաս գտանեմ, այլ ըստ ամենայնցն և զտրայս։ Այլ յերեւոյց սորա կարի իմն զարհուրեալ եմ. զի եթէ յիջանելն իւրում առ իս զբաղումն կորզեաց եհան յինէն, վայ ինձ եթէ չարակամաց սա անդրէն ելանիցէ, երկնչիմ եթէ բնաւ իսկ զամենայնս ընդ իւր տանի, և ես յիմոցս միայն մնացից։ Լա և յանձնէ մեծ երկիւղ է ինձ. զի ոչ միայն զիմն հանէ յինէն, այլ և զտեղի խաւարինս ինձ ոչ թողու. և որպէս իմանամ, յայսմ խաւարէ զիս յայլ խաւար առաքելոց է. և երանի եթէ այսպէս էր խաւարն՝ ուր տանելոցն էր զիս։ Այլ եթէ այսպէս էր ուր տանէրն, նա և հանէր իսկ ոչ զիս աստի։ Այլ արդ և ահա յայտնի եղեւ, որպէս ոչ գիտացի զգաւառ սորա, սոյնպէս և ոչ գիտեմ զնաւարն յոր զիսն տանելոց է։ Այլ չար այս իսկ է ինձ քան զամենայն, որպէս երեւի՝ զի ոչ միայն վասն արդարոց եկեալ է այսր, այլ և վասն ամենայն մեղաւորաց։ Լաւ եթէ ածէ և համար առնէ ընդ իս, և պահանջէ յինէն զոսկերս վախճանելոցն որք առ իս եկին, թերեւս կարեմ տալ։ Իսկ արդ եթէ զնովք և զոչիա յինէն խնդրեսցէ, և եթէ զայս եւս արասցէ ընդ իս, յայնժամ է ինձ վտանգ տագնապի և վարան տարակուսի, զի ոչ ուրեք գտանեմ երթալ։

Արդ իբրեւ այսու ամենայնիւ մահ յանձն իւր տագնապէր, և ոչ յումեքէ գտանէր բան միխիթարութեան, դժոխք ետուն պատասխանի մահու և ասեն. Ո՞ բնութիւն դորա գիտեմք մեք, և զազգատոհմն դորա ճանաչեմք. դա է, վասն որոյ ասաց յառաջագոյն Հոգին սուրբ. "Համբարձեք իշխանք զդրունս ձեր 'ի վերս, և համբարձցին դրունք յաւիտենից, և մտցէ թագաւոր փառաց"։ Եթէ կրկնեսցես և երեքկնեսցես և բաղում

անգամ հարցցէս, զնոյն լուիցես՝ Տէր զօրութեանց, սա ինքն է թագաւոր փառաց։ Եւ իբրեւ լուաւ մահ զտէր անունն և զհզօր և զպատերազմող և 'ի կռիւ եկեալ ընդ իշխանութեամբ մահու, լուծաւ լքաւ և բեկաւ ամենայն զօրութիւն նորա, և հատաւ յոյս թագաւորութեան նորա. զահի հարեալ յերեսաց նորա՝ ձեպէր փութայր փախչել և թաքչել, և տեղի ոչ գտանէր. ձայն բարձեալ յաղերս մեծ աղաչէր և ասէր. Դիտեմ զքեզ, Յիսուս նազովրեցի. դու ես սուրբն Աստուծոյ. մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ։ Արդ իբրեւ կապեաց զնա, և բեւեռեաց բեւեռօք. բեւեռեաց զոտս և զձեռս նորա, և պրկեաց կապեաց ընդ զօրութիւն անպարտելի խաչին. և ետ իշխանութիւն ամենայն մարդկան՝ որ խաչելոյն հաւատան և կատարեն զպատուիրանն Աստուծոյ Բանի, գնալ 'ի վերայ իժից և քարբից և ամենայն զօրութեան մահու. էառ աւար բազում և բերեալ բաշխեաց ամենայն հաւատացելոց։

Եւ մինչ Տէրն զայս ամենայն նահատակութիւնս կատարէր, պահապանքն 'ի քուն կային, և քահանայքն զեղէգնն և զբաղարջն ուտէին։ Իսկ Տէրն կանխագոյն քան զասացեալ ժամադրութիւնն յարուցեալ և հրեշտակացն երեւեալ, այլ ոչ զգերեզմանն խախտէ, և ոչ զդուրսն բանայ, և ոչ զմատանիսն բեկանէ, և ոչ պահապանացն յակն անկանի։ Յոյժ զոհանան հրեշտակքն զայնմանէ, որ յառաջ ժամանակաւ ոչ կարէին հայել և տեսանել զծածկութիւն փառաց որդւոյն Աստուծոյ, և այսօր 'ի պատՀառս մերոյ փրկութեանս եկեալ, և զամենայն տնտեսութիւնն իւր կարգաւ կատարեալ վերնոյ և ներքնոյ և սանդարամետականաց, և նորոյ աշխարհի նոր պտուղ երեւեալ նորոգապէս նոր և նախնիս, նախ հրեշտակք ընդունին և ուրախ լինին 'ի տեսիլ այնորիկ՝ որովք յառաջն կարօտեալն էին։ Եւ քանզի կամն աննախանձ ունին հրեշտակք և սէր սուրբ առանց ստութեան, ՀեպեալՀ փութային տալ աւետիս կանանցն, ոչ միայն բանիւք, այլ և աչաց տեսլեամբք։ Ա աղվաղակի 'ի բաց տապալէին զվէմն 'ի դրաց գերեզմանին, և 'ի ներքս մտեալ երկիր պագանէին տեղւոյն՝ ուր Աստուածն մարդացեալ բազմեցաւ 'ի փրկութիւն մեղաւորաց և 'ի կենդանութիւն հրաժարելոց։ Լսոնար-

հէին և համբուրէին զոյարեին, և մեծապէս պատուէին զտէրունեան զտեղին, և աքանչացեալ զարմանային՝ ե-թէ այնմ ոյում երկինք երկնից չէին բաւական 'ի բնակութիւն, մարդասիրութեամբ իւրով ամփոփեաց զմեծութիւն փառաց իւրոց. էջ և բազմեցաւ 'ի փոքր տեղւոջս, և բաւական համարեցաւ լինել երեքօրեայ ժամանակաւ։

Յայնժամ միանգամայն կատարէին զբանն զոր ասաց Դաւիթ. "Երկիր պագցուք 'ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա,,. և դարձեալ. "Երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է,,։ Եւ այնչափ սիրելի է տեղին, զի ոչ միայն 'ի ներքս մտին հրեշտակքն, այլ և նստէին, ասէ աւետարանագիրն, մի 'ի մնարիցն և մի յանոտիցն։ Արդ զնստէինն իբրեւ լուիցես, մի վաղվաղակի 'ի բաց գնասցես 'ի տեղւոջէ անտի. քանզի ոչ եթէ ժամանակաւ նստէին, այլ նստան և նստին և նստցին մինչեւ յօրն յայն՝ յորում միաբանութիւն լիցի մեր և հրեշտակաց և այնր աշխարհի՝ յոր զերիս աւուրս չոգաւ Քրիստոս, և ժամադրեաց ամենեցուն ժողով լինել առ դուրս նորին գերեզմանի։

Արդ յոյժ սիրեմ զտեղին, և ոչ կամիմ հեռանալ 'ի դրաց գերեզմանին. այլ անդէն նստել ընդ հրեշտակսն, և տեսանել զմեծամեծ աքանչելիսն, և լսել 'ի բերանոյ նոցունց հրեշտակացն՝ որ խօսէին ընդ կանայսն, և հնչեն բարբառ աւետարանաց նոցա ընդ ամենայն աշխարհս։ Քանզի կանայքն այնոքիկ անուամբ յորջորջին տեառնամայրք. իսկ հաւատովք ճանաչին մեծ և աքանչելիք։ Քանզի գիտեն զնոյն Տէր անմայր յերկինս և անհայր յերկրի, և առ գութ մեծի սիրոյն զոր ունէին առ նա՝ բերին իւղս անուշունս, զի հեղցեն 'ի վերայ գերեզմանին։

Եւ քանզի հատեալ էր քուն յաչաց նոցա զայն երիս տիւս և զերիս գիշերս, կանխագոյն Մարիամ մագդալենացի եկն եհաս 'ի գերեզման անդր. և քանզի ըզվէմն 'ի բաց թաւալեցուցեալ էր հրեշտակայն, հայեցաւ 'ի ներքս, և զտէրունական մարմինն անդ ոչ ետես. վասն այնորիկ լայ կոծի ոգեալով և ասէ. Օ ինչ արարիցս, յո՞ երթայց, ո՞ւր ինդրեցից. 'ի խաչէն ինքուցին, 'ի

գերեզմանիս եդին, զդուրս վիմով կնքեցին և պահեն զգուշութեամբ. աշակերտացն վկայեմ, զի ոչ ուրեք շարժեցան զգիշերս ամենայն. 'ի Հրէից զայս ոչ ոք առնէր վասն մեծի շաբաթուն պատուոյ. հեթանոսաց չէր ինչ փոյթ. նա և ումեք 'ի մարդկանէ չէ օրէն դիակ գող շրջել. 'ի զաղանաց կասկած ինչ ոչ է վասն մեծի վիմիս ծանրութեան, և առաւել վասն զինուորացն պահպանութեան։ Այս եթէ յարութիւն կարծեցից, այս վաղ կարի է. ընդ երեկս ուրբաթուն թաղեցաւ. գիշերքս ահա երկու են, իսկ տիւս օր մի է և ժամք երկու, և նա զերիս տիւս և զերիս գիշերս ասաց լինել 'ի սիրտ երկրի։ Այս զիմաստ՝ որ յամենայնի արդարն խօսէր, յայսմ վայրի ստեաց արդեօք. քաւ լիցի, ոչ կարեմ վասն նորա յերկբայս լինել. սուտ և ոչ երբեք խօսէր, այլ արդար յամենայնի. քանզի զամենայն զոր ասաց 'ի կենդանութեան իւրում, եղեւ և կատարեցաւ. իսկ արդ յայսմ միայն ստիցէ՞ արդեօք։ Արդ ես ոչ գիտեմ եթէ արդարեւ յարուցեալ իցէ և կամ նենգեալ յումեքէ։

Զայս ասէր և զկրծիցն հարկանէր և զարտասուս յորդէր. մեծաձայն Ձչել ոչ իշխէր վասն ահի քահանայիցն և զգուշութեան պահապանացն, այլ 'ի սրտին փղձկէր և 'ի միտս հեղձնոյր, և իրացն մխիթարութիւն ոչ գտանէր. մինչեւ յոյժ գթացեալ ողորմեցաւ նմա հրեշտակն և ասէ. Լուն դու, զի լաս յուսահատութեամբ և սուգ առեալ կոծիս անմխիթար. ասա ցիս զպատճառս իրացն, թերեւս լուիցես անսուտ պատասխանի։ Այս նա ասէ. Զի զտէրն իմ բարձին 'ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ուր եդին զնա։ Ասէ ցնա հրեշտակն. Դեղեցիկ ունիս զսէր սուրբ հաւատոցդ, այլ ոչ իմաստութեամբ արկանես զդառն արտասուսդ 'ի վերայ գերեզմանիդ. ոյր ուրուք լուեալ և տեսեալ իցէ՝ թէ մեռեալք զկենդանիս խնդրեն, և կամ մարդիկ 'ի խնդիր լինին կենդանւոյ Աստուծոյ. թուի ինձ՝ թէ քանզի զպահապանսն յիմարագոյն ես դու։ Արդ եթէ կամիս, եկ մերձեցիր 'ի տեղի աստ և տես, զի յարեաւ, չէ աստ. և բնաւ ընդէ՞ր իսկ խնդրես զկենդանին ընդ մեռեալս։ Այս զայս ասացեալ՝ 'ի մեծ տարակուսանս զկինն արկանէր։

Դարձեալ ասէ ցնա հրեշտակն. Մի՛ և ինձ՝ ոչ հաւատաս իբրեւ օտարաշխարհացւոյ, հարց զգաւառականսդ քո՝ որք են հաւատարիմք դատաւորին և խորհրդակից քահանայից ձերոց. նոքա պատմեն ոչ միայն ձեզ որ սիրելիքդ էք, այլ և Թշնամեաց նորա։ Բայց զժամ յարութեան նորա և ես ոչ գիտեմ. այլ 'ի շարժել երկրիս յայնժամ կարծեցի Թէ յարեաւ. և առ գերեզմանի ասա՝ ես և բազում ընկերք իմ էաք, գիտաց և ոչ ոք 'ի մէնջ. 'ի դուրս գերեզմանիս հայեցաք ամենեքեան, վէճն անխախտելի կայր, և կնիքն յայտնի երեւէին։ Իսկ մեր 'ի շարժմանէն կարծիս առեալ՝ բացաք զդրունս և զնա 'ի ներքս ոչ գտաք, մինչեւ ինքն ողորմելովք երեւեցաւ մեզ առ ժամ մի։ Այլ այժմ և մեք ոչ գիտեմք ուր է. բայց զտեղիս ոչ իշխեմք Թողուլ, որովհետեւ այնչափ սիրէ զվէմդ և զխաչդ և զվանափոր գերեզմանդ, և առաւել զձեզ որ 'ի խնդիր էք նորա։ Եւ յայսմ ամենայնի պատՀասա՝ և մեզ դարձեալ ողորմեսցի, և արժանի լիցուք միւսանգամ տեսանել զյարուցեալն 'ի մեռելոց։

Եւ մինչ դեռ զայս ամենայն հրեշտակն ընդ կնոջն խօսէր, ահա ոմանք 'ի պահապանաց անտի յորդեցան մտին 'ի քաղաքն պատմել քահանայապետիցն. Վա՛յ, զի կայք, ասեն, զի նստիք, տեսէք զինչ գործիցէք. յարեաւ Հիմարիա, Թագուցանել ոչ կարեմք. ահա բողոքեմք յապարանս դատաւորին, և ամենայն քաղաքիս զաղաղակ հարկանեմք. ոչ կարեմք յուրաստ լինել զահագին տեսիլ յարութեանն, քանզի մեծ էր երկրիս շարժումնս վերջինս քան զառաջինն. վասն զի և 'ի ժամ խաչին անդ դիպեցաք մեք և տեսաք զմեծամեծսն և զահագինսն որ անդ գործեցան։ Այլ մեզ այն օրն դիւրագոյն էր քան զայս օր. վասն զի ոչ 'ի շարժմանէն միայն բեկան սիրտք մեր, այլ և արք ոմանք երեւեցան մեզ՝ ոչ գիտեմք ուստի էին, յերկրէ կամ յերկնից, անհնարին մեծապէս լուսաւորք և ահագինք, և այնպիսի լուսաւորք՝ որ Թէ 'ի մէջօրէի երեւէին, ծածկէին Հաւագայթք արեգականն առ նոցա անմատոյց լուսով։ Բայց զարմացեալ եմք, եԹէ դուք զնոսրդ ոչ տեսէք, և կամ տապ բոցոյ նոցա այսր զնոսրդ ոչ ազդեաց. քարինք տեղւոյն եռացին և հողն երաշտացեալ ցամաքեցաւ. մեք

կիսամահ 'ի վայր անկեալ դնէաք, և բազումք 'ի մէնջ որ անդ մնացին՝ սրդ եւս մեռեալ իսկ իցեն։

Իբրեւ լուան քահանայապետքն զայս ամենայն 'ի բերանոյ զինուորացն, սկսան տալ պատասխանի. Յորժամ այդպիսի ահագին գործք գործեցան, որպէս դուքդ ասէք, թէ ոմանք 'ի ձէնջ կիսամահ անկեալ դնին, դուք զիարդ կարացէք գալ և պատմել մեզ։ Յետուն պատասխանի զինուորքն և ասեն. Կանայք ոմանք երանելիք եկին 'ի գերեզման անդ՝ մինչ դեռ կայր եւս գիշերոյ, որք բարձեալ բերէին իւղս անուշունս և խունկս սքանչելիս իբրեւ նուէրս աստուածայինս։ Յու 'ի մերձենալ կանանցն 'ի գերեզմանն՝ յոյժ դիւրութիւն եղեւ մեզ 'ի ժամուն. օրհնեալ լեցին կանայքն այնոքիկ, և երանի քաղաքին՝ ուստի նոքա իցեն. և յիրաւի երանելիք այնպիսի կանանց։ Մեք այնպէս թմբրեալ և անկանգնելի 'ի վայր անկեալ էաք, և մի ոմն 'ի նոցանէ աներկիւղ և անկասկած մերձեցեալ 'ի գերեզմանն հայէր. և իբրեւ զմարմինն անդ ոչ տեսանէր, յարուցաւս հարեալ լայր դառնապէս. և վասն մեռելոյն պատասխանի ըստ յարանցն զյարուցեալ և զկենդանւոյ։ Յու որպէս 'ի ժամուն ազդեցաւ՝ թէ հրեշտակք էին և ոչ մարդիկ, որք մերձաւորագոյն զնշանսն տային կանանցն զխաչելոյն՝ Յուստուած խոստովանել և ոչ մարդ, կենդանի և ոչ մեռեալ. քանզի իբրեւ դիւրացաւ մեզ 'ի գալ կանանցն՝ մեք մեզէն իսկ լուաք պատասխանի 'ի բերանոյ երեւեցելոցն՝ որք ասէին. Ո՞ի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. ո՞չ յիշէք զոր յառաջագոյն ասաց՝ թէ պարտ է որդւոյ մարդոյ մեռանել և թաղիլ և յերիր աւուր յառնել։ Յու եթէ զայն ոչ յիշէք, արդ ահա տեսէք՝ յարեաւ չէ աստ, և յառաջագոյն քան զձեզ երթայ 'ի Գալիլիա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։

Ո՞այս լուեալ քահանայապետիցն՝ զարմացան հիացան և բեկան սիրտք նոցա. զիտացին եթէ ոչ պատճառանօք պատմեն. 'ի խորհուրդ մտին և ասեն. Արդ զի՞նչ գործեսցուք. որովհետեւ այսպիսի յայտնութեամբ յարեաւ, մարդիկ և հրեշտակք տեսին. զպահապանսն զոր խնդրեցաք 'ի դատաւորէն, նոքա մեծամեծ նշանօք պատմեն զյարուցեալն. արդ 'ի Գալիլիա եւս երթայ, և մեծամեծ յայտնութիւնս առնէ անդ։

Digitized by Google

Եւ իբրեւ այլ հնարս ոչ կարացին խմանալ, արկին ձեռս 'ի զանձս տանջարին. արծաթ բաղում ետուն պա-հապանացն և ուսուցին նոցա պատճառս զաւաջին պա-տասխանուոյն՝ յաղագս որոյ զմինուորքն հրամայեցան նո-ցա 'ի դատաւորէն։

Այլ Մարիամ անդէն ընդ հրեշտակն պատեալ փարի զգերեզմանաւն, և 'ի խնդիր է յարուցելոյն. և առ յոյժ ջերմ սիրոյն անդադար ածէ զաչսն զվայրոքն մինչեւ ընդհեալ նմա երեւումն փափաքելի ոչ հրեշտա-կի ուրուք, այլ նորին տեառն Յիսուսի։ Զանգի գրէ աւետարանագիրն. Օ այս իբրեւ ասաց նմա հրեշտակն, հայեցաւ նա 'ի կողմն մի տեղւոյն՝ ուր 'ի խաչ հանեալ էր զՅիսուս. և ետես անդ զՅէրն, այլ ճանաչել ոչ կարաց. այլ կարծեաց եթէ պարտիզպանն իցէ, ասէ ցնա խանդաղատալի բանիւք. Ցէր, եթէ դու բարձեր, ասա ինձ՝ ուր եդիր զնա, զի ես առիցս զնա։

Զարիոք տքնիս, ո՛վ Մարիամ, զգիշերս ամենայն, և գեղեցիկ են խնդիրք առաւօտիդ. ոչ ոք 'ի մարդկանէ զրկէ զվաստակաւորս իւր, և ոչ Աստուած զանապ ըզ-վարձս վաստակոց քոց. զվարձս գիշերային աշխատու-թեան քո հատուցանէ քեզ հրեշտակդ՝ տալով աւե-տիս զյարուցելոյն 'ի մեռելոց, և զտապ անձկոյ սրտի քո փախուցանէ երեւումն պարտիզպանիդ։ Զարդէս ինձ թուի, գտեր զգողն. և ոչ միայն զգողն, այլ և ընդ գո-ղոյն զգողոնն. քանզի ինդեա 'ի վերայ, դա է Ճշմարիտ. և ոչ զայլոյ գողացեալ, այլ զիւրն իսկ առեալ ունի. մի ասեր՝ եթէ դու բարձեր, իբրեւ այլ զայլոյ ինչ, այլ ու-նի իսկ և զիւրն ունի։ Դա է որ եդաւ 'ի գերեզմանիդ, դա է որ յարեաւն այտի, դա է որ խաչեցաւ, դա է որ 'ի մեռեալս չոգաւ, դա է որ եմուտ 'ի տուն հզօրին, դա է որ կապեաց զհզօրն, դա է որ առ զգանձս նորա յա-ւարի, դա է որ բաշխեաց պարգեւս բազմաց, դա է Ճըշ-մարիտ պարտիզպանն, դա է որ տարաւ զաւազակն 'ի պարտէզն. զդա խնդրէիր, վասն դորա լայիր, վասն գո-ղա լուար 'ի հրեշտակէն թէ յարեաւ, վասն դորա ող-բայիր, վասն դորա հրեշտակն զգերեզմանաւն շրջի, վասն դորա բերեր զիւղդ և զխունկս. եթէ վասն դորա բերեր, այլում 'ի խնդիր մի լինիր։ Դայց զոր ասացերն՝ ուր եդիր զնա, ցոյց ինձ՝ զի ես առիցս և գնացիցս, զի-

տեմ՝ զի առ սէրդ ասացեր. և եթէ ասայ զինքն ցքեզ, տեսանիլ ոչ կարես, նա և ոչ միւս Աբրահամն յակովբեանց և ոչ կղէոփղեանց Աբրահամն և ոչ քոյր՝ Ղաղարու և կոյսն Աբրահամ՝ որ է մայր դորա։ Այլ եթէ ամենեքեան միաբանիք, բառնալ զդա ոչ կարէք, քանզի յոյժ ծանրացաւ. ծանր է այսուհետեւ որ կամին մարմնապէս մերձենալ 'ի նա, և թեթեւ այնոցիկ՝ որք հաւատով մերձենան առ նա, զոր այժմ իսկ լուիցես 'ի նմանէ։ Քանզի իբրեւ ծանեաւ, ասէ, Աբրահամ, եթէ Յիսուս ինչ այն, յորմէորմէեաց զնա հին սովորութեամբն՝ բաբառնի ասելով, որ թարգմանեալ կոչի վարդապետ։ Հա դեռ եւս աւադիկ Աբրահամ, 'ի մարմնի ես և մարմնապէս նայես նոս, և մարմնապէս խօսիս, և մարմնապէս խընդիր առնես. արդ զիարդ արգահատեաց և յայտնեաց քեզ 'ի նոյն առաջին կերպարանն, նոյնպէս կամիս մերձենալ 'ի նա թանձրութեամբ. վասն որոյ լսիցես պատասխանի՝ թէ մի մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ՝ ես առ հայր իմ։ Այլ վասն էր արդեօք զայս ասէր. քանզի պտուղ էր նորոգ ծառոյն կենաց, ոչ կալաւ յանձին եթէ կանայք յառաջ քան զարս մերձեսցին 'ի նա. բաւական համարեցաւ զազգս կանանց պատուել 'ի ձեռն ծննդեանն. այլ զերեւումն յարութեանն առնէ հրեշտակօքն որ ունին զյանգութիւն առ արու բնութիւնս. միջնորդաւ տեսութեանն և 'ի ձեռն հրեշտակացն առաջնորդութեան երեւի կանանց, և առաքէ առ աշակերտսն։

Երկուս իրս յայտնելով 'ի տեղւոջն, զԱբրահամ ուսուցանէ վասն իւրոյ վերաբերբ բնութեանն՝ հայր իւր յերկինս անուանելով, և զաշակերտսն միխթարէ եղբարս զնոսա անուանելով։ Քանզի յորժամ ասէ, երթամ ես առ հայր իմ և առ հայր ձեր, հաւասարէ զինքն ընդ աշակերտսն, և մի հայր իւր և նոցա ցուցանէ. բայց իւրն առանձին ասելով, իսկ նոցա ամենեցուն 'ի միասին։ Յոյժ անջրպետեալ զատանի 'ի միմեանց, և իմանի յայտնութեամբ յոգիս իմաստնոց. քանզի մարդ է ըստ բնութեան ամենեցուն, հաւասարէ զինքն ըստ աշխարհի. և Աստուած է անեղութեամբ ընդ Հօր, զատուցանէ զինքն ոչ միայն յաշակերտացն, այլ յամենեցուն բանական գոյութեանս։ Այլ առ Աստուած իմ,

Digitized by Google

ասէ, և առ Աստուած ձեր։ Եթե ահա գիտեմք զի Աստուած է, արարիչ և թագաւոր և տէր. և թէ գոհանամք զարարչական զօրութենէն, է նա մեր թագաւոր վերակացու և խնամածու. և եթէ զընդդէմն գործեմք, է նա մեր տէր, դատի խրատէ և ածէ յաւղղութիւն։

Իսկ քո, Տէր, հայր զի է՝ գիտեմք, վասն զի ուսաք 'ի քէն Աշմարտապէս զայդ. զիարդ ասես՝ երթամ ես առ Աստուած իմ և առ Աստուած ձեր։ Այո, ասէ, քանզի հայր է ձեր արարչութեամբ, հայր է և իմ ծնողութեամբ. Աստուած է ձեր, որպէս ասացի, ըստ հաստողութեան, Աստուած է և իմ ըստ անօրէնութեանս։ Այլ իմ, ասէ, առանձին միայն. իսկ ձեր ոչ առանձին, այլ ամենայնի՝ մարդկան և հրեշտակաց և երկնի և երկրի և տարերաց գոյացութեանց։ Այս որպէս Հայր բարերարութեամբ իւրով՝ չաղաչեցեալ ուրուք՝ 'ի ձեռն Որդւոյ արար զաշխարհս ամենայն զերեւելիս և զանեւելեւոյթս, նովին մարդասիրութեամբ և Որդի կամաւք Հօր յանձն իւր էառ զմարմին մերոյ բնութեանս, և ընկալաւ չարչարանս յիւր մարմնին մինչեւ 'ի մահ խաչին, 'ի թաղումն և 'ի յարութիւնն։ Այս վասն այնորիկ Աստուած մարմնայեալ. և այսուհետեւ ոչ եւս մարմին, այլ Աստուած. և Աստուած ոչ առանց մարմնոյ, և մարմին ոչ եւս ծանր բնութեամբ, այլ մարմին աստուածային, անորակ և անքանակ, աներբ և անուր։ Անբաժանելի և անքակ է Աստուած բանն, միշտ անձառ և անպատում, և ընդ նմին անձառելի և մարմնին։ Եթէ Աստուած ինքն յինքեան, ոչ 'ի տեղւոջ, այլ տեղի ամենեցուն. ոչ 'ի ժամանակի, այլ ժամանակ 'ի նմանէ. ոչ յեղանութեան, այլ լինելութիւնք նոցա, և գեր 'ի վերոյ ամենեցուն երկնի և երկրի, և երկնից երկնի շքաղագոյ բնութեանն. ընդ նմին իմասջիր և զկուսածին մարմնին։ Ա՛ն այսր ամենայնի ունիմք իշխանութիւն անուանիլ եղբայր Արիստոսի, և ասել ընդ նմին հայր մեզ զԱստուած. զի ընդ միոյ մասինն որ միացաւ ընդ Աստուած բանն, և վերաբերեցաւ և եղ յերկինս՝ նըստաւ ընդ աջմէ Հօր, ամենայն մասունք մարդկային բնութեանս ընկալան զաւետիս յուսոյ. զի նովաւ և 'ի ձեռն նորա վերաբերեսցին և հասցեն և փառանգեսցեն

զանախտ և զանչարչարելի տեղին, ուր որդին Աստուծոյ նստի ընդ աջմէ Աստուծոյ։

Վասն այսորիկ առաքէ Տէր զՄարիամ մագդալենացի առ աշակերտսն ասելով. "Երթամ ես առ հայրն իմ և առ հայրն ձեր, և Աստուած իմ և Աստուած ձեր"։ Եւ եկեալ Մարիամ պատմեաց Պետրոսի և Յովհաննու եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ խօսեցաւ ընդ նմա։ Օգոյս լուեալ Պետրոսի, ազդեցան նմա յիշատակ առաջին բանիցն Տեառն զոր ասէր՝ եթէ "Յետ երից աւուրց յառնելոց եմ ես"։ Յոտն եկաց վաղվաղակի Յոհաննու հանդերձ, և ընթացան երկոքեան 'ի գերեզման անդր. և քանզի մեծ էր ձեպ փութոյն, ելեւեալ առնէին զմիմեանսիք. յառաջագոյն հասանէր Յովհաննէս. զհայելն հայի, այլ 'ի ներքս ոչ մտանէ. և հասեալ Պետրոս, 'ի միասին մտանեն տեսանեն զգերեզմանն զի ունայն և թափուր էր 'ի մեծ գանձէն որ առանդեցաւ. բայց միայն կտաւքն՝ զի անկեալ դնէին 'ի վերայ բարձրացեալ խարակին. իսկ վարշամանկն ոլորով զգլուխն պատեալ էր, ոչ խառն ընդ այլ կտաւին կայր, այլ ուրոյն ծալեալ եղեալ։

Եւ այս զինչ նշանակէ՝ ընկենուլ կտաւոցն, և կամ չխառնել վարշամանկին 'ի կտաւսն։ Աստ բնախօսութեան յայտնի է ամենեցուն. երկնաւոր բնակիչքն՝ երկրաւոր հանդերձիցն չեն կարօտացեալք. իսկ Տէրն երկնի և երկրի, ինքնագոյ զօրութեամբն և բնական փառաքն ծնաւ 'ի սուրբ կուսէն. ոչ ապաքէն՝ որով եկն առ մեզ 'ի Հօրէ, նովին զօրութեամբ առ Հայր վերադարձաւ։ Այլ ես և ըստ մերում բնականիս ասացից. ապաքէն վասն մեր եկն յաշխարհս Տէր աշխարհիս. իսկ յորժամ զմերս յիւրսն տարաւ, պէտք մերայոցս անդ ոչ ինչ էին պիտոյ. եթող զկտաւսն աստէն, և 'ի ձեռն կտաւոցն-մնալոյ՝ աշխարհս մնացին իբրու թէ 'ի սուգ և 'ի չարչարանք 'ի ձեռն այս երեւման, զի և դու քեզէն ըստ քում վարդապետին կազմեսցես։ Զանզի ամենեւին մերկ էիր յաշխարհի. և մինչ էիր յաշխարհիս, վերացար ըստ պիտոյից սորա. իսկ յորժամ ելցես աստի, ոչ ինչ կարասցես տանել ընդ քեզ. այլ որպէս եկիր, նոյնպէս երթիցես։ Եւ եթէ յառաջագոյն զայս իմասցիս, կեանք վարուց քոց զուարթնոյ նմանեսցին, և ելք կատարածի քո զկնի Տեառն հետեւեսցին։

Digitized by Google

Այլ վասն վարշամակին յոյժ մեծախորհրդութիւն տեսանեմք. քանզի յարութիւն էր մարդոյ և Աստուծոյ. մարդոյ ըստ բնութեան, Աստուծոյ ըստ տարաբնութեան. և երկոցունց միացելոյ՝ ոչ եւս այնուհետեւ երկու թուին, այլ միական՝ գոյականին։ Յոյժ օրինաւոր իրք 'ի տեղւոջն երեւեցան, զոր և մեծ Աքաքեանն հաստատուն վկայութեամբ ցուցանէ մեզ։ "Գլուխ կնոջ այր իւր է, և գլուխ առն Քրիստոս, և գլուխ Քրիստոսի Աստուած,,. գլխոյ 'ի գլուխ աստիճանեաց զաշխարհս, և զամենեսեան հանեալ տարաւ առ Հայրն բոլորեցունց։ Վասն այսորիկ պատուականագոյն երեւեցաւ վարշամակն 'ի մէջ այլոց կտաւոցն. զի դու իմաստիս ճշմարտապէս ոչ զորոշումն զատանելոյ, և ոչ զմիութիւն սեղմութեան. և ոչ այլ ուրուք է գլուխն, այլ որոյ է մարմինն. և ոչ մարմինն այլ ուրուք է, այլ նորին գլխոյ. և ոչ մարմինն գլուխ է, և ոչ գլուխն դարձեալ ոտք են. այլ անդամք բազում՝ կարգեալ և հաստատեալ և կազմեալ են ըստ իւրաքանչիւր մարմին. քանզի պատիւն 'ի գլուխն է, ընդ նմին գլխոյ և ամենայն մասունք մարմնոյն պատուեցան։

Իսկ եթէ առ մերս այդպիսի է տեսաւորութիւն, ո՞ր չափ եւս առաւել իմանալի բնութեանն։ Գլուխ է և աստուածութիւնն, գլուխ է և որդիութիւնն, գլուխ է և սուրբ Հոգին։ Այլ աղէ, մտացդ աչօք հայեաց և տես, և լուր հաւատովք զբանն տերունական որ ասէ. "Ոչ ոք գիտէ զՀայրն՝ բայց եթէ Որդի, և ոչ զՈրդի՝ եթէ ոչ Հայր,, և 'ի ձեռն սուրբ Հոգւոյն ճանաչին Հայր և Որդի՝ նորին սուրբ Հոգւովն։ Քանզի Աստուած Հոգի է, և Հոգի Աստուած. Հոգի՝ Որդի, Հոգի և սուրբ Հոգին։ Այլ արդ զի այս այսպէս է, ոչ եթէ Հայր Որդի, և ոչ Որդին Հայր, և ոչ սուրբ Հոգին Հայր և Որդի։ Հայր արարչական զօրութիւն, որ ունի նշանակ թագաւորական զօրութեանն. Որդի բնական զօրութիւն, որով երեւի դատողական զօրութիւնն. Հոգի հաշտական զօրութիւն, որով յայտնի երեւի կենարար զօրութիւնն. և ասի միտնական աստուածութիւն։ Հաճեալ է Որդի 'ի բնական անուանն, որ է զօրութիւն և իմաստութիւն, և նոյն ինքն ծնելութիւն և անեղութիւն. հաճեալ է և սուրբ Հոգին յիւր անձն և յէութ-

թիւն, հանդուրժեամբ յԱստուծոյ, անձառելի և անարատելի։ Հանգուցեալ է և կամք Հօրն յաստուածութիւն հայրութեանն, որ է պատճառ ճառելեացս և անձառելեացն։ Արդ ծալեաց և եղ զվարշամակն մեկուսի. ինքն Քրիստոս զիւր գլուխն պատուեաց։ Այս արդ ոչ մեծ իցէ, արդեօք որ պատուիցէ, եթէ որ պատուիցին։ Իսկ եթէ այլ յայլմէ ունէր զպատիւն, այդպէս էր. արդ եթէ ինքն զինքն պատուէր, զիարդ կարացեալ 'ի մէջ անբաժանելոյն բաժինս ցուցանել. և որպէս ընդ Քրիստոս և ընդ իւր գլուխն չիք անջրպետութիւն 'ի մէջ արկանել, և ոչ ընդ Քրիստոս և ընդ իւր Հայրն, այլ միայն խորհուրդ պատուոյ, զի ուսուցէ զերկոտասանսն . . . . . Հայր յարուցանէր, Որդի յառնէր, Հոգին սուրբ աւետիս մատուցանէր արարածոց։ Այս որպէս յարարչութեանն հաւասարութիւն էր, Հայր կամէր, Որդի առնէր, և սուրբ Հոգին զարդարէր, ապաքէն և նորոյ աշխարհիս սկիզբն լինելութեան էր յարութիւնն Քրիստոսի. վասն այսորիկ բոլոր բոլորովին բովանդակ անդ էր սուրբ Երրորդութիւնն. միանգամայն և ամենայն զօրութիւնք արարածոցս։

Տեսանեա՞ զի ոչ ինչ պիտոյ էր զկտաւան տանել ընդ իւր. այլ փոխանակ կտաւոցն զամենայն աշխարհս զգեցաւ, և զաշխարհի հայրենի փառսն զարդարեաց։ Իսկ զխորհուրդ գերեզմանին և զկտաւոցն և զվարշամակին յայտնեաց գլխոյն աշակերտաց։ Վանզի գերեզմանն է նմանութիւն աշխարհիս՝ յորում թաղեալ եմք, և կը՝ տաւքն ժամանակեան՝ պատանք զարդուց սոցա. իսկ պատիւ վարշամակին, որպէս վերագոյն ասացաք, ակրն կալութիւն յուսոյ այնոցիկ՝ որ կարեն քացահայեաց ակամբ 'ի հեռաստանէ տեսանել զՀայրն բոլորեցուն, որ պատուելոյ է զգլուխ ամենեցուն, որք արժանի լինին երկնաւոր պարգեւաց պատկին։

Բայց թերեւս ոք յուսումնասէր փափաքողաց քննել կամի և լսել զայս եւս՝ եթէ ո՞ ծալեաց զվարշամակ գլխոյն և եղ մեկուսի, Տէր ինքնին, եթէ հրեշտակքն. գիտասցէ այնպիսի հարցողն, զի զԱստուծոյ ակնարկութիւնն ամենայն ոք կատարէ՝ բանաւորք և անբանք. բանաւորք 'ի ձեռն զգայութեանց կատարեն զհրամանս

նորա. իսկ անբան տարերքս 'ի բնական շարժմանցն. իսկ հրեշտակք առաւելեալ են քանաւորութեամբ, և բնակութեամբ մերձաւորագոյնք են առ աստուածութիւնն, գիտելով զխորհուրդ կամաց նորա։ Այս որպէս երեւի՝ առ սէր Տեառն իւրեանց յոյժ փարեալ խանդաղատին զգերեզմանաւն, և 'ի ներքս մտեալ զանձուկն 'ի կտաւսն սփռէին, բառնալով և դնելով և բազում անգամ համբուրելով. որպէս զի գտանիցէ զնիշ անձկացելոյ՝ պատիցէ փարելով և յոյժ խանդաղատիցէ, և զինչ գործել արժան է՝ զայն ոչ գիտեմ։ Այսպէս ինն և հրեշտակքն առնէին ընդ կտաւսն. և 'ի ձեռն առեալ զվարշամանն, ծալէին կազմէին և մեկուսի դնէին ըստ բնութեան մարդկան սենեկապանաց զոր գործեն յարքունիս, և զամենայն հանդերձ թագաւորին դնեն 'ի պատուական տեղւոջ. իսկ թագին ուրոյն ինն առնեն զգուշութիւն, և ոչ խառն ընդ այլ հանդերձսն պահեն։ Այսպէս և երկնաւոր թագաւորին մերոյ զօրքն երկնից 'ի սպաս ինքեալ՝ շողային զցանկալի գերեզմանաւն. և երկուքն 'ի ներքս մտեալ՝ զամենայն ինչ տեղւոյն պատուեն. բայց զթագն ոչ խառն ընդ այլսն ընկենուն, այլ ուրոյն դնելով ուսուցանեն մարդկան զմիասնական զկիսաւորութիւն Երրորդութեանն, ուստի ամենեքեանս առին զլինելութիւն։

Սրդ Պետրոսի, զայս խորհուրդ իմացեալ գնաց 'ի գերեզմանէն ընդ միտս զարմացեալ, եմուտ 'ի տունն հանդերձ այլովք աշակերտաւքն։ Այս քանզի երկիւղ մեծ էր վասն ահին Հրէից, զգուշութեամբ մեծաւ զգուշն 'ի փակի ունէին՝ լուռ նստելով. բազում խորհուրդք յածման մտանէին 'ի սիրտս իւրեանց, և իբրեւ զորբս և անվերակացուս զանձինս համարէին. 'ի Հրէից հալածեալ և յԱստուծոյ մնացեալ և յընտանեաց վաղուխսկ հեռացեալ էին, տխուր և տրտում և ողորմելի քան զամենայն մարդիկ երեւէին 'ի ժամուն. քանզի գոյր ոչ իսկ 'ի նոսա որ կարէր քանալ զբերան իւր, և քան միութարութեան խօսել ընդ նոսա։

Այս մինչ դեռ յայսմ նեղութեան էին, եկն Յիսուս, եկաց 'ի մէջ նոցա և ասէ. Ողջոյն ընդ ձեզ։ Այս այս էր մեծ զարմացումն և ահագին տեսիլ. դուրք փակեալ, և

շուրջ զշինուածոցն ամենայն զգուշութիւն պատրաստութեան, և մուտ 'ի ներքս ամենեւին ոչ գոյր։ Որբեւ ետես Տէր եղեալ յեւս յափշութիւն կրթեցեան սիրտք նոցա, վաղվաղակի եցոյց զձեռան և զկողս, զի 'ի մեծ և յերեւելի նշանացն ծանիցեն զՏէրն, և փարատեսցէ զտրտմութիւն սրտից նոցա։ Արձեալ կրկնեաց և քաջալերեաց կրկին ողջունիւն։ Եւ քանզի ընդդէմք են խռովութիւն և խաղաղութիւն, մատոյց զողջոյնն օգնական խաղաղութեանն. հալածեաց և հեռացոյց 'ի սրտից նոցա զյոյզ խռովութեանն, և փարատեաց յանձանց նոցա զերկրային զսուգ և զտրտմութիւն, և ապրար զնոսա անխախտս մտաք և անչարչարելիս հոգւով։

. Եւ իբրեւ յամենայն կողմանց մաքրեաց զնոսա յերկրաւոր ապականութեանցս, պնդեաց և կարծրացոյց զանձինս նոցա առաւել քան զհարստութիւն անդամանդի, զի կարասցեն ընդունել զանպատում շնորհս նորա, որ մեծն է և առաւել քան զամենայն, ընդ որում ոչ ինչ կշռի յերեւելեացս։ Իսկ արդ զիմիրդ կշռեցիր ընդ այնմ՝ որ ոչ տեսանի և ոչ զննի, և ամենայն տեսանելեացս և ըմբռնելեացս նա է կենդանութիւն։ Եւ զինչ, այն որ այնչափ մեծացեալ առաւելաւ քան զամենայն, ես ոչ կարեմ ասել. իմանամ է, գիտելով Հնմարիտ՝ զի գոյ Աստուած. հաւատարիմ է ինձ. զորպիսութիւն նորա ոչ գիտեմ. ես որ երեւինս՝ զայս եւեթ գիտեմ, զաներեւոյթն Աստուծոյ՝ Աստուած միայն գիտէ։ Այլ արդ ահա հարկեցայ ասել զոր ոչ դիտեմ. զի որպէս եմուտ դրօքն փակելովք, և որքն ողջ կնչին և դուրքն ոչ էին խախտեալք, և ինքն բոլոր 'ի ներքս էր, մինչեւ զձեռան և զկողն եցոյց նոցա, երկիցս անգամ բերանալիր ողջունիւ հաստատեաց զնոսա, ըստ նմին օրինակի շնորհէ Տէր աշակերտացն իւրոց զայն պարգեւս՝ զոր ծով ոչ տանի, և ցամաք ոչ հանդարտէ, և երկինք թէ բաւեսցեն առ 'ի բնակութիւն։

Արդ ասա զոր ասելոց ես, մինչեւ յերբ մեծացուցանես յանչափութիւն։ Ասել ահա կամիմ, այլ 'ի դիտելոյն վաղ հրաժարեցի։ Արձեալ և երկնչիմ յոյժ. գուցէ իբրեւ ես ասիցեմ, ոչ հանդարտիցես լսել. և յոչ հանդարտելն քո՝ կասկածեմ գուցէ և մեռանիցիս իսկ. և մեռանիցիս իսկ ոչ միայն ըստ բնութեան, այլ ըստ

Digitized by Google

բնութեան և ըստ տարաբնութեան։ Բայց ես կիտեմ զի դու այսրէն ընդդիմանաս ինձ և ասես, թէ դու ուսուցիչ լուար, և յորժամ լուար՝ ընդէր ոչ անդէն և մեռար, այլ այժմէն կեաս և կելոյ ակն ունիս։ Այո՛, այսպէս է. ես ոչ միայն այժմէն՝ և կամ սակաւ կելոյ ակն ունիմ, այլ և անմահացայ իսկ։ Այս եթէ արդարեւ այդ այդպէս է, ասա ինձ զի և ես լուայց և ընկալայց և անմահացայց։

Այսեմ, եթէ յանձն առնուս. բայց սրբեցիր մաքրեցիր, ամենեւին պարկեշտացիր, ամենեւին առողջացեալ՝ի բաց արա զքեզ յերկրային ախտից չարչարանաց և տանջանաց. պատրաստեա զքեզ երկնաշնաց ընտրելոցն. արտաքոյ դիր զքեզ ամենայն աշխարհական հոգոց և ամենայն աղտեղութեանց սորա և՝ի պատիր՝ի զբօսանաց սորա, որ է ժամանակեան մեծութիւնս։ Յորժամ զայս ամենայն թողում՝ի բաց, զինչ տացէ ինձ ընդ այսր ամենայնի։ Այսոցիկ քեզ. միայն հաւատա, միայն յուսա, միայն կամեաց, միայն ախորժեաց, միայն բուռն հար և զհետ երթ։ Այս ոչ երթամ և զմիր զհետ. զնաչեցեալն։ Այս ոչ տանիցի.՝ի տուն։ Յոր տուն. ուր աշակերտքն ժողովեալ նստին, և դուրքն փակեալ են. ընդ ո՞ր կամի՝ մտանել, և արարածք չարգելուն զնա. և դու եթէ կամիս՝ կարես։ Այսրա բնութիւնն, ասէ, տանի զայն. և դու հաւատա, վստահացիր քեզ, և կարես մտանել ընդ նմա։ Այս խոնարհեցոյց զերկինս և էջ՝ի գալն իւր առ քեզ. և դու հաւատա առաջին գալստեանն և թռչիս և՝ի վեր ելանես։ Այս ծնաւ՝ի սուրբ կուսէն, և կուսութիւնն ոչ խախտեցաւ. և դու հաւատ ունիս՝ի կուսածին բանն Աստուած, և ծնանիս՝ի սուրբ կուսէ աւազանին, և անուանիս եղբայր Քրիստոսի, և կուսութիւն աւազանին ոչ լուծանի։ Այս յիւր մարմնին ընկալաւ զչարչարանս, և չարչարելի մարմնով եբարձ զչարչարանս ամենայն մարմնոց, և ինքն անվնաս պահեցաւ յամենայն չարութենէ. հաւատա և դու սուրբ չարչարանացն Քրիստոսի, և լեր նմա չարչարակից չարչարելի մարմնովդ, և անվնաս պահեա զոգիդ յամենայն վնասալի ախտից աշխարհի։ Այս զի ոչ էր պարտ մահու՝ մեռաւ, և թաղեցաւ և յարեաւ՝ի մեռելոց, և զգուրս գերեզմանին ոչ եբաց. դու հաւատա՝ի թաղեցեալն և յարուցեալն,

Digitized by Google

որ գայ աւերել զամենայն գերեզմանս, և յարուցանել զամենայն ննջեցեալս առանց թերութեան և պակասութեան։ Լրդ եթէ զայս զօրութիւնս հաւատոց ըզգեցցիս, և 'ի տուն Պետրոսի մտցես, և նստցիս ընդ աշակերտսն ամենեսեան նովին հաւատովք, զնոյն ողջոյն ընկալցիս, և նովին ողջունիս դարձեալ արժանի լինիցիս մեծի պարգևին այնմիկ զոր ասելոց եմ։

Զանազի յորժամ կայր Տէր 'ի մէջ աշակերտացն 'ի տան՝ յոր եմուտ դրօքն փակելովք, նմանեցաւ տունն այն երկնի և երկրի, և ամենայն զարդուց և զուարթնոց երկնից և ամենայն էիցս կենդանեաց և մարդկան որ յերկրի, և մնաւանդ ինքեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Լ։ որպէս յարարչութեանն ըստ Ճառեցելումն իմանի "Լրասցուք, ասէ, ըստ պատկերի մերում,,, իբրեւ առ թուական, իսկ արարն՝ ըստ պատկերի Լուսաւորչի, և փչեաց իմանալին ըստ միականի զօրութեանն, սոյնպէս և 'ի տանս յայսմիկ երկիցս ողջունիւն։ Լ։ "որպէս առաքեաց զիս Հայր իմ, առաքեմ և ես զձեզ,,, Ճանաչի ըստ առաջին երրեակ թուին։ Իսկ որ փչեաց 'ի նոսա և ասէ "Լառէք զՀոգին սուրբ 'ի ձեզ, և եթէ ումեք թողջիք զմեղս իւրեանց՝ թողեալ լիցի, և եթէ զոք կապեսջիք, կապեալ եղիցի,,, այս դարձեալ տանի հանէ անդրէն յառաջինն յիսկզբան բանիցն զվերադարձելով. "Լ։ արար Լուսաւորչի զամենայն ինչ. և ետես Լուսաւորչի զամենայն զոր արար, և ահա բարի է յոյժ,,։

Լ։կաք ինչ արդեօք շուրջ զտամբն, եթէ և այլ եւս պիտիցի գալ։ Օ դայն ահա եկաք, և 'ի ներքս եւս մըտաք, և սակաւ բանիւ զամենայն ասացաք. այլ հաւանեցուցանել զամենեսեան ոչ կարացաք։ Լ։ ընդէր արդեօք. վասն զի ոչ ամենեքեան 'ի ներքս էին։ Լ։ եթէ երկինք էր տունն, ո՞ մնայր արտաքոյ։ Զարձեալ քաղում անգամ հարցանեմ զասացեալսն, և այլ տայ ասել. որ ոչ հաւատս ունէր՝ այն էր արտաքոյ. քանզի առանց հաւատոց անհնարին է զսուրբ Հոգին ընդունել։ Լ։հա այս է մեծ պարգեւն զոր ոչ կարէի ասել, և հարկեցայ ասել։ Լ։ եթէ ժպրհեսցի ոք և կատեսցի առանց հաւատոյ մերձենալ 'ի զօրութիւն Հոգւոյն, եթէ քահանայ իցէ՝ իբրեւ զԼայիափայն պատառի և

հերձու. և եթէ յաշխարհէ՝ իբրեւ զՆանիա և զԱզարիա։ Իսկ արդ ո՞վ իցէ բաւական առանց մեծի օգնականին ընդունել զարարող սուրբ Հոգին, բայց եթէ ինքն Տէր փչեսցէ ասելով առէք զՀոգին սուրբ 'ի ձեզ։

Զարմանամ ընդ այս և յոյժ եմ սքանչացեալ, եթէ զիարդ որմք տանն ժոյժ կալան, և յատակքն ոչ պատառեցան։ Բայց զարձեալ յիշեցի, զի երկնից երկինք էր տունն. որպէս զի թէ յանապատի բնակիցի թագաւորն, շինեցաւ անապատն, և ասեն նմա մեծ քաղաք այնուհետեւ և ոչ անապատ. առաւել քան զայն՝ տունս այս քաղաք երկնային եղեւ, և որք 'ի ներքս էին՝ երկնաքաղաքացիք, և որք ոչ անդ դիպեցան՝ դեռ եւս երկրայինք են՝ դժուարաւ առ 'ի հաւանութիւն։ Բայց եթէ նոյն ինքն Տէրն դիպեսցի նովին զօրութեամբ, զնոյն շնորհս ընկալցի. ապա կարասցէ վիճակակից լինել երկոտասանիցն, և մանաւանդ եթէ 'ի նմին տան և 'ի նմին տեղւոջ նոյն Տէր։ Այլ եթէ կամիս լուր աւետարանագրին, զի ասէր զամենայն ճշմարտութեամբ. "Թովմաս, ասէ, մի յերկոտասանիցն ոչ էր ընդ աշակերտսն, յորժամ եկն Յիսուս և երեւեցաւ նոցա"։ Զի թէպէտ և լուաւ յայլոցն, ոչ ինչ կալաւ յանձին հաւանել նոցա. այլ ինքնատես կամի լինել, և մերձաւորագոյն զվերս բեւեռայն զննել։ Եթէ յիշեք զոր ես ձեզ յառաջագոյն ասացի, որպէս դժուարագոյն է կեալ ջրայնոց 'ի ցամաքի և ցամաքայնոց 'ի ջուր, առաւել եւս դժուարագոյն է առանց հաւատոյ ընդունել զպարգեւս Հոգւոյն սրբոյ. որպէս վիճէր այրս այս թերահաւատ բանիւքն ընդդիմանալով ընկերացն։

Ո՛վ տէր իմ Թովմաս, ո՞չ ապաքէն հաւատք 'ի լսելոյ են. եթէ տեսանես և զննես և կաս 'ի վերայ ճշմարտին, ոչ եւս ասին հաւատք, այլ ճշմարտութիւն։ Ի Տեառնէ բաղում անգամ լուար զչարչարելն, զմեռանելն և զյառնելն։ Աշակերտքդ բանից նշանաւ խօսին ընդ քեզ և զօրպիսութիւն յայտնութեանն պատմեն քեզ. և զի սուտ չեն՝ դու քաջ գիտես, և զի Տէրն արդարն խօսէր՝ այնմ տեղեակ ես. ընդէ՞ր այդչափ յամառեալ սնդիս։ Եթէ ոչ տեսանեմ, ասես, ոչ հաւատամ։ Տեսանել արդեօք ահա տեսանես. մի՞ դուցէ ոք պարսաւիցէ զքեզ։ Ոչ, ասէ. թող միայն երեւեսցի

ինձ, միայն տեսից ես. զի եթէ տեսից և զննեցից, և զիմ միտս անխիղճս արարից. և եթէ պարսաւեսցէ զբ, ես յանձն առից, ոչ ինչ պատկառեմ ես յայնմանէ. գիտեմ ես զքաղցրութիւն Տեառն իմոյ, զի մարդասէր է և ողորմած։ Ընդ ես, ասէ, մեծ քան զՊետրոս, և ոչ թերահաւատութիւնս իմ քան զուրացութիւնն նորա մեծ. և եթէ նմա արտասուքն իւր եղեն փրկութիւն, և ինձ ամենեն իմ լինի թողութիւն. բայց միայն տեսից զայն՝ որում յանկացեալն եմ։ Այս եթէ իշխեմ ասել զայս եւս, աղաչեցից զՏէր զի 'ի նմին տան երեւեցի ինձ նովին յայտնութեամբ. ոչ միայն դրօքն փակելովք, այլ և նովին ողջունիւ 'ի մէջ նորին ընտանեաց։ Այս ահա ասացի զիմ կամքն. հրաման ոչ իշխեմ տալ, այլ ապաչէլ կամիմ. եթէ իցեմ արժանի, օգնեսցէ տկարութեանս իմոյ։

Իսկ բարերարն ամենայնի իբրեւ ետես զտապնեղութեան աշակերտին, գթացեալ ողորմեցաւ 'ի յոյզ մտաց նորա. բայց թոյլ ետ զի լցեալ կատարեսցին աւուրք թուական առաջին նշանադրութեանն, մինչեւ թլփատեսցի անթլփատութիւն թերահաւատութեան իւրոյ, և ապա արժանի լիցի նորոգել և ընդունել զառանց երկմտութեան աւետիսն, որպէս և աշակերտակիցքն նորա։ Զանգի ցուցանէ աւետարանագիրն. "Այս եղեւ, ասէ, յետ ութ աւուր դարձեալ անդէն միւսանգամ անդ էին 'ի միջ վայրի 'ի ներքս աշակերտքն 'ի նմին տան, և Թովմաս ընդ նոսա. եկն Յիսուս եկաց 'ի մէջ նոցա դրօքն փակելովք, և ասէ. ողջոյն ընդ ձեզ։ Այս Թովմաս ասէ. բեր զմատունս քո 'ի ձեռս իմ և զձեռս քո 'ի կողս իմ. տես և ճշմարտեա, և մի լինիր թերահաւատ, այլ հաւատա"։

Այս զայս ասացեալ Թովմայի լինի միանգամայն յամենի և յերկիւղ, յընկերացն ամաչէ, և 'ի Տեառնէն երկնչի ասելով. "Տէր իմ և Աստուած իմ"։ Այս ընդէր յառաջ Տէր, և ապա Աստուած։ Յարարչութեանն ոչ այնպէս. և 'ի հինգ աւուրսն՝ Տեառն անուն լուեալ դադարեաց, Աստուած անուն 'ի մէջ անցեալ՝ զամենայն առնէ. իսկ 'ի վեցերորդին ապա և Տեառն անուն երեւի։ Որբեւ յայտնի է պատճառս իրացդ. քանզի Աստուածդ անուն արարչական զօրութիւն է, և է հաշտ

և համբոյր և արարող։ Իսկ ուր արարչութիւն է՝ օրինադրական չեւ եւս է. ապա եթէ 'ի դատողութիւն եկեսցեն արարածք, պիտոյ է և օրէնսդրականն. որպէս և Զաքեաւսն այս յայտ արար. ընտրող իմաստութեամբ ետ պատասխանի և ասէ՝ Տէր իմ և Աստուած իմ։ Զանազի անկայ, ասէ, ընդ դատաստանաւ թերահաւատութեան իմոյ. դատես զիս, քանզի արժանի եմ խրատու. այլ 'ի թուոյ աշակերտացդ զիս մի հաներ, քանզի գիտեմ եթէ մեծ են յանցանք իմ. բազում են վըկայք յարութեանդ քո, և ինձ ոչ միայն բազմութեանն պարտ էր հաւատալ, այլ քոց բանիցն իսկ, որ հանապազ ուսուցանէիր և կրթէիր զմեզ, զոր և գործով իսկ կատարեցեր։ Բայց արդ որովհետեւ ողորմութեամբ երեւեցար 'ի սմին տեղւոջ առաջին օրինակաւն, և պարզեցեր զթերահաւատութիւն խորհրդոց իմոց, և բացան աչք մտացս, և դէմ յանդիման տեսի զՏէրդ իմ, իշխեցից ասել՝ Տէր իմ և Աստուած իմ. զի յանդիմանելովդ քով զիս՝ նոր մարդ արարեր, և ոչ թողեր յոգիս իմ և 'ի մարմնոս իմ տեղի դատողութեան։ Այսուհետեւ Աստուած իմ ես դու. և որով Աստուած իմ ես դու՝ դովիմք և տեր, դովիմք և օրէնսդիր, դովիմք և թագաւոր, դովիմք և Հայր, ծնիչ և սնուցիչ, տըւողդ պարգեւաց, և ժառանգեցուցիչ զկեանսն յաւիտենականս։

Բայց թերեւս ասասցէ ոք. ահա երիցս անգամ երեւեցաւ Տէր 'ի նմին տան, ընդդէմ 'ի պետրոսեանս փըշեաց և ասէ՝ առէք զՀոգին սուրբ 'ի ձեզ, և թողմանցի զայս ոչ արար. զի եթէ կատարումն տուչական շնորհին Հոգին սուրբ է, երեւի թէ Զաքեաւսն այս զրկեցաւ։ Աստուծոյ և վասն այդր որչափ և 'ի կարի է, ոչ նորոգս և ոչ այլաձայնս, այլ զոր գիտէք սմենեքեան և հաւատովք ընդունիք։ Սուրբ Հոգին Աստուծոյ արարող զօրութիւն է, և գութ սիրոյ իւրոյ թափանցէ ընդ ամարածս. այլ ինքն յինքեան իմանի անհատ և անբաժանելի. և ոչ յինքենէ շնորհքն, այլ շնորհքն 'ի նմանէ. և ոչ յինքենէ պարգեւն, այլ պարգեւատու ամենայնի։ Այս որպէս Հայր իւր յանձնէ էութեամբ, սոյնպէս և սուրբ Հոգին ըստ Հօր և Որդւոյ։ Արդ յասելն Որդւոյ ցաշակերտսն՝ ողջոյն ընդ ձեզ, Հոգւով

սրբով լցան ամենեքեան. իսկ զի փչեաց 'ի նոսա, զա-
ռաջին արարչութիւնն յերկրորդում ասա յիշեցոյց,
եթէ որ ապար զմարդն առաջին, նոյն և որ եկն և փրր-
կեաց և նորոգեաց։ Իսկ յասելն՝ առէք զՀոգին սուրբ
'ի ձեզ, իմացութիւն տեսական։ Որպէս զգեցաւ Որդի
մարմին բնութեան մերոյ կամաք Հօր, նոյն կամք են և
Հոգւոյն սրբոյ. զի որպէս Որդի զգեցաւ զմարդկու-
թիւն, նոյնպէս և մարդկութիւնս զգեցաւ զՀոգին
սուրբ, զի 'ի ձեռն սուրբ Հոգւոյն զգեցեալ իցեմք զոր-
դիութիւն և զհայրութիւն։ Այլ եթէ ոչ այսպէս էր ճըշ-
մարտիւ, զիմիրդ կարէաք ասել հայր մեզ զԱստուած,
և եղբայր մեզ զՔրիստոս, և նորոգութեան մեզ զսուրբ
Հոգին. զի ապր եմք յոսկերացն Քրիստոսի, ապա և
միտք 'ի մտացն Հօր, նոյնպէս և զօրութիւն Հոգւոյն
սրբոյ։

Այլ եթէ դարձեալ ոք հարցանիցէ, եթէ դու ա-
սացեր՝ անհատ և անխառն զօրութիւն սուրբ Երրոր-
դութեանն, ես ոչ յուրատ վինիմ յիմոց ասացելոցն,
և ոչ քումդ ընդդիմանամ, և ոչ զարարիչն ընդ արա-
րածս համեմատեմ, և ոչ զանշարժելի բնութիւնն թափ-
տեմ։ Անզի անյեղեղուկ է աստուածութիւնն. իսկ
մերս անկեալ դնի ընդ բազում ապականութեամբք և
փոփոխմամբք, և կարօտ է օգնականի արարչական զօ-
րութեանն. զի որ արարն, նոյն նորոգեսցէ յանապա-
կանութիւն։ Այլ որպէս բազում անգամ ասացաք,
նորոգումն 'ի ձեռն փչմանն յաշակերտսն՝ ետ զՀոգին
սուրբ, և նովին Հոգւովն նորոգելոց է զամենայն արա-
րածս, և առաւել զգնութիւն մարդկութեանս մերոյ.
բաժանէ 'ի մնասնա բազումս, և պիտոյ է մի Հոգի 'ի
կապ և 'ի զօդ ամենեցուն, որպէս և ոք յիւր մարմնի
ուսցի ճշմարտապէս։

Այլ իմ զքեզ ազաչեցեալ, այդրէն զքեզ 'ի քեզ
հայեաց և տես զիսառնաւածս քոյոյ բնութեանդ. մար-
մին մի է, և անդամք բազումք, և իրարանչիւր ան-
դամքն 'ի բաժանմանս են անքէն և աննախանձ և յոյժ
սիրելիք միմեանց և վաստակաւորք ամենեքեան։ Իսկ
յորժամ ընդունին զհատուցումն ըստ իւրաքանչիւր
վաստակոց, ոչ ոք 'ի նոցանէն առանձին զպարգեւն
իւր համարի. և մանաւանդ եթէ իցէ նահատակու-

թիւնն ընթացից ոտին, և կամ կորովութեան ձեռին, կամ ճարտարութեան բանի, կամ մտաց առատութեան յիմաստութիւն, և կամ բնաւ իսկ որոյ և իցէ մասանց մարմնոյն։ Քանզի ոչ եթէ խառն 'ի խառն ընթանան, այլ կարգաւ օրինաւորք են՝ ըստ դրական թուոց մասանց մարմնոյն։ Արդ ասա դու ցիս, ո՞'ի նոցանէ ընդունիցի զպարգեւն։ Այս գիտեմ՝ ընթանալս դու 'ի գլուխն, այլ ոչ նախանձին ոտքն. և եթէ ձեռքն ընկալցին, ոչ ինչ զչարին այլքն. թէ միայն 'ի մարմնի իցէ պատիւն, հաստարակաց է խնդութիւնն։ Այս և անուն զոր ունի մարդն, դրական է և ոչ բնական, իբրեւ ոչ է նա գործակից քաջ նահատակութեանն. յառաջ քան զմարմինն անունն վկայեալ և պատուի և պսակի. զվերս և զսպիս մասունք մարմնոյն ունին, և զքաջութիւն՝ անուն ժառանգէ. իսկ անդամք ամենայն խնդացեալ բերկրին ընդ անուանն, և այնպէս միաբանութիւն լինի բազմութեանն ամենայնի։ Իսկ արդ եթէ առ մի մարդս այսպէս երեւի, որչափ եւս առաւել 'ի ձեռն որդւոյն Աստուծոյ, որ զգեցաւ զմի մարմին ըստ թուականի միոյ մարդոյ, և միով մարդով ունի զամենայն մարդկութիւնս։

Արդ եթէ փչեաց 'ի նոսա, և ասէ՝ առէք զՀոգին սուրբ 'ի ձեզ, թուով են որ 'ի ներքս են. այլ ոչ գիտեմք եթէ ամենեքեան ընկալան զՀոգին սուրբ։ Այս և ոչ 'ի վարան տարակուսի պիտի անկանիլ յայսմ տեղւոջ. քանզի ոչ եթէ տեղին էր որ սրբէր զմարդիկն և արժանիս առնէր ընդունել զՀոգին, այլ տէր տեղւոյն. զի վասն տեառն սուրբ երեւի տեղին։ Այլ եթէ վասն Տեառն լինիցի ամենայն, Տէրն յամենայն տեղւոջ է. և մինչ էրն յերկինս՝ յերկրի էր, և մինչ յերկրի էր՝ յերկինս, և մինչ 'ի տան էր՝ յաշխարհի էր և յամենայն տեղիս և առ իւրաքանչիւր մարդոյ և մարդկան. ապա և ընդ թովմայի էր. ապա ուրեմն և յամենեսեան։

Այս փչեաց 'ի հաւատացեալսն։ Այո. իսկ 'ի թերահաւատսն՝ թէ և 'ի ներքս 'ի տան էին՝ և ոչ յոքս։ Ուրեմն իսկ Տեառն յասելն ցթովմաս՝ ոչ գովելով, այլ պարսաւելով. "Այդ զի տեսեր դու զիս և հաւատացեր դու, երանի որ ոչ իցէ տեսեալ և հաւատասցէ յիս,,։ Իսկ արդ փոքր ինչ համարիցիս զերանութիւնս զայս. զի ե-

թէ մարդ մարգոյ երանի տայր՝ սակայն և այն մեծ էր, թող թէ Աստուած մարդոյ երանէ. զի թէ 'ի հաւատալ մարգոյն որ ոչ էր զնա տեսեալ՝ երանի ետ, զինչ ինչ կարծես զերանութիւնս զայս, բայց եթէ զՀոգին սուրբ։

Այս եթէ դարձեալ ասիցես. Հաւասիկ պետրոսեանքն հաւատացեալք էին, որպէս դու ասես, և զՀոգին սուրբ ընկալեալ էին, կրկին փչումն զինչ պիտոյ էր։ Դու իբրեւ զմարդ հարցանես և իբրեւ զմարդ տգիտանաս. զաներեւոյթսն Աստուծոյ ոչ գիտես, նմա և ծածուկքն մեր յայտնի են։ Այս և քեզ աւադիկ վերբստին իսկ պիտոյ է ոչ փչումն, այլ նախ հաւատք, և 'ի ձեռն հաւատոյն ապա կարես ընդունել զսուրբ փչումն՝ ոչ բերանով և ոչ ըռընգամբք, այլ իմանալի ըզգայութեամբն Աստուծոյ։ Դու զինչ գիտես թէ ոյք էին 'ի տանն և քանիք էին։ Ոչ վայրապար ինչ ասացի. և զինչ պիտոյ էր նոցա։ Ոչ ասացի եթէ յոյժ դղրդման ժամանակք էին, և ամենեքեան 'ի շարժման էին, թէպէտ և հաւատովք հաստատեալ էին, սակայն և միսիթարութիւն հաւատացելոցն պիտոյ էր մատուցանել. և միսիթարիչ միայն սուրբ Հոգին է։

Բայց այն զի ասացի թէ ոյք էին անդ և քանիք էին, ոչ վայրապար ասացի. քանզի խռովութեան պատճառք ոչ այլ ոք է, բայց մեղք, և մեղայ զօրութիւն՝ սատանայ, և սատանայի զօրութիւն՝ դեւք։ Արդ փչելով Տեառն յԱռաքեալսն, ասելով՝ առէք զՀոգին սուրբ 'ի ձեզ, դեւք հալածեցան, սատանայ յետս չոգաւ, մեղք կորեան, Առաքեալքն լցան Հոգւով սրբով։ Բայց ասելով՝ առէք 'ի ձեզ, ոչ ես բռնաբար տամ. քանզի աստուածային Հոգին յանձն երկմիտ ոչ մնանէ, և 'ի Հոգի նենգաւոր ոչ բնակէ, այլ 'ի մարմինս սուրբս և յոգիս յստակս և 'ի միտս հաստատեալս։ Արէք, ասէ, 'ի ձեզ կամք ձերովք, և կատարեցէք զկամն սուրբ Հոգւոյդ։

Բայց զփչեաց յոյժամ լսես, քաջիմաց լեր, մանր քննեա, սրատես լեր մտօք առաւել քան աչօք։ Մանզի զանուն ուրուք ոչ ասաց, և առանձինն յոք ոչ փչեաց. այլ 'ի նոսա, ասէ, փչեաց. և 'ի նոսա ասելովն՝ ըստ գրեցելումն երեւի՝ թէ ոյք 'ի տանն էին. իսկ ըստ իմանա-

լոյն՝ յամենայն աշխարհ. և յամենայն աշխարհ ասելովք երեւի թէ յամենայն մարդ. և յամենայն մարդ ասելով 'ի ձեռն Աշմարիտ հաւատոցն. քանզի ուր հաւատք են, անդ և Աստուած. և ուր Աստուած է, ամենայն ոք անդ է։

Արդ Առաքեալս այս իբրեւ լուաւ 'ի պետրոսեանց, եթէ տեսաք մեք զՏէր, և զայս ինչ խօսեցաւ ընդ մեզ, և սորա թէ հաւատովք ընկալեալ էր զլուր տեսլեանն, նոյն յայտնութիւն էր նմա, նոյն ողջոյն էր ընդ նմա, նոյն փչումն էր նմա, նոյն սուրբ Հոգին երեւէր նմա. որպէս և Տէրն ինքնին ասէ. "Երանի որոց ոչ իցէ տեսեալ, և հաւատացեն յիս"։ Եւ որպէս վերագոյն ասացաք, եթէ միոյ մարդոյ մի մարմին է, և մասունք բազումք, և միաբանութիւն առ հասարակ, ապաքէն և աշխարհս մի նիւթ՝ միոյ ձեռին արարած, և 'ի բազում տեսակս բաժանեալ, և սեռք տեսակայն ըստ իւրաքանչիւրոյն զոյդք և հաւասարք առ մի անդր հային ամենեքեան, ուստի զգոյն և զկեանն ունին յԱստուծոյ. և ամենեցուն իշխան և առաջնորդ՝ մարդ, և առաւելեալ քան զամենեսեան բնական խոհականութեամբ, և տաղտկական առաքինութեամբք. երկոցուն կատարումն՝ յորդին Աստուծոյ հաւատալ։

Արդ առ որում գտանին հաւատք Աշմարիտք, 'ի նմա տեսանին ամենայնքս՝ որ են առանց ախտից և չարչարանաց. որպէս և մեծն Մովսէս ունէր փչումն 'ի Հոգւոյն սրբոյ, և 'ի նմին շնորհաց Հոգւոյն զոր ունէր Մովսէս տուչութեամբն Աստուծոյ՝ ընդ ինքն եօթանասուն և երկու ծերքն, և մարգարէանային 'ի մէջ ժողովրդեանն. և Մովսէս 'ի Հոգւոյն սրբոյ շնորհացն ոչ թերացաւ. թէպէտ և արկին ումանք նախանձուկս, նա եւս առաւել լցեալ Հոգւով սրբով ըղձանայ զամենայն ժողովուրդն Տեառն դառնալ 'ի մարգարէութիւն։ Ապաքէն նոյն Տէր է, որ Մովսէսի շնորհեաց զՀոգին սուրբ, և 'ի տանն նա փչեաց զնոյն հոգի։ Օ ի 'ի ձեռն սակաւ թուականին անթիւ են բազմութիւնք հաւատացելոց 'ի Քրիստոս. ընկալցին զնոյն շնորհս Հոգւոյն անքէն և աննախանձ։ Քանզի ոչ եթէ մասն է պարգեւն, այլ ամենայն մասունքն ատուածատուր շնորհին, որով արար զերկինս և զերկիր և զամենայն զոյսս որ 'ի սոսա։

Digitized by Google

Լայց Թերեւս 'ի Թիւ երկոտասանիցն յոյժ ինդրելի է՝ յորս փչեաց զՀոգին սուրբ, Թէպէտ և ոչ ամենեցուն. սակայն այնոքիկ որ սիրեն մեծապէս կամաք զիմաստութիւն ոգւոց և մարմնոց, ստասցին 'ի վիճակս երկոտասան Լուսաբերոց, որ լինին երրեակ չորք, և վեց երկու. և 'ի միասին գլխաւորելով լինի երկոտասան. որ է ակիզբն միակին 'ի գլուխ երկոտասանիցն փչումն սուրբ Հոգւոյն. և 'ի միոջէն և յերկուցն և 'ի չորիցն ընու և կատարի եօթներեակ Թիւն. զի 'ի վեցի անդ տեսանիցի աշխարհարարութիւնն, և 'ի միականին՝ կատարումն եօթներեկին, և 'ի չորրորդումն՝ նիւթական գոյացութիւնս։ Լակ 'ի միում վեցեկին երիւք կրկնակօք ընու երրեակ Թիւն, և բերէ զնմանութիւն զանեղին և զանսկզբնաւորին զինքնագոյ զօրութեանն։ Լակ միակ երիցն գեր 'ի վերոյ անուն և անձառելի, միայն իմանալի, որ է անբաժանելի. յերիցն լինի և պատարուն երրեակ Թուոյն։ Պարձեալ և ըստ եօթանն տեսանի գոյացութիւնն և մերոց զգայութեանցս, որ բաժանեալ է յեօթն մասունս տեսակաց՝ աչօք և ընչօք, ականջօք և բերանով։ Լյս որպէս 'ի սկզբանն լինելութեան 'ի ձեռն սոքին Թուականի աշխարհ գոյացաւ 'ի պատճառէն, որ ունի զնմանութիւն միակին՝ աւուրքք վեցիւք, յորում սեռք լինելութեան գոյացան. իսկ յառաջիապացութեան աճմանն 'ի միակին՝ որ է եօթներեակն, 'ի Թիւ անկեալ ընդ վեցեկին՝ աճէ և բազմանայ և ընու երկոտասան Թիւն, յորում և ամենայնքս տեսանին՝ երկնայինք և երկրայինք. երկնայինքն՝ արեգական և լուսնին, հինգ մոլորականքն և եօթն անմոլար աստեղքն, որ լինին եօթներեակ երկու. և յայս երկու եօթներեկացս գոյանան ամենայն լինելութիւնք սխոտաւորացս, որ են պատճառք կելոյ և տեւողութեան աշխարհիս։ Պարձեալ նովին Թուականաւ եօթներեակ՝ ունին երկինք եօթն պարունակս, որ անուանին գօտիք, և են յարկք օդեղէնք անջրպետեալք 'ի միմեանց բացատ միջոցաւն, շրջագայ կազմութիւնն հրամանաւ արարողին ոչ միայն կելոյ պատճառք 'ի ներքոյ արեգական, այլ և կելոյ և բարի կելոյ, և տեսական խոհականութիւն յերկնաւոր իմաստութիւն. զոր և մարգարէն Լասայի ասէ լցեալ Հոգւովն Տեառն, և տեսեալ զա-

Digitized by Google

մենայն արարածս զի են մեծամեծք և սքանչելիք, և 'ի սմա իմանի սորին արարիչն և հաստատիչն, և լուեալ եւս 'ի նմին Հոգւոյ որ ասէ 'ի բերանոյ Դաւթի. "Լքբեւ զի մեծ են գործք քո Տէր, և զամենայն ինչ իմաստութեամբ արարեր,, : Նա մեծ իսկ են արդարեւ, զի Աստուած 'ի գործս իւր տեսանի. և իմաստութեամբ են, զի Քրիստոսիւ արարեալ է. և Քրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն : Նա որպէս էր իմաստութեամբն Աստուծոյ որ է Քրիստոս, նոյնպէս և Հոգւովն սրբով. որպէս և նոյն Դաւիթ ասէ. "Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա,,. նորայն ասելով զՀօրն՝ Հոգւովն, իսկ նոցայն՝ լինելութեանս : Զոր ուր ասէն "երկինք պատմեն զփառս Աստուծոյ,, , զաստուածութիւնն յայտ առնէ. իսկ ուր "զամենայն ինչ իմաստութեամբ արարեր,, , անդ զորդին Աստուծոյ ասէ. իսկ ուր բերան և Հոգի ասէ և զօրութիւն, անդ զՀոգին սուրբ զեակիցն Հօր և Որդւոյ :

Դայց Նասայի 'ի շնորհս սուրբ Նշխարդութեանն՝ ըստ եօթն պարունակայն երկնից բաժանել յեօթն մասունս զտուչութիւն նորին Հոգւոյն, և բուռն հարկանել զերկնէ և զերկրէ, և ածէ 'ի մի միաբանութիւն, և ասէ այսպէս. "Դղխեսցէ զաւազան յարմատոյն Յեսսեայ, և ելցէ ծաղիկ յարմատոյ անտի. և հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ, Հոգի իմաստութեան և հանճարոյ, Հոգի խորհրդոյ և զօրութեան, Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան, և լցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ,, :

Զոր բաղում անգամ ասացեալ զեօթներեակ թիւն՝ որ է վերաբեր բնութեանն, մարգարէս Նասայի բոլորեայ բովանդակեաց՝ ած և կատարեաց 'ի բանն Աստուած, որ արար զերկինս և զերկիր անդստին 'ի սկզբանց. զինքն յարարածս կերպարանեալ տպաւորեաց, և յիւրն եկեալ զիւրան առնու, զիւրն զգենու : Նա զգեցեալ ոչ դիպուածով և ոչ յայլ ընդ այլոյ պատահումն, այլ զինքն ձևացոյց երկնիւ և երկրաւ և միջոցաւս. երկնիւ՝ ըստ միակին, որ է Աստուածն բան. և երկրաւ՝ որ է մեր հողեղինութիւնս. իսկ միջոցաւս՝ թուական գօտեաք՝ ըստ եօթն զգայութեանցս : Զի որպէս առ զՀողուտ մարմինս մեր, որ է մասն երկրի, նոյնպէս և զոգեղէնն և

զՀրայինն որ յերկնէ, և 'ի մեզ Քրիստոսիս են. զոյն և Տէր յինքեան մարմին ունէր, յոր կատարի ամենայն ինչ. քանզի նոցա է սկիզբն լինելութեան և կատարումն նորոգման նորոյ աշխարհի։ Եւ քանզի զգայութիւնքս որ 'ի մեզ են՝ անօսրապոյն բնութիւն են քան զԹանձրութիւն մարմնոյս, յանգութիւն ունին իմանալի խոհականութեան, զոր և մարգարէն հոգւոյ մատուցանաց։ Եւ ՀՀմարիտ. քանզի ականջքս լսեմք Աստուծոյ, և աչք տեսանեմք զարարածս՝ յորում իմանի Աստուած, և ըստնգամբքս ծծեմք զշունչ օդոյս՝ որ է կենդանութիւն ամենեցուն, և ձայնաւոր գործեալս բերեմք փառաւորութիւն Աստուծոյ փոխանակ արարածոցս։

Իսկ եթէ առ մերս այսպէս է, զինչ ինչ իմանայցեմք առ աէրունի զգայութիւնն։ Այլ յերկրի, և աչք տեսանէ զՀայր յերկինս. շրջի 'ի Գալիլեա, և հոտ 'ի զարու մանհուն ազգի նմա 'ի հեռաստանն։ Եկեցիջն ընդ միտս իւր յոգիսն հայհոյէր ասելով. Եա եթէ մարգարէ ոք էր, գիտէր՝ զիարդ ոչ՝ որպիսի կին մերձենայ 'ի սա։ Իսկ Տէր իբրեւ զբարձրաձայն զաղաղակ լուեալ՝ յանդիմանէ զնա առակօք պարտապանաց երկոցունց հաւասարաբերական բանիւք ըստ մերում նմանութեան։ Եւ առանց ականջաց լսէն նմա ամենայն տարերքք, ջուրքն 'ի թակոյկսն, նկանակն 'ի ձեռին, հողմք 'ի ծովուն, մեղք 'ի մարդկան, մեռեալք 'ի գերեզմանս։

Արդ այս է զոր մարգարէն Յասայի ասէ՝ եկեսցէ և հանգիցէ 'ի վերայ նորա եօթն հոգի, 'ի ձեռն եօթն զգայութեանցս զոր էառ Տէր, և գործեաց զամենայն կատարելութիւնս Հոգւոյն սրբոյ, և յինքն բուսանգաղեաց զեօթներեակն երկնային, և զեօթներեակն զերկրայինս, որ է սկիզբն առաջինն, և կատարումն վերջինս. քանզի ականիսքն 'ի միակէն՝ որ է հիմն և հաստատութիւն, և կատարեմք յեօթներեակն՝ որ է ծայր և յանգումն ոչ թուական մասինն, այլ սեռական իմաստութեանն։ Քանզի 'ի վերն, ասէ, արար Աստուած զամենայնքս, և յեօթներորդումն հանգեաւ։ Եւ հանգչի Աստուած. և ոչ երբեք։ Եւ զիարդ կարացիցս ասել նմա հանգչել՝ այն որ ոչն վաստակէ։ Այլ քաջ իմացեալ ած զմտաս զինչ է հանգչելն Աստուծոյ, բայց եթէ կատարեցին կամք նորա։ Եւ ո երբեք յեղելոց

աստի կարաց հաՀոյ լինել Աստուծոյ և հանգոյց զգաստողական զօրութիւն նորա. բայց միածինն 'ի Հօրէ և կուսածինն յերկրէ, որով զամենայն արար Աստուած, և նա եկն գործեաց զամենայն հաՀոյս Աստուծոյ։ Այս ուրեմն այս է օրն եօթներորդ, յորում հանգեաւն ասեմք Աստուած. քանզի 'ի վեց աւուրսն ամենայն ախտականքն եղեն, և Աստուած հեռի է յախտից և 'ի չարչարանաց։ Արարի անուանեաց, այլ ախտս ոչ. քանզի յախտաւորաց անտի մարթի բարի լինել, այլ ոչ առանց չարչարանաց և ՀԳնութեան։ Իսկ ուր առաքինութիւն է, անդ և բազում ՀԳնութիւն մարմնոյ տեսանի. իսկ ուր մարմնոյ ՀԳնութիւն է, անդ և աւուրք և ամիսք և տարիք և ժամանակք ընդ ապականութեամբ են անկեալք։ Այսն որոյ 'ի միում աւուրն եւեթ հանգիստ սուրբ, որ անուանեալն է շաբաթ, և թուականաւ եօթներեակ. և եօթն թիւդ բերէ զնմանութիւն անծնի, և անծինն զանեղի, և անեղն ունի զարարչական զօրութիւնն։

Արդ 'ի վեց աւուրս տեսանի հաղար ամն, յորում ամենայն աշխարհս անկեալ էր ընդ ապականութեամբ, մինչեւ եկն եՀաս թիւ եօթներեկին՝ զոր 'ի վեր անդր շաբաթ անուանեաց, և հանգիստ զնա համարեցաւ։ Այս է գալուստն Տեառն, որ եմուտ զրօքն փակելովք, և սրբեաց և մաքրեաց զաղտ վեց աւուրց առաջնոց. և անուամբ եօթներեկին՝ որ է կոյս և անծին 'ի մահկանացու գոյացութեանցս, և բազմածնունդ առանց ախտիցն և չարչարանացն, զայն զօրութիւն շնորհեաց երկոտասան Աշակերտացն, որով զաշխարհս յարդարեսցեն և կազմեսցեն 'ի վերոյին 'ի դարն եօթներորդ. զի իցեն բազմաբեղունք յարդարութիւն, և անծինք իցեն 'ի չարութենէն և յստեղծութենէ և յամենայն ապականացու պիտոյից աշխարհիս. որպէս և նոյն իսկ երկոտասան թիւ Աշակերտացն ունի տեսութիւն 'ի ձեռն զբաղխաւոր միակին՝ որով բարձին զախտ յաշխարհէ, ըստ երկոտասան մասինն որ յայտնութեամբ տեսանիւր 'ի հիւանդութեանն տեռատեսին երկոտասանամեայ։ Այնքան կինն զցաւն առանձինն միայն ունէր. իսկ աշխարհ 'ի ծածուկ տանջեալ լինէր երկոտասան մասամբք տուընջեան և գիշերոյ. քանզի օրն ունի զթիւ երկոտա-

Digitized by Google

սան ժամուց, և զոյգ նմին՝ գիշերն, և 'ի ժամու անդ օր մի ըստ Թուականն աւուրց ամսոյն, և օրն ողջոյն գիշերային մասամբքն հնազանդեցան ունայնութեան։ Այս ունայնութիւն ասեմ 'ի բարեգործութենէ. իսկ որ 'ի բարւոյն ունայնացեալ է, լի է անարգութեամբ։ Այս անարգութիւն ասեմ զվրիպելն 'ի ճշմարտութենէ, և վրիպումն է Թողուն զԱստուած։

Այս քանզի 'ի սկզբանէ մարդիկ զՀետ Թշնամւոյն գնացին, և կամաք 'ի հնազանդութիւն մտին ամենայն ապականութեան. առաջին Թողուն զԱստուած. երկրորդ ձեռագործաց երկիր պագանել. երրորդ անզգայիցն զոհել. չորրորդ անխտիր լինել յապականութիւն. հինգերորդ զպատկերակից իւր պանանել. վեցերորդ ագահութիւն, որ է արմատ դառնութեան. եօթներորդ ատելութիւն, ոչ է անպտղաբերութիւն արդար մասին. ութերորդ գողութիւն, որ է սկիզբն աւերածոյ աշխարհիս. իններորդ յափշտակութիւն, ոչ գրգռէ զպատերազմունս. տասներորդ ստութիւն, որ է ուրացութիւն յԱստուծոյ. մեռասաներորդ ամբարտաւանութիւն, որ է բեկումն ոգւոց և մարմնոց. երկոտասաներորդ պտուղ մահու, զոր ժառանգեցաք յապականութիւնս։

Արդ այս երկոտասան մասամբք ամենայն աշխարհ անկեալ էր յախտ հիւանդութեան, և բղխէր 'ի սմանէ արիւն անէրեւոյթ վիրացն. և բազում անգամ ջանայր առ բժիշկս, ոչ զի ողջացուցանէին միայն ոչ՝ այլ և յայժ վերս 'ի վերայ վիրացն դնէին. և ոչ միայն 'ի մարմնոցն հոսէր արիւն, այլ և յանէրեւոյթ և յանարիւն ոգւոցն, որ էր բխումն անէրեւոյթ ապականացու։ Զանզի 'ի վեր հայելով յերկինս՝ տեսին սատեղս և մոլորեցան, որ են պատճառք ժամանակեայ կենացս. զանժամանակն Աստուած ընդ նոսա փոխանակեցին և սատէն յերկրիս ըստ երկոտասան Թուոց, 'ի նմին զորս քերԹողք առասպելաբանեցին՝ ասելով այսպէս. Այր ոմն մեծ, ասեն, և առ նմին անհուն ժամանակ. և՝ 'ի մերձենալ նոցա առ իրեարս, ծնան որդիս վեց, որում Տիտանս նկարագրեցին. և զոյգ ընդ նմին էգս, զորս Տիտանիսն ասացին, և ծնունդս կարգեցին, և զախտս անձանց մարդիկ յերկրէ յերկինս ձգեցին. սոդ 'ի վեր

զումարելով յաստուածութիւնն մեծամեծ հայհոյութիւնս արձակեցին։

Եւ այսու երկոտասանիւքս զպարզութիւն ոգւոցս իբրեւ թանձրացեալ մարմինս՝ յարեան թաթաւեցին երկոքումբք մասամբքս՝ հոգւովք և մարմնովք. ոչ միայն զոհեցին, այլ և զոհեցան։ Եւ զոհեցան ասեմք՝ աչք անառակութեամբ հայելով, և ականջք՝ լիտի ձայնս լսելով. ոբնգունք 'ի ձեռնձերս և 'ի ծունս. և ձաշակաւորութիւն՝ անյագութեամբ ըստ անասնական բնութեան, ուստի բազմանայ անառակ ցանկութիւն. և ամենեքեան թաթաւեցաք յարիւն աղտեղութեան գործոց մերոց. և վասն մեր օրն պղծեցաւ, և յաւուր անդ ժամքն երկոտասան և տարին, և 'ի տարւոջ անդ ամիսք երկոտասանք. և ահա միանգամայն և երկիրս ամենայն։

Եւ եթէ երկրայնովքս երկիրս պղծեցաւ, և երկնայնովքն երկինքս, արդ 'ի բժշկել Տեառն զկինն երկոտասանամեայ տեառատես, որ էր նշանակ ցաւոց աշխարհիս, պիտոյ էր ապաքէն և զաշխարհ բժշկել։ Զի ոչ եթէ Տէր վասն մասինն միայն եկն յաշխարհ, այլ վասն ամենայն մասանց աշխարհիս։ Բժշկեաց զմի մասնն. զի 'ի ձեռն միոյ մասինն ուսցին ամենայն մասունքն ընթանալ առ նոյն բժիշկն, և բուռն հարկանել ոչ զնոյն դրօշակէ, այլ զՀոգւոյն սրբոյ, և զՀոգին սուրբ տեսանիցեն յերկոտասան Աբաքեալսն։ Բանզի կինն ոչ եթէ զձորձոյն բուռն հարկանելով էառ զառողջութիւնն, այլ յառաջ քան զհանդերձիցն՝ զհաւատոյն բուռն եհար, և ստանալով զհաւատն՝ արժանի եղեւ ոչ միայն 'ի ցաւոցն ապրել, այլ և զաստուածութիւնն Որդւոյն տեսանել։ Եւ տեսեալ ուրուք զԱստուած, անդէն 'ի նոյն միացաւ 'ի նմա։ Որպէս և Տէր ինքնին ոչ միայն գովէ զկինն, այլ և յոյժ զարմանայ. "Ամն, ասէ, մերձեցաւ յիս. և զօրութիւն, ասէ, բաղում գնաց յինէն"։ Զ մերձենալն իբրեւ լսես, զմիանալն ընդ Աստուծոյ իմասջիր. իսկ զօրութիւն բաղում գնաց յինէն՝ Հոգին սուրբ պահապան և պաշտպան կնոջն հաւատոց։

Արդ եթէ մին մարդ այսպէս լցաւ անչափ մեծութեամբն Աստուծոյ, ոչչափ եւս առաւել երկոտասանքն, որք ընկալան զփչումն աստուածային Հոգւոյն, և լցան անթերութեամբ, և լցին զամենայն աշխարհս առանց

ապականութեան նովին Հոգւոյն։ Այլ ոչ միայն զմարդիկ բժշկեցին, այլ և զօր. և յաւուրս անդ զերկոտասան ամիս։ Այլ զքսանդ բժշկիցի օր։ Այլեմ. որպէս ախտացաւ, նոյնպէս և բժշկեցաւ. ախտացաւ 'ի կռապաշտութեան, բժշկեցաւ յաստուածպաշտութեան։ Ասա երկոտասան ժամուց աւուրն՝ մոլորեալ էին մարդիկ յերկոտասան աստեղսն. ուստի խաբէին զնոսա և պատրէին սատեղագէտքն։ Իսկ այսօր ըստ երկոտասան ժամուց աւուրն՝ հնչին բարբառք մարգարէիցն յեկեղեցւոջ, և թարգմանին բանք երկոտասան Առաքելոցն, և բաշխեն զաւետիս կենաց ամենայն հաւատացելոց. որով մարդիկ յորդորին յառաքինութիւն, և փոխանակ առաջին մոլորութեանն՝ խօսին զՀնարտութիւն և գործեն զարդարութիւն և տան պտուղ աստուածային՝ սրբութեամբ ամենանութիւն, զկուսութիւն, զողորմածութիւն, զօտարսիրութիւն, զյոյս առ Աստուած, հաւատս Հնարիտս, զսէր առանց երկմտութեան։ Այլ փոխանակ պղծագործ զոհիցն, որք հեղուն զարիւն անասնոցն՝ դիւաց նուիրելով, այսօր մարտիրոսք կամք և ոչ բռնութեամբ հեղուն զարիւնս անձանց վասն արեանն Քրիստոսի։

Այս են երկոտասան Առաքեալք որք սրբեցին և սրբեն զամենայն աշխարհս։ Քանզի օր է սկիզբն ժամանակաց, և աՀեաց լցաւ և եհաս 'ի դարն վերջերորդ. և 'ի սրբել աւուրցս, որպէս և ասացաք, քարոզութեամբ Առաքելոցն, սրբեցան ամիսք և տարիք և ժամանակք և յաւիտեանք։ Օ ի եթէ սկիզբն սուրբ է, ապա և ամենքն որ 'ի նմանէ առնուն զաՀուն՝ սրբեցան։ Քանզի ոչ թիւ երկոտասան Առաքելոցն դիպաւածով ինչ եկն եմուտ 'ի կարգ առաքելութեանն, այլ 'ի հեռուստ ժամանակաց յայտնութիւնք երեւեցան յԱստուծոյ տուչութենէն։ Առաջին երկոտասան որդւոցն Յակոբայ. որով թուով ազգն աՀեաց և բազմացաւ, և ժառանգեաց զերկիրն պարգեւաց։ Դարձեալ և 'ի ձեռն Յեսուայ փոքր ինչ էր յայտնութիւն երկոտասան թլուոց վիմացն, մանաւանդ զի կէսքն ելանէին և կէսքն իջանէին. իբրեւ յայտնի տեսիլ աքանչելեացն, որք ելանէին իբրեւ 'ի խաւարէ 'ի լոյս, և որք իջանէին 'ի լու-

Digitized by Google

սոյ 'ի խաւար։ Բ.րդ հեթանոսք որք ընկղմեալ էին 'ի գործս մեղայ իւրեանց, ելին յանդնդոց ծովու մեղայ 'ի ձեռն երկոտասան Բ.ռաքելոց, որ են վէմք ճշմարտութեան. և հողմք և հեղեղք զնոսա ոչ կարէն շարժել, և ոչ անձրեւաց բռնութիւն։ Իսկ երկոտասան աղգապետքն վերջացան և մնացին, իջին և դադարեցին յատակս գետոյն ընդ ջրո

թանայէլ, Յակովբոս և Յովհաննէս եղբայրն Յակոբայ և Երկուք այլ եւս յաշակերտաց անտի։ Ասդ զինչ առնէ զնոսա. 'ի տանէն եհան զնոսա. շնորհօք Հոգւոյն սրբոյ ելից զնոսա. յաշխարհ առաքեաց զի գործ գործեսցեն։ Որքա յանհոգս եղեալ՝ պարապորդ շրջէին. և շրջէին ոչ այլ ուրեք, այլ անդէն զծովուն, և զհայրենի արուեստն ոչ կարէին թողուլ. այլ զնովիմբ գան, 'ի նոյն հոգան, 'ի նոյն կրթին, և զմոռացեալն անդէն կամէին յիշել։ Տեսանեմ որչափ է թանձրութիւն մըտացն, չընդոստանային՝ այնչափ խրատեալք և վարժեալք 'ի Տեառնէն. և թեքեալք և միեալք 'ի Հոգւոյն սրբոյ, և չեւ եւս են հատու, և այլ ուրեմն պիտի արել։

Զ ինչ խօսիս, տէր իմ Պետրոս. 'ի ծովեզերդ նըստիս, և վասն ծովուդ հոգաս, և զմակոյկդ կազմես. երթամք, ասես, ձուկն հանեմք։ Տեսանեմ, զայդ ասելով և 'ի դոյն կրթես զայլ Աշակերտդ, և հարկ է դուցա զհետ քո գալ. զի ուր միտք կամին, ոտք անդր տանին. և միտք 'ի գլուխ են, և գլուխ Աշակերտաց դու ես։ Յորժամ դու ասես՝ երթամք ձուկն հանեմք, այլ զինչ լսես 'ի դոցանէ. բայց եթէ ասեն ցքեզ, եթէ և մեք ընդ քեզ։ Այս քանզի ուր և երթան իսկ, դու ես նոցա տուն և քաղաք և ամենայն ինչ զինչ և պիտոյ է երկրաւոր վիճակիդ ձերում, մի դու և մի մոռասջիր. թիւդ ձեր գեղեցիկ է. ահաւադիկ եօթն էք. 'ի ձեզ տեսանի աշխարհս, միանգամայն և տեր աշխարհիս։ Աղդ ոչ է բարի դատարկութիւն ձեր։ Այթէ յապաստան անձանց պարապեալ էք, և այլ ինչ գործ ոչ է ձեր, անդրէն 'ի հրեաստան դնացէք, զյարութեան տեղեաւն շրջեցարուք, զվիմանն պատեցայք, զխաչին դիտեցէք. միտ դիք, տեսէք ուր թագուցին քահանայքն, նկատեցէք զտեղին։ Խնդիր լինելոց է վաղիւ խաչին. ոչ թողու Տէր զզէնն իւր 'ի հող, որով զթշնամին իւր եսպան, և զգերին թափեաց 'ի նմանէ։ Աչս ածէք զտեղեաւն, եկայք զդրօքն. թերեւս անդ իցեն հրեշտակքն, որպէս զի են իսկ անդէն։ Ի Սիոնէ երթայք, էլէք 'ի վերնատունն, հայեցարուք 'ի դուրան փակեալս՝ ընդ որ եմուտ Տէրն. յիշատակեցէք զտեղին՝ ուր էկն եկաց 'ի միջի ձերում և ողջոյն ետ ձեզ, ուր և

զՀոգին սուրբ փչեաց 'ի ձեզ։ Յայս ամենայն կրթեցէք զանձինս ձեր, և 'ի սոյն խոկացէք, զի մի մոռացցին 'ի սրտից ձերոց մեծամեծ զօրութիւնքն որ 'ի միջի ձերում գործեցան։

Զարա թէ 'ի հրեշատան երկնչիք երթալ, վասն զի անդ են Զենա և Կայիափա և ամենայն դառնաշունչ ժողովուրդն, թայլ տուք, զայդ եւս չմեղադրեմ։ Զինդ է մեծն Յակոբոս, որ բաւական է ամենայն իրաց առաքինութեան. և որպէս նա արդար է 'ի քարոզութեան յարուցելոյն, և աներկիւղս բարբառի 'ի մէջ խաչահանուացն, փութա Ճեպեա և դու Պետրոս. մի զայդչափ Զրաքեալդ խափաներ, զորս առեալ 'ի ծովեզրդ իջեալ ես։ Եկ ասեմ՝ մի ասեր երթամ ձուկն հանեմ։ Եւ եթէ այդպէս է, երթ. ո՞ գիտէ, դու քաջ խմանաս. ո՞ կարէ քեզ վարդապետ լինել. զի ահաւադիկ դու ունիս շնորհս վարդապետութեան զսուրբ Հոգւոյն. բայց լինձ թուի այսօր՝ դեռ 'ի կարծ երթաս. քանզի այլ շնորհք են ձկնահանաց, և այլ այլոց արուեստից։ Դու ոչ զձկնահանաց շնորհ ունիս և ոչ զծովուն արուեստ նաւաց. զի թէպէտ էիր երբեմն՝ թողեր 'ի բաց, և թողուլն ոչ 'ի քէն եղեւ, այլ յայնմանէ որ ընտրեաց զքեզ. և եթէ կամիս՝ յիշեա զանն զոր ասաց. "Եկողէք, ասէ, զորս արուեստի ձկնահանութեանդ, և արարից զձեզ որսորդս մարդկան"։ մարդկան որսորդ ես, ձուկն հանել այսուհետեւ դու ոչ կարես։ "Այլ երթիս, ասէ, 'ի նաւ, և զգիշերն ամենայն աշխատ եղեն, կալան և ոչ ինչ"։ Արդար և Ճշմարիտ. գիշեր իսկ է ամենեցուն՝ որ առանց Աստուծոյ շրջին յաշխարհի. և ունայն է ծոցնոցա յորսոյ կենաց, զորս հաւատացեալք միայն ըմբռնեն օգնականութեամբ Տեառն իւրեանց։

Արդ իբրեւ այդ եղեւ, ասէ, երեւեցաւ նոցա Տէր զի կայր յեզր ծովուն։ Այլ ոչր երբեք տեսեալ է, թէ յառաջ քան զլոյս՝ արեգակնն երեւեսցի։ Արա միայն 'ի ծովուն տիրերացւոց երեւեցաւ. իմանալի արեգակն յերկնէ յերկիր իջեալ՝ կայր առ ափն ծովուն, և յինքն ամփոփեալ պահէր զՃառագայթս անմատոյց լուսոյն իւրոյ։ Այլ բարւոք ասեմ եթէ ամփոփեալ պահէր. քանզի չէք հնար զայն արեգակն տեսանել։ Դայ զծովակաւն որպէս յառաջնումն նուապին, մինչեւ կրթեաց և

եհան զնաւս 'ի ծովէն, և հասոյց 'ի վիճակ առաքելու-թեան. ըստ նմին կարգի և այժմ առնէ։ "Մանկունք, ասէ, ունիք ինչ ուտելոյ"։ Եւ ասն մանկանց արդարեւ ուտելոյ եւեթ. ես զձեզ վաղ կորզեցի հանի, ասէ, յաշխարհէ, և 'ի չափ արուեստեան հասուցի՝ ընդ բազում հանդէս առաքինութեան անցուցեալ, մինչ զի և զՀոգի սուրբ ընկալարուք՝ որով երկինք և երկիր կատարեցան. և դուք դարձեալ մանկունք էք, և զմանկականդ եւեթ խոկայք և զդովիմբ պատաղիք։ Ցեսանէք, աւադիկ և այդ միանգամ առանց իմ ոչ կարէք ընուլ զպակասութիւն պիտոյից ձերոց, որովհետեւ ոչ ունիք ինչ. զի եթէ ունէիք, ոչ հարցանէի, այլ միայն բերել հրամայէի. վասն այնր հարցի, զի ոչ ունիք. ոչ եթէ ես ոչ գիտէի զձեր ունայնութիւնդ, այլ զձեզ ուսուցից զարդարն խաստովանել զոգիտութիւն անձանց ձերոց։ Այլ եթէ կարօտ էիք ձկան, և յոյժ պիտոյ էր ձեզ 'ի ժամանակիս, վասն որոյ և աշխատեալ էք զգիշերս ամենայն, ընդէր ոչ յիմ անուն արկէք զուռկանդ. զի և տեղեակ իսկ էիք իմոյ անուանս։ Բազում անգամ լուեալ էք՝ յոր անուն գեւք հնազանդեցան ձեզ. ոչ ահա յանուն Յիսուսի Քրիստոսի. Յիսուս Քրիստոս այն որ 'ի Նազարեթէն է, և Նազարեթ սահմանք են ձերոյ աշխարհիս, և մանաւանդ յայս ծովու. և զսովիմբ ծովեզերքս այնչափ նշանք և արուեստք երեւեցան և բազում զօրութիւնք, և ձեր տակաւին չէր իմացեալ։ Այս ուրեմն դեռ եւս 'ի սմին թանձրութեան մարմնի էք, և չեւ էք թեթեւացեալ յառաջին ծանրութենէն. ոչ 'ի զգայութենէդ ասեմ, այլ 'ի մտացդ սուաղեցելոց, որ ոչ աչեցուցին զաստուածային տեսնկան։

Արդ եկայք, ասէ, զգործիսդ յաջակողմ նաւիդ արկէք. զի որ առանց իմ արկէք, գիշեր էր և ձախակողմ. իսկ զոր ինեւդ արկանէք, տիւ է և աջակողմ. և եթէ աջակողմ է՝ անդ գտանէք. և իբրեւ գտանէք, մի զլանայք զչնորհս Հոգւոյն սրբոյ գիտութեանն, զի հաստատուն պահեսջիք յոգիս ձեր։ Այս զայս արարեալ նոցա փակեցին 'ի ներքս բազմութիւն ձկանցն, և այնչափ բազում, մինչեւ կարօտել նոցա օգնականաց. և 'ի քարշել նոցա զուռկանն՝ մեծամեծ աշխատութիւն կրեցին, մինչեւ ածին 'ի ցամաքն։ Այս Պետրոս յոյժ էր

զարմացեալ ոչ միայն ընդ բազմութեանն, այլ և մեծամեծք եւս էին, և անչափք և բազումք, և սակայն գործին ոչ պատառեցաւ։ Քանզի և նոցա ոչ էր սովորութիւն այնպիսի որս ուրեք երբեք գտանել, նշանագործութիւն կարծեցին և ոչ պատահումն որսոյ. վասն որոյ և ասէ Յովհաննէս. "Տէր է այն,,։ Եւ 'ի բանիցն Յովհաննու և 'ի հրամանէն Տեառն՝ յաջակողմն ասելով՝ ընդոստեաւ Պետրոս և ետ զինքն մերկ 'ի ծով, և վաղագոյն քան զնաւն հասանէր առ Տէրն, և ահիւ և խնդութեամբ լցեալ՝ ոչ ինչ կարէր զարժանն իմանալ. այլ 'ի նոյն սովորութիւնն յառաջին ձգէր զմիտս իւր՝ իբրեւ կերակրոյ և հանգստեան կարօտացեալ։ Վասն որոյ և Տէրն ողորմեալ նոցա՝ գտանէ 'ի տեղւոջն դդ պատրաստութիւն ճաշոյ։ Բայլ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ դու ո՞վ ես. քանզի գիտէին թէ Տէր ինքն է։ Օ գիտելն՝ ահա գիտէին, այլ ոչ ըստ առաջին նմանութեանն։ Իսկ Յիսուս եւս քան զեւս մօտ մերձեցոյց զնոսա, և ըստ առաջին սովորութեանն տայր նոցա օրհնութիւն, և ընդ նոսին հաղորդի 'ի կերակուրս, և զԱրդարդութեանն յայտնութիւնն ընու և կատարէ յետ յարութեանն։

Բայլ գիտեմ զինչ ասելոց էք ցիս. Օ այդ ամենայն աւետարանագիրն պատմեաց մեզ. արդ առ ինչ իցէ յայտնութիւն Տեառն 'ի վերայ ծովուն, և կամ բազմութիւն ձկանցն, և գործոյն չպատառելն, և հացին և ձկանն 'ի վերայ կայծականցն գտանիլ։ Նոյն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ մարգասիրութեամբ իւրով յայտնեաց զինքն աշակերտաց իւրոց, ցուցցէ և մեզ զծածուկս առակաց իւրոց՝ ոչ միայն 'ի վերայ ծովուն Տիբերեայ, այլ յամենայն ժամու և յամենայն տեղւոջ. ոչ միայն զի գիտիցեմք և ասիցեմք զպատուիրանս նոցա, այլ և սիրիցեմք զնա յամենայն զօրութենէ մերմէ, ոչ 'ի պատճառս նշանաց միջնորդի։ Քանզի բազումք են 'ի մարդկանէ որ 'ի յաջողութեանց աշխարհի սիրեն զԱստուած. և են ոմանք որ 'ի ստգտանել 'ի գործոց իւրեանց՝ դառնալով յապաշխարութիւն սիրեն զԱստուած և նոքա. իսկ որ քաջքն են և կատարեալք յամենայնի, անդստին 'ի տղայութենէ նուիրեն զանձինս իւրեանց յաստուածպաշտութիւն, և ոչ են 'ի

խնդիր նշանաց և արուեստից, և հեռի են յամենայն գործոց աշխարհի։ Որքա՜ն են որ գեր 'ի վերոյ են քան զերրեակ թիւն, ընդ որում ոչ ինչ համեմատի յեղեալոցս ամենեւին։ Այլ սակայն աստուածութիւնն բարերար է, ընդունի զերեսին հատածն, և ամենեքին յաստուածային յարկսն շրջին։ Այս մեք, եղբարք, թեպէտ և ոչ յառաջնոցն լցեալք, սակայն զվերջնոցն զհետ երթիցուք. աղաչեսցուք զնոյն Տէր, զի և զմեզ ընկալցի 'ի գութ սիրոյ իւրոյ, որպէս և այլոցն շնորհեաց թողութիւն. և արժանիս արասցէ յամենայն ժամ ըզմեզ երթալ զհետ բանի աւետարանին արքայ, զնովիւք գալ, զնոյն սիրել, նմին միտ դնել, և նովաւ ժամանել 'ի լրումն աւետեացն խոստացելոց։

Արդ առաւել զայս իմանալի է, եթէ ծովն տիրաբացւոց ոչ մնան է անբաժանելի մեծի ծովուն, այլ ուրոյն զատ և առանձնի. անուանի ծովակ՝ և ոչ ծով. և աշխարհ՝ ծովու է զուգութիւն և ոչ լճի։ Այս որպէս երեւի, յաւաղ քան զգալուստն Տեառն ցամաքայինքս ջրայնոց նմանեցան անիշխան և անառաջնորդ, խառնաւար կենաք զմիմեանս զրկելով և կորուսանելով առանց խղձելոյ և պատկառելոյ, և չճանաչելով զարարիչն ա՛ր արարածոց, իբրեւ 'ի գիշերի և 'ի թանձրացեալ խաւարի՝ 'ի վեր ամենեւին ոչ կարացեալ հայել. նմանեալք ձկանց մեծամեծաց՝ որք զմանունս անխտիր կլանեն, և ինքեանք եւս 'ի մեծամեծաց կլանին, և կարծեն ոչ ամենեւին՝ թէ քան զմեզ այլ արարածք վերագոյն գոյ. որպէս և սուրբ մարգարէն բողոքէ. "Օ մի՞ հայեցար յարհամարհոտս, և ստունգանեցեր 'ի կլանել ամբարշտի զարդարն, և առնիցես զմարդիկ իբրեւ զձկունս ծովու, և իբրեւ զսողունս՝ որոց ոչ գոյ առաջնորդ"։ Իբրեւ յայտնի է ամբաստանութիւնս զերկայնմտութենէն Աստուծոյ. ընդէ՞ր, ասէ, յայնց ժամանակաց հետէ թոյլ եւտուր։ Այլ մարգարէս սուրբ Հոգւոյն. ոչ կարէ տեսանել զթշուառացելոցն զնեղութիւն։ Փութա՛ ՀԵպէս, ասէ, եկ Տէր և երեւեցիր, մերձեցիր 'ի փրկութիւն. հան զաշխարհ 'ի ծովէ մեղաց, զի ծանիցեն զքեզ տէր և արարիչ, իշխան և առաջնորդ կենաց. զի մի՛ իցեն գաղանք ջրայինք, այլ մարդիկ երկրայինք և երկնայինք, պատկեր և կերպարան իմանալի զօրու-

թեանն։ Այսն այսորիկ առ յաջակողմ կոյս արկէք նաւիդ։

Եւ ո՞ է որ զայս ասիցէ։ Որ նստի ընդ աջմէ Հօր յերկինս։ Զոչ ցաշակերտսն. Եւ ընդ աջմէ Հօր նըստուցից զձեզ, և զամենայն ինչ յաջողեցից ձեզ. չէք 'ի ձեզ մասն խաւարի, և ոչ կողմ ձախոյ. մի որսայք գիշերի, զի հեռի է լոյս 'ի նմանէ, և բազումք գայթակղին նովաւ։ Զոր մանկունք լուսոյ էք և որդիք տուրջեան. եւ որպէս որդիք էք լուսոյ, նոյնպէս և լուսաւորեսցին գործք ձեր յաշխարհի, և գնասցէ աշխարհ ըստ հետ ձեր 'ի լոյս կենաց։ Եւ մի 'ի ձախ կողմ արկանէք զգործս ձեր. քանզի որ որդիքն ձախոյ են՝ և ծնունդք էն խաւարային իշխանութեան. և որպէս չէք նոցա մասն և բաժին յաջակողմանն, նոյնպէս ձեր մի եղիցի մասն և բաժին ձախակողմանն։

Եւ զայս լուեալ Պետրոսի և ընկերաց իւրոց՝ մոռք առաւել քան ակնջաք իւրեանց, արկանեն զուռկանն յաջակողմն նաւին, և ունին հարիւր և յիսուն և երիս ձկունս։ Որբեւ յայտնի է տեսակ խմաստութեանս այս։ Որպէս 'ի հինն ունէաք զբանական իմաստութիւն 'ի վար արկեալ, ոչ ինչ պակաս յերկնաւոր իմաստութենէն գտանին։ Զամենայն ինչ, ասեն, որ երեքկին է, բաժանելի է. իսկ որ բաժանելին է՝ նա ունի անդրէն յանզութիւն միաւորութեան և զանախտութիւն հաղորդութեան։ Զրդ բաժանի թիւ ձկանցս յերիս յինեակս և միական երրեակ, և յարին անդրէն առ իրեարս 'ի միութիւն։ Յերիս յինեերորդս՝ յորում տեսանի վեց մասն՝ կրկնաբաժանելով, երթեալ ելանէ անդր 'ի սկզբանն լինելութիւն. իսկ այսրէն ընդարութեամբ՝ 'ի նոյն թիւ ինքուցանելով, զոր և յինեերորդ ասեմք. զոր և Մովսէս օրինադրեաց ասելով զնա յոգեբերան և հանգուցիչ յերկրէս և աղատարար 'ի մարդկան ծառայութենէ։ Զրդ յայս ամենայն զոր Մովսէս ժամանակեան օրէնս կարգեաց, ակնարկութիւն նորա 'ի ժողովուրդն կատարեցաւ. իսկ ճշմարտութիւն յամենայն ազգս մարդկան երեւեցաւ, որպէս և թիւ ձկանցն յայտ առնէ։ Զանզի 'ի Տեառնէն տրեալ լինէր կարգադրութիւն օրինացն. իսկ ուր Տէր ինքնին գլխովին էր, անդ ոչ եւս խորհուրդ, այլ յայտ

Digitized by Google

նութիւն Հշմարիտ. որպէս և պարզապէս իսկ ասացաք 'ի Հաւեցելումն։ Քանզի բազմութիւն երից յիսնից ամենայն աշխարհս էր, և աւուրք և ամիսք և տարիք և ժամանակք և կենդանիք. քանզի հիւթական է և ծննդական և անկեալ ընդ ախտիւ ապականութեան, որում պիտոյ է անախտ օգնական. որպէս և պարզապէս իսկ երեւի թիւ երից ձկանց սոսկ ասացելոց միայնութեամբ։ Քանզի ոչ եթէ վեցեակք են եթէ աՀեցեալ ընուցուն զթիւ երկոտասանիցն, և կամ երկոտասանք՝ կրկնաթուեալ բաղկանայցէ վեց թիւն, այլ երիս ասաց, ոչ աւելի և ոչ պակաս. քանզի հրամանն տէրունական էր, և կոչմն աջոյ էր, և խորհուրդն տեսաւորութիւն էր։

Այս զինչ մեծ քան զայս՝ որ բանիւ Աստուծոյ գործ կատարիցի, և ինքն 'ի գործ անդր նկարեալ երեւի։ Քանզի անբաժանելի է սուրբ Հրոյդութիւնն, և անսեղմութեամբ տեսաք առանձնացեալ, որպէս և 'ի թիւ ձկանցս՝ Հայր որսակից եղեւ Որդւոյ, և Հոգի սուրբ սատար օգնականութեան Աստուածոյն։ Որսան յայտնի ձուկն 'ի ծովու, և 'ի ձեռն ձկանցն երեւի թէ զամենայն աշխարհ որոտայան, ոչ 'ի ջրոյ 'ի ցամաք, այլ յերաշտացեալ ցամաքէ 'ի ջուր կենդանութեան։ Քանզի մարդիկ առ կարօտութեան որսան զձուկն 'ի ծովէ 'ի ցամաք, և 'ի կենաց 'ի մահ. և երբեք զինքեանս յորս որսալ ոչ տան, քանզի մահկանացուք են և ինքեանք և որքն իւրեանց։ Իսկ Աստուած կենդանի և կենդանարար և կենդանացուցիչ ամենայն մեռելութեանց՝ որսայ զորս 'ի մահուանէ 'ի կեանս, և 'ի կեանս ոչ դուզնաքեայ, այլ յանժամանակս և առանց անցանելոյ։ Այս ոչ միայն որսայ, այլ և ինքն յորսոյն որսացեալ լինի, ոչ պատճառանօք, այլ Հշմարտութեամբ. քանզի աներկիւղ է և անկասկած, անհատ և անբաժանելի։ Որպէս 'ի թիւ ձկանցն խառնեաց զինքն երբեակ տեսակաւն առանց նախանձու չարակնութեան, այնպէս որսացեալ լինի յորսոյ իւրմէ և տայ զինքն 'ի խանձ կերակրոյ, զի միանգամայն իցէ ինքն ծով և տեղի և խանձոյ և կերակուր և ձկանցն որսորդ։ Այս կարի յիրաւի այսպէս. քանզի կեանք են անպակաս և անապառելի կերակուր. և ամենայն որ ուտէ 'ի կենայն՝ ընդ

նմին և կենդանանայ. և կեանքը ոչ մեռանին, այլ առաջուել եւս բազմանան և մեծանան և իմաստն և աստուածն լինին։

Ինչպէս ասացի փոքր 'ի շատ տարացոյց զՀնարիս, որ ունի զնմանութիւն, այլ ոչ եթէ զէութիւն. բայց ասացից ոչ զիմ, այլ զնորին զկենացն բանի։ Բանդի իբրեւ մատեաւ առնա փորձիչն, ասէ ցնա փորձելով. "Եթէ արդարեւ որդի Աստուծոյ ես, ասա քարանցդ զի հաց լինիցին"։ Եւ անդէն լսէ պատասխանի զոչ միայն հացիւն կեալ, այլ բանիւ Աստուծոյ։ Եւ բանն Աստուծոյ՝ որդին Աստուծոյ է, և զինքն տայ կերակուր, և պատկառի ինչ ոչ. որպէս կերակրէ զաշխարհս առանց աշխատութեան, սոյնպէս ուտի աշխարհի առանց հատանելոյ և բաժանելոյ։ Այլ. ես զնոյն իսկ զփորձիչն հարցանեմ. դու իսկ զի՞նչ ուտես. երկիր չունիս, վարք և հունձք քո չիք. յայտ է թէ հացիւ ոչ կեաս, և ոչ այլ թանձրագոյն կերակրովք։ Հաւադիկ երեւեցաւ թէ բանիւ Աստուծոյ կերակրիս. զի թէպէտ և չես արժանի, սակայն Աստուած բարերար է, և ինքն կայ մնայ առանց ծախելոյ և պակասութեան։ Այս զոր ասացի՝ թէ որսայ զմահկանացուս 'ի կեանս, և ինքն որսացեալ լինի, և հաւասարելով զինքն ընդ տպականացու որսոյ, և գաղտնեօք և յայտնի կորզեալ հանէ յապականութենէ։

Եւ էին, ասէ, ամենայն ձկունքն մեծամեծք։ Ընդ այդ զի զարմանաս. յորժամ Աստուած ձուկն որսայ, ոչ ինչ թաքչի յամենատես ականէն, յորժամ կամի՝ զմեծամեծն, յորժամ կամի՝ զմանունն, յորժամ կամի՝ զիրկինն, և այսու երեք թուական մասամբքս՝ ամենեքեանս նորա են։ Եւ ձկունն այդպէս է. նախ զմեծամեծն որսացաւ, զի խորհուրդ էր և ոչ ճշմարտութիւն. այլ առ ընտրութիւն Աստուածոյն ոչ այդպէս, նախ զմանունն, և ապա զմեծամեծն։ Եւ ասացի փոքրերկունս, և յիրաւի. ոչ միայն փոքրունք են, այլ և տգէտք և գալիլեացիք, անպիտանք լեզուով, գձուձք գաւառաւ, աղքատք և տնանկք։ Եւ զի՞նչ աղքատ քան զձկնորս, և քան զնոյնս՝ յիմարս. զի ամենայն հոգք իւր 'ի վերայ ջրային մակուկին է, իսօք իւր ընդ անքան ձըկունս. երեւի թէ քան զամենայն մարդ ոչ միայն տը-

Digitized by Google

գէտք, այլ և փայբենագործք։ Ա կայեմ ես քեզ ոչ այդ-
չափ միայն խոնարհագոյնք որչափ սասացաքդ, այլ բազ-
մապատիկ եւս քան զդոյն։ Զոր մի յայնպիսի աղքա-
տութիւն հայիր, որ ոչ 'ի կամաց իւրեանց է, այլ 'ի
պատահարաց աշխարհիս. զի մարդիկ ագահութեամբ
ակամ հատանեն յիշխանութիւն տերութեան. զբկեն
և զլանան, և հասուցանեն զընկերակիցս իւրեանց 'ի
մեծ թշուառութիւն։

Զոր հայեաց 'ի բարերարութիւնն Աստուծոյ և տես
վասն էր եղեւ գալուստն Տեառն յաշխարհս։ Զպաքէն
զի զոյն ամենայն խափանեսցէ, և զուգութիւն հաւա-
սարութեան կենաց գործեսցէ։ Իսկ արդ զո՞ տայիր ընտ-
րել որ յաղքատաց գարշիս և 'ի տնանկաց փախչիս.
քանզի "Իմաստութեամբն Աստուծոյ, ասէ, աշխարհ
ոչ ծանեաւ զԱստուած,,. հարկ էր զյիմարս ընտրել։
Զարձեալ որ հզօրքն էին՝ ոչ միայն Աստուծոյ ամբա-
ստիշտք էին, այլ 'ի վերայ տկարագունիցն մեծամեծ հա-
բուածս հասուցին. վասն այսորիկ զտկարս աշխարհիս
ընտրեաց Աստուած զի յամօթ արասցէ զհզօրս. և որ-
պէս տկարքն զհզօրս ամաչեցոյց, նոյնպէս յիմարքն
զիմաստունսն լռեցուսցէ։ Զանզի ընտրեաց, ասէ, Աս-
տուած. և ուր Աստուծոյ ընտրութիւն է, չիք անդ տը-
կարութիւն և յիմարութիւն. և որպէս յանգոյութե-
նէ էած զաշխարհս 'ի գոյութիւն, սոյնպէս 'ի տկարու-
թենէ էած 'ի զօրութիւն և յաղքատութենէ 'ի մե-
ծութիւն։ Զանզի նոր աշխարհ առնէ. ոչ զնիւթն ա-
սեմ և ոչ զտեսակն, այլ զառաջինսն որք ապականե-
ցան կամաք, 'ի նոյն բնութիւն տարեալ հանէ նորոգա-
պէս. և նախ որովք նորոգէն զնոսա՝ նորս արար և հա-
բուստս, միանգամայն և իմաստուն, և իմաստութեան
նոցա առաջնորդ և վարդապետ և ընդ նոսին սուրբ
Հոգին է գործակից, որով ամենայն ինչ եղեւ յառա-
ջագոյն։

Տեսանե՞ս զի ոչ այնուհետեւ 'ի Զաքլեա շրջին զծո-
վակաւն, այլ զմեծ ծովուս. և զծովու՝ ոչ զջրով, այլ
զկղզեաք և զամենայն ցամաքաք. և գործի ոչ զսովորա-
կանն ունէին, այլ զնորսն՝ որով ինքեանք որսացեալ է-
ղեն, որ ոչն պատառի. քանզի երկայն է գործին, և ա-
ռաւել քան զգործին՝ լայր գործւոյն. զի խանձն դնէին

Digitized by Google

'ի միջոցին, և զգործին սփռեալ տարածանէն զբոլոր երկրաւս։

Այլ քանզի թուով են երկոտասանք, և երկու են լարք ուռկանին, և չորք ծագ լարացն, յորոց երեք երեք զմի մի ծագ առնուն. քանզի երեք կրկինք է անվթար հաստատութիւն. մի կողմն ընդ արեւմուտս, միւսն զգոգնմին ընդ արեւելս, և երկուսն ընդ հիւսիս և ընդ հարաւ։ Այլ բոլորակ պարուրաձեւ զամենայն աշխարհս 'ի ներքս առեալ փակեցին. և ոչ յիւրաքանչիւր կողմանն ձգեն զուռկանն, այլ միաբան ամենեքեան. ուր խանձն եղեալ է, 'ի նոցն ժողովեն զամենեսեան 'ի կեանս և ոչ 'ի մահ. քանզի կերակուրն կենդանի է, կենդանեայ և ոչ մեռելոց։

Բայց գիտեմ զինչ ասելոց ես։ Օ՛ինչ օգուտ է, ասես. 'ի ծովակէ եհան, և 'ի ծովու դարձեալ ձուկն որսաց։ Ա՛յ ասացի զայգ ես, եղբայր. այլ քանզի իմաստութեան 'ի խնդիր ես, դու քեզէն իսկ ուսիր զառակս ուռկանին զոր Տէր յառաջագոյն իսկ նմանեցոյց։ Դարձեալ և զհզօրն սիրես. ո՞ր 'ի մարդկանէ քան զայս զօրագոյն, որ զամենայն աշխարհ 'ի մի միաբանութիւն կարէ բովանդակել. նա և ոչ մեծատուն ոք քան զնոսա երեւեսցի։ Այլ եթէ յայս երիս մատունս հաձեալ հաւանեացին միտք քո, ասացից քեզ և զուռկանն և զուռկանաւորսն, և զորս ձկանցն 'ի քէն ոչ թագուցից։ Բայլ վասն բազմութեանն թէ կարես՝ դու թուեա, ես ոչ կարեմ։ Զոմն աշխարհս է, ուռկանն քարոզութիւն Տեառն, ծագք ուռկանին չորք աւետարանք, ուռկանաւորք երկոտասան Առաքեալքն, որք ձկանցն ամենայն ազգք հեթանոսաց. իսկ խանձոցն 'ի միջին մարմին և արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և միջոցք ամենայնի՝ հաւատք Աշմարիտք։ Բանզի գեր 'ի վերոյ է աստուածութիւնն. իսկ մարդկան բնութիւնս զստորին կողմ երկրի առեալ ունի. զօրութիւն Հոգւոյն վերոյ 'ի վայր խոնարհեցաւ, և հաւատք ներքոյ 'ի վեր կանգնեցան, և բուռն հարեալ զզօրութենէն հաստատեալ կայ 'ի վերջնոցն, զի ձգելով 'ի վեր կորզեսցի։

Բ՛ոդ որովհետեւ ելաք 'ի ծովէն 'ի ցամաք, և 'ի ձրկանցն եկաք հասաք յաղգս մարդկան, եկ և տես զեր-

կոտաանան. ոչ միայն ուռկանաւորք են 'ի ծովու, այլ և նաւավարք. և 'ի ցամաքի սուրհանդակք, և 'ի պատերազմի զինաւորք, և յաշխարհի քաղաքավարք, նոքին և օրէնսդիրք։ Այլ ոչ եւս են կարօտք այսու հետեւ ունել զոր օգնական 'ի մարդկանէ. քանզի ընդ նոսա է զօրացուցիչն ամենայնի, աներկիւղ և անկասկածք են. ուստի զահի հարեալն փախչէին Յերուսաղէմ, անտի իսկ առնէն սկիզբն նորոյ քարոզութեանս. և համարձակութեամբ ուսուցանեն ոչ 'ի խորշ ուրեք ծածկեալ և թաքուցեալ, այլ անդրէն 'ի ներքս 'ի տաճարին՝ ուր ամենայն աշխարհ ժողովեալ էր. և ստէպ 'ի մէջ բերելով զանուանն Յիսուսի՝ քաղում նշանս և արուեստս առաջի ամենեցուն ցուցանեն։ Այլ ոչ վաղվաղակի ելեալ մեկնին յանձկալի քաղաքէն. նա և ոչ անարգանս ինչ համարին զտեղին՝ ուր Տէրն ամենայնի մեռաւ անարգանօք. այլ մեծապէս պարծանք և կենդանութիւն ամենայն արարածոց։ Զայնիւ բարբառին, ձեռամբ ցուցանեն, ակամբ տեսանեն զԱրեգդեհէմ՝ ուր ծնաւ, զՆազարեթ՝ ուր սնաւ, զՎալիլեա՝ ուր եկաց, զՈրոգոթա՝ ուր խաչեցաւ, զգերեզմանն՝ ուստի յարեաւ, զլեառն ձիթենեաց՝ ուստի վերացաւ, զերկինս՝ ուր ընդ աջմէ Հօր նստաւ։

Արդ ո՞վ իցէ մեծատուն քան զԱռաքեալսն, և իմաստուն քան որ զայս ամենայն գիտեն. նա և առատ եւս տուող միանգամայն։ Մի մի լոմայ ընդունէր տըկարն՝ որ նստէր առ գեղեցիկ դրան տաճարին, և զաւուրն պարենիկն թէ ընոյր։ Տես զմեծութիւն Առաքելոցն, և ընդ նմին զառատութիւնն. ոչ միայն աւուր և ամնոյ տան զառաջիկն, այլ զամենայն աւուրս կենաց նորա. քանզի ընկալաւ զբժշկութիւն ոչ միայն յառաջամայն ցաւոցն ողջացեալ, այլ 'ի ձեռն հաւատոցն և զյաւիտեանսն ժառանգեաց։

Արդ ուստի սկսաւ Տէր յայտնել զաստուածութիւն իւր աշխարհի, անտի սկիզբն արարին և Առաքեալքն. իբրեւ քաղում անգամ ուսուցանելով զնոսա և դնելով վիայութիւն ընդ քահանայսն և ընդ մեկնիչսն՝ եթէ չէք իմ այլ անուն 'ի ներքոյ երկնից՝ որով լինի բժշկութիւն, բայց միայն անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Զանազի Յիսուս և Քրիստոս վասն

մարդասիրութեան իւրոյ թանձրացոյց զինքն 'ի մարմնաւորութիւն, զի մարմնաւորք տեսանել կարասցին զնա և ուսանել. և եթէ նոքա եղեն երկինք և երկիր, և նա է օրէնադիր 'ի ձեռն Մովսէսի. վասն նորա մարգարէքն քարոզեցին յառաջ ժամանակաց, և զնաւրա օրն գալստեան ցանկային տեսանել հայրապետքն մեր և թագաւորք։ Այլ այսու ամենայնիւ վկայութեամբ Առաքելքն խօսէին ընդ ամենայն բազմութեանն, մինչեւ զքահանայապետն անգամ զվայրափա ածէին 'ի հաւանութիւն լսել նմա 'ի նոցանէ։

Այլ այնչափ համարձակագոյնք էին, մինչեւ տուրբն Ստեփաննոս՝ թէպէտ մանկագոյն էր քան զայլսն 'ի ժամանակին, առ սէրն զոր ունէր ընդ Քրիստոսի, զեռ արիւն փութացաւ հեղուլ վասն նորա։ Զի ոչ միայն բանիւք իցէ վկայութիւնն, այլ և մեծաւ զօրութեամբ, մինչեւ ցմահ անգամ։ Տես զզօրութիւն խաչեցելոյս, յոր բարձունս ձգեաց զաշխարհս. զոր և յառաջագոյն ասաց. "Զորժամ բարձրացայց, զամենեսեան ձգեցից առ իս"։ Բանզի սա նոյն Ստեփաննոս մինչ դեռ ոգեմարմին էր, խօսել եւեթ գիտէր յանուն Յիսուսի Քրիստոսի. զի թէպէտ ունէր շնորհս և առնէր նշանս մեծամեծս, սակայն դէմ յանդիման զնա չէր տեսեալ. այնպէս իսկ այն օր քարինքն 'ի վերայ տեղային, արիւն զերեսօքն իջանէր, մարմինն անկեալ գնէր յերկրի։ Այս լա զայնմանէ փոյթ ինչ ոչ արարեալ, 'ի վեր հայեցեալ զերկինս բանայր, զՔրիստոս ընդ աջմէ Հօր տեսանէր, 'ի վերայ սպանողաց աղօթս առնէր։ Այս այս էր նմանութիւն մահուն Քրիստոսի, և աղօթք աղօթից նորա. զի որպէս նա 'ի վերայ խաչահանուացն, ոչնպէս և սա 'ի վերայ քարկոծչացն աղօթս առնէր։

Բայց թերեւս ասիցէ ոք, թէ զինչ օգուտ իցէ 'ի վերայ չարացն աղաչել, զի և այլ եւս յաւելցեն 'ի չարիսն։ Այլ այդպէս է. մի գու և մի զայդ ածեր զմտաւ. աղէ տես զզօրութիւն աղօթից, և ուրախ լեր 'ի սրտուէն զոր կթեաց անտի։ Զպաքէն Սաւուղ էր որ քարկոծել ետ զնա. և Ստեփաննոս որ աղօթէր "Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն"։ Ճշմարտութեամբ աղաչէաց, և արդարութեամբ լուաւ նմա. զի ոչ միայն եթող նոցա զմեղսն, այլ և 'ի վիճակ Քրիստոսի քերոցն խառնեաց զնա։

Digitized by Google

Բրդ զամենայն վկայութիւնս բանիւք և գործովք կատարէին Յերուսաղէմ առաջի քահանայապետին։ Եւ թողուն անդ զՅակովբոս փոխանակ ամենեցուն՝ բաւական համարելով զառնն զաշնուականութիւն, և զի մի դատարկ թողցեն զտեղին՝ ուստի և Տէրն հրամայեաց ամենեւին մի մեկնել։ Եւ ինքեանք 'ի վիճակէ առեալ զամենայն ազգս և զաղինս, ճեպէին 'ի քարոզութիւն աւետարանին։ Տեսէր, յայնժամ այնչափ հեղգացան, մինչեւ Տէր ինքնին զարթուցանէր հազիւ հազիւ 'ի քնոյ. իսկ այսօր անդադար զտիւ և զգիշեր ճեպին փութան յասել և 'ի լսել և 'ի կատարել զամենայն կամն առաքչին իւրեանց, և մանաւանդ իբրեւ տեսին զգայլն գազանացեալ՝ որ ընդ խառնելն կոտորէր զամենայն հօտն անհովիւ։ Որպէս նոյն իսկ մեծն Յակոբոս, փութա, ասէ զՊետրոս, և հասիր 'ի Կեսարիա ստրատոնեանց. զի աւանիկ է Սիմոն կախարդ, որ զգեցեալ է դեւս իբրեւ զհանդերձ, և յոգիսն զէն ունի զսատանայ. զի ոչ ինքն միայն մոլորեալ է 'ի ճանապարհ կորստեան, այլ և ամենեքեան որք լսեն նմա։ Բրդ փութա, եղբայր, և վաղ հասիր յօգնականութիւն բազմութեանն, որ տգիտութեամբ կորնչին. քանզի գտցես քեզ անդ բազում օգնականս։ Եւ զայս ասացեալ Յակովբոս, և յանձն արարեալ Հոգւոյն սրբոյ, զնա յուղարկեր և ինքն անդէն մնայր։

Եւ հասեալ Պետրոսի 'ի բազմահոյլ քաղաքն Հռովմ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ մեծամեծ նշանաք և արուեստիւք հաստատեաց զբազումն 'ի ժողովրդենէն. զասպտամբութիւն կշտամբեաց, զչար գազանն հալածեաց, զանմեղ հօտն ապրեցոյց 'ի մոլորութենէ, և Հռովմ սուրբ Հոգւոյն և զմահ եւս հալածեաց 'ի սահմանաց նոցա։ Եւ մինչ դեռ էր 'ի Կեսարիա ստրատոնեանց, կին ոմն՝ անուն Բիւթենիկ՝ աշակերտեալ էր Բռաքելոյն, և տեսուչ էր որբոց և այրեաց 'ի Լիւգիա քաղաքի. դէպ եղեւ 'ի նմին ժամանակի հրաժարել նմա, և հասեալ Պետրոսի դարձոյց այսրէն զհրաժարեանն մինչեւ զարմանալ բնակչաց աշխարհին։ Եւ յաւելան 'ի թիւ հաւատացելոցն բիւրք բազումք։ Այս լուեալ զՊետրոսէ Յակովբոս, խնդայր և ուրախ լինէր 'ի Հոգին սուրբ, և համարձակագոյն եւս դնէր զվկայութիւն յա-

նաւն Տեառն առաջի ամենայն ժողովրդեանն, և 'ի նմին կայր հաստատութեամբ։ Իսկ Պետրոս դարձեալ բժշկեաց զվէրս ախոյիկ՝ որոց առեալ էր 'ի չարաթոյն գազանէն. և ուսուցանէր զամենեսեան 'ի մոլար կռոցն պաշտամանէ դառնալ առ մի Աստուած հայր ամենեցուն որ արար զամենայն, և 'ի միածինն որ եկն իւրով բարերարութեամբն և երեւեցոյց զինքն աղգի մարդկան. զի ոչ միայն լսելով գիտասցեն զԱստուած, այլ եւ հայելով և տեսանելով, խօսեցեալք ընդ նմին մօտ մարմնաւորութեամբն՝ Հանապազիցեն և Հանապազիցին. որպէս և եղեւ իսկ։ Բանզի մինչ դեռ էր Պետրոս Յոպպէ քաղաքի, յայտնեցաւ հրեշտակ Տեառն առ Կոռնելիոս 'ի Կեսարիա՝ որ էր յազգէ հեթանոսաց, և գործոք առաւելեալ քան զամենայն իսրայէլացիսն. բայց միայն կարօտէր Հանապազելոյ զՅիսուս Քրիստոս, և յանուն նորա ընդունել մկրտութիւն. հրամայի միանգամայն կոչել Պետրոսի 'ի տուն նորա։

Արդ տես զգործս ուրկանին մեծի՝ որ ոչ պատասաեցաւ, և ունի ձկունս մեծամեծս. զի ոչ միայն 'ի Ջրոյ՝ այլ և 'ի ցամաքէ, որպէս յայտնեցաւ Հոգին սուրբ առ Պետրոս 'ի նմանութիւն կտաւի անօթոյ, և կախի զչորեցունց տտմոցն. ունի յինքեան զամենայն կենդանիս՝ զսուրբս և զանսուրբս, զմանուսն և զմեծամեծս։ Այլ եթէ յիշէք՝ ես յառաջագոյն ասացի, թէ երկնային ուրկանին չորք ոտոյք՝ են, և զչորեսին անկիւնս երկրիս 'ի ներքս արգելեալ փակէ։ Արդ իբրեւ լսես զիմաստասիրելն անօթոցն յերկնից յերկիր, մի հարկաներ կար միտաքդ առ անօթն կտաւի, կամ քնաւ իսկ 'ի տարբ ինչ նիւթեղէն. քանզի և կարէ իսկ ոչ մի մանն յեղելոցս ընդունել յինքն զամենայն կենդանիսն. այլ անդէն ի մացիր զզօրութիւն սուրբ Հոգւոյն, որով եղեւ ամենայն ինչ։ Տարածեաց արկեաց զինքն 'ի նմանութիւն կտաւի անօթոյ։ Այս ընդէ՞ր արդեօք. վասն զի սրբագոյն է անօթ կտաւոյ, և լուսափայլ տեսիլ ունի։ Զոհղովեաց զամենայն ազգս որ սուրբ էին և որ ոչ էին սուրբ. ըստ երեւման յայտնութեանն իբրեւ թէ յերկնէ յերկիր խոնարհեցաւ, այլ ըստ իմանալի խոհականութեանն

1 Միւսն ոչ։

զերկրաւորաս յերկնայինսն մերձեցոյց։ Զ. Պետրոս յայտնի կենդանիք՝ որ տուեալ են 'ի կերակուր մարդկան. և են անդ ամենայն զոր օրէնքն ուտել հրամայեն, և զորս ոչ հրամայեն։ Այս քանզի քաղցեալ էր Պետրոս, կերակուր երեւի նմա 'ի մեծ տեսլեանն, միանգամայն և ուսուցանէ նմա զկատարեալ գիտութիւն Զ. տուծոյ. "Եթէ կերակրոյ քաղցեալ ես, ասէ, զեն և կեր,,։ Իսկ նա 'ի սովորութիւն օրինայն ընթացեալ, "Իմ, ասէ, խառնակ և անսուրբ ինչ չիք կերեալ,,։ Եւ ասէ անդէն պատասխանի. "Զոր Զ. ստուած սրբէ, դու մի պիղծ համարիր,,։ Այս ինչպէս սրբեաց արդեօք. քանզի 'ի վերայ կտաւոյն ետես զամենայն կենդանիսն. և եթէ նմանութիւն է կտաւի անօթն՝ արարող Հոգւոյն, և կենդանիքն որ 'ի նմա՝ ազգք հեթանոսաց, ապա յոյր վերայ էին՝ 'ի նմին և սրբեցան. քանզի ամենայն որ մերձենայ Ճշմարիտ հաւատով 'ի սուրբ Հոգին, ընդ նմին և հոգիացաւ. քանզի պատասխանի ըզդոյն ասէ. "զոր Զ. ստուած սրբեաց,,։ Զ. ստուածային էր տեսիլն և ոչ մարդկային. արդ եթէ Զ. ստուած սրբեաց և դու քաղցեալ ես կերակրոյ, քաղցեալ է և Զ. ստուած մասին արդարութեան։

Զ. ուրդ ով է սուրբ ըստ քոյոց կամացդ. թերեւս ասիցես՝ որդիք օրինացն։ Այլ ոչ միայն սուրբ չեն, այլ և յոյժ պղծեցան։ Այս գիտեմ, դու 'ի հեթանոսաց գարշիս, և ոչ կամիս մերձենալ առ նոսա. քանզի անթլփատք են մարմնով և ոչ սրտիւ։ Այդ և ես ոչ մեղադրեմ. այլ արի և երթ 'ի տուն հեթանոսաց, և մի ուսուցաներ թլփատել, այլ մկրտել. և անդ տեսանես դու մեծամեծ յայտնութիւն Հոգւոյն սրբոյ։ Օ ինչ մեծ քան զերեւումն հրեշտակի առ մարդ, որպէս առ Կուռնելիոսն եղեւ. ոչ միայն տեսաւ նմա, այլ և յոյժ գովութիւն եւս ետ. "Աղօթք քո, ասէ, լսելի եղեն, և ողորմութիւնք քո ելին առաջի Զ. ստուծոյ,,։ Իսկ արդ զինչ եւս պիտոյ է առնս այսմիկ. աղօթիւք սուրբ էր, տուրս տալով բարեգործ, ինքն հաւատացեալ, և ընտանիս ունի ըստ կամացդ արդարութեան, և յիշխանութեան մեծի՝ կարէ և այլոց առաջնորդ լինել 'ի բարեգործութիւն։

Այս արդ տես զզօրութիւնն Հրիատոսի, զի և մի

Digitized by Google

բան ոչ ստեաց 'ի բանիս Տեառն զոր ասաց. "Օ՛ Յով-
հաննէս մկրտեաց 'ի ջուր, այլ դուք մկրտիցիք 'ի Հոգին
սուրբ,,։ Բդ ինքն Հոգին սուրբ եկեալ առ Կուռնե-
լիոս, և ոչ իշխեր ձեռնադրել զայրն 'ի մկրտութիւն.
եկն Պետրոս, և ընդ մտանելն նորա յապարանսն Հա-
ւրիւրապետին՝ լցան ամենեքեան Հոգւով սրբով որք 'ի
տանն էին, և լեզուս մեծամեծս խօսէին։ Եւ զայն գի-
տացեալ Պետրոսի՝ վաղվաղակի զամենեսեան մկրտեաց։
Եւ զինչ պիտոյ էր զլցեալսն Հոգւով՝ մկրտել 'ի ջուր,
ասացից քեզ. զի ոչ միայն զմարդիկն՝ որք ընկալան զՀո-
գին՝ արժան էր մկրտել, այլ և զՀոգին սուրբ. որպէս
և եղեւ իսկ։ Քանզի որք ընկալան զՀոգին սուրբ և
ձեռնադրեցան 'ի Պետրոսէ 'ի մկրտութիւն աւազանին,
ապաքէն և Հոգին ընդ նոսա մկրտեցաւ։ Այս թէ և ոչ
Հոգին սուրբ մկրտիցի ընդ մկրտեալսն, ոչ մկրտու-
թիւնն կատարեալ ասի, այլ լուացումն ջրոյ. որպէս և
ոմանք մկրտեալ ջրով առանց ընդունելութեան Հո-
գւոյն սրբոյ, անդրէն արժանի արարին Բ։ռաքեալքն վե-
րըստին մկրտութեան, զի ընկալցին զսուրբ Հոգին։
Քանզի և սկիզբն մկրտութեանն՝ Բ։ստուծոյ եղեւ և
ոչ մարդոյ. Բ։ստուած 'ի մարդոյ ընկալաւ մկրտութիւն։
Քանզի յասէն Տեառն ցՅովհաննէս, "Թոյլ տուր
այժմ, ասէ, կատարեսցուք զարդարութիւնս ամենայն,,։
Եւ կատարումն արդարութեան՝ Հմարտապէս Հանա-
չել զսուրբ Երրորդութիւնն. և գիտութիւնս այս յայտ-
նեցաւ մեզ 'ի մկրտութեանն Որդւոյ։ Հայր վկայեաց
ձայնիւ, և Հոգին սուրբ երեւեցաւ յայտնութեամբ,
և Որդի մկրտեցաւ Հմարտութեամբ, և արդարութիւնն
կատարեցաւ առանց պակասութեան։ Այնպէս և 'ի
տանս Կուռնելիոսի Հայր յայտնեցաւ 'ի ձեռն հրեշտա-
կի, Հոգին սուրբ լցոյց զամենեսեան, Պետրոս մկըր-
տեաց յանուն Յիսուսի Քրիստոսի զլսողսն։ Օ՛ որ
և յառաջագոյն ասաց Տէր. Այսմն է ալքայութիւնն երկ-
նից ուռկանի արկելոյ 'ի ծով, և ածէ ժողովէ յամե-
նայն ազգաց, յորոց զպիտանացուսն բառնան, և զան-
պիտանսն 'ի բաց ընկենուն։ Բ։ռ մարդկան ուռկանս այդ-
պէս է, իսկ առ երկնաւորն ոչ այսպէս. չիք անդ անպի-
տան և խոտան. այլ ընտիրք ամենեքեան, և խոտան
ոչ գոյ 'ի նոսա. նաև մեծամեծք, բայց եթէ կամիս որ

Digitized by Google

ինքնին լինի անապագ և վաստակաւոր, և եղանիցէ ընդ հրամանաւորս ուռկանն ապտակաց, լինի նա ոչ միայն 'ի բաց ընկեցեալ, այլ և կոխեալ քարշի յայնցանէ՝ որ քան զինքն եւս վաստակաւորագոյնք են։

Աւրդ սկիզբն մկրտութեան Յովհաննու 'ի Յորդանան գետ առնու, և պատի անդէն 'ի հրեշտակաստանի, ահէ և գայ հասանէ 'ի մեծ ծովեզրն, և 'ի սկզբանէ 'ի սկզբան միւսանգամ սկիզբն լինի 'ի տան հարիւրապետին, և սիրեալ սարաստանի ընդ ամենայն ազգս հեթանոսաց։ Բանդի իբրեւ ետես Պետրոս՝ թէ և 'ի հեթանոսս առուն Հոգին սուրբ Հոգւոյն, ինքն իսկ եւ յԱրուսաղէմ, և եցոյց Յակոբայ. զի թէպէտ և խղճէին 'ի նմանէ որք 'ի թլփատութենէ անտի հաւատացեալք, իսկ իբրեւ լուան 'ի Պետրոսէ հաստատուն վկայութիւն վասն զօրութեան սուրբ Հոգւոյն՝ եթէ յայտնագոյն եւս երեւեցաւ 'ի մէջ հեթանոսաց որպէս 'ի միջի մերում՝ ոչ ինչ այնուհետեւ խղճէին 'ի Պետրոսէ. այլ փութացան ամենեքեան ձեպել յիւրաքանչիւր կողմանս ըստ առաքելարգութեան սուրբ Հոգւոյն. ինքն Պետրոս 'ի մեծն Հռոմ. Մարկոս յԱղեքսանդրիա. Թովմա յաշխարհն հնդկաց, որպէս և Թադէոս յարեւելս պատահէ, և Փիլիպպոս ներքինւոյն 'ի վերայ կառացն ուսուցանէ և մկրտէ, և առաքէ զնա զօրութեամբ սուրբ Հոգւոյն 'ի յԵթովպիա. գաւանի և Յովհաննէս 'ի յԱսիա, որպէս և Անդրէաս 'ի կողմանս հիւսիսոյ։ Եւ ձեպէին ամենեքեան՝ ոմանք 'ի կղզիս հեռաւորս, և այլք 'ի խորշս և 'ի գազս ցամաքի ձգեալ սփռեցան յամենայն կողմանս երկրի։ Իսկ Պաւղոս սկիզբն առնու մկրտել 'ի Դասնակոս, և անդադար ընթացիւք հասանէ յԵրուսաղէմ մինչեւ 'ի Իլիրիկոն։

Եւ այս են գործք մեծամեծք և տեսիլ աքանչելի. զի ոչ եթէ յանկեան ուրեք քարոզէին, և ոչ 'ի ծածկեալ պատմէին զանուն Յիսուսի Քրիստոսի. այլ յայտ յանգիսանն բարձր բարբառով 'ի քաղաքս մեծամեծս՝ ուր իշխանքն նստէին։ և 'ի բուն իսկ մեծն Հռոմ՝ ուր անդ թագաւորութիւն էր. և յԹէնս՝ ուր Ճարտարապետք փիլիսոփայիցն էին և օրէնսդիրք աշխարհաց. և յԱթենաս՝ ուր երեւելի մեհեանքն էին և յայտնա-

գոյն պաշտամունք հեթանոսական օրինաց. և 'ի խուժադուժ կղզիս՝ որք ոչ ինչ պակաս էին բարուք 'ի բնութեանն 'ի վայրենի գաղանաց. և յերկիրն եգիպտացւոց՝ որք առաւել զանգեալք էին կախարդութեամբն, և դեւք թանձրացեալք խառն ընդ մարդկան շրջէին, և օրէնք պարսկականք՝ անխտիր տալով զանձինս յանառակ պոռնկութիւն։ Այս և ո՞ իսկ կարէ ասել զամենայն չարիս որ գործէին 'ի մէջ հեթանոսաց. զի ոչ միայն զանասուն կենդանիս զոհէին դիւաց, այլ և զուստերս և զդստերս իւրեանց զոհելով և նուիրելով 'ի սպանումն և 'ի յայրումն ածէին, և անխտիր էին յամենայն չարիս. մինչեւ ոմանք 'ի խուժադուժ կղզիսն օրէնս սովորութեան ընկալան առանց խղճելոյ և պատկառելոյ զենուլ և ուտել զընկերակիցս իւրեանց, ոչ միայն յօտարացն հասելոց առ նոսա, այլ և անդէն իսկ յազգէն տոհմայնոց իւրեանց. որպէս յայտնագոյն ցուցանէ մեզ պատմութիւնն Ինդրեայ՝ որ ապրեցաւ 'ի ձեռն Պատթէոսի աւետարանչի։

Այս արդ զի՞ մի մի ասացից. այլ որպէս յառաջագոյն ասացաք ըստ ամբաստանութեան մարգարէին՝ եղէն մարդիկ իբրեւ զգազանս վայրենի և իբրեւ զսողունս 'ի ցամաքի և իբրեւ զձկունս ծովու. սատակեցին զիրեարս և սատակեցան 'ի միմեանց։ Իսկ 'ի գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեռն երկոտասան Առաքելոցն՝ զորս յառաջագոյն ընտրեաց, փրկեալ ապրեցայց զամենայն ազգս մարդկան։ Այս քարոզութիւնն էր սակաւ բանիւք, իսկ գործք մեծամեծք և առաւել զօրաւորք. քանզի ոչ եթէ բազում բանիւք յանդիմանէին զհեթանոսս, և ըստ մասանց բազմամեթեր մեղացն պատմէին նոցա զյանդիմանութիւնսն, այլ այսչափ ինչ. "Ի բաց լինել ձեզ 'ի պոռնկութենէ և յարբենէ զոհից և 'ի ինչհեղձուցիկ ուտելոյ,,. և զայս պահելով՝ ընդունել զմկրտութիւն յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և նովաւ Ճանաչել զսուրբ Հոգին և զՀայրն ամենեցուն։ Այս զայս սակաւաբանութիւն բաւական համարեցան Առաքեալքն առ ամենայն լրումն արդարութեան։ Զի թէպէտ և մոլեալք կատաղէին հեթանոսք 'ի մոլորութիւն դիւացն և յանարժան պոռնկութիւն, սակայն օրէնս ունէին քաղաքավարութեան, որ

կարձէր 'ի զողանալոյ և յափշտակելոյ և յանխտիր սպա-
նանելոյ. զեզեալ օրէնս բաւական համարեցան մարդ-
կան առ իշխանութիւն մարմնոյ։

Իսկ վասն յորդորման Հոգւոյն զորմէ ոչ փոյթ ա-
բարին իշխանքն և թագաւորքն, երիւք այսու կանո-
նեալ բանիւքս՝ մեծաւ զօրութեամբ յամենայն մա-
սունս արդարութեան նշանայն և արուեստիցն՝ զոր Աս-
տուած 'ի ձեռս Աղաքելոյն կատարէր, ահ և երկիւղ
անկանէր 'ի վերայ ամենայն կռապաշտիցն։ Վանգի
դեւք հալածեցան, զոհք խափանեցան, ծուխք ձենձե-
բայն դադարեցին, երգք լկտութեանց լռեցին, մոլորու-
թիւն կախարդութեանն հատաւ, պոռնկութիւն ամա-
չեաց, ամուսնութիւն զգաստացաւ, սրբութիւն բացաւ։

Եւ այս ամենայն լինէր 'ի ծագել իմաստի արեգա-
կանն 'ի մէջ հեթանոսաց։ Յորժամ փարատեալ մեր-
կացաւ 'ի նոցանէ զխաւարն մոլորութեան, ապա կարա-
ցին տեսանել զլոյս շնորհի Հոգւոյն սրբոյ, ընդ որում
կայր հակառակ անդրանիկն սատանայի Սիմոն, որ պատ-
րեալ մոլորեցոյց զբիւրս բազումս, և զինքն անուանէր
զօրութիւն երկնաւոր 'ի փրկութիւն եկեալ ազգի մարդ-
կան։ Եւ հասեալ Պետրոսի զօրութեամբ սուրբ Հո-
գւոյն, ոչ միայն զնա յանդիմանեալ կշտամբեաց, այլ
և բազմութիւն մարդկան հանեալ 'ի նմանէ՝ և հաս-
տատեաց զնոսա 'ի ճշմարտութիւն քարոզութեան ա-
ւետարանին։ Իսկ նորա 'ի ցամաքէս հալածական եղեալ,
ծովամուխ լինէր, անցանէր անցանելով 'ի Հռովմ. և
Պետրոս զհետ լինելով ոչ ինչ փութացեալ ճեպէր,
այլ զՋէր ընդ քաղաքս փիւնիկեցւոց, առնէր նշանս և
արուեստս յանուն Յիսուսի Քրիստոսի, և հաստա-
տէր ժողովուրդս բազումս. և ինքն անցեալ զհետ կա-
խարդին և հասեալ 'ի Հռովմ, ոչ եւս հալածէր զնա
'ի քաղաքէն, այլ բանիւք յանդիմանէր և նշանօք հաս-
տատէր զքաղաքն։ Եւ Սիմոն 'ի դիւաց յափշտակեալ,
և սակաւ մի դեր 'ի վերոյ քաղաքին զինքն վերացու-
ցեալ, և անդէն առաջի ամենեցուն խորտակեցաւ ան-
կեալ 'ի վայր. որք ոչ միայն ականատեսք եղեալ, այլ
և ձեռօք իւրեանց քարշեցին և արտաքս քան զքաղաքն
ընկեցին։ Եւ զայս տեսեալքն ճշմարտեցին վասն քա-
րոզութեան աւետարանին՝ բազմութիւն արանց և կա-

նանց, որք մկրտեցան 'ի Պետրոսէ, և եղէն ժողովուրդք բազումք, մինչեւ 'ի տուն Թագաւորին աղդեցաւ, և հաւատացին, և հաստատութեամբ զաւետարանն ընկալան, և մարտիրոսութեան հնորհաց արժանի եղեալք կատարեցան։

Որպէս և ինքն իսկ Պետրոս գլուխ աշակերտացն 'ի նմին քաղաքի ընկալաւ զվճիռ մահու ըստ նմանութեան խաչին Քրիստոսի, և եդ վէմ հաստատութեան 'ի հիմն եկեղեցւոյ, և կատարեաց զբանն Յեառն որ ասէ. "Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ"։ արդարեւ իսկ վէմ է ճշմարիտ դաւանութիւն հաւատոյն։ Որպէս Պետրոս 'ի վերայ Քրիստոսի շինեաց զանձն իւր վկայութեամբ մահու, նոյնպէս և եկեղեցի շինեցաւ 'ի վերայ Պետրոսի հաւատոյն՝ ոչ միայն 'ի Հռովմ, այլ և ընդ ամենայն քաղաքս և 'ի գեօղս մեծամեծս մինչեւ ցփոքունս. նոյն հաւատք և նոյն հիմն և նոյն հաստատութիւն։ Բանզի մի է տէր և մի մկրտութիւն, որով ընկալաք զթողութիւն մեղաց և զկենդանութիւն ոգւոց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի։

Այլ որպէս Պետրոս 'ի Հռովմ հաստատեաց զեկեղեցին, նոյնպէս և այլ Առաքեալքն ըստ իւրաքանչիւր վիճակեցեալումն աշխարհաց, ուր հրամայեցաւ նոցա լի առնել զաւետարանն Քրիստոսի։ Այս նոցա Աստուած շնորհս 'ի Հոգւոյն սրբոյ, և կատարեաց 'ի ձեռս նոցա նշանս և արուեստս մեծամեծս. որք զախտս մարմնոց բժշկէին, և զհիւանդութիւնս ոգւոցն զօրացուցանէին, մինչեւ զմեռեալս անգամ յարուցին, և առաւել քան զբնութիւն մարդկան պայծառագոյնք երեւեցան 'ի մէջ հեթանոսաց. որոց առեալ ցուլս և պսակս՝ իբրեւ աստուծոյ զոհս մատուցանէին։ Այս այնչափ մեծացան երկնաւոր յայտնութեամբքն և իմաստնացան 'ի Հոգւոյն սրբոյ, մինչեւ զՀարտարապետ փիլիսոփայիցն ածէին 'ի հաւանութիւն, և հաստատէին 'ի հաւատս ճշմարիտս, և գործակից աւետարանին զնա կացուցանէին։

Այս այս էր տեսիլ նոր և սքանչելի. գալիլեացիքն հռոմայեցիք եղէն. և որ քան զամենեսեան տկարագոյնքն էին, զօրութեամբ մարտնչէին՝ ոչ միայն ընդ իշխանս, ընդ քաղաքապետս, այլ ընդ ինքնակալսն և ընդ

Digitized by Google

զօրս նոցա. և որ անբանքն մնեալ էին 'ի ծովակին Գենեսարեթայ, ընդ սաթենացիսն վիճէին պայքարաւ. և ոչ միայն յաղթէին և լռեցուցանէին, այլ և կորզէին հանէին 'ի բնական գիտութենէն, ուսուցանելով և հաստատելով զնոսա 'ի ճնորհս Հոգւոյն սրբոյ։

Այլ ո՞ իսկ կարէ պատմել զմեծութիւն նոցա. ինքեանք անտունք և անքաղաք յերկրի, և այլոց տունս և քաղաքս խոստանային յերկինս. ինքեանք աղքատք, և զայլոց մեծութիւնս յաւարի առնուին. հալածեալք 'ի մարդկանէ, և զդեւս հալածական առնէին յաշխարհէ. մարմինք իւրեանց գանալիցք, և զայլոց վէրս ողջացուցանէին յանբժշկելի հարուածոց. հացիւ քաղցեալք, և զկերակուր հոգեւոր ջամբէին բազմաց. ջրով ծարաւիք, և բաժակ մխիթարութեան մատուցանէին ամենեցուն։ Ինքեանք բանդարգեալք, և զայլոց խղէին զկապանս մեղաց. դատապարտեալք, և զդատապարտս լուծանէին. մահապարտք, և մահոյից թողութիւնս առնէին։ Այրեւէին յերկրի, և շրջէին յերկինս. կռուէին ընդ մարդկան, և յաղթէին դիւաց. ճաղկս յիւրեանց մարմինս ընդունէին, և տանջեալ լինէին գունդք դիւաց։

Ոչ կարեմ յերկրի նմանութիւն գտանել երկոտասան առաքելոցն. զի քան զդաշտս ծաղկալիցս պայծառագոյնք են, և քան զլերինս մեծամեծս բարձրագոյնք։ Մեծ են քան զմեծութիւն ծովու, և խորք են քան զանդունդս նորին. յերկրէս հրաժարեցին, և քան զերկինս գերագոյն գտան։ Իսկ արդ ո՞ւմ նմանեցուցից կամ զո՞վ ածից տարացոյց։ Այթէ զամպս ասեմ, ոչ ինչ են համեմատ. ամպք 'ի ծովէ ջուր առնուն և ցանեն զերկրաւս. իսկ սոքա զՀոգին սուրբ ընդ ինքեանս ունին՝ ոչ տեղալով և ցանելով, այլ միանգամայն մեռն և թաղեն 'ի ջուրս աւազանին, և առնեն բոյսս երկնաւորս, տունկ կենդանի առանց անցանելոյ։ Այս եթէ զլուսին ասացիս, լուսին ինու և պակասի. իսկ Առաքեալքն ինուն և լցուցանեն առանց պակասութեան, և ինքեանք մնան առանց անցանելոյ։ Այս եթէ զաստեղս ասացիս, ոչ մի փառս ունին, և ոչ միով պայծառութեամբ երեւին. այլ ոմն յոլով և ոմն սակաւ, ոմն արուսեակ և ոմն գիշերավար. իսկ Առաքեալքն ամենեքեան արուսեակք,

Digitized by Google

ամենեքեան պայծառացեալք, ամենեքեան զուարթունք զոյգք և հաւասարք, միաբանք և անհակառակք։ Ցինա ծն անդր, զինչ նմանութիւն աստեղայն և Ադաքելոցն։ Աստեղք ոմն 'ի վերս, ոմն 'ի վայր, ոմն 'ի միջի. Ադաքեալքն ամենեքեան վերաբերք և բարձրացեալք։ Աստեղք գիշերի եւեթ երեւին, և 'ի տուընջեան ընկղմին և ծածկին 'ի լուսոյ արեգական. իսկ Ադաքեալքն 'ի տուէ և 'ի գիշերի փայլեն, 'ի տուընջեան լոյս են ոգւոց, և 'ի գիշերի զգաստութիւն ոգւոց և մարմնոց։

Ադաքեալք քան զարեգակն պայծառագոյնք են զորութեամբ Հոգւոյն սրբոյ։ Արեգակն իշխանութիւն ունի աւուր տուընջեան. Ադաքեալք իշխանութիւն ունին տուընջեան և գիշերոյ։ Արեգակն 'ի տեսաւորութիւն երկրի և 'ի գործառնութիւն մարմնաւոր պիտոյիցս. Ադաքեալքն 'ի տեսաւորութիւն երկնի և երկրի, և 'ի խոհականութիւն ոգւոց և մարմնոց։ Արեգակն յեղյեղու և փոփոխի. իսկ Ադաքեալք առանց յեղյեղման և փոփոխման, առանց շարժելոյ։ Արեգակն ժամանակաւ ծագէ և մնանէ. Ադաքեալք զժամանակ ծագման լուսոյն քարոզեցին աշխարհի։ Արեգակն ոչ երբեք ծնանի այլ արեգակն. իսկ ծնունդք Ադաքելոց զգործս հարց իւրեանց կատարէին։ Ծնունդք արեգական Ճառագայթք լուսոյ իւրոյ են, և մի կոյր ոչ երբեք կարացին լուսաւորել. ծնունդք Ադաքելոցն բազում անգամ 'ի սուրբ եկեղեցւոջ զկոյրս լուսաւորեցին, զկաղս բժշկեցին, զախտս հալածեցին, զմեռեալս յարուցին։ Այս արեգական զմարմնովք պարի, և զերեւելիս ցուցանէ, և առաջնորդէ 'ի Ճանապարհս ուղիղնացից. լոյս քարոզութեան Ադաքելոցն և զմարմնովքն պարի, և զաչս հոգւոցն բանայ, և առաջնորդէ 'ի քաղաքն երկնաւոր։ Ի լոյս արեգական մարդիկ և անասունք շրջին 'ի տուընջեան, և 'ի գիշերի հանգչին յաշխատութենէ. 'ի լոյս հաւատոց Ադաքելոցն երկնաւորք և երկրաւորք հրաւիրեցան 'ի նորոգումն կենաց, որ առանց անցանելոյ և ապականութեան է։

Այս են Ադաքեալքն որ մեծացան և վերաբերեցան և գեր 'ի վերոյ եղեն քան զերկինս և հասին առ Հայրն բոլորեցունց, և յորդորեցին զաշխարհս ամենայն 'ի քարոզութիւն աւետարանին Ճշմարտութեան, զի ամենե-

քեռն հաստատեն 'ի նոցն քաղաքն վերին, ուր երկուսանգամ ընդունելոց են զանպատում պսակն աստուածութեան։

Եկեալ ինքն տէր մեր Յիսուս Քրիստոս երիցս անգամ հարց ցգլուխս աշակերտացն ասելով. "Շ մեռան յոգնանեանց, սիրէս զիս,,։ Յաւ նա ճշմարտութեամբ ետ վկայութիւն. եթէ նա միայն է կատարեալ սիրոյ արժանի, վասն զի աստարիչ է. եկն զիւր արարածս նորոգել՝ ոչ 'ի ձեռն հրեշտակի, և ոչ 'ի ձեռն մարգարէի, և ոչ 'ի ձեռն այլոց իրիք պատճառանաց յերեւելեացս, այլ 'ի ձեռն իւրոյ ստեղծուածոյն։ Օ ի որպէս առ սէր իւր արար զմարդն, նոյնպէս և վասն սիրոյ եկն 'ի խաչիր կորուսելոյն. վասն սիրոյ իւրոյ եգիտ զկորուսեալ ոչխարն. վասն սիրոյ իւրոյ եբարձ 'ի վերայ ուսոց իւրոց. վասն սիրոյ իւրոյ զգուեաց և եդ 'ի վերայ բազկաց իւրոց. վասն սիրոյ իւրոյ եբեր և խառնեաց 'ի հօտն բանաւոր, որ արածին յարօտս հոգեւորս, և հանգչին 'ի մանկաղատեղս անմահութեան։ Վասն սիրոյ Պետրոս ետ պատասխանի և ասէ. Տէր, դու զամենայն ինչ գիտես, և զամենայն ինչ ճանաչես. եթէ սիրէ ոք զքեզ՝ դու քաջ գիտես։ Գիտեմ զի վասն փորձելոյ հարցանես. եթէ բազում անգամ հարցցես, զգոյն լուիցես յինէն։ Դու իբրեւ զԱստուած և զորդի բարերարի՝ առանց չափոյ սիրեցեր զաշխարհ, և զանձն քո եդիր 'ի վերայ. ես իբրեւ զմարդ՝ ըստ իմում տկարութեան սիրեմ զքեզ. տալ ինչ ոչ կարեմ; զի աղքատ եմ. և եթէ տաց, 'ի քումմէ անտի առից և տաց քեզ։

Բայց տայր ոք զպատճառսն գիտել, եթէ ի՞նչ թղեաս դու կարօտ, և զի՞նչ կամիցիս խնդրել, և եթէ զի՞նչ կայցէ իմ զոր տաց քեզ։ Բանզի յառաջն ոչ երբեք զպայպիսի բանս հարցեր զիս։ Բ.ոդ եթէ նոր է հարցուածս, ես գիտեմ զի նոր խնդրանն տաս ինձ. ասա, տէր իմ; համարձակ. գիտեմ ոչ զայն ինչ հրամայես դու ինձ, զոր ոչ կարեմ առնել. և ոչ զայն ինչ խնդրես յինէն, որ չիք իմ տալ քեզ։

Իբրեւ ետես Տէր եթէ սրտիւ ամենայնիւ սիրէ և ամենայն կամաք կամի և ամենայն զօրութեամբ համարձակի, քանզի զամենայն զինքն ետ ցնա, յանձն առար նմա զկիզքն և զմիջոցն և զկատարածն, զտղայութիւն, զերիտասարդութիւն և զծերութիւն։ Յաւ յայս

երիս հատածս է տեսանելի աշխարհս, և իմանի կա-
տարեալ արարչութիւն. բայց լաւագոյն առաջինն է, և
կրսերագոյն միջինն։ Այլ քանզի յասելն Տեառն ցՊետ-
րոս «Արածեա դու զգառինս իմ», զանմեղսն յանձն
առնէ. և երկրորդ զոչխարսն ասելով անորիշ ասաց,
այլ ոչ պարզագոյն իբրեւ զգառինս. քանզի գառինքն
օդեաց են ծնունդք, և օդիքն խոհականութեան իմն
տեսակ երեւին աշակողմանն։ Իսկ ոչխարսն ասելով է
սովորութիւն մարդկան, օգուոյն՝ զնոյն և այծոյն, այլ
ոչ պարզագոյն և խառնուածն. քանզի որոշեցաւ սեաւն
և սպիտակն, և հատածք բնութեանն ոչ խառնեցան 'ի
միմեանս։ Այլ որպէս լաւագոյնն յաջակողմանն երեւե-
ցաւ, նոյնպէս և վատթարագոյնն ձախակողմն ընտրեաց
կամաք և ոչ բնութեամբ։

Այլ ընդէ՞ր այս այսպէս լինիցին։ Հշմարիտ է ինձ
ասացեալն յանսուտ բնական բանիցն։ Լոյսն արուաց
բերէ զնմանութիւն օդային ինչմանն, և նա է Հշմարիտ
տեսակ երկնաւորացն. իսկ քօշն այծեաց՝ նմանեալ ջը-
լոյին մասինն՝ մարմնաձեւ թանձրութիւն, որ ունի
զախտս ապականութեան, և բաժանեալ որոշի 'ի բա-
նաւոր բնութենէ, ուր տեսանի յաջակողմանն։ Դարձ-
եալ ասելով Տեառն՝ արածեա դու զխաշինս իմ, այս
եւս խստագոյն բազմութիւն և յայտնագոյն բաժա-
նումն. խաշն ասեմք միանգամայն անասուն պահարիդ.
և միով բառիւդ զամենեսեան 'ի ներքս արգելեալ փա-
կեցաք զանմեղս և զմեղանչականս, զսուրբս և զան-
սուրբս, զպիտանացուս և զանպիտանս. և որ միանգամ
մարդընդելք են և հնազանդեալք ընդ իշխանութեամբ
մարդոյն, ամենեցուն խաշինք ասեմք. քանզի և կարօտ
իսկ են առաջնորդութեան հովուի։ Արդ քանզի մի է
հօտ և մի է հովիւ, և մի արօտք են և մի մակաղատեղ
հանգստեան ամենեցուն, անդ են գառինք և ոչխարք և
ամենայն բազմութիւնն, զոր խաշինս ասաց. մանաւանդ
նոքին իսկ Արտաքեալքն, զորս յանձն արար Պետրոսի,
և որք գործակից եղեն նոցին քարոզութեանն, ամենե-
քին սոքա գառինք սուրբք են և աստուածայինք։

Իսկ որք պատճառանօք աշակերտեցան յաւետարանն,
և նորաձեւ Հանապարհս ցուցին բազմաց, ընդդէմք է-
ղեն Հշմարտութեանն։ Այլ քանզի ունէին զանունն

Digitized by Google

Քրիստոսի, և զկերպարանս ձեւոյ Աստուածոյն յանձինս ցուցանէին, և գործովք չարութեան նմանեալ էին սատանայի, նոքա են այծիք որ կան 'ի ձախոյ կողմանն հօրն իւրեանց սատանայի. զոր ընտրեցին կամաք իւրեանց, ընդ նմին երթիցեն 'ի հանդերձեալ տեղին իւրեանց։ Իսկ զոր խաշինս ասաց, այնոքիկ են՝ որք ընդդէմ կացին Աշխարհութեանն. և ոչ միայն արգել և խափան եղեն աւետարանին, այլ և ձեռն արկին 'ի սուրբ Աստուածայն և 'ի նոցուն աշակերտսն՝ բազում անգամ հարկանելով և չարչարելով, և սրոյ մահուամբ վախճանեցին զբազումս 'ի նոցանէ, որպէս և Ներոն և այլ բազում ընկերք իւր. մինչեւ ցայսօր ժամանակի այն գործ գործեցեալ է և գործի։

Արդ արածեա դու, ասէ, զանմեղս և զմեղաւորս և զայնոսիկ որ զմահ 'ի վերայ ձեր ածիցեն. արածեա, ասէ, դու, մի՛ զանգիտեր, որպէս ինքնին հասարակ ամենեցուն չարեաց և բարեացն եկի 'ի փրկութիւն և 'ի կենդանութիւն նորոգման, զի իցեն մի հօտ ընդ միոյ ձեռամբ հովուին միոյ. նորուն ձայնի լուիցեն, զնորայն զհետ ընթացցեն, զնոյն կեանս ընկալցին. զի իցեն ամենեքեան գտուինք անմեղք, և ոչ զրթցողք և հարկանողք և բեկանողք։ Այս թէ իցէ ոք և երցէ ըստ ցուպ հովուութեանդ քո, և ընդդիմացի Աշխարհութեան աւետարանիդ, սակայն դու մի՛ զանգիտեր, այլ քաջալերեաց և զօրացիր, մինչեւ ցմահ անգամ պատերազմեա, որով և փառաւոր իսկ առնիցես զիս։

Այլ թերեւս փափագիցեմք ամենեքին լսել թէ ուր հրամայիցէ Տէր արածել զխաշինսն, և կամ զինչ արօտքն իցեն, կամ որպիսի՞ ջուրքն իցեն, և կամ զինչ տեղի հանգստեան։ Արդարեւ ինձ և ամենեցուն որք սիրեն լսել՝ ախորժելի է։ Արանզի հովուութեան է թագնութիւն վարուց և հաւատոցն Պետրոսի. իսկ խաշինք՝ ամենայն ազգ հեթանոսաց. և տեղիք արօտից՝ սուրբ և առաքելական եկեղեցի. Ճարակք՝ օրէնք և մարգարէք և Աստուածք. իսկ ջուրքն՝ անանց աւետիքն աւետարանին. և ուր հանդչիցեն անհոգութեամբ առանց երկիւղի՝ 'ի վերինն Երուսաղէմ, որ է մայր մեր ամենեցուն։ Արանզի ոչ գոն անդ այծիք ձախոյ կողմանն, և ոչ քոշք հարկանողք, և ոչ խոյք խեթկողք, և ոչ

ցուլք սպանողք. նա և ոչ բնաւ իսկ ամենեւին 'ի վնասակարաց, այլ ամենեքին միամիտք, անմեղք, սուրբք, պարզք, յստակք. ոչ միայն գունով սպիտակազգեստք, այլ և ոգւովք, և Ճառագայթաձեւք՝ նմանեալք երկնաւոր հրեշտակական գնդին. զի ընդ նոսին ունիցին յանգումն միաբանութեան ձայնից և ձեւոց և գունոց. ընդ նոսին դարձեալ խրախակիցք և պսակակիցք՝ հպեալք և մերձեցեալք առ նահատակակիցն Քրիստոս։ Որում լուան, որում աշակերտեցան, որում հնազանդեցանն, որում ըստ կամաց նորա զամենայն պատուիրեալսն գործեցին և կատարեցին, և չարչարակիցք եղեն նորա մահուանն, ընդ նմին և ընկալցին զանանց ուրախութիւնն, ընդ նմին և տեսցեն զՀայրն բոլորեցուն զօրութեամբ Հոգւոյն սրբոյ՝ յորոյ ձեռնն կատարեցին զնահատակութիւնն երկնաւորս. ընդ նմին եկեսցեն յերկրորդ գալստեան նորա դատել զկենդանիս և զմեռեալս, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց՝ բաժանեալ 'ի կողմանց երկոցունց զիւրաքանչիւրսն, զոր և ատեն ընտրեցին, ոմանք յանողորմ տանջանսն, և ոմանք յանպատում 'ի կեանս յաւիտենականս։

Արդ որդիք և եղբարք, հարք և տեարք, ամենեքեան մեծք, ծնունդք մկրտութեան սուրբ եկեղեցւոյ, ընթերցողք օրինաց և մարգարէից, աշակերտեալք աւետեաց աւետարանին, հաստատեալք 'ի հաւատս Աստուածոյն, շինեալք 'ի վերայ վիմին հաստատութեան, ակնկալեալք երկնաւոր յուսոյն 'ի գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և նորա ընդ առաջ ելանել մեզ ամենեցուն, զի իցեմք առանց ամօթոյ և պատկառանաց, և Ճանաչել զնա 'ի նորուն չարչարանացն նը-ղանօք բեւեռացն, և 'ի բանից նշանագիր աւետարանին։ Այսպէս 'ի գործոց մերոց դարձեալ Ճանաչիցիմք նմա. զի իցեն գնացք մեր ըստ սուրբ քարոզութեան Աստուածոյ, թէ կատարեալ իցէ մարդն Աստուծոյ ամենայն Ճշմարտութեամբ. զի լուիցեմք զձայն բարերարին, որ ասէ ցամենայն պատուիրանապահսն. "Արկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի"։ Ընդ որում Հօր և Հոգւոյն սրբոյ փառք և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Digitized by Google

ՎԱՍՆ ԴԱՏԱՍՏԱՆԻՆ

ԵՒ ՄԻԻՍԱՆԳԱՄ ԳԱԼՍՏԵԱՆՆ

Լ՝հեղ և զարմանալի է գաղուստն Քրիստոսի, և ա-հաւոր դատաստանն՝ յորժամ երկինք և երկիր դողը-գեալ շարժին, և հրեշտակք Աստուծոյ այսր անդր ընթանայցեն. ձայն ահաւոր փողոյն Աստուծոյ, որ ժողո-վէ զազգս և զազգինս յատեան դատաստանին. հանդերձ սաստիկ անդ լինին, և բովանդակ 'ի դուրս ելանիցէ 'ի նմանէ զմեր ամենեցուն հոգիս, զշունչ և զմարմին: Լ՝ուրարոյն և Աստուած ոչ մնասցեալ ամենեւին զոսկերս վախճանելոյն, 'ի կատարեալ հաւակէն մինչեւ յանցու-ցեալն յորովայնէ: Քրիստոս սաստիկ հաւատնէ երկրի, և զգուշութեամբ զամենայն մնորմինսն 'ի դուրս բերելով երկրի: Լ՝հեղ և ահաւոր է ասեսանել զօրն զայն. եթէ երկրաւոր թագաւորացս առաջի էր, սակայն մեծ էր և սաստիկ: Լ՝ուրդ ասեսանեն արարածք ամենայն զԱստուած յերկնից յերկիր խոնարհեալ, և շարժեալք զօրք լու-սեղէնք և բազմութիւնք հրեշտակաց և հրեշտակապե-տաց. ամենա դատաստանին դնի փառաք դատել զամե-նայն արարածս, և կարգին առաջի ահաւոր աստենին Լ՝ուսաքեալք և մարգարէք, հայրապետաք և մարտիրոսք և բազմութիւնք ընտրելոց Աստուծոյ: Քաւ դժնդակա-գոյն է զայն ասեսանել. յայնչափ բազմութեան չիք ու-մեք փախուստ 'ի հանգիստապետէն և ոչ ընդարձակու-թիւն երկրի թագաւորեան. 'ի ծագէ 'ի ծագ ասեսանիք զամենայն հեռաւորս և զմերձաւորս, և լսեսցուք զոր-ծոց իւրաքանչիւր հատուցումն լինի: Որոց գործք դժնդակա-գոյնք են, դատապարտեալ լինին, և անողորմ դահիճք ունին զմարդն որպէս թշնամի. հեղաքարշ արարեալ՝ ա-ծեն ասաջի դատաւորին և տանջեն 'ի հուր գեհենին. և դասք արդարոցն փայլեն որպէս լուսաւորք յարքայու-թեան երկնից:

Զոմն երկնաւոր 'ի բարձունս գոչէ առ ննջեցեալսն և ասէ. Լ՝ուրք, սիրելիք Քրիստոսի, ահա եկն թագա-

ւորն երկնաւոր և պարգեւէ ձեզ հանգիստ և ուրախութիւն և կեանս անմահական փոխանակ աշխատութեան ձերոյ և ծգնութեան։ Արիք և տեսէք զԹագաւորն Քրիստոս՝ զփեսայն անմահ, որում ցանկացեալ էք. վասն զի նմա փափագելով վասն նորա եղէք պանդուխտք 'ի վերայ երկրի։ Արիք տեսէք զնորաստեղծ վայելչութիւն և զմեծ փառս։ Արիք մտէք յարքայութիւն նորա զոր պատրաստեաց ձեզ։ Արիք տեսէք ըզտենչալի զՏէրն զոր սիրեցէքն, յաղագս որոյ և վշտացայքն։ Արիք տեսէք զնա բազում համարձակութեամբ և ցնծացէք անդ նովաւ, և զանձառելի բարութիւն ձեր և զուրախութիւն ոչ ոք բարձցէ 'ի ձէնջ։ Այսպէս վայելեցէք զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց, զոր շնորհեաց փափագողաց իւրոց։

Օ ուարձանան արարածք ամենայն մեծաւ ուրախութեամբ, և փառաբանութիւն և երկրպագութիւն մատուցանեն Թագաւորին Քրիստոսի. և ընդ ամպս լուսաւորս 'ի վերայ օդոյ Թռուցեալ սուրբքն բազմութեամբ զօրաք հրեշտակաք վերանան ընդ առաջ Քրիստոսի, և անպատմելի փառաք ցնծացեալ հրճուին 'ի տեսանելն զանմահն Աստուած զերկնաւոր փեսայն, և մտանեն 'ի քաղաք սուրբ 'ի վերին Երուսաղէմ ժառանգել զանձառ բարիսն զոր պատրաստեալ է Աստուած սիրողացն իւրոց։ Յայնժամ ածեալ լինին և ապրստամբքն 'ի հրեշտակացն հանդերձ ամենայն դիւական գնդիւն առաջի ահաւոր բեմբին և անկաշառ դատաւորին։ Յայնժամ Թագաւորն Քրիստոս հրամայէ տանջող հրեշտակացն արկանել զնոսա 'ի հուրն անշէջ և 'ի տանջանս մշտնջենաւորս. և միանգամայն զամենեսեան որ գործեալ են զանօրէնութիւն և ոչ են քաւեալ զղջմամբ և խոստովանութեամբ՝ մատնեն անգերծ խաւարին և անքուն որդանցն զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։ Յորմէ փրկեսցէ Քրիստոս Աստուած զամենայն հաւատացեալս անուան իւրում սրբոյ։

ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԱՑ ՄԵՌԵԼՈՅ

Ի ԿԱՆՈՆԱՑ ԳՐՈՅ

Յայտնի են օրէնք և հաստատեալ են 'ի ձեռն օրինադրին Մովսէսի և այլոց մարգարէից. իսկ կանոնականք 'ի ձեռս Առաքելոցն տուան, և ետուն իշխանութիւն վարդապետաց եկեղեցւոյ. զի ակնաղբիւրն իցեն Մովսէս և մարգարէքն, և Առաքեալքն տնկողք զմարդիկ առողջ հաւատոյ։ Այլ 'ի հողեղէնս երկիր՝ որ անկեալ կայ ընդ ապականութեանն, այլ 'ի վերս հայերով տնկեն 'ի կենդանի դրախտն. ուր ոչ գոյ ծառ գիտութեան բարւոյ և չարի, այլ կենաց և անապականութեան։ Այս ունի ցանկ անխրատ՝ ուր ոչ Այսա և ոչ օձն կարասցէ սողել մտանել, և ոչ տալ զյետսընդդէմ՝ իրատն, և ոչ մերկանալ զհայրենի փառսն, և ոչ ամաչել և թաքչել ընդ ծառովք։ Այս ոչ գոյ անդ ապաւինել 'ի տերեւ թզենւոյն, և ոչ ելանել 'ի դրախտէն և անկանել յերկիր նզովից։ Այս և ոչ պէտք են 'ի դրախտիս յայս գործելոյ և պահելոյ ըստ առաջին պատուիրանին, այլ միշտ կեալ և վայելել։ Արդ յայս դրախտ տեառական հաւատով տնկեցին զմեզ երկոտասան Առաքեալքն, և ոռոգանեն զդրախտս զայս 'ի բուն յականակիտ յաղբերէն բղխմանց։ Օ սոյն զսա տեսանէին 'ի հեռաստանէ, և փափաքանօք 'ի դարս ժամանակաց իւրեանց ցանկանային լինել նմա։ Այլց սակայն թէ և երեւակի ոչ հանդիպեցան, այլ կանխագէտ մարգարէութեանքն հաստատուն հաւատով վկայութեամբ ինն կատարեցան. որ և այսօր յեկեղեցւոջ գովին 'ի մարդկանէ և յԱստուծոյ փառաւորին։

Արդ այս խորհրդական ջուրք հովիւքն բանաւորք զբանաւոր հօտս մկրտեն. որ մկրտեալք մատուցանեն յորդէգրութիւն երկնաւոր Հօրն և անուանեալ եղբայր Քրիստոսի, և առհաւատչեայ 'ի բաց ղհանդերձ

ձելոց իրացն զայսմանի շնորհս մատուցանել։ Զինքն մարմնացուցեալ և արիւնացուցեալ 'ի վերայ սրբութեան սեղանոյն, հրամայեաց սրբութեամբ համարձակել, քաջալերութեամբ հաւատոյ մերձենալ, և ապա առնուլ ուտել և ըմպել։ Իսկ ոչ միայն թէպէտ և իցեն կատարեալ ամենայն արդարութեամբ, ոչ ունին իշխանութիւն մերձենալ կամ ճաշակել 'ի մարմնոյ և յարենէ որդւոյն Աստուծոյ. քանզի տերունական է կանոնս։ Զի մինչ դեռ մարդն կենդանի է, արժանի եղեալ վայելել յայսպիսի անանց պարգեւս, և յետ մեռանելոյ մարմնոյս ունի հաւատովք իշխանութիւն և 'ի մեռեալս սովիմբ կենդանի և իմացական պաշարաւս՝ քաւեալ 'ի մեղաց և ազատեալ 'ի տանջանաց, խառնեալ 'ի գունդս արդարոց։ Այս հրաման տուեալ մնացելոցն որ աստէն՝ զի առնիցեն յիշատակ հանգուցելոցն. զի մեռեալ է մարմինն և կենդանի է հոգին, և կենդանարար է աստուածութիւնն՝ որ առ ճշմարտութեամբ զհողեղէնն զոր ինքն ստեղծ։

Բանզի ետ յառաջագոյն աշակերտացն 'ի ժամ ընթրեացն, յորժամ կամաւ մատնէր 'ի ձեռս անօրինաց, առեալ զհացն և զգինին 'ի փառս Հօր. զի մինչ դեռ էր 'ի մարմնի, անձամբ անձին յիշատակ մատուցանէր, և կերող զինքն և զԱրաքեալն զոգ հաւատարէր։ Որպէս և մեծն Պաւղոս խորհրդակիցն Քրիստոսի ասէ՝ թէ «Հացն զոր բեկանեմք, հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի. և բաժակն զոր օրհնեմք, ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի։ Բանիցս անդամ թէ ուտիցէք զհացս կամ ըմպիցէք զբաժակս, զմահ Տեառն պատմեցէք մինչեւ գայ նա»։ Զի պատմելով զմահն Քրիստոսի 'ի վերայ տերունական սեղանոյն, հացն և գինին ոչ որպէս էրն յառաջնոյնպէս լինի, այլ մարմին և արիւն ճշմարիտ Քրիստոսի, ոչ ապականացուլ ուրուք, այլ անապականի. և մերձեցեալ ուրուք արժանապէս՝ զապականութիւնս մեր յանապականութիւն դարձուցանէ։ Այս է սա յիշատակ արարեալ Աստուածն Բանի կատարեալ և կուսածին մարմնոյն, զոր ոչ կարաց մահ սրգելուլ ընդ ապականութեամբ. և խառնեալ 'ի սա Տեառն ըստ իւրոյ բարերարութեանն, և յիշատակ մերոյ մարդկութեանս։ Զի եթէ առ մարմին զիմ քնա-

կիցս և ետ ինձ իշխանութիւն զիւրոյ աստուածութեանն և պատմիչ կայցոյց զիս իւրոյ չարչարանացն, ահա յայտ է՝ թէ և ես առնիմ իշխանութիւն հանգուցելոյն առնել զիշատակ նոցա 'ի յիշատակն Քրիստոսի։ Օ՛ի յորժամ արքութեամբ առնեմ, օգտիմ և օգտեցուցանեմ. օգտիմ՝ զի և զքեզ հոգիս 'ի հանգուցելոյն խառնեմ, և օգտեցուցանեմ՝ զի վկայ եմ ճշմարիտ հաւատոյ հանգուցելոյն։ Այլ եթէ այդ այդպէս իցէ, ոչ միայն պարտիմք հանգուցելոյն յիշատակ առնել, այլ և առաջս առատաձեռն բաշխել մեզ 'ի քաւութիւն մեզաց, 'ի գալիք հաւատս ազքատաց, 'ի հանգիստ միթարութեան հանգուցելոյն, և որ զկնի մեր գալոց են յուզչափս վարդապետութիւնս։

Իսկ միւսն մեզատրոյ յիշատակի՝ որք վերիպեցան 'ի կենանս իւրեանց, և ընդեցին զգիր արդեգրութեանն Աստուծոյ, և անձամբ անձանց եղեն պատճառք երանելոյ յերկնից յարքայութենէն, և բազմութիւնք հրեշտակացն առաջ առին վասն այնպիսեացն, և միայն աստուածայիս խրատքն սեւագունագ զօրգն խնդայ, զի քակեցաւ տաճարն կենդանի, չեղեւ արժանի բնակութեան Թագաւորին Քրիստոսի. քակեցաւ 'ի դաստուէ արքացն, հեռացաւ յուզչափս եկեղեցւոյ, չխառնեցաւ 'ի գունդն Քրիստոսի, չկարգեցաւ 'ի շրջապայ պարս հրեշտակայ լուսազգեստից, միաբանեաց 'ի սեւաթոյր գայն ներկեալ մեզացն, խառնեցաւ յերանակ այծից ճախակողմանն. ժառանգն արքայութեան եղեւ կերակուր արդանցն անմահից. որդին լուսոյ բնակեաց 'ի խաւարն արտաքին. փափանակ ուրախ լինելոյ և խնդալոյ յանթառամ պըսակին, լալ աչաց և կրճտել ատամանց, և վայ 'ի բերանոյ մի պակասեացէ։ Քանզի կրկին է հաթուածք գժոխացն և երեքկին. սաթուռ է քան զամենայն ցուրտ ձմերայնոյ սառամանիքն, և տապ բոցոյն այրեցող քան զամենայն հուր հնոցի. գետ հրոյ յորդեալ ելանէ քան զամենայն ստուերութիւն ջուրց բաղմաց. բոցք հրեղէնք 'ի վերս ցոլացեալք, և շանթք հրաձեւք եռալով հատանեն։ մթին է բոցն և խաւարային է հուրն, վասն որոյ ոչ ոքոյ անուանեցաւ. հրածին է որդն և թիւնաւոր և անքուն, և անմահ անուանեցաւ. ահաւոր են ժանիքն և անյագ որովայնն. անսպառ կերակուրն և ան-

դադար կերողքն. չկք առ ոք աղաղակել, և ոչ այն որ լսէ զձայն պաղատանաց. ցամաքեալ է սէր, և ոչ ինքանեն արտասուք ընկերի 'ի վերայ սիրելեաց իւրոց. քանզի հեռացաւ գութ, և թագաւորեաց ստուգութիւն՝ որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։

Բայց որովհետեւ եկն 'ի մկրտութիւն, ուրացաւ 'ի սատանայէ և 'ի խաւարային հրեշտակաց նորա, խոստովանեաց զՀայրն բոլորից, յանձն էառ չարչարակից լինել Յստուածն Բանի՝ որ էառ 'ի սրբոյ կուսէն զենակից մարմնոս մեր շնչով հոգւով և մարմնով, հաւատաց 'ի սուրբ Հոգին քաւիչ մեղաց ամենայն մարդկան որ հաւատան, այսպէս և ճաշակեաց 'ի կենդանարար պատարագէս Քրիստոսի, և թէպէտ և մեղաւ՝ ոչ կարաց տկարութիւն մեղացն լուծանել զանբեկանելի կնիքն տերունական. և զոր օրինակ առաջին մարդն ապականեալ մեղօք հող եղեալ, և դարձեալ անդրէն 'ի նոյն բնութիւն յերեւմանն Քրիստոսի, ոչ նոր կամ այլ մարդ փոխանակ նորա արարաւ, այլ զայն զապականեալն յապականութիւն նորոգեաց, ըստ նմին օրինակի և որ յետ մկրտութեանն կարգի մեղանչէ՝ և զղջանայ և դառնայ յապաշխարութիւն, առաքինութիւն պիտի գործել այնպիսեացն, այլ ոչ վերստին մկրտիլ. քանզի և յառաջնումն ոչ բռնաբար ոք էած զնա 'ի հաւատս, այլ ինքն կամօք. և Յստուած զկամաւորն ընդունի յորդեգրութիւն։ Ինքն հաւատայ բոլոր և զինքն տայ Յստուծոյ, որով լինի միաբանութիւն Յստուծոյ և մարդոյ. և զի ճշմարիտն այսպէս, և մեք հաւատամք։ Այլ թէպէտ թերահաւատ լինիցի ըստ մարդկային մտաց, Յստուած յիւրումն հաւատարիմ է, զտուեալն պարգեւսն ոչ հանէ։ Այլ յորժամ դատի, զմեղն դատեսցէ. սուրբ մկրտութիւնն ոչ լուծանի, և ոչ ընդդատաստանաւ անկանի։

Այլ եթէ կամիս, առ քեզ միւս եւս տարացոյց։ Կատարեալ մեղաւ մարդն առաջին 'ի դրախտին. 'ի հողոյ մնան դարձաւ յերկիր, իսկ կենդանի փչումն ոչ անկաւ ընդ ապականութեամբ, այլ վերաբերեցաւ ըստ առաջին բնութեանն։ Կնիք հաւատքն են՝ որ 'ի սուրբ Յորդանանն, որում լուծանել անհնար է, և կամ ընդ ապականութեամբ անկանել։ Այս եթէ ոք որպէս

հաւատոյն կամքը՝ դարձեալ ուրանայցէ, ինքն 'ի բաց կեաց 'ի կենացն, կեանքն ոչ մեռանի ընդ մահկանացուին. Թառի ինձ և ամենեցուն՝ թէ այնպիսուն յիշատակ էր արժանի առնել, և ոչ տուրս բաշխել 'ի քու�թիւն մեղաց նորա։ Այս եթէ 'ի ժամ վախճանին զզջացի, ընդունել արժանի է՝ հայելով 'ի մարդասիթիւնն Աստուծոյ. 'ի վերայ այսր տուրս տալ արժան է յանուն հրաժարելոյն, թերեւս ընկալցի ողորմութիւն՝ գթացեալ 'ի նա։

Իսկ վասն անմեղ երախայիցն որք հրաժարեցին յաշխարհէս առանց մկրտութեան, որպէս ասացուք նոցա անմեղս. զի առաջին պատուիրան մկրտութիւնն է, զի 'ի նմա կատարին հաւատքն. և նա արհամարհեաց զայն և զբոլորեցունց Հայրն զԱստուած և զքաւիչ զՀոգին սուրբ և զմիածին որդին Աստուծոյ՝ որ խոնարհեցոյց զինքն զբոլորն դնել զաջ մարդկութեանս 'ի վերայ աստուածութեանն. և Արարիչն 'ի բաց հրաժարէր ասելով Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել, և դու առ ինս գաս։ Իսկ Տէրն մեր զի զմարդիկ որդիս Աստուծոյ արասցէ, ասէր՝ Թոյլ տուր, զի այսպէս արժան է մեզ ընել զամենայն արդարութիւնս. փութամ մկրտել 'ի մարդոյ, զի կատարեցից զարդարութիւնս ամենայն, որչափ եւս առաւել մարդ փութացի ապաւինել 'ի սուրբ Ջուրս աւազանին, զի առցէ զանջինջ որդեգրութիւնն Աստուծոյ։ Արդ որ զայսու ամենայնիւ արհամարհեաց և զանց արար, եթէ արժանն իցէ նմա անմեղ ասել՝ որ լի է ամենայն կորստական մեղսիւք։ Այս եթէ ասիցէ ոք, 'ի տղայութեանն վրիպեցաւ, ես գիտեմ զայնպիսեացն զմեղս զծնողքն արկանել. և զինչ առ պատուիրանն. եթէ յօտարէն սպանաւ, սակայն մեռաւ. և եթէ յեղբօրէն, նոյն անցք անցին. և բազում որդիք և 'ի հարց իսկ մեռան։ Արդ մի է ամենեցուն, իբր բաւական է վրէժ առնուլ 'ի մեսասեցելոցն և 'ի մեսասակարացն։

Այսմ՝ թէ յայսպիսեացն անուն ոչ է արժան պատարագս մատուցանել, քանզի 'ի կենդանութեանն իւրում ոչ եղեւ արժանի կենարար շնորհին։ Ո՞վ այնչափ յանդուգն իցէ և տգէտ, որ աստի անդրոշմն յուղարկեցաւ, և քակեալ տրոհեցաւ բարժանելեաւն և անբարժանելեաւն. զոր չիք հնար 'ի միմեանս յարել

մինչեւ 'ի ժամանակս վերստին նոգոգմանն՝ . այլ տուլ
տալ միայն վասն այնպիսեացն յարժանաւոր տեղիս . ա-
ղաչել զգաստաւորն ամենեցուն բազում բարեխօսիւք ,
զի ապրեցուցեալ զվրիպեալն յանչէջ հրոյ գեհենոյն՝ ,
յոր երթալոց է սատանայ և ամենայն գործակցաքն իւ-
րովք : Յորմէ պահեսցէ Տէր Յիսուս Քրիստոս զքաւեալս մեր զսի-
րելիս իւր և զհամարէն գինեաս արեան իւրոյ . և նմա փառք
յաւիտեանս . ամէն :

1 Պակասին բառք ինչ :

2 Կայ վրիպակ ինչ գրչի . սպա
թէ ոչ՝ չէլանէ ստոյգ խմաստ : Եւ
կամ իմա այսպէս . թէպէտ և ան-
կնունքն չափահաս ունի 'ի դժոխս
երթալ , այլ եթէ անչափահաս
դոցի կամ տարակուսելի , յայն-
ժամ թերեւս օրէն լցէ աղօթել
միայն առանց պատարագի . զի գո-
նեա լիմպոսի արժանի լցցի , և ոչ
դժոխոց : Դժուարաթարգմանելի
են և բանք սրբոյն Օգոստինոսի առ
ասուածաբանս վասն անկնունք
տղայոց զրկելոց յարքայութենէ ,
թէ յոր վիճակ անկցին :

ԿԱՆՈՆՔ

ՎԱՍՆ ԴԻՒԱՀԱՐԱՑ՝ ԵԹԷ ՊԱՐՏ Է ՕՐԻՆՍ ՏԱԼ, ԿԱՄ ԵՐԱՒԱՑԻՑ ԿՆԻՔ՝
ՄԻՆՉ ԴԵՌ ԴԵՒՆ Ի ՆՄԱՆ ԻՑԷ

Բազում են ախտք 'ի մարդն, վասն զի ունի մարմին չարչարելի. և են յախտիցն որ 'ի ձեռն Հարտար բժշկաց ընդունին զառողջութիւն, և են որ ինքեանք իսկ ախտքն գիւրաւ թօթափին 'ի մարմնոյն, և են որ անբուժ յերկար հիւանդութիւնս գործեն, միանգամայն և մահ իսկ 'ի վերայ ածեն։ Եւ են ամենեքեան եկամուտ ըստ իւրաքանչիւր պատճառի ժամանակայն կամ 'ի խոշտակաց, կամ յանչափ խառնակութենէ, կամ 'ի սառնամանեաց ցրտոյ, կամ 'ի ժահահատութենէ օդոյն, կամ 'ի գէջ խանաւութենէ։ Բաղձեալ լինին ախտք և 'ի յոլով կերակրոց և յերկար անուսաւորութենէ. և այլ բազում պատճառք են ցաւոց զոր գիտեմք ամենեքեան։ Բայց նման գիւտհարութեան միւս եւս այլ տեսակ է՝ եթէ խելքն ուրուք վնասեալ են յանչափ ուրկածից ստամոքսին ցաւոց. և մանաւանդ ընդ ժամանակս ժամանակս ընդ ընուլ լուանիդ և ընդ մաշել՝ անձնունք և նուազութիւնք լինին ամենայն կենդանեաց, կամ 'ի զեղուլ խելացն, կամ 'ի նուազել, կամ յերկոսին յուզի ախտ ցաւոցն՝ փրփրէ այնպիսին, և արիւնախառն բերելով ընդ բերանն և ընդ քիթն, զարկանի ցնգրի յիմարի և միտքն յապուշ գառնան։ Եւ յորժամ զազարէ ախտն, անդրէն ինքն 'ի նոյն յառաջին միտն գառնայ. հարցեալ ուրուք, անպիշելով՝ պատմել ոչ գիտէ. կարծիս տայ ամենեցուն՝ զի 'ի դիւէ չարչարի և ոչ 'ի ցաւոց։ Եւ որ այսպիսեացս իրրեւ հասանէ առողջութիւն. և է՞ որ զոնոմին վախճանի։ Եւ դարձեալ այլ ախտ, զոր կողացաւութիւն կոչեն և թիկնա-

Digitized by Google

ցաւութիւն. և յայլ օդից ոտից, ձեռաց, ողաց, կարկամելով սարսռելով և դողալով բերէ զնմանութիւն դիւահարի. մանաւանդ զի օր ըստ օրէ լինի և ժամ ընդ ժամ; և է զի յետ ամսոյ, և է զի մի անգամ 'ի տարւոջն։ Այս արդ պատճառք նոցա յայտնի են. 'ի ձեռն բժշկաց բաղումք ընդունին զառողջութիւն. բայց մարդիկ այդմ ամենայնի դիւահարութիւն ասեն։

Այլ վասն այնոցիկ որ չարչարին յայսոց պղծոց, յայտնի է և ոչ կարեմք ուրանալ. և մանաւանդ զորս ածէին առ տէր Յիսուս, և բժշկէր զբաղումս 'ի նոցանէ բանիւ միայն և ոչ մարմնական հնարիւք. նա և զանուանս եւս ասէր, զոր մարդիկ յախտէ անտի սովորեցան կարդալ վերնոտ և լուսնահար։ Այլ՝ աղաչեմ, յայսմ վայրի միտ դիր. է ուրեք՝ որ իբրեւ զմարդ և զԱստուած 'ի միասին՝ ուր բացէ 'ի բաց աղաղակէին դեւքն աղաչելով, Գիտեմք զքեզ ով ես սուրբդ Աստուծոյ, մի յառաջ քան զժամանակն տանջեր զմեզ։ Այս խոստովանութիւն յակամայ դիւացն՝ զաստուածութիւն Որդւոյ յայտ առնէին։ Իսկ ուր ձեռն դնէր 'ի վերայ հիւանդացն, իբրեւ զմարդ աղաչելով զԱստուած՝ զբժշկութիւնս կատարէր։ Իսկ ուր զվերնոտն և զլուսնահարսն և զայսս պիղծս սրբէր, անդ իբրեւ զմարդ և զԱստուած. քանզի դեւն 'ի ձեռն մարդոյ Աստուծոյ լսէ և ելանէ 'ի մարդոյ։ Իսկ ջերմանք և հիւանդութիւնք և վերնոտք և լուսնահարք՝ մարդոյ առանց դեղոյ ոչ լսեն, իսկ Աստուծոյ ամենայն ցաւք լսեն և բժշկին. որպէս 'ի Կափառնաումն սաստեաց ջերմանն, և գնաց 'ի նմանէ։

Արդ յայտնի է զի գոն դիւահարք, ոմանք 'ի ծածուկ և ոմանք յայտնի։ Այս են պատճառք մտի դիւին 'ի մարդն՝ մեղք. և մեղքն բաղում մասամբ պաշտին 'ի մարդն, արտմտական, ցանկական, ուրացական, ամբարտաւանական։ Արտմտականին պտուղ սպանութիւն, ցանկականին պոռնկութիւն, ուրացականին ստութիւն, ամբարտաւանականին ագահութիւն. չորքս այս միաբանին ընդ միմեանս և պատին զմարդոմն և պատրաստին քնակութիւնք սատանայի. և անուանին սոքա դազանք բազմագլուխք, և կամք մի է ամենեցուն։ Որ էանց զհետ ցանկութեան, պարարէ զմարմինն պէսպէս

խորտկոք և աղգի աղգի ըմպելիքք, յանկողինս փա-
փուկս ննջել խոզաբար. այնպիսիքն կատարեն զկամս
ոչ զմիոյ և զերկուց, այլ զամենայն դիւաց, որով ծած-
կապէս և յայտնապէս հանեն զնա յԱստուծոյ։ Իսկ որ
չոգաւ զհետ սրտմտականին, հեռացաւ 'ի մարդկային
բնութենէն, և նմանեցաւ չար գազանի 'ի մնչել և
յափշտակել, 'ի բեկանել զիւր մարմնակիցս, միանգա-
մայն ապականել զպատկեր Աստուծոյ։ Իսկ ուրացա-
կանն որ ծնաւ զստութիւն, եղեւ անաստուած, գոր-
ծեաց առանց պատկառելոյ զամենայն չարիս. սա ոչ
միայն դարան է դիւաց, այլ և կամակից չար կամաց նո-
ցա։ Իսկ որ յաճախեաց յամբարտաւանութիւն, սա է
որ կատարեաց զկամս առաջին թշնամւոյն մերոյ՝ ընդ
որ եմուտ մահ յաշխարհ և տարածեցաւ յամենայն
մարդիկ։ Այս որ յայսոսիկ ըմբռնեալ են, ոչ ինչ փոյթ
առնեն զանձանց բժշկութենէ. քանզի և ոչ գեւք յայտ-
նի չարչարեն զնոսա, այլ 'ի նեբքուստ հաշեն և մաշեն
զանուրս ոգւոցն անմահութեան։

Իսկ որ յայտնի յայսոցն պղծոյ լինին, կամ երախայ
կամ կնքաւոր, կամ արդար կամ մեղաւոր, կամ
ծեր կամ տղայ, և ոչ ելանէ գեւն յումեքէ 'ի նո-
ցանէ, երկու պատճառք երեւին յայսմ տեղւոջ, դի-
ւին բռնութիւն և մարդոյն տկարութիւն. և տկար ոչ
մարմնոյ զօրութիւն ասեմ, այլ ոգւոյն անօսրութիւն.
և դիւին բռնութիւն ոչ անպարտելի զօրութիւն է, այլ
լրբութիւն։ Այս զօրացուցանէ զդեւն մարդոյն անժու-
ժութիւն. քանզի ցանկայ պէսպէս կերակրոց և ըմպե-
լեաց, գծագրէ յիւր ոգիսն մարդն զաղտեղութիւն և
զանհաւատութիւն։ Այլ ես ասեմ՝ թէ բնականա-
բար և բարոյականապէս զոր կարէ տանել բնութիւն
դիւին, հանապազ ցանկայ համոց կերակրոց և ըմպե-
լեաց. իբրեւ իւր չիք ճաշակելիք և որովայն, նրբի սպրդ-
էլ մտանել ընդ կերակուրն 'ի սիրտ մարդոյն, և քարշէ
հանէ յինքն զհամեղութիւնն և անյագ առնէ զմարդն
յորկորստութիւն և առաւել յարբեցութիւն, իբրու
թէ 'ի ձեռն մարմնոյն ինքն կերակրեսցի և ըմպիցէ։ Այս
առնէ իւր բնակութիւն ոչ միայն զմարմնոյն թանձրու-
թիւն, այլ և զնրբութիւն ոգւոյն. ուսուցանէ գործել
զամենայն չարիս։ Այս է որ ոչ թողու զմարդն մինչեւ
յօր վախճանին։

Digitized by Google

Իսկ ուր դիպի մարդոյն առաքինութիւն կարծել ո-
րոշել յամենայն չարութենէ, զոր ոչ ինչ գիտիցէն ա-
մենեւին մարդիկ՝ զի զարտաքոյս տեսանէն, և չարչարի
այնպիսին 'ի դիւէն, և բազում անգամ վաստակօք ոչ
կարէ հալածել զդեւն յինքէնէ, կարծեմ թէ դեւն
տեղեկագոյն է նեղքին գործոց նորա քան զմեզ՝ ըմբռ-
նեաց զնա, կամ յառաջինն ստգտանելն երկեցոյց զնա, և
կամ առժամայն 'ի վատթար խորհրդոց՝ յորմէ արկ ձեռն
և սկսաւ չարչարել, արար զմարդն անհոգ հանգիստ։
Այսպա թէ մարդն յառաջագոյն անարատ էր, և առժա-
մայն 'ի յստակ խորհուրդս, ահա յայտ եղեւ դիւին
լրբութիւնն և անձանձրոյթ համբերութիւն։ Այստ ոչ
միայն ՀՆՇԵԼ 'ի պահոց պիտի, այլ և սուրբ աղօթս առ
Աստուած, և 'ի բազում տեղիս՝ ուր սրբոց ոսկերք հան-
գուցեալ են՝ ուխտք և խնդրուածք, զի հեռասցի չարն
'ի մարդոյն։ Այսպա եթէ զայս ամենայն կատարեալ իցէ,
և դեւն ոչ ելանէ 'ի նմանէ, և մարդն ոչ կասիցէ և
թուլանայցէ յառաքինութենէ մինչեւ յօր վախճանի
իւրոյ, այնպիսումն ասեմ՝ եթէ երախայ է, ինքք տալ
արժան է. և եթէ ինքաւոր է, օրէնս։ Օ՛ի զայնպիսի
առաքինի այր դեւ յԱստուծոյ հեռացուցանել ոչ կարէ,
այլ յաղթի պարտի և ամաչէ. որպէս երբեմն առ կա-
տարեալ նահատակին, որոյ առաքինութիւնն մինչեւ
ցայսօր հնչէ յեկեղեցւոջ։ Բայց այլոց դիւահարաց՝ որ
պորտաբոյծք են, որ պարարեն զդեւն և զանձինս 'ի միա-
սին, և անյագ են յանառակութիւն, եթէ երախայ իցէ՝
ինքք չէ արժան տալ, և եթէ ինքաւոր՝ օրէնս, և վկայէ
մեզ աստուածական հրամանն. "Այ՛ն տայք զսրբութիւն
շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս առաջի խոզաց.,,։

Այսպա եթէ ոք ասիցէ, տղայոց զինչ մեղք էին, զի
անդստին 'ի սկզբանն սկսաւ չարչարել զնոսա, զայս ա-
սեմ՝ եթէ է ուրեք, զի Աստուած իբրեւ զմարդ դատի
զաշխարհ, և է ուրեք իբրեւ զԱստուած. ուր ըստ գոր-
ծոց հատուցանէ իբրեւ զմարդ, որ իշխէ դատել. իսկ
որ չեւ 'ի մեղս եկեալ է, իբրեւ զկանխագէտ՝ զի ար-
գելցէ 'ի չարէ։ Տես իսկ զի աշխարհի օրէնք թագա-
ւորաց 'ի յանցաւորաց առնուն վրէժս, իսկ Աստուած
'ի յանցաւորէն և յաղգէն. 'ի յանցաւորէն որպէս օ-
րէնսդիր, 'ի յաղգէն իբրեւ զյառաջագէտ։ Անորիշ

հարցուածս և առանց զաստուցանելոյ չէիք պատասխանի. եթէ յախտէ՞ իցէ, եթէ յաշխարհէ. եթէ յախտէ՝ յո՞ր տիս հատակ լեալ իցէ, և ո՞ինչ պատճառաք յանցանաց են. եթէ ուրացող իցէ՝ ոչ մարթի, եթէ արիւնահեղ է՝ նոցն է, եթէ պոռնիկ իցէ, եթէ վրիպակաս 'ի տղայութիւնն իցէ, իբրեւ եթէ միով ժամու և կամաք 'ի զղջումն եկեալ իցէ, և յայնմ հետէ բաղում առաքինութիւն ցուցեալ իցէ վկայութեամբ եղբարց և գլխաւորին, մերձեալ եւս իցէ 'ի ծերութեան ժամանակն, անձամբ սանձին պնդիւն չէ արժան յօժարել 'ի ձեռնադրութիւն։

Այլ վասն կարօտութեան պիտոյից և վասն բազմաց օգտի մերձաւորագիտացն բռնի արժան է ածել զայսպիսին յերիցութիւն. զի առաքինութեան ծնունդ է, լինի բազմաց բարեաց պատճառաք։

Այսպէս թէ ոմն լի հասակաւ էր և հասեալ 'ի չափ մեծաց ճանաչել զչար և զբարի, և ընտրեաց զչարն և անարգեաց զբարին և անխտիր եղև 'ի պոռնկութիւն, և ապա կամ յամենոյ մարդկան, կամ 'ի բռնաւորի յերկիւղէ եկն յապաշխարութիւն, և արգելեալ խափանեցաւ յանառակ գնացից, մարդասիրութեամբ արժանի է մերձենալ 'ի արքութիւնն, և զամենայն աւուրս կենաց իւրոց նովին կատարել յերիցութիւն։ Այլ անձամբ և ոչ այլով յորդորելով զնա չէ օրէն ընդունել. 'ի մեղս անդ հայեսցին, և 'ի ժամանակս տիոցն՝ յորում գործեացն. եթէ յերախայութեան իցէ՝ ունի համարձակութիւն, եթէ 'ի կնքաւորութեան՝ զատուցեալ որոշեսցեն, և զառաքինութիւնն ընտրեալ փորձեսցեն, և զարժանաւորն յառաջ մատուսցեն. քանզի մարդիկ են, և յամենեսեան գոյ հոգի Աստուծոյ։

Այսպէս թէ ոք վասն իւրոյ հպարտութեանն մարմնաւոր սէր ունիցի ընդ ումեք, մարմնասիրագոյն յանդգնի, և արհամարհէ զաստուածային կանոնական հրամանս, և զանարժան յառաջ մատուսցէ, և զմարդկային միտս գողանայ, և պատճառս զկանոնս ունի՝ թէ հրամայեն զապաշխարողս ընդունել 'ի ձեռնադրութիւն, և զայս եւս պարտ է նմա գիտել. զի Աստուած որ քննէ ըզգաղտնիս, ըստ նեղքին գիտութեանն գատի զդատաստան. զի ոչ միայն յապաշխարողաց պիտի ընտրել և

առնել զարժանն, այլ և յանապաշխարողաց. քանզի բազումք են որ յաչս մարդկան անմեղք երևին, այլ՝ի գործ Աստուծոյ անպիտան, գիրգք, յիմարք, ցնորեալ, անսէր, ապուշք. թէ և անանոց հովիւ արասցես, ոչ երբեք յառաջ անցեալ հանգոյց զմիտս հովուապետին։ Իսկ զիաւրդ արժան իցէ յայնպիսեացն յառաջնորդութիւն մարդկան, ասելով կեղծաւորութեամբ՝ թէ ոչ ինչ գիտեմ զյանցանս դորա։ Ապա որոյ (որ) ետ առնել և որ արար, երկոքեան ընդ դատապարտութեամբ են յամենագէտ առենին Աստուծոյ։

Digitized by Google

ՎԱՍՆ ՀՈԳԻՈՑ ՄԱՐԴԿԱՆ

ԹԷ ՈՒՍՏԻ ԴԱՆ, ԵՒ ՑԵՏ ԵԼԱՆԵԼՈՑ Ի ՄԱՐՄՆՈՑ ԱՌ ՈՎ, ԵՐԹԱՆ, ԿԱՄ ԹԷ ԱՌԱՒԵԼ, ԻՄԱՍՏՆԱՑԵՑԵՆ *

Զի գոն և հոգիք՝ զայս և բնութիւն մարդոյ լինելութեանս ցուցանէ. քանզի կրկին է տեսակ մարդոյ, մին շարժէ և միւսն շարժի. շարժողն ունի զիմացական բնութիւն, և շարժեցեալն գործէ զսննդական տեւողութիւն. և է միութիւն յորժամ երկոքեան ունիցին զտնկեցութիւն. ապա թէ թողցէ շարժողն, անկեալ գնի մարմին անխլրտելի։ Բայց օրինադիրն մեր զՀոգի մարդոյ փչումն Աստուծոյ ասէ. և նորուն ծանօթ և բաբեկամ ոմն մարգարէ իբրեւ յերեսաց Տեառն ասելով "Հոգիք յինէն արձակին, և զամենայն շունչ ես արարի, ասէ Տէր,,. նովին հոգւով Ովսէէ մարգարէ ասէ. "Ո՞վ հաստատեաց զՀոգի մարդոյ 'ի նմա,,։ Բարւոք է այն միաբանութիւն, զի առանց Աստուծոյ եղեալ և ոչ ինչ. այլ զորպիսութիւնն պիտի իմանալ։ Զի արար Աստուած զարարածս գիտեմք՝ ոչ 'ի նիւթոյ և ոչ 'ի հատոյ իմիք էութենէ, քանզի անհատ բնութիւն իմանամք զԱստուած. իսկ արարածս հատկոտոր։ Դարձեալ յոչնչէ ոչ կարեմք ասել զայս մեծ մարմինս արարածոյս, և ոչ ինքնաբոյս գոյացութիւն, նա և ոչ 'ի վարանս տարակուսի անկանիմք թէ ուստի եղեւ բնաչան կամքն Աստուծոյ իմանալ և առնել ինչ. այլ միշտ Աստուած, միշտ արարող զօրութիւն ընդ իւր։ Եւ յորժամ կամեցաւն՝ նոյնպէս կամեցաւ. զոր ունէր յիմանալոցն՝ էած 'ի գոյացութիւն, զի իմանալեաց իցէ արարիչ

* Զհնգեսին հատակոտորսդ զորոց յիշեալ էաք յառաջնումս ապացուցութեանն, ցարդ չընկալեալ ուստեք զայլ օրինակ, յարեալք 'ի կատարած ճառիցս, անյայր միմանց որպէս գտաք յօրինակին գրելոյ 'ի նմ. ոչ իբրեւ ամբողջ յօրինուած ճառի և ոչ գարձեալ անկարօտ պարզաբանութեան, ակն ունելով անթերի օրինակաց, յորոց միաբանութենէ թերեւս 'ի յայտ գայցէ հաւաքաստուածութիւն իմաստիցն։

Digitized by Google

բնական իմացութիւն։ Իսկ արարչական զօրութիւնքն՝ զիարդ նիւթն անմարմին. իսկ արարչութիւնն զանմարմինն նոց և զմարմնացեալն 'ի բազմադիմի մասունս, յիւրաքանչիւր 'ի զարդս, զի իցէ ոստն մի, և ստեղն մի, և արմատն բազում, և յոստոց անտի բազմատեսակ շառաւիղք։

Զարդ որպէս վերագոյն ասացաք՝ յերկնէ երկնայինքն և յերկրէ երկրայինքս, և մարդ խառնուած յերկնէ և յերկրէ. անօսրագոյնն յերկնէ, թանձրագոյնս յերկրէ։ Օ՛ի թէ զկոյացութիւնս հրեշտակաց ծնունդ ասեմք երկնի, հրոյ և օգոյ, որպէս և մեծն Դաւիթ ասէ, "Զարարիչ զհրեշտակս իւր 'ի հոգիս,, և զպաշտօնեայս ասնուանէ հուր կիզելոյ, ապա յայտ է եթէ ոգիք մարդկան 'ի նմին նիւթոյ գոյացեալք՝ կամաք արարչին առաքին 'ի բնութիւն մերոյ լինելութեանս, ոչ հրեշտակացեալք և ոչ դիւացեալք ըստ ոմանց անուանելոյ, այլ միայն հոգիք և հոգիք մարդկան։ Հոգիք հրեշտակաց պարզ բնութիւն, անմարմին, անյօդ, անոտակ, անքանակ, անձն կատարեալ. և կատարելութիւն անձին ոչ յումեքէ, այլ ինքնակատար էութիւն, կատարեալ գոյացութիւն։

Իսկ ոգիք մարդկան գոյացութիւն պարզ, էութիւն յստակ, սուրբ, մաքուր, իմացական բնութիւն, ձեւ սկզբնատպին, հարկաւոր շարժմունք, վերաբերութիւն, անմահ տեւողութիւն, յարկակից մարմնոյ, միաբան որակութիւն, անձանձրանալի միութիւն, անբաժանելի մասունք, անհատ զօրութիւն, անծերանալի յերկարութիւն, անտեղի բնակութիւն. յառաջ քան ըզգալն 'ի մարմին 'ի գոյացութիւն եղանութեանն՝ ունի իմացական, անքանակ. և 'ի մարմնի եղեալ զամենայնն ունի զիարդ որպէս կամի ախորժել։ Զի իմանի բնութիւն տարբերել ընդ մարմնոյն. բայց ես ասեմ ըստ բնութեան և ըստ բարոյական ձեւացելոյ հոգւոյս զառ 'ի միմեանց զմերձաւորութիւն։

Զովի քնար, այլ 'ի ձեռն քնարահարին. գեղեցիկ են ձայնք երաժշտականք, այլ երաժշտականսն. տեսեր զչքնաղ ինչ շինուած, ոչ 'ի նմին հարեր կացեր, այլ ճարտարապետին ետուր զգովութիւնն։ Զպա թէ ոչ իցէ քնարն, չերեւի քնարահարն. սոյնպէս և ամե-

Digitized by Google

նայն գործիք ձայնաւոր երգոցն 'ի ձեռն արուեստաւորին երևին։ Այսպէս թէ գործիքն ապականեալ լիցեն, իբրեւ թէ որպէս փող ջախջախեալ, աղի խոնաւեալ, և ձարտարն առողջ և ի արուեստիւն և գիտութեամբ, ոչ կարէ ցուցանել զհանդէս առաքինութեան արուեստին։ և զտանի ամենայն մասամբ ապականեալ 'ի գիտութեանն։ Այսպէս թէ կատարեալք առ միմեանս հանդիպիցին, ոգիոգիք և միմիթարիչք առ միմեանս հանդիպեսցին բազմամարդոյ քաղաքաց, և սրահի իւրաքանչիւր բնութիւնք զատ և որիշ խառն բնութեամբն։

Այսպէս կարի գեղեցիկ մեր արարիչն զբնութիւն մարմնոյս հաստատեաց շինուած բաժանելի, և զգոյացութիւն հոգւոյս ուրար անբաժանելի բնութիւն։ և միաբանեաց իբրեւ քնարահար ընդ քնարի, զի շարժեսցի և շարժեսցէ զակն 'ի տեսանել, զականջս 'ի հոտոտել, զբիմն 'ի ճաշակել, զլեզու 'ի խօսել, զխելն յիմանալ։ Օ այս ամենայն զբազմութիւն մասանցս մարմնոյ շարժէ 'ի կենդանութիւն և 'ի գործառութիւն ցորքան ժամանակ միաբանութիւն է շարժողին և շարժելոյն։ Այսպէս եթէ չբաւեսցէ՝ սա քակտեալ և նա 'ի բաց կացցէ, լռեալ դադարեալ լինի ամենայն բազմութիւն արուեստիցն. սա դառնայ յիւր բնութիւնս, և նա վերանայ յիւր կայանն. ինքն յինքեան իմանայ, ինքն յինքեան հանդչի, ինքն յինքեան առաւելու, ինքն յինքեան խնդայ, ինքն յինքեան տրտմի, ինքն յինքեան շարժի, ինքն յինքեան և դադարի, ինքն իւր բաւական ինքնագոյ իմացութիւն, ինքնալուր, ինքնատես։

Իսկ եթէ որ զտեղեաց կամ զկայենից հոգւոց կամեսցի գիտել, զհետ եկեսցէ բանից մերոց. մի գետնաքարշ դնացիւք և մի ծովական ճանապարհորդութեամբ և մի առասպելական բարբանջմամբ, այլ ճշմարիտ վարդապետութեամբք փիլոսոփութեամբք տուրբ գրոց. ուր Աստուաքեանն յայտնակեցաւ, ուր պարգեւքն պատրաստեալ են. զոր մարմնաւոր զգայութեամբքս թարգմանել ոչ կարեմք, զանյօդ տեղեացն՝ վերնոց քաղաք ասեմք, վերին Երուսաղէմ անուանեմք նոցա, այլ ազատ բանակետղ. անդ բիւրաւորք հրեշտակաց, բանաւոր իմանալի, և ոչ զգալի հոգիք են անդ մարդկան։ Այլ զարդարոցն կատարելոց կամիցիս գիտել, թանձրագոյն ասա-

ցից. յորմէ նիւթոյ առաւ, 'ի նմին և զոգաւ գաղա-
ղեաց։ Լուր և մեծին Աիմոնի վիմի յուսուցանելն մա-
նաւանդ և զՀարտարապետն փիլիսոփայից. իբրեւ հա-
ՀԱեաց զմիտս նոցա արարչութեանն Հնոգիք, ապաց և
վասն հրեշտակացն կայանից՝ զուարթ զանապական զան-
սպեղոր զՀոգմանն վերինս, զոր և բանակեաղ Աղաքեանն
անուանեաց։

Այսպա թէ ոք 'ի գրեալսն Աովսէսի ընթացի, և վը-
ճումն յԱստուծոյ զՀոգիս մեր ասիցէ, և զայն եւս ի-
մասցի անկանել նման 'ի մեծ վարանս տարակուսի, մին-
չեւ զանմարմին Աստուած 'ի ձեւս մարմնոյ ածել՝ փչելն
ոպպէս թէ բերանով, ուրնգամբք և շրթամբք, հարկ է
եթէ ամենայն անդամքն զՀետ գայցեն, զոր քան և մի
լեցի, և մի 'ի միտս անգամ այս եկեսցէ ուրուք՝ զԱ-
ստուած 'ի կարօտութիւն զգայական գործոց ածել. այլ
իմացուք զփչելն ոչ 'ի նմանել 'ի նա, այլ նման փչելն զնա
Հոգիացոյց, որպէս զանգոյն գոյացոյց, որպէս զանՀո-
գին Հոգիացոյց և զկենդանութիւն եգ 'ի վերայ նորա։

Օ՛ի եթէ յԱստուծոյ էութենէն փչումն ասէք,
զի՞նչ պիտոյ էր լսել զձայնն "Փչեաց յերեսս նորա
շունչ կենդանի, և եղեւ մարդն 'ի Հոգի կենդանի"։
Իբրեւ յայտնի է զօրութիւն բանիդ, անուանեաց զա-
ռաջին արարչութիւնն Հոգւոյն շունչ կենդանի իբրեւ
զմի արարչութիւն. այլ վասն մեծափառութեան՝ զի
պատուականագոյն երեւեսցի մարդն յարարչութեանն
մեծարեաց զնա. իբր զի ստեղծ ձեռօք զմարմինն, և
բերանով զփչումն Հոգւոյն։ Զանգի անմնախանձ է աս-
տուածութիւնն և անչարակնութեամբ պարգեւասէր,
ոչ ինչ դանդաղեցաւ անուանել զմեր բնութիւնս պատ-
կեր աստուածութեանն. իբրեւ յայտնի է իմաստնոց
եթէ ոչչափ հեռի են 'ի միմեանց մարդ և Աստուած՝
բնութեամբ։ Ուստի և մեծ մարգարէն Լսայի եռեռս
զԱստուած և հիացեալ զարՀուրեցաւ. զզօրութիւնն
պատմէ, զիսկութիւնն լուէ. և գիտացեալ զմեր բնու-
թիւնս՝ խոնարՀութեամբ բարբառի. "Ինչէն արձա-
կին Հոգիք, և զամենայն շունչ ես արարի, ասէ Տէր"։

Ահա յայտ է արարչութիւն Հոգւոյ. արձակին կա-
մաքն Աստուծոյ յանսար բնութենէ, որպէս վերագոյն
ասացաք. կենդանածնեցան երկինք մնտաւորս իմանա-

լիս, և ոչ չոշափելիս։ Այնպէս և յորժամ արտաքոյ մարմնոյս եղեալ ոգիք, զամենայն արտաքնոյ զգայն տեսեալ և ընդ նոսա լինելով՝ ոչ կարէ 'ի մարմնի լինել, և ոչ զպիտոյս մարմնոյ կատարել. որպէս հարկեալ էր յաւանջագոյն 'ի բռնութենէն չելանել 'ի մարմնոյն, նոյնպէս ոչ յետ երանելոյն անկանել նմա ընդ մարմնականն պիտոյիւք մինչեւ յօրն յայն յորում յայտնեացի արարչին արարածոց։

Ինութեամբ կրկին է տեսակ մարդոյ, մին կառավար և երաստանակալ և ուղղիչ, և միւսն բնակարան բնակողին և շինած զարմանալի, անմահական հոգւոյն անաւրանալի բնակարան. որով իմանալին ընդ մարմնականս ընդ այս կենցաղավարութիւնս սուաւ հաղորդի մնալով յուրախութիւնս, և տեսանելիս ընդ անտեսանելին հաղորդելով՝ ոչ հեռանայ 'ի թանձրութենէ։ Զ 'ի սա քաղաք է իշխանակնին, զարմանաւոր, սնոդական և կենդանի տաճար, այլ եղծանելի և արագալոյծ և առժամայն վայելչութիւն. իսկ տիրական՝ իբր զթագաւոր և տեսուչ և դատաւոր իրաւախորհողութեան, զի ոչ ունի պէտս առ դարման սնոդեան. սակս այսորիկ և անապականելի և անապական. զսա աստուածային օրինադիրն Մովսէս փչումն ՅԱստուծոյ ասաց։ Երդ միոք ծառայեսցէ բանին, այլ մտացն հնազանդեսցի. զի անհանձար խորհրդոյ է իմանալ փչումն ՅԱստուծոյ՝ բերանոյ և ուրնգանց որոշեալ տեղի. ապա և այլն 'ի նեղքս եկեալ լինին մասունք մարմնոյն, և զանմարմին և զանկարօտն ընդ զգայականիս շինեալ կարօտութեամբ։ Եւ 'ի սա փչել զգոյացուցանողն հոգմաշարժ կենդանութեամբ հաւանելի է. յորմէ եղեալ մարդն 'ի հոգի կենդանի՝ աստուածահրաշ միաւորութեամբն հաստատեալ ըստ եղութեան թագաւորական բանին թէ "Ի հաստատեաց զոգի մարդոյ 'ի նմա"։ Եւ և արձակեալ որ ոչ հաստատեալ, զոր Երեմիաս ասէ. "Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի հոգի յինէն ել". որով յայտ արար զնա միայն զոլ արարիչ բարեացն կամողաց։

Աստուած անհասանելի բնութիւն է, ոչ ինչ հաստեալ լինի ՅԱստուծոյ. և զարձեալ ոչ այլ ինչ յա-

ռաջն կայր նիւթ յորժամ ստեղծանէր զպատասխան զայս հոգի. այլ և ոչ ինքնաբոյս եղեալ ըստ ինքեան, զի չէ զոր մշանջենակից Աստուծոյ. զի ոչ է յամենեքեան եղեալ. զնորա սահման ինելութեան ոչ զոր գիտէ. այլ սա ոչ է անխնդրելի, զի արարիչ սորա Աստուած է։ Եւ զի երկնային է հոգւոյն բնութիւն, ցուցանէ. զի ելանելով 'ի մարմնոյս՝ ոչ ստորինչ յերկիր. այլ զբաղձրանալոյ մայրածնողեան իւրոյ ցուցանէ զիմանալի երկիրն։ Եւ որոշեալ մարմին յիմացականէն՝ ոչ վերաբերի 'ի գերակայն, այլ վայրինչի յերկիր ծնող իւր. յորմէ յայտ է թէ յախտականէս զախտաւորն ստեղծ Աստուած, և յանախտէ զանախտն. և յետ որոշման ոչ հեռանայ, այլ յիւրն երթեալ դադարէ 'ի տեղիս, ըստ բանին "Ելանց մարդ 'ի տուն իւր յաւիտենից. և հոգին դառնայ առ Աստուած որ ետն զնա"։

Արդ երթեալ միանայ 'ի լոյն ուստի ծնաւ, զի լուծաւ 'ի կապաւոր մարմնոյն որպէս կապեալ ունէր միութեամբ։ Զի որպէս քար մենքենայի յօդ պարզեալ, զի յորժամ լուծանի՝ հասանի վաղվաղակի յերկիր ուստի առաւ, նոյնպէս և հոգին զի այժմ ծանրացեալ է քան զբնութիւնս օդոց, իսկ 'ի միւսում խառնուածին դարձեալ զօրանայ քան զնա, և առ ինքն վերադարձեալ ձգի։ Եւ է նա հուր, հողմ, լոյս. իսկ մարմին հուր, ջուր, օդ, հող, հակառակախառն զուգակշիռ միութեամբ ընտանեցեալ, երկու՝ վերաբերական հանապազաթռիչ թեթեւութեամբ. իսկ երկու՝ վայրաբերք ծանրութեամբ մշտաշարժ երկրասողութեամբ. զի ոչ այլ ինչ քան զբնական իմաստութիւն Աստուծոյ իմանալ նիւթ արարելոյ այս է, զոր մշանջենապէս յիմանալոյն ունէր զիմացեալն. յորժամ կամեցաւ 'ի գոյութիւն ածել, սահմանեաց և եղեւ իբրեւ մայր իմանալին։ Եւ երկու 'ի նմանէ երեւեցան ծնունդ, տեսանելի և իմանալի. և յերկոցունց եղեն բազում տեսակք, յանմարմնոյն անմարմինք և 'ի մարմնոյ մարմնաւորք, ոյք են հրեշտակք և մարդիկ։

Արդ յերկնէ է և յերկրէ խառնուած գեղեցիկ, զգէմն 'ի միասին կապեալ արուեստաւոր իմաստութեամբն Աստուծոյ. պարզ և թեթեւագոյնն յերկնէ,

ծանր և շարադրական յերկրէ։ Զի թէ զայլ ազգաց զգայական զբնութիւն ասա իմանալոյ, սակայն ծառայական և անհանձարք. իսկ իմանալիս այս 'ի մեզ վերհագոյն ազատ և անկարելական նիւթից, մնասուր Աստուծոյ բնութեանն, հրեշտականման և 'ի նոյն էութենէ, այլ ոչ հրեշտակ. այլ հոգի միայն և ընդ անարգ նիւթոյս կապեալ, և 'ի բարձանց և երկնային, հակառակ և երկմիտ և անընտանի ստորակայից, այլ հնազանդեալ կապանաց մարմնոյ։

Զի թէ զմարդկան հոգւոյ կամի զբ ուսանել զկայանս, մի թանձրագոյն մոռաց հայիցի երկրաքարշ ախտիւք ծանրացեալ. այլ թռուցեալ ըստ սրբոյն Պաւղոսի որ ասէ՝ անձառելի տեղի, զոր 'դրախտ անուանեաց և երրորդ երկինս. այլ խնացեալ քան զվերին զայն և զհաստատութիւն։ Զդգ աստի յաւիշտակեալ հոգիս՝ 'ի հոգեւորականն ելհաս կայանս, որ աստուածային պատմութիւն՝ վերին անուանեն Յրուսաղէմ, ուր բիւր հոգիք արդարոց կատարելոցն ուրախանան, յառաջատեսս լեալ Աստուծոյ բարեացն. անպատմելի և անուշահոտ և լուսաւոր օդն, յորս ոչ է այլախառնութիւն դառնութեան։

Զայլ ասացի պարզագոյն ինչ բանիւք, զի ուստի ելեն հոգիքն՝ առ իւրն երթեալ լինին 'ի բնակութիւն. և մարմին գարձեալ յիւր տեղին միանայ ազգակցեալ և յապականութիւն դարձեալ։ Զայլ անտեսանելին և անեղծական յառաւելատեսիլ փոփոխեալ, չունի պէտս առ մարմնականս առ այս կեանս, և ոչ կարօտութիւն 'ի տեսութիւն. և ոչ կարող իսկ են և ոչ նոքա որ աւաւելագոյն արժանաւոր եղեն պատուոյ՝ մարտիրոսքն։ 'Զդքա յայտնիլ ումեք ոչ կարեն. ոչ ի։ տ։ գ։ Զայս թէ անգամանաբար զբ կամ անխրատ սովորութեամբ ելրազումբ վարեսցի, վերստին անցանելով ըստ հեթանոսական սովորութեամբ, բազում են օրինակք, որ մոգքաղդէացիք աստեղագիտութեամբ աստուածածանօք, և բաբելացւոց գաւազանահարացն և լերդահմայ, և ընդ աշմէ ելանել հմայիցն հրէաստանի և Յրուսաղէմի, զոր մոնանելարոցն ընդ Ռաբովթ[1] որդւոցն Զմոնայ եկեալ 'ի

1 Յօրինակին կարբոնն որդւոցն Եմոնայ։

գլուխ երկուց Ճանապարհացն, երկու առաջք 'ի միոյ աշխարհէ', և ստուգեամբ արդարացեալ լինին հանապքն մնանել սրոյն 'ի պարանոցն 'Ա ովասայ խնդրեր զանիրաւութեան վրէժս 'ի նոցանէ։ Այլ և կին ոմն վհուկ Աստուծոյ Ճշմարտապատումն, և իղձն Աստուծամայ 'ի Քրիստոսէ մարգարէ ստուգատես. Այրեմ 'ի հրեաստանէ բաբելացւոյն իմաստնէն ապրեցուցիչ երազահանութեամբ. և Յովսէփ երազատես և երազահան փարաւոնի։ Այլ այս 'ի բաց մերժեալ է յեկեղեցւոյ Քրիստոսի ըստ Ճշմարտապէս գրոց. զի այս հեթանոսաց է և ոչ քրիստոնէից։

Այսպա թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ՝ օտար խորհրդովք նշանագիրս գծել, կամ մոգգարէանալ առ յապայսն և երազահմայ լինել, ցնորել մոլորութեան երազահան ստութեան, ընդ անկոխելին գնալ պողոտայ անքրիստոնէաբար, և բնական 'ի մեզ կիրսն Ճշմարտութեան պատմել, որ լինի այս և միասել խելապատակին ընդ վայրագանութիւն, և հիւանդութեամբ բազում ինչ տեսեալ խօսի անհանձարաբար, զոր և արբեցողաց իմն թուի շրջագայութիւն լինել երկրի զինքեամբք, և յայլայլեալ զգայութեանն 'ի ջերմութեանցն զայսպիսի սովորականութիւնն 'ի մեզ օրինադրեն գործ ինչ լինել։ Կամ զայն զոր դեւքն կերպարանեալ 'ի նմանութիւն մոլորեալ մեռելոց՝ զոր գիտակն էին 'ի կեանս մարդոյն, և զնոյն նմանեալ յայտնին 'ի տրտում երեսս կամ 'ի զուարթս իբրեւ պատուէր ինչ տալով և զգուշացուցանելով, որպէս թէ մեռեալն և սպանեալ մարմնոյ հոգիացեալ, և 'ի միասին գտեալ. զոր ոչ յօգուտ, այլ 'ի միասս և 'ի մոլորութիւն փութացեալ լինի, և նա զայն անուանմնաբար Ճարտարութեամբ պատմէ, այն արտաքոյ է քրիստոնէութեան։

1 Նախընթաց բանիւքդ ակնարկէ զբան Եղեկ. իե. 18–22։

ՅԵՆԿ

Լահապաքութիւն Վարդանայ 5
Խրատ Դանիէլայ 159
Մեղութիւն Յեսուայ և Դաստաւորայ 167
Յաղօթեան որ ասէ Հայր մեր 199
Ի մերութիւնն Քրիստոսի 207
Յայլակերպութիւնն Քրիստոսի 213
Ի չարչարանսն Քրիստոսի (և 'ի խաչելութիւնն, 'ի ննջումն և 'ի յարութիւնն, յերկնաւոր աշակերտացն, և առ Տէրն ի ծովուն, և 'ի Հարցուցանել առաքելոյ) 240-354
Վասն դատաստանին և դիւանագամ գալստեանն . . 355
Վասն յիշատակաց մեռելոց 358
Կանոնք 363
Վասն հոգւոյ Տարդէսի 369

Digitized by Google

Digitized by Google

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբրահամ խոստովանող 142-149.
Աբրահամ նահատակ 37. 82.
Աբրահամ սարկաւագ 101. 111. 139.
Աբէն 116.
Ալանաց գրունք 154.
Ակէ 71.
Ակէացիք 77.
Աղբակ 139.
Աղէնիք 10. 39. 72. 103.
Աղուանք 10. 16. 39. 48. 53. 56. 58. 59. 61. 72. 100. 103. 104. 153. 154.
Ամատունի 22. 33. 71. 77. 82. 150.
Այրարատ 22. 61. 139.
Այրուկ 77.
Անանիա 22.
Անատոլ 8. 56.
Անգղ 44.
Անի 52.
Անձևացի, անձևացի 22. 33. 77. 150.
Անտիոքացիք 81.
Անտիոքոս 103.
Աշնակ 60.
Աշոտ 150.
Ապահունի 22. 33. 57. 71.
Ապար 10. 110. 112. 142.
Ապարհայիկ 90.
Ապրատ 77. 150.
Ասանձար 82. 150.
Ասուան 150.
Ասուծոյն 150.
Առնակ 150.
Ասիացիք 55.
Ասորեստան 142. 145. 146.
Ասորեստանեայ 142.
Ասորի 56.
Ատոմ 54. 77. 103. 150.
Ատրոմիզդ 100.
Ատրպատական 53. 56. 60.
Արագած 60.
Արատ 139.
Արգեանք 60.
Արշարգիւն 10.
Արիք 9. 22. 23. 63. 73. 90. 92. 95. 110. 153.
Արծրունի 22. 32. 77. 90. 101. 150.
Արհմն 20. 25.
Արհնի, որ և Արիմնի 52.
Արձախ, Արցախ 72. 97. 99.
Արմաւիր 60.
Արշակ Բ. Հայոց 7.
Արշակունի 7.
Արշարունի 58. 77.
Արշաւիր 58. 77. 90. 150.
Արշէն 98. 101. 119-121. 131. 339.
Արուճ 60.
Արանէն 77. 90. 93.
Արտագերս 52.
Արտաղ 77.
Արտակ մոկացի 33.
Արտակ պալունի 77. 93. 117.
Արտակ ուշտունի 32. 71.
Արտաշատ 22. 52. 60. 77. 101.
Արտաշէս Գ. Հայոց 7.
Արտաշիր 92.
Արտաւազդ 150.
Արտէն 71.
Արցախ. տես Արձախ.
Արիմնեակ 52.
Աւարայր 145.
Աքաբ, որ և Աքասաբ 84.
Բաբգէն 150.
Բաբիլացի 145.
Բաբիլոն 12.
Բաբիկ 150.
Բագրատունի 57. 71.
Բագրեւանդ 22. 139.
Բակ 95.
Բակուր 150.

Digitized by Google

Բաղասական 58. 104,
Բասեան 22.
Բասիլ 22.
Բարձրաբուղ 52.
Բզնունիք 22.
Բեռ 110. 111.
Գաբեղեան 57. 71. 77.
Գագ 22.
Գագերոմն 55.
Գագիշոյ, Գագիշոյ 32. 71.
Գաղբիկ 58. 77.
Գառնի 52. 60
Գարեգին 12.
Գարեգին Սրուանձտայ 93.
Գաւ 73.
Գեղէոմն 84.
Գեղք 90.
Գիւտ 33. 71.
Գոլուար 73.
Գնթունի 77. 90. 93.
Գնունի 54. 77. 93.
Գուդք կամ Գուռթք 10.
Գուռալ 52.
Դաղ 150.
Դասն 39.
Դաւիթ Երէց 5.
Դաւիթ մարգարէ 84.
Դենիմազէն 20. 102. 126.
Դենշապուհ 19. 111. 122-124. 126. 131. 133. 135. 136. 138. 139.
Դիմաքսեան 58. 77. 93. 150.
Դրունք Ապանայ 154.
Դրսհանակերտ 60.
Եգիպտացի 83.
Եղնիկ 22.
Եղբայր 22.
Եղեգեակ 139.
Եղիսա 84.
Եղիշայ 22.
Երամնք 60.
Երան և տանէրան, Արեայ և ապնարեայ 20. 22.
Երեմիա 22.
Երեմիաս 22.
Երկայնորդք 52.
Եւզաղ 22.
Եւրոմպէ 55.
Եփիսիոս 56.
Զանգակ 71.
Զանգիկ 46.
Զարաւանդ 57. 81.
Զարեհաւան 103,
Զուարէն 150.
Զրադաշտական 16.
Զրադեշտ, որ և Զրադէշ, Զրադաշտ 126.
Զրադեշտական, որ և զրադեշական 112.
Զրուան 20.
Ընձայեն, ընծայացի 77. 90. 93.
Ընչուղ 71.
Թաղիկ 22.
Թաղիկ այլ 139.
Թաղուղ գիմաքսեան 77. 150.
Թաղուղ կամարական 150.
Թաղուղ վանանդեցի 90.
Թաւասպարք 73. 100.
Թէոդոս փոքր 8. 54. 55.
Իջաւանք 139.
Խարայէլ 84.
Խոսրովական երկիր 16.
Լուսնեաս 58.
Լիմնք 10. 39. 58. 73. 100.
Խաղխաղ 57.
Խաղաղք 72. 97.
Խայլանդուղք, Խայլընդուղք 11. 110. 154.
Խարամն, տես Հարամն:
Խաքիովան 100.
Խորով 77.
Խորանիստ 52.
Խորէն խոստովանող 142-146.
Խորէն խորխոռունի 77. 90. 93. 117.
Խորխոռունիք 32. 57. 71. 77. 90. 93.
Խուժաստան 36. 146.
Խուժիկ 125. 140. 141.
Խուրս 77.
Խրան 73.
Ծախանիստ 52.
Ծոդէք 10. 39.
Կամարական 150.
Կապկոհ, որ և Կապկոխ 59.
Կապոյտ 52. 98.
Կատիշք 90.
Կարէն 77.
Կորդիք 72.
Կորդուք 10. 39.
Կուաշ 60.
Կուր 57.
Կուրան 124.
Համազասպ 150.
Համազասպական 90. 150.

Digitized by Google

Հայք ազգ 5. 7. 10. 12. 15. 16. 33. 55. 57. 65. 66. 73.
Հայք աշխարհ 45. 48.
Հայք աստրքին 72.
Հարամանն, որ և Խաղամանն 20. 21. 35.
Հարեւշղոմ 152.
Հեճմնատակ 73. 100.
Հեռանն 104.
Հէր 57. 81.
Հմայեակ գիմաքսեան 77. 93.
Հմայեակ մամիկոնեան 99.
Հնդիկք 45.
Հոզոյնքք 139.
Հուն 11. 33. 53. 59. 60. 61. 73. 90. 99. 101. 104. 110. 154.
Հոռոմ, Հոռոմի 8. 10. 11. 21. 72. 104.
Հոռոմ. տես Հոռոմ.
Հոռոմ, որ և Հոռոմ 55.
Հրեայ 30. 46.
Ղազկերտ, որ և Ղազակերտ 60.
Ղեւոնդ երէց 77. 82. 88. 96. 101. 104. 116. 126. 133. 139.
Ճիզրք 73. 100.
Ճորայ պահակ 11. 73. 154. մարզպան 56. կողմանք 57.
Մաղդէլն 63.
Մաքուրք 154.
Մակաբայեցիք 81.
Մակուրան 124.
Մամիկոնեայ, Մամիկոնեան 32. 72. 93. 150.
Մանազկերտ 22.
Մանդակունի 77. 150.
Մանէճ 33. 71.
Մանէն 71.
Մատաթի 81.
Մատեան գունդ 90. 91.
Մարգաղի 22.
Մարգաստան 22.
Մարիամ մայր Ցեւանն 21. 30.
Մարկիանոս 56. 66.
Մեհրան 153.
Մեհրուժան 150.
Մելքեսդեկ 22.
Մեղեսդ 146.
Միհր 25. 27. 128. 144.
Միհրներսեհ 20. 22. 68. 70. 74. 100. 104. 105. 111. 151.
Մծբին 7.
Մոկք 22. 33. 90.
Մովսէս 124. 128.
Մովսէս 27. 83.
Մուշ գիմաքսեան 58.
Մուշեղ 150.
Մուշէ եպիսկոպոս 22.
Մուշէ երէց 101. 139.
Մուշկան Վիւսալաւուրտ 74. 81. 89. 91. 93. 95. 96. 100. 103.
Ցաղկերտ Ա. 34.
Ցաղկերտ Բ. 7-153.
Ցեշոմն 84.
Ցեսիթայի 84.
Ցոյնք 7. 9. 10. 55. 62. 72. 103. 104. 149.
Ցովհաննէս 30.
Ցովսէփ եպիսկոպոս 22. 33. 54. 77. 82. 96. 101. 104. 114. 120. 131. 132. 139.
Ցովսէփ հայր Ցեւանն 21.
Ցորդանան 30.
Ցուխանան 150.
Կածարացիք, Կածրացիք 21. 123. 140.
Կերշապուհ 32. 54. 56. 77. 150.
Կերսեհ կամսարական 150.
Կերսեհ ուրծացի 71.
Կերսեհ քաջբերունի 77. 90. 93.
Կիւշապուհ 110. 139. 142.
Վիւսալաւուրտ. տես Մուշկան.
Նոյ 82.
Շահ 77.
Շահուզ 146.
Շապուհ Բ. որմզդեան 7. 34. 45.
Շապուհ Հարեւշղոմ 152.
Շաւասպ 150.
Շմաւոն անձեւացի 33. 77. 150.
Ընդին 150.
Ոզական 52.
Ոստանիկ 10. 71.
Ոան Արագածու 60.
Որմիզդ 20. 25.
Որմիզդ արքայ 23.
Որոան 52.
Ուրծ 57. 71.
Պալունի 77.
Պալունիք 57. 93.
Պալունիք միւս եւս 71.
Պարգեւ 150.
Պարսիկ 7. 8. 19. 122.
Պարսիկք 7. 12. 52. 59. 62. 98. 103.

Digitized by Google

Պարսք 39. 41. 45. 46. 53. 56. 57. 66. 68. 72. 73. 81. 89. 91. 95. 98. 99. 100. 104. 154.
Պաւղոս Առաքեալ 11.
Պետրոս երէց 71.
Պերոզ 153. 155.
Պիղատոս 30.
Ջնիկան 124. 138.
Ռահամ 153.
Ռափսոնեան 150.
Ռըմբոսեան 54. 56.
Ռըշտունիք 22. 32. 71. 77. 101. 104. 136. 139.
Սակաստան 36.
Սահակ եպիսկոպոս ռըշտունեաց 22. 101. 104. 105. 115. 119. 126. 129. 131. 135-139.
Սահակ եպիսկոպոս Ցարտնոյ 22.
Սահակ մանդակունի 150.
Սահակ Նահապետ 37.
Սահակ սարկաւագ 71.
Սահատունի 77.
Սամուէլ երէց 101. 112. 139.
Սասան 7.
Սասոյ 150.
Սերուխտ 57.
Սերք 55.
Սինէ 27.
Սիւնիք 22. 32. 48. 49. 56. 61. 69. 77. 105. 106. 150.
Սլկունի 77.
Սուրմակ 22.
Սահրաշապուհ, որ և Վռամշապուհ 7.
Սոեփանոս 139.
Սրուանձտայ ազգ 93.
Սրուանձտեայք 77.
Վահան Աղուանից 59.
Վահան ամատունի 33. 77. 150.
Վահան գնունի 93.
Վահեւունիք 33. 57. 71. 77.
Վաղինակ 106.
Վայոց Ձոր 139.
Վան 52.
Վանանդ 22. 139.
Վանանդեցի 90.
Վասակ մամիկոնեան 72.
Վասակ սիւնի մարզպան 32. 48-50. 54. 56. 57. 60-62. 69. 70-75. 82. 89. 94-96. 98. 100. 101. 103-109.
Վասակաշատ 52.
Վատ 73.
Վարազդէն 150.
Վարազշապուհ 71.
Վարդան մամիկոնեան 32. 49. 54. 56. 57. 61. 74. 76. 77. 80. 90-92. 99. 117.
Վարդանաշատ 60.
Վասդեկ 139.
Վարձ 150.
Վիրք 10. 16. 37. 39. 56. 57. 72. 73. 103-105.
Վուրկ 58.
Վռամ Բ. 7.
Վռամնական 54.
Վրէն 77. 150.
Վրկան 110.
Տաճատ արծրունի 150.
Տաճատ գնունի 77. 90. 93.
Տաճատ եպիսկոպոս 22.
Տաճկաստան 10. 46.
Տայք 22. 99.
Տաշրայի 77. 150.
Տարուբերան 22.
Տարօն 22.
Տիղբոն 8.
Տիրան Բ. 7.
Տիրոց 71.
Տղմուտ 90.
Տմորիք 72. 97. 98.
Տրդատիոս 55.
Տրպատունիք 77.
Փայտակարան 67. 73.
Փանդուրակ 29.
Փապակ 150.
Փառանոս 60.
Փասխ 73.
Փարսման 77. 150.
Փենեհէղ 83.
Փիւքանան 73.
Փոսխ 73.
Քաղդէացի 12.
Քաշկար 146.
Քաջաջ 101. 139.
Քաջբերունի 77. 90. 93.
Քասու 22.
Քողեանք 77.
Քուշանք 9-11. 16. 37. 45. 110. 111.
Օշական 60.

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

3 2044 009 530 650

THE BORROWER WILL BE CHARGED AN OVERDUE FEE IF THIS BOOK IS NOT RETURNED TO THE LIBRARY ON OR BEFORE THE LAST DATE STAMPED BELOW. NON-RECEIPT OF OVERDUE NOTICES DOES NOT EXEMPT THE BORROWER FROM OVERDUE FEES.

WIDENER
BOOK DUE
FEB 1 1991

WIDENER
BOOK DUE
FEB 10 1992

WIDENER
FEB 1 0 2001
BOOK DUE

Digitized by Google

Widener Library
3 2044 108 733 130
HD

Digitized by Google